

Ս. Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ս. Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Երրորդ հրատարակություն

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2006

ՀՏԴ 809.198.1(091)

ԳՄԴ 81.23 դ

Ղ 158

Հրատարակության պատրաստեց և խմբագրեց
բան. գիտ. դոկտոր, պրոֆ. **Ռ. Ս. Ղազարյանը**

Ղազարյան, Ս. Ղ.

Ղ 158 Հայոց լեզվի համառոտ պատմություն /Խմբ. Ռ. Ս. Ղազարյան.-
Եր., Երևանի համալս. հրատ., 2006, 426 էջ:

Աշխատության մեջ ամփոփ շարադրված է հայոց լեզվի պատմությունը՝
հնագույն ժամանակներից սկսած մինչև մեր օրերը: Հեղինակը ուրվագծել է
հայոց լեզվի սկզբնավորման ու զարգացման ընթացքը, տվել գրաբարի, միջին
հայերենի և աշխարհաբարի նկարագիրը, բացահայտել նրանց հնչյունական
համակարգի, քերականական կառուցվածքի ու բառապաշարի հիմնական
առանձնահատկությունները:

4602020100

Ղ ————— 2006

704(02)-06

ԳՄԴ 81.23 դ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հայոց լեզու կամ հայերեն տերմինը իր լայն առումով նշանակում է հայ ժողովրդի լեզուն ընդհանրապես՝ իր գրական բոլոր արտահայտություններով ու բարբառներով հանդերձ Զեռնաբար՝ հայոց լեզվի պատմությունը ընդգրկում է ո՛չ թե հայերենի մի շրջան, այլ հայոց լեզուն իր բոլոր դրսևորումներով՝ Նա գիտություն է հայոց լեզվի կազմավորման ու զարգացման մասին և զբաղվում է հայերենի, այսինքն՝ հայոց համաժողովրդական լեզվի ու նրա բարբառների գոյացման, առաջընթացի, նրանց մեջ կատարված փոփոխությունների ու որակական անցումների, հայ ժողովրդի պատմության տարբեր շրջաններում գրական հայերենի ու բարբառների միջև ստեղծված փոխհարաբերությունների և հայ ժողովրդի կյանքում նրանց կատարած դերի պարզաբանման հարցերով

Հայոց լեզվի պատմությունը սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության հետ՝ նրա մեջ կատարված փոփոխություններն ու տեղաշարժերը կարելի է բացատրել միայն այն դեպքում, երբ նրանք դիտվեն իրենց զարգացման պրոցեսում, երբ կապակցվեն հայ ժողովրդի պատմության հետ

Այդ առումով եթե մոտենանք մեր լեզվի պատմության հարցերին նվիրված աշխատությունների արժեքավորմանը, պետք է ընդունենք, որ այդ հետազոտությունների մեծ մասում քննված են հայոց լեզվի պատմության հարցերը ընդհանրապես իրենց առանձին դրսևորումների և ոչ թե ամբողջության մեջ Պատմական առումով ամենից ավելի լավ է ուսումնասիրված հին հայերենի բառապաշարը, իսկ քերականությունն ու լեզվի զարգացման ընթացքի հետ կապված հարցերը համարյա թե դուրս են մնացել հայերենի մասնագետների ուշադրությունից՝ Եղած ուսումնասիրությունների ամենամեծ թերությունը, մեր կարծիքով, հանդիսացել է հայերենի կազմավորման ու

գարգացման հարցերի նկատմամբ ցուցաբերված ոչ-պատմական մոտեցումը Մինչդեռ լեզուն պատկանում է հասարակական այն երևույթների թվին, որոնք գործում են հասարակության գոյության ընթացքում, ծնվում ու զարգանում են հասարակության ծննդի ու զարգացման հետ, մահանում հասարակության մահացման հետ

Սակայն լեզուն հասարակությանը սպասարկելով, հասարակությանը ծառայելով և հասարակության հետ կապված լինելով հանդերձ՝ տարբերվում է հասարակական այլ երևույթներից իր սպեցիֆիկ արտահայտություններով՝ նա հասարակությանը սպասարկում է որպես մարդկանց հաղորդակցման միջոց

Լեզուն երկար ժամանակ պահպանում է իր քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը՝ նա հանդիսանում է մի շարք դարաշրջանների արդյունք և ապրում է ավելի երկար, քան որևէ բազիս կամ վերնաշենք Աշխարհի և ոչ մի ժողովուրդ չի փոխել կամ չի լիկվիդացրել իր լեզվի բառապաշարի հիմնական ֆոնդն ու քերականական կառուցվածքը իր տնտեսական ու քաղաքական կյանքում կատարված ամեն մի փոփոխության հետ Այսպես, օրինակ՝ հայոց ազգային լեզվի, ժամանակակից ռուսերենի, ֆրանսերենի, գերմաներենի և այլ լեզուների մեջ շատ գործածական մի շարք բառեր, հատկապես ընտանիքի և ընտանեկան հարաբերությունները արտահայտող բառեր, ինչպես՝ հայր, մայր, քույր, եղբայր և այլն, գալիս են դեռևս այն շրջանից, երբ չկային կազմավորված ժողովուրդներ Յին գրական հայերենի՝ գրաբարի, և ժամանակակից հայերենի բառապաշարի հիմնական ֆոնդի մեջ շատ քիչ փոփոխություններ են կատարված հաց, ջուր, տուն, մայր, հայր, անտառ, ծառ, բույս, քար, գնալ, խոսել, հարգել, վազել, ուտել, փախչել, երկնչել և բազմաթիվ այլ բառեր ավելի քան երկու հազար տարվա ընթացքում ոչ միայն իրենց ձևով, հնչյունային պատկերով, այլև իմաստով ոչ մի փոփոխության չեն ենթարկվել Այդ նշանակում է, որ ժամանակակից հայերենի տարրերը սաղմնավորվել են շատ հին շրջանում, մեր էրայից շատ ու շատ առաջ Սակայն այդ տարրերը միշտ գտնվելով իրենց զարգացման պրոցեսում՝ անընդհատ կատարելագործվել են և հայ ժողովրդի առաջընթացի հետ համալրվել են նորանոր միջոցներով ու ընդարձակվել իրենց զարգացման օրենքներով

Ակադ Մառը, նրա աշակերտներն ու հետևորդները չկարողանալով ըմբռնել լեզվի էությունն ու առանձնահատկությունները, լեզուն

համարելով վերնաշենքային երևույթ և իր էությամբ դասակարգային՝ նույնացնում էին նրա և հասարակության զարգացման օրինաչափությունները: Այդ սխալ տեսակետները հաստատելու համար, ակադ. Մառը ստեղծեց իր հետազոտությունների հակապատմական մեթոդը՝ քառատարր վերլուծության հնեաբանական մեթոդը, որը հիմնական դրույթներով ելնում էր հակապատմական ու մտացածին այն ենթադրություններից, թե մարդկությունը իր առաջացման ու զարգացման որոշ շրջանում չի ունեցել հնչյունական լեզու, և հասարակության անդամները հաղորդակցվել են միմյանց հետ կինետիկ լեզվով, որի մեջ «գլխավոր դեր է խաղում ձեռքը»։ այդ շրջանում մարդը մտածել է ձեռքով, ունեցել է «ձեռնային խելք», որովհետև «հաղորդակցվելու համար չէր առաջացել հոդորոշ հնչյունների պահանջը»¹:

Ակադ. Մառի այդ պնդումը պատմական ոչ մի փաստով չի ապացուցվում: Մարդկային հասարակությունը չէր կարող պահպանել արտադրությունը, հետևաբար նաև իր գոյությունը, առանց հնչյունական լեզվի: Պատմությունը չգիտե այնպիսի շրջան, երբ թեկուզ ամենահետադեմ և զարգացման ցածր աստիճանին կանգնած մարդկային հասարակությունը չունենար իր հնչյունական լեզուն:

Հնչյունական լեզվի առաջացումը Մառը վերագրում էր հասարակության զարգացման միայն ուշ շրջանին, երբ, նրա կարծիքով, հանդես են գալիս մոգական արարողություններ, որոնք իբր թե «անհրաժեշտ էին արտադրության հաջողության համար և զուգորդվում էին այս կամ այն կոլեկտիվ աշխատանքային պրոցեսի հետ»²: Իբր թե այդ ժամանակ է, որ հեղափոխություն է կատարվում հին համակարգի լեզվի մեջ և առաջանում են լեզվական չորս տարրերը, «չորս մոգական հնչական կոմպլեքսներ», որոնք ուժ ունեին միայն որոշակի «աշխատանքային պրոցեսում»³ և իբր թե ընդհանուր ձևով նշանակում էին «դավանանքի առարկա, տոտեմ, ավելի ուշ՝ աստված»⁴:

Սակայն Մառը դրանով չէր սահմանափակվում նա շարունակում էր խորացնել իր սխալները, պնդելով, թե աշխատանքամոգական արարողությունների հետագա պրոցեսը հանգում է տարրերի, այս-

¹ Ա. Յա. Մառ, Ընտիր երկերի ժողովածու, հ. 1, էջ 132

² Նույն տեղը

³ Նույն տեղը, էջ 140

⁴ Նույն տեղը, էջ 141

պես կոչված մոզական սկզբնական բացականչությունների մշակման և «դրանցից յուրաքանչյուրի համար հաստատվելիք ինչ-որ ամբողջական կոմպլեքսային արտասանության»¹, որը տրվել է տարրերից յուրաքանչյուրին, իսկ «ցեղային խմբավորումներ գոյանալուց ու կալունանալուց հետո»², ազդանշանվել է պահանջվող իմաստով Այս տարրերը, Մառի կարծիքով, սկզբնական շրջանում տարտամ, անորոշ են եղել և հանդես են եկել միասին, ունեցել են մոզական նշանակություն կամ «մոզական ուժ առանց կոնկրետ մտապատկեր, կերպար կամ գաղափար նշանակելու», հետևաբար՝ նաև կոնկրետ, ձևավորված հնչյուններ չեն եղել «Յնչական լեզուն սկսում է ոչ թե առանձին հնչյունների մշակումից, - հավաստում է Մառը, - այլ առանձին ամբողջական կոմպլեքսային հնչյունների օգտագործումից, որ հետագայում զարգացան դարձան հնչական կոմպլեքսներ երեք հնչույթից (ֆոնեմա), չորս տարրից, որոնք սկզբում իրենց հոդորոշությունը հասցրին միայն մինչև եռահնչյունության՝ բաղաձայնի, ձայնավորի, բաղաձայնի՝ Sal, Ber, Yon, Rom անբաժան արտասանումը, որոնցից յուրաքանչյուրը այն ժամանակ չունեին երեք հնչյունի այն բաղադրությունը, որը մենք նկատում ենք այժմ»³ Այսպիսով, ինչպես երևում է Մառի իսկ ասածներից, այդ չորս տարրերը որևէ նյութական և պատմական հիմք չեն ունեցել, լոկ մտացածին դատողությունների արգասիք են և իրենց էությանբ, միատիկական են, կոսմոպոլիտիզմ սնուցանող, պատմական երևույթները կեղծող

Մառը նույնիսկ չկարողացավ պարզել իր իսկ հնարամտած տարրերի թվի հարցը ինչո՞ւ չորս և ոչ թե ավելի կամ պակաս Այդ առթիվ նա գրել է «մեզ մոտ չպարզաբանված մնաց տարրերի թիվը՝ չորսը, և դա այդպես էլ մնում է»⁴

Այդ տարրերը, Մառի պնդումով, բազմացել են՝ նաև տարբերակվելով ու տալով այլ նորակազմություններ, որոնք դարձյալ խաչավորվել են, և այդպես անընդհատ Այսպիսով, հնչյունական հատուկ ձև չունեցող այդ տարրերը, Մառի կարծիքով, ծագելով աշխատանքամոզական արարողության ընթացքում՝ տարբերակվել են, կազմել նոր տարրեր, որոնք ընկել են աշխարհի բոլոր լեզուների հիմքում

¹ Ն. Յա. Մառ, Ընտիր երկերի ժողովածու, հ. 1, էջ 139

² Նույն տեղը, էջ 140

³ Նույն տեղը, էջ 143

⁴ Նույն տեղը, էջ 147

Այս սկզբունքից ելնելով՝ Մառը համեմատում էր աշխարհի բոլոր հին ու նոր լեզուները միմյանց հետ, գտնում նրանց կարծեցյալ ընդհանրությունները՝ օրինակ՝ հայերեն **հանճար** բառը տարրալուծում էր երկու էլեմենտի և նրա մի տարրը՝ **հան** իմաստով հանգեցնում ձեռքին, մյուս տարրը՝ **ճարը** նույնպես կապելով ձեռքի հետ, նրանից ածանցված էր համարում **կար** (կարող), **կուռ**, **ճուռ** բառերը, որոնք առնչակցում էր վրացերեն *kar* (բռնակ, կոր), *ekareba* (դիպցնում է նրան) բառերի հետ բայց ոչ միայն այդ հայերեն **հանճար** բառը նա կապում էր նաև բասկերեն *ar-tu*, *har-tu* (վերցնել, ստանալ, լատիներեն *ar-s*, *art-is*, իտալերեն *art-e* (արվեստ), ֆրանսերեն *ten-ir*, *je tien-s* (պահում եմ), ինչպես նաև գերմաներեն *Hand* (ձեռք), հայերեն **անձն**, **յանձնել**, **առնել** բառերի հետ և այլն։ Մինչդեռ այդ բառերից յուրաքանչյուրը ստուգաբանորեն տարբեր ծագում ունի։ Դրանից բացի, նրանք դարերի ընթացքում փոխվել են, կորցրել իրենց սկզբնական ձևը, նոր կերպարանք ստացել։ Սակայն Մառը այդ բոլորը հաշվի չէր առնում և ժամանակակից լեզուների բառերը համեմատում էր միմյանց հետ, առանց նկատի ունենալու նրանց պատմական անցյալը։

Մառը և նրա հետևորդները նկատի չէին առնում նաև լեզուների զարգացման ներքին օրինաչափությունները, որոնց համաձայն միևնույն աղբյուրն ունեցող բառերը հաճախ այնքան են կերպարանափոխվում, որ միայն լեզվաբանական հատուկ աշխատանքով կարելի է գտնել նրանց հնագույն ձևերը՝ օրինակ՝ ոչ մասնագետի համար դժվար է հասկանալ, որ հայերեն **մայր**, ռուսերեն *мать*, լատիներեն *mater*, պարսկերեն *matar*, հունարեն *meter*, կամ հայերեն **եղբայր** և ռուսերեն *брат*, գերմ *Bruder*, անգլ *brother* բառերը նույն արմատն ունեն։ Այս բոլորից հետևում է, որ տարբեր լեզուների բառերը կարելի է համեմատել միմյանց հետ միայն այն դեպքում, երբ այդ բառերը վերցվում են իրենց պատմական զարգացման մեջ, նկատի են առնվում տվյալ շրջանի համար գործող հնչյունական օրինաչափությունները և կոնկրետ լեզուների զարգացման առանձնահատկությունները՝ օրինակ՝ չի կարելի բացատրել միևնույն աղբյուրից փոխառված հայերեն **փիլիսոփա**, ռուսերեն *философ*, հայերեն **կրկես**, **կենտրոն**, ռուսերեն *цирк*, *центр* բառերի հնչյունական տարբերությունները, առանց նկատի ունենալու այդ բառերի փոխառման

ժամանակը և այդ լեզուներում տվյալ շրջանում գործող հնչյունական օրինաչափությունները

Մառի քառատարր հետաքննական վերլուծությունը չէր կարող բացատրել լեզուների առաջացման ու զարգացման հարցերը, որովհետև նա, իր բոլոր դրսևորումներով հակազդատական ու հակապատմական էր, լեզվական իրողությունները դիտում էր ո՛չ թե իրենց պատմական զարգացման ու ձևափոխման մեջ, այլ լեզուն կրող ժողովրդի պատմությունից անկախ, լեզվական փաստերը իր «տեսության» պրոկրուստյան մահճին հարմարեցնելով

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՅԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԸ

Պատմահամեմատական լեզվաբանությունը, հակառակ Մառի քառատարր վերլուծությանը, XIX դարում մի շարք նվաճումների հասավ կոնկրետ լեզուների ուսումնասիրության բնագավառում

Լեզվաբանական այդ ուղղությունը կոչվեց պատմահամեմատական, որովհետև լեզուները ուսումնասիրելու հիմնական մեթոդը նա ընտրեց լեզուների մեջ պատմականորեն գոյացած ընդհանրությունների և լեզվական փաստերի համեմատությունը Տարբեր լեզուների համեմատությունից պարզվեց, որ աշխարհի լեզուները բաժանվում են զանազան ընտանիքների և խմբերի, որ միևնույն ընտանիքի մեջ մտած լեզուները իրենց քերականության համակարգով և բառային կազմի զգալի տարրերով կապված են միմյանց հետ և պատմականորեն առաջացել են մի աղբյուրից Այդպիսի լեզվական ընտանիքներից հատկապես լավ են ուսումնասիրված հնդեվրոպական, սեմական, ուգրո-ֆիննական, տիբեթաչինական և այլ ընտանիքների մեջ մտած լեզուներից շատերը

Լեզուների ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդը, որը Ֆ Էնգելսը համարել է XIX դարի լեզվաբանության նվաճումը, հնարավորություն տվեց ո՛չ միայն պարզելու լեզուների ծագումնաբանական, այլև զարգացման շատ հարցեր Այդ մեթոդով կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առարկայի կամ երևույթի անվան՝ բառի, բացառությամբ բնածայնական բառերի, նրա հնչյունական արտահայտության ու բովանդակության կամ

բնույթի միջև օրգանական կապ գոյություն ունենալ չի կարող Յուրաքանչյուր լեզվի մեջ հնչյունական որևէ կոմպլեքս ամրացվում է միայն որոշ առարկայի, երևույթի, բայց իր ձևով երբեք չի արտահայտում բառի բնական հատկանիշները Այդ փաստից էլ ելնելով՝ պատմահամեմատական լեզվաբանությունը մի աղբյուրից առաջացած է համարում այն բառերը, որոնք իրենց ձևական արտահայտությամբ և իմաստով նման են միմյանց, օրինակ՝ հայերեն **սիրտ**, ռուսերեն сердце, գերմաներեն Herz, լատիներեն cor, cordis, պարսկերեն zərəd, կամ հայերեն **տասն**, ռուս десяти, պարսկերեն dah, հունարեն deka, լատիներեն decem և այլն բառերը միևնույն աղբյուրն ունեն, որովհետև ինչպես իրենց իմաստով, նույնպես և հնչյունական ձևավորմամբ առաջացել են մի նախատիպից Սակայն այդ բոլորը չեն նշանակում, թե ժամանակակից տարրեր լեզուներում եղած նույնահունչ բառերը միևնույն ծագումն ունեն Նրանք կարող են հնչյունական արտահայտություններով և իմաստով նույնը լինել, բայց ծագմամբ միանգամայն տարբեր Մառն ու Նրա աշակերտներն էին, որ ժամանակակից լեզուներում եղած պատահական նմանությունն ունեցող բառերը կապում էին միմյանց հետ, որովհետև նրանք լեզվական իրողությունները դիտում էին ո՛չ թե իրենց պատմական զարգացման մեջ, այլ հակապատմականորեն, առանց նկատի ունենալու նրանց աստիճանական զարգացման ու փոփոխման հանգամանքները, առանց հաշվի առնելու հնչյունական օրինաչափությունները

Մինչդեռ լեզուները և նույնիսկ յուրաքանչյուր առանձին լեզվի բաղկացուցիչ մասերը զարգանում են անհամաչափ ձևով Պատմական ռեալ փաստերի վրա հիմնված պատմահամեմատական մեթոդը կարողացավ հայտնաբերել մի շարք լեզուների ազգակցությունը և լուսաբանել առանձին լեզուների զարգացման շատ պրոբլեմներ Սակայն այդ բոլոր փաստերը ժխտում էին Մառը և Նրա աշակերտները Նրանք իդեալիստական, հակապատմական էին համարում պատմահամեմատական մեթոդը, մերժում նրա բոլոր նվաճումները

Պատմահամեմատական մեթոդը, իհարկե, ունի նաև թերություններ, որոնք ամենից առաջ արտահայտվում են այդ մեթոդի սահմանափակության մեջ այս մեթոդով նշվել են լեզուների միջև եղած ընդհանրությունները, մեկից դեպի բազում գնացող, բաժանման միջոցով առաջացած լեզուների և լեզվական իրողությունների ընդհանուր

ուղին: Այդ մեթոդով կատարված ուսումնասիրություններում ցույց էին տրվել լեզուների միջև եղած տարբերությունները, հետևաբար, կոնկրետ լեզուների զարգացման ներքին օրինաչափությունները՝ լեզուն կրող ժողովրդի պատմության տարբեր շրջաններում: Պատմահամեմատական հին մեթոդով հնարավոր էր պարզել նաև տոհմի, ցեղի, ժողովրդի և ազգի լեզուների կազմավորման հարցերը:

Ծիշտ կերպով սահմանելով ազգակից լեզուների միջև եղած ընդհանրությունները՝ պատմահամեմատական մեթոդը, սակայն, նշել է այդ ընդհանրությունների նոր և հին շրջանների արտահայտությունների ուղիղ գիծը միայն: Այսպես, օրինակ՝ պատմահամեմատական մեթոդով որոշվել է, որ հայերեն **եղբայր** բառի մեզ հասած ամենահին ձևը սանսկրիտերեն *bhratar*-ն է, բայց ինչպե՞ս և ե՞րբ այդ հնագույն ձևից ստացվեց հայերեն **եղբայրը**, հայոց լեզվի զարգացման ո՞ր շրջանում և ինչո՞ւ հատկապես ստացավ արդի կերպարանքը և այլն, այդպիսի հարցերով, ինչպես և միջանկյալ շրջանի պատմությամբ, պատմահամեմատական մեթոդի ներկայացուցիչները չեն զբաղվել, և բնական է, որ խորհրդային լեզվաբանությունը չի կարող նկատի չունենալ այդ հանգամանքը:

Համեմատվել են զարգացման տարրերի շրջանների և պատմականորեն միմյանցից դարերով բաժանված տարբեր լեզուները միմյանց հետ. այդ հանգամանքը բացառել է կոնկրետ լեզուների զարգացման տվյալ շրջանին հատուկ ներքին օրինաչափությունները կամ դրանց դրսևորման կոնկրետ ձևերը:

Այս կամ այն բառի հնատիպը որոշելիս նկատի չի առնվել ժամանակը, այդ պատճառով էլ ազգակից լեզուների մեջ եղած ընդհանրությունները հանգեցվել են միայն մի ձևի և այդ ուղիով վերականգնվել է նախալեզուն կամ նախատիպը մի ընտանիքի լեզուների համար անխտիր՝ առանց առանձին լեզուների առաջացման ու ձևավորման կոնկրետ պայմանների հաշվառման: Այսպես, օրինակ՝ հնդեվրոպական լեզուների ընտանիքի մեջ եղած բոլոր լեզուները ուղիղ գծով հանվել են նախալեզվից, նկատի չեն առնվել լեզուների ազգակցության պատմականությունը, նրանց հետագա ձևափոխություններն ու լեզուների զարգացման նոր օրենքները:

Պատմահամեմատական մեթոդով հնարավոր չէ պարզել կոնկրետ լեզուների հիմնական բառաֆոնդի և քերականության զարգացման ու կատարելագործման ընթացքը, նրանց փոխհարաբերու-

թյունն ու փոխադարձ կապը հասարակության զարգացման տարբեր շրջանում:

Պատմահամեմատական մեթոդի այս թերությունները պայմանավորված են այդ մեթոդով ուսումնասիրություններ կատարողների հին շկոլայի ներկայացուցիչների մեթոդոլոգիայով: Այդ թերությունները, սակայն, չեն բացառում կամ թուլացնում այն մեծ դերը, որ խաղացել է պատմահամեմատական լեզվաբանությունը՝ լեզուների ազգակցությունը՝ և զարգացման հարցերը ուսումնասիրելու գործում:

Սակայն Մամը և Նրա աշակերտները բացասում էին այդ դերը, ժխտում պատմահամեմատական մեթոդով ձեռք բերված ամենամեծ նվաճումը՝ լեզուների ազգակցության բացահայտումը, և դրանով մեծ վնաս հասցնում կոնկրետ լեզուների ուսումնասիրությանը: Նրանք փորձում էին հաստատել, թե լեզուների զարգացումը, լեզվի մի որակից մի այլ որակի անցումը կատարվում է պայթյունի միջոցով, լեզվական հին որակը ամբողջապես լիկվիդացնելու ճանապարհով, այսինքն՝ ստադիալ անցումներով, որոնցից յուրաքանչյուրը իբր թե պայմանավորված է նյութական կյանքի որակապես տարբեր նոր աղբյուրներով, հասարակական նոր կարգերով: Նրանք կարծում էին, թե մարդկությունը որոշ հասարակական հարաբերությունների ընթացքում ստեղծելով իր լեզուն՝ ամեն մի բազիսի փոփոխման հետ, ամեն մի հասարակական նոր հարաբերությանը համապատասխան հիմնավորապես փոխում ու վերստեղծում է այն: Լեզուն համարելով վերնաշենքային երևույթ՝ նրանք կա՛մ նույնացնում էին լեզուն և մտածողությունը, կա՛մ կտրում էին լեզուն մտածողությունից և հավաստում, թե բառերի իմաստների ընդհանրությունը միավորում է արտաքինապես տարբեր լեզվական բազմաթիվ ձևեր, բայց այդ ընդհանրությունը երբեք չի տանում դեպի քերականական ձևերի ընդհանրությունը: Բացասելով լեզուների ծագումնաբանական ընդհանրությունը և ժխտելով նրանց ազգակցությունը՝ նրանք մեղանջում էին պատմական փաստերի դեմ, որովհետև լեզուների ազգակցությունը պատմական փաստերով հաստատված իրողություն է:

ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Լեզվի զարգացման հարցը իր բազմակողմանիությամբ քննել են մարքսիզմի կլասիկները: Նրանք նշել են, որ ինչպես հասարակական ամեն մի երևույթ, նույնպես և լեզուն ունի իր զարգացման հատուկ

օրենքները, որոնցով էլ նա տարբերվում է հասարակական մյուս երևույթներից՝ Սակայն ակադ. Մառը և նրա հետևորդները գտնում էին, որ լեզվի զարգացումը պայմանավորված է հասարակության նյութական կյանքի զարգացմամբ՝ Եվ քանի որ հասարակական կյանքը սոսկ էվոլյուցիոն փոփոխություններով չի զարգանում, այլև՝ հեղափոխություններով, հասարակության արտադրական հարաբերությունների հեղափոխական անցումով, ապա լեզուները նույնպես զարգանում են թռիչքներով և հեղափոխական անցումների արդյունք են Այդ պատճառով էլ լեզվի զարգացման հիմնական օրինաչափությունը նրանք համարում էին լեզվի այսպես կոչված ստադիալ զարգացումը՝ Մարքսիզմը հաստատում է, որ խորապես սխալ կլինի կարծել, թե լեզվի զարգացումը տեղի է ունեցել նույնպես, ինչպես վերնաշենքի զարգացումը՝ գոյություն ունեցողի ոչնչացման և նորի կառուցման միջոցով

Հասարակության կյանքում կատարված հեղափոխական փոփոխությունները չեն վերացնում գոյություն ունեցող լեզուն, չեն փոխում նրա կառուցվածքը լեզվի անցումը հին որակից նոր որակի տեղի է ունենում դարերի ընթացքում՝ նոր որակի տարրերի աստիճանական կուտակման և հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով

Մառի հակազիտական, հակապատմական ստադիալ տեսության հետ սերտորեն կապված է նաև լեզուների խաչավորման մառյան տեսությունը, ըստ որի նոր բառերի և քերականական ձևերի գոյացման, լեզվի զարգացման, նոր լեզուների առաջացման հիմնական գործոններից մեկը լեզուների խաչավորումն է Մինչդեռ լեզուների պատմությունը ցույց է տվել, որ դասակարգային հասարակության մեջ լեզուների խաչավորման պրոցեսը որևէ վճռական նշանակություն չի ունեցել և լեզուների խաչավորումը չի տվել ինչ-որ որակով նոր լեզու Լեզուները, անկասկած, գտնվում են փոխադարձ շփման ու ազդեցության անընդհատ պրոցեսի մեջ, բայց երբեք չի պատահել, որ այդ փոխադարձ շփումից և խաչավորումից առաջացած լինեին այնպիսի լեզուներ, որոնք նման չլինեին իրենց նախորդներից որևէ մեկին Հայտնի է, որ Բալկանյան թերակղզում կան բազմաթիվ ժողովուրդներ և լեզուներ, որոնց սահմանները չեն համընկնում պետական և քաղաքական սահմանների հետ Շատ լեզուներ, ինչպես հունարենը, բուլղարերենը, ռումիներենը, թուրքերենը, ալբաներենը և

այլն, հաճախ գործում են միևնույն տարածքում, բայց բոլոր դեպքերում էլ այդ լեզուները պահպանում են իրենց ինքնուրույնությունը Փոխադարձ շփման և երկար տարիներ տևող խաչավորման պրոցեսում լեզուները, թեև ներգործում են միմյանց վրա, ազդում, նույնիսկ միաձուլվում, բայց բոլոր դեպքերում էլ միշտ մի լեզու է հաղթող լինում Լեզուների խաչավորման ընթացքում մեծ նշանակություն ունեն ինչպես տնտեսական և քաղաքական պայմանները, նույնպես և ժողովուրդների փոխադարձ կապն ու վստահությունը ճնշման առկայության պայմաններում ճնշման ենթակա լեզուներն ավելի ուժեղ դիմադրություն են ցուցաբերում, չեն խառնվում Թուրքական ասիմիլյատորները որքան ուժեղացնում էին հույների, հայերի և այլ ազգերի վրա իրենց ճնշումը և նրանց լեզուները ձուլելու ձգտումը, այնքան ուժեղանում էր դիմադրությունը թուրքերենի դեմ թուրքերը երբեք չկարողացան վերացնել հունարենը, թեև նրանք դարեր շարունակ ձգտում էին դրան Որոշ շրջանում, իբրև պաշտոնական լեզու, հույները ստիպված գործածում էին թուրքերենը, բայց նույնիսկ այդ վայրերում նրանք երբեք չփոխարինեցին սրտի լեզուն հաց հանապազօրյայի լեզվով Հաճախ նույնիսկ որևէ ժողովրդի փոքրաթիվ մի հատված պահում է իր լեզուն երկար տարիներ շարունակ Հայտնի է, որ Պարսկաստանի, Հնդկաստանի և շատ այլ հայկական գաղթավայրերում դարեր շարունակ պահպանվել է հայերենը, թեև այդ վայրերի հայ ժողովրդի փոքրաթիվ հատվածները ստիպված են եղել հաղորդակցելու տեղի ժողովրդի հետ ոչ մայրենի լեզվով Սակայն ոչ միշտ է, որ լեզուները կարող են այդպիսի իրավագուրկ դրությամբ պահպանվել օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, նույնիսկ այնպիսի հարուստ լեզուներ, ինչպիսին է գերմաներենը և այլն, տեղի են տալիս անգլերենի առաջ Մի շարք երկրներում բնակություն հաստատած ժողովուրդները արագ կերպով մոռացության են մատնում իրենց լեզուն Այդպես կատարվեց Լեհաստանում բնակություն հաստատած հայերի, Ֆրանկֆուրտի հյուսիսում գտնված գյուղերի ֆրանսիական բնակչության, Իսպանիայում XVIII դարում բնակություն հաստատած գերմանացիների լեզուների հետ Այդ բոլոր դեպքերում լեզուների խաչավորման արդյունքը եղել է այն, որ հաղթել է իշխող լեզուն և ոչ թե ստացվել ինչ-որ նոր որակով նոր լեզու Եվ այդ հասկանալի է խաչավորման ժամանակ ամենից առաջ փոխ են առնվում բառերը, իսկ բառերը

առանց քերականության լեզու չեն կազմում Օրինակի համար, եթե որևէ մեկը ասի՝ «սովետական ինտելիգենցիան ամենապրոգրեսիվ ինտելիգենցիան է աշխարհում», ոչ ոք չի կարող ասել, թե նա հայերեն չի խոսում մինչդեռ այդ նախադասության ինքնուրույն իմաստ ունեցող բոլոր բառերն էլ փոխառություն են, թեև նրանցից յուրաքանչյուրը հայ ժողովրդի զարգացման տարբեր շրջանում է փոխառված

Լեզուների զարգացման ընթացքում համակենտրոնանում ու ընդհանուր լեզվի մեջ միաձուլվում են նաև միևնույն լեզվի տարբեր բարբառները Սակայն նրանց մոտեցման ու ներթափանցման պրոցեսը նման չէ տարբեր լեզուների խաչավորման ընթացքին, Միևնույն լեզվի բարբառների խառնման ժամանակ էլ կարող է հաղթող դուրս գալ միայն մի բարբառ, սակայն այդ պարտադիր չէ կարող են տարբեր բարբառների քերականական իրողությունները հավասար չափով ներթափանցել ընդհանուր լեզվի մեջ և կազմել նրա տարրերը Միջին հայերենը, օրինակի համար, չի կարելի ասել, թե ձևավորվել է կամ ձևավորվում էր բացառապես մի բարբառի իրողությունների հիման վրա Այդ լեզվի քերականական կատեգորիաները բազմազան ձևերով էին հանդես գալիս Միջին դարերում նույնիսկ պետական, պաշտոնական գրագրությունների ու փաստաթղթերի մեջ չէր կարելի լեզվական միասնություն տեսնել հոգնակիների տարբեր վերջավորություններ, միևնույն բառը մի դեպքում մեկ, մի այլ դեպքում մյուս հոլովման ենթարկվելը, **կը** և **ում** ճյուղերի բարբառների խոնարհման համակարգին հատուկ եղանակների և ժամանակների առկայությունը և այլն ցույց են տալիս, որ իր կազմավորման պրոցեսում գտնվող միջին հայերենի մեջ համադրվում էին ինչպես գրաբարի, նույնպես և հայերենի տարբեր բարբառների իրողությունները

Լեզուների զարգացումը տեղի է ունենում նրանց հիմնական տարրերի՝ քերականության և հիմնական բառաֆոնդի ծավալման հարստացման ու կատարելագործման միջոցով Բոլոր այն փոփոխությունները, որոնք չեն սպասարկում լեզվի այդ տարրերի կատարելագործմանն ու հարստացմանը, չեն կարող կապակցվել լեզվի զարգացման օրենքների հետ

Լեզվի քերականության ու հիմնական բառաֆոնդի կատարելագործումն ու զարգացումը կատարվում է նրանց նոր որակի հետ

կապված տարրերի աստիճանական կուտակման ու համալրման միջոցով: Այդ նշանակում է, որ լեզվի զարգացման հիմնական օրենքները ամենից առաջ արտահայտվում են լեզվի քերականության ու հիմնական բառաֆոնդի մեջ կատարված փոփոխություններով:

Սակայն լեզվի զարգացման օրենքները ի սկզբանե տրված ինչ-որ անփոփոխ երևույթներ չեն: Նրանք փոփոխվում ու կատարելագործվում են և տվյալ լեզուն կրող ժողովրդի զարգացման տարբեր շրջաններում ունենում են արտահայտման տարբեր եղանակներ ու ձևեր: Այդ հիմունքով էլ լեզվի զարգացման որևէ շրջանում լեզվական օրենքի մասնակի, ոչ օրինաչափ դրսևորումը կարող է մի այլ շրջանում դառնալ օրինաչափ երևույթ: Այսպես, օրինակ՝ անկատար դերբայի **ում** վերջավորությունը իր նոր իմաստով, մեր թվականության V դարից հետո հանդես էր գալիս իբրև մասնակի, դեռևս ընդհանուր կիրառություն չգտած երևույթ, իսկ հետագայում, XII-XIII դարերից հետո, նա տարածվում ու արմատանում է հայոց լեզվի մեջ և նոր բարբառների դասակարգման կամ ճանաչման հիմք է տալիս: Բայց **ում** վերջավորության տարածումը կապված է մի շարք հանգամանքների, հայոց լեզվի մեջ միջին դարերում կատարված փոփոխությունների ու տեղաշարժերի հետ: Եվ ընդհանրապես լեզվական յուրաքանչյուր երևույթ սերտորեն կապված է լեզվի զարգացման ընդհանուր պրոցեսի բազմապիսի արտահայտությունների հետ: Սակայն լեզվի բոլոր տարրերը միևնույն արագությամբ չեն փոխվում: Լեզվի քերականության տարրերը ավելի դանդաղ են փոփոխվում: Հաճախ դարեր շարունակ պահպանվում են միևնույն ձևերը նույն իմաստներով: Օրինակ՝ հայերենի բայադեմքերի վերջավորությունները պահպանվել են հազարավոր տարիներ և միայն աննշան փոփոխությունների են ենթարկվել, իսկ բառակազմական մի շարք երևույթներ առաջացել են հայոց լեզվի գրավոր շրջանում, ինչպես, օրինակ՝ **շար, պար, գեր, մակ** և այլ նախածանցներ: Այդ նոր ածանցները չեն վերացրել կամ գործածությունից դուրս չեն մղել հայերենի մնացած ածանցները և չեն փոխել հայերենի ածանցավորման սկզբունքները: Այդուհանդերձ այդ փոփոխությունները հարստացրել ու զարգացրել են հայերենը, սպասարկել նրա նոր որակի հետ կապված տարրերի կայունացմանն ու տարածմանը:

Լեզվի քերականության ու բառակազմության կանոնները զարգանում են ո՛չ միայն նոր ձևերի ստեղծմամբ, այլև եղած հին ձևերի

նոր իմաստների կամ առումների միջոցով Այսպես, օրինակ՝ գրաբարի բայերի սահմանական ներկայի և անցյալ անկատարի համապատասխան ձևերը ժամանակակից հայերենում և մի շարք բարբառներում արտահայտում են ըղձական եղանակի ապառնու և անցյալի համապատասխան ձևերի իմաստներ Կամ գրաբարի **ք** հոգնակի վերջավորությունը կիրառվում է իբրև բառակազմական մասնիկ և այլն Լեզվի քերականության մեջ կատարվում են նաև այլ կարգի փոփոխություններ վերանում են քերականական այնպիսի կատեգորիաներ, որոնք հետագայում չեն համապատասխանում լեզվի հաղորդակցական ֆունկցիայի պահանջներին, առաջանում են լեզվի նոր որակի տարրերի հետ կապված քերականական նոր կատեգորիաներ և այլն Գրաբարը, օրինակի համար, չունեւ ժամանակակից հայերենի բոլոր եղանակներն ու ժամանակները, իսկ ժամանակակից հայերենում չկան մեր բարբառներում եղած մի շարք այլ ժամանակներ և նրանց համապատասխան ձևերը Լեզվի մեջ կատարված բոլոր տեղաշարժերը, ինչ ինտենսիվությամբ էլ ընթանան, կապված են միմյանց հետ, պայմանավորված են միմյանցով, թեև նոր որակ ցույց տվողները ամենից առաջ արտահայտվում են քերականական փոփոխություններով

Լեզվի աֆբողջ համակարգի՝ հնչյունաբանության, քերականության ու բառային կազմի զարգացման կանոնների աստիճանական կատարելագործումն ու ընդլայնումը որակական փոփոխություններ են մտցնում լեզվի համակարգի մեջ Սակայն ամեն մի մասնակի փոփոխություն կամ լեզվի մեջ կատարված ամեն մի տեղաշարժ հիմք չի տալիս խոսելու տվյալ լեզվի նոր որակի մասին Միայն այն ժամանակ լեզուն հին որակից նոր որակի է անցնում, երբ նրա հնչյունաբանության, բառային կազմի ու քերականության նոր որակի հետ կապված տարրերը աստիճանաբար կուտակվելով ու զարգանալով՝ գերակշռում են հին որակի տարրերին և ընդգրկում լեզվի հաղորդակցական ֆունկցիան ժողովրդի զարգացման տվյալ շրջանում իրականացնելու համար անհրաժեշտ լեզվական հիմնական երևույթները

Այսպիսով, լեզվի զարգացման օրենքները ամենից առաջ արտահայտվում են լեզվի հիմնական տարրերի կատարելագործման ու զարգացման միջոցով Խաչավորումը կամ ազդեցությունները չեն կարող փոխել լեզվի էությունը, որակային անցումների հիմք

հանդիսանալ նրանք կարող են միայն սպասարկել լեզվական այս կամ այն երևույթի տարածմանը, բառապաշարի հարստացմանը և ոչ թե զարգացման օրենքների փոփոխմանը

ԼԵԶՈՒՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ԵՐՁԱՆՆԵՐՈՒՄ

Մառը և նրա աշակերտներն ու հետևորդները գտնում էին, թե ընդհանրապես ցեղային, ժողովրդական և ազգային լեզուները առաջանում են մերձեցման և խաչավորման ուղիով, որ եթե պատմական տվյալները վկայում են, որ ժողովուրդներն առաջացել են բազմաթիվ ցեղերի միացումից, ուրեմն նաև նրանց լեզուները պետք է առաջացած լինեին բազմաթիվ ցեղային լեզուների խառնուրդից՝ դրանով նրանք նույնացնում էին ժողովուրդների և լեզուների առաջացման օրինաչափությունները

Ժողովուրդների կազմավորման պատմությունը ցույց է տվել, որ հասարակության զարգացման տարբեր շրջաններում ժողովուրդները տարբեր վիճակի մեջ են ապրել, տարբեր զարգացում ունեցել տոհմատիրական հասարակության զարգացման որոշ շրջանում ազգաբնակչության աճման հետ անընդհատ բաժանվել են ցեղն ու բարբառը և նոր ցեղերի ու բարբառների սկիզբ են դրել՝ Երկար ժամանակ տևող այդ պրոցեսը, որ էնգելսն անվանել է նոր ցեղերի և լեզուների առաջացման պրոցես՝ բաժանման միջոցով, ստեղծել է ազգակից բազմաթիվ ցեղեր ու լեզուներ, որոնք իրենց մեջ սնել են ժամանակակից լեզուների տարրերը

Ազգակցական կապերով կապված սկզբնական ցեղերը կոտորակվելով ու բաժանվելով, խառնվելով ու խաչավորվելով՝ հետզհետե տարածվել են մի լայնածավալ երկրամասի վրա և կազմել ցեղերի ամբողջ խմբեր՝ հաճախ միմյանցից բաժանված ցեղերի լեզուները փոխվել են այն աստիճան, որ ո՛չ միայն միմյանց համար անհասկանալի են դարձել, այլև, էնգելսի խոսքերով ասած, անհետացել է «նրանց սկզբնական միասնության համարյա ամեն մի հետք» Այսպիսով, տոհմատիրական հասարակարգում գոյություն են ունեցել բազմաթիվ ազգակից ցեղեր, որոնք ունեցել են իրենց բարբառները՝ Նախնադարյան, ոչ դասակարգային հասարակության քայքայման,

ցեղերի և տոհմական կազմակերպությունների վերացման ու դասակարգային հասարակության առաջացման հետ կազմավորվել են ժողովուրդներ և էթնիկական լեզուներ, որոնք ժառանգել են ժողովրդի կազմի մեջ մտած ազգակից ցեղերի լեզուների կամ բարբառների ընդհանուր հատկանիշները ժողովուրդների գոյացման և էթնիկական լեզուների կազմավորման հետ փոխվել են ընդհանուր-համաժողովրդական լեզվի և բարբառների միջև եղած հարաբերությունները, ուժեղացել է ընդհանուր լեզվի դերը, ավելի է տարածվել նրա ազդեցությունը բարբառների վրա, և ընդարձակվել նրա գործունեության շրջանակները;

Սակայն էթնիկական լեզուների կազմավորումը ամենուրեք միակերպ չի ընթացել, և ընդհանրապես ժողովուրդների լեզուների կազմավորումն ու զարգացումը չի կարող միշտ համընկնել ժողովրդի գոյացման ու զարգացման հետ: Ժողովրդի մեջ կարող են մի ցեղի իշխանության տակ համախմբվել շատ ցեղեր և կազմել նրա բաղկացուցիչ տարրերը, իսկ լեզուն կարող է կազմավորվել միայն մի լեզվի կամ մի բարբառի հիման վրա, ինչպես այդ կատարվեց հին Հունաստանում, մեր թվականությունից առաջ IV դարում: Հուն ժողովրդի ընդհանուր լեզվի հիմքում այդ ժամանակ դրվում է Ատտիկեի բարբառը, որովհետև Աքեմենյան կայսրության խորտակման հետևանքով լայն հնարավորություններ են ստեղծվում նրա զարգացման ու տարածման համար: Հին Հռոմում լատիներենն է դառնում ընդհանուր լեզու, որը ձևավորվում է նախ քաղաքում՝ Հռոմում, ապա տարածվում ու դառնում է ամբողջ Իտալիայի ընդհանուր լեզու՝ իր մեջ ձուլելով շատ բարբառներ և նույնիսկ առանձին լեզուներ Ֆրանսիայում, երբ Ֆրանսիայի բոլոր շրջանները միավորվում են մի թագավորության իշխանության տակ, Իլ-դե Ֆրանսի բարբառը տարածվում ու դառնում է Ֆրանսիայի ընդհանուր լեզու: Հունարենի, ֆրանսերենի և լատիներենի ուժեղացման ու տարածման մեջ նշանակալից դեր են խաղացել ոչ միայն պետությունն ու քաղաքական այլ հաստատություններ, այլև քաղաքներն ու քաղաքային կուլտուրայի տարածումը: Մինչդեռ այդպես չի ընթացել ընդհանուր լեզուների կազմավորումը Արևելքի մի շարք երկրներում: Այդ երկրներում, ի տարբերություն Արևմուտքի, էթնիկական ընդհանուր լեզուների ձևավորման մեջ վճռական դեր են կատարել ցեղային միությունների լեզուները՝ Օրինակ՝ հայերը իբրև ժողովուրդ սկսում են կազմավորվել ցեղա-

յին միությունների հիման վրա Հայ ժողովրդի կազմավորման ընթացքում վճռական դեր կատարած նախահայկական մի շարք ցեղեր և նրանց միություններն այնքան ուժեղ են եղել մեր թվականությունից 10–14 դար առաջ, որ կարողացել են ո՛չ միայն պայքարել իրենց գոյության համար, այլև որոշ նվաճումներ կատարել Միայն իրենց ցեղային միությունների ուժեղացմամբ պետք է բացատրել այն հանգամանքը, որ նրանք չեն ձուլվել ժամանակի՝ ուժեղ պետություն ունեցող ցեղերի մեջ, թեև շատ հաճախ ենթարկվել են նրանց հարձակմանը Ավելին, հայկական ցեղային միությունը իրեն է ձուլել իր իշխանության տակ եղած ոչ ազգակից շատ ցեղերի նրանք, ինչպես նշում է ակադ. Մանանդյանը, «Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ եղել են առանձին ժողովուրդներ՝ յուրաքանչյուրը իր սեփական լեզվով կամ բարբառով»¹, որոնք աստիճանաբար ձուլվել են հայերենի մեջ, որը մեր թվականությունից առաջ III–II դարերում արդեն ընդհանուր լեզու էր ո՛չ միայն ազգակից ցեղերի, այլև հայերին միացած տարբեր ցեղերի համար Սակայն այդ դեռ չի նշանակում, թե Հայաստանում այդ ժամանակ չկային բարբառներ և նույնիսկ տարբեր լեզուներ Լեզուների, ինչպես նաև ցեղերի տարբերությունների հետքերը պահպանվել են Հայաստանում մեր թվականության երկրորդ-երրորդ դարերում և թերևս հետագայում Բայց չնայած դրան հայերենը իր ընդհանուր առանձնահատկություններով արդեն կազմավորվել էր մեր թվականությունից առաջ և Տիգրան Երկրորդի թագավորության շրջանում իբրև ընդհանուր համաժողովրդական լեզու գիտակցվում էր հայ ժողովրդի բոլոր հատվածների կողմից

Հայ ժողովրդի զարգացման հետագա ընթացքը, անկասկած, նոր փոփոխություններ ու տեղաշարժեր է առաջ բերել հայ էթնիկական լեզվի ու նրա բարբառների մեջ Հայ ժողովրդի էթնիկական լեզվի կազմավորման շրջանում հայերենի բարբառներից մի քանիսը ավելի մոտ են եղել ընդհանուր լեզվին, քան հետագայում, ֆեոդալական հարաբերությունների զարգացման ու առանձին ֆեոդալական տների ուժեղացման շրջանում

Ֆեոդալական հարաբերությունների ուժեղացման շրջանում փոխվել են բարբառների և ընդհանուր լեզվի միջև եղած հարաբե-

¹ Յ. Մանանդյան, Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության հ Ա, էջ 73

րությունները ֆեոդալիզմի շրջանում ուժեղացել են տերիտորիալ բարբառները, որոնք մեծ մասամբ դարձել են ֆեոդալական առանձին իշխանության տակ գտնված ազգաբնակչության լեզուն։ Նրանցից մի քանիսը, հայ ժողովրդի պատմական կացության հետևանքով, հավանաբար զգալի չափով մոտ են եղել էթնիկական լեզվին, իսկ որոշ մասը՝ բավականաչափ հեռու։ Սակայն բոլոր դեպքերում էլ պետք է ընդունել, որ ժողովրդի ընդհանուր լեզվի և բարբառների միջև եղած ընդհանրությունները զարգացել, կայունացել ու տարածվել են ժողովրդի զարգացման և ուժեղացման հետ ժողովրդի կայունացման, քաղաքների առաջացման, առևտրի զարգացման, մշակույթի և գրականության առաջընթացի, ուժեղ պետության ստեղծման հետ կամաց-կամաց ձևափոխվել են բարբառները և, ենթարկվելով ժողովրդի ընդհանուր լեզվի ազդեցությանը՝ ձուլվել նրա մեջ և իրենց բառապաշարով ու քերականական շատ իրողություններով հարստացրել ընդհանուր լեզուն, որը ժողովրդի պետականության գոյության ընթացքում կատարել է նաև պետական լեզվի ֆունկցիա։

Ընդհանուր ժողովրդական լեզուները, որոնք կազմավորվում են ժողովուրդների կազմավորման հետ, կարող են զարգանալ և դառնալ ազգային լեզուներ, երբ ժողովուրդները զարգանում ու դառնում են ազգեր։ Այդ շրջանում ավելի են ուժեղանում բարբառների և ընդհանուր ազգային լեզվի ընդհանրությունները, համակենտրոնանում են բարբառները ազգային միասնական լեզվի մեջ և աստիճանաբար կորցնում իրենց ինքնուրույն գոյության հետքերը։ Այդ բոլորը, սակայն, չեն կատարվում ժողովրդից, նրա պատմական զարգացման ընթացքից անկախ։ Բոլոր դեպքերում էլ լեզվի զարգացման ներքին օրինաչափությունները ինքնուրույն գոյություն ունենալու հետ միասին՝ կապված են ժողովրդի զարգացման պատմության հետ։ Այդ պատճառով էլ չի կարելի ուսումնասիրել լեզուն և բարբառները առանց դրանք կապելու ժողովրդի պատմության հետ։ Մինչդեռ Մառը և նրա աշակերտները լեզուները ուսումնասիրում էին համաշխարհային մասշտաբով, յուրաքանչյուր լեզու դիտում իբրև համաշխարհային, այսպես կոչված, լեզվաստեղծական միասնական պրոցեսի մի օղակը։

Հայկական իրազատության մեջ Մառի հայ հետևորդները նույնպես ելնելով մառյան վերացական, հակապատմական և հակագի-

տական սկզբունքներից՝ հայերենի բարբառները և հայոց լեզուն դիտում էին իբրև լեզվաստեղծական համաշխարհային միասնական պրոցեսի առանձին օղակներ, որոնց ուսումնասիրությունը իբր թե կարող է բացահայտել մարդկային մշակույթի պատմության գաղտնիքները համաշխարհային մասշտաբով Լեզուների ուսումնասիրության այդպիսի վերացական և հակապատմական մեթոդը, իհարկե, ոչ մի կերպ չէր կարող բացահայտել նրանց առաջացման ու զարգացման իսկական օրինաչափությունները՝ ժողովրդի զարգացման տարբեր շրջաններում Հասարակության, ժողովրդի և կոնկրետ լեզուների պատմության տվյալների բացասման ուղիով ընթանալով՝ Մառը, նրա աշակերտներն ու հետևորդները որոշ շրջանի համար հատուկ օրինաչափությունները տարածում էին մարդկության պատմության բոլոր շրջանների վրա, շփոթում հասարակական տարբեր երևույթները միմյանց հետ, նույնացնում լեզուն և մշակույթը

Այսպիսով, ինչպես տոհմային ու ցեղային, նույնպես և եթնիկական ու ազգային լեզուները կազմավորվում են ո՛չ թե մի հարվածով, մի անգամից, այլ երկար դարերի ընթացքում Ցեղային, ժողովրդական և ազգային լեզուները միմյանց հետ սերտ կերպով կապված լինելով հանդերձ՝ լեզվական նոր որակներ են, որոնք ունեն իրենց կոնկրետ պատմությունը, զարգացման ներքին օրենքները, հեռանկարներն ու խնդիրները Նրանք կապված են հասարակության զարգացման տարբեր շրջանների հետ Ազգային լեզուների զարգացման նախապայմաններից մեկը այդ լեզուն գրականությամբ ամրացնելը, նրա առաջընթացի դեմ եղած բոլոր խոչընդոտները հաղթահարելն ու նրա միասնության պահպանելն է, որովհետև միայն լեզվի այդ միասնության պահպանումը կարող է հնարավորություն տալ ազգաբնակչության խմբավորման, զարգացման ու բարգավաճման համար Չի կարող գոյություն ունենալ որևէ ազգ, առանց ազգային միասնական լեզվի

Մառը և նրա աշակերտները գտնում էին, որ ազգային լեզուները չեն կարող դասակարգային չլինել, որ ազգային լեզուները ծառայում են միայն բուրժուազիային

Մարքսիզմի կլասիկները ազգային լեզուն չեն կապել առանձին դասակարգերի հետ Նրանք ընդգծել են, որ ազգային լեզուն միասնական է ամբողջ ազգի համար, որ դասակարգերի գոյությունը ազգի ներսում չի բացառում ընդհանուր, միասնական լեզվի անհրաժեշ-

տուրքունը, որ ազգային լեզուների կազմավորման պրոցեսը տարբեր ժողովուրդների մոտ տարբեր ուղի կարող է ունենալ Բոլոր դեպքերում էլ նկատի պետք է ունենալ ժողովրդի կոնկրետ պատմությունը, այսպես, օրինակ, հայոց հին գրական լեզուն՝ գրաբարը, մեր թվականության մոտավորապես X-XII դարերում դադարում է հասկանալի լեզու լինելուց հայ ժողովրդի բոլոր հատվածների համար Այդ շրջանից հայկական տեղական մի շարք բարբառների ընդհանուր հասկանալի փաստերի հիման վրա սկսում է ձևավորվել նոր գրական լեզու Սակայն այդ նոր գրական լեզվի՝ միջին հայերենի, զարգացման պայմանների փոփոխման, հայ ժողովրդի տնտեսական և քաղաքական կյանքում կատարված տեղաշարժերի և հայ պետականության վերացման հետևանքով կանգ է առնում միջին հայերենի կազմավորման պրոցեսը, և սկսում են աշխուժանալ մի շարք բարբառներ, ստեղծվում է գրականություն այդ բարբառներով և այլն Իսկ հետագայում, երբ փոխվում են հայ ժողովրդի զարգացման պայմանները, ընդարձակվում են կապիտալիստական հարաբերությունները և ձևավորվում է հայ ազգը, սկսում է կազմավորվել հայոց ազգային լեզուն, որը իր զարգացման շատ դրսևորումներով տարբերվում է այլ ժողովուրդների ազգային լեզուների զարգացման ընթացքից Հայոց ազգային լեզվի կազմավորման պրոցեսը զուգակցվում է հին հայերենը՝ գրաբարը, իբրև գրական լեզու օգտագործելու տենդենցների դեմ տարվող պայքարի հետ Սլավոնական մի շարք ժողովուրդների՝ ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների ազգային լեզուների կազմավորման ժամանակ նույնպես պայքար է սկսվում հին գրական լեզվի գործածության դեմ Բայց այդ պայքարը, որը իր ժամանակի համար առաջադեմ շարժում էր, չէր բացառում այդ ժողովուրդների գրական հին լեզուների իրողությունների օգտագործման անհրաժեշտությունը Չարգացման այդպիսի ընթացք չեն ունեցել Արևմտյան Եվրոպայի մի շարք ազգային լեզուներ Իբրև ընդհանուր կանոն, այդ լեզուների կազմավորման համար մղված պայքարը ուղղված է եղել նաև հին գրական լեզվի՝ լատիներենի իրողությունները օգտագործելու դեմ Երբ այդ ազգային լեզուները ձևավորվել են և կատարել գրական լեզվի ֆունկցիա՝ ամբողջապես դուրս է մղվել լատիներենը, թեև այդ լեզուն իր իրավունքներում պահելու համար ոտքի է կանգնել ամբողջ կաթոլիկ հոգևորականությունը՝ Յոմի պապի գլխավորությամբ

Մառը և Նրա հետևորդները ջանում էին ապացուցել, թե ազգային լեզուն ստեղծում է բուրժուազիան, որ սա ընդհանուր չի կարող լինել ազգի համար, որ իբր թե այդ լեզուն չի կարող հասկանալի լինել ժողովրդական լայն հատվածներին, որովհետև «իշխող դասակարգի խոսվածքն» է, որ դառնում է գրական լեզու, իսկ ժողովրդական լեզուները իրավունք չեն ստանում տեղ գտնելու գրականության մեջ և շարունակում են պահպանվել միայն ժողովրդի բերանում Այդ պնդումը հակապատմական է

Ազգային լեզուները իրենց եությամբ ժողովրդական խոսակցական ընդհանուր լեզվին չեն հակասում, նրանց մեջ եղած տարբերությունն այն է, որ գրական լեզուն խոսակցական լեզվի գրավոր արտահայտությունն է, նրա գրական մշակման ենթարկված ձևը ժողովրդական խոսակցական և գրական լեզվի քերականության ու բառային հիմնական ֆոնդի միջև եական տարբերություններ չկան, այդ պատճառով էլ նրանք ո՛չ թե տարբեր, այլ միևնույն լեզուն են *ժողովրդական խոսակցական լեզվի և նրա գրավոր արտահայտության ձևի՝* գրական լեզվի միջև եղած հնչյունական և ձևական որոշ անհամապատասխանություններ հասարակության զարգացման տարբեր շրջաններում կարող են ավելի թույլ արտահայտվել կամ ավելի ընդգծվել Սակայն այդ տարբերությունները, որոնք որոշ դեպքերում արտահայտվում են նաև տարբեր բարբառների գոյությամբ, չեն ժխտում ազգի միասնական լեզուն, այլ հաստատում են նրա գոյությունը, օժանդակում են նրա միջոցների ընդարձակմանն ու զարգացմանը

Այսպիսով, լեզուն սերտորեն կապված է հասարակության հետ, ապրում ու զարգանում է հասարակության հետ Բոլոր լեզուները ունեն զարգացման ընդհանուր օրենքներ, սակայն յուրաքանչյուր լեզվի հատկությունները երևում են միայն իրենց զարգացման մասնակի օրենքների, ներքին օրինաչափությունների մեջ, որոնց ուսումնասիրությունը լեզվաբանության գլխավոր խնդիրն է Յուրաքանչյուր լեզու իր զարգացման ներքին օրինաչափությունների շնորհիվ դարերի ընթացքում պահպանում է իր հիմնական առանձնահատկությունները՝ իր քերականությունն ու հիմնական բառաֆոնդը և զարգանում ու կատարելագործվում է Այդ նշանակում է, որ լեզվի զարգացման այն շրջանները, որոնք կապված են լեզվի մեջ կատարված որակական փոփոխությունների հետ, չեն կարող զուգահեյլ

հասարակության զարգացման հիմնական շրջանների, բազիսների և վերնաշենքերի փոփոխմանը Լեզվի բառավաշարի հարստացումը, նոր բառերի ստեղծումը կամ փոխառումը համեմատաբար ավելի սերտ է կապված հասարակության կյանքում կատարված տեղաշարժերի, արտադրության ու գիտության զարգացման և հասարակական այլ երևույթների հետ Սակայն այդ նոր բառերի ձևավորման ու գործադրման եղանակները որոշվում են տվյալ Լեզվի զարգացման ներքին օրինաչափություններով, որոնք հասարակության զարգացման տարբեր շրջաններում կարող են ձեռք բերել նոր դրսևորումներ և ընդարձակվել ու տարածվել Լեզվի հիմնական գործառույթի՝ հաղորդակցման գործառույթի, ընդլայնման հետ Այդ պատճառով էլ Լեզվի պատմաբանը չի կարող հաշվի չառնել նաև հասարակական կյանքում կատարված տեղաշարժերը, թեև միշտ պետք է իմանա, որ Լեզուն իր հիմնական դրսևորումներով, իր վատարած ֆունկցիայով ու զարգացման օրենքներով տարբերվում է հասարակական մյուս երևույթներից և ունի իր ուրույն կյանքը

II. ՀԱՅՈՑ ԼԵՉԿԻ ԾԱԳՄԱՆ, ՑԵՂԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ՀԱՅՈՑ ԼԵՉԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Հայոց լեզու ասելով, ինչպես արդեն նշել ենք, մենք հասկանում ենք ընդհանրապես հայերենը, որն ընդգրկում է հայ ժողովրդի լեզվի բոլոր տարբերակները՝ իրենց ծագման կամ գոյացման առաջին օրերից սկսած մինչև մեր ժամանակները: Այդ լեզուն ունի պատմական զարգացման իր շրջանները, որոնք որակապես տարբերվում են միմյանցից: Այդ լեզուն մեր թվականության հինգերորդ դարում դարձել է գրավոր լեզու (գրաբար) և գրական մշակման ենթարկված ձևով հասել է մեզ բազմաթիվ աղբյուրներով:

Հայոց էթնիկական լեզուն կազմավորվել է հայ ժողովրդի կազմի մեջ մտած ցեղերից մեկի լեզվի հիման վրա, թեև, գրավոր աղբյուրների բացակայության հետևանքով, դժվար է ասել, թե այդ ցեղային լեզուն ինչպիսի պատկեր է ունեցել հայ ժողովրդական լեզվի հիմքում դրվելուց առաջ: Ուստի, երբ խոսում ենք հայերենի մասին, նկատի ունենք միմիայն հայոց էթնիկական լեզուն և ոչ թե նրանից առաջ եղած ցեղային լեզուները, որոնք նշանակություն ունեն մեզ համար միայն հայերենի ծագումնաբանական հարցերը պարզելու տեսակետից: Հայերենը, իբրև էթնիկական լեզու, որակապես տարբեր է այդ ցեղային լեզուներից, որովհետև նա իր հիմնական արտահայտություններով ձևավորվել է հայ ժողովրդի կազմավորման հետ: Այդ նշանակում է, որ նրա գոյացման պատմությունը սերտորեն կապված է հայ ժողովրդի առաջացման պատմության հետ:

Հայ ժողովրդի ծագման հարցը շատ վաղուց զբաղեցրել է ինչպես հայ պատմաբաններին, նույնպես և օտար բանասերներին: Մեր առաջ դրված խնդիրներից դուրս է բոլոր տեսակետների մանրամասն քննությունը: Սակայն հարկ ենք համարում նշել, որ հայ ժողովրդի և հայոց լեզվի առաջացման մասին եղած ուսումնասիրությունները միայն XIX դարից սկսած գիտական հիմքերի վրա են դրվում: Այդ շրջանում է ձևավորվում պատմահամեմատական լեզ-

վաբանությունը, որը կարճ ժամանակում մեծ նվաճումներ է ունենում

Պատմահամեմատական լեզվաբանության տվյալների վրա հիմնված հայ պատմագրությունը հասնել է այն եզրակացությանը, թե հայերը հնդեվրոպական արմեններ են, որոնք «Փոքր Ասիայից գաղթել են Հայաստան, հավանորեն, յոթերորդ դարում կամ վեցերորդ դարի սկզբներում մեր թվականությունից առաջ»¹, հաստատվել «Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան դաշտերում ու լեռնահովիտներում» և հետզհետե տեր դարձել Ուրարտուի երկրներին² Այս տեսության հեղինակները, լեզվական փաստերից բացի, օգտագործել են նաև հույն պատմագիրների և աշխարհագիրների վկայությունները

Առաջին և հավաստի աղբյուրներից մեկը համարվել է Հերոդոտը (484–425 թվականներին մ թ ա), որը հայտնել է, թե արմենները գինված էին փոյուզիացիների նման և փոյուզիացիների հետ Դարեհի փեսա Արտոքսեսի գլխավորությամբ կռվում էին հույների դեմ

Հերոդոտի վկայությունը վերապատմել է մեր թվականությունից առաջ չորրորդ դարում ապրող աշխարհագիր Եվդոքսոսը՝ նա գրել է թե «արմենները ծագումով Փոյուզիայից են և նրանց լեզվում շատ բան փոյուզերենից է»³

Այդ կարծիքը պաշտպանել են համարյա բոլոր այն հույն հեղինակները, որոնք հայերի մասին խոսելու առիթ են ունեցել Այդ տեսակետը պաշտպանել են նաև հայ մի շարք պատմաբաններ՝ այսպես, օրինակ Զ Մանանդյանը իր «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատության մեջ գրում է, թե ճիշտ պետք է համարել այն տեսակետը, ըստ որի արմենները երբեմն ապրել են «հյուսիսային Հունաստանում կամ Բալկանյան թերակղզում, այնտեղից թրակա-փոյուզիական ցեղերի մեծ ընտանիքի հետ գաղթել են ու հաստատվել Փոքր Ասիայում և ապա, ըստ երևույթին, կիմերական ու սկյուրական արշավանքների ժամանակ (VII դ մ թ ա) տեղահան են եղել և բնակություն են հաստատել Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասերում»⁴ Վերջին շրջանում հայտնաբերված

¹ Զ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ Ա էջ 7

² Նույն տեղը էջ 9

³ Նույն տեղը, էջ 13

⁴ Նույն տեղը, էջ 16

տվյալները ցույց են տալիս, որ արմենները, իբրև առանձին ցեղ կամ ցեղային միություն ապրել են Հայկական բարձրավանդակում սկյուրթական արշավանքներից դեռ շատ ու շատ առաջ

Հայ ժողովրդի մեջ պահպանված ավանդություններում, ինչպես նաև հինգերորդ դարի հայ պատմիչներից և ոչ մեկի գործերում ուղղակի հիշատակություններ չկան ո՛չ արմենների եկվոր լինելու և ո՛չ էլ ընդհանրապես հայերի թրակա-փոյուզիական ցեղերի հետ ունեցած կապի մասին Սակայն, եթե նույնիսկ հայ մատենագիրները հաստատելն օտար աղբյուրների այդ վկայությունները, որոնց վրա հիմնված մի շարք պատմաբաններ ու լեզվաբաններ հայերին բերում են Հայաստանից հեռու ինչ-որ նախահայրենիքից, դարձյալ չէր կարելի հայ ժողովրդի կազմավորման հարցերը լուծել առանց նկատի ունենալու այն պատմական կոնկրետ պայմանները, որոնց մեջ ապրել են նախահայկական ցեղերը իբրև ժողովուրդ ձևավորվելուց առաջ Ցեղերի և ժողովուրդների գաղթը պատմական իրողություն է սակայն այդուհանդերձ նստակյաց ժողովուրդների գոյացման հարցը չի կարելի կտրել այն տերիտորիայից, որտեղ կազմավորվում են տվյալ ժողովուրդները Եվ ընդհանրապես, երբ խոսվում է Եթևոսի մասին, ամենից առաջ նկատի են առնվում պատմական այն առաջխաղացումները, որոնք տվյալ ժողովրդի ձևավորման ժամանակ տեղի են ունենում այդ ժողովրդի կազմի մեջ մտած ցեղերի ու ցեղախմբերի մերձեցման ու ձուլման, բաժանման ու հեռացման ընթացքում Այսպես և հայ ժողովրդի կազմավորման հարցերը չի կարելի պարզել առանց նկատի ունենալու Հայկական լեռնաշխարհում ապրած ցեղերի կամ հայերին հարևան այլ ժողովուրդների պատմությունը և նրանց ու հայերի փոխհարաբերությունները

Հայ ժողովուրդը գոյացել է այն տերիտորիայում, որտեղ ապրել են հնագույն ցեղային մի շարք միություններ, որոնք պատմական տարբեր շրջաններում կամ ունեցել են իրենց ինքնուրույն իշխանությունները, կամ մտել են խեթական, ուրարտական և այլ պետությունների կազմի մեջ իբրև ենթակա ցեղեր կամ իբրև դաշնակիցներ Խեթական արխիվներում պահպանվել են տեղեկություններ մեր թվականությունից 15 դար առաջ Վերին Եփրատի հովտում և դեպի արևելք մինչև Կարինի շրջակայքն ընկած տերիտորիայում ապրած հայասա ցեղային միության մասին Այդ ցեղային միության կենտրոնը եղել է Եփրատի ափին գտնված Կամախա քաղաքը, որ

հետագայում կոչվել է Անի (Կամախ): Մեր թվականությունից առաջ 1400 -1330 թթ. հայասցիները ապստամբել են խեթերի դեմ՝ կռվի մեջ մտցնելով ավելի քան տասը հազար հետիոտն և այրուձի¹:

Ասորական աղբյուրների համաձայն՝ Հայկական լեռնաշխարհի հարավային ծայրամասերում ապրել է ցեղային մի այլ միություն, որի երկիրը նրանք կոչել են Ուրարտու, իսկ հետո՝ Նաիրի: Նաիրական ցեղերը խիստ դիմադրել են ասորական արշավանքներին՝ պաշտպանելով իրենց ինքնուրույնությունը և երկրի սահմանները:

Այդ ցեղային միությունը հզորանում է հատկապես այն ժամանակ, երբ բիայնացիների կամ ուրարտացիների իշխանության տակ մեր թվականությունից առաջ IX դարում համախմբվում են նաիրական ցեղերը և կազմում ուրարտական թագավորությունը, որը, չնայած կոնգլոմերատ բնույթին, ուժեղ դիմադրելով Ասորեստանին՝ ընդլայնում է իր սահմանները, գրավում մի շարք երկրներ և սկսում զարգացնել տնտեսությունն ու մշակույթը՝ մեծ չափով սպասարկելով իր կազմի մեջ մտած ցեղախմբերի ուժեղացմանը:

Մեր թվականությունից առաջ IX դարի վերջերից Ուրարտական պետությունն ավելի է ամրանում և ուժեղանում: Սակայն ուժեղանում էր նաև նրա ախոյանը՝ Ասորեստանը, որը մեր թվականությունից առաջ VIII դարի երկրորդ կեսին սկսում է պայքարել Ուրարտուի դեմ և մի շարք պարտությունների է մատնում նրան: Ուրարտուն այդ պայքարի հետևանքով թեև զրկվում է իր պետության կազմի մեջ մտած մի շարք գավառներից և զգալի չափով թուլանում է, բայց դեռևս պահպանում է իր ինքնուրույնությունը: Սակայն այդ ժամանակ Հայկական լեռնաշխարհն են ներխուժում կիմերները և իրենց հարվածի տակ են առնում Ուրարտուն: Կիմերա-սկյութական ցեղերի արշավանքները մեծ հետևանքներ են ունենում, ծավալվում են երկրի ներսում սկզբնավորված և Ուրարտուի դեմ ուղղված դժգոհություններն ու ապստամբությունները: Այդ բոլորից օգտվում է Ասորեստանը, վերսկսում է իր հարձակումները Ուրարտուի վրա՝ ավելի ու ավելի թուլացնելով նրան, իսկ մեր թվականությունից առաջ VII դարի սկզբներին, երբ իրանում ստեղծվում է մեդական ուժեղ պետությունը, և կիմերա-սկյութական ցեղերը նորից Սև ծովի հյուսիսային ափերից ներխուժում են Առաջավոր Ասիա և իրենց հարվածի տակ են

¹ Հմմտ. Գր. Капанцян, Хаяса-колыбель армян, 1948:

առնում նաև Ուրարտուն, ուժեղացնում են տոհմատիրական կարգերի քայքայման ու դասակարգային հասարակության անցման պրոցեսը Ուրարտուի մի շարք շրջաններում և նպաստում ուրարտական հզոր պետության անկմանը, որը վերջնականապես դադարում է գոյություն ունենալուց մեր թվականությունից առաջ 585 թվականին

Հայկական ցեղերի կոնսոլիդացման համար այդ շրջանում (VIII-VI դարերում) ստեղծվում են խիստ նպաստավոր պայմաններ Տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հասարակության առաջացման ընթացքում Ուրարտուի իշխանության տակ գտնված ազգակից ցեղերը, որոնց թվում նաև Նախահայկական ցեղերը, համախմբվում են համեմատաբար ուժեղ ցեղերի շուրջը և ստեղծում նոր տիպի միավորումներ, որոնց մեջ արդեն ուժեղ կերպով ընդգծվում էին դասակարգային տարբերություններն ու հակասությունները Այդ ժամանակաշրջանում տեղի էր ունենում նաև տարբեր ցեղերի խաչավորման ու խառնման ուժեղ պրոցես, որի ընթացքում, իբրև ընդհանուր կանոն, հաղթում էին ուժեղ ցեղերը և վերջնականապես իրենց էին ձուլում թույլ ցեղերին Այդ իրադրության մեջ հզորանում են Նախահայկական մի շարք ցեղեր, կազմում հայասա-արմենական ցեղային միություն, որը դառնում է հայ ժողովրդի կորիզը Հայ ժողովրդի կազմավորման մեջ վճռական դեր կատարող հայասցիներն ու արմենները երկար ժամանակ ապրելով իբրև ինքնուրույն ցեղային կազմակերպություն ունեցող միավորումներ, անհամեմատ ավելի հզոր էին իրենց ազդեցությանը ենթակա ցեղային մյուս միություններից, հետևաբար, նոր պայմաններում զարգանալու ավելի կենսունակ Հայասա-արմենական ցեղերի ուժեղացմանը մեծ չափով օժանդակել էր ո՛չ միայն նրանց զարգացածությունը և նստակյաց կյանքը, այլև «անհանգիստ» ցեղերի նկատմամբ ուրարտական պետության վարած քաղաքականությունը, որի շնորհիվ նրանք կարողանում են համակենտրոնանալ Ուրարտուի կենտրոնական շրջաններում և իրենց ձեռքը վերցնել երկրի ղեկավարման գործը

Ուրարտուն, որի կազմի մեջ մտնում էին նաև Նախահայկական ցեղերը, ինչպես ցույց են տվել վերջին ուսումնասիրությունները, Արևելքի շատ հին պետությունների նման, ներկայացնում էր ռազմական անկայուն միավորում, որն իր ներքին կառուցվածքով խախուտ էր Այդ միավորման մեջ գտնված ցեղերը շատ անգամ են ծառացել

ուրարտական պետության դեմ և նոր կյանքի են ձգտել: Այդպիսի ցեղային միություններից է եղել նաև հայապա-արմենական ցեղային խմբավորումը, որը մեր թվականությունից առաջ 612 թվականին հայ առաջին թագավոր Պարույր Սկայորդու գլխավորությամբ դաշն կապած մեղացիների, կիմերա-սկյութական ցեղերի հետ՝ հաջող մարտեր է վարել Ասորեստանի դեմ¹:

Ասորեստանի անկումից հետո ավելի են ուժեղանում հայասա-արմենական ցեղերը և Ուրարտուի հաշվին ընդարձակում իրենց երկրի սահմաններն ու ի վերջո փոխարինում Ուրարտական թագա-վորությանը:

Յլլենիստական եպոխայում ավարտվում է հայ էթնոսի կազմա-վորման պրոցեսը Այդ շրջանում Հայաստանում շարունակվում են զարգանալ դասակարգային հակասությունները, ստեղծվում են հայ-կական մի քանի պետական միավորումներ, որոնց մեջ աչքի ընկնող դեր էր կատարում Այրարատյան թագավորությունը, որը հունական աուդոլոնեթում անվանվել է «Գեդեցիկ Երվիդ Արմենիա»: Այրարատը դառնում է ամբողջ Հայաստանի մշակութային կենտրոնը, և հետագայում, չնայած որ ստեղծվում են հայկական նոր թագավորու-թյուններ, բայց երբեք չի թուլանում Այրարատի նշանակությունը հայ ժողովրդի կյանքը կազմակերպելու և հայից լեզուն ու մշակույթը զարգացնելու մեջ:

Հայ էթնոսի կազմավորման հետ կազմավորվում է նաև հայոց էթնիկական լեզուն, որը, իբրև հաղորդակցման ընդհանուր միջոց, կիրառվում էր Հայաստանի այն շրջաններում (և ամենից առաջ Այրա-րատում), որոնք առաջատար դեր էին կատարում հայ ժողովրդի մշակութային և քաղաքական կյանքի կազմակերպման մեջ:

Հայոց լեզվի և հայ ժողովրդի կազմավորման պրոցեսները, սա-կայն, միմյանց հետ սերտորեն կապված լինելով հանդերձ, նույնը չեն: Հայ ժողովրդի մեջ, ինչպես հայտնի է, ձուլվել են բազմաթիվ ցեղեր, որոնց հետքերն անգամ չեն երևում, բայց այդ բանը մենք չենք կարող ասել նրանց լեզվի մասին: Հայ ժողովրդի հետ խաչավորված ցեղերի լեզուները թեև ձուլվել են հայոց լեզվի մեջ, բայց իրենց բառապաշարով, նույնիսկ բառակազմական, հնչյունական ու շատ այլ իրողություններով հարստացրել են հայերենը: Այսպես, օրինակ՝

¹ Յմտ Ս. Տ. Երեմյանի հոդվածը "Вопросы истории" ամսագրում, № 7, 1952

հայոց լեզվում պահպանվել են հին պարսկերեն բազմաթիվ բառեր ու բառակազմական մի շարք մասնիկներ, որոնք միևնույն ձևերով չեն մնացել ժամանակակից պարսկերենում, էլ չենք խոսում խալդերենից, խուրիտերենից, ասուրերենից և այլ ժողովուրդների լեզուներից հայերենին անցած լեզվական իրողությունների մասին, ժողովուրդներ, որոնք վաղուց ի վեր պատմական ասպարեզից դուրս են եկել Յայոց լեզվի մեջ այդ լեզուներից անցած բազմազան բառեր ու լեզվական իրողություններ չեն փոխել հայերենի հնդեվրոպական բնույթը, բայց հարստացրել են հայերենը, ներգործել նրա զարգացման ներքին օրենքների ծավալման ու ընդլայնման վրա Յայոց լեզվի կազմավորման առանձնահատկությունները նկատի ունենալով՝ մի շարք լեզվաբաններ ու պատմաբաններ վերջին շրջանում փորձեցին նոր տեսակետով մոտենալ հայոց լեզվի իրողությունների պարզաբանմանը Առաջ քաշվեցին հայերենի բառապաշարի տարբեր շերտերը միմյանցից առանձնացնելու, ավելի ճիշտ, տարբեր կարգերի բաժանելու տեսակետներ Պատմաբան Ս Երեմյանը գտնում է, որ հայոց լեզվի բառապաշարի փոխառությունների մեջ պետք է տարբերել երեք շերտ ա) հայոց լեզվի կազմավորման շրջանում նրա մեջ մտած բառերի շերտը, որի մեծ մասը մտել է հայոց լեզվի հիմնական բառաֆոնդի մեջ և դարձել նրա կենսունակ իրողությունը բ) հայ ժողովրդի և հայոց լեզվի կազմավորումից հետո հայերենին անցած բառերի շերտը, որը գոյացել է հայերի հետ երկար ժամանակ հարաբերությունների ու շփման մեջ գտնված ժողովուրդների լեզուներից հայերենին անցած բառերից Բառերի այդ շերտը նա համարում է իսկական փոխառություն, գ) հայոց լեզվի մեջ մտած բառերի այն քանակությունը, որը պահպանվել է հայ ժողովրդին ձուլված ցեղերի լեզուներից Այդ բառերը նույնպես նա տարբերում է փոխառություններից, որովհետև նրանք նույնպես, նրա կարծիքով, մտնում են լեզվի հիմնական բառաֆոնդի մեջ իբրև նրա կենսունակ իրողությունները¹

Մեր կարծիքով՝ ընդհանուր առմամբ ճիշտ է պատմաբան Ս Երեմյանը Այն տեսակետը, ըստ որի միայն հնդեվրոպական արմատներն են համարվում հայոց լեզվի հիմնական բառաֆոնդի կորիզը և նրան հարազատ, իսկ մնացած բոլոր բառերը՝ ոչ հարազատ, ճիշտ

¹ Տե՛ս նույն տեղը

չէ Զայոց լեզվի կազմավորման շրջանում հայերենի բաղկացուցիչ տարրերը կազմած բառերի այն մասը, որն անհրաժեշտ է եղել հայ ժողովրդի տարբեր հատվածների հաղորդակցման պահանջները կատարելու համար և մտել է հայոց լեզվի հիմնական բառաֆոնդի մեջ, չպետք է նույնացնել ավելի ուշ շրջանում հայերենին անցած և հայոց լեզվի հիմնական բառաֆոնդի մեջ չմտած բառերի հետ Այդ բառերը պետք է համարել հայերեն և ոչ թե անհարազատ, մանավանդ որ նրանց մեծ մասը չի պահպանվել այլ լեզուներում, իսկ մի մասն էլ, որի համապատասխանությունները պահպանվել են նաև այլ լեզուներում, այնքան են ձևափոխված, որ օտար որևէ հետք չեն կրում իրենց վրա, ինչպես, օրինակ՝ **աշխարհ, նամակ, ապուխտ, կնիք** և այլն

Այսպիսով, Զայկական լեռնաշխարհում մեր թվականությունից առաջ VIII-VII դարերում ստեղծված նպաստավոր պայմանների շնորհիվ երկար ժամանակ կողք կողքի ապրած և սերտ հարաբերությունների մեջ եղած նախահայկական պարզ ցեղային միությունները և առանձին ցեղերը տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հարաբերությունների առաջացման շրջանում համախմբվելով հայասա-արմենական ցեղային նոր միության իշխանության տակ, կազմում են հայ ժողովուրդը, որին մեղացիները կոչում են **արմեններ**, իսկ երկիրը՝ **Արմենիա**, վաղուց ի վեր իրենց հարևան արմե-արիմների ցեղային միության անունը նկատի ունենալով նրանցից այդ անունները անցնում են հույներին և ապա տարածվում ամենուրեք **արմեն** հորջորջմամբ իսկ հայասցիները պահում են իրենց անունը, որը սկսում են կրել նաև արմենները և ազգակից կամ ոչ-ազգակից բոլոր այն ցեղերը, որոնք ձուլվում են հայերին և կազմում հայ ժողովուրդը Զայասցիների երկիրը և անունը **Յայք** ձևով պահպանվել է շատ երկար ժամանակվանից և գործածվել է մեր մատենագրության մեջ **հայեր** և **Յայաստան** առումով Զամեմատաբար ավելի ուշ շրջանում հայերի երկիրը սկսում է կոչվել Զայաստան, իսկ ժողովուրդը՝ հայ

Զայ ժողովրդի կազմավորման պրոցեսի հետ՝ հայ ժողովրդի կորիզը կազմող հայասա-արմենական ցեղային միության համընդհանուր լեզվի հիման վրա ձևավորվում է հայոց եթնիկական լեզուն, որը մեր թվականությունից 3-4 դար առաջ արդեն իր հիմնական օրինաչափություններով կայունացել էր և կարողացել էր իր մեջ ձուլել ցե-

դային շատ լեզուներ կամ բարբառներ իսկ մեր թվականությունից երկու դար առաջ այդ լեզուն այնքան էր զարգացել և բարբառները այնքան էին մոտեցել նրան, որ հանդես էր գալիս իբրև ընդհանուր հաղորդակցման միջոց հայ ժողովրդի կազմի մեջ մտած բոլոր ցեղերի համար Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ Ստրաբոնը գրում է, որ այդ ժամանակ հայկական բոլոր ցեղերը միալեզու էին Ահա Ստրաբոնի այդ վկայությունը

«Պատմում են, որ Արմենիան եղել է առաջ փոքր և մեծացել է Արտաքսիասի (Արտաշեսի) և Չարիադրիսի (Չարեհի) ձեռքով, որոնք նախապես Անտիոքոս Մեծի զորավարներն (στρατηγοί) էին և նրա անկումից հետո թագավորեցին՝ մեկը Ծովքի, Ակիսենեսի, Օդոմանտիսի և մի քանի այլ գավառների վրա, իսկ մյուսը՝ Արտաշատի շուրջը գտնվող երկրի վրա Սրանք ընդարձակեցին իրենց երկրների սահմանները և գրավեցին շրջակա ժողովուրդներից հետևյալ շրջանները, մեդացիներից՝ Կասպիանեն, Փավսիտիսը և Բասորոպեդան, իբերներից՝ Պարիադրեսի լեռնալանջերը, Խորգենեն և Գոգարենեն, որ գտնվում է Կուր գետի մյուս կողմում, խալլուբներից և մոսսինոյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն, որոնք սահմանակից են Փոքր Հայքին կամ նրա մասերն են, կատաոներից՝ Ակիլիսենեն և Անտիտավրոսի կողմերը գտնվող երկիրը և ասորիներից՝ Տամորիտիսը այնպես որ բոլորը միալեզու եղան»¹

Ստրաբոնի այս վկայությունից, սակայն, չպետք է եզրակացնել, թե այդ շրջանում Հայաստանում չկային օտար լեզուների մնացորդներ, կամ հայերենը չունեւ իր բարբառները Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը և պատմության տվյալները ցույց են տալիս, որ հայերենը միշտ էլ ունեցել է իր բարբառները, թեև նրանք հայ ժողովրդի զարգացման տարբեր շրջաններում տարբեր հարաբերությունների մեջ են եղել միմյանց և ընդհանուր համաժողովրդական լեզվի հետ

Այս բոլորից հետևում է, որ հայ ժողովուրդը կազմավորվել է հայկական լեռնաշխարհում, մեր թվականությունից առաջ VIII-III դարերի ընթացքում Այդ դարերում հայ ժողովրդի կորիզը կազմող ցեղախմբերի ընդհանուր խոսակցական լեզվի հիման վրա գոյանում է նաև հայոց եթնիկական լեզուն, որը մեր թվականության V դարի

¹ 3. Մանանդյան, Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության հ Ա էջ

սկզբում սկսում է գրի առնվել և դառնալով գրավոր լեզու՝ շարունակում է մշակվել և կատարելագործվել մինչև մեր թվականության X-XII դարերը:

ՀԱՅՈՑ ԼԵՉԿԻ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՀԵՏԱԳԱ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Ժողովրդի լեզուն ժողովրդի տարրերը կազմող ցեղերի լեզուների համեմատությամբ ավելի հարուստ է ու կատարելագործված: Նա իրեն է ենթարկում երբեմնի առանձին ցեղերի լեզուները, մերում, միաձուլում իր մեջ և դառնում ընդհանուր ու միասնական՝ ժողովրդի բոլոր հատվածների համար: Այդ առումով էլ ժողովրդի լեզուն չի կարելի նույնացնել ցեղերի լեզվի հետ, թեև նա կազմավորվում է որևէ ցեղի կամ ցեղախմբի լեզվի հիման վրա: Սակայն ժողովուրդը չի կազմավորվում միայն ազգակից ցեղերից. ժողովրդի կազմի մեջ մտնում են նաև ոչ ազգակից ցեղեր, որոնք մոռանալով իրենց լեզուն՝ ընդունում են նոր, իրենց համար երբեմնի անհարազատ լեզուն: Մեր ասածներից հետևում է, որ չի կարելի միայն լեզվի ծագումնաբանական կապերով որոշել ժողովրդի գոյացման հարցերը, կամ լոկ լեզվական տվյալները նկատի ունենալով՝ պարզել ցեղերի, ու ժողովուրդների տեղաշարժերն ու վերախմբավորումները: Ինչպես տեսանք վերևում, հայ ժողովուրդը գոյացել է հայկական լեռնաշխարհում, ժառանգել է բնիկ ցեղերի մշակույթն ու արվեստը, իբրև այդ բնիկ, անհիշելի ժամանակներից ի վեր իրենց իսկական հայրենիքում ապրած ցեղերի համախմբման հիման վրա ձևավորված հասարակական նոր խմբավորում: Հայ ժողովրդի լեզուն շատ իրողություններով, իհարկե, կապվում է այդ ցեղերի լեզուների հետ: Բայց այդ ցեղերի մի մասը, թերևս հայասա, ապա նաև հայասա-արմենական ցեղերի միությունը ունեցել է հնդեվրոպական համակարգի լեզու:

Պատմահամեմատական լեզվաբանությունը դեռևս XIX դարում ապացուցեց, որ աշխարհի բազմաթիվ լեզուների բազմանդամ ընտանիքներից մեկը հնդեվրոպական լեզուների ընտանիքն է, որը բաժանված է 11 ճյուղի: Այդ ընտանիքում է գտնվում նաև հայերենը, որը իր դիրքով և հնդեվրոպական մյուս լեզուների հետ ունեցած կապերով հանդես է գալիս իբրև առանձին ճյուղ: Դա, ինչպես նաև հնդեվրոպական լեզվախմբի մեջ մտած մյուս լեզուները, թեև ավելի կամ

պակաս չափով շեղվում են «ընդհանուր հնդեվրոպական նորմաներից», բայց դրանով հանդերձ՝ չեն դադարում հնդեվրոպական լինելուց և ցեղակցական կապերով կապված են միմյանց հետ:

Հայոց լեզվի հնդեվրոպական բնույթը, ինչպես ասվեց, դիտված է շատ վաղուց: Ամենից առաջ Պետերմանը, Վինդիշմանը, Ֆ. Մյուլլերը, դը Լագարդը և ուրիշներ ուսումնասիրելով հայերենը՝ հանգեցին այն եզրակացության, թե հայերենը հնդեվրոպական լեզու է և պատկանում է հնդեվրոպական ընտանիքի իրանական ենթախմբի լեզուներին:

Յետագա (և հատկապես Հյուբշմանի) ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հայերենը հատուկ տեղ է գրավում հնդեվրոպական լեզուների ընտանիքում, և նրա մեջ եղած իրանական տարրը հիմք չի տալիս հաստատելու, թե նա իրանական խմբի լեզուների շարքն է մտնում: Ապացուցվեց, որ հայերենի մեջ եղած իրանական բառերը (1405) ուշ շրջանի գոյացություններ են և հիմք չեն տալիս ասելու, թե հայերենը իրանական լեզու է: Լեզվաբանական մանրակրկիտ տվյալներով հերքվեց նաև հայերենի և թրակա-փոյուզիական լեզվի կապը: Պրոֆ. Յ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ այդ առթիվ ասում է. «Հյուբշման և Մեյե գտնում են, որ փոյուզերենից, մանավանդ թրակերենից մեզ հասած բառերն այնքան քիչ և աննշան են, որ կարելի չէ դրանց վրա հիմնվելով հայերենի ցեղակցության մասին դրական վճիռ դուրս բերել. ուրիշ խոսքով եղածը ոչինչ չի ասում: Ավելի վճռական է խոսում Meillet (*Les nouvelles langues indoeur. trouvées en Asie centrale*, Paris, 1912, էջ 7), որ ասում է, թե «առանց վճռական պատճառաբանությանց հայերենը կցում են փոյուզերենին, որ հազիվ թե ծանոթ է»: Գարագաշյանը մերժում է ընդունել, թե հայերը փոյուզիական գաղթականներ են, ինչպես կարծել են Ռոլինսոն և ուրիշներ: Հատկապես Տաշյան՝ մի առ մի քննելով մեզ ավանդված թրակերեն և փոյուզերեն բառերը և համեմատելով դրանք հայերենի հետ՝ գտնում է, որ այդ երեքը մեկ ճյուղ համարելու բնավ հիմք չկա. թրակերեն և փոյուզերեն բառերը ավելի նման են հունարենին կամ արիական լեզուներին, քան թե հայերենին»¹: Լեզվական տվյալներով հերքվում են հայերի և թրակա-փոյուզիական ցեղերի լեզուների միջև Հերոդոտի տեսած կապերը, մերժվում է

¹ Յ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, էջ 130 – 131:

այն տեսակետը, ըստ որի հայերը կապվում են փոյուզացիների հետ և բերվում Փոյուզիայից: Պատմահամեմատական լեզվաբանությունը, ինչպես ասվեց, ցույց է տվել, որ հայերենը հատուկ դիրք ունենալով հնդեվրոպական լեզուների մեջ՝ համեմատաբար ավելի մոտ է արիական և բալթիկ-սլավական լեզուներին, որովհետև նրանք պատկանում են հնդեվրոպական լեզուների արևելյան ճյուղին և լեզվական շատ իրողություններով ավելի սերտ են կապված միմյանց¹:

Հայոց լեզվի ծագումնաբանական հարցերով զբաղվող մի շարք այլ գիտնականներ, որոնց թվում առաջին հերթին Ն. Յա. Մառը, արհամարհելով պատմահամեմատական լեզվաբանության նվաճումները և հայերենի ցեղակցության հարցերը պարզելու բնագավառում ձեռք բերված տվյալները՝ փորձեցին հայերենի ծագումնաբանական հարցերին մոտենալ այլ դրույթով:

Ն. Յա. Մառը հայոց լեզվի բառապաշարի մեջ հայտնաբերելով կովկասյան լեզուներից անցած բառերի որոշ շերտ, դեռևս 1903 թվականին շտապեց հաղորդել, թե հայերենը երկակի բնույթ ունի: Նա հետազայում ավելի խորացնելով իր այդ սխալ տեսակետները՝ հայտարարեց, թե հայերենը հիբրիդ լեզու է և ապրել է այսպես կոչված լեզուների հաբեթական ստադիան, ապա հեռացել է հաբեթական ստադիայի նախապատմական վիճակից, բայց լրիվ հնդեվրոպականացման չի հասել² և այլն: Մառի այս հակապատմական տեսակետները, որ հենված են լեզուների խաչավորման ու նրանց զարգացման ստադիալ տեսության վրա, պատմական ոչ մի փաստով չեն հաստատվում: Մառի հակապատմական այդ տեսակետներից ելնելով՝ հայոց լեզվի պատմության մի շարք մասնագետներ փորձել են լուծել հայերենի զարգացման հարցերը: Սակայն այդ տեսությամբ հնարավոր չի եղել պարզել, թե՛ մեր լեզվի պատմության և թե՛ նրա զարգացման հարցերը: Հայերենի պատմության կոնկրետ հարցերի մեկնաբանությունը փոխարինվել է լեզուների զարգացման մասին հնարամտած վերացական, ոչինչ չասող դատողություններով:

Մառը և նրա աշակերտները բացասելով լեզուների ազգակցությունը՝ աշխարհի բոլոր լեզուները համարում էին լեզուների այսպես կոչված «համաշխարհային գլոտոգոնիական պրոցեսի» առանձին օղակներ, որոնք իբր թե անընդհատ խաչավորվում են, վերանորոգ-

¹ **Յ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, էջ 29:

² **Н. Я. Март**, Изб. произ., т. 1, стр. 185.

վում և պայթյուններով մի որակից անցնում մի այլ որակի, որը բացասում է իրեն նախորդող լեզուն իր բոլոր արտահայտություններով: Այսպիսով բացասվում էին նաև կոնկրետ լեզուների զարգացման ներքին օրինաչափությունները, հետևաբար՝ նաև լեզուների պատմությունը:

Մառի ու՛րա աշակերտների և հետևորդների լուրջ սխալներից մեկն էլ այն էր, որ նրանք լեզուները ուսումնասիրում էին ո՛չ թե իրենց համակարգի, զարգացման ներքին օրենքների հիմնական դրսևորումները, այլ լեզվի բառապաշարի պատահական տվյալները նկատի ունենալով: Իսկ լեզվի բառապաշարը, բնականաբար, լեզու չէ, նա խոշորագույն նշանակություն է ստանում միայն այն ժամանակ, երբ դրվում է լեզվի քերականության տրամադրության տակ: Հետևաբար, լեզվի ծագումնաբանական հարցերը որոշելիս՝ առաջին հերթին պետք է ուսումնասիրել նրա քերականությունը, բառային հիմնական ֆոնդը, զարգացման ներքին օրինաչափությունները ժողովրդի պատմական զարգացման այս կամ այն շրջանում և ոչ թե վերցնել լեզվի բառապաշարից այս կամ այն բառը և որոնել նրա և այլ լեզուների բառերի միջև եղած նմանությունները, որոնք շատ հաճախ պատահական են լինում և ոչ մի բանով չեն կարող պարզել տվյալ լեզվի զարգացման հարցերը: Այսպես, օրինակ՝ պարսկերեն *bad* և անգլերեն *bad* (վատ) բառերը թեև ոչ մի կապ չունեն միմյանց հետ, բայց իմաստով ու արտասանությամբ նույնն են: Այդպես նաև գերմաներեն *Feuer* և ֆրանսերեն *feu* (կրակ), լատիներեն *femina* և հին սաքսոներեն *femēa*, *fēmia* (կին), լատիներեն *locus* (տեղ) և սանսկրիտերեն *lokas* (աշխարհ), նոր հունարեն *μάτι* (աչք) և պոլիներգերեն *mata* (տեսնել) բառերը իրենց արտասանությամբ, արտաքին ձևով և իմաստով նույնն են, բայց միանգամայն տարբեր ծագում ունեն¹: Այսպես նաև լեզուների բառաստեղծական և այլ մասնիկներ, որոնք աշխարհի տարբեր լեզուներում կարող են իմաստով և արտասանությամբ, ձևով համընկնել, բայց որևէ կապ չունենալ միմյանց հետ. օրինակ՝ ոմանք հայերենի և կովկասյան մի շարք լեզուների մեջ եղած բարդ կիսաշփական հնչյունների և բառակազմական առանձին մասնիկների նմանություններից ելնելով՝ փորձում են հայերենի և կովկասյան լեզուների մեջ տեսնել ծագումնաբանական կապեր,

¹ Ж. Вандриес, Язык, стр. 279.

չգիտակցելով, որ դրանով նրանք ըստ էության հանգում են լեզուների զարգացման մառյան տեսությանը:

Պատահական նմանություններով և նույնիսկ առանձին մասնիկների, բառապաշարի կամ միայն հնչյունական ընդհանրություններով չի կարելի որոշել լեզվի ծագումնաբանական հարցերը: Լեզվի ազգակցության փաստերը լեզվի էությամբ պայմանավորված և պատմականորեն առաջացած այնպիսի երևույթներ են, որոնք տվյալ ընտանիքի մեջ մտած լեզուներին՝ իրենց պատմական զարգացման մի շարք առանձնահատկություններով կապում են միմյանց հետ: Այդ առանձնահատկությունները ամենից առաջ երևում են տվյալ լեզուների զարգացման ներքին այն օրինաչափությունների մեջ, որոնք, վերջին հաշվով, գալիս են հիմք-լեզվից և արտահայտվում են ազգակից լեզուների քերականական կառուցվածքի զարգացման, լեզուներից յուրաքանչյուրին հատուկ բառակազմական համակարգի ու կառուցվածքային տիպերի ու միջոցների, ինչպես նաև հնչյունական օրինաչափությունների մեջ: Այդ ընդհանրությունները, իհարկե, անփոփոխ չեն, նրանք կոնկրետ լեզուների զարգացման հետ փոխվում ու զարգանում են կամ թուլանում ու մոռացվում: Այն լեզուները, որոնք ազգակցորեն ավելի սերտ են կապված միմյանց հետ, ունեն զարգացման ներքին օրենքների առավել ընդգծված ընդհանրություններ: Այսպես, օրինակ՝ սլավոնական լեզուների մեջ եղած ընդհանրություններն ավելի շատ են, քան սլավոնական և ռոմանական լեզուներինը: Որքան մոտ է լեզուն հիմք-լեզվին, այնքան շատ են նրա ընդհանրությունները, իսկ որքան հեռու՝ այնքան քիչ:

Ընտանիքի մեջ մտած լեզուների ընդհանրությունները դրսևորվում են միանգամայն ինքնուրույնաբար, յուրաքանչյուր լեզվին հատուկ ձևերով: Այդ պատճառով էլ ազգակից լեզուների զարգացման ընդհանուր տենդենցները սերտորեն կապված են կոնկրետ լեզվի զարգացման ներքին օրենքների հետ և արտահայտվում են իբրև այդ լեզվի զարգացման օրենքներ՝ նրան յուրահատուկ դրսևորումներով: Այսպես, օրինակ՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ մտնող լեզուների խոնարհման և հոլովման համակարգերը թեև ունեն ընդհանուր կառուցվածք և միևնույն ծագումը, բայց տարբեր կերպով են արտահայտվում այդ լեզուներում. անգլերենը, օրինակի համար, հոլովական իմաստները արտահայտում է նախադրությունների միջոցով, իսկ ռուսերենը, սկանդինավյան լեզուները, հայերենը, հունա-

րենը և այլն՝ հոլովական հատուկ վերջավորություններով. ծագում-նաբանորեն միևնույն աղբյուրն ունեցող բառերը, ինչպես՝ լատիներեն octo բառը ֆրանսերենում ունի huit, հայերենում՝ **ույթ**, իտալերենում՝ otto, իսպաներենում՝ ocho, իրանականում՝ ošta, հունարենում՝ okto ձևը և այլն:

Միևնույն ընտանիքի մեջ մտած լեզուների միջև եղած տարբերությունները ունեն իրենց պատմական պատճառները. դրանց մի մասը կարող է ժառանգված լինել հիմք-լեզվի բարբառային զանազանություններից, իսկ մնացած մասը առաջանալ հետագայում, կոնկրետ լեզուների զարգացման ընթացքում, իբրև այդ լեզվի օրինաչափություններով պայմանավորված նորակազմություններ: Այդ ընդհանրությունները, սակայն, տարբեր որակի են հենց նույն լեզվաընտանիքի լեզուների մեջ. նրանցից շատերը ավելի սերտ առնչակցություններ ունեն միմյանց հետ, իսկ մյուսները՝ ավելի հեռավոր: Այդ նշանակում է, որ ժամանակակից հնդեվրոպական լեզուները մի շարք բարդ աստիճաններով են կապվում հիմք-լեզվի հետ, որից ժառանգել են իրենց հիմնական առանձնահատկությունները:

Հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների ազգակցությունը, որն անառարկելի փաստերով ապացուցված է պատմահամեմատական մի շարք ուսումնասիրություններով, վառ կերպով երևում է հայերենի և մյուս լեզուների քերականության և բառապաշարի մի շարք դրսևորումների մեջ: Փորձենք ցույց տալ այդ ընդհանրությունները օրինակներով՝ օգտագործելով այդ մասին եղած հարուստ գրականությունը:

Հնդեվրոպական լեզուներում բայերի խոնարհումը իրագործվում է վերջավորություններով, ձայնավորների հնչյունափոխմամբ և շեշտի տեղով: Բայական վերջավորությունների համակարգը, ինչպես նաև խոնարհման ֆունկցիան արտահայտող մյուս միջոցները թեև հատուկ են միայն հնդեվրոպական լեզուներին, բայց միակերպ չեն դրսևորվում հենց այդ լեզուներում. այսպես, օրինակ՝ հնդեվրոպական մի շարք լեզուներում ներգործական սեռի բայերի այսպես կոչված **սկզբնական վերջավորությունները** ունեն հետևյալ արտահայտությունները.

Եզակի թվի առաջին դեմքի աթեմատիկ կազմությունների -*mi

վերջավորությունը¹ պահպանվել է սանսկրիտերենում **ás-mi** (կամ), ռուսերենում՝ **есмы**, հունարենում՝ **εἶμι**, խեթերենում՝ **eš-mi**, հայերենում՝ **եմ**, ավբաներենում՝ **jam**, գոթերենում՝ **im**, լատիներենում՝ **sum** ձևերով:

Երկրորդ դեմքի **-*si-**ն սանսկրիտերենում՝ **é-si** (զևում ես), խեթերենում՝ **kue-ši** (խփում ես), հին լատիներենում՝ **es-(s)**, հայերենում՝ **ես** (**essi-ից**) ձևերով:

Երրորդ դեմքի **-*ti-**ն սանսկրիտերենում՝ **ás-ti** (կա), հունարենում՝ **ε’σ-τι** խեթերենում՝ **kuen-zi** (խփում է), հին ռուսերենում **ec-тъ**, հին իռլանդերենում՝ **is** (**es-ti-ից**), լատիներենում՝ **es-t** ձևերով և այլն²: Երրորդ դեմքի համար վկայված են նաև այլ ձևեր. ինչպես՝ հունարեն **φέρει** (բերում է), հայերեն՝ **բերե** և այլն: Հայերենի երրորդ դեմքի **է-ն** ըստ երևույթին առաջացել է **et** (**e-ti**) ձևից:

Հոգնակի թվի երրորդ դեմքի **-*enti-*onti** վերջավորության մեջ առկա են հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների ծագումնաբանական բացահայտ կապերը, ինչպես՝ սանսկ.՝ **s-ánt-i** (են), խեթ.՝ **kunanzi** (խփում են), գոթ.՝ **sind**, լատ.՝ **s-unt**, հայերեն՝ **են** և այլն:

Եզակի թվի այսպես կոչված երկրորդական վերջավորություններն են առաջին դեմքի համար **-m** կամ **-n**, երկրորդինը՝ **s** և երրորդինը՝ **t**, իսկ հոգնակի թվի երրորդ դեմքի համար՝ **-ent**, **-ont**, **-nt**: Հայերենում այդ վերջավորություններից պահպանվել են **մ**, **ս**, իսկ երրորդ դեմքի **է-ն**, ինչպես սլավոնական մի շարք լեզուներում, հունարենում և այլն, ընկել է. այսպես, օրինակ՝ հին սլավոներենում **pōde-t** դարձել է **паде** (**он** **пал**), հունարեն **ἔσθι** բառը սանսկրիտերենում ունի **syā-t** (կլիսի), սանսկր. **abhara-t** (նա բերեց), հունարեն **ἔφερε** ձևը և այլն³:

Հնդեվրոպական մի շարք լեզուներ չեն պահպանել երկակի թվի կատեգորիան: Այսպես, օրինակ՝ հայերենը, ռուսերենը, ուկրաիներենը, լեհերենը, պարսկերենը և այլն չունեն երկակի թիվ: Եվ ընդհանրապես երկակի թվի կատեգորիան կապված է հնդեվրոպական ժողովուրդների, ավելի ճիշտ՝ ցեղերի վաղ շրջանի լեզվական նյութի ու ըմբռնումների հետ: Նոր կազմավորված հնդեվրոպական լեզուներ

¹ **А. Мейе**, Введение в сравнительное изучение индоевропейских языков, стр. 241-242, 1938.

² Նույն տեղը, էջ 243:

³ Նույն տեղը, էջ 243:

որը չեն պահել այդ կատեգորիան, որովհետև նրանց զարգացման ներքին օրենքները հիմք-լեզվի որոշ օրինաչափությունների հետ ծագումնաբանորեն առնչակցվելով հանդերձ՝ ունեն իրենց հատուկ դրսևորումները, որոնցով էլ որոշվում են այդ լեզուների զարգացման տենդենցները

Սակայն միայն այդպիսի տարբերություններով չեն աչքի ընկնում հնդեվրոպական լեզուները՝ Նրանց միջև կան նաև այլ տեսակի զանազանություններ՝ հնդեվրոպական մի շարք լեզուներում, օրինակի համար, անցյալի երրորդ դեմքի հոգնակին արտահայտվում է -ir, er վերջածանցներով, ինչպես՝ խեթերեն ešir, ešer (նրանք եղել են), լատիներեն fecere (նրանք արել են) և այլն։ Հայերենի բայերում այդ հոգնակի վերջավորությունը պահպանված չէ, բայց գոյական անունների եր, ինչպես նաև եար, ար հոգնակի մասնիկները ծագումնաբանորեն կապված են այդ վերջավորության հետ։ Այդ հոգնակի վերջավորությունը պահպանված է նաև գերմաներենում, ինչպես՝ des Buch, die Bucher և այլն։ Այդ վերջավորության գոյության փաստը հնդեվրոպական մի շարք լեզուներում ցույց է տալիս, որ չի կարելի միայն հնչյունական նմանությունները նկատի ունենալով՝ հաստատել այդ վերջավորության ոչ հնդեվրոպական ծագումը և կապել այն կովկասյան լեզուների հետ

Հնդեվրոպական լեզուներում բայերի խոնարհման համակարգը ընդհանուր առմամբ նույնն է, թեև տարբեր լեզուներում նա կրել է զանազան ձևափոխություններ և ձեռք բերել լեզվի զարգացման նոր օրենքներով պայմանավորված հատկություններ։ Այդ պատճառով էլ չի կարելի հնդեվրոպական ժամանակակից լեզուների բոլոր իրողությունների մեջ որոնել ծագումնաբանական անմիջական կապեր։ Երբեմն նույնիսկ մի երևույթի առկայությունը այս կամ այն լեզվում լրիվ չափով կարող է հիմք տալ նոր առնչակցություններ տեսնելու և ծագումնաբանական հարցեր պարզելու համար։ Այսպես, օրինակ՝ հին հայերենի գլխավորապես չեզոք սեռի բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի աւ վերջավորությունը իր իմաստով և ձևով կապված է հնդեվրոպական մի շարք լեզուների բայերի անցյալի *u (*w) վերջավորության հետ, որը պահպանված է խեթերենում՝ ո-ի ավելացմամբ, սանսկրիտերենում, ինչպես նաև լատիներենում t-ի և

it-ի ավելացմամբ¹: Յնդեվրոպական լեզուներում պահպանված փաստերը նկատի ունենալով՝ կարելի է պնդել, որ իայերեն **չոգաւ, կերաւ, կորեաւ, գողացաւ** և բազմաթիվ այլ բայերի անցյալ կատարյալի և վերջավորությունը անմիջականորեն կապվում է հնդեվրոպական ս-ի, w-ի և ոչ թե ուրարտական b-ի հետ, թեև չի կարելի բացասել, որ b-ն հայերենում, որոշ հնչյուններից, հատկապես ճայնավոր հնչյուններից հետո կարող է դառնալ **ւ**: Այդ մասին պրոֆ. Գ. Ղափանցյանը բազմաթիվ փաստեր է բերել իր մի շարք աշխատություններում. օրինակ՝ **ebani-աւան**, **Biaina-Վան** և այլն. բայց b-ն **ւ**-ի փոխարինվելու փաստը հայերի և հնդեվրոպական լեզուների ազգակցության ապացույցներից մեկն է: Յտուաբար, կարիք չկա հնչյունափոխական այդ երևույթը տեսնել այլ սիստեմի լեզուների մեջ, մանավանդ որ հայերենի անցյալ կատարյալը իր մի շարք դրսևորումներով ավելի անադարտ է պահել հիմք-լեզվի հատկությունները. այսպես, օրինակ՝ հայերենի և հնդեվրոպական մի շարք լեզուների անցյալի **ե** ածականը, **ինչպես՝ հայերեն ե-բեր, հունարեն՝ ἔ-φερε, հայ.՝ ե-դ, հունարեն ἔ-παρε** և այլն, ցույց է տալիս, որ այստեղ պահպանվել է հիմք-լեզվի եական հատկություններից մեկը:

Հայերենի, ինչպես և հնդեվրոպական մնացած լեզուների դիմավոր բայերի վերջավորությունները արտահայտում են թվերի և դերանունների գաղափարները, առանց վերջինների գործածության: Դերանունները նախադասության մեջ միշտ հանդես են գալիս իբրև ինքնուրույն իմաստ ունեցող բառեր. օրինակ՝ **գրում է** նշանակում է որևէ մարդ գրում է; իսկ եթե ասված է **սա գրում է**, ապա որոշակիորեն իմացվում է, որ խոսողին ծանոթ մարդ է գրում:

Հայերենում և հնդեվրոպական մի շարք այլ լեզուներում բայերի ժամանակները կազմվում են երկու հիմքից՝ ներկայի և անցյալի: Ներկայի հիմքից կազմվում են սահմանական եղանակի ներկան, անկատարը, արգելական հրամայականը և ստորադասական եղանակի առաջին ապառնին, անցյալի հիմքից՝ սահմանական եղանակի անցյալ կատարյալը, բուն հրամայականը և ստորադասականի երկրորդ ապառնին: Ներկայի հիմքը տարբերվում է անցյալի հիմքից նրանով, որ սահմանական եղանակում նա կարող է ընդունել ինչպես սկզբնական, նույնպես և երկրորդական վերջավորություններ. անց-

¹ А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, т. 2 244:

յալի հիմքը սահմանական եղանակում ունի միայն երկրորդական վերջավորություններ Յնդեվրոպական այնպիսի լեզուներում, ինչպիսիք են հայերենը և սլավոներենը, որոնք ունեն անցյալ անկատար (իմպերֆեկտ), միևնույն հիմքը կարող է կազմել ներկան ու աորիստը (անցյալը), օրինակ՝ ներկա **բերե** (*bhere-ti-hg), անցյալ **ե-բեր** (*e-bhere-t-hg), հին սլավոներենի ներկան падеть (он упадет), աորիստ՝ паде (он упал) և այլն Անցյալի հիմքը կարող է կազմվել միայն արմատական տիպի հիմքերից Անցյալի և ներկայի հիմքերը, առանց համապատասխան վերջավորությունների, ժամանակները ցույց տալ չեն կարող Յնդեվրոպական որոշ լեզուներում, ինչպես հնդ-իրանական լեզուներում, պարզ կերպով չեն սահմանագծվում ներկայի և անցյալի իմաստները հայերենում ներկայի հիմքից կազմված ժամանակները ցույց են տալիս ընթացքի մեջ գտնված գործողություններ, առանց որոշակի ավարտումը նշելու, իսկ անցյալը՝ որոշ ավարտվածություն Անցյալի և ներկայի այդ որոշակիությունը ավելի պարզ է և լրիվ չափով է արտացոլում հնդեվրոպական լեզուների բայերի հին վիճակը.

Սակայն հնդեվրոպական լեզուները ծագումնաբանորեն կապված լինելով միմյանց հետ և ունենալով զարգացման մի շարք ընդհանուր տենդենցներ՝ ունեն նաև իրենց զարգացման ներքին օրենքները, որոնք որոշում են յուրաքանչյուր առանձին լեզվի հատկությունները Այսպես, օրինակ՝ հնդեվրոպական մի շարք լեզուներում որոշ տեսակի բայերի անցյալի հիմքը կազմվել է հետագայում՝ այդ լեզուների զարգացման ներքին օրենքներով, այդ պատճառով էլ այդ ձևերը տարբեր են միմյանցից և չի կարելի անմիջապես մեկը բխեցնել մյուսից, ինչպես՝ հայերեն **գոհանամ**, **գոհացայ**, լատ planto (տնկում եմ), plantāui (տնկեցի), գոթ salbo (ներկում եմ), salboda (ներկեցի), իռլ marbaim (սպանում եմ), ro marbus (սպանեցի) և այլն¹ Բայց այդ տարբերությունները ոչ թե բացասում են հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ մտած տարբեր լեզուների ազգակցական ընդհանրությունները, այլ ցույց են տալիս, որ լեզուները գտնվելով իրենց հարատև զարգացման պրոցեսում՝ փոխվում են, հասարակության զարգացմանը զուգընթաց ձեռք են բերում զարգացման նոր օրենքներ, կորցնում կամ խորացնում են ազգակցության կապերը ցույց տվող առանձին փաստերը և այլն

Հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների ընդհանրություններ-

¹ Նույն տեղը, էջ 212

րը դրսևորվում են նաև հոլովման համակարգի մեջ: Հնդեվրոպական լեզուների հոլովումը, բառի հիմքի վերջին հնչյունի համաձայն, ունի իր վերջավորությունները, որոնք կարող են դրսևորվել երեք ձևով. առաջին տիպի հոլովման ենթարկվում են այն բառերը, որոնք վերջանում են բաղաձայն կամ ձայնորդ հնչյուններով, երկրորդին՝ նրանք, որոնք ունեն *a (կամ *e) հնչյունը, իսկ երրորդը՝ նրանք, որոնք վերջանում են *e/o-ով:

Հնդեվրոպական բոլոր լեզուները, իհարկե, չեն պահպանել բոլոր այն ձևերը, որոնք եղել են հիմք-լեզվում. հայերենը պահպանել է հիմքի ձայնորդը մի շարք բառերի ուղղական հոլովում. օրինակ՝ **մայր, հայր** բառերում, միևնույն նույն բառերը մի շարք այլ լեզուներում չունեն ձայնորդ հնչյունը. այսպես՝ սանսկրիտերենում *matar-*ը դարձել է *mata*, լիթ. *mótė*: Այդպես նաև շատ այլ բառեր: Այդ փոփոխությունները վերաբերում են նաև հոլովական վերջավորություններին. այսպես, օրինակ՝ հայցական հոլովը մի շարք լեզուներում այդ տիպի արական և իգական սեռերի բառերի համար ունի *m* կամ *n* վերջավորությունը, ինչպես՝ սանսկ. *bahu-m* (ձեռք), *hola*, *pihu-v* (արմունկ), սեռական և բացառականը՝ *-es*, *-os*, *-s*, ինչպես՝ *hola*. *hu-v-os* (շուն), լատ. *patr-is* (հոր), տրականը *ei*, *-ai*, *-i*, ինչպես՝ սանսկր. *sūnav-e* (որդուն), *hila* սլ. *сынов-и* (որդուն), լատ. *patr-i* (հոր.), հայ. **բան-ի**, գործիականը՝ *bh*, *m* և այլ վերջավորություններ, ինչպես՝ հայ. **արամբ**. *hila* սլ. *сынѣми* (որդիներով), սանսկ. *pit-r-a* (հորով), լատ. *petr-e* (հորով), ներգոյականը՝ *i*, որը կարող է նույնանալ տրական հոլովի վերջավորության հետ: Այսպես, օրինակ՝ իռլանդերենում տրական հոլովը կարող է արտահայտել ներգոյականի, բացառականի և գործիականի իմաստ, *hila* հայերենում, բացի **ա** և **ո** հոլովման ենթարկվող բառերից, մնացած բոլոր հոլովումներին ենթարկվող բառերի ներգոյականը կազմվում է տրական հոլովից՝ **ի** (**y**) նախդրով, ինչպես՝ բան – բանի, ներգ. **ի** բանի, տուն – տան, ներգ. **ի** տան և այլն:

Հոլովական վերջավորությունների այս բազմազանությունը ցույց է տալիս, որ հնդեվրոպական լեզուներից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ օրենքներ, որոնք որոշում են նրա բնույթն ու էությունը: Նրանց ծագումնաբանական ընդհանրությունները հանդես են գալիս միայն իրենց ընդհանուր դրսևորումների մեջ, որոնք կապված են ժամանակակից հնդեվրոպական լեզուներում արդեն չիշխող օրենքների հետ: Այսպես, օրինակ՝ հնդեվրոպական հոգնակի **s** վերջավորությու-

նը, որը պահպանվել էր հին հայերենի հայցական հոլովում, ժամանակակից հայերենում գործածական չէ, եթե նկատի չունենանք գրաբարյան հայցական հոլովի մի շարք քարացած ձևերը (ծախս, պաս, չորս): Այդ բանը կարելի է ասել նաև գործիական հոլովի բ վերջավորության մասին: Ինչպես նշեցինք, հնդեվրոպական մի շարք լեզուներ գործիականը կազմում են **m**-ով, իսկ մի քանիսը, որոնց թվում նաև հայերենը՝ **p**-ով, որը, ծայնավորներից հետո դառնում է **u** (ո-ից հետո-վ), ինչպես՝ տուն – տամբ, սիրտ – սրտիւ, հուր – հրով և այլն: Գործիական հոլովի այդ վերջավորությունը, որը գործածական է եղել հնդեվրոպական մի շարք լեզուներում, այժմ չքացել է, և դրա փոխարեն այդ լեզուներում գործածվում են այլ վերջավորություններ: Հնդեվրոպական լեզուների հոլովման առանձնահատկություններից մեկը արտահայտվել է հոգնակի ուղղական և հայցական հոլովների վերջավորությունների տարբերության մեջ, որը շատ ուժեղ կերպով պահպանվել էր նաև գրաբարում: Բայց մեր լեզվի զարգացումը վերացրեց այդ տարբերությունը հայերենում:

Առանձին լեզուների զարգացման պատմությունը ունի իր սեփական ընթացքը, որը չի կարելի անտեսել, երբ հարկ է լինում խոսել այդ լեզվի այս կամ այն իրողության և հատկապես ծագումնաբանական կապերի պարզաբանման մասին: Մառը և նրա աշակերտներն ու հետևորդները կոնկրետ լեզուների իրողությունների մասին խոսելիս նկատի չէին ունենում նրանց իրական պատմությունը և կամայականորեն ժխտում էին լեզուների ազգակցությունը, լեզվական ընդհանրությունները համարում սոցիալական նմանություն, իբրև խաչավորման հետևանք: Այդ սկզբունքից ելնելով՝ որոշ բանասերներ հայերենի մի շարք ածանցներ և հոլովական վերջավորություններ արհեստականորեն կապում են կովկասյան և այլ լեզուների հետ. օրինակ՝ հայերեն գործիական հոլովի **p**-ւ վերջավորությունը կապում են վրացերեն մի շարք տեղանունների **ավ** վերջածանցի հետ միայն նրա համար, որ նմանություններ են նկատում-նրանց հնչյունական արդի վիճակի մեջ: Լեզվական իրողությունների համեմատման այդ միջոցը բխում է Ն. Յա. Մառի այսպես կոչված «լեզվի նոր ուսմունքի» դրույթներից, որոնք պատմական որևէ հիմք չունեն, վերացական ու հակապատմական են: Ուսումնասիրության այդպիսի մեթոդով երբեք չի կարելի պարզել հայերենի ոչ ներկա վիճակը և ոչ էլ անցյալը:

Հայերենը իր քերականությամբ հնդեվրոպական լեզու է, և ոչ ոք

չի կարող հակառակն ապացուցել. հայերենի այս կամ այն ածանցի կամ տեղանվան վերջավորության կապը ուրիշ սիստեմի լեզուների հետ չի կարող որևէ բանով փոխել հայերենի բուն էությունը: Նրանց հայտնաբերումը և ճիշտ արժեքավորումը կարող է միայն օժանդակել պարզելու հայերենին ձուլված օտար սիստեմի լեզուների ենթաշերտի արտահայտությունները, որոնք թեև զգալի չափով ազդել են հայերենի հնչյունաբանության, ձևաբանության որոշ իրողությունների զարգացման և բառապաշարի հարստացման վրա, բայց ոչնչով չեն կարողացել փոխել հայերենի բնույթը: Եվ ընդհանրապես հայերենի մեջ կովկասյան կամ ազիանիկ լեզուների «առատ» տարրեր հայտնաբերած լեզվաբանները զարմանալիորեն չեն նկատել, որ իրենց նշած լեզվական երևույթները բառակազմական որոշ ածանցներից կամ տեղանուններին կապած ու արհեստականորեն նրանցից պոկված վերջավորություններից և փոխառված բառերից դենը չեն անցնում, էլ չենք խոսում այն մասին, որ նույնիսկ այդ «նոր հայտնաբերված» ենթաշերտի իրողությունները մեծ մասամբ հնդեվրոպական լեզուների հետ են կապվում, թեև ներկայացվում են իբրև լեզվական նոր հայտնագործումներ: Օրինակ՝ ոմանք կարծում են, որ հայերենի բայերի անցյալի երկրորդ դեմքի **ր**-ն, և երրորդ դեմքի **ւ**-ն, **զ**-նախդիրը, բացառական հոլովի **-ց** վերջավորությունը, **ան**- նախածանցը, **-ացի** վերջածանցը, **-եալ**, **-եր** հոգնակի վերջավորությունը և այլն կապված են ոչ հնդեվրոպական լեզուների հետ և իբր թե դրանք և մի քանի այլ ածանցներ ու փոխառված բառեր փոխում են հայերենի հնդեվրոպական բնույթը կամ հայերենը դարձնում են ոչ հնդեվրոպական լեզու: Բայց այդ մասնիկները, որոնք ներկայացվում են ոչ հնդեվրոպական, վկայված են հնդեվրոպական մի շարք լեզուներում. օրինակ՝ բրիտերենում կան **-ir**, **-ar**, **-er** բայական վերջավորությունները, որոնց դեմքը որոշվում է նախադասության մեջ հանդես եկած դերանունով, այդ վերջավորությունը հին իռլանդերենում ամրանում է երրորդ դեմքին, լատիներենում հանդես է գալիս միայն այն ձևերում, որոնք արդեն ունեն երրորդ դեմքի վերջավորությունը, ինչպես **uehi-tu-r** (տարվում է, գնում է). այդ վերջավորությունը հայերենում գործածվել է իբրև երկրորդ դեմքի վերջավորություն: Մյուսները նույնպես իրենց համարժեքներն ունեն հնդեվրոպական լեզուներում. այսպես՝ **-ց** հոլովական վերջավորությունը պահպանվել է խեթերենում **it** համարժեքով, **զ**-նախդիրը ռուսերենում՝ **за** ձևով, **ան**- նախածանցը լատի-

ներենում, ժամանակակից հնդեվրոպական լեզուներից գերմաներենում **an** ձևով, **-ացի** վերջածանցը սլավոնական լեզուներում՝ **eu** համարժեքով, **-եար**, **-եր** հոգևակի վերջավորությունը գերմաներենում **er** ձևով և այլն: Այս փաստերը ցույց են տալիս, որ սուբստրատը հանդիսացող լեզվի տարրերը որոնելիս շատ զգույշ պետք է լինել և չշփոթել սեփական ու եկամուտ իրողությունները: Սակայն ինչպիսին էլ լինի սուբստրատը (ենթաշերտը), նա որևէ եական փոփոխություն չի կարող մտցնել լեզվի համակարգի, նրա բուն եության՝ քերականության մեջ: Հայերենը, ինչպես ցույց են տվել շատ հին ու նոր ուսումնասիրություններ, բազմաթիվ ազդեցություններ է կրել, խաչավորվել է շատ լեզուների հետ, բայց միշտ պահել է իր հատկությունները և չի փոխել իր հնդեվրոպական բնույթը: Այդ ազդեցությունները ամենից առաջ երևացել են նրա բառապաշարի մեջ. բայց այստեղ էլ նա պահպանել է իր հնչյունական օրինաչափությունները և օտար բառերը ենթարկել է իր օրենքներին այնքան, որ շատ դեպքերում նրանք անճանաչելիորեն կորցրել են իրենց տեսքը: Հայերենի բառապաշարի փոփոխման ու հարստացման կանոնները որոշվել են հնդեվրոպական այն բառերով, որոնք հայերենի հիմնական բառաֆոնդի միջուկն են կազմել: Այսպես, օրինակ՝ հայերենի մեջ հնդեվրոպական են.

Ազգակցություն ցույց տվող բառերից՝ հայր, մայր, եղբայր, քույր, դուստր, հարսն, հան, մանչ, թոռն, նու, սկեսուր, տայգր, սան, ներ, որդի, տալ, քենի, ամուսին, քեռի, հաւ (պապ) և այլն:

Կենդանիների անուններից՝ եզն, կով, գառն, այծ, ուլ, սագ, սարդ, աղուես, ցուլ, շուն, մուկն, եղն, եղնիկ, հաւ, որթ (հորթ), ձուկն, ոզնի, իծ, մեղու (մեղր), լուսան, առիւծ, առն (խոյ), արծուի, արջ, բոռ, բորենի, գայլ, գորտ, լու, կռունկ, մարի (հաժ), մաքի, մոզի, մրջին, մուն, ուրուր, տիգ, ցին, ցուլ, քարբ, օձ և այլն:

Մարմնի մասերի անուններ՝ եղունգն, լեարդ, լեզու, սիրտ, աչք, ափ, ականջ, արմունկն, լինդ, միս, մկան, ակն, ատամն, ոսկոր, փայծաղն, ձեռն, ուս, բերան, ոտն, ազդր, կոկորդ, մատն, մարմին, մօրուք, ողն, նեարդ, որկոր, ունկն, ջիլ, ջիդ, որովայն, ռունգն, քիւ, քունք, ստինք, սրունք, քամակ, քիմք և այլն:

Թվական անունները՝ մի, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթն, ութ, ինն, տասն, քսան, երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, ութսուն, իննսուն (մնացած թվերը կազմվում են ընդհանուր սկզբունքով,

սակայն տարբեր լեզուներում առանձին, սեփական կանոններով):

Դերանունները՝ ես, դու, ինքն, իւր, մեք, դուք, նոքա, սա, դա, նա, այս, այդ, այն, ով, ոմն, ոք, իմն, ինչ, որ և այլն:

Սովորական կյանքում գործածվող բազմաթիվ բառեր՝ ալիւր, ածել, աղ, աղալ, աղանձ, աղբիւր, աղմուկ, աղքատ, աղօրի, աճել, ամ, ամառն, ամեն, ամիս, ամպ, ամպրոպ, այգի, այլ, այտնուկ, այրել, անկիւն, անձն, անծուկ, անուն, անուրջ, պջ, առնուկ, առագաստ, առասպել, առաստաղ, առնել, առոգանել, առու, ասել, ասեղն, աստղ, ասր, ատաղձ, ատել, արածել, արբ, արբանեակ, արգահատել, արդ, արեգ, արթնանալ, արիւն, արծաթ, արօր, ասաղ, բալ, բահ, բառնալ, բեկանել, բեռն, բերել, բիր, բլուր, բոլոր, բոկ, բոյս, բով, բոց, բութ, բուք, բուրդ, գալ, գաղձն, գաղձ, գարշ, գարուն, գեղեցիկ, գեղձ, գեղմն, գետ, գերան, գերի, գիտեմ, գիլ, գին, գինդ, գիշեր, գող, գոմ, գոյ, գործ, դալար, դաղձ, դարբին, դարձ, դեղ, դեռ, դէգ, դիակ, դիել, դնել, դունն, եգր, երգ, երգիծանել, երդումն, երեկոյ, երես, երերալ, երեւիլ, երեց, երկայն, երկան, երկնչել, եփել, ընթեռնուկ, ընկղմել, ըստ, թանձր, թառել, թառամ, թարմ, թաւ, թաքչել, թիկն, թեղի, թեր, թեքել, թէ (եթէ), թի, թիթեղն, թռչել, թիւ, թմրել, թովել, թումբ, թուր, թուփ, թուք, թրթուր, լալ, լակել, լայն, լաստ, լար, լաւ, լափել, լեսուկ, լիզել, լիրբ, լիք (լքանել), լոգանալ, լողանալ, լոյս, լուցանել, լուանալ, լպիրծ (լպիրշ), լսել, խայթ, խայտ, խանդ, խաղ, խարել, խեղ, խուղ, խուն, խստոր, ծաղր, ծամել, ծան (ճանաչել), ծառ, ծին, կաթն, կալ, կածան, կաղալ, կաղին, կամուրջ, կայծ, կարդալ, կարթ, կարծր, կարկուտ, կեր, կութ, կին, կոգի, կող, կուկ, կուրծ, կրծել, հալել, հար (հարկանել), հարց, հեծանել, հեղուկ, հեղգ, հեռի, հետք, հերու, հենք, հին, հիւթ, հնոց, հոգի, հոլանի, հոլովել, հող, հողմ, հոյակապ, հով, հովիւ, հոտ, հում, հուն, հուպ (հպել), հուր, ձագ, ձաղել, ձն, ձիր, ձիւն, ձմեռն, ձող, ձուկն, ձօն, մալել, մածնուկ, մաղթել, մամուկ, մանր, մատողաշ (մատաղ), մարդ, մարտ, մեծ, մեղք, մեղկ, մեռանիլ, մերկ, մերձ, մէգ, մէգ, մինչ, միտք, մնալ, մոռանալ, մորենի, միալ, մունջ, մուռ, մուրճ, մրկել, յագենալ, յառնել, յստակ, յարմար, յարել, յեռուկ, յղի, յոլով, նայ, նաւ, նետ, նիգ, նիստ, նոր, նուրբ, նսեմ, շաղիլ (շաղաղել), ողբ, ողջ, ողողել, ողոքել, ոռնալ, որբ, որձ, ուղի, ունայն, ուսանիլ, ուտել, ուրանալ, չոր, չու, պալար, պապանձել, պեղել, պինդ, պոլոկել, պուտ, պտուկ (ծիլ), քանք, քեր, քերմ, քինք, քուր, սալ, սամի, սանդուղ, սառն, սար, սեգ, սեր, սին, սիսեռն, սլանալ, սլաք, սխալ,

սոր, սուտ, սուր, սուրբ, սպառնալ, ստանալ, ստեղծել, ստերջ, ստոյգ, տալ, տատանել, տատանակ, տարգալ, տարտամ, տեղ, տեսանել, տերել, տելել, տիղմ, տիւ, տոկալ, տող, տուն, տուտն, տրտում, տտիպ, տրտունջ, տօն, ցախ, ցայտել, ցրել, ցոյց, փայլ, փարել, փեղկ, փերթ, փոյթ, փործ, փուլ, փուլ, փոքր, փռել, փրփուր, քակոր, քաղել, քաղց, քամել, քար, քաւել, քերել, քիրտն, օգնել, օդ, օթ, օծանել, օդ, օր և այլն:

Այսպիսով, հայոց լեզվի քերականությունը և բառապաշարի այն տարրերը, որոնք նոր բառեր ստեղծելու հիմք են հանդիսանում, հիմնականում հնդեվրոպական ծագում ունեն, հետևաբար, հայերենը խառնածին կամ այլ սիստեմի լեզու համարելու ոչ մի հիմք չկա: Հայ լեզվաբաններից ոմանք բացասելով հայերենի և հնդեվրոպական լեզուների ծագումնաբանական կապերը՝ փորձել են հայերենը կապել այսպես կոչված ազիանիկ լեզուների հետ, հանել փոքրասիական լեզվական սուբստրատից, այն ժամանակ, երբ ընդհանրապես պարզ չէ փոքրասիական մի շարք լեզուների բնույթը, և մինչև այժմ էլ վճռված չէ, թե այդ լեզուները հնդեվրոպական են, թե լեզվական այլ համակարգ ունեն: Փոքրասիական լեզուներից խեթերենը, որի և հայերենի մեջ նկատվել են մի շարք ընդհանրություններ, հնդեվրոպական լեզու է: Ամենայն հավանականությամբ հնդեվրոպական են նաև փոքրասիական այն ցեղերի լեզուները, որոնք հայ ժողովրդի կազմավորման մեջ որոշ դեր են կատարել: Առայժմ հակառակը ապացուցելու որևէ հիմք չկա: Սակայն, եթե նույնիսկ այդ լեզուները հնդեվրոպական չլինեն էլ, դարձյալ ոչնչով չի փոխվի հայերենի հնդեվրոպական բնույթը: Հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների միջև եղած տարբերությունները, ինչպես և նրա ու փոքրասիական և կովկասյան լեզուների միջև նկատված ընդհանրությունները նույնպես չեն կարող փոխել հայերենի բնույթը: Եվ ընդհանրապես բացարձակ նույնություն չի կարելի որոնել ո՛չ միայն ազգակից, այլև միևնույն լեզվի տերիտորիալ բարբառների մեջ, որոնք զարգանում են ընդհանուր լեզվի օրենքներով:

Հնդեվրոպական լեզուները անցել են զարգացման տարբեր ետապներ, «ստիմային լեզուներից դեպի ցեղային լեզուները, ցեղային լեզուներից դեպի ժողովուրդների (народностей) լեզուները և ժողովուրդների լեզուներից դեպի ազգային լեզուները»: Բնական է, որ իրենց զարգացման այդ երկար ճանապարհին նրանք պետք է

կրեին զանազան փոփոխություններ, ձեռք բերեին զարգացման նոր օրենքներ, իրենց բառապաշարի մեջ արտացոլեին հասարակության կյանքում կատարված բոլոր փոփոխությունները, հարստանալին ու կատարելագործվեին նոր տարրերով:

Հնդեվրոպական լեզուների ընդհանրությունները, որոնք ազգակցորեն կապում են հնդեվրոպական բոլոր լեզուները միմյանց հետ, չեն նշանակում, թե այդ լեզուները չեն կրել փոփոխություններ կամ չեն շփվել այլ սիստեմի լեզուների հետ: Այդ տեսակետից եթե մոտենալու լինենք փոքրասիական լեզուների ենթաշերտին, պետք է ընդունենք, որ իսկապես հայերենը իր զարգացման որոշ շրջանում շփվելով փոքրասիական լեզուների հետ՝ նրանցից ընդունել է բառեր և նույնիսկ բառակազմական մասնիկներ ու զարգացել իր ներքին օրինաչափություններով, որոնք դարերի ընթացքում փոփոխվել են և շատ դրսևորումներով հեռացել հիմք-լեզվի զարգացման օրենքներից: Այդպիսի ընթացք են ունեցել նաև հնդեվրոպական մյուս լեզուները:

Հնդեվրոպական լեզուները, որոնք ոչ մի կապ չունեն այսպես կոչված «հնդեվրոպական ռասա» հասկացության հետ, զարգացման տարբեր էտապներ են անցել: Շատ վաղուց է նկատված, որ հնդեվրոպական ցեղերը, թեև իրենց պատմության վաղ շրջանից սկսած ունեցել են տնտեսական, մշակութային ու լեզվական ընդհանրություններ, քաղաքականորեն մի միասնական ամբողջություն չեն կազմել և իրենց զարգացման ոչ մի շրջանում չեն ենթարկվել միայն մի առաջնորդի կամ կազմել մի միասնական պետություն:

Այլ կերպ չէր էլ կարող լինել. Նախնադարյան տոհմատիրական հասարակարգում, երբ առանձին ցեղերը շատ թույլ էին կապված որոշակի և մնայուն սահմաններ ունեցող տերիտորիայի հետ, երբ ցեղը անընդհատ բաժանվում էր ինքնուրույն ցեղերի, միասնական և ուժեղ ցեղային միություն՝ միասնական լեզվով չէր կարող ստեղծվել: Այդ շրջանում ցեղերի բաժանման հետևանքով ստեղծվում էին նոր ցեղեր ու ցեղային նոր լեզուներ, որոնք ձագումնաբանորեն մոտ լինելով հանդերձ՝ զարգանում էին իրենց հատուկ օրինաչափություններով և իրենք իրենց հերթին նոր լեզուների առաջացման հիմք էին տալիս: Այդ ուղիով առաջանում են հնդեվրոպական լեզուների առանձին խմբեր, որոնք իրենց ընդհանրությունների հետ ունեն նաև զգալի տարբերություններ:

Պատմահամեմատական լեզվաբանության տվյալներով դժվար է հաստատել հնդեվրոպական մի միասնական ցեղի կամ ժողովրդի գոյությունը, բայց հնդեվրոպական առանձին խմբերի հիմք-լեզվի և այդ լեզուն կրող ժողովրդի կամ ցեղի մասին որևէ կասկածանք լինել չի կարող. այսպես, օրինակ՝ չի կարելի ժխտել համասլավոնական, հնդ-իրանական, հունական, խեթական, գերմանական ցեղերի ու նրանց ընդհանուր լեզուների փաստը: Այդ խմբերի լեզուներից յուրաքանչյուրը ավելի սերտ է առնչվում նույն խմբի մեջ մտած լեզուների, քան ընդհանրապես հնդեվրոպական մյուս լեզուների հետ: Սակայն դրանով հանդերձ՝ այդ բոլոր լեզուների մեջ պահպանվել են ընդհանուր գծեր, որոնք զարգացման տարբեր ընթացք են ունեցել հնդեվրոպական լեզուներում: Իրենց մի շարք առանձնահատկություններով որոշակիորեն տարբերվում են արևմտյան և արևելյան խմբի լեզուները: Այսպես, օրինակ՝ հնդեվրոպական որոշ լեզուներ, ինչպիսիք են՝ խեթերենը, հնդ-իրանական, սլավոնական, բալթիական, ալբանական և գերմանական լեզուները, խառնում են *ā* և *ō* հնչյունները, իսկ հայերենը, հունարենը, կելտերենը և իտալերենը տարբերում են այդ հնչյունները:

Բառամիջի *ը*-ն պահպանվում է մի շարք լեզուներում, բայց ընկնում է հայերենում, իրանյան լեզուներում, սլավոներենում, գերմաներենում և բալթիական լեզուներում: Հնդեվրոպական մի շարք լեզուներում՝ հնդ-իրանական, մասամբ էլ սլավոնական, բալթիական և հայոց լեզուներում՝ *k*, *i*, *u*, *r* հնչյուններից հետո *s*-ն դարձել է չչական, հայերենում նաև հազագային հնչյուն. բառասկզբում այդ *s*-ն վերածվել է *h*-ի հունարենում, հայերենում և իրանական լեզուներում, օրինակ՝ սանսկրիտերեն *snusā*, հին սլավ. *снѣха*, հայերեն տալիս է *սու* (**nuhos-*ից), սեռ. հոլ. *սուոյ* (*nuoy*), հուն. *νός*, սանսկ. *sana*, գոթ. *sinista*, լատ. *senex*, գեղ. տալիս է *hano*, հուն.՝ *héne*, հայերեն՝ **հին** և այլն:

Հնդեվրոպական լեզուների զարգացման առանձնահատկությունները երևացել են նրանցից յուրաքանչյուրի մեջ, թեև հաճախ տարբեր ձևերով են արտահայտվել. այսպես՝ մի շարք լեզուներում կա *ne* ժխտականը, ինչպես՝ խեթերեն *na* (*Ha*), սանսկ. *na*, ռուս. *не*, լատին. *no* և այլն: Այդ ժխտական ածանցը հայերենում պահպանվել է **ան** ձևով, բայց դրա հետ միասին հայերենում կա **մի**՝ արգելականը, որը կազմում է հրամայականի ժխտականը: Այդ ժխտական ածանցը պահպանվել է հնդեվրոպական այնպիսի լեզուներում, ինչպիսիք են

հունարենը՝ **μά**, թուխարերենը՝ **ma**, սանսկրիտերենը՝ **mā** և այլն:

Լեզուների զարգացման ընթացքում նրանց մեջ կատարված ամեն տեսակի փոփոխությունները սերտորեն կապված են միմյանց հետ և պայմանավորված են միմյանցով: Այդ երևույթը պարզ կերպով նկատվում է հնդեվրոպական լեզուների հնչյունական փոփոխությունների մեջ, որոնք գլխավորապես արտահայտվել են երեք ձևով.

ա) Համարյա թե հնդեվրոպական բոլոր լեզուներում փոփոխվել են բառի վերջավորության հնչյունները. օրինակ՝ հայերեն **եքեր**-ը համապատասխանում է սանսկրիտերեն **abharat**-ին, **եդ**-ը՝ **adhat**-ին և այլն: Բառի վերջավորության հնչյունների փոփոխությունները մեծ չափով ներգործել են կոնկրետ լեզուների քերականության զարգացման վրա:

բ) Հիմնականում փոփոխության են ենթարկվել հնդեվրոպական ձայնորդ հնչյունները, որոնք կարող էին հանդես գալ իբրև ձայնավոր կամ բաղաձայն և իբրև երկբարբառ կազմող հնչյուններ: Այդ ձևով չեն պահպանվել նրանք ոչ մի լեզվում: Հնդեվրոպական լեզուներում երկբարբառները շատ վաղուց սկսել են պարզ հնչյունների վերածվել. երկբարբառները կազմող ձայնորդ հնչյունները վերածվել են կամ ձայնավոր կամ բաղաձայն հնչյունների. օրինակ՝ **w**-ն ռոմանական, գերմանական, սլավոնական լեզուներում և սանսկրիտերենում վերածվել է **v**-ի, հայերենում, պարսկերենում, բրիտաներենում բառակզբում՝ **b**-ի:

Ձայնորդ հնչյունների համակարգի մեջ կատարված փոփոխությունները ազդել են ձայնավորների փոփոխման ու հերթագայության սահմանափակման վրա:

գ) Հնդեվրոպական լեզուները կորցրել են ձայնի հասարակ բարձրացումից կազմված տոնը, որը որոշ լեզուներում, ինչպես բալթիական և սլավոնական լեզուներում զուգակցվել է շեշտի բարձրացման հետ: Տոնի կորստի պատճառով վերացել է նաև քանակական ռիթմը և այդ ձևով փոխվել բառի կառուցվածքը. ձևափոխվել են բառերը այն աստիճան, որ դժվար է արտաքուստ անմիջապես տեսնել նրանց ծագումնաբանական ընդհանրությունները և այլն: Այդ փոփոխությունները մեծ չափով ազդել են լեզուների ձևաբանության փոփոխման վրա:

Լեզուների ձևաբանությունը համեմատաբար ավելի դանդաղ է փոփոխվում: Սակայն, չնայած դրան, մեծ տարբերություններ կան

Ժամանակակից հնդեվրոպական լեզուների ձևաբանական կատեգորիաների մեջ: Ամենից առաջ վերացել են երբեմնի երկակի թվի հետ կապված վերջավորությունները, որովհետև երկակի թիվը արտացոլում էր ցեղերի զարգացման ավելի վաղ շրջանի պատկերացումները, որոնք խիստ կերպով փոփոխության ենթարկվեցին նրանց պատմության հետագա շրջաններում՝ արտադրության ու մշակույթի զարգացման հետևանքով: Սակայն ո՛չ միայն երկակի թվի հետ կապված, այլև ձևաբանական շատ այլ երևույթներ խիստ կերպով ձևափոխվել են հնդեվրոպական լեզուներում: Այսպես, օրինակ՝ հնդեվրոպական շատ լեզուներում վերացել են ըղձական եղանակը, հնդեվրոպական պերֆեկտը, պարզացել են խոնարհման համակարգերը, փոխվել հոլովման համակարգը, որոշ լեզուներում վերացել հոլովական մասնիկները, կամ խառնվել առանձին հոլովների վերջավորությունները, ինչպես հայերենի ուղղական և հայցական, տրական և սեռական հոլովները և այլն. որոշ հնդեվրոպական լեզուներում, ինչպես՝ անգլերենում, նոր պարսկերենում և այլն ընդհանրապես, վերացել է հոլովումը, նույնիսկ խոնարհումը այնքան պարզացել է անգլերենում, որ բայերը համարյա թե չեն փոփոխվում տարբեր ժամանակներում:

Այդ բոլոր փոփոխությունները նոր տեղաշարժեր պետք է մտցնեին նաև լեզվի շարահյուսության մեջ և փոխեին նախադասության տեսքը: Եվ իսկապես, անգլերենում, ֆրանսերենում բառերի դասավորությունը ձեռք է բերել հնդեվրոպական հիմք-լեզվին ոչ հատուկ շարահյուսություն: Ստեղծվել են օժանդակ բառեր, որոնք նախադասությունների մեջ ունենում են միայն վերջավորությունների իմաստ, այդ պատճառով էլ նախադասությունը հաճախ կազմվում է միմյանց հետ կապված բառերի կապակցություններից: Այդ փոփոխությունների հետ են կապվում ժամանակակից լեզուների համաձայնեցումն ու լրացումները, որոնք միանգամայն տարբեր կերպ են արտահայտվել հնդեվրոպական հնագույն լեզուներում: Հնդեվրոպական լեզուների այդ տեղաշարժերի հետ են կապվում նաև հոդերը, որոնք ընդհանուր չեն հնդեվրոպական լեզուներում և տարբեր դրսևորումներ ունեն նույնիսկ հոդ ունեցող լեզուներում, ինչպես՝ հայերենում և ռոմանական լեզուներում, որոնց հոդերը միանգամայն տարբեր են ո՛չ միայն ձևերով, այլև արտահայտման եղանակներով ու նշանակությամբ:

Հնդեվրոպական լեզուների քերականական կատեգորիաների արտահայտության մեջ եղած տարբերությունների մի մասը գալիս է

շատ հին ժամանակներից, հնդեվրոպական հիմք-լեզվի բարբառների տարբերություններից, իսկ մնացածը, ըստ որում տվյալ լեզուների ավելի ուշ շրջանի հետ կապված և նրանց համակարգը բնորոշող տարբերությունները առաջացել են այդ կոնկրետ լեզուների ինքնուրույն զարգացման ընթացքում: Հնդեվրոպական առանձին լեզուներ իրենց զարգացման ընթացքում խորացրել և ընդարձակել են, ոմանք էլ առավել պարզացրել կամ կորցրել իրենց ծագումնաբանական ընդհանրություններից շատ բան, նայած թե տվյալ լեզուները կրող ժողովուրդները պատմական ինչպիսի՝ պայմաններում են ապրել և տնտեսական ու քաղաքական ինչպիսի՝ փոխհարաբերությունների մեջ են եղել: Իսկ որոշ լեզուներ էլ իրենց ինքնուրույն զարգացման ընթացքում այնքան են հեռացել հնդեվրոպական հիմք-լեզվից և այնքան ձևափոխությունների ենթարկվել, որ դրանց հնդեվրոպական լինելու փաստը կասկածանքի տակ են առել տվյալ լեզվի իրողությունների մեջ չթափանցող բանասերները: Հնդեվրոպական լեզուները համենայն դեպս պահել են որոշ ընդհանուր օրենքներ, որոնք արտահայտվում են իրենց ձևաբանական փոփոխությունների, բոլոր դեպքերում նման հատկանիշներով միևնույն ֆունկցիան նշելու, հոգնակիների ու բայերի դեմքերի կազմության և ընդհանրապես բազմազանություններն ու բարդ ձևերը վերացնելու միատեսակ տենդենցների մեջ: Այդ ընդհանուր տենդենցները նկատվում են և հայերենի զարգացման բոլոր աստիճաններում: Հետևաբար նա պահպանել է հնդեվրոպական հիմք-լեզվի հիմնական տարրերի՝ քերականության, հիմնական բառաֆոնդի և հնչյունական կազմի հիմնական դրսևորումները՝ իրենց ընդհանուր գծերով, որոնք հիմք են տալիս առանց որևէ վերապահության ընդունելու հայերենի հնդեվրոպական բնույթը: Այդ նշանակում է, որ հայ ժողովրդի կազմավորման մեջ իշխող դեր կատարած ցեղի կամ ցեղախմբի լեզուն եղել է հնդեվրոպական, որը հայ ժողովրդի կազմավորման ընթացքում, մեր թվականությունից առաջ VIII-III դարերում զարգացել ու դարձել է հայ ժողովրդի ընդհանուր լեզուն, ապա հայ ժողովրդի ուժեղացման ու առաջընթացի հետ իր հիմնական տարրերով ծավալվել ու կատարելագործվել է: Հայոց լեզուն իր զարգացման, հատկապես հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում խաչավորվել է փոքրասիական և կովկասյան լեզուների հետ, սակայն միշտ պահպանել է իր բնույթը և հարստացել այդ՝ ազգակից (խեթերեն և այլն) և ոչ ազգակից

(խորհրդիտերեն, ասուրերեն և այլն) լեզուներից յուրացրած լեզվական իրողություններով՝ բառերով, բառակազմական մասնիկներով և այլն, որոնք ենթարկվել են հայերենի զարգացման օրինաչափություններին և ոչնչով չեն կարողացել փոխել նրա հնդեվրոպական բնույթը:

Հայերենը իր քերականության համակարգի, բառակազմության, հնչյունական կազմի և ընդհանրապես իր կառուցվածքի մեջ պահպանելով հիմք-լեզվի զարգացման ընդհանուր օրենքների գծերը հայ հասարակության զարգացման տարբեր շրջաններում փոփոխել ու կատարելագործել է դրանք, ձեռք բերել զարգացման նոր օրինաչափություններ ու օրենքներ և դրանով իսկ ավելի ու ավելի հեռացել հիմք-լեզվից: Այդ նշանակում է, որ հիմք-լեզվից եկած ընդհանրությունները, ինչպես հնդեվրոպական ամեն մի առանձին լեզվի, նույնպես և հայերենի մեջ արտահայտվել են ինքնատիպ, հայերենին հատուկ, նրա հաղորդակցական ֆունկցիայով պայմանավորված ինքնուրույն ձևերով, որոնք ունեն իրենց սեփական, հայ ժողովրդի գոյության ու զարգացման հետ կապված պատմությունը:

ՀԱՅԵՐԵՆԻ ՆԱԽԱԳՐԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

Հին հայերենի նախագրային շրջանի վիճակի մասին մենք ուղղակի տվյալներ չունենք, սակայն հինգերորդ դարի հայերենը և մեր պատմագիրների հաղորդած փաստերը լրիվ չափով հիմք են տալիս ենթադրելու, որ նախագրային հայերենը, իբրև հայ ժողովրդի ընդհանուր լեզու, իր հիմնական առանձնահատկություններով կայունացած է եղել հինգերորդ դարից դեռ շատ ու շատ առաջ: Մեր պատմագիրները և մատենագիրները իրենց երկերում հիշատակում են հայ ժողովրդի մեջ պահպանված հին սովորությունների, ժողովրդի և առանձին թագավորների շուրջն ստեղծված առասպելների, երգերի ու վեպերի պատառիկներ, որոնք իրենց արվեստով, ոճով ու լեզվական դրսևորումներով հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանից են գալիս և թեև չեն նույնանում հինգերորդ դարում ու հետո ստեղծված նման գործերի լեզվի ու ոճի հետ, բայց իրենց ընդհանուր արտահայտություններով չեն տարբերվում նրանցից: Հին առասպելների, երգերի և վեպերի մասին ընդարձակ տեղեկություններ է տալիս Մ. Խորենացին. նա իր պատմության մեջ բառացի մեջ է բերում վիպասանա-

կան շրջանի գրականության մի քանի պատառիկներ, որոնց լեզուն նկատի ունենալով՝ մենք կարող ենք որոշ գաղափար կազմել հայոց հին լեզվի ավելի վաղ շրջանի պատկերի մասին: Վիպասանական գրականության գոյության փաստը և նրա այդ մնացորդների լեզվի վաղեմությունը կասկածանք չեն կարող հարուցել. ինքը՝ Մ. Խորենացին, հայտնում է, որ հնում եղել են ժողովրդական վեպեր, երգեր, որոնք սիրել է հայ ժողովուրդը և պատմել ու երգել է դարեր շարունակ և որոնք ինքը ծանոթ է եղել և դրանք լսել է իր իսկ ականջով¹: Մեր մյուս պատմիչները նույնպես հիշատակություններ ունեն վիպասանական շրջանի գրականության, հայ ժողովրդի սովորությունները պատկերող ավանդությունների, վեպերի և երգերի մասին: Փ. Բուզանդը գրում է, որ հայերը սիրում էին «գիւրեանց երգս առասպելաց վիպասանութեանն»² և խոյս էին տալիս եկեղեցական քարոզներից ու ծեսերից, չէին լսում աստուծո պատգամները և «գբանս սուրբս» արհամարհում էին: Եղիշեն հաղորդում է, որ նույնիսկ իր ժամանակ ժողովուրդը, ինչպես նաև իշխող խավերը չէին մոռացել հեթանոսական երգերը և մաշում էին «գերկարութիւն գիշերոցն յերգս արբեցութեան և ի կաքաւս լկտութեան»³:

Հայ ավանդական այդ բանահյուսությունը երկար դարերի ընթացքում բյուրեղանալով և հաստատուն կերպարանք ստանալով՝ պահպանվում էր ժողովրդի մեջ ո՛չ միայն իր բովանդակությամբ, այլև ձևով, լեզվական դրսևորմամբ: Ուղղակի տվյալներ չունենալու պատճառով չենք ուզում ասել, որ դրանք մշակվել են նաև գրավոր խոսքի մեջ, թեև դրա համար հիմքեր կան: Գրական լեզուն, անկասկած, ավանդությունը պահպանող ամենաուժեղ միջոցներից մեկն է, բայց այդ դեռ չի նշանակում, թե բանավոր խոսքը չի կարող պահպանվել երկար ժամանակ, և ավանդաբար չեն կարող անցնել ժողովրդի ստեղծագործության առավել սիրված ու մասսայական դարձած երկերը: Պատմության մեջ հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ դարեր շարունակ բանավոր դրությամբ պահպանվել են գրական, գիտական և այլ ստեղծագործություններ առանց փոքր-ինչ փոփոխության ենթարկվելու: Կեսարը հայտնում է, որ գալլերի մեջ սերնդից սերունդ հաղորդվում էին որոշ գիտելիքներ առանց որևէ գրի կամ գրության

¹ Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, Գ. Ա. Գլ. Լա:

² Փ. Բուզանդացոյ, Պատմութիւն հայոց, 1883, Ս. Պ., էջ 29:

³ Եղիշէ, Պատմութիւն Վարդանաց, Կ. Պոլիս, 1866, էջ 128:

օժանդակության. հայտնի է, որ Հնդկաստանում կրոնական բովանդակություն ունեցող տեքստեր սերնդից սերունդ էին անցնում բանավոր ձևով, նրանք նույնիսկ չնչին փոփոխությունների չէին ենթարկվում. պահպանվում էին այդ տեքստերի բառերը, քերականական օրինաչափությունները և այլն: Աշխարհի շատ ժողովուրդներ ստեղծել են հարուստ ֆոլկլոր, բազմաթիվ երգեր ու պոեմներ, որոնք սերնդից սերունդ հաղորդվում են բանավոր, սակայն պահպանելով ինչպես իրենց տաղաչափությունը, նույնպես և լեզուն: Եթե այդ բոլորը պատմական իրողություն է, ինչո՞ւ չի կարելի ենթադրել, որ հեթանոսական շրջանի հետ կապված հայկական առասպելներն ու երգերը հինգերորդ դարում չէին ոչնչացվել և ժողովրդի մեջ պահպանվում էին թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ ձևով՝ իրենց լեզվով:

Մովսես Խորենացին իր Պատմության մեջ հիշատակում է հեթանոսական շրջանի հետ կապված երգերի ու վեպերի տասներկու հատված, որոնք, ինչպես ինքը հավաստում է, մեջ են բերված բառացի, այդ հատվածներից են Վահագնի երգի մի մասը, որը Վահագնի ծննդի նկարագրությունն է, իսկ մնացած մասի առթիվ Խորենացին բավականանում է միայն բովանդակությունը հակիրճ պատմելով, որով իմանում ենք, որ «ընդ վիշապաց ասէին յերգին կռուել նմա և յաղթել»¹, Արտաշեսի հաջողություններին ու ամուսնությանը վերաբերող վեպից տասը պատառիկ, որոնց մեջ պատմվում է ալանաց թագավորի որդու գերության, նրա քույր Սաթենիկի խնդիրքի, Սաթենիկին փախցնելու, նրա և Արտաշեսի ամուսնության, Սաթենիկի անհավատարմության, Արտաշեսի որդի Արտավազդի չարության և հոր դեմ ապստամբելու, Արտաշեսի մահվան ու Արտավազդին անիծելու մասին. մյուս հատվածը Վարդգես մանուկի վեպից է: Խորենացու հիշատակած վեպերի և երգերի հատվածների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նրանք խորին հնություն ունեն, և իրենց բովանդակությամբ ու լեզվով ձևավորվել են մեր թվականությունից առաջ: Օրինակի համար, Վահագնի երգը բովանդակում է «հին առասպելական ըմբռնումն ամպրոպի աստվածության մասին»² և հայոց հնագույն ժողովրդական երգերից է: Այդ երգի մեջ գործածված են հայոց լեզվին հարազատ, պարզ և արտահայտիչ մակդիրներ, ինչպես՝ **հուր** հեր, **կարմրիկն** եղեգնիկ, **խարտեաշ** պատանեկիկ, որոնք բոլորն էլ

¹ Մ. Խորենացի, Նույն տեղը, էջ 31:

² Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 1, էջ 37:

հասկանալի են նույնիսկ այժմ և ընդգծվում են որոշիչների նախադաս գործածությամբ, որից երևում է, որ հնագույն ժամանակներից սկսած հայերենը սիրել է որոշիչների նախադաս գործածությունը: Այդ երգում օգտագործված են հայ ժողովրդական ստեղծագործությանը հատուկ ձևեր՝ փաղաքշական բառեր, ինչպես՝ **եղեգնիկ, կարմրիկ, պատանեկիկ, աչկունք** (աչիկներ), կրկնություններ, ինչպես «Երկներ երկին, երկներ երկիր, երկներ և ծովն ծիրանի» և այլն: Վերոհիշյալ առանձնահատկությունները հատուկ են նաև մյուս երգերին, օրինակ՝ **այր քաջ Արտաշես, աչագեղոյ դստեր, արի արքայ, զոսկեղ շիկափոկ պարան, փափուկ օրիորդ** և այլն: Այդ երգերի մեջ եղած մի շարք ոճեր ու դարձվածքներ, որոնք իրենց իմաստով կապված են հայ ժողովրդի նախաքրիստոնեական շրջանի ըմբռնումների հետ, ցույց են տալիս որ դրանք շատ վաղուց են լեզվական ձևավորում ստացել: Այդ դարձվածքներից են՝ **Ծովն ծիրանի** բառակապակցությունը, **կռել կոփել գոլուն** դարձվածքը, որը նշանակում է «աղջիկ ուզել», այսինքն՝ խնամիմանալ: Այդ դարձվածքը իր այդ իմաստով կապված է հայկական այն հին սովորության հետ, երբ մեկից աղջիկ ուզելիս գնում էին աղջկա հոր տան դուռը ծեծում և նստում «խնամաքարի» վրա և դրանով հայտնում իրենց մտադրությունը, **տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթենկանն**, որը նույնպես հին սովորությունների հետ է կապված և իր լեզվական ձևավորումը ստացել է շատ վաղուց: Մ. Խորենացու հիշատակած երգերի պատառիկները քաղված են ավելի մեծ գործերից, որոնք անդրապատկերել են հայ ժողովրդի հնագույն սովորությունները և ձևավորվել քրիստոնեությունը Հայաստան մուտք գործելուց շատ առաջ: Այդ նշանակում է, որ այդ երգերը կամ վեպերը, իբրև հայ հեթանոսական շրջանի գրականության մնացորդներ, պետք է մշակվածության որոշ կնիք կրեին, որովհետև յուրաքանչյուր ստեղծագործություն, որքան էլ նա մոտ լինի խոսակցական լեզվին, այնուամենայնիվ շատ կողմերով տարբերվում է դրանից: Իսկ եթե նա գրավոր է և երկար ժամանակ է անցնում նրա հորինման ժամանակաշրջանից, ապա տարբերությունն ավելի է խորանում, որովհետև կենդանի լեզուն անընդհատ փոխվում է, իսկ գրական լեզուն, որը որոշ ավանդույթի հետ է կապված, համարյա թե չի փոխվում կամ շատ քիչ է փոխվում, որը ավելի է ուժեղացնում բանավոր լեզվի և նրա միջև եղած տարբերությունները, մանավանդ

այն շրջանում, երբ գոյություն ունեն բարբառներ, և գրական լեզուն չի դառնում ամբողջ հասարակության խոսակցական լեզու:

Այդ երգերի պատառիկների բառապաշարը համարյա ամբողջությամբ պահպանված է մեր բարբառների մեծ մասում և աշխարհաբարում, հատկանշական է, որ որոշ բառեր, ինչպես **խաւարծի, փոկ, թումբ, ծուխ, պարան, օղ, շատ, շէկ, կարմրիկ** և այլ բառեր իրենց ձևով և այդ հատվածներում գործածված իմաստով ավելի տարածված են մեր բարբառներում, քան մեր գրական հին լեզուներում: Այդ հատվածների քերականությունը իր բոլոր դրսևորումներով: իհարկե, չի համապատասխանում գրաբարի քերականությանը: Այդ երգերի մեջ կան ուղղական և հայցական հոգնակի հոլովների միաձևության դեպքեր, ինչպես՝ «շատ ցաւեցոյց **զմէջք** փափուկ օրիորդին», «Ընկեց ի **մէջք** օրիորդին Ալանաց» (փոխ. մէջս), գրաբարից տարբեր ձևով գործածված բայեր, ինչպես՝ «արագ **հասուցանելով** ի բանակն իւր» (փոխ. հասուցեալ), գրաբարում համարյա չկիրառված բառեր՝ «**շատ**», «**մօրուս**» և այլն, որոնք ցույց են տալիս, որ այդ պատառիկների լեզուն քերականությամբ գրաբարին խիստ մոտ լինելով հանդերձ, այնուամենայնիվ, տարբերվում է նրանից, որովհետև ավելի հին շրջանից գալով՝ չի կրել այն ազդեցությունները, որոնց ենթարկվել է գրաբարը: Սակայն դրանով չի հերքվում այդ երգերի լեզվի և գրաբարի միջև եղած ընդհանրությունը, ինչպես նաև հիմնական արտահայտություններով նրանց նույնությունը, այլ պարզվում է, որ՝ գրաբարի հիմքում ընկած լեզուն զարգացման երկար շրջան է անցել և գրի ամնվելուց շատ ու շատ առաջ հղկվել ու մշակվել է: Այդ է հաստատում նաև հատվածների լեզվական ուսումնասիրությունը¹:

Հին հայերենի մշակվածության, զարգացման երկար շրջան անցած լինելու մասին են խոսում նաև գրաբարում պահպանված բազմաթիվ ոճերն ու դարձվածքները, որոնց մի մասը իր ձևով և իմաստով գործածվում է նաև արդի հայերենում և շարբառներում. թվենք դրանցից միայն մի քանիսը. «յարևէ արկանել» (սպանել), «արև կրել» (ապրել), «ակն ածել» ի վերայ ուրուք (հոգ տանել), «զակն արկանել» (անհոգ լինել), «ընդ ակամբ հայել» (խեթ նայել), «ակնաբեր լինել» (շրջահայաց լինել, աչքաբաց լինել), «ակն ածել» (քաշվել, վախենալ), «ծեռն ի ձեռն» (շտապ, անմիջապես), «ծեռն

¹ Գ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. II, 1950:

արկանել» (սկսել), «ձեռն տալ» (օգնել), «ձեռն յանձին արկանել» (իր վրա դնել հույսը), «զմտաւ ածել» (մտածել, միտք դնել), «ի միտ առնուլ» (հասկանալ), «ընդ միտ ածել» (մտածել), կամ՝ «թէ քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարը շեն», «սահման քաջաց՝ գէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի», «աւաղ փառացս անցաւորի», «ծառայ որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ մկանուսն տան լսել նմա», կամ՝ պաշտոնական հարաբերություններ արտացոլող մի շարք դարձվածքներ. «բազմասցի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ», «դուք ողջ լերուք և մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականութեամբ», «ողջ լեր ամենայն յաղթութեամբ», «տեառն իմում խնդալ», «ծնունդ ինքնակայ», «ճակատագրեալ անմահութիւն», «ողջոյն շատ շնորհեմ ձեզ», «հասցէ այցելութիւն ի փառաց թագաց և ի քաջ նախնեաց», «բարձակից արեգական» և այլն:

Այս օրինակների մեծ մասի իմաստը շատ հին ըմբռումների հետ է կապված, այդ նշանակում է, որ նրանք նույնպես գալիս են շատ հնուց: Այլ կերպ չէր էլ կարող լինել. հայտնի է, որ ոճի լեզվական ձևը համեմատաբար ավելի կայուն է, քան նրա իմաստը, և ընդհանրապես լեզվի մեջ որևէ ձև չի կարող փոփոխվել առանց դրա համար ստեղծված անհրաժեշտության, իսկ երբ լեզվական փաստերը կայունանում են, հասարակությունը ձգտում է ամեն կերպ պահել նրա համար ըմբռնելի դարձած լեզվական ձևերը, չխախտել լեզվի ներքին օրինաչափությունները, որպեսզի դրանք չդառնան անհասկանալի ամբողջ ժողովրդի համար: Այդ բանը ամենից շատ երևում է ոճերի մեջ. ժողովուրդը զարգանում, փոխում է իր աշխարհայացքը, անցնում է նոր շրջան, հասարակական նոր հարաբերություններ, պետական նոր կարգեր է ստեղծում, փոխում է իր ապրելակերպը, բայց պահում է իր լեզուն, շատ հին մտածողության հետ կապված ոճերն ու դարձվածքները:

Հայերենի նախագրային վիճակի մասին գաղափար կարող են տալ նաև այն բազմաթիվ փոխառությունները, որոնք կնքել է հայերենը հնագույն լեզուներից՝ խալդերենից, ասորերենից, խուրրիմիտաներենից, պարսկերենից և այլն:

Այդ փոխառությունների մեջ հատկապես մեծ կշիռ են կազմում պարսկերեն բառերը, որոնց թիվը հազար չորս հարյուրից ավելի է: Պարսկերեն բառերի փոխառությունը ցույց է տալիս, որ հայերենը մեր թվականությունից դեռևս շատ առաջ այնքան ուժեղ է եղել, որ

կարողացել է փոխառնել և յուրացնել օտար տարրը մեծ քանակությամբ, չծուլվել ժամանակի զարգացած լեզուներին և պահպանել իր ինքնուրույնությունը:

Պրոֆ. Յ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության առաջին հատորում մանրամասն քննության է առնում հայերենի վրա պարսկերենի թողած ազդեցությունը, բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ այդ մեծաքանակ բառերի գերակշիռ մասը գալիս է հին կամ միջին պարսկերենից: Հին պարսկերենը ավանդված է մեր թվականությունից առաջ 560–330 թվականներին գրված սեպագիր արձանագրություններով, իսկ միջին պարսկերենը և հատկապես նրա առաջին շրջանը համարվող պարթևական պահլավերենը, որի հետ են կապվում հայերենին անցած պարսկերեն շատ բառեր՝ ավանդվել է մեր թվականությունից առաջ 256 թվականից մինչև մեր թվականության 226 թվականը գրված արձանագրություններով: Հայերենը պարսկերենից կնքել է փոխառություններ նաև ավելի ուշ շրջանում, բայց դրանք ավելի փոքրաթիվ են և որևէ չափով չեն կարող պատասխանել առաջադրված հարցին: Հայերենին անցած պարսկերեն բառերի տառադարձության օրինաչափությունները նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ հայերենի հնչյունաբանության մի շարք կանոններ» մեր թվականությունից դեռ շատ ու շատ առաջ արդեն կայունացել էին և նույն ձևով պահպանվել են նրա գրավոր արտահայտությունների մեջ: Այսպես, օրինակ՝ նոր պարս. bad բառը հայերեն **վատ** ձևով է տառադարձված. այդ նշանակում է, որ բառը մտել է հայերենի մեջ պահլավերենից, որովհետև պահլավերենում այդ բառը **vāt** է արտասանվել, նույնը կարելի է ասել նաև **yavet**, որը տառադարձված է **յաւետ**, **varaz**՝ **վարազ**, **aržan**՝ **արժան**, **vačar**՝ **վաճառ** բառերի մասին, որովհետև պահլավերենում հիշված բառերը արտասանվել են այն ձևով, ինչ ձևով պահպանվել են հայերենում¹: Բազմաթիվ բառեր, որոնք հին պարսկերենում կամ պահլավերենում վերջացել են **ակ**-ով, նոր պարսկերենում պահպանվել են **կ**-ի կորուստով և **ա**-ի հնչյունափոխմամբ. դրանից հետևում է, որ բոլոր այն պարսկերեն բառերը, որոնք հայերենում ունեն **ակ** վերջավորություն, հայերենին են անցել ավելի հին շրջանում, օրինակ՝ **նամակ** (nama), **դորակ** (dora), **նիզակ** (nēza), **քուռակ** (kurra), **մատակ** (mada), **ճուռակ**

¹ Յ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, էջ 218 – 320:

«բաճե» (čurra), **դիպակ** (dēba), **կրպակ** (kurba), **հրեշտակ** (firēšta) և այլն¹: Այս օրինակները ցույց են տալիս, որ հայերենը այդ հնագույն շրջանում արդեն ունեցել է իր հնչյունական կայուն օրենքները, որոնք պահպանվել են նրա զարգացման հետագա շրջաններում:

Հայ ժողովրդի ընդհանուր լեզվի հնագույն վիճակի մասին կարելի է դատել նաև նրա գրական շրջանի՝ գրաբարի իրողությունները նկատի ունենալով: Գրաբարի քերականության համակարգը, բառապաշարն ու հնչյունաբանությունը, ինչպես տեսանք, իրենց ընդհանուր դրսևորումներով գալիս են հնդեվրոպական հիմք-լեզվից, բայց նա իր զարգացման այն շրջանում, երբ կազմավորվում էր իբրև էթնիկական լեզու, արդեն հեռացել էր հիմք-լեզվից և ուներ իր զարգացման նոր, նույնիսկ հնդեվրոպական հիմք-լեզվի հետ կապ չունեցող օրենքներ:

Հայոց էթնիկական լեզուն, որը, ինչպես ասացինք, մեր թվականությունից առաջ ընդհանուր լեզու էր Հայաստանի ամբողջ բնակչության համար, հայ ժողովրդի և հայկական պետականության ուժեղացման ու զարգացման հետ մշակվում, հղկվում ու կատարելագործվում է: Նա զարգացման բարձր աստիճանի է հասնում Արտաշես Առաջինի և հատկապես Տիգրան Երկրորդի ժամանակաշրջանում, երբ Հայաստանի տերիտորիայում ապրող մի քանի միլիոնանոց ժողովրդի բոլոր հատվածները իրենց հայ էին համարում և կապված էին միմյանց հետ:

Տիգրան Երկրորդի թագավորության շրջանում տնտեսապես ուժեղանում և մշակութային բարձր աստիճանի է հասնում Հայաստանը, երկրում հիմնադրվում են նոր քաղաքներ, ծավալվում է առևտուրը, բարելավվում է ժողովրդի նյութական դրությունը, մեծ զարգացում է ստանում արվեստը, գրվում են պատմական, գեղարվեստական երկեր, հիմնադրվում է թատրոն, մեծ զարկ է ստանում նաև ժողովրդական բանահյուսությունը, և հայ վիպասաններն ու գուսանները երգեր ու վեպեր հորինելով հայ թագավորների և աստվածների մասին՝ պատմում ու երգում էին ամեն տեղ ու այդպիսով օժանդակում հայ գրականության զարգացմանը և Տիգրան Երկրորդի թագավորության շրջանում պետական լեզվի ֆունկցիաներ կատարող հայոց համաժողովրդական լեզվի մշակմանն ու տարածմա-

¹ Գ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, էջ 218-320:

նը: Սակայն այդ դեռևս չի նշանակում, թե հայ համաժողովրդական լեզուն չուներ իր բարբառները այդ շրջանում: Հայոց լեզվի բարբառները ինչպես այդ ժամանակ, նույնպես և դրանից առաջ գոյություն են ունեցել: Դրանց մի մասը հավանաբար մոտ է եղել համաժողովրդական լեզվին, իսկ մյուս մասը իր հիմնական դրսևորումներով՝ բավականաչափ հեռու, թեև գիտակցվել է իբրև հայերենի բարբառներ:

Տիգրան Երկրորդի մահվանից հետո, երբ գահ է բարձրանում Տիգրանի որդի Արտավազդ Երկրորդը (55-35 թթ.), Հայաստանը շարունակում է ուժեղանալ: Արտավազդ Երկրորդը նորից միակցում է Մեծ Հայքին Ծոփքը և Փոքր Հայքը: Հույն զորավար Անտոնիոսը միայն խարդախությամբ կարողանում է գերել Արտավազդին և նրա ընտանիքին ու տանել Հռոմ, որտեղ և գլխատում են նրան: Արտավազդի սպանությունից հետո Արտաշես Երկրորդը ոտքի է հանում հայ ժողովրդին, ջախջախում է Հայաստանում մնացած հռոմեական զորքը և վերականգնում է Հայաստանի անկախությունը (33-20 թթ.): Արտաշեսյան դինաստիան վերանում է մեր թվականության առաջին տարում՝ 190 տարի գոյություն ունենալուց հետո: Այդ երկարատև շրջանում, հայկական ուժեղ պետության գոյության պայմաններում զարգացման բարձր աստիճանի հասած հայկական մշակույթի հետ զարգանում է հայոց լեզուն, գնալով ավելի ու ավելի կայունանում և իր մեջ ձուլում հայ դարձող շատ ցեղերի լեզուները:

Արտաշեսյան դինաստիայի վերացումից հետո Հայաստանը դառնում է Պարսկաստանի և Հռոմի կռվախնձորը, հույներն ու պարթևները նորից են գլուխ բարձրացնում և ցանկանում են տիրել Հայաստանին, բայց չեն կարողանում ընկճել հայ ժողովրդին, որը պայքարելով իր ինքնուրույնությունը պահպանելու համար՝ չէր մոռանում նաև իր մշակույթն ու լեզուն: Եվ հույն-պարսկական պատերազմների ընթացքում, թեև Տիգրան Երկրորդի նվաճած մի շարք շրջաններ անջատվում են Հայաստանից, բայց հայ ժողովրդի ամբողջությունը չի խախտվում: Տնտեսության և մշակույթի զարգացումը նույնպես կանգ չի առնում: Հայաստանը, սակայն, սկսում է զարգանալ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական նոր իրադրությունների պայմաններում: Հայաստանում առաջանում են ֆեոդալական հարաբերություններ, կազմակերպվում են «աշխարհներ» և «գավառներ», որոնց կառավարիչները նշանակվում էին թագավո-

րի կողմից: Այդ կառավարիչները, որոնց տրվում էր նախարար անունը, աստիճանաբար դառնում էին իրենց հովանավորությանը հանձնված «գավառների» և «աշխարհների» ժառանգական իշխաններ, որոնք գնալով ընդարձակում էին իրենց կառավարչական ու տնտեսական գործունեության շրջանակները: Ֆեոդալական նախարարների մեջ այդ շրջանում հատկապես աչքի էին ընկնում Սյունյաց, Բագրատունյաց, Արծրունյաց, Ռշտունյաց, Կամսարականների, Խոռխոռունիների, Մամիկոնյանների, Ամատունիների իշխանությունները, որոնք բաժանված էին միմյանցից նաև տերիտորիապես: Հայ արքունական տանը պատկանող կալվածքը կոչվում էր ոստան: Արքունական կալվածքի մեջ մտնում էր Այրարատյան գավառը՝ Արտաշատ և Վաղարշապատ քաղաքներով:

Երկրի ֆեոդալական մասնատումը բնականաբար պետք է ուժեղացներ հայոց բարբառների և համաժողովրդական ընդհանուր լեզվի միջև եղած տարբերությունները: Սակայն հայ ժողովրդի կյանքում կատարված այդ փոփոխությունները ոչ թե թուլացնում, այլ ուժեղացնում էին ընդհանուր հաղորդակցման և պաշտոնական ֆունկցիա կատարող այդ լեզվի մշակման ու կատարելագործման պրոցեսը, թեև դրա հետ միասին վերացնում էին հայ ժողովրդի բոլոր հատվածների համար գրական միասնական լեզուն որպես խոսակցական լեզու պահպանելու հնարավորությունները: Հայոց համաժողովրդական լեզվի զարգացման պայմանները հասցնում են այն բանին, որ այդ լեզուն սկսում է իբրև խոսակցական լեզու օգտագործվել միայն կենտրոնական մասում և նրան տերիտորիապես, մոտ գավառներում, որի պատճառով էլ նրան զուգընթաց տերիտորիալ բարբառները շարունակում են իրենց գոյությունը՝ իհարկե, միշտ հանդես գալով իբրև ընդհանուր լեզվի ճյուղավորումներ և ենթարկվելով նրա զարգացման օրենքներին:

III. ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆ ՀԻՆ ԼԵՁՈՒՆ՝ ԳՐԱԲԱՐԸ

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

Հայ ժողովուրդը, ինչպես նշվեց նախորդ գլխում, մեր թվականության երրորդ-չորրորդ դարերում զարգացման նոր շրջան է թևակոխում. երկրում ձևավորվում են ֆեոդալական հարաբերությունները, առաջանում են ֆեոդալական խոշոր տիրույթներ՝ ժառանգական ֆեոդալական իշխանություններ՝ նախարարություններ, որոնք ունենում են իրենց ենթակա տերիտորիան և բնակչությունը: Այդ նախարարությունները սկսում են ավելի ու ավելի սահմանազատվել միմյանցից՝ հաճախ իրենց շահերով բախվելով երկրի ամենամեծ ֆեոդալի՝ թագավորի հետ: Սակայն, իբրև ընդհանուր կանոն, նրանք ենթարկվում էին երկրի ամենաբարձր իշխանությանը՝ թագավորին:

Այդ նոր հարաբերությունների ձևավորման հետ գոյանում են հողատիրության նոր ձևեր, ժառանգաբար անցնող և պայմանական հողատիրության սկզբունքով ստացված ֆեոդալական հողեր:

Հասարակական այդ նոր հարաբերությունները նոր պահանջներ են առաջադրում. փոխվում է իշխող դասի վերաբերմունքը հեթանոսական կրոնի նկատմամբ. հայկական նոր առաջացած ֆեոդալական դասը իր դիրքերն ամրացնելու համար սկսում է հովանավորել նոր կրոնը՝ քրիստոնեությունը, որը դեռևս մեր թվականության երկրորդ դարում իր օջախներն ուներ Հայաստանի հարավարևմտյան շրջաններում: Հայկական ֆեոդալական պետությունը մեծ ուժ էր տեսնում քրիստոնեության մեջ և չորրորդ դարի սկզբին, 301 թվականին, քրիստոնեությունը Հայաստանում հայտարարվում է իբրև պետական կրոն:

Հայ ֆեոդալական պետությունը ընդունելով քրիստոնեությունը իբրև պետական կրոն՝ իրականացնում էր նաև Պարսկաստանից սահմանազատվելու իր ձգտումները: Սակայն զրանով նա լուծում էր նաև հայ նոր դարության հարցը, որը սերտ կերպով առնչված էր ընդհանրապես հայ ժողովրդի ինքնուրույնության պահպանման և նրա նոր մշակույթի զարգացման հետ:

Հայ հոգևորականությունը գիտակցում էր իր դերը՝ ֆեոդալական

կարգերը Հայաստանում ամրացնելու, աշխատավորությանը հնազանդ պահելու բնագավառում և կարողանում էր օգտագործել այդ բոլորը՝ աշխատավորության հաշվին անընդհատ հարստանալու համար: Ահա թե ինչու կարճ ժամանակամիջոցում հայ հոգևորականությունը դառնում է ֆեոդալական ուժեղ մի կազմակերպություն՝ իրեն հատուկ հիերարխիայով:

Հայկական պետականության կենտրոնացման ու ամրացման հարցը միշտ զբաղեցրել է հայ թագավորներին, թեև նրանք իրենց ձեռնարկումների մեջ հաճախ հանդիպել են երկրի կենտրոնախույս ուժերի և պարսիկների ու հույների ուժեղ դիմադրությանը:

Հայաստանը հատկապես ծաղկման և բարգավաճման շրջան է ապրում Տրդատ Երրորդի թագավորության շրջանում, երբ երկիրը ավելի քան 40 տարի խաղաղ կյանք էր վարում: Սակայն այդ դրությունը դուր չէր գալիս ո՛չ պարսիկներին, որոնք ձգտում էին ոչնչացնել հայկական ուժեղ թագավորությունը և ո՛չ էլ հռոմեական կայսրությանը, որը ամեն կերպ աշխատում էր Հայաստանը այդ կայսրության մի մարզը դարձնել:

Ամբողջ հայ ժողովուրդը, չնայած մի շարք հայ նախարարների դավաճանությանը, ծառանում էր օտարերկրյա գաղութարարների դեմ և արյան գնով պաշտպանում էր երկիրը և իր ինքնուրույնությունը: Պարսից և հռոմեական պետությունները իրենց նպատակներն իրագործելու համար հաճախ նենգ միջոցների էին դիմում. պարսից Շապուհ արքան, երբ համոզվում է, որ զենքի ուժով չի կարող ընկճել հայերին, նենգ միջոցներով, խարդախությամբ իր մոտ կանչելով հայոց թագավոր Արշակին՝ բանտարկում է նրան, իսկ սպարապետ Վասակին, որը, ինչպես հայտնում է հինգերորդ դարի հայ պատմիչ Բուզանդը, 30 տարի սարսափի մեջ էր պահել պարսկական զորքին, մորթագերծ է անում: Հունաստանի Վաղես թագավորը, հայոց Պապ թագավորի մեջ տեսնելով հայ պետականությունը հզոր դարձնելու կարողություն՝ կարգադրում է Հայաստանում գտնվող հռոմեական զորքերի պետ Տրոյանոսին՝ սպանել նրան: Տրոյանոսը ճաշկերության ժամանակ, տմարդի կերպով սպանում է իրեն բարեկամության ձեռք մեկնած Պապին:

Սակայն Պարսկաստանի և Հունաստանի իշխողների այդ դավադրություններն ու խարդախությունները, ինչպես նաև նրանց բազմաթիվ հարձակումները չեն կարողանում ընկճել հայ ժողովուրդին,

մեռցնել նրա հայրենասիրության բարձր ոգին և արտաքին թշնամիներին դիմադրելու հաստատակամությունը: Հայերը շարունակում են անձնվիրաբար պայքարել իրենց ինքնուրույնության համար՝ թշնամիների տմարդի արարքներին պատասխանելով հերոսական գործերով:

Հայ ժողովուրդը իր զարգացման տարբեր շրջաններում տարբեր միջոցներով է դրսևորում իր ինքնուրույնությունը պահպանելու համար տարած պայքարը. երբեմն գենքը ձեռքին հերոսաբար դիմադրում է երկրի վրա ձեռք բարձրացրած թշնամիներին, երբեմն չտեսնված թափով լծվում է երկրի շինարարությանը և կարճ ժամանակում ամայի դաշտերը վերածում բերքառատ արտերի, հաճախ էլ հարկադրված է լինում ի մի հավաքելու իր մշակույթի ցրիվ տրված էջերը և նոր պայմաններում զարգացնելու ու ավելի կատարելագործելու իր մշակույթն ու լեզուն:

Հայ ժողովրդի ինքնուրույնության պահպանման գործում հատկապես մեծ դեր է կատարել հայ համաժողովրդագրական լեզուն, որը, ինչպես ասել ենք, մեր թվականությունից առաջ արդեն իբրև էթնիկական լեզու իր հիմնական դրսևորումներով կայունացած էր:

Հայ համաժողովրդական լեզուն, հայոց գրերի ստեղծման շնորհիվ, դառնում է գրավոր լեզու: Այդ ձևով նա ամրանում է գրականությամբ և վերջնականապես փրկվում անհետ կորչելուց:

Հայոց գրերը ստեղծում է Մ. Մաշտոցը մեր թվականության հինգերորդ դարի սկզբներին՝ 405 թ.: Այդ մեծ գործը գլուխ բերելու համար նրան օգնում են ինչպես հոգևորականության, նույնպես և իշխող դասի ներկայացուցիչները և առաջին հերթին հայոց թագավոր Վռամշապուհը և կաթողիկոս Սահակ Պարթևը: Հայոց գրերի ստեղծման և հայ նոր դպրության հիմնադրման հետ մեծ հույսեր էին կապում հայ հոգևորականությունն ու պետությունը: Հայ հոգևորականությունը շահագրգռված էր հայոց գրերի գործով, որովհետև գրերը կլինեին հզոր միջոց, որով կստեղծվեին քրիստոնեության տարածման, ամրապնդման, նոր վարդապետությունը ժողովրդին պատվաստելու և դրանով հեթանոսության դեմ պայքարելու միջոցառումները. իսկ իշխող ազնվականությունը իր ձեռքն ունենալով հայոց գրերը՝ կազատվեր հունական, ասորական և պարսկական ազդեցությունից և ստիպված չէր լինի գրելու պաշտոնական փաստաթղթերը օտար գրերով, դպրոցներում ուսուցումը վարելու հունարեն կամ

ասորերեն և ամենից կարևորը՝ հնարավորություն կստանար գոնե մշակույթով միավորելու Յունաստանի և Պարսկաստանի իշխանության տակ գտնված հայ ժողովրդի տարբեր հատվածները: Այդ բոլորով հանդերձ՝ հայոց գրերի գյուտը մշակութային ու քաղաքական մեծ նշանակություն ուներ՝ ընդհանրապես հայ մշակույթի և քրիստոնեական գրականության զարգացման համար, որով շահագրգռված էին և՛ հոգևորականները, և՛ երկրի հայ կառավարողները, և՛ ամբողջ հայ ժողովուրդը:

Հայոց գրերի գյուտը, սակայն, ավելի մեծ նշանակություն ուներ հայ ժողովրդի համար, որովհետև դրանով նա ո՛չ միայն հնարավորություն էր ստանում մայրենի լեզվով զարգացնելու իր մշակույթը, գրականությունը, մշակելու դարերի ընթացքում պահպանած իր լեզուն, այլև քաղաքականապես միավորվելու և պահպանելու իր իսկ գոյությունն ու հաջորդ սերունդներին ժառանգելու իր աշխատանքի ու պայքարի փորձը, իր ստեղծած մշակույթը և ժամանակի համաժողովրդական ընդհանուր լեզուն, որը միշտ եղել է այն հզորագույն գեները, որով պահպանել է նա իր ինքնուրույնությունն ու ինքնագոյությունը:

Մշակութային այդ մեծ ձեռնարկության՝ հայոց գրերի ստեղծման պատիվը պատկանում է ժամանակի մեծ մտածող ու գիտնական Մեսրոպ Մաշտոցին: Նա ծնվել է 361 թվականին, Տարոնի գավառի Հացեկաց գյուղում, ազատ շինական Վարդանի ընտանիքում: Նա մանուկ հասակից մեծ հակում է ցուցաբերում դեպի գիտությունը: Ժամանակի պահանջները բավարարող բարձր կրթություն տալու համար նրան ուղարկում են Ասորիքի Անտիոք քաղաքը, որտեղ նա սովորում է հունարեն և ասորերեն լեզուները և այլ գիտություններ: Ուսման դասընթացը ավարտելուց հետո վերադառնում է Հայաստան և ծառայության է ընդունվում երկրի հազարապետի դիվանում իբրև քարտուղար: Այդ առթիվ նրա աշակերտ և կենսագիր Կորյունը գրում է, որ Մեսրոպը գալիս է «նոր քաղաքը»՝ Վաղարշապատ և «կացեալ յարքունական դիւանին, ինեւ սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն»¹: Ինչպես երևում է Կորյունի պատմածից, Մ. Մաշտոցը հմուտ է եղել նաև գինվորական գործի մեջ և ղեկավարել կամ սովորեցրել է

¹ Կորյուն, Վարդ Մաշտոցի, 1941, էջ 36:

գորականներին. «Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն»¹: Մաշտոցի զինվորական ծառայության մասին հիշատակում է նաև Ղազար Փարպեցին. «Ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ դպրութիւն գոյն. զինուորեալ ի դուռն Հայոց արքային Խոսրովայ, կարգեալ յերամ մատենագիր արքունի դպրացն»²:

Ս. Մաշտոցի կենսագիրը չի գրում, թե քանի՞ տարի է նա ծառայել իբրև քարտուղար կամ զինվորական. նա միայն հաղորդում է, որ Մաշտոցը 389 – 390 թվերին թողնում է մայրաքաղաքը և դառնում կրոնավոր. «Մերկանայր այնուիտև զիշխանակիր ցանկութիւնսն, և առեալ զխաչն պարծանաց՝ ելաներ զկնի ամենակեցոյց խաչելոյն»³: Բայց Ս. Մաշտոցը մյուս կրոնավորների նման չի առանձնանում աշխարհից, նա միշտ իրեն կապված է զգում երկրի հետ, ունենում է իր աշակերտները, և Նույնիսկ ճգնության ժամանակ հաճախ ճգնարանից իջնում ու մասնակցում է երկրի կուլտուր-կրթական և մյուս աշխատանքներին: Նա քաջ ծանոթ է եղել հայ ժողովրդին, կարողացել է ներգործել նրա վրա: Այդ պատճառով էլ նրան են հանձնարարում Գողթն գավառում քրիստոնեություն քարոզելը, որովհետև գողթնեցիք, ինչպես վկայում է պատմիչը, միայն լսել էին քրիստոնեության անունը և ոչ թե դարձել քրիստոնյա: Ս. Մաշտոցը Գողթն գավառում լավ ընդունելություն է գտնում:

Սակայն Ս. Մաշտոցին ավելի մեծ գործ կատարելու բախտ էր վիճակված: Նա չի բավականանում միայն մի գավառի ազգաբնակչությանը դարձի բերելով և սկսում է մտածել ամբողջ ժողովրդի մասին, իսկ որպեսզի հայ ժողովուրդը կարողանար վերջնականապես մոռանալ հեթանոսության հետ կապված սովորությունները, հասկանար Նոր վարդապետությունը և քրիստոնյա դառնար, պետք է ունենար իր սեփական այբուբենը, իր Նոր դպրությունը: Եվ նա այդպիսի հոգսերով տարված, ինչպես վերամբարձ ոճով ասում է իր կենսագիրը, «Տրտմական հոգովք պաշարեալ և թակարդապատեալ և անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպիսի՝ արդեօք ելս իրացն գտանիցե»⁴: Ս. Մաշտոցը, սակայն, գիտեր, որ հայոց գրերի ստեղծման գործը մի

¹ Կորյուն, Վարջ Մաշտոցի, 1941, էջ 36:

² Ղ. Փարպեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1908, էջ 27:

³ Կորյուն, Նույն տեղը, էջ 38:

⁴ Նույն տեղը, էջ 40:

անհատ մարդու ցանկություններով պայմանավորված չէ, որ այն առաջին հերթին պետական և քաղաքական նշանակություն ունեցող գործ է և առանց երկրի իշխողների մասնակցության չի կարելի գլուխ բերել: Այդ պատճառով էլ նա գալիս է Վաղարշապատ և իր մտադրությունները հայտնում Սահակ կաթողիկոսին, որը մեծ սիրով ընդունում է Մաշտոցի առաջարկը և նրա հետ միասին ձեռնարկում այդ մեծ գործը: Ամենից առաջ նրանք իրենց մտադրությունը հայտնում են հայոց թագավոր Վռամշապուհին, որին նույնպես այդ հարցը մտատանջում էր: Թագավորը հայտնում է, թե ասորի եպիսկոպոսներից մեկը, Դանիել անունով, պատահաբար գտել է հայերեն լեզվի նշանագրերը: Թագավորը բերել է տալիս այդ գրերը, որոնք շատ են ուրախացնում ինչպես թագավորին, նույնպես և Սահակ կաթողիկոսին ու Մ. Մաշտոցին: Վերջինները թագավորի օգնությամբ բաց են անում դպրոցներ, և Մաշտոցը սկսում է կրթել աշակերտներին այդ գրերով: Սակայն որոշ ժամանակից հետո պարզվում է, որ այդ նշանագրերը չեն կարող արտահայտել հայերենի հնչյունները: Նրանք նորից նույն հոգսի մեջ են ընկնում և ելք են որոնում. «Իսկ իբրև ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս հայերէն լեզույն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ»¹: Այդ նշանագրերը, ինչպես երևում է Կորյունի վկայությունից, որը հետո հաստատում է նաև Մ. Խորենացին, հատկապես հայերենի համար հորինված չեն եղել, բայց, չնայած դրան, ըստ երևույթին գտնվել են մարդիկ, որոնք այդ նշանագրերը ցանկացել են օգտագործել հայերենի համար, այդ պատճառով էլ Դանիել եպիսկոպոսը կարծել է, որ դրանք հայերեն գրեր են:

Այդ փաստը համենայն դեպս ուշագրավ է հայոց նախաքրիստոնեական գրականության ու գրերի հարցը առաջ քաշելու տեսակետից: Արդյո՞ք հայերը հինգերորդ դարից առաջ չեն ունեցել գրեր, թե՞ քրիստոնեությունը հեթանոսական կուլտուրայի ու գրականության հետ ոչնչացրել է նաև այդ գրերը: Այդ հարցի մասին եղած տարբեր տեսակետները հաջողությամբ հակադրվում են միմյանց՝ տակավին հիմնավոր փաստերով չպատասխանելով քրիստոնեությունից առաջ

¹ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 46:

հայերեն գրեր լինելու կամ չլինելու հարցին:

Մ. Մաշտոցը, երբ պարզում է, որ գտնված նշանագրերը չեն բավարարում հայերենի պահանջները՝ արքայի հրամանով և Սահակի համաձայնությամբ վերցնում է մի խումբ պատանիներ Վռամշապուհի թագավորության հինգերորդ տարում՝ գկում է Ասորիք, Եդեսիա և Ամիդ քաղաքները, բաժանում է իր աշակերտները երկու խմբի. մեկին պահում է իր հետ Եդեսիայում՝ ասորերեն, իսկ մյուսին ուղարկում է Սամոսատ քաղաքը՝ հունարեն սովորելու: Եվ ինքը մնալով Եդեսիայում՝ շարունակում է աշխատել հայոց գրերը ստեղծելու համար. շատ նեղություններ քաշելուց հետո նա հորինում է հայոց գրերը, որոնք հենց այնտեղ էլ իմաստավորում, անվանում ու դասավորում է՝ իրենց վանկերով և կապերով. «Եւ այնպես բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ: Որում պարգևեր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ, հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերեն լեզուին: Եվ անդ վաղվադակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրիներ սի՛հոբայիւք կապո՛ք»¹:

Հայոց գրերը ստեղծելուց հետո նա գնում է Սամոսատ քաղաքը, որտեղ հանդիպում է հելլենական դպրության մի քերականի՝ Զոոփա-նոս անունով, որի հետ խորհրդակցելով՝ որոշում է հայերեն հնչյուն-ների «զերբագոյնս և զլայնագոյնս, զկարճն և զերկայնս, զառան-

* Մեր բանասիրական գրականության մեջ այն կարծիքն է հայտնված, թե Վռամշապուհի **հինգերորդ տարի** թվականը աղճատված է, որովհետև Կորյունն ասում է Վռամշապուհի հինգերորդ տարում Դանիելյան կոչված նշանագրերը հասցրին թագավորին, որը կարգադրում է, որ այդ նշանագրերով դասավանդեն դպրոցներում, և երկու տարի հետո, երբ պարզվում է, որ այդ գրերը չեն կարողանում արտահայտել հայերենի **հնչյունաբանությունը, թողնում են ուսուցումը այդ գրերով և կրկին մտածում** նոր գրեր ստեղծելու մասին: Այս նույն Կորյունը ասում է, թե Մ. Մաշտոցը թագավորի հինգերորդ տարում գնում է Ասորիք: Այդ հակասությունները վերացնելու համար աղճատված են համարել **հինգերորդ** թվականը:

Կարծում եմ, որ ոչ թե **հինգերորդ** բառն է աղճատված, այլ Կորյունի «իբրև **ամս երկու**» կապակցության **ամս** բառը եղել է **ամիս** և ի-ն ընկել է, որի հետևանքով դարձել է **ամս երկու**, մինչդեռ պետք է լիներ իբրև **ամիսս երկու**: Այդ ուղղումը նշել է Մ. Աբեղյանը, սակայն կասկածանքի տակ է առել: Մինչդեռ այդ ուղղման վրա կասկածելու հիմք չկա, որովհետև համոզվելու համար, թե այս կամ այն նշանագրերը համապատասխանում են որևէ լեզվի հնչյունաբանությանը, երբեք էլ երկու տարի պետք չէ. դրա համար երկու ամիսն էլ բավական է: Ասածներից բխում է, որ ճիշտ է Կորյունը, երբ ասում է թագավորության **հինգերորդ տարում** բերին Դանիելյան նշանագրերը և այդ տարում էլ Մ. Մաշտոցը գնում է Միջագետք: Աղավաղված է **ամս երկու**, որը պետք է ուղղել **ամիսս երկու**:

¹ Կորյուն, Նույն տեղը, էջ 48:

ծինն և գերկնաւորն»¹, այսինքն՝ պարզում, թե հայերեն հնչյուններից, և հատկապես հունարենից տարբեր հնչյուններից, որոնք են ավելի նուրբ (այսինքն՝ խուլ), որոնք են ավելի թափ (այսինքն՝ շնչեղ), որոնք են կարճ, երկար, կրկնակ կամ կրկնավոր (այսինքն՝ բարդ), և որոնք առանձին (այսինքն՝ պարզ) :

Այդ հույն քերականի օգնությամբ նա Սամոսատում պատրաստում է հույն դպրության մասնագետներ և գրագիրներ, որոնք հետագայում զբաղվում են թարգմանությամբ և ուսուցչությամբ:

Մ. Մաշտոցը հայոց գրերը ստեղծելուց և գիտական համապատասխան համակարգի բերելուց հետո անմիջապես սկսում է թարգմանել Աստվածաշունչը, սկսելով Սողոմոնի առակներից: Առաջին բառերը, որոնք գրվում են հայերեն նոր նշանագրերով, ինչպես հավաստում է Կորյունը, հետևյալներն էին. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ. իմանալ զբանս հանճարոյ»²:

Մ. Մաշտոցը Սամոսատ քաղաքի եպիսկոպոսից թղթեր առնելով՝ յուրայիններով գալիս է Եդեսիա և Ամիդ, ներկայանում ասորոց եպիսկոպոսին, նրանից էլ վերցնելով թղթեր, իր աշակերտների և օգնականների հետ գալիս է Հայաստան:

Հայ ժողովուրդը մեծ ցնծությամբ է ընդունում Մ. Մաշտոցին. ինքը

¹ Կորյուն, էջ 48-50:

² Հայ բանասիրության պատմության մեջ տարբեր մեկնաբանություններ են տրվել Կորյունի գործածած «նրբագույն», «լայնագույն», «կարճ», «երկայն», «առանձին» և «կրկնաւոր» տերմիններին: Այդ մեկնաբանություններից ելնելով՝ ոմանք նվազեցրել են Մաշտոցի գյուտի արժեքը. հույն հռոփանոսին գրերի գյուտի հեղինակակից համարել, ոմանք կարծել են, որ հռոփանոսն է վերջնականապես ձևավորել հայերենի այբուբենը և կամ գծագրել, ձև ու կերպարանք տվել այդ տառերին, ոմանք էլ մտաճածին բացատրություններ տալով այդ տերմիններին՝ ցանկացել են ժխտել Կորյունի Մաշտոցին ժամանակակից լինելու և հինգերորդ դարի թարգմանական ու գրական ստեղծագործական աշխատանքին մասնակից լինելու իրողությունը:

Այդ բոլոր տեսակետները մանրամասն քննել է պրոֆ. Գ. Սեվակը իր «Թե ի՞նչ է արել Մաշտոցը Սամոսատում» աշխատության մեջ և անառարկելի փաստերով ապացուցել, որ Կորյունի գործածած վերոհիշյալ բառերը քերականական տերմիններ են և ունեն իրենց քերականական նշանակությունները, որոնք ճիշտ չեն մեկնաբանել նախորդ շրջանի մեկնիչները, և այդ պատճառով հանգել են սխալ և երբեմն անհեթեթե գրականությունների: Պրոֆ. Գ. Սեվակի ուսումնասիրությամբ պարզվում է, որ Մեսրոպ Մաշտոցը միայն խորհրդակցել է հույն հայտնի քերական հռոփանոսի հետ և գիտականորեն որոշել է հորինած տառերի տեսակները ըստ նրանց արտասանության տեղի և նրա օգնությամբ սովորեցրել է հույն դպրության քերականներ: Մենք մեր աշխատության մեջ պաշտպանել ենք պրոֆ. Գ. Սեվակի տեսակետները (Տե՛ս նրա աշխատությունը՝ տպված Պետհամալսարանի Մառի անվան կաբինետի «Աշխատություններ»-ի № 2-ում, 1947 թ., Երևան):

² Կորյուն, նույն տեղը, էջ 50:

թագավորը, նախարարները և կաթողիկոսը ժողովրդի հետ դիմավորում են նրան Նոր քաղաքից (Վաղարշապատից) դուրս և ուրախության ձայներով ու հոգևոր երգերով քաղաք են վերադառնում. «Եւ բարբառօք ցնծութեան և երգօք հոգևորօք և բարձրագոյն օրհնութեամբք ի քաղաքն դառնային, և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին»¹:

Հայոց գրերի գյուտը կատարված էր, հայ ժողովուրդը դրանով հիմք էր դնում իր նոր դպրությանը. իսկ այդ դպրության առաջին մշակները՝ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ կաթողիկոսը և իրենց աշակերտները, սկսում են գրել, թարգմանել և սովորեցնել ժողովրդին նոր դպրությունը: Կորյունը գրում է. «Եւ ի ձեռն առեալ այնուիետն աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել և յուսուցանել»²: Մ. Մաշտոցը ավելի մեծ թափով, քան առաջ սկսում է իր քարոզչական և ուսուցչական աշխատանքը. նա գնում է մարաց կողմերը, որտեղ դեռևս բնակչությունը չէր ազատվել քրմերի ազդեցությունից և ուներ «սատանայակիր ճիվաղական» բարքեր. այդտեղ նա շնորհիվ իր տրամադրության տակ ունեցած հզոր միջոցի՝ հայոց գրերի, կարողանում է մեծ արդյունքների հասնել և կրթում ու սովորեցնում է նրանց մեծ հաջողությամբ. «Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխուժադուծ կողմանսն Մարաց, որք ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարոցն ճիւաղութեան, այլ և վասն խեցբեկագոյն և խշոռագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին: Առ ի յարդարել և զնոցա հարուստ ամացն ծնունդս առեալ՝ պարգախօսս, հռետորաբանս, կրթեալս, աստուածատուր իմաստութեանն ծանօթս կացուցանէին: Եւ այնպէս միջամուխ եղեալ հանգամանօք օրինապատգամացն, մինչև բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն գերծաներ»³:

Վաղարշապատ քաղաքը դառնում է հայ դպրության, գրագիտության տարածման և հայ նոր մշակույթի զարգացման կենտրոնը: Հայաստանի բոլոր ծայրամասերից գալիս են մայրաքաղաք ուսում ստանալու. դրանից բացի, մայրաքաղաքում պատրաստում են ուսուցիչներ, և նրանց ուղարկում Հայաստանի տարբեր կողմերը՝

¹ Կորյուն, Նույն տեղը, էջ 54:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը:

նոր գիր ու դպրություն ուսուցանելու:

Մ. Մաշտոցը, երբ կարգավորում է գործը մայրաքաղաքում, թույլտվություն է ստանում շրջելու «ի սփիւռս հեթանոսաց» և սերմանելու կյանքի խոսքը: Նա իր օգնականների հետ գնում է իր առաջվա դաստակերտ Գողթնի Ռոտաստակը և բարեպաշտ Շաբիթի ընկերակցությամբ գավառի բոլոր գյուղերում կարգելով վանականներ և դպրոցներ կազմակերպելով՝ անցնում է Սյունիք, որտեղ նույնպես մեծ ընդունելություն է գտնում և Սյունիքի իշխանի օգնությամբ հավաքում է, կրթում մանուկներին՝ նրանցից պատրաստելով ուսուցիչներ և եպիսկոպոսներ. «Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելաներ: Եւ անդ աստուածասեր հնազանդութեամբ ընկալեալ գնա իշխանին Սիւնեաց, որ էր Վաղենակ անուն: Բազում օգնականութիւն գտեալ ի նմանէն վասն իրացն առաջի արկելոցն, մինչև հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց: Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն, առաւել զգազանամիտ զվայրենագոյն զճիւղաբարոյ կողմանցն. և այնչափ փոյթ ի վերայ ունելով՝ և դայեկաբար սնուցանել և խրատել, մինչև ի սոցունց իսկ ի վայրենեացն եպիսկոպոս տեսուչ եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր Անանիաս, այր սուրբ և երևելի, հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ: Ապա և զերկիրն Սիւնեաց դասուք վանականաց լսոյր»¹:

Արևելյան Հայաստանում գործերը կարգավորելուց հետո Մ. Մաշտոցը մտածում է հայ ժողովրդի մյուս հատվածի մասին, որը գտնվում էր հռոմայեցոց իշխանության տակ. «Եւ յորժամ այնպես ընդ ամենայն տեղիս լի առներ զսուրբ աւետարան Տեառն և ամենեցուն զգուշացուցեալ զկենաց ճանապարհն վարելոյ, խորհուրդ առներ այնուիւհտն վասն կես ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հռոմոնց»²:

Սակայն Արևմտյան Հայաստանում նա հեշտությամբ չի կարողանում բացել դպրոցներ և կարգավորել հայերենի ուսուցման գործը. երկրի հույն կուսակալը թեև պատվով ընդունում է նրան, բայց չի օժանդակում դպրոցներ բացելուն: Մ. Մաշտոցը ստիպված գնում է Կոստանդնուպոլիս և Թեոդոս Բ. կայսրից թույլտվություն է ստանում Արևմտյան Հայաստանում դպրոցներ բացելու և հայկական նոր

¹ Կորյուն, Նույն տեղը, էջ 60:

² Նույն տեղը, էջ 64:

դպրությունը տարածելու համար: Արևմտյան Հայաստանի ժամանակի կուսակալ Անատոլիսը, երբ ստանում է թագավորի հրամանը, փոխում է իր վերաբերմունքը և օժանդակում Մ. Մաշտոցին ու նրա աշակերտներին՝ երկրում հայկական դպրոցներ բացելու և հայ երեխաներին հայերեն կրթություն տալու: «Եւ անդէն վաղվադակի պատահեալ սպարապետին Հայոց, հանդերձ սակերօք կայսեր յանդիման լինէին: Եւ նորա առեալ սակերս կայսերական նշանօք, փութայր վաղվադակի գիրամանն կատարել: Եւ հրեշտակս արձակեալ այնուհետն ի գաւառս կես ազգին Հայոց յիշխանութեանն կայսեր, բազմութիւն մանկտոյ ժողովել և նոցին ռոճիկս կարգել ի պատեհագոյն տեղիս, յորս և երանելին գվարդապետութիւնն իւր ի գործ արկեալ, և ժողովելոցն քաղցրացուցաներ»¹:

Արևմտյան Հայաստանում հաստատ հիմքերի վրա դնելով հայ նոր դպրությունը ուսուցանելու և դպրոցական ու կրթական գործը և իր աշակերտներից երկուսին թողնելով այնտեղ՝ իր հիմնած դպրոցների աշխատանքներին վերահսկելու և սկսած գործը շարունակելու համար, Մաշտոցը վերադառնում է Վաղարշապատ, որտեղ, ինչպես հաղորդում է Կորյունը, «զամենայն ժամանակս իւրեանց յընթերցուածս գրոց ծախէին հարքն՝ գտիւ և զգիշեր, և նովիմբ ծաղկեալք և շահաւետեալք՝ օրինակ բարեաց ուսումնասեր առընթերակայից լինէին»²:

Մ. Մաշտոցը Հայաստանում այդ ժամանակ ծավալված դպրոցական, գիտական, ուսուցողական հսկայական աշխատանքը գլխավորելուն զուգընթաց մասնակցում էր նաև թարգմանական ու գրական աշխատանքին: Նա Սահակ Կաթողիկոսի հետ թարգմանում է Աստվածաշնչի մի քանի գրքեր, հորինում «ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս», գրում և գավառներին ուղարկում «բազում թուղթս խրատագիրս զգուշացուցիչս»:

Սակայն Մ. Մաշտոցի գործունեությունը ավելի լայն մասշտաբներ էր ընդգրկում. նա, ինչպես հաղորդում է Կորյունը, եղել է Աղվանքում ու Վրաստանում և աղվան ու վրացի գիտնականների հետ աշխատել այդ ժողովուրդների համար նոր դպրություն ստեղծելու բնագավառում: Այստեղ կարևոր չէ այն հանգամանքը, թե ինչպիսին է եղել Մաշտոցի օգնությունը, կամ ինչպիսի՞ դեր է կատարել նա այդ

¹ Կորյուն, Նույն տեղը, էջ 68:

² Նույն տեղը, էջ 76:

աշխատանքի մեջ: Ամենից ուշագրավ փաստը, մեր կարծիքով, հենց Կորյունի այն վերաբերմունքն է, որ ցույց է տվել նա իր գրքում հարևան ժողովուրդների դարավոր կապի ու բարեկամության նկատմամբ: Գրքի գյուտը, ինչպես ասել ենք արդեն, անգնահատելի նշանակություն ունեցավ հայերի համար: Այդ մեծ գործի մեծ նշանակությունը ըմբռնում էին ժամանակի հայ մատենագիրները և այդ գործը միայն հայերի սեփականությունը չէին համարում: Այն լավագույնը, որ ստեղծել էին նրանք հայ ժողովրդի համար, համարում էին նաև աղվանների և վրացիների սեփականությունը: Այդ վերաբերմունքի մեջ արտացոլված է այդ ժողովուրդների դարավոր բարեկամությունը, մոտիկությունն ու հարազատությունը:

Մ. Մաշտոցը և Սահակ կաթողիկոսը խոր ծերության են հասնում: Սահակ կաթողիկոսը մեռնում է 439 թվականի սեպտեմբերի 7-ին, իսկ Մ. Մաշտոցը՝ 440 թվականի փետրվարի 17-ին: Հայ ժողովուրդը երբեք չի մոռացել իր դպրության հիմնադիրների, առաջին ուսուցիչների ու մատենագիրների հիշատակը և նրանց դասել է հայ ժողովրդի ու հայրենիքի ազատության համար իրենց կյանքը տված անձնվեր հերոսների շարքը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱՎՈՐ ԵՐԿԵՐԸ

Հայոց գրքերի ստեղծմամբ հայ գրականության հիմքն է դրվում: Կարճ ժամանակում թարգմանվում ու գրվում են բազմաթիվ երկեր, որոնց մեծ մասը մինչև այժմ էլ չի կորցրել ո՛չ միայն պատմական, այլև գիտական արժեքը: Հայոց նոր գրականությունը իր առաջին քայլերից սկսած եղել է բազմաժանր ու բազմաբովանդակ: Առաջին հայ հեղինակները օգտագործելով հայ հեթանոսական գրականության տվյալները՝ ստեղծում էին հայոց այդ նոր գրականությունը՝ ժամանակի պահանջները և քրիստոնեական գաղափարախոսությունը նկատի ունենալով: Այդ պատճառով էլ նույնիսկ պատմական երկերում արտացոլում էին նոր՝ քրիստոնեական գաղափարախոսությունը: Սակայն դրանով հանդերձ՝ հայ գրականությունը չէր նույնանում մյուս քրիստոնյա ժողովուրդների գրականության հետ, պահպանում էր իր ինքնատիպությունը, որի արմատները գալիս էին

ավանդական բանահյուսությունից: Հայ նոր դպրությունը իր ընդհանուր դրսևորումներով ուղղված էր արտաքին թշնամիների, հատկապես պարսիկների նվաճողական քաղաքականության դեմ: Այդ գրականությունը նաև մի հզորագույն զենք էր հայ հոգևորականության և իշխող դասի ձեռքին՝ որով նրանք ձգտում էին արմատախիլ անել հեթանոսության մնացորդները, արմատավորել քրիստոնեությունը հայ աշխատավորության լայնագույն խավերում և ամրացնել իրենց դիրքերը:

Հինգերորդ դարի հայ գրականության ամենանշանավոր դեմքերն են եղել Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը ու նրանց առաջին աշակերտները՝ Եզնիկն ու Կորյունը: Նրանց աշխատանքներով է սկզբնավորվում հայ դպրությունը: Նրանցից Սահակ Պարթևը, իբրև ժամանակի հայ կաթողիկոս, գլխավորապես զբաղվել է կազմակերպչական, մասամբ նաև քրիստոնեական գրականության թարգմանության գործերով: Նրա անունով պահպանված են գլխավորապես կանոնական գործեր, որոնց մեջ թեև շարադրված են եկեղեցու պաշտոնյաների պարտականությունները, բայց մասամբ էլ տրված են նաև ժամանակի սովորությունները: Սահակ Պարթևի անունով մնացել են նաև երկու թղթեր և մի քանի երգեր:

Մեսրոպ Մաշտոցը նույնպես գրական աշխատանքով զբաղվելու քիչ ժամանակ է ունեցել: Նրա երկերից պահպանված է ճառերի մի ժողովածու՝ «Յաճախապատում ճառք» խորագրով, որը դավանաբանական նշանակություն ունենալու հետևանքով վերագրվել է Գրիգոր Լուսավորչին: Այդ ճառերի մեջ Մեսրոպ Մաշտոցը գլխավորապես քննում է քրիստոնեական վարդապետության հետ կապված հարցեր, որոշ ճառերում խոսում է տարրապաշտության դեմ, երբեմն մասնավորում իր ասածները վանականների կենցաղավարության, պարտականությունների և այլ հարցերի մասին: Այս ժողովածուից բացի, Մեսրոպ Մաշտոցի անունով մնում են նաև մի շարք հոգևոր երգեր:

Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը դաստիարակում են ընդունակ երիտասարդների մի սերունդ, որը իր ստեղծագործությունների մեջ մարմնավորում է հայ դպրության հիմնադիրների նպատակներն ու ձգտումները, որ միայն մասամբ կարողացան իրականացնել իրենց անձնուրաց ուսուցիչները:

Եզնիկ Կողբացին հինգերորդ դարի ամենանշանավոր մատենագիրներից մեկն է, նրա անունով մեզ հասել է «Եղծ աղանդոց» նշա-

նավոր գործը, որի մեջ հեղինակը մերթ հենվելով Աստվածաշնչի վրա, մերթ տրամաբանական կուռ դատողությամբ հերքում է ժամանակի աղանդները և փորձում սովորեցնել ճշմարիտը: Եզնիկ Կողբացու այդ գրքի մեջ հանգամանորեն քննության է առնված քրիստոնեական կրոնի էական սկզբունքներից մեկը՝ միաստվածության հարցը և այդ հիմքի վրա էլ հերքված են բազմաստվածության ու քրիստոնեական կրոնից տարբերվող աղանդները: Եզնիկ Կողբացին իր գրքի հենց առաջին էջերից հայտարարում է, որ Եությունը, աստվածը մեկ է, անքնին և անհասանելի, նա անսկիզբ է և ամեն ինչի պատճառն ինքն է, «Ոչ ոք է առաջին քան զնա, և ոչ ոք է յետոյ նման նմա, և ոչ ընկեր հաւասար նորին, և ոչ Եութիւն հակառակ նմա, և ոչ գոյութիւն ընդդիմակաց, և ոչ բնութիւն հիւթաբեր ի պետս նորա, և ոչ նիւթ ինչ՝ յորմէ առնիցէ զոր առնելոց իցէ. այլ ինքն է պատճառ ամենայնի, որ ի լինելն և ի գոյանալ եկին ի չգոյէ և ի գոյէ. որպէս երկինք վերինք և որ ինչ յերկինս, և երկինք երեւելիք որ ի ջուրց, և երկիր, և ամենայն ի նմանէ և ի նմա. յորմէ ամենայն, և ինքն ոչ յումեքէ»¹: Այդ Եությունն է, որ «ածն ի չգոյէ ի գոյ զչգոյսն, և եցոյց յոչնչէ յինչ զչեսն... և անարատ և անխախտութ պահէ զլեալսն»²: Այդ սկզբունքից ելնելով՝ նա քննադատում է տարրապաշտության ու բազմաստվածության հավատալիքները, հերքում քրիստոնեությանը հակառակ աղանդները, լուսնի, արեգակի և մոլորակների շարժման վերաբերյալ ժամանակի հասկացողությունները, բացատրում ճշմարտի, չարի ու բարու գաղափարները և այլն: Եզնիկ Կողբացու այդ գիրքը ինչպես իր բովանդակությամբ, նույնպես և կանոնավոր ու հարուստ լեզվով ու ոճով շատ մեծ ազդեցություն է գործել հայ հետագա մատենագիրների վրա: Եզնիկ Կողբացին իր այդ գրքով տեսականորեն փորձում է հիմնավորել քրիստոնեական աշխարհայեցողությունը. դրանով իսկ դառնալով միջնադարյան քրիստոնեական աշխարհայեցողության առաջին տեսաբանը Հայաստանում:

Հինգերորդ դարի պատմիչ Կորյունի անունով մեզ հասել է «Վարք Մաշտոցի» խորագրով աշխատությունը, որ հորինված է հինգերորդ դարի քառասնական թվականներին: Դա պատմական մեծ արժեք ունեցող մի երկ է, որի մեջ գիտական մեծ բարեխղճությամբ նկարագրված են հայ ժողովրդի կյանքում բացառիկ դեր խաղացած գրերի

¹ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 6:

² Նույն տեղը:

ստեղծման հանգամանքները և ժամանակի գլխավոր դեպքերը: Կորյունը շատ համեստ նպատակ է դնում իր առաջ. ցույց տալ, թե ե՞րբ, ինչպիսի՞ պայմաններում և ինչպիսի՞ մարդու ձեռքով են ստեղծվել հայոց գրերը: Բայց նրա երկը դուրս է գալիս նշված շրջանակներից և ընդգրկում նաև պատմական մի շարք այլ դեպքեր, որոնք օգնում են պարզաբանելու հայոց լեզվի ու մշակույթի պատմության հարցերը: Այդ գրվածքը պատմական խոշոր արժեք ունի, որովհետև հինգերորդ դարի առաջին հավաստի աղբյուրն է, որի շնորհիվ մենք իմանում ենք հայոց գրի ու գրականության սկզբնավորությունը և ամբողջական պատկերացում կազմում հինգերորդ դարի հայ անվանի մարդկանց աշխատանքի ու ստեղծագործությունների մասին:

Հինգերորդ դարի հայ գրականության մեջ բացառիկ նշանակություն ունեն նաև պատմական մի շարք այլ գործեր: Այդ երկերի մեջ ժամանակագրական տեսակետից առաջինը համարվում է Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» վերնագիր ունեցող աշխատությունը, որը բաղկացած է երեք մասից: Առաջին մասում խոսվում է Հայաստանի և Պարսկաստանի պատերազմների, հայոց թագավոր Խոսրովի սերնդի կոտորածի, Խոսրովի որդի մանկիկ Տրդատի ազատման ու հռոմայեցոց կողմը փախչելու, այնտեղ մեծանալու ու քաջ այր դառնալու, Հայաստան վերադառնալու և թագավորելու, ապա Գրիգորի՝ նրա մոտ ծառայության մտնելու, Գրիգորի չարչարանքների, նրան Խոր Վիրապը գցելու, Տրդատի խելագարության, քրիստոնեություն ընդունելու մասին և այլն: Գրքի երկրորդ մասը նվիրված է Գրիգորի վարդապետությանը, երրորդը՝ Հայաստանի քրիստոնեության դարձի, կույսերի վկայարանների շինության, Գրիգորի կաթողիկոս ձեռնադրվելու, մեհյանների կործանման և այլնի նկարագրությանը: Այդ գիրքը, ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, կազմված է զանազան աղբյուրներից, որոնց մի մասը ունի պատմական կարևոր նշանակություն, իսկ որոշ հատվածներ ունեն միայն գրական արժեք: Ագաթանգեղոսի պատմությունը երկար ժամանակ օգտագործվել է իբրև ընթերցանության գիրք, որը զգալի ազդեցություն է գործել հետագա շրջանի գրական հուշարձանների վրա:

Հայ ժողովրդի ամբողջական պատմություն գրելու փորձը կատարել է Փավստոս Բուզանդը: Նրա Պատմությունը բաժանված է դպրությունների, որոնցից մեզ հասել են Գ-2 դպրությունները: Բուզանդի «Պատմութիւն Հայոց» գրքի մեզ հասած հատվածները ընդ-

գրկում են մոտ հիսուն տարվա պատմություն՝ չորրորդ դարի երեսնական թվականներից մինչև ութսունական թվականները: Այդ Պատմությունը գրված է հայրենասիրական բարձր ոգով, պատկերավոր ու գեղեցիկ ոճով, որը շատ հաճախ համեմված է հայ ժողովրդի տրամադրություններն արտահայտող դարձվածքներով և բարբառային բառերով: Ինչպես նախորդ գրքերում, նույնպես և այս գրքում զուգորդված են աշխարհիկ և կրոնական ըմբռումները, զուգահեռ կերպով շարադրված են եկեղեցական և երկրի քաղաքական կյանքի պատմությունները: Բուզանդը իր Պատմության համար իբրև աղբյուրներ օգտագործում է ավանդական գրույցներ, երգեր, լեգենդներ ու վեպեր. այդ պատճառով էլ նա ավելի հավաստի աղբյուր է ժամանակի կենցաղն ու սովորությունները ուսումնասիրելու, քան պատմական իրադրությունը պարզելու համար: «Անտարակույս, այդ երկի մեջ կան շատ պատմական անցքերի նկարագրություններ, բայց այնքան և այնպես, որքան և որպես ամեն մի պատմական երկի ու վեպի մեջ: Դա մեծ մասամբ պատմությունն է, այլ բանաստեղծություն, ուստի ստեղծագործությունը մեծ տեղ ունի դրա մեջ»¹: Բայց, այդուհանդերձ, չի կարելի բացասել այդ երկի պատմական նշանակությունն ու արժեքը:

Յինգերորդ դարի հայ ամենաականավոր պատմագիրը եղել է Մովսես Խորենացին, որը մեծ համարում է ունեցել ինչպես հայ, նույնպես և հարևան երկրների պատմագիրների մեջ. նրան սովորաբար կոչել են տիեզերահռչակ, «Մեծն քերթող Մովսես», «Քերթողահայր Մովսես» և այլ մակդիրներով: Նրա անունով մեզ հասել են մի շարք երկեր, որոնց մեջ ամենից նշանավորը «Պատմութիւն Հայոց» գիրքն է, որը իր գիտականությամբ, կուռ կառուցվածքով, քաղաքական նպատակասլացությամբ շատ բարձր է և չի կարելի համեմատել միջնադարի մյուս պատմագիրների երկերի հետ: Խորենացին քննադատաբար օգտագործելով ինչպես գրավոր, նույնպես և բանավոր աղբյուրները՝ գիտական մեծ բարեխղճությամբ ու պատասխանատվությամբ ստեղծել է մի երկ, որը հարուստ նյութ է տալիս հայ և հայերին հարևան ժողովուրդների պատմական կյանքի ու սովորությունների մասին:

Մովսես Խորենացին իր սկզբնական կրթությունը ստանում է

¹ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 1, էջ 173:

Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի մոտ, ապա ուղարկվում է Ալեքսանդրիա քաղաքը իր ուսումը կատարելագործելու: Նա վերադառնում է այն ժամանակ, երբ արդեն վախճանվել էին իր առաջին ուսուցիչները՝ Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը: Խորենացին Հայաստանում սկսում է իր գործունեությունը իր համար միանգամայն աննպաստ պայմաններում. խավարամիտ ու պարսկասեր տգետ հոգևորականները մեծ արգելքներ են հարուցում նրա դեմ, հալածում են նրան:

Մովսես Խորենացին իր Պատմությունը գրում է Սահակ Բագրատունու հանձնարարությամբ: Նա իր գրքում մեծ գովեստով է խոսում Սահակ Բագրատունու մասին այն բանի համար, որ նա առաջինն է եղել, որ մտածել է հայ ժողովրդի պատմությունը գրի առնելու մասին: Մովսես Խորենացին իր Պատմությունը շարադրելիս՝ գրավոր աղբյուրները օգտագործելու հետ միասին մեծ չափով օգտվել է նաև ժողովրդական էպոսից և առասպելներից, որոնք նա արժեքավորել է իբրև ճշմարտությունը այլաբանաբար պատմող գործեր:

Մ. Խորենացու աշխատության մեջ շարադրված է հայ ժողովրդի պատմությունը՝ իր կազմավորման ժամանակաշրջանից սկսած մինչև Արշակունիների թագավորության վերացումը: Խորենացու Պատմությունը իրավամբ համարվել է հայ հին կյանքի հանրագիտարանը: Այդ Պատմությունը, սակայն, ավելի մեծ արժեք ունի, որովհետև նա հավաստի տեղեկություններ է տալիս նաև հայերի հարևան բոլոր ժողովուրդների մասին և դրանով իսկ իր հաստատ տեղն է գրավում համաշխարհային պատմական գրականության ոսկե ֆոնդի մեջ:

Հայ պատմագրության ամենափայլուն դեմքերից մեկը. եղել է Եղիշեն, որի անունով մեզ հասել են մի շարք աշխատություններ, որոնց մեջ ամենաարժեքավորը «Պատմութիւն Վարդանանց» գիրքն է, որը իր մի շարք դրական հատկություններով կարելի է համեմատել Մ. Խորենացու Պատմության հետ: Եղիշեի Պատմության արժանիքներից մեկը պատմական դեպքերի հաջորդական նկարագրությունն է, դեպքերից անհրաժեշտ ընդհանրացումներ ու եզրակացություններ հանելը: Եղիշեն իր նկարագրած դեպքերին ականատես է եղել, մասնակցել է պատերազմին, ճանաչել հայ հերոս մարտիկներին և նրանց հետ միասին տեսել պատերազմական արհաժիրքները: Թերևս այդ է պատճառը, որ նրա պատմությունը ունեցել է ներգործելու հսկայա-

կան ուժ, կարողացվել ու սիրվել է հայ ժողովրդի բազմաթիվ սերունդների կողմից դարեր շարունակ Եղիշեի Պատմությունը գրված է մեծ պաթոսով, հայրենասիրական բուռն զգացմունքներով, գեղեցիկ ու գերող ոճով Գրքի հեղինակը պասիվ կերպով չի նկարագրում դեպքերը, նա արժեքավորում է, լուսաբանում տեղի ունեցած անցքերը, ընդգծում պարսիկների դեմ ծառացած հայ ժողովրդի հերոսական պայքարի դրվագներից մեկը, հիանում իր հերոսների քաջագործություններով, նշավակում դավաճաններին ու վախկոտներին, առածներով ու աֆորիզմներով իմաստավորում է իր ասածները և լեզվի ամբողջ ճոխությամբ ձգտում է իր զգացմունքները հաղորդել ընթերցողին Այդ բոլորը անհամեմատելի չափերով ընդգծում են այդ երկի այն մեծ դերը, որ նա կատարել է հայ ժողովրդի բազմաթիվ սերունդների դաստիարակության բնագավառում

Հինգերորդ դարի հայ պատմիչների վերջին ներկայացուցիչը եղել է Ղազար Փարպեցին Նա ծնվել է Աշտարակի Փարպի գյուղում 443 թվականին Նա իր սկզբնական կրթությունը ստանում է վրաց Աշուշա բղեշխի տանը, ապա գնում է Հունաստան իր ուսումը կատարելագործելու Հայաստան վերադառնալով՝ մինչև 484 թվականը մնացել է Կամսարականների մոտ, ապա փոխադրվել է Սյունիք Երբ Վահան Մամիկոնյանը դառնում է Հայաստանի մարզպան, 486 թվականին իր մոտ է կանչում Ղազար Փարպեցուն և նշանակում Վաղարշապատի Կաթողիկե եկեղեցու վանահայր Սակայն Վաղարշապատում նա չի կարողանում երկար մնալ, որովհետև Նրա թշնամիները սկսում են դավեր նյութել Նրա դեմ, հալածել Նրան Նա փախչում է եկեղեցուց՝ այնտեղ թողնելով նույնիսկ սեփական գրքերը Այդ բոլորի առթիվ նա Վահան Մամիկոնյանին գրում է իր հայտնի «Թուղթ»-ը, որի մեջ նա իր մասին որոշ տեղեկություններ տալու հետ, ամբաստանում է Ժամանակի հոգևորականության այն դասը, որը պարսկական կողմնորոշում ուներ և պայքարում էր հունական կրթություն ստացած մարդկանց դեմ Ուշագրավ է, որ նա իր Թղթում ցույց է տալիս, թե ինքը մենակ չէ, որ հալածվել է ստախոս ու տգետ արքեպիսկոպիտներից, և շատերի հետ միասին հիշատակում է նաև երանելի փիլիսոփա Մովսեսին Վահան Մամիկոնյանը Փարպեցու Թուղթը ստանալուց հետո հրավիրում է Նրան իր մոտ և պատվիրում գրել հայոց պատմությունը Ղազար Փարպեցին ձեռնարկում է այդ գործին և գրում իր «Պատմութիւն Հայոց» աշխատությունը, որի մեջ նկարա-

գրված անցքերն ընդգրկում են գրերի գյուտից մինչև պարսիկների դեմ հայերի սկսած երկրորդ ապստամբության (481 – 484) ժամանակաշրջանը Ղազար Փարպեցին իր Պատմությունն ավարտում է Վահան Մամիկոնյանին Հայաստանի մարզպան Նշանակելու հանդիսավոր արարողությունների նկարագրությամբ։ Իր Պատմության մեջ Ղազար Փարպեցին բավականաչափ տեղեկություններ է տալիս ազնվականության ու աշխատավոր դասի սովորությունների ու կենցաղի, ինչպես նաև երկրի տնտեսության ու քաղաքական դրության մասին։ Նա իր գրքում հատկապես մեծ գովեստով է խոսում Մամիկոնյանների տոհմի մասին։ Պատմական մեծ արժեք է ներկայացնում հատկապես գրքի երրորդ դրվագը, որի մեջ նկարագրված են Վարդանանց պատերազմից հետո երեսուն-երեսունհինգ տարվա ընթացքում կատարված դեպքերը չգերազանցված մանրամասնությամբ։

Հինգերորդ դարի հայ գրականությունը հարուստ է նաև թարգմանական գործերով։ Կայ առաջին հեղինակները՝ Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը, նրանց ավագ աշակերտները՝ Հովսեփը, Վարդանանց պատերազմի ժամանակ մեծ դեր խաղացած և հայրենիքի անկախության համար մղված պատերազմում հերոսաբար զոհված Ղևոնդը, Հովնան Եկեղյացին, Հովսեփ Պաղնացին, Եզնիկ Կողբացին, Կորյունը, Մուշեն, Աբրահամ Խոստովանողը (կամ Չենակացին) և շատ ուրիշներ, որոնց մասին մենք տեղեկություններ չունենք, թարգմանական մեծ աշխատանք են ծավալում։ Աստվածաշնչի հետ թարգմանվում են նաև աղոթքներ, նոր երգեր, դավանաբանական գրվածքներ, ճառեր, կանոններ, մեկնություններ, պատմական, վարքաբանական գործեր և այլն, որոնք հնարավորություն են ընձեռում հայ հասարակությանը ծանոթանալու Նախ Աստվածաշնչի բազմազան բովանդակությանը, ապա դավանաբանական և ընդհանրապես քրիստոնեական վարդապետության հետ առնչված գրականությանը, ինչպես նաև ժամանակի մտավոր հոսանքներին։ Թարգմանական գրականության մեջ հատկապես մեծ դեր է կատարում Աստվածաշունչը, որը օգտագործվում է նաև իբրև ընթերցանության գիրք և կարճ ժամանակում մեծ ներգործություն է ունենում հայ ժողովրդի վրա, օգնում նոր աշխարհայեցողության կազմակերպմանը և հին մտածելակերպի վերացմանը։ Նրա գաղափարների ազդեցության տակ կամաց-կամաց մոռացվում կամ նոր բովանդակություն են ստանում հին սովորությունները, և հեթանոսությունը տեղի է տալիս

քրիստոնեության առաջ, թեև Հայաստանի բոլոր ծայրամասերում իսպառ չեն մոռացվում հայրենի ավանդությունները Աստվածաշունչը մեծ ազդեցություն է թողնում նաև պատմագրության և ընդհանրապես հայ դպրության ու ժողովրդական բանահյուսության վրա Սա ավելի մեծ ներգործություն է ունենում նաև մեր մատենագիրների լեզվի ու ոճի վրա՝ միշտ իր լեզվով հանդես գալով իբրև օրինակելի և անգերազանցելի

Հինգերորդ դարի հայ մատենագիրների թարգմանական աշխույժ գործունեությունը կարևոր նշանակություն է ունեցել նաև այն կողմով, որ ստեղծել է թարգմանական գործը շարունակելու ավանդություն, որը հայ գրականությունը շարունակում է պահել նաև հետագայում Այդ գործը, ինչպես ճիշտ կերպով նշել է Մ Աբեղյանը, ընդարձակել է «Հայ գրագետների ու գրողների մտավոր հորիզոնը», հաղորդակից դարձրել նրանց այլ ժողովուրդների կուլտուրաների նվաճումներին, նպաստել նոր հասկացությունների ու նոր աշխարհայեցողության տարածմանը և նպաստել «բնականաբար հայ կուլտուրայի զարգացմանն և ազգային ինքնագիտակցություն առաջ բերելուն»¹

Հայ թարգմանական գրականության նշանակությունը, սակայն, նշածով չի սահմանափակվում այդ թարգմանությունների մեջ կան այնպիսիները, որոնց բնագրերը կորած են Հայերեն այդպիսի թարգմանությունները բացառիկ արժեք են ստանում, որովհետև դրանց շնորհիվ պահպանվել են պատմական և գիտական մեծ արժեք ունեցող գործեր

Հինգերորդ դարում կատարված թարգմանություններից կարելի է հիշատակել Աստվածաշունչը, Ոսկեբերանի մեկնություններն ու ճառերը, Եվսեբիոսի Զրոնիկոնը, Աբրահամ Խոստովանողի Վկայք Արևելիցը, Եփրեմ Ասորու Մեկնութիւնը Հին կտակարանի, Եվսեբիոս Կեսարացու Պատմութիւն եկեղեցականը, Չգոնի ճառքը, Կյուրեղ Երուսաղեմմացու Կոչումն ընծայութեանը, Բարսեղ Կեսարացու Վեցօրեայքը, Պատմութիւն Հարանց Եգիպտացոցը, Մակաբայեցիքը, Տիմոթեոս Կուզի Հակաճառութիւնը և այլն Այդ գրականության մեջ իր ծավալով ու նշանակությամբ աչքի է ընկնում Աստվածաշունչը, որի թարգմանության վրա աշխատել են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ

¹ Լույս տեղը էջ 92-93

Պարթևը և թերևս նրանց անմիջական ղեկավարությամբ նաև նրանց ավագ աշակերտներից ոմանք

Հինգերորդ դարի հայ գրականությունը թեև խիստ կերպով գտնվում էր ժամանակի իշխող գաղափարախոսության՝ քրիստոնեական վարդապետության ազդեցության տակ, բայց արտացոլում էր նաև աշխարհիկ, կրոնական միստիցիզմը բացասող մոտիվներ, որոնք գլխավորապես արտահայտվում էին հայ հեղինակների ինքնուրույն գործերում։ Հինգերորդ դարի միայն թարգմանական գրականությունն էր, որ հետապնդում էր կրոնական-աստվածաբանական նպատակներ և ծառայում էր միայն եկեղեցուն և հայ իշխող դասին, թեև այստեղ ևս բացառություններ կային։ Հայ ինքնուրույն գրականությունը և հատկապես պատմագրությունը ավելի լայն նպատակներ ուներ։ Նա արտացոլում էր ժամանակի կյանքը, տնտեսական և քաղաքական հարաբերությունները, ընդհանուր գծերով նաև հայ ավանդական ստեղծագործությունը և ծառայում էր ամբողջ հայ ժողովրդին։ Այդ առումով էլ չի կարելի համաձայնել այն տեսակետին, ըստ որի հայ գիրն ու գրականությունը ստեղծվել են եկեղեցու համար և ծառայել են միայն նրան։ Հայոց գրերի գյուտից հետո, ճիշտ է, եկեղեցական գրականությունը բավականաչափ ուժեղացավ, թարգմանվեցին և ստեղծվեցին դավանաբանական գործեր, սրբերի վարքագրություն, վկայաբանություններ, հակաճառություններ, կանոններ և այլն, բայց դրանց հետ միասին թարգմանվեցին և գրվեցին փիլիսոփայական, քերականական և հատկապես պատմագիտական երկեր, որոնք իրենց գիտական նշանակությունը և կարևորությունը պահպանում են նաև մեզ համար։ Հինգերորդ դարում չստեղծվեցին գրական ծավալուն երկեր՝ աշխարհիկ բովանդակությամբ, բայց մեր պատմագրության մեջ պահպանվեցին աշխարհիկ անգիր բանաստեղծության, ժողովրդական բանահյուսության ավանդույթները, որոնք լայնորեն օգտագործվեցին հայ միջնադարյան գեղեցիկ գրականության մեջ։

Եվ, վերջապես, հինգերորդ դարի գրականությամբ արձանագրվեց հայ պետականության ավելի քան վեց հարյուր տարվա գոյության ընթացքում հղկված, զարգացման որոշ աստիճանի բարձրացած հայերենը, որն ավելի մշակվելով ու կատարելագործվելով՝ դարեր շարունակ օգտագործվեց իբրև հայ համաժողովրդական գրական լեզու, որով գրվեցին պատմական, փիլիսոփայական, գիտա-

կան, գեղարվեստական բազմաթիվ երկեր, որոնք հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ իրենց բացառիկ դերն ու նշանակությունն ունեն:

Այն լեզուն, որը գրավոր դարձավ հինգերորդ դարում և հետագայում կոչվեց գրաբար, ունի իր առանձնահատկությունները, որոնք դրսևորվում են նրա հնչյունաբանության, քերականության և բառալին կազմի մեջ:

ԳՐԱԲԱՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Մերոպ Մաշտոցի խոշորագույն աշխատանքներից մեկը հայ ժողովրդական լեզվի հնչյույթները որոշելն էր: Անհնարին է որևէ լեզվի այբուբենի ստեղծումը, եթե չի պարզվում այդ լեզվում եղած հնչյույթների քանակն ու որակը: Իսկ Մերոպ Մաշտոցը մեզնից ավելի քան 15 դար առաջ կարողանում է այնպիսի ճշտությամբ լուծել այդ խնդիրը, որ մինչև այժմ էլ էական փոփոխություն չի մտել այդ հնչյույթների քանակի մեջ: Հինգերորդ դարում Մերոպ Մաշտոցի որոշած հնչյույթները պահպանվել են միջին հայերենում, ժամանակակից հայերենում և բարբառներում, եթե նկատի չունենանք բարբառային հնչյույթների որոշ տարբերակումներ, որոնք չեն խախտում հայերենի հնչյունական համակարգը, այլ լրացնում են այն: Բարբառների և գրական լեզվի հնչյունաբանության մեջ եղած աննշան տարբերություններն ու փոփոխությունները պայմանավորված են՝ ա) հայերենի զարգացման հետագա շրջանում իր իսկ օրենքներով տեղի ունեցած տեղաշարժերով, և բ) տարբեր լեզուների ազդեցությամբ:

Յուրաքանչյուր լեզու իր զարգացման ընթացքում տարբեր տեսակի փոփոխություններ է կրում: Շատ լեզուներ խիստ չափով համալրում են իրենց բառապաշարը, որոշ լեզուներ կարճ ժամանակում փոխում են իրենց տիպը (կցականությունն ու թեքականությունը), որոշ լեզուներ էլ զգալի փոփոխություններ են մտցնում իրենց հնչյունական համակարգի մեջ:

Հայերենի մեջ էլ երկար դարերի ընթացքում զգալի փոփոխություններ են կատարվում, նա զարգանում ու կատարելագործվում է իր բոլոր կոմպոնենտներով, բայց հնչյունական համակարգի մեջ կատարված առաջխաղացումները չեն փոխել հայոց լեզվի հնչյունական

կազմի զարգացման օրինաչափությունները և Մեսրոպ Մաշտոցի սահմանած հնչույթները՝ իրենց հիմնական արտահայտություններով պահպանվել են և՛ գրական լեզվի, և՛ բարբառների մեջ

Հայերենի հնչյունական համակարգում կան երկու կարգի հնչույթներ՝ ծայնավորներ և բաղաձայններ Այդ հնչույթները իրենց մի շարք դրսևորումներով հնդեվրոպական լեզուների հետ կապվելով հանդերձ՝ ունեն սեփական հատկություններ և զարգացման օրինաչափություններ, որոնք միանգամայն ինքնուրույն են դարձնում դրանց օրինակ՝ հնդեվրոպական *e-ն հայերենում, հունարենում, կելտերենում, գերմաներենում, սլավոնական և այլ լեզուներում պահպանվել է ե, գոթերենում, խեթերենում, սկանդինավյան որոշ լեզուներում՝ ի, հնդ-իրանական լեզուներում՝ ա արտասանությամբ

*o-ն հունարենում, իտալերենում, կելտերենում, սլավոներենում՝ o, ալբաներենում, իրանական, բալթիական լեզուներում և այլն՝ ա

*a-ն խեթերենում, հայերենում, կելտերենում, ալբաներենում և այլն՝ ա, սլավոնական լեզուներում՝ o

Հնդեվրոպական երկար ē, ō, ā հնչյունները հայերենում վերածվել են ի, ու, ա հնչյունների, հնդ-իրանական լեզուներում երբեք էլ միայն՝ ա-ի, լատիներենում պահպանվել են նույնությամբ և այլն Ձայնավոր հնչյունների այս արտահայտությունները հնդեվրոպական լեզուներում ցույց են տալիս, որ այդ լեզուների ձայնավոր հնչյունները իրենց մի շարք ընդհանուր արտահայտություններով հիմք-լեզվից կամ մի աղբյուրից գալով հանդերձ՝ կոնկրետ լեզուների զարգացման ընթացքում փոփոխության են ենթարկվել

Այդ փոփոխությունները մենք տեսնում ենք նաև ձայնորդ և բաղաձայն հնչյունների մեջ Ձայնորդ հնչյունները (y, w, l, m, r, f, n), որոնք հնդեվրոպական որոշ լեզուներում ձայնորդի իրենց որակը պահպանել են, հայերենում հիմնավորապես փոփոխության են ենթարկվել Նրանք գրաբարում արդեն վանկարար հնչյունի ուժը չունեին, հետևաբար չէին պահպանել իրենց սկզբնական արտահայտությունները

Հին հայերենի բաղաձայնները ըստ իրենց արտաբերման եղանակի լինում են պայթական և շփական, որոնք իրենց հերթին բաժանվում են խուլերի, ձայնեղների և շնչեղների Հնդեվրոպական մի շարք լեզուներում վերացել են խուլ, ձայնեղ կամ շնչեղ հնչյունների տարբեր շարքերը, իսկ հայերենում թեև չեն վերացել, բայց հնդեվրոպա-

կան հիմք-լեզվի բաղաձայններից շատերը ձևափոխության են ենթարկվել, այսպես, օրինակ՝ պայթականներից պարզ խուլ *թ, *տ, *հ₁, *կ^w հնչյունները վերածվել են **հ, թ, ս, ք** հնչյունների, շնչեղացված ձայնեղ *բհ, *ծհ, *ց₁հ, *ց^wհ-ն, ձայնեղ՝ **բ, գ, դ, զ (ծ), զ (ջ)** հնչյունների, պարզ ձայնեղ *բ, *ծ, *ց₁, *ց^w-ն՝ **պ, տ, ծ, կ** հնչյունների և այլն:

Սուլական բաղաձայններից հիմք-լեզվի **ս**-ն հնդեվրոպական մի շարք լեզուներում պահպանվել է նույնությամբ, իրանական լեզուներում, հայերենում, հունարենում և այլ լեզուներում բառասկզբում մի շարք հնչյուններից առաջ վերածվել է **հ**-ի, բառասկզբում՝ ***տ, *թ** հնչյուններից առաջ, իսկ բառամիջում՝ ***ե** և ***տ**-ի միջև, պահպանել է իր արտասանությունը:

Վերևում կատարված համեմատությունները ցույց են տալիս, որ ծագումնաբանորեն միմյանց հետ կապված լեզուները իրենց ընդհանրությունների հետ ունեն նաև զգալի տարբերություններ, որոնցով և որոշվում են այդ լեզուների հնչյունական օրինաչափությունները: Այդ առումով էլ երբեք չի կարելի գրաբարի հնչյունական համակարգը քննել նրա զարգացման ընթացքից անկախ, առանց նկատի ունենալու այն առանձնահատկությունները, որոնք հատուկ են եղել հայերենին, երբ նա գրական լեզու է դարձել:

Հայերենի հնչյունաբանությունը իր հիմնական արտահայտություններով հինգերորդ դարում ունեցել է հետևյալ պատկերը:

Ձայնավորներն են՝ **ա, ե*, ո*, ու*, ը, ի**, որոնցից ետևալեզվային ստորին բարձրացման է **ա**, միջին բարձրացման՝ **ո** (շրթնայնացած), վերին բարձրացման՝ **ու** (շրթնայնացած), միջնալեզվային միջին բարձրացման՝ **ը**, առաջնալեզվային միջին բարձրացման՝ **ե**, վերին բարձրացման՝ **ի**:

Բաղաձայններն են՝ **բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ռ, ց, լ, փ, ք**, որոնցից շրթնային են. ձայնորդ **մ**, ձայնեղ-պայթական՝ **բ**, խուլ-պայթական՝ **պ**, խուլ շնչեղ՝ **փ** և ձայնորդ **լ**:

Շրթնատամնային. ձայնեղ-շփական՝ **վ**:

Առաջնալեզվային. ձայնորդներ՝ **ն** (ռնգային), **լ, ռ, ռ** (բերանային), ձայնեղ-շփականներ՝ **զ, ժ**, խուլ-շփականներ՝ **ս, շ**, ձայնեղ-պայթական՝ **ղ**, խուլ-պայթական՝ **տ**, խուլ-շնչեղ՝ **թ**, ձայնեղ-կիսաշփական՝ **ձ**, **ջ**, խուլ-կիսաշփական **ծ, ց, ճ, չ**:

* **ե** և **ո** տառերը վերցված են իրենց հին արտասանությամբ՝ **է** և **օ**, **ու**-ն իբրև պարզ ձայնավոր, իսկ **է**-ն արտասանվել է **է+յ**:

Միջնալեզվային. ձայնորդ՝ յ:

Ետնալեզվային. ձայնեղ-շփական՝ **ղ**, խուլ-շփական՝ **խ**, ձայնեղ-պայթական՝ **գ**, խուլ-պայթական՝ **կ**, խուլ-շնչեղ՝ **ք**:

Կոկորդային. խուլ-շփական՝ **հ**:

Ջինգերորդ դարում հայերենը ունեցել է նաև երկբարբառներ՝ **այ**, **աւ**, **եա**, **ել**, **իւ**, **ոյ**, **ու**, **ւո**, սակայն ոչ այնպիսի արժեքով, ինչպիսին պատկերացվել է մեր մասնագիտական գրականության մեջ:

Ձայնորդներից երկբարբառների կազմությանը մասնակցել են միայն **յ** և **ւ** հնչյունները, իսկ մյուս ձայնորդները հինգերորդ դարում արդեն երկբարբառի տարր չէին հանդիսանում: Ինչ վերաբերվում է եռաբարբառներին պետք է ասել, որ նրանք ընդհանրապես սակավ են եղել հայերենում, օրինակ միայն, քաղեայք, արդեայք և այլն:

Ջայոց գրերի հորինման շրջանից դեռ շատ առաջ, ինչպես արդեն նշել ենք, հայերենը ունեցել է հնչյունական իր օրինաչափությունները, որոնք չէին նույնանում ժամանակի և ոչ մի լեզվի օրինաչափությունների հետ:

Ջայերենի հնչյունական համակարգը իր ամբողջությամբ արտացոլվել է մեր այբուբենի մեջ. նա կազմված է եղել 36 հնչյունից և հիշված երկբարբառներից, որոնք, ինչպես նշվեց, գլխավորապես կազմվել են **յ** և **ւ** ձայնորդներով և որևէ ձայնավորով: Երկբարբառների պարզեցման տենդենցը, որը նկատվել է հնդեվրոպական այլ լեզուներում, ուժեղ կերպով արտահայտվել է և գրաբարի ուշ շրջանում:

Այդ պատճառով էլ հայերենի երկբարբառները հետագայում՝ վերածվել են պարզ հնչյունների, ինչպես՝ **աւծ** – **օծ**, **հաւր**–**հօր**, **պաշտաւն**–**պաշտօն**, **եղբաւր**–**եղբօր**, **իւր**–**իր**, **ալեւր**–**ալիւր**–**այլուր**–**ալուր**–**ալիր**, **հիւղ**–**խուղ**, **հիւսել**–**հուսել**, **լոյս**–**լույս**–**լուս**–**լիս**, **համբոյր**–**համբուր**, **գրեաց**–**գրեց**, **գործեաց**–**գործեց** և այլն:

Ջայերենի բաղաձայն հնչյունները, որոնք գլխավորապես եռաստիճան համակարգ ունեն, հետագայում փոփոխության են ենթարկվել. եռաստիճանությունը՝ **բ**, **պ**, **փ** || **դ**, **տ**, **թ** || **ծ**, **ծ**, **ց** || **ջ**, **ճ**, **չ** որոշ բարբառներում, հատկապես **կը** ճյուղի, վերածվել է երկաստիճանի, իսկ մի շարք այլ բարբառներում և գրական հայերենում ձայնեղ հնչյունները որոշ դիրքերում դարձել են խուլ կամ խուլ շնչեղ:

Լ և **ղ** հնչյունները սկզբնական շրջանում մոտ են եղել այն աստիճան, որ շատ դեպքերում փոխարինել են միմյանց. ինչպես՝ **ջիւլ**–**ջիղ**, **ղլաւ**–**ղղաւ**, **լակիշ**–**ղակիշ** (գորք), **գաւ**–**գաղ**, **լեղանգ**–**լելանգ** (կերակրե-

դեն), **սալար-սաղար** (գորագլուխ), **հիւղէ-հիւլէ** և այլն: **Լ** և **ղ** հնչյունների ուժեղ տարբերակումը կատարվում է VII դարից հետո:

Միջին դարերում հայերենում սկսում է փոխվել **ո** ձայնավորի և **աւ** երկբարբառի արտասանությունը և գիտակցվել **Փ** հնչյունը. փոփոխությունները այբուբենում արտահայտելու համար լատիներենի այբուբենից փոխ են առնվում համապատասխան տառերը՝ **օ** և **Փ**:

Ձայնորդ հնչյուններից **յ** և **ւ**, որոնք հիմնադրորդ դարում մասամբ դեռևս պահպանել էին նաև իրենց վանկարար հատկությունները, հետագայում կորցնում են այդ հատկանիշները և վերածվում են մեծ մասամբ բաղաձայն հնչյունների: **Յ**-ն բառասկզբում բոլոր դեպքերում սկսում է արտասանվել **հ**, իսկ **ւ**-ն ձայնավորներից առաջ (բացի **ո**-ից), բոլոր դեպքերում՝ **վ**: Այդ փոփոխությունները մեծ չափով ազդել են հայերենի հնչյունական համակարգի վրա:

Գրաբարում շեշտը ընդհանրապես դրվում է բառի վերջին վանկի, իսկ եթե վերջին վանկի ձայնավորը չգրվող **ը** է, վերջընթեր վանկի ձայնավորի վրա: Բառի թեքման, ածանցման կամ բարդության ժամանակ շեշտի տեղի փոփոխման հետևանքով, իբրև ընդհանուր կանոն, սղվում կամ հնչյունափոխվում են շեշտակորույս եղած վանկերի **ի**, **ու**, է ձայնավորներն ու երկբարբառները, օրինակ՝ **սիրտ-սրտի, այգի-այգեաւ, գարի-գարւոյ, որդի-որդւոյ, հանդէս-հանդիսաւոր, հուր-հրոյ, ջուր-ջրոյ, շուրթն-շրթան** և այլն: Չեն հնչյունափոխվում՝ **ի**-ն, երբ գտնվում է միավանկ բառերում, ինչպես՝ **ծի-ծիոյ, տիք-տիոց** և այլն. **ու**-ն և **է**-ն, երբ գտնվում են բառի վերջում, եթե նույնիսկ նրանց հաջորդում է ձայնավոր որևէ հնչյուն, ինչպես՝ **բազէ-բազէի, եղջերու-եղջերո՞ւի, լեզու-լեզուանի** և այլն: Ձայնավոր հնչյուններից **ա**, **ո**, **է** համարյա թե չեն հնչյունափոխվում, թեև բացառված չէ նաև նրանց հնչյունափոխությունը:

Շեշտի ազդեցությամբ հնչյունափոխվում են՝ **եա** (մատեան-մատենի, կեանք-կենաց), **իւ** (քաջութիւն-քաջութեան, թիւ-թւոյ, անիւ-անւոյ), **ոյ** (բոյս-բուսոյ, լոյս - լուսաւոր), **եայ**, **իայ** (պաշտօնեայ-պաշտօնէի, գործունեայ-գործունեութիւն, միայնակեաց-մենակեաց) երկբարբառներն ու եռբարբառները, իսկ **այ**, **աւ**, **եւ**, **ւո** երկբարբառները ավանդական հնչյունափոխության են ենթարկվել:

Շեշտի փոփոխման հետևանքով կատարված հնչյունափոխությունները ընդհանրապես հատուկ են նաև ժամանակակից հայերենին և մեր բազմաթիվ բարբառներին:

ԳՐԱԲԱՐԻ ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ա. ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1) ԲԱՌԻ ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱԾՄԸ

Հայերենում, ինչպես նաև հնդեվրոպական մյուս լեզուներում, բառը կարող է կազմված լինել երեք մասից՝ արմատից, ածանցից և վերջավորությունից, որոնցից յուրաքանչյուրը բառի մեջ ունի իր դերն ու իմաստը. արմատը ցույց է տալիս բառի ընդհանուր իմաստը, ածանցը՝ ավելի կոնկրետացնում, ճշտում է այն, իսկ վերջավորությունը արտահայտում է բառի քերականական իմաստը նախադասության մեջ: Բառի մյուս երեք մասերը, իհարկե, սերտորեն կապված են միմյանց հետ. ածանցը և վերջավորությունը առանձին գոյություն չունեն, նախադասության մեջ նրանք միմյանցից անկախ հանդես գալ չեն կարող. բառի արմատը կամ հիմքը երբեմն կարող է հանդես գալ զրո վերջավորությամբ, բայց տվյալ բառի վերջավորության բացակայությունն էլ կարող է բնութագրել բառի դերը նախադասության մեջ. այսպես, օրինակ՝ «Փոքրիկ տղան մի վարդ տեսավ» նախադասության մեջ **վարդ** բառը ունի զրո վերջավորություն, որով իմացվում է, որ նա նախադասության մեջ ուղիղ խնդիր է:

Սակայն, եթե ասվում է, որ բառի երեք մասերը անբաժանելի են և առանձին գոյություն չունեն, չի նշանակում, թե հասարակության զարգացման բոլոր շրջաններում նրանք այդ կերպ են հանդես եկել: Պետք է ընդունել, որ եղել է որոշ շրջան, երբ դրանք անջատաբար են հանդես եկել և ունեցել են իրենց ինքնուրույն դերը և, միայն հետագայում, լեզվի զարգացման ընթացքում աբստրակցիայի են ենթարկվել և վերածվել անխզելիորեն միմյանց հետ կապված տարրերի, որոնց օգնությամբ լեզուն արտացոլում է տվյալ հասարակության բոլոր անդամների պատկերացումների գուգորդության ընդհանուր համակարգը:

Հնդեվրոպական լեզուներում արմատները մեծ մասամբ չեն ունեցել վերջավորություններ և հանդես են եկել և՛ գոյական անունների, և՛ բայերի իմաստով: Եվ միայն հետագայում նրանք ստացել են վերջավորություններ, որոնք ավելի կոնկրետացրել են նրանց արտահայտությունները և բառի քերականական իմաստն ու դրսևորումները դրել են այն փոխադարձ կապակցությունների մեջ, որոնք պայ-

մանավորված են կոնկրետ լեզուների ձևայինների ընդհանուր համակարգով՝ նրա պատմական զարգացման այս կամ այն շրջանում: Հետևաբար, այդ լեզուների զարգացման ավելի վաղ շրջանում նույնացել են բառի արմատն ու հիմքը:

Հայերենում, ինչպես նաև հնդեվրոպական մյուս լեզուներում խիստ կերպով սահմանված է արմատի, ածանցի և վերջավորության հաջորդականությունը: Արմատը սովորաբար բառի առաջին մասն է, որին ավելանում են ածանցը կամ ածանցները և ապա վերջավորությունը: Նախածանցներ շատ քիչ են եղել հին հայերենում. և ընդհանրապես հնդեվրոպական լեզուների հին վիճակին հատուկ չեն եղել նախածանցները, որոնց մեծ մասը կազմվել է հետագայում՝ կոնկրետ լեզուների զարգացման ներքին՝ օրինաչափություններով: Միջածանցները հնդեվրոպական որոշ լեզուներում մեծ մասամբ հանդես են գալիս բայերում: Այդ երևույթը հատուկ չէ հայերենին: Բառը կարող է ունենալ մեկից ավելի վերջածանցներ և վերջավորություններ, որոնք կարող են կուտակվել միմյանց վրա և բառին տալ քերականական իմաստներ: Այսպես, օրինակ՝ հայերեն գր-եր-ից-դ բառածնը կազմված է **գիր** արմատից և մի շարք վերջավորություններից, որոնցից յուրաքանչյուրը իր դերն ունի այդ բառի մեջ:

Հնդեվրոպական լեզուներում քերականական արժեք ունեն նաև երաժշտական շեշտն ու ձայնավորների հնչյունափոխությունները կամ հաջորդումները: Հին հայերենին թեև նրանք հատուկ չէին, բայց դեռևս պահպանված էին հնչյունափոխական որոշ կանոնների մեջ, որոնք քերականական արժեք ունեին. օրինակ՝ ճանաչել-ծանալ, մատչել-մաւտ, պաշտել-պաշտաւն, հայր-հաւր, մայր-մաւր և այլն: Այդ կանոնները, սակայն, գործուն չէին հին հայերենում. նրանք հին օրենքների հետ կապված դրսևորումներ էին, որոնք պայմանավորված չէին հինգերորդ դարի հայերենի զարգացման ներքին օրինաչափություններով և այդ պատճառով էլ հանդես էին գալիս իբրև բացառություններ՝ միայն որոշ բառերի քերականական ֆունկցիան նշելու համար սահմանված քարացած ձևով:

Այսպիսով, հնդեվրոպական լեզուներին հատուկ ձևաբանական միջոցները՝ ձայնավորների հերթագայությունը, տոնի տեղի փոփոխությունը չեն պահպանվել հայերենում իրենց քերականական բոլոր նրբերանգներով ու դրսևորումներով: Հայերենում ձայնավորների հերթագայությունը և տոնը (շեշտը) քերականական նշանակություն

չունեն: Հայերենը պահպանել է միայն իրենց բազմազանությամբ ու իմաստների նրբերանգներով հարուստ ածանցները, որոնք շատ մեծ դեր են կատարում հայերենի ինչպես բառակազմության, նույնպես և ձևաբանական զանազան արտահայտությունների ձևավորման մեջ

2) ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայերենի հոլովումը իր մի շարք առանձնահատկություններով կապվելով հնդեվրոպական լեզուների հոլովման հետ՝ ունի նաև միանգամայն տարբեր դրսևորումներ, որոնք ցույց են տալիս, որ հայերենը անցել է զարգացման սեփական ուղի և գրի առնվելու ժամանակ իր քերականական համակարգով ուրույն տեղ է գրավել հնդեվրոպական լեզուների համակարգում:

Հին հայերենը չունի անվանական սեռեր նա հոլովման մեջ չի տարբերում նաև անձի և իրի առումները ունի միայն երկու թիվ՝ եզակի և հոգնակի, և վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական, որոնցից յուրաքանչյուրը ունի իր հոլովակազմիչ մասնիկներն ու իմաստը*:

Գրաբարի հոլովվող խոսքի մասերը՝ գոյական անունները, ածականները, դերանունների մի մասը, թվական անունները և դերբայները ունեն թեքման **ա, ե, ի, ո, ու** ցուցիչները, որոնք կոչվում են հոլովիչներ. Այդ ձայնավորներով էլ որոշվում են հոլովումները

Հայերենի հոլովները ունեն նաև իրենց հոլովակերտ մասնիկները, որոնք տարբեր հոլովներում հանդես են գալիս ուրույն ձևերով

Գոյական անունների եզակի ուղղական և հայցական հոլովները չունեն հոլովակերտ վերջավորություններ և այդ պատճառով էլ ձևով համընկնում են Հնդեվրոպական մի շարք այլ, հատկապես սլավոնական լեզուներում արական և չեզոք սեռի բառերի եզակի ուղղական ու հայցական հոլովները նույնպես իրենց վերջավորություններով համընկնում են այդ նշանակում է, որ այդ հոլովների ձևական տարբերությունների վերացումը միայն հայերենին չէ հատուկ.

* Հին հայերենի քերականներից ոմանք, հիշված հոլովներից բացի, նշել են նաև պատմական, պարառական, ներգոյական և կոչական հոլովներ, որոնք չունեն իրենց առանձին հոլովակազմիչները, այդ պատճառով էլ հիշյալները չեն համարվում առանձին հոլովներ և չեն մտցվում քերականության դասագրքերի մեջ

Սեռական հոլովը ունի **ն, ջ, նջ, ր, յ**, տրականը՝ **ն, ջ, նջ, ր, մ, յ**, բացառականը՝ **յ, է** (ե+յ), գործիականը՝ **բ, լ** (ո-ից հետո՝ վ) հոլովակերտ մասնիկները

Գրաբարի հոլովիչները կա՛մ ավելանում են գոյական անվան հիմքին, ինչպես՝ տիտան-տիտանայ, գիշեր-գիշերոյ, բան-բանի, ծով-ծովու, կա՛մ ընկնում են բառահիմքի վերջին բաղաձայնից առաջ, ինչպես՝ ծուկն-ծկան, շուն-շան (*շուան), շուրթն-շրթան, աստղ-աստեղ, կայսր-կայսեր, անուն-անուան և այլն Առաջին դեպքում կազմում են արտաքին, իսկ երկրորդ դեպքում՝ ներքին թեքման հոլովումներ Չայերենում հոլովիչներն ու հոլովակազմիչները հանդես են գալիս միասնաբար, երբեմն հոլովիչը փոխարինում է նաև հոլովակերտ վերջավորությանը

Գոյական անունների հոգնակին կազմվում է հատուկ վերջավորություններով ուղղականի և գործիականի համար՝ **ք**, սեռականի, տրականի և բացառականի համար՝ **ց**, իսկ հայցականի համար՝ **ս**, որը հանդես է գալիս նաև իբրև հոլովակերտ մասնիկ Յոգնակի վերջավորությունները սովորաբար ավելանում են եզակի համապատասխան հոլովներին Յոլովիչները պահպանվում են եզակի և հոգնակի բոլոր թեք հոլովներում

ա) ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՅՈԼՈՎՈՒՄԸ

Գրաբարի գոյական անունները, ինչպես նշվեց, ենթարկվում են կա՛մ արտաքին, կա՛մ ներքին թեքման հոլովումների, որոնք կարող են ձևավորվել մեկ կամ երկու հոլովիչներով Երբ բառի եզակի և հոգնակի բոլոր թեք հոլովներում պահպանվում է միևնույն հոլովիչը, հոլովումը կոչվում է պարզ, իսկ երբ հանդես են գալիս տարբեր հոլովիչներ՝ խառն, այսպես, օրինակ՝ բան-բանի-բանիւ, բանք-բանից, բանիւք, տուն-տան-տամբ, տունք-տանց-տամբք պարզ հոլովում է, իսկ մեծ-մեծի-մեծաւ, մեծք-մեծաց-մեծաւք, գառն-գառին-գառամբ, գառնք-գառանց-գառամբք՝ խառն

Գրաբարում ներքին թեքման հոլովման են ենթարկվում գլխավորապես այն բառերը, որոնք վերջանում են **ր, ն, դ** և նախընթաց բաղաձայններով, ինչպես՝ ծուկն-ծկան, ոտն-ոտան, գեղմն-գեղման, դուռն-դրան, ունկն-ունկան, ակն-ական, հարցումն-հարցման, այծեամն-այծեման, պաշտամն (պաշտաւն)-պաշտաման, անուն-անու-

ան, իմաստութիւն-իմաստութեան, արիւն-արեան, ալեր-ալեր, տարր-տարեր, աստղ-աստեղ, եզն-եզան, անձն-անձին և այլն Բոլոր այն բառերը, որոնք ձայնորդներով չեն վերջանում, բայց ենթարկվում են ներքին թեքման հոլովման, կամ ունեցել են ձայնորդներ, կամ կազմվել են անալոգիայով

Արտաքին թեքման հոլովումների ենթարկվում են բոլոր այն բառերը, որոնք գրաբարում վերջանում են ձայնավորով Այդ հոլովման ենթարկվում են նաև բաղաձայնով վերջացող շատ բառեր, ինչպես բազէ-բազէի, արքայ-արքայի, ծի-ծիոյ, որդի-որդւոյ, տիտան - տիտանայ, Վաղարշակ-Վաղարշակայ, Աքիլէս-Աքիլէայ, Յոմերոս-Յոմերայ, սիրտ-սրտի, բառ-բառի, բան-բանի, խորշ-խորշի, ջահ-ջահի, պատուհաս-պատուհասի, նժոյգ-նժոյգի, ձայն-ձայնի, գործ-գործոյ, գետին-գետնոյ, թիւ-թւոյ, կոճ-կոճոյ, հուր-հրոյ, ամառնային-ամարնայնոյ, դիպուած-դիպուածոյ, սողուն-սողնոյ, քաղդէացի-քաղդէացւոյ, խորենացի-խորենացւոյ, արտաքին-արտաքնոյ, թի-թիոյ, ծով-ծովու, զարդ-զարդու, դաս-դասու, աղուէս-աղուեսու, աշակերտ-աշակերտի, պատանի-պատանւոյ, թագուհի-թագուհւոյ և այլն

Գրաբարի զարտուղի կամ անկանոն համարված հոլովման ենթարկվող հայր, մայր, քոյր, եղբայր, այր, տեր, կին, տիկին, օր, տիւ, գիւղ բառերը նույնպես չեն շեղվում գրաբարի հոլովման ընդհանուր օրինաչափություններից Նշված բառերից հայր, մայր, եղբայր, տեր բառերը ենթարկվում են ներքին թեքման **ա** հոլովման, քոյրը՝ **ե**, կին և տիկին բառերը **ո-ա**, գիւղը՝ **ե-ի**, արը՝ **ու** հոլովման Այդ բառերի մեծ մասի մեջ իբրև հոլովիչ հանդես է գալիս արմատական ձայնավորը, որը կատարում է նաև հոլովակազմիչի դերը Այսպես, օրինակ՝ **ար** բառը **աւուր** ձևով կապվում՝ է հունարեն *amera* «օր» բառի հետ Յայտնենում բառը ենթադրում է **amur* ձևը, որը դարձել է *awmr*, որից առաջացել է *awr-ար*, որի սեռական հոլովը պահել է բառի երբեմնի հիմքը՝ **աւուր** ձևը **քոյր** բառի սեռական **քեռ** ձևը առաջացել է **ու** հնչյունի անկումով **քոյր** բառի սեռական հոլովը կազմվել է **քոյերն** ձևով, որտեղ **ոյ**-ն նախ դարձել է **ու**, ապա ընկել է, **ր**-ն **ւ**-ից առաջ վերածվել է **ռ**-ի, և պահպանվել է նաև այն ժամանակ, երբ **ւ**-ն ընկել է Յայր, մայր, եղբայր և նրանցով բարդված բառերի հոլովումը կազմվել է միևնույն օրինաչափություններով Կարծում ենք, որ այդ բառերի հիմքը մի ժամանակ եղել է *haur*, *maur*, *tebraur*, որոնց **ը**-ն, ըն-

կել է, և Լ-ն վերածվել է Ե-ի: Սեռական հոլովում վերականգնվում է բառի երբեմնի հիմքը, որի մեջ **ա** և Լ-ն հանդես են գալիս միասնաբար և ունեն նաև հոլովակազմիչի իմաստ:

Այսպիսով, գոյական անունների հոլովումը գրաբարում ունի իր օրինաչափ դրսևորումները, որոնց մի մասը կապվում է հին, հինգերորդ դարում արդեն չգիտակցվող օրենքների, իսկ մի մասն էլ գրաբարի գործուն օրինաչափությունների հետ:

Հայերենը, իբրև ընդհանուր օրենք, չի պահպանել հնդեվրոպական լեզուների հիմքերի վերջավորությունները: Այդ պատճառով էլ նրա հոլովիչները կազմվել են ինքնուրույնաբար, երբեմն բառահիմքից, երբեմն հնդեվրոպական հիմքերի և վերջավորությունների համադրումից, երբեմն էլ ուղղակի հնդեվրոպական վերջավորություններից. այսպես, օրինակ՝ **դ, թ, և** ծայնորդ հնչյուններով վերջացող բառերը հայերենում կորցրել են ծայնորդից առաջ եղած ծայնավորը կամ վերածվել չգրվող **ը-ի**. օրինակ՝ հունարեն *astēr*, հայերեն **աստղ**, *metēr*՝ **մայր**, լատիներեն *decem*, հալերեն **տասն** և այլն: Այդ պատճառով էլ այդ և նման շատ այլ բառերի հոլովիչները կազմվել են հիմքերի հնչյուններից:

Հայերենի **ա, ե, ի, ո, ու** հոլովիչները ծագումնաբանորեն հնդեվրոպական լեզուների հետ առնչվելով հանդերձ՝ ձևավորվել են հայերենի օրինաչափություններով, արտացոլել նրա զարգացման ընդհանուր տեղեկները, այդ պատճառով էլ պահպանվել են հին հայերենում, ժամանակակից հայերենում և հայերենի բազմաթիվ բարբառներում: Սակայն այդ հոլովիչները դարերի ընթացքում փոխվել են, զարգացել և նրանց նոր արտահայտությունների հիման վրա էլ փոփոխության է ենթարկվել հայերենի հոլովական համակարգը:

Հայերենի հոլովումների մեջ կատարված փոփոխությունները ամենից առաջ արտահայտվել են հոլովիչների քանակի կրճատման մեջ: Հենց գրաբարում որոշ հոլովիչներ տեղի էին տալիս ավելի տարածվածների առաջ, այսպես՝ **ա, ո** և **ու** հոլովման ենթարկվող բառերը շատ դեպքերում ենթարկվում էին նաև **ի** հոլովման, իսկ հետագայում համարյա թե վերանում են այդ հոլովումները, եթե նկատի չունենանք նրանցով կազմված այն հոլովածները, որոնք քարացած ձևով գործածվում էին ուշ շրջանի հայերենում և նրա բարբառներում:

Ժամանակակից հայերենում արտաքին թեքման **ա** և **ո** հոլովումներ չկան: Այն բառերը, որոնք ենթարկվում էին այդ հոլովումներին,

այժմ մեծ մասամբ, բացի անորոշ դերբայից, ենթարկվում են **ի** հոլովման:

Փոփոխության են ենթարկվել նաև հոլովակազմիչները. նրանց մի մասը վերացել է, իսկ մի մասն էլ միօրինակ դարձել:

Հայերենի գոյական անունների հոլովման համակարգում կատարված այդ փոփոխությունները սերտորեն կապված են նրա մյուս բաժինների մեջ կատարված փոփոխությունների և ընդհանրապես լեզվի հիմնական ֆունկցիայի՝ հաղորդակցական ֆունկցիայի հետ, որով որոշվում են լեզվի զարգացման ներքին օրենքները և նրանց դրսևորման եղանակները:

բ) ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԸ

Հայերենի ածականները և թվականները թեև գրաբարում հոլովվում էին, բայց չունեին իրենց հատուկ հոլովական համակարգը:

Ընդհանրապես հնդեվրոպական լեզուներում ածականների և թվականների հոլովների վերջավորությունները որոշվում են գոյական անունների հոլովիչներով: Այդ բանը ավելի ուժեղ է ընդգծվում հատկապես այն լեզուներում, որոնք ունեն քերականական սեռեր: Հայերենը չի պահպանել քերականական սեռերը, և այդ պատճառով էլ ավելի են պարզացել ածականների և թվականների հոլովումները:

Ածականների, թվականների և գոյականների անհամաձայնությունը սկսել է շատ վաղուց. հինգերորդ դարում արդեն ուրվագծվում էին որոշիչների նախադաս գործածության և չհամաձայնվելու ընդհանուր տենդենցները, որոնք կապված էին հայերենի զարգացման ներքին օրենքների կենսունակ դրսևորումների հետ:

Հայերենի հոլովական համակարգի մեջ կատարված հետագա փոփոխություններն ու տեղաշարժերը ամենից առաջ պայմանավորված են եղել պարզեցման ու բազմազանությունների վերացման այն ընդհանուր տենդենցներով, որոնք հատուկ են եղել հայերենին իր զարգացման բոլոր շրջաններում: Գոյական անունների սեռերի, երկակի թվի կատեգորիայի վերացումը, ածականների և գոյականների համաձայնության պարզեցման, հոլովումների և հոգնակի թիվը ցույց տվող մասնիկների կրճատման փաստերը ցույց են տալիս, որ հայերենը իր զարգացման վաղ շրջանից սկսած պարզեցման ու միօրինակության է ձգտել:

Հայերենի զարգացման այդ ընդհանուր պրոցեսի մեջ սովորաբար հաղթանակել են լեզվական այն իրողությունները, որոնք հայերենի քերականության ընդհանուր սկզբունքներին չհակասելով հանդերձ՝ հանդես են եկել իբրև լեզվական նոր որակի հետ կապված տարրեր և ավելի մեծ պարզությամբ ու կատարելությամբ են դրսևորել հայերենի հաղորդակցման ընդհանուր ֆունկցիան՝ նրա զարգացման տվյալ շրջանում:

գ) ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՈՎՈՒՄԸ

Հայերենի, ինչպես և հնդեվրոպական մյուս լեզուների, դերանունները երկու կերպ են հոլովվում: Նրանց մի մասի հոլովումները չեն տարբերվում գոյական անունների և ածականների հոլովումներից, իսկ մնացած մասը ունի հատուկ հոլովում, որ լեզվաբանության մեջ ընդունված է կոչել դերանվանական հոլովում:

Անձնական դերանունը, իբրև ընդհանուր երևույթ, հնդեվրոպական լեզուներում ունի երկու տարբեր հիմքեր. մեկը հանդես է գալիս ուղղական, իսկ մյուսը՝ մնացած հոլովներում:

ՅՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Դերանվանական հոլովման առանձնահատկությունները կարելի է տեսնել ցուցական դերանունների հոլովման մեջ: Ցուցական դերանունները հայերենում երեք կարգի են բաժանվում՝ սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, որոնց արմատական հնչյուններն են **ս**, **դ**, **ն**, որոնք հայերենում գործածվում են իբրև հոդեր: Այդ արմատներով կազմված ցուցական դերանուններ ունեն նաև հնդեվրոպական մյուս լեզուները: Այսպես, օրինակ՝ մոտ առարկան ցույց տվող դերանունը հանդես է գալիս՝ հին սլավոներենում *сѣ* սեռ. *сего*, հայերենում **այս**, **սա**, հին իռլանդերենում *ce* ձևերով. հեռու առարկան ցույց տվող դերանունը հանդես է գալիս **w*, **n*, **l* բնորոշ հնչյուններով, որոնցից հայերենը ունի **ն** արմատով **այն**, սլավոներենը՝ *он*, խեթերենը *aniš*, հին գերմաներենը՝ *jener* (այն), հունարենը *ἐν* (վաղը չէ մյուս օրը) և այլն. **լ** արմատով՝ հայերենը պահպանել է **այլ** բառը: **Դ** արմատով դերանուններ կան սլավոնական լեզուներում՝ *тъ*, *то*, *та*, *те*, սանսկրիտերենում *ta-tā* ձևերով և այլն:

Հայերենի դերանունների հոլովումը զգալի չափով տարբերվելով հնդեվրոպական մյուս լեզուների դերանունների հոլովումներից՝ պահել է նաև շատ ընդհանուր գծեր, որոնք հիմք են տալիս որոշ համեմատություններ անելու և նշելու նրանց ընդհանրությունների կոնկրետ դրսևորումները:

Հայերենի դերանունները քերականական սեռեր չունենալու պատճառով համարյա թե միևնույն վերջավորություններն ունեն թեք հոլովներում. օրինակ՝ **սա, դա, նա** դերանունների սեռական հոլովը կլինի սորա, դորա, նորա. **այս, այդ, այն**՝ այսր, այդր, այնր, այսորիկ, այդորիկ, այնորիկ, **սոյն, դոյն, նոյն**՝ սորին, դորին, նորին: Նշված բոլոր դերանունների սեռական հոլովի բնորոշ հատկանիշը **ր** հնչյունն է, որը պահպանված չէ հնդեվրոպական լեզուներում, եթե նկատի չունենանք խեթերենի *kuəl* (ում) դերանվան *ℓ* ցուցիչը, որը կարծեք թե խոսում է **լ** և **ր** հնչյունների հերթագայության մասին, որը մի ժամանակ արտահայտվել է որոշ բառերի մեջ. օրինակ՝ հունարեն *ἄστρον*, *ἀστρο*, գոթերեն *stairno*, հայերենում ունենք **աստղ** (աստեղ), լատիներենում՝ *stella* ձևերը և այլն: **Լ** և **ր** հնչյունների փոխանցումները կամ հերթագայությունները թեև ընդհանուր օրինաչափություն չեն եղել հնդեվրոպական լեզվաընտանիքի գոյացման շրջանում, բայց և այնպես պահպանվել են որոշ բառերում, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ հայերենի ցուցական դերանունների **ր**-ն նույնպես հնդեվրոպական ծագում ունի:

Հիշված դերանունների տրականը տարբերվում է սեռականից իր **մ** հոլովակազմիչով. ինչպես՝ **սմա, դմա, նմա, այսմ-այսմիկ, այդմ-այդմիկ, այնմիկ, սմին, դմին, նմին**:

Տրականի **մ** հոլովակազմիչը տարբեր արտահայտություններով պահպանված է հնդեվրոպական մյուս լեզուներում: Ենթադրվում է, որ նա կապ ունի *-smoi* վերջավորության հետ, որը սանսկրիտերենում արտահայտվում է *ta-smai* (ում), հին սլավոներենում *mo-moj*, հայերենում **սմա, որ-ում**, պրուսերենում *stesmu* (ում), ռուսերեն՝ *emy* (իրեն) ձևերով և այլն:

Բացառական հոլովը կազմվում է տրականից **ի** նախդրով և է հոլովակազմիչով. ինչպես՝ **ի սմանե, ի դմանե, ի նմանե, յայսմանե, յայդմանե, յայնմանե, ի սմին, ի դմին, ի նմին**:

Բացառական հոլովի է վերջավորությունը, որը հանդես է գալիս նաև մի շարք գոյական անունների բացառականում, հավանաբար

առաջացել է et (at) ձևից: Իսկ ն-ն առաջացել է տրական հոլովի մ-ի ազդեցությամբ՝ տարևմանության հետևանքով:

Գործիական հոլովը կա՛մ կազմվում է գոյական անունների գործիականի նման, կա՛մ էլ տրականից՝ գործիականի **բ, լ**, հոլովակազմիչով, ինչպես՝ սովաւ, դովաւ, նովաւ, այսու, այդու, այնու, սովիմբ, դովիմբ, նովիմբ: Գործիական հոլովի սովաւ, դովաւ, սովիմբ, դովիմբ և այլ նման ձևերը բարդ կազմություն ունեն. այդ բառերի գործիականը ունեցել է **սո, դո, նո** հիմքերը, որոնց ավելացվել է գործիական հոլովի հոլովակազմիչը **վ (բ, լ)**: այդ ձևը հետագայում կորցնելով իր հոլովական իմաստը, մյուս հոլովների անալոգիայով ստացել է **ա** հնչյունը, որին կրկնակի կերպով ավելացվել է գործիական **ւ** հոլովակազմիչը, որի հետևանքով ստացվել են սովաւ, դովաւ և այլ նման ձևերը:

Ցուցական դերանունների հոգնակին կազմվում է հայերենի հոլովական օրինաչափություններով **ք, ց, ս** հոգնակի վերջավորությունների օգնությամբ, ինչպես՝ սոքա, դոքա, նոքա, սոցա, դոցա, նոցա, սոսա, դոսա, նոսա, սոքաւք, դոքաւք, նոքաւք և այլն:

Հայերենի ցուցական դերանունները, ինչպես տեսանք, հնդեվրոպական լեզուների նույն տիպի դերանունների հետ առնչակցվելով հանդերձ՝ ունեն պատմականորեն ձևավորված զարգացման հատուկ դրսևորումներ, որոնք բնորոշ են միայն հայերենին: Այդ նշանակում է, որ յուրաքանչյուր լեզվի զարգացման հարցերը չի կարելի բացատրել առանց նկատի ունենալու այդ լեզուն կրող ժողովրդի պատմության տվյալները: Մեր լեզվի քերականության ու առավել ևս բառապաշարի մեջ կատարված փոփոխությունների ու տեղաշարժերի և հայ ժողովրդի պատմության միջև եղած սերտ կապը ավելի ակնբախ կերպով երևում է այն երևույթների մեջ, որոնք գրավոր աղբյուրներով են ավանդվել մեզ: Հայերենի նախագրային շրջանի մասին արվող դիտողությունները մեծ մասամբ հիմնված են օտար աղբյուրների տվյալների և օտար լեզուների հետ արված համեմատությունների վրա, որոնք միայն ընդհանուր կերպով կարող են պարզել մեզ հետաքրքրող հարցերը:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Հայերենի, ինչպես նաև հնդեվրոպական մյուս լեզուների, առաջին դեմքի դերանունը հնդդական հոլովում ունի մի, իսկ մնացած

100

հոլովներում մի այլ արմատ: Այսպես, օրինակ՝ ուղղական հոլովում առաջին դեմքի դերանունը հայերենում ունի **ես**, հին սլավոներենում՝ азѣ, հունարենում՝ ἐγώ. լատիներենում՝ ego, լիտվերենում՝ es, aš ձևեր և այլն: Երկրորդ դեմքի դերանունը հայերենում՝ դու, ռուսերենում՝ ты, հին լատիներենում՝ tu, հին գերմաներենում՝ du, հունարենում՝ tu (և vs) ձևերը և այլն:

Յայցական հոլովում հայերենի առաջին դեմքի դերանունն ունի **իս** (իմ-ս-ից), հունարենը՝ ἐμέ, սանսկրիտերենը՝ mam, երկրորդ դեմքինը՝ հայերենը **քեզ**, սանսկրիտերենը՝ tva, սեռականում՝ հայերենը՝ **իմ**, **քո**, հին սլավոներենը՝ мене, тебе, լիտվերենը՝ mane և tewe և այլ ձևեր, տրական հոլովում՝ հայերենը՝ **ինձ**, (*emg, hi-ից), **քեզ**, սանսկրիտերենը՝ máhy-a(m) «ինձ», tubhya(m) «քեզ», լատիներենը՝ mihi և tibi, հին սլավոներենը՝ мѣне, тебе, себе և ми, ти, հունարենը՝ μοι, τοι նաև ἐμίν, τίν և այլն ձևեր. բացառական հոլովում հայերենի առաջին դեմքի դերանունն ունի (յ) **ինես**, երկրորդինը (ի) **քես**, սանսկրիտերենը՝ mat, tvat, լատիներենը՝ me(d), te(d) և այլ ձևեր. սլավոնական լեզուները չեն պահպանել բացառական հոլովի համար հատուկ ձևեր: Յայերենի գործիական հոլովը կազմվում է գոյական անունների նման և հոլովակազմիչի միջոցով, ինչպես՝ **ինես**, **քես**:

Յայերենի անձնական դերանունների առաջին դեմքի բացառական և գործիական հոլովների **և** հնչյունը (յինես, ինես) ստացվել է սեռականի մ-ից:

Բացառական հոլովի **է** հոլովակազմիչը առաջացել է սկզբնական at ձևից: Երկար ā հնչյունի պատճառով āt-ը հանդես է եկել երկու վանկով, որի հետևանքով t-ն փոխվել է j-ի, իսկ a-ն՝ e-ի և ստացվել է **է** հոլովակազմիչը, որը, ինչպես տեսանք, հանդես է գալիս նաև հայերենի ցուցական դերանունների և մի շարք գոյական անունների բացառական հոլովում:

Անձնական դերանունների հոգնակիների կազմությունը հայերենում ունի հատուկ դրսևորումներ, որոնք զգալի չափով տարբերվում են հնդեվրոպական մյուս լեզուների անձնական դեֆա-նունների հոգնակիների կազմությունից:

Հնդեվրոպական լեզուներում անձնական դերանվան առաջին դեմքի հոգնակին ունի երկու ձև, որոնցով կազմվել են ուղղական հոլովները. այդ ձևերն են, մի կողմից՝ *wei, որը տվել է սանսկրիտերեն vayam, գոթերեն weis, հին գերմաներեն wir, խեթերեն weš և այլն, և մյուս կողմից՝ mes, որը տվել է հին սլավոներեն мы, հայերեն **մեք** և

այլ ձևեր. երկրորդ դեմքի դերանվան հոգնակի ուղղական հոլովը ներկայացվել է գենդերեն *յմֆ*, գոթերեն սո, սլավոնական լեզուներում *бы*, որը կապում են հին **us* ձևի հետ. հայերենի երկրորդ դեմքի դերանվան հոգնակին կազմվում է եզակի ուղղականին *ք* ավելացնելու միջոցով (դու-դուք):

Հայերենի մեք, մեր, մեզ, (*զ*) մեզ, մենք, մեք, դուք, ձեր, ձեզ, (*զ*) ձեզ, ձենք, ձեք հոլովաձևերը ունեն հնդեվրոպական լեզուներից զգալի չափով տարբեր արտահայտություններ, որոնք ցույց են տալիս, որ այդ հոլովաձևերը գոյացել են հնդեվրոպական լեզուների զարգացման օրինաչափություններից տարբերվող օրենքներով: Այդ տարբերություններն ամենից առաջ ընդգծվում են *ք* հոգնակի վերջավորության և բացառական հոլովի *սք* հոլովակազմիչի առկայությամբ. մյուս հոլովների վերջավորությունները (*ր*, *զ*) նույնպես տարբերվում են հնդեվրոպական լեզուների համապատասխան հոլովների վերջավորությունից, թեև չի կարելի ասել, թե որևէ կապ չկա նրանց մեջ: Մենք կարծում ենք, որ հայերենի անձնական դերանվան հոգնակի թվի հայցականի և տրականի *զ*-ն հնդեվրոպական լեզուների նույն հոլովների *ս*-ն է, որը հայերենի նման արտահայտություն ունի նաև խեթերենում *anzaš* ձևով, թերևս բացառականի *սք* հոլովակազմիչն էլ կապվի հնդեվրոպական լեզուների *ns*-ի հետ (գոթերենում «*մեզ*» դերանունը ունի *uns*, *uns-is* ձևը), բայց այդ բոլորով հանդերձ՝ հայերենի անձնական դերանունների հոլովական համակարգը տալիս է հնդեվրոպական նման տիպի դերանունների հոլովումներից զգալի շեղումներ, որոնք չի կարելի բացատրել առանց հաշվի առնելու հայերենի և հարևան ժողովուրդների լեզուների զուգադիպումները: Այդ տեսակետից ուշագրավ են հայերենի և կովկասյան լեզուների, հատկապես հայերենի և խեթերենի, համեմատությունները, որոնք մեր լեզվի զարգացման հարցերը պարզաբանելու տեսակետից քիչ նյութեր չեն տալիս:

ԳՐԱԲԱՐԻ ՄՅՈՒՄ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ

Հայերենի փոխադարձ, ստացական, հարաբերական դերանունները մեծ մասամբ հոլովվում են գոյական անունների նման, հարցական և անորոշ դերանունները ունեն ցուցական դերանունների նման հոլովումներ, թեև իրենց որոշ դրսևորումներով տարբերվում են նրանցից:

Հարցական, հարաբերական և անորոշ դերանունների եզակի սեռականը ունի **ր**, տրականը՝ **մ** (ում), բացառականը՝ **է**, գործիականը **ւ**, **բ** հոլովակազմիչներ, օրինակ՝ որ, որոյ, որում, յորմէ, որով. զի՞, զի՞նչ, է՞ր, ի՞մ, յիմէ՞, ի՞նչ. ո՞, ո՞յր, ո՞ւմ, յումէ՞ (որո՞ւմ): ոմն, ուրումն, ումեմն, յումեմնէ, ոմամբ. ոք, ուրուք, ումեք, յումեքէ, (ոմամբ). իմն, իրեմն, իմեմն, յիմեմնէ. ինչ, իրիք, իմիք, յիմեքէ, իւիք և այլն:

Նշված դերանուններից հոգնակիներ ունեն **որ, ո, ոմն**, որոնք կազմվում են գոյական անունների նման համապատասխան հոգնակիների ավելացմամբ:

Հարցական **ո** (ով) դերանունը, ինչպես ցույց են տվել պատմահամեմատական մեթոդով կատարված ուսումնասիրությունները, ծագում է *kwo դերանունից, որը պահպանվել է սանսկրիտերենում ka (ուղղական հոլով káha), իրան. լեզուներում՝ ká, լատիներենում՝ quis, հ. սլավոներենում՝ kŭ-to, գոթերենում՝ hwa (ուղղ. հոլով hwas) ձևերով. որոնք ունեն նաև իրենց այլ տարբերակները հնդեվրոպական լեզուներում: Հայերենում **ոմն**, **ոք** անորոշ դերանունները կազմվել են այդ դերանվան **ո** արմատից **մն**՝ հնդեվրոպական men, և **ք**՝ հայերեն ածանցներից: Հնդեվրոպական men ածանցով կազմվել են չեզոք և արական սեռի գոյական անուններ. հայերենի **ոմն** դերանունը ցույց է տալիս անորոշություն, որը հիմք է տալիս ենթադրելու, որ նա գործածվել է երբեմնի չեզոք սեռի անունների հետ: Այդ **մն** ածանցը **ոմն** բառի եզակի գործիականում և հոգնակի բոլոր հոլովներում հանդես է գալիս իր սկզբնական ձևով. նա տարբեր ձևերով պահպանված է նաև հնդեվրոպական մի շարք այլ լեզուներում. օրինակ՝ սանսկրիտերեն bhari-man «բերումն», «բերելը», ռուսերեն бере-мя, սերբերեն береме բառերի մեջ և այլն:

Հայերենի **ոմն** բառի եզակի գործիական հոլովի **ոմանք** ձևը դարձել է **ոմամբ**, գործիականի հոլովակազմիչ **ք**-ի ազդեցությամբ: **Ոմն** բառի հոգնակի ձևերն են՝ ոմանք, ոմանց, ոմանս, ոմամբք: Այդ բառի եզակի հոլովներում (գործիականից բացի) men<mam ածանցը հանդես է գալիս հնչյունափոխված ձևով, ինչպես՝ ոմն, ուրումն, ումեմն, յումեմնէ:

Մյուս անորոշ **ոք** դերանվան մեջ **ք** ածանց է, որը հայերենի **ք** հոգնակի վերջավորությունն է. այդ **ք** ածանցը հանդես է գալիս բառիս եզակի թվի բոլոր հոլովներում (գործիականից բացի), ինչպես՝ ոք, ուրուք, ումեք, յումեքէ, բառի հոգնակին նույնանում է **ոմն** դերանվան հոգնակիի հետ:

Հիշված անորոշ դերանուններից բացի, հայերենը ունի նաև **իմև** և **ինչ** անորոշ դերանունները, որոնք գործածվում են իր ցույց տվող բառերի հետ: Այդ դերանուններից **իմև**-ը կազմված է **ի** արմատական հնչյունից և **մև** (men) ածանցից. իսկ **ինչ**-ը երկու արմատներից՝ **ի** և **չ** արմատական հնչյուններից: Հայերենի **ինչ** բառի **չ** արմատի համապատասխանությունները կան հնդեվրոպական մի շարք լեզուներում, օրինակ՝ սլավոնական լեզուներում **ч-то** (чѣ-то) բառը և նրա տարբեր արտահայտությունները:

Սլավոնական լեզուներում, հատկապես ռուսերենում, պահպանված **кто, кого** և **что, чего** դերանունները, որոնցից առաջինները գործածվում են անձ, իսկ երկրորդները իր ցույց տվող բառերի հետ, իրենց իմաստով և ձևավորման եղանակով հիշեցնում են հայերեն **ումև**, **ոք** և **իմև**, **ինչ** դերանունները:

Հիշված դերանունների թեք հոլովները, ցուցական դերանունների նման, կազմվում են, սեռականը՝ **ր**, որի, ինչպես ասել ենք, համապատասխան վկայությունը պահպանված է խեթերենում, տրականը՝ **մ**, **ում**, որը առաջացել է -o-smoi ձևից, բացառականը՝ **է** հին at-ից, գործիականը՝ **բ-ւ** հոլովակազմիչներով:

Այս բոլոր փաստերը միանգամայն բացատրում են Ն. Յա. Մառի և նրա մի շարք հայ հետևորդների սխալ պնդումները **ո**-ի կցումով դերանվանական հոլովման առաջացման մասին: Մեր ասածներից հետևում է, որ հայերենի դերանունների թեք հոլովները կազմվում են ոչ թե **ո**, **ով** դերանվան համապատասխան հոլովների ձևերի կցումով, ինչպես պնդում էին հայ մառականները, այլ դերանվանական հոլովմամբ, որը հատուկ է հնդեվրոպական բոլոր լեզուներին:

դ) ԳՐԱԲԱՐԻ ՀՈԼՈՎԱԶԵՎԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՍՍՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայերենի հոլովման համակարգի համառոտ նկարագրությունից պարզվեց, որ հայերենը իր շատ դրսևորումներով կապվելով հնդեվրոպական լեզուների հետ՝ ունի միանգամայն նոր կերպարանք և զարգացման իրեն հատուկ օրինաչափություններ: Հայերենը, ի տարբերություն հնդեվրոպական շատ լեզուների, չի պահպանել քերականական սեռերը, որի պատճառով հոլովական շատ վերջավորություններ նոր տեսք և նոր ձևավորում են ստացել: Հնդեվրոպական լեզուներում եղել են «շնչավոր» և «անշունչ» սեռեր: Շնչավոր սեռը՝

բաժանվել է երկու՝ արական և իգական ենթակարգերի: Այդ սեռերը ունեցել են իրենց ձևական արտահայտությունները, որոնք հայերենում կորել են, որովհետև վերացել են սեռերը: Հնդեվրոպական մյուս լեզուներում էլ սեռերը ձևական միևնույն արտահայտությունները չունեն, և ընդհանրապես այդ սեռերը միայն ավանդույթով են պահպանված: Եվ այդ հասկանալի է. սեռերի հասկացությունը տարբեր կերպ են ըմբռնել ժամանակակից ժողովուրդները և հին ցեղերը: Հնդեվրոպական հնագույն ցեղերը բոլոր շարժվող առարկաները, կենդանի էակները համարել են «շնչավոր» սեռ, իսկ այն բոլորը, որը նրանց ըմբռնմամբ շարժուն կամ գործուն չէ, նրանք դասավորել են «անշունչ» սեռի մեջ: Այդ հիմունքով էլ հաճախ միևնույն առարկան դրվել է և՛ շնչավոր, և՛ անշունչ սեռերի մեջ: Այդ է պատճառը, որ միևնույն առարկայի, կամ մարդու մարմնի տարբեր անդամների անունները հաճախ հնդեվրոպական լեզուներում քերականական տարբեր սեռերի են պատկանում: Հին պատկերացումները փոխվելու հետևանքով վերացել է առարկաների սեռերի դասակարգման հին ըմբռնումը, բայց հնդեվրոպական մի շարք լեզուներում չեն վերացել սեռերի ձևական հատկանիշները»¹:

Սակայն սեռերի ձևական ցուցանիշները վաղուց են զրկվել որևէ իմաստից նույնիսկ այն լեզուներում, որոնց մեջ ձևականորեն խիստ սահմանազատված են սեռերը միմյանցից:

Հնդեվրոպական լեզուներում ընդհանրապես վերացել է երկակի թվի կատեգորիան, բայց որոշ լեզուներում պահպանվել են երկակի թվի վերջավորությունները իբրև հոգնակի ցույց տվող ածանցներ, օրինակ՝ սլավոնական լեզուների երկու, երեք, չորս թվականների հետ գործածվող արական սեռի անունների ուղղ. և հայց. հոլովների а (վերջավորությունը два, три карандаша, բայց пять карандашей) և այլն: Հայերենը կորցնելով երկակի թվի կատեգորիան՝ վերացրել է նաև երկակի թիվը հիշեցնող ամեն տեսակի վերջավորությունները:

Հայերենը պահպանել է հնդեվրոպական լեզուներին հատուկ հոլովները և այդ հոլովների քերականական իմաստները:

Ուղղական հոլովը, ինչպես հնդեվրոպական մյուս լեզուներում, հայերենում ևս հանդես է գալիս իբրև ենթակայի հոլով և ունի զրո վերջավորություն: Նա կարող է գործածվել նաև իբրև որոշիչ, իսկ

¹ Յմմտ. А. Мейе, Введение в срав. изуч. индоев. языков, էջ 205-206, 345-346:

անվանական նախադասությունների մեջ՝ իբրև ստորոգելիական վերադիր:

Հայցական հոլովը, որ եզակիում հաճախ ձևով նսասպում է ուղղական հոլովին, ցույց է տալիս ուղիղ խնդիրը: Այդ հոլովը նաև հնդեվրոպական մի շարք լեզուներում ձևով նմանվում է ուղղականին: Այդ հանգամանքը առիթ է տվել, որ որոշ լեզուներում հայցական հոլովի իմաստով գործածվի նաև ուղղական հոլովը: Այսպես, օրինակ՝ չեզոք սեռի ուղղական-հայցական հոլովը սանսկրիտերենում ունեցել է -at, հունարենում -on, լատիներենում -um, արական սեռի հայցականը՝ -am, on վերջավորությունները և այլն. սլավոնական լեզուներում իգական սեռի գոյականների մեջ արդեն տարբերվել են ուղղական և հայցական հոլովները իրենց ձևերով:

Հին հայերենում գոյական անունների եզակի ուղղականը և հայցականը միևնույն ձևն ունեին, թեև հայցականը կարող էր ընդունել նախդիրներ (q, h, g), իսկ ուղղականը՝ ոչ^{*}:

Շարժում, ուղղություն և ժամանակ նշելու համար հայցական հոլովը, ինչպես հնդեվրոպական մի շարք լեզուներում, նույնպես և հայերենում, ընդունում է նախդիրներ:

Սեռական հոլովը ամենից առաջ ցույց է տալիս ամբողջի և մասի հարաբերությունը, ապա հանդես է գալիս իբրև անջատում ցույց տվող հոլով, որը հնդեվրոպական մի շարք լեզուներում նույնացել է բացառականի հետ: Հայերենը պահպանել է այդ հոլովները իրենց հատուկ ձևերով: Սեռական հոլովը հայերենում հատկացուցչի հոլովն է. բայց նա կարող է ունենալ նաև մի շարք այլ նշանակություններ, որոնցից հատկապես կարելի է նշել նրա որոշի իմաստը, որը շատ հաճախված է գրաբարում, ինչպես՝ ծառայք ամպարշտութեան, ի կաքաւս լկտութեան և այլն: Սեռական հոլովը ունի բազմաթիվ այլ կիրառություններ (ենթակա և այլն), որոնք տարբեր ձևավորումներով են հանդես գալիս գանազան լեզուներում:

Տրական հոլովը հայերենում կարող է ցույց տալ հանգման անուղղակի խնդիր: Տրական հոլովը հնդեվրոպական լեզուներում ունեցել է

* ժամանակակից հայերենում ուղղականն ու հայցականը ձևով տարբերվում են անձի առումով գործածվող գոյականների հոլովման մեջ: Այդ տարբերությունները ստեղծվել են հետագայում, երբ առաջացել է անձի և իրի կատեգորիան: Հայցական հոլովի նախդիրների անկումը ժամանակակից հայերենում և բարբառներում բացատրվում է հենց այդ նոր կատեգորիաների համար հոլովական վերջավորությունների առաջացմամբ:

տարբեր ձևեր. սանսկրիտերենում՝ me, te, հունարենում՝ μοι, τοι, οί, որոնք արտահայտել են նաև սեռական հոլովը և ցույց են տվել պատկանելություն: Տրական հոլովը հայերենում ունի մի շարք ձևեր, որոնց մեջ կարելի է նշել նաև դերանունների մ հոլովակազմիչը: Տրական հոլովը ընդհանրապես չի ունեցել նախդիրներ: Միայն հայերենում, սլավոնական լեզուներում և սանսկրիտերենում նա գործածվում է նաև նախդիրներով:

Բացառական հոլովը ցույց է տալիս շարժման սկզբնավորումը, սկզբնական կետը կամ, ինչպես ընդունված է ասել՝ անջատման անուղղակի խնդիրը: Հնդեվրոպական մի շարք լեզուներում այդ հոլովը կազմվում է սեռականից՝ նախդիրների օգնությամբ: Հայերենում բացառական հոլովը ունի ի նախդիրը, բայց ոչ միշտ է որ իր վերջավորությամբ նույնանում է տրականի հետ: Հայերենի բացառականը ունի է (ե + յ) հոլովակազմիչը, որը, ինչպես նշել ենք, կապվում է հնդեվրոպական at-ի հետ:

Գործիական հոլովը ցույց է տալիս, թե ո՛ւմ կամ ի՞նչ միջոցով է կատարվում գործողությունը, հետևաբար նա ամենից առաջ հանդես է գալիս իբրև միջոցի անուղղակի խնդրի հոլով:

Հնդեվրոպական մի շարք լեզուներում գործիականը ուղեկցվում է նաև որևէ նախդրով. սլավոնական լեզուներում հաճախ հանդես է գալիս за, перед, над, под և այլ նախդիրներով: Հայերենում գործիականը շատ քիչ դեպքերում է ընդունում նախդիրներ (առ, ընդ, գ): Գործիական հոլովը հայերենում ունի իր հոլովակազմիչը՝ բ, ւ, վ, որը թեև իր համապատասխանություններն ունի հնդեվրոպական մի շարք լեզուների այդ հոլովի դրսևորումների մեջ, բայց իր ձևով ու արտահայտման եղանակներով հնարավոր է բացատրել միայն հայերենի զարգացման օրենքներով:

Ներգոյական հոլովը գրաբարում հատուկ վերջավորություն չունի, հետևաբար իբրև հատուկ հոլով չի ընդունվում. նա կազմվում է նախդրով: Նույն սկզբունքներով կազմվում են նաև մի շարք այլ հնդեվրոպական լեզուների ներգոյական կամ տրական հոլովները: Գրաբարում ներգոյական հոլովը ցույց է տալիս գործողության կատարման տեղը կամ ժամանակը: Ներգոյական հոլովը ժամանակակից հայերենում ունի իր վերջավորությունը՝ ում, որը ձևավորվել է հայերենի զարգացման ավելի ուշ շրջանում՝ տրական հոլովի անալոգիայով, հայերենի զարգացման նոր օրենքների հիման վրա:

Հայոց լեզվի հոլովների համակարգի այս համառոտ նկարագրությունից երևում է, որ հայերենի հոլովները իրենց հիմնական դրսևորումներով կապվում են հնդեվրոպական լեզուների հոլովական համակարգի հետ: Սակայն դրանով հանդերձ՝ հայերենը իր հոլովական համակարգով հանդես է գալիս իբրև հնդեվրոպական այնպիսի լեզու, որը զգալի չափով հեռացել է հնդեվրոպական հիմք-լեզվից և իր զարգացման ընթացքում ձեռք է բերել Նոր օրինաչափություններ, որոնցով էլ որոշվում են նրա հոլովական առանձնահատկությունները, հոլովական ձևերի բազմապիսի դրսևորումներն ու նրանց քերականական իմաստը:

3) ԳՐԱԲԱՐԻ ԽՈՆԱՐՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ա) ԲԱՅԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑԻՑ ԿԱԶՄԱԾ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Հայերենի բայերը հիմնականում կազմված են բայական իմաստ արտահայտող հիմքերից և այդ իմաստը կոնկրետացնող վերջավորություններից: Բայերի ժամանակները կազմվում են երկու՝ ներկայի և անցյալ կատարյալի խմբի հիմքերից, որոնք միայն ընդհանուր գծերով առնչվում են հնդեվրոպական մյուս լեզուների և հատկապես հնդեվրոպական հիմք-լեզվի բայերի հատկությունները համեմատաբար ավելի պահպանած հունարենի բայերի հետ: Հնդեվրոպական բայը բայական սեռերով տարբերակված չէր. միևնույն բայահիմքը կարող էր հանդես գալ և՛ անցողական, և՛ անանցողական իմաստներով: Հայերենում ընդհանրապես բայերը ունեն իրենց սեռերը: Սակայն կան բայեր, որոնք պահպանել են հնդեվրոպական հիմք-լեզվի բայերի՝ այդ հատկությունը և ընդհանուր ձևով արտահայտում են և՛ անցողական, և՛ անանցողական բայերի իմաստ: Այդ բայերը հայերենում կոչվում են հասարակ բայեր. հայերենի հասարակ սեռի բայերից են՝ դատել, խոստովանել, հաւանել, տանել, զգենուլ, սկսանել և այլն:

Հայերենի անցյալ կատարյալի հիմքը իր կազմությամբ և մասամբ նաև արտահայտած իմաստով տարբերվում է հնդեվրոպական մյուս լեզուների բայերի անցյալի հիմքից: Նա երբեմն նույնանում է բայարմատի հետ, երբեմն հանդես է գալիս հատուկ վերջավորությամբ,

որը հայերենի ինքնուրույն զարգացման արդյունք է:

Հայերենում մի շարք բայերի ներկայի և անցյալի հիմքերը կազմվում են տարբեր արմատներից: Այդ հանգամանքը, ինչպես նաև մի խումբ այլ բայերի մեջ կատարված հնչյունափոխությունները հիմք են տվել մի շարք լեզվաբանների՝ գրաբարի խոնարհման մեջ առանձնացնելու այսպես կոչված անկանոն կամ զարտուղի խոնարհման ենթարկվող բայեր: Մինչդեռ գրաբարի խոնարհման մեջ չկան անկանոնություններ, կամ խոնարհման ընդհանուր համակարգից տարբերվող, այսպես կոչված անկանոն ձևեր:

Հնդեվրոպական լեզուների հիմքերը տարբերվել են միմյանցից ո՛չ թե իրենց իմաստով, այլ վերջավորություններով: Ներկա են կոչվել այն բոլոր հիմքերը, որոնք սահմանական եղանակում ունեցել են և՛ սկզբնական, և՛ երկրորդական վերջավորությունները, իսկ անցյալը՝ նրանք, որոնք հիշված եղանակում ունեցել են միայն երկրորդական տիպի վերջավորությունները: Սակայն հնդեվրոպական լեզուների որոշ կարգի բայեր սկզբնական շրջանում անցյալի հիմք չեն ունեցել: Այդ կարգի բայերի անցյալի հիմքը ստեղծվել է տարբեր լեզուներում սրանց զարգացման ներքին օրենքներով, այդ պատճառով էլ այդպիսի հիմքերը տարբեր դրսևորումներ ունեն հնդեվրոպական ընտանիքի մեջ մտած լեզուներում, օրինակ՝ հայերեն՝ յուսամ-յուսացայ, խօսիմ-խօսեցայ, լատիներեն՝ planto (տնկում եմ)-plantavi (տնկեցի), գոթերեն՝ salbo (ներկում եմ, յուղում եմ)-salboda (ներկեցի, յուղեցի) և այլն:

Հնդեվրոպական լեզուների բայերի զրո վերջավորություն ունեցող հիմքերի (ներկայի և անցյալի) իմաստները կապված են այդ հիմքերի միավանկության ու երկվանկության և նրանցից աթեմատիկ կամ թեմատիկ տիպի բայեր կազմվելու հետ: Եթե արմատը ցույց է տալիս շարունակական գործողություն, սահմանական եղանակում ստանում է և՛ սկզբնական, և՛ երկրորդական վերջավորություններ, ինչպես հունարենում, որի նման բայերի հիմքի սկզբնական վերջավորությունն է $\mu\iota$, երկրորդականը՝ v և a : Եթե բայի արմատը ցույց է տալիս չերկարածվող գործողություն, հիմքում ընդունում է միայն երկրորդական տիպի վերջավորություններ: Հայերենում այդպիսի տարբերություններ չեն պահպանվել, թեև հայոց լեզվի որոշ բայեր ունեն այնպիսի ձևեր, որոնք կապվում են հնդեվրոպական լեզուների հիշված տիպի բայերի հետ:

Այսպես, օրինակ՝ հայերենի **ուտել**, **գալ** բայերից կազմվում են միայն ներկայի հիմքի ժամանակներ, իսկ անցյալի հիմքերը տարբեր արմատներից են կազմվում, ինչպես՝ ուտե-եկեր. գայ-եկն և այլն: Սակայն անցյալի հիմքերի նման ձևերը հանդես են գալիս միայն հայերենում, հնդ-իրանական լեզուներում ու հունարենում և ոչ թե հնդեվրոպական բոլոր լեզուներում: Այդ հանգամանքը նույնպես ցույց է տալիս, որ անցյալ կատարյալի կազմությունը հնդեվրոպական լեզուներում ունեցել է տարբեր դրսևորումներ, որոնք պայմանավորված են կոնկրետ լեզուների ինքնուրույն զարգացմամբ:

Յնդեվրոպական լեզուների բայերի ներկայի և անցյալի հիմքերը կարող են կազմվել նաև կրկնությամբ և զրո վերջավորությամբ: Այդ ձևով բայերի հիմքեր չեն կազմվում հայերենում, եթե նկատի չունենանք **առնել** բայի անցյալ կատարյալի **արար** հիմքը, որը կազմված է **ար** արմատի կանոնավոր կրկնությամբ: Այդպիսի երևույթ նկատելի է նաև հունարենում, ինչպես՝ *αρ-αρειν* (հարմարեցնել, սարքել), սանսկրիտերենում, ինչպես՝ *car-karmi* (կոչում եմ, հռչակում եմ, փառաբանում եմ) և այլն:

Յնդեվրոպական բոլոր լեզուներն էլ իրենց զարգացման ընթացքում ձեռք են բերել այնպիսի ձևեր, որոնք հատուկ չեն եղել հիմք-լեզվին: Սակայն դրան զուգընթաց այդ լեզուները փոխել են հիմք-լեզվի վերջավորությունները: Հաճախ որևէ լեզվում քերականական այս կամ այն իմաստն արտահայտող ձևը մի այլ լեզվում արտահայտել է քերականական այլ իմաստ, այսպես, օրինակ՝ **ske/o* ածանցով հնդեվրոպական մի շարք լեզուներում կազմվում է ներկայի, իսկ հայերենում անցյալի հիմքը, կամ սլավոնական լեզուներում, հայերենում և գերմաներենում **ne/o* վերջածանցով կազմվում է ներկայի հիմքը, ինչպես՝ դնեմ (դի+նեմ), լքանեմ (լիքե հիմքից), հին սլավոներեն *стану-ста* հիմքից, իսկ մի շարք լեզուներում այդ ածանցը հանդես է գալիս այլ իմաստներով և այլն:

Յնդեվրոպական մի շարք լեզուներ ունեն միևնույն քերականական իմաստը արտահայտող տարբեր ձևեր: Հիշված երևույթները ցույց են տալիս, որ այդ լեզուները ծագումնաբանորեն միմյանց հետ առնչակցվելով հանդերձ՝ իրենց զարգացման ընթացքում ձեռք են բերել զարգացման նոր օրենքներ և ձևափոխվել ու կատարելագործվել են այդ նոր օրենքների համաձայն: Քերականական այդ նոր երևույթների ամփայլությամբ էլ բացատրվում են յուրաքանչյուր լեզվի

գոյությունը և նրա որակական փոփոխությունները՝ լեզուն կրող ժողովրդի պատմության տարբեր շրջաններում :

բ) ԽՈՆԱՐԻՄՈՒՄ

Գրաբարի բայերի ներկան բնութագրվում է բայելի, սերկայի հիմքի վերջավորություններով, որոնք չորսն են՝ **ե, ի, ա, ու**: Հիմքի այդ ձայնավորներով էլ, որոնք կոչվում են խոնարհիչներ, բայերը բաժանվում են խոնարհումների. այսպես, օրինակ՝ բեկանեմ (կատ. բեկի), բերեմ (կատ. բերի), խօսիմ (կատ. խօսեցայ), յուսամ (կատ. յուսացայ), առնում (կատ. առի) և այլն: Հայերենի խոնարհիչները -լ հնչյունի հետ, որը ծագումնաբանորեն կապվում է հնդեվրոպական -լօ վերջածանցի հետ, կազմում են անորոշ դերբայի վերջավորություններ: Հայերենի անորոշ դերբայները գործածվում են նաև անվանաբար և կանոնավորապես հոլովվում են **n** հոլովմամբ: Նրանց այդ հատկությունից երևում է, որ անվանական հիմքերից ևս կազմվել են բայական հիմքեր, որոնք հետագայում տարբեր արտահայտություններ են ստացել հնդեվրոպական լեզուներում: Հայերենի դերբայները ընդհանրապես իրենց բայական բազմազան առումներով և ձևերով ավելի ուշ շրջանի գոյացումներ են. օրինակ՝ հիշենք ապառնի դերբայը, որը գոյացել է անորոշ դերբայից **ոց** և **ի** մասնիկներով: Այս երևույթը ավելի ցայտուն է արտահայտվում բարբառներում և ժամանակակից հայերենում:

Հայերենի բայերի ներկայի հիմքից կազմվում են սահմանական եղանակի ներկան, անցյալ անկատարը, ստորադասական եղանակի առաջին ապառնին, հրամայական եղանակի արգելական ձևը և անորոշ ու ապառնի դերբայները: Իսկ անցյալ կատարյալի հիմքից կազմվում են սահմանական եղանակի անցյալ կատարյալը, ստորադասականի երկրորդ ապառնին, հրամայական եղանակի հաստատական ձևը, հորդորական հրամայականը (ապառնի հրամայականը) և անցյալ ու ենթակայական դերբայները:

Հայերենի անցյալի հիմքը, ինչպես նշել ենք, իր հիմնական դրսևորումներով ունի ինքնուրույն կազմություն: Ամենից առաջ նա տարբերվում է հնդեվրոպական շատ լեզուների անցյալի հիմքից իր **ց**-ով (ցոյական բայերի մեջ): Այդ ածանցը թեև կապվում է հնդեվրոպական *ske/o վերջածանցի հետ, բայց իր իմաստով ու գործածությամբ

տարբերվում է նրանից՝ նա գոյացել է հայերենի զարգացման ներքին օրինաչափություններով, հավանաբար հայ ժողովրդի էթնիկական լեզվի ձևավորման շրջանում, որովհետև հենց հայ ժողովրդական լեզվի զարգացման հիմնական առանձնահատկություններով էլ բացատրվում է նրա գոյությունը՝ հսկ հայերենի հիմնական առանձնահատկությունները՝ քերականությունն ու բառային հիմնական ֆոնդը այդ շրջանում ձևավորվում են, ինչպես արդեն նշել ենք, հայ ժողովրդի կազմավորման մեջ իշխող դեր կատարող ցեղախմբի ընդհանուր լեզվի հիման վրա՝ Այս ենթադրության ճշտության օգտին են վկայում խեթերենի տվյալները և կոնկրետ *ske/o վերջածանցի համապատասխանությունները խեթերենում՝ Այդ վերջածանցը հնդեվրոպական մի շարք լեզուներում, որոնց թվում նաև խեթերենում, կազմել է բայերի կատարյալ կերպի ներկան՝ Այսպես, օրինակ՝ խեթերենի մի շարք բայերի եզակի և հոգնակի թվերի երրորդ դեմքի *škizi* և *škanzi* վերջավորությունների մեջ պարզ կերպով պահպանվել է հնդեվրոպական հիշյալ ածանցը՝ Հայերենում այդ ածանցը նոր ձևավորումը ստացել է հավանաբար այն ժամանակ, երբ խեթերենը որևէ դեր չէր կարող կատարել երբեմնի ցեղերի լեզուների մեջ, որոնք արդեն ձևավորվում էին իբրև ժողովրդական լեզուներ՝ Այնուհետև հայերենում անցյալ կատարյալի **ց**-ածանցի հանդես գալը կապված էր հայերենի զարգացման այնպիսի օրինաչափությունների հետ, որոնք շատ կենսունակ էին և կապված էին ընդհանրապես հայերենի հեռանկարների հետ՝ Այդ է պատճառը, որ անցյալ կատարյալի նման կազմությունը հայերենում ոչ թե գնալով վերանում, այլ տարածվում է և գրաբարում դեռևս պահպանված մի շարք ձևեր, որոնք հիշեցնում էին հնդեվրոպական լեզուներին հատուկ դրսևորումները, կամաց-կամաց տեղի են տալիս անցյալ կատարյալի նման կազմության առաջ և մոռացվում են՝ Մեր լեզվի զարգացման հետագա շրջաններում և բարբառներում իշխող է դառնում ցոյական անցյալ կատարյալը, որը գրաբարում հանդես էր գալիս բայերի կանոնավոր խոնարհման մեջ, ինչպես՝ գրեմ-գրեաց, կարդամ-կարդաց, գործեմ-գործեաց, իմանամ-իմացայ և այլն՝ Հայերեն անցյալ կատարյալի **եա** վերջավորությունը նույնպես կազմվել է հայերենի օրինաչափություններով, թեև ծագում է հնդեվրոպական *is* ձևից

Հայերենի բայերի ներկայի հիմքից կազմված բոլոր ժամանակներում հանդես է գալիս բայափիմքը համապատասխան դեմքերի

վերջավորություններով Հայերենում բայերի խոնարհումը կազմվում է միայն վերջավորություններով Հնդեվրոպական բայի ծայնավորների հերթագայության և տոնի տեղի փոփոխման միջոցները հայերենի խոնարհման մեջ որևէ նշանակություն չունեն

գ) ԲԱԶԱԿԱՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հնդեվրոպական մի շարք լեզուներում բայական վերջավորությունները մի քանի խմբերի են բաժանվել՝ ներգործական և չեզոք սեռի բայերը ունեցել են տարբեր վերջավորություններ՝ բացի դրանից, այդ վերջավորությունները բաժանվել են սկզբնական և երկրորդական խմբերի Այսպես, օրինակ՝ հունական և հնդ-իրանական լեզուներում վերջավորությունները սահմանվում են բայերի ներգործական և չեզոք սեռերը, սկզբնական և երկրորդական վերջավորությունները, դեմքերը, թվերը որոշելու դեպքում միայն Անցյալի և ներկայի բայական վերջավորությունները տարբերվում են նաև աթեմատիկ և թեմատիկ տիպերի մեջ և այլն

Այդ բազմազանությունները չկան հայերենում Բայց հայերենի տարբեր ժամանակները ունեն իրենց հատուկ վերջավորությունները, որոնք կապվում են հնդեվրոպական լեզուների բայերի առանձին վերջավորությունների հետ

ՆԵՐԿԱՅԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի սահմանական ներկայի եզակի թվի վերջավորություններն են 1-ին դեմքում՝ **մ**, 2-րդ դեմքում՝ **ս**, 3-րդ դեմքում՝ **յ**, որոնք ծագում են հնդեվրոպական բայի սկզբնական տիպի համապատասխան դեմքի վերջավորություններից

Առաջին դեմքի **մ**-ն ծագում է հնդեվրոպական բայի առաջին դեմքի **-*m-**ից, որը վկայված է սանսկրիտերեն՝ *ás-mi* «կամ», «եմ», հունարեն՝ *εἰμι*, խեթերեն՝ *eš-mi*, հին սլավոներեն՝ *есмь*, գոթերեն՝ *im*, ալբաներեն՝ *am* ձևերով և այլն

Երկրորդ դեմքի **ս**-ն՝ երկրորդ դեմքի ***si-**ից, որը պահպանված է հնդեվրոպական մի շարք այլ լեզուներում, ինչպես սանսկրիտերեն՝ *é-si* «գնում ես», խեթերեն՝ *kuesi* «խփում ես» և այլն

Երրորդ դեմքի **յ**-ն՝ հնդեվրոպական ***-ti** երրորդ դեմքի վերջա-

վորութիւնից, որը վկայված է սանսկրիտերէն ás-ti «կա», «է», գոթերէն is-t, լատիներէն es-t, հունարէն εσ-τι, հին ռուսերէն ec-тъ ձևերով և այլն: Հայերէն **ել**, **ուլ** և **իլ** խոնարհման մեջ սահմանական եղանակի եզակի երրորդ դեմքը ունի **է**, **ու**, **ի** արտահայտութիւնները, որոնք իրենց մեջ պարունակում են **յ**-ն, այդ պատճառով էլ **յ** հնչյունը նրանցից հետո չի գրվում: **Ու**-ն և **է**-ն, ինչպես տեսել ենք, երկբարբառներ են, որոնցից առաջինը կազմված է **ո** և **ւ**, իսկ երկրորդը՝ **ե** և **յ** հնչյուններից, որոնցից երկրորդում արդեն առկա է **յ** հնչյունը, իսկ առաջինում, ինչպես նաև **ի**-ով վերջացող բայերում, **յ**-ն ընկնում է, որովհետև նա հնչյունակից է **ի**-ին և **ւ**-ին,

Հայերենի եզակի երրորդ դեմքի **յ**-ն կամ **է**-ն (**ե** + **յ**) առաջացել է հավանաբար այն շրջանում, երբ դեռևս չէր կազմավորվել հայոց եթնիկական լեզուն, որովհետև հայերենում **է**-ի փոխանցումը **յ**-ի օրինաչափ երևույթ չէր ո՛չ միայն հինգերորդ դարում, այլև դրանից դեռ շատ առաջ, նույնիսկ պարսկերենից կատարված հնագույն փոխառութիւնների շրջանում:

Հայերենի ներկայի համապատասխան դեմքերի հոգնակիները կազմվում են միայն հայերենին հատուկ սկզբունքներով: Առաջին և երկրորդ դեմքի հոգնակիները կազմվում են եզակիի համապատասխան դեմքերին **ք**, իսկ երրորդ դեմքին **ն** ավելացվելով: Այդ հոգնակի վերջավորութիւններից միայն երրորդ դեմքի **ն**-ն վկայված է հնդեվրոպական մյուս լեզուներում՝ համապատասխան ձևերով, ինչպես՝ սանսկրիտերէն s-ánt-i «են», հունարէն ἐντι, գոթերէն՝ sind և այլն:

ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի սահմանական եղանակի անցյալ անկատարի եզակի թվի վերջավորութիւններն են՝ **-յի**, **-յիր**, **-յր**, որոնք կազմված են հայերենի զարգացման օրենքներով: Հնդեվրոպական ոչ մի լեզու չի պահպանել անցյալ անկատարի դեմքերի նման վերջավորութիւնները: Հայերենի այդ վերջավորութիւնները կան հնդեվրոպական լեզուներում տարբեր իմաստներով և տարբեր ժամանակների համար գործածված: Այսպես, օրինակ՝ չեզոք սեռի բայերի անցյալի առաջին դեմքի վերջավորութիւնը որոշ լեզուներում **-*ai** է, որը հնչյունափոխությամբ կարող է տալ **-ի**. լատիներէնում պահպանված է անցյալի առաջին դեմքի **-ի** վերջավորութիւնը. ինչպես՝ tutud-i «ես խփեցի»,

հին սլավոներենում *вед-е* «իմանում եմ» և այլն Հայերենի անկատարի առաջին դեմքի **ի**-ն կամ **ա**-ն պահպանվում են մնացած բոլոր դեպքերում հնչյունափոխությամբ կամ առանց հնչյունափոխության

Երկրորդ դեմքի **իր** վերջավորության համապատասխան ձևերը պահպանված են մի շարք հնդեվրոպական լեզուներում, օրինակ՝ բրետոներենում կան *-ir, -ar, -er* վերջավորությունն ունեցող բայեր, որոնց դեմքը որոշվում է համապատասխան դերանուններով՝ հին իռլանդերենում կրավորական սեռի երրորդ դեմքի որոշ բայեր ունեն *-ir* վերջավորություն և այլն *-ir, -er* վերջավորությունները մենք տեսնում ենք նաև հայերենում, այն էլ և՛ անցյալ անկատար, և անցյալ կատարյալ ժամանակներում Այդ վերջավորությունը երևում է նաև լատիներենում և այլ լեզուներում Սակայն այդ բոլոր վկայությունները միայն կարող են ցույց տալ, որ հայերենի անցյալ անկատարի 2-րդ և 3-րդ դեմքերի **ր**-ն հնդեվրոպական ծագում ունի, բայց ոչ երբեք պարզել հայերենի անկատարի կազմության հանգամանքները Անկատարի հոգնակին կազմվում է ընդհանուր սկզբունքով եզակի համապատասխան դեմքերին ավելացվում են **ք** և **ն** հոգնակի վերջավորությունները, որոնցից առաջ ընկնում է երկրորդ և երրորդ դեմքերի **ր**-ն և պահպանվում է առաջին դեմքի *-*ai* վերջավորության **ա**-ն՝ առաջին և երկրորդ դեմքերը միմյանց հետ չփոխելու համար Հոգնակի վերջավորությունները այդ ձևերի մեջ հանդես են գալիս նաև իբրև դեմքերի վերջավորություններ

ԱՌԱՋԻՆ ԱՊԱՌՆՈՒ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի **ե** խոնարհման բայերի ստորադասական եղանակի առաջին ապառնու եզակի թվի առաջին դեմքի վերջավորությունն է **իցեմ**, երկրորդինը՝ **իցես**, երրորդինը՝ **իցէ**. **ի** խոնարհման բայերինը՝ **իցիմ**, **իցիս**, **իցի**. **ա** խոնարհմանը՝ **այցեմ**, **այցես**, **այցէ ու** խոնարհմանը՝ **ուցում**, **ուցուս**, **ուցու**

Այդ ժամանակի, ինչպես նաև գրաբարի բայերի մյուս ժամանակների հոգնակները կազմվում են համապատասխան դեմքերին **ք** և **ն** հոգնակի վերջավորություններ ավելացվելով, ինչպես՝ գրիցեմ, գրիցես, գրիցէ, գրիցեմք, գրիցեք, գրիցեն, խօսիցիմ, խօսիցիս, խօսիցի, խօսիցիմք, խօսիցիք, խօսիցին, աղայցեմ, աղայցես, աղայցէ, աղայցեմք, աղայցեք, աղայցեն, հեղուցում, հեղուցուս, հեղուցու, հեղու-

ցումք, հեղուցուք, հեղուցուն:

Ստորադասական եղանակի առաջին ապառնու դեմքերի վերջավորությունները բարդ կազմություն ունեն. նրանք կազմված են սահմանական եղանակի ներկա ժամանակի համապատասխան դեմքերի վերջավորություններից և **ց** մասնիկից, որից առաջ հանդես եկած **ա, ե, ի, ու** ձայնավորները համապատասխան բայերի լծորդներն են: Այդ **ց** մասնիկը, մեր կարծիքով, կապված է երկրորդ ապառնու **ց**-ի հետ, որի ծագման մասին արդեն խոսել ենք:

ԱՆՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի անցյալ կատարյալի հիմքը, մի կողմից՝ պահպանել է հնդեվրոպական լեզուների այդ հիմքին հատուկ որոշ գծեր և, մյուս կողմից՝ այնքան հեռացել նրանցից, որ դժվար է որևէ նմանություն տեսնել նրանց մեջ: Հնդեվրոպական լեզուների անցյալի հիմքի հատկությունները պահպանվել են պարզ կամ արմատական հիմքերի մեջ, որոնք, պետք է ասել, գրաբարի բայերի գերակշիռ մասը չեն կազմում: Իսկ բաղադրյալ հիմքերը իրենց կազմությամբ, ինչպես արդեն ասել ենք, տարբերվում են հնդեվրոպական լեզուների բայերի անցյալի հիմքից և լինում են ցոյական կամ **ի** բաղադրիչ ունեցող հիմքեր: Օրինակ՝ արմատական հիմքեր. բեկանել-բեկ, թողուլ-թող, հասանել-հաս, հատանել-հատ. բաղադրյալ հիմքեր. սիրել-սիրեաց, աղալ-աղատց երկնչիլ-երկի, զարթնուլ-զարթի և այլն:

Բաղադրյալ-ցոյական են **ե, ի** խոնարհման պարզ և **ա** խոնարհման պարզ և ածանցավոր բայերի անցյալի հիմքերը. **ի** բաղադրիչ ունեցող հիմք ունեն **ի** խոնարհման **նչ ու չ, և ու** խոնարհման **ն** ածանց ունեցող բայերը¹:

Անցյալ կատարյալի դեմքի վերջավորություններն են՝ եզակի առաջին դեմքում **ի, ալ**, երկրորդում՝ **եր, ար**, երրորդում՝ զրո կամ **ալ**: Արմատի հետ նույնացող անցյալ կատարյալի հիմքերը եզակի երրորդ դեմքում ունեն զրո վերջավորություն և մեծ մասամբ միավանկ են, ինչպես դնեմ-եդ, տամ-ետ, լքանեմ-լիք, ըմպեմ-արբ, հատանեմ-հատ, թողում-թող և այլն: Արմատի հետ նույնացող բայերի անցյալ կատարյալի հիմքը և ներկայի հիմքը հաճախ տարբեր արմատներից

¹ Ընդհանուր եզրակացություններ անելիս մենք նկատի չենք ունեցել բացառությունները:

են, ինչպես՝ ուտեմ-կեր, գամ- եկ և այլն:

Առաջին դեմքի **ի, յ** վերջավորությունը հավանաբար կապ ունի հնդեվրոպական բայի չեզոք սեռի անցյալի առաջին դեմքի *-*ai* վերջավորության հետ, որը վկայվել է հունարենում՝ *τιθε-μ-αι* «դարսում եմ (ինձ համար)», սանսկրիտերենում՝ *tutud-é* «ես հրեցի», լատիներենում՝ *tutud-i* «ես խփեցի», հին սլավոներենում՝ *вед-е* և այլ բայերի մեջ: Հայերենում ձայնավորներից հետո **ի-ն** դարձել է **յ**: Հայերենի չեզոք սեռի բայերի անցյալի առաջին դեմքի **այ** վերջավորությունը խոսում է այդ ենթադրության օգտին: Այդ վերջավորությունը պահպանվել է նաև սահմանական եղանակի անկատարի առաջին դեմքում:

Երկրորդ դեմքի **-ր** վերջավորությունը, ինչպես արդեն ասել ենք, հանդես է գալիս մի շարք ժամանակներում և վկայված է հնդեվրոպական մի շարք լեզուներում՝ տարբեր իմաստներով ու կիրառությամբ: Դժվար է այդ բոլորը հանել միևնույն ձևից, կամ տարբեր դեմքերում հանդես եկած **ր-ն** համարել միևնույն վերջավորության հետագա ձևափոխություններ: Բայց հայերենում անցյալ անկատարի երկրորդ և երրորդ, անցյալ կատարյալի երկրորդ դեմքերի **ր-** վերջավորությունները, եթե նույնիսկ ծագումով նույնը չլինեն, իրենց ֆունկցիայով ու գոյացմամբ կապված են միմյանց հետ: Հնդեվրոպական մի շարք լեզուների բայերի այսպես կոչված երկրորդական վերջավորությունների մեջ իբրև երկրորդ դեմքի ցուցիչ հանդես է գալիս *-re*, որը ենթադրվում է *-*se*-ից առաջացած, ինչպես լատիներեն *seque-re* «հետևիր» բառի *re* վերջավորությունը: Սակայն լատիներենում և ընդհանրապես հնդեվրոպական այլ լեզուներում այդ **ր-ն** հանդես է գալիս տարբեր ժամանակներում և քերականական տարբեր իմաստներով, օրինակ՝ լատիներեն *sequi-tu-r* «հետևում է», ումբրերեն՝ *her-te-r* «ուզում է», օսկերեն *sakara-te-r* «լուսավորվում է», սանսկրիտերեն *çe-re* «պառկում են», հին իռլանդերեն՝ *bertir* «նրանց տանում են» և այլն: Բերված օրինակները ցույց են տալիս, որ **ր-ն** ունեցել է մի շարք իմաստներ և տարածված է հնդեվրոպական շատ լեզուներում: Հայերենում նա հանդես է գալիս անցյալ անկատարի եզակի թվի երկրորդ, երրորդ դեմքերում, անցյալ կատարյալի երկրորդ դեմքում և հրամայականի եզակիում՝ բոլոր դեպքերում էլ որոշակի իմաստներով:

Երրորդ դեմքի **ւ-ն** ծագում է հնդեվրոպական բայի անցյալի եզակի երրորդ դեմքի *-*u* (**w*) վերջավորությունից, որը պահպանված

Ե խեթերենում, սանսկրիտերենում, լատիներենում և այլն, օրինակ՝ սանսկրիտերեն *jajna*՝ «նա (ես) իմացա», լատիներեն՝ *novi* (**ի**-ի ավելացմամբ), *posui* (**ի**-ի ավելացմամբ) «նա (ես) իմացա», թոխարերեն՝ *prakwa* (**ա**-ի ավելացմամբ) «նա հարցրեց» և այլն: Հնդեվրոպական լեզուների այդ և վերջավորությունը, որը պահպանված է հայերենի չեզոք և կրավորական իմաստ ունեցող բայերի անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքում իբրև դեմքի վերջավորություն, չի կարելի համարել ոչ հնդեվրոպական և կապել ազիանիկ կամ կովկասյան լեզուների ոչ հնդեվրոպական տարրերի հետ:

Հայերենի անցյալ կատարյալի դեմքերի վերջավորությունները հանդես են գալիս երկու տարբերակներով՝ **ի, եր,**– և **այ, ար, աւ**. առաջին տիպի վերջավորություններով կազմվում է ներգործական սեռի, իսկ երկրորդներով՝ գլխավորապես չեզոք և կրավորական սեռերի բայերի անցյալ կատարյալը. օրինակ՝ հատի, հատեր, հատ, բնակեցայ, բնակեցար, բնակեցաւ և այլն:

Հայերենի անցյալ կատարյալի հոգնակին կազմվում է ընդհանուր հիմունքներով՝ առաջին և երկրորդ դեմքերին **ք**, իսկ երրորդին՝ **և** ավելացնելով, օրինակ՝ հատաք, հատեք, հատին, խօսեցաք, խօսեցայք, խօսեցաւ:

Հայերենի անցյալ կատարյալը հիմնականում կազմվել է հնդեվրոպական լեզուների անցյալ կատարյալի կազմության օրինաչափությունների հետ կապ չունեցող օրենքներով: Ամենից առաջ պետք է նշել, որ հնդեվրոպական լեզուներում եզակի երրորդ դեմքի *ս, w* վերջավորությանը ավելացել են ձայնավոր կամ բաղաձայն հնչյուններ, իսկ հայերենում այդ ձայնավորը փոխել է իր սկզբնական արտասանությունը և առանց որևէ բացառության դրվել է **ա** ձայնավոր հնչյունից առաջ, որը հայերենի բայերին հաղորդել է չեզոք իմաստ: Կարծում ենք, որ երրորդ դեմքերի **ի** և **է** ձայնավորները, չեզոք և կրավորական սեռի բայերում փոխվել են **ա**-ի, որը պահպանվել է նաև անցյալի հոգնակի առաջին դեմքում նույնությամբ, իսկ մյուս դեմքերում՝ հնչյունափոխությամբ:

Հայերենի բայերի զարգացման հետագա ընթացքը ընդհանրապես ավելի է պարզեցրել խոնարհման համակարգը և վերացրել է այն բազմազանությունները, որոնք արտահայտվում էին գրաբարի հատկապես խոնարհիչների և առանձին ժամանակների վերջավորությունների տարբեր ձայնավորների պահպանման մեջ: Ժամանա-

կակից հայերենում, օրինակի համար, եզակի առաջին ու երկրորդ դեմքի և հոգնակի բոլոր դեմքերի մեջ հանդես է գալիս **ի**, որը միայն եզակի առաջին դեմքում է պահպանել իր քերականական իմաստը՝ դեմքի ցուցիչ լինելու հատկությունը:

Ժամանակակից հայերենում չի պահպանված գրաբարի անցյալ կատարյալի միավանկ արմատների **ե** ածականը: Այդ **ե** ածականը, որը վկայված է միայն հնդ-իրանական լեզուներում, հայերենում և հունարենում, դրվել է սահմանական եղանակի այն բայաձևերի վրա, որոնք ունեցել են միայն երկրորդական կարգի վերջավորություններ: Հայերենում այդ ածականը դրվել է միայն անցյալ կատարյալի երրորդ դեմքի միավանկ բառերի, իսկ տալ և դնել բայերի նաև այլ դեմքերի վրա: Ինչպես՝ տամ-ետ, դնեմ-եդ, բերեմ-եբեր, հատանեմ-եհատ և այլն: Այս ածականի վերացումը հայերենում կապված է այն նոր օրինաչափությունների հետ, որոնք որոշում էին հայոց լեզվի զարգացման ընդհանուր տեղեկեցները: Գրաբարում այդ ածականը որևէ անհրաժեշտություն չէր ներկայացնում. նա կարող էր դրվել և չդրվել բայերի վրա, եթե միայն բայի արմատը մի հնչյունից կազմված չէր: Այդպիսի բայերի (եդ, ետ) մեջ **ե**-ն հանդես է գալիս իբրև անհրաժեշտություն: Հայերենի զարգացման հետագա շրջաններում, երբ համարյա թե վերացան բայերի խոնարհման այսպես կոչված զարտուղի ձևերը, որոնք, ինչպես նշել ենք արդեն, կապված էին հին, ոչ կենսունակ օրենքների հետ, վերացան նաև այդ օրենքները հիշեցնող քերականական ձևերը: Այդ փաստերը ցույց են տալիս, որ յուրաքանչյուր լեզու իր զարգացման ընթացքում ձեռք է բերում նոր օրինաչափություններ, որոնք հանդես են գալիս հենց այդ լեզվի զարգացման հին օրենքներին հակառակ դրսևորումներով, քերականական հին ձևերը նորերով փոխարինելու միտումներով: Սակայն այդ բոլորը ոչ թե կատարվում է հինը միանգամից բացառելու, այլ կամաց-կամաց նրա տեղը գրավելու ճանապարհով: Այդ պատճառով էլ հին օրենքներն արտացոլող քերականական շատ կանոններ երկար ժամանակ պահպանվում են քարացած, նոր օրենքներով չբացատրվող ձևերով: Քերականական այդպիսի կանոններից մեկը եղել է գրաբարի **ե** ածականը, որը դեռևս պահպանվում էր մեր լեզվում մինչև միջին դարերը, թեև քերականական որևէ իմաստ չէր արտահայտում:

Ստորադասական եղանակի երկրորդ ապառնու վերջավորություններն են եզակիում՝ -ից, -ցես, -ցէ, -յց, -ցիս, -ցի, հոգնակիում՝ ցուք, ջիք, ցեն-ցին: Այս վերջավորություններից պարզ երևում է, որ այս և առաջին ապառնու վերջավորությունների մեջ բոլոր դեմքերում հանդես է գալիս **ց**, որը երկրորդ ապառնու առաջին դեմքում ցույց է տալիս նաև դեմքը: Այդ **ց**-ն կա նաև անցյալ կատարյալի ցոյական բայերում: Այդ **ց**-ն, որը, ինչպես ասված է արդեն, կապվում է հին *-*ske/o* ածանցի հետ, հայերենում ունի տարբեր իմաստներ, որոնք հիշված բոլոր ժամանակներում արտահայտվում են հատուկ վերջավորություններով: Երկրորդ ապառնու իմաստ են արտահայտում բայերը այն ժամանակ, երբ ստանում են ցոյական բայերում երկրորդ **ց**, իսկ ոչ ցոյականներում միայն **ց** ածանցը և դեմքերի համապատասխան վերջավորությունները, օրինակ՝ **գրեցից, գրեսցես, գրեսցէ, հատից, հատցես, հատցէ** և այլն: **Գրել** բայի մեջ երկու **ց** լինելու հետևանքով եզակի երկրորդ և երրորդ, իսկ հոգնակի բոլոր դեմքերում անցյալի **ց**-ն տարևմտալեզուներում դառնում է **ս** (գրեսցես, գրեսցուք): այդպես նաև բոլոր ցոյական բայերում: Բացառություն են կազմում միայն միավանկ ցոյական բայերը, ինչպես նաև այն բայերը, որտեղ **ց**-ն արմատական է, ինչպես՝ կեցից-կեցցես-կեցցէ, անցից-անցցես-անցցէ, խցից-խցցես-խցցէ և այլն:

Երկրորդ ապառնու երկրորդ և երրորդ դեմքերի և սահմանական եղանակի ներկա ժամանակի համապատասխան դեմքերի վերջավորությունները նույնանում են. ինչպես՝ գր-ես – գրես-ց-ես, գր-է – գրես-ց-է, գր-եք, գրես-ջիք, գր-են – գրես-ց-են և այլն:

Եզակի առաջին դեմքը չի պահպանել իր վերջավորությունը, որ հավանաբար եղել է **օ**, որը հանդես է գալիս հոգնակի առաջին դեմքում հնչյունափոխությամբ, ինչպես՝ **գրեցից-ը** (գրեցից-օ ձևից) հոգնակիում տալիս է **գրեսցուք**, որը առաջացել է **գրեցի-go>ուք** սկզբնական ձևից:

Դեմքի այդ **օ** վերջավորությունը պահպանված է հնդեվրոպական որոշ լեզուներում, օրինակ՝ հունարեն *φεω* «բերում եմ», *διαφεω* «տարբերվում եմ», հունարեն՝ *fero* և *differo* բառերի մեջ օ-ն դեմքի ցուցանիշն է: Այդ վերջավորությունը, ինչպես երևում է երկրորդ ապառնու հոգնակի առաջին դեմքի **ցու**-ք վերջավորությունից,

մի ժամանակ եղել է նաև հայերենում, բայց հետագայում ընկել է, այդ պատճառով էլ եզակի առաջին դեմքի **g**-ն արտահայտել է նաև դեմքի ֆունկցիա:

Յոգնակի երկրորդ դեմքի **ջ**-ն, որը հանդես է գալիս նաև հրամայականի ապառնիում, կապվում է հնդեվրոպական մի շարք լեզուներում պահպանված երկրորդ դեմքի **-*dhi** վերջավորության հետ, օրինակ՝ սանսկրիտերեն *vid-dhi* «իմացիր», հունարեն *ιδει* «եղիր» և այլն: Յնդեվրոպական **-*dhi** ածանցի փոխանցումը հայերեն **ջ**-ի կատարվել է այն շրջանում, երբ դեռևս չէին կայունացել հայերենի խոնարհման համակարգի շատ դրսևորումներ: Իսկ երբ հայերենը հանդես է գալիս իբրև զարգացման նոր որակ ձեռք բերած լեզու, այսինքն, երբ դառնում է հայ ժողովրդի ընդհանուր էթնիկական լեզուն, արդեն ուներ նոր օրենքներ, որոնցով չէր կարելի պարզել **-*dhi** **ջ**-ի փոխանցման պրոցեսը:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի հրամայականը կազմվում է երկու հիմքից՝ ներկայի և անցյալի: Ներկայի հիմքից կազմված հրամայականը ունի **մի'** արգելականը և եզակիում **ր** վերջավորությունը. օրինակ՝ **մի'** գրեր, **մի'** գրեք: **Մի** արգելականը կամ ժխտականը, ինչպես արդեն ասել ենք, իր համապատասխանությունները ունի սանսկրիտերենում *ma*, հունարենում *μη* ձևերով և այլն: Բայի **ր** վերջավորությունը, որը հանդես է գալիս նաև հայերենի անցյալ անկատարի և անցյալի երկրորդ դեմքերում, նույնպես ծագումնաբանորեն կապվում է հնդեվրոպական լեզուներում պահպանված *-ir-ra* և այլ վերջավորությունների հետ: Յոգնակին կազմվում է ընդհանուր հիմունքներով՝ երկրորդ դեմքի հիմքին **ք** ավելացնելու միջոցով:

Անցյալ կատարյալի հիմքից կազմված և հաստատական կոչվող հրամայականը որոշ բայերի եզակիում ունի զրո վերջավորություն, ինչպես՝ տեսանել-տես, բեկանել-բեկ, հասանել-հաս, խնուլ-խից, լնուլ-լից, բանալ-բաց, թողուլ-թող և այլն: Գրաբարի այդ տիպի բայերի հրամայականը նման է հնդեվրոպական մի շարք այլ լեզուների հրամայականին, ինչպես՝ սանսկրիտերեն *bhāra*, հունարեն՝ *φερ* «բեր» և այլն:

Հայերենի բայերի մյուս տիպը կամ ունենում է **ր** վերջավորու-

թյունը, կամ նույնանում է անցյալ կատարյալի ցոյական բայերի հիմքին, կամ կազմվում է այդ հիմքից՝ **ց**-ի անկումով, օրինակ՝ թաքչիմ-թաքիր, երկնչիմ-երկիր, զարթնում-զարթիր, գործիմ-գործեաց, խօսիմ-խօսեաց, գործեմ-գործեա, կարդամ- կարդա և այլն:

Հրամայականի հոգնակին կազմվում է ընդհանուր հիմունքներով՝ անցյալ կատարյալի հիմքից, հոգնակի վերջավորության ավելացումով, ինչպես՝ գրեմ-գրեցեք, խօսիմ-խօսեցարուք, թաքչիմ-թաքերուք, թռչիմ-թռեայք-թռերուք, զարմանամ-զարմացայք և այլն:

Ներգործական սեռի բայերի երկրորդ դեմքի **ր**-ն ընկնում է կամ վերածվում է **յ**-ի: Հոգնակի **ք**-ից առաջ չեզոք և կրավորական սեռի բայերում հաճախ հանդես է գալիս **ու**, որի ծագման մասին արդեն խոսել ենք:

Գրաբարի հրամայականի վերջավորությունները թեև իրենց որոշ դրսևորումներով կապվում են հնդեվրոպական մյուս լեզուների համապատասխան եղանակի վերջավորությունների հետ, բայց իրենց ամբողջ համակարգով տարբերվում են նրանցից և գոյացել են հայերենի զարգացման օրինաչափություններով:

Հայերենի դիմավոր բայերի վերջավորությունների այս համառոտ նկարագրությունից երևաց, որ բայերի տարբեր ժամանակներում հանդես են գալիս հիմնականում նման կամ նույն վերջավորություններ միևնույն դեմքերում: **Առաջին դեմքի** վերջավորություններն են՝ ներկայում և առաջին ապառնիում՝ **մ**, անցյալ անկատարում և անցյալ կատարյալում՝ **ի** կամ **յ**, երկրորդ ապառնիում՝ գրո (**ց**): **Երկրորդ դեմքինը**՝ ներկա, առաջին ապառնի և երկրորդ ապառնի ժամանակներում՝ **ս**, անցյալ անկատարում, կատարյալում և հրամայականում՝ **ր**: **Երրորդ դեմքինը**՝ ներկայում՝ **է**, **յ**, **ի** (-յ), անցյալ անկատարում՝ **ր**, անցյալ կատարյալում՝ գրո կամ **ւ**: Հոգնակի բոլոր ժամանակներում՝ **ք** և **ն**: Ժամանակների քերականական տարբերությունները հայերենում արտահայտվում են հիմքերի, խոնարհիչների և վերջավորություններին նախորդող ձայնավորների զուգորդությամբ կամ տարբերություններով: Գրաբարի ժամանակների այս հատկությունները նույնությամբ դրսևորված չեն հնդեվրոպական լեզուներում և ինքնատիպ են: Հայերենում պարզ կերպով ընդգծված են ներկայի և անցյալի հիմքից կազմված ժամանակների իմաստները: Մինչդեռ հնդեվրոպական որոշ լեզուներում, ինչպես հնդ-իրանական, սլավոնական և այլ լեզուների բայերի կառուցվածքը այդպիսի

պարզ տարբերակումներ չունի: Ներկայի և անցյալի հիմքերի իմաստների պարզ տարբերակումը հայերենում մեծ նշանակություն է ունեցել նրա զարգացման հետագա ընթացքի համար. մեր կարծիքով այդ հանգամանքը եղել է հայերենի բայական դիմաձոր ձևերի պարզեցման և իմաստների հետագա տարբերակման, նոր ժամանակների առաջացման հիմնական պատճառներից մեկը:

դ) ԲԱՅԱԶԵՎԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրաբարի բայերի ձևաբանորեն տարբերվող յուրաքանչյուր կատեգորիա ունի իր իմաստը, որը երբեմն զգալի չափով տարբերվում է ժամանակակից հայերենի բայերի համապատասխան կատեգորիաների իմաստներից:

Գրաբարի բայերը ունեն երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Եզակի թիվը հայերենում արտահայտվում է դեմքերի վերջավորությամբ: Հոգնակի թվի ցուցանիշներն են **ք** և **ն**, որոնցից առաջինը հանդես է գալիս առաջին և երկրորդ դեմքերում, իսկ երկրորդը՝ միայն երրորդ դեմքում. ինչպես՝ գրեմ (գրում եմ), գրես (գրում ես), գրե (գրում է), գրեմք (գրում ենք), գրեք (գրում եք), գրեն (գրում են) և այլն:

Դեմքը գրաբարում արտահայտվում է բայի վերջավորությամբ՝ առանց դերանունների: Հայերենում բոլոր բայերը ունեն իրենց քերականական վերջավորությունը և դեմքը:

Գրաբարի բայերն ունեն ներգործական, չեզոք և կրավորական սեռեր, որոնք ձևական հատկանիշներով չեն տարբերվում միմյանցից, բայերի ներգործակերպ և կրավորակերպ խոնարհումները միայն արտաքնապես են տարբերվում միմյանցից, թեև որոշ բայերի այդ խոնարհումները արտահայտում են նաև սեռերի իմաստը:

Գրաբարում կան բայեր, որոնք ունեն միայն ներգործակերպ (քայլել, վազել, ելանել, հասանել և այլն) կամ միայն կրավորակերպ (հայել, բազմել, գիշանել, ծիծաղել և այլն) խոնարհում: Գրաբարի ներգործական սեռի բայերը սովորաբար խոնարհվում են և՛ ներգործակերպ, և՛ կրավորակերպ, որոնցով և արտահայտվում է նրանց կրավորական կամ ներգործական իմաստը: Հասարակ կոչվող բայերը խոնարհվում են միայն կրավորակերպ և արտահայտում են ինչպես ներգործական, նույնպես և կրավորական իմաստ:

Բայերը գրաբարում լինում են պարզ և ածանցավոր: Բայական

ածանցներն են՝ **ան, աչ, անչ, են, ն, նչ, չ**, որոնք հանդես չեն գալիս բոլոր խոնարհումներում. **ե** խոնարհման բայերը սովորաբար ունենում են միայն **ան** ածանցը, **ա** խոնարհմանը՝ **ան, ն** և **են**. **ի** խոնարհմանը՝ **ան, նչ, չ**. իսկ **ու** խոնարհմանը՝ միայն **ն** ածանցը: Բայերի խոնարհման ժամանակ ածանցները չեն պահպանվում անցյալի հիմքից կազմված ժամանակներում:

Գրաբարը ունի երեք եղանակ՝ սահմանական, ստորադասական և հրամայական, որոնք ունենում են պարզ և բաղադրյալ ժամանակներ:

Պարզ ժամանակները, ինչպես տեսանք, կազմվում են բայահիմքերից և դիմավոր ձևերի համապատասխան վերջավորություններից, իսկ բաղադրյալ ժամանակները. անցյալ ու ապառնի դերբայներից և օժանդակ բայերի համապատասխան ձևերից:

Անցյալ դերբայը գրաբարում ունի **եալ**, իսկ ապառնին՝ **ոց** վերջավորություն, որոնցից առաջինը (եալ) ծագում է հնդեվրոպական դերբայական վերջավորությունից, որը պահպանված է նաև սլավոնական լեզուներում: Հայերենի **եալ** վերջավորությունը ընդգրկում է նաև բայական վերջածանցները: Իսկ ապառնի դերբայի **ոց** վերջավորությունը կազմվել է համեմատաբար ավելի ուշ շրջանում՝ անորոշ դերբայի սեռական հոլովից: Ապառնի դերբայի **ոց** վերջավորության **ց**-ն, որը **ո** հոլովիչի հետ հանդես է գալիս միասնաբար, մի կողմից՝ կապվում է գոյական անունների հոգնակի **ց**-ի և, մյուս կողմից՝ բայերի ապառնու **ց**-ի հետ, որի ծագման մասին արդեն խոսել ենք:

Գրաբարի բայերի դիմավոր ձևերը կազմվում են հիմքերից և վերջավորությունից, որոնց հետ հատկապես ներկա ժամանակում հանդես են գալիս նաև խոնարհիչները: Այդ պատճառով էլ գրաբարի բայերը ներկայում ունեն **եմ, իմ, ամ, ում** վերջավորությունները. օրինակ՝ գրեմ, խօսիմ, աղամ, հեղում և այլն:

Ե խոնարհման ներգործական սեռի բայերը, եթե ներկայում փոխվում են **ի** խոնարհման, կրավորական սեռի իմաստ են ստանում: Մնացած խոնարհումների կրավորական և ներգործական սեռերի ձևական տարբերությունները հանդես են գալիս միայն անցյալի հիմքից կազմված ժամանակներում:

Ե խոնարհման բոլոր բայերը, եթե ներկայում չեն գործածվում իբրև կրավորական, ունեն ներգործակերպ վերջավորություններ. **ի** խոնարհման բայերը՝ միայն կրավորակերպ վերջավորություններ.

օրինակ՝ խօսիմ, խօսիս, խօսի, խօսիմք, խօսիք, խօսին թռչիմ, թռչիս, թռչի և այլն իսկ **ա** և **ու** խոնարհման բայերը ընդհանուր վերջավորություններ՝ երկու սեռերի համար, օրինակ՝ աղամ, գնամ, հեղում, թողում և այլն

Անցյալ անկատարում **ե** և **ի** խոնարհման բայերը ունեն **եի, էիր, եր, էաք, էիք, էին. ա** խոնարհմանը՝ **այի, այիր, այր. այաք, այիք, ային**, իսկ **ու** խոնարհման բայերը՝ **ուի, ուիր, ոյր. ուաք, ուիք, ուին** վերջավորություններ օրինակ՝ խօսեի, խօսեիր, խօսեր, խօսեաք, խօսեիք, խօսեին, աղայի, աղայիր, աղայր, աղայաք, աղայիք, աղային, թողուի, թողուիր, թողուր, թողուաք, թողուիք, թողուին

Առաջին ապառնիում **ե** և **ա** խոնարհման բայերը ունեն կրավորակերպ և ներգործակերպ վերջավորություններ, որոնք արտահայտվում են բայադեմքի **ե** կամ **ի** ձայնավորների առկայությամբ օրինակ՝ գրիցեմ, գրիցես, գրիցե, գրիցեմք, գրիցեք, գրիցեն, աղայցեմ, աղայցես, աղայցե, աղայցեմք, աղայցեք, աղայցեն բայաձևերի մեջ արտահայտված է ներգործական, իսկ գրիցիմ, գրիցիս, գրիցի և աղայցիմ, աղայցիս, աղայցի ձևերի մեջ կրավորական իմաստ **ի** խոնարհման բայերը ունեն կրավորակերպ, իսկ **ու** խոնարհմանը՝ ընդհանուր վերջավորություններ օրինակ՝ խօսիցիմ, -ցիս, -ցի, -ցիմք, -ցին, հեղուցում, -ցուս, -ցու, -ցումք, -ցուք, -ցուն և այլն

Արգելական հրամայականում **ե** խոնարհման բայերը ունեն ներգործակերպ՝ եր, էք և կրավորակերպ՝ իր, իք, **ի** խոնարհման բայերը՝ միայն կրավորակերպ՝ իր, իք, իսկ **ա** և **ու** խոնարհման բայերը ընդհանուր՝ ար, այք, ուր, ուք վերջավորություններ օրինակ՝ մի՛ գրեր, մի՛ գրեք, մի՛ գրիր, մի՛ գրիք, մի՛ խօսիր, մի՛ խօսիք, մի՛ աղար, մի՛ աղայք, մի՛ հեղուր, մի՛ հեղուք և այլն

Անցյալ կատարյալում բոլոր լծորդությունների ներգործակերպ խոնարհման բայերը ունեն առաջին դեմքում **ի, աք**, երկրորդում՝ **եր, էք**, երրորդում՝ գրո և **ին**, իսկ կրավորակերպ խոնարհում ունեցող բայերը՝ **այ, ար, աւ, աք, այք, ան** վերջավորություններ եթե բայը ցոյական է, այդ վերջավորություններից առաջ **ց** է լինում օրինակ՝ գրեցի-գրեցեր-գրեաց, գրեցաք-գրեցեք (իք)-գրեցին, աղացի-աղացեր-աղաց, աղացաք-աղացեք-աղացին, հեղի-հեղեր-հեղ, հեղաք-հեղեք-հեղին, գրեցայ-գրեցար-գրեցաւ, գրեցաք-գրեցայք-գրեցան, աղացայ-աղացար-աղացաւ, աղացաք-աղացայք-աղացան, թողայ-թողար-թողաւ, թողաք-թողայք-թողան և այլն

Ներգործակերպ խոնարհում ունեն անցյալ կատարյալում **ե** խոնարհման բոլոր բայերը, **ա** և **ու** խոնարհման պարզ բայերը (կան չնչին բացառություններ, ինչպես գթալ-գթացայ, յուսալ-յուսացայ, առնուլ-առի, լսուլ-լցի, խնուլ-խցի և այլն), իսկ կրավորակերպ խոնարհում՝ **ի** խոնարհման բոլոր բայերը, **ա** և **ու** խոնարհման ածանցավոր (չնչին բացառությամբ), և ըստ պահանջի նաև ներգործակերպ խոնարհում ունեցող մյուս բայերը:

Երկրորդ ապամնիում բոլոր ներգործակերպ խոնարհման բայերը ունեն- **ից, ցես, ցե, ցուք, ջիք, ցեն**, իսկ կրավորակերպը՝ **այց, ցիս, ցի, ցուք, ջիք, ցին** վերջավորություններ. ինչպես՝ գրեցից, գրեցես, գրեսցե, գրեսցուք, գրեսջիք, գրեսցեն, հատից, հատցես, հատցե, հատցուք, հատջիք, հատցեն, թողից, թողցես, թողցե, թողցուք, թողջիք, թողցեն, թաքեայց, թաքիցես, թաքիցե, թաքիցուք, թաքիջիք, թաքիցեն, գրեցայց, գրեսցիս, գրեսցի, գրեսցուք, գրեսջիք, գրեսցին և այլն: Որոշ բայեր երկրորդ ապամնիում ունեն խառն տիպի վերջավորություններ. ինչպես՝ թաքչիմ, փախչիմ, կորնչիմ և այլն:

Երկրորդ ապամնիում ներգործակերպ և կրավորակերպ վերջավորություններ ստանում են բոլոր բայերը, որոնք անցյալում ունեն համապատասխան կերպերի խոնարհումներ:

Գրաբարի ներգործակերպ խոնարհման բոլոր ոչ ցոյական բայերը բուն հրամայականի եզակիում ունեն զրո (անցյալ կատարյալի արմատական հիմքը) վերջավորություն, իսկ ցոյական բայերը անցյալ կատարյալի հիմքը՝ առանց **ց**-ի, հոգնակիում՝ **եք** վերջավորություն, կրավորակերպ բայերը՝ **իր և այք, արուք** կամ **երուք** վերջավորություններ, որոնք ավելանում են անցյալի հիմքին, կամ եզակիում ունեն անցյալի հիմքը անփոփոխ. օրինակ՝ հատանել-հատ-հատեք, թողուլ-թող-թողեք, թաքչել-թաքիր-թաքերուք, խօսել-խօսեաց-խօսեցարուք, հեղուլ-հեղ-հեղիր-հեղայք-հեղարուք, գողանալ-գողացիր-գողացարուք, սիրեմ-սիրեա-սիրեցեք, սիրեաց-սիրեցայք-սիրեցարուք և այլն: Հրամայականում կրավորակերպ կամ ներգործակերպ վերջավորություններ են ստանում անցյալ կատարյալում համապատասխան ձևեր ունեցող բայերը:

Հորդորական հրամայականը, որը կարող է արտահայտել աշխարհաբարի ըղձական, հարկադրական, պայմանական ապամնիների իմաստ, ունենում է **ջիր, ջիք** վերջավորություններ բոլոր խոնարհման բայերի համար. օրինակ՝ սիրեսջիր-սիրեսջիք, գտջիր-

գտջիք, թռիչիր-թռիչիք, գնասջիր-գնասջիք, գարթիչիր-գարթիչիք և այլն:

Գրաբարն ունի անորոշ, ապառնի, անցյալ և ենթակայական դերբայներ: Անորոշ դերբայը, ինչպես արդեն նշված է, ունի **ալ, ել, իլ, ուլ** վերջավորությունները, ապառնին՝ **ոց** և **ի**, անցյալը՝ **եալ**, ենթակայականը՝ **ող-աւղ** և **իչ** վերջավորություններ: Գրաբարի դերբայները հետագայում փոփոխության են ենթարկվել. ժամանակակից հայերենում, օրինակի համար, անորոշ դերբայը ունի **ալ, ել**, անցյալը (վաղակատար և հարակատար)՝ **ել, ած**, ապառնին՝ **ու**, ենթակայականը՝ **ող** վերջավորություններ:

Ժամանակակից հայերենը հիշվածներից բացի ունի այլ դերբայներ, որոնք ծանոթ չեն եղել գրաբարին:

Գրաբարում որոշ բայաձևեր արտահայտում էին տարբեր իմաստներ. այսպես՝ բայերի դիմավոր ձևերը իրենց հիմնական իմաստների հետ ունեին նաև տարբեր առումներ. սահմանական եղանակի ներկան ու անկատարը գործածվում էին նաև ըղծականի և ենթադրականի ապառնի և անցյալ ժամանակների իմաստներով. օրինակ՝ **գրեմ** կարող էր նշանակել՝ գրում եմ, գրեմ, կգրեմ, **գրեի՝** գրում էի, գրեի, կգրեի և այլն: Սահմանական եղանակի անցյալ անկատարը երբեմն գործ էր ածվում սահմանական ներկայի կամ անցյալ կատարյալի իմաստով: Ստորադասական եղանակի առաջին և երկրորդ ապառնիները համապատասխանում էին սահմանական եղանակի ապառնուն և ըղծական, ենթադրական և հարկադրական եղանակների ժամանակներին. օրինակ՝ **գրիցեմ, գրեցից** կարող էին նշանակել՝ գրելու եմ, գրեմ, կգրեմ, պիտի գրեմ և այլն: Հորդորական հրամայականը կամ հրամայականի ապառնին համապատասխանում է ժամանակակից հայերենի հրամայականին և ենթադրական, ըղծական, հարկադրական եղանակների ապառնի ժամանակներին. օրինակ՝ **գնասջիր** կարող է թարգմանվել գնա՛, գնաս, կգնաս, պիտի գնաս ձևերով և այլն:

Բայերի եղանակային ձևերի այս բազմիմաստությունը, որը գրաբարում իմացվում է կոնտեքստի ընդհանուր բովանդակությունից, կապված է եղել հայոց լեզվի զարգացման ընդհանուր տենդենցների հետ: Եղանակային միևնույն ձևերի այդ բազմիմաստությունը օժանդակել է քերականական նոր ձևերի առաջացմանը և հայերենի բայական ձևերի ու նրանց իմաստների կոնկրետացմանը՝ յուրաքանչյուր

բայական ձևով քերականական միայն մի իմաստ արտահայտելու հանգամանքին: Այսպես, օրինակ՝ գրաբարում ներգործական և կրավորական սեռերի բայերի հարակատար և վաղակատար ժամանակները արտահայտելու համար օգտագործվում էր միայն անցյալ դերբայը. մինչդեռ ժամանակակից հայերենը վաղակատար և հարակատար ժամանակների համար ունի առանձին դերբայներ, կրավորական սեռը նշելու համար՝ հատուկ ածանց (վ): Այդ ձևափոխությունները կապված են հայերենի զարգացման կենսունակ օրենքների հետ, որոնք գրաբարում դրսևորվում էին նաև բայաձևերի բազմիմաստության, իսկ ժամանակակից հայերենում՝ յուրաքանչյուր բայաձևին միայն մի իմաստ ամրացնելու միջոցներով:

Գրաբարի խոնարհման համակարգի այս համառոտ տեսությունից պարզվեց, որ գրաբարը իր խոնարհման ընդհանուր դրսևորումներով կապվում է հնդեվրոպական լեզուների հետ: Բայց դրանով հանդերձ ունի իր զարգացման ներքին օրենքները, որոնք չեն նույնանում ոչ մի հնդեվրոպական լեզվի օրենքներին և զգալի չափով տարբերում են նրան հնդեվրոպական հին և նոր լեզուներից: Գրաբարի խոնարհման համակարգի զարգացման հիմնական օրենքները դրսևորվել են քերականական միևնույն ձևերի բազմիմաստության ու բայահիմքերի բազմազանության վերացման, յուրաքանչյուր իմաստի համար նոր ձևեր ստեղծելու, ժամանակների տարբերակման, դեմքերի վերջավորությունների միաձևության, այսպես կոչված զարտուղի կամ անկանոն բայերի կանոնավորման ընդհանուր տեսողենքների մեջ: Այդ ընդհանուր դրսևորումները հատուկ են եղել նաև մեր բարբառներին իրենց գոյության բոլոր շրջաններում:

Բ. ՇԱՐԱՀԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

1) ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Գրաբարի շարահյուսությունը իր մի շարք առանձնահատկություններով կապվում է հնդեվրոպական լեզուների շարահյուսության հետ: Ամենից առաջ հայերենի, ինչպես նաև հնդեվրոպական այլ լեզուների նախադասության հիմնական տարրերը՝ բառերն ու բառակապակցությունները, ինքնուրույնաբար նշում են իրենց դերն ու

ֆունկցիան նախադասության մեջ, որովհետև նրանցից յուրաքանչյուրը, իբրև նախադասության անդամ, ունի իր ձևը: Բառերի դասավորությունը նախադասության մեջ քերականական որևէ արժեք չունի, այդ պատճառով էլ նախադասության մեջ հանդես եկած ինքնուրույն բառերի դասավորության համար կա սովորական, բայց ոչ պարտադիր կարգ:

Սակայն այդ ընդհանրություններով չեն որոշվում գրաբարի շարահյուսության հատկությունները: Գրաբարի նախադասությունը զգալի չափով տարբերվում է հնդեվրոպական լեզուների նախադասության հնատիպ ձևերից. գրաբարի համաձայնության կանոնները ինքնատիպ են, փոխվել են հնդեվրոպական բառերի ձևական հատկանիշները և նվազել բառերի ինքնուրույնությունը նախադասության մեջ: Այդ հիման վրա էլ ստեղծվել են օժանդակ բառեր, որոնք չունեն ինքնուրույն իմաստներ և միայն նպաստում են նախադասության այս կամ այն անդամի քերականական հարաբերությունների պարզաբանմանը:

Գրաբարի համաձայնության մեջ ամենից ուշագրավ երևույթներից մեկը որոշիչների և որոշյալների համաձայնեցումն է, որը տարբեր ձևերով է արտահայտվում. եթե որոշիչը նախադաս է, բացառությամբ մի շարք միավանկ բառերի, չի համաձայնեցվում որոշյալի հետ, իսկ եթե հետադաս է, համաձայնեցվում է: Այդ երևույթը հայերենի շարահյուսության զարգացման կարևոր առանձնահատկություններից մեկն է: Որոշիչների հետադաս գործածությունն ու համաձայնեցումը, որոնք մի շարք հնդեվրոպական լեզուների շարահյուսության բնորոշ հատկանիշներից են, հին հայերենում չեն ունեցել իրենց պարտադիր կանոնները, թեև հիևգերորդ դարի որոշ գրավոր աղբյուրներում շեշտը դրվում է որոշիչների հետադաս գործածության վրա:

Հայերենի որոշիչների նախադաս գործածությունն ու անհամաձայնությունը կապված են եղել նրա զարգացման կենսունակ օրենքների հետ, որոնք իշխող են եղել ընդհանրապես խոսակցական լեզվում ու բարբառներում և ավելի ու ավելի են տարածվել, մինչև վերջնականապես դարձել են իշխող երևույթներ հայերենի հետագա շրջանների շարահյուսության մեջ:

2) ԱՆՎԱՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՅԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնդեվրոպական լեզուները տարբերել են նախադասությունների երկու տիպ՝ անվանական և բայական: Անվանական են կոչվել այն նախադասությունները, որոնց ստորոգյալը արտահայտվել է անվամբ, իսկ բայական՝ նրանք, որոնց ստորոգյալը արտահայտվել է բայով:

Անվանական նախադասությունը կարող է արտահայտվել օժանդակ բայով, կամ առանց որևէ հանգույցի. օրինակ՝ լատիներեն *haec admirabilia* «այդ զարմանալի է», հին պարսկերեն *manā pitā Vištāspa* «իմ հայր Վիշտասպը» նախադասությունները այդ լեզուներում բայական որևէ իմաստ ունեցող բառ չունեն. նրանք չեն արտահայտում նաև ժամանակ, դեմք, խոնարհում: Հին պարսկերեն *tyaiy paruvam xšāyaθiya āha* «նրանք առաջ եղել են թագավորներ» նախադասության մեջ *aha* օժանդակ բայը նյութական ինքնուրույն իմաստից զուրկ է և հանդես է գալիս միայն իբրև խոնարհման ձևական հատկություն դրսևորող օժանդակ բառ, որը կապված է նախադասության ուրիշ բառերի հետ:

Անվանական նախադասությունը սովորաբար ունենում է անվանական երկու անդամներ, որոնց կապակցությունը երբեմն արտահայտվում է օժանդակ «եմ» բայով. օրինակ՝ լատիներեն *Petrus bonus est* «Պետրոսը բարի է» նախադասության մեջ *est* օժանդակ բայը հանդես է գալիս *bonus* բառի հետ: Անվանական նախադասությունը կարող է կազմված լինել նաև մի բառից. ինչպես՝ լատիներեն *mirum* «զարմանալի է»: Ռուսերենում անվանական նախադասությունը բավականաչափ տարածված է:

Հայերենը թեև պահպանել է անվանական նախադասության հետքեր, բայց այդ երևույթը բնորոշ չի եղել նրան նույնիսկ հինգերորդ դարում: Հայերենում բայերն ու անունները տարբերվում են իրենց ձևական հատկանիշներով, և այդ պատճառով էլ նախադասությունը հայերենում մեծ մասամբ բայական է: Այսպես, օրինակ՝ հայերեն **իմ գնացեալ է, իմ տեսեալ է, նա գրե, նա քնանէ** և այլն բայական նախադասություններ են, որովհետև ստորոգյալները այդ նախադասությունների մեջ ունեն իրենց բայական իմաստը. նույնիսկ այնպիսի նախադասությունների մեջ, երբ էական բայը հանդես է գալիս իբրև հանգույց, հաճախ ընդգծվում է նրա բայական իմաստը և նա տարբերվում է հնդեվրոպական օժանդակ բայից իր դրսևորում-

ներով ու իրական իմաստով. օրինակ՝ **էր առն միոջ որոջ մի** նախադասության մեջ **էր**-ը ինքնուրույն իմաստ ունի և այդ պատճառով էլ չենք կարող ասել, թե այդ նախադասությունը անվանական է:

Յնդեվրոպական մի շարք լեզուների մեջ բառերը ունեն իրենց ձևական արտահայտությունները, որոնք կապված են իրենց իմաստի հետ: Այդ պատճառով էլ նրանց ձևը նախադասության մեջ կապված չէ ուրիշ բառերի հետ: Նախամասնիկները այդ լեզուներում կարող են հանդես գալ իբրև ինքնուրույն բառեր և դրվել բայերի ու գոյական անունների վրա: Հայերենի բառերը նախադասությունների մեջ կապված են միմյանց հետ, կազմում են մի անբաժանելի ամբողջություն և պայմանավորված են միմյանցով: Այդ հանգամանքը զգալի չափով տարբերում է հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների նախադասության կառուցվածքը, նրա անդամների համաձայնությունն ու կապակցությունը:

3) ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Յնդեվրոպական լեզուներում, ինչպես նշեցինք, նախադասության յուրաքանչյուր բառ հանդես է գալիս ինքնուրույնաբար, իր հիմնական իմաստով: Սակայն դրա հետ միասին բառերը որոշ ձևերով համաձայնվում են միմյանց հետ:

Բայական նախադասությունների մեջ ենթակայի և ստորոգյալի համաձայնեցումը արտահայտվում է թվի կատեգորիայի մեջ, որը *հնդեվրոպական մի քանի լեզուներում լինում է՝ եզակի, երկակի և հոգնակի*, որոնք ունեն դրսևորման հատուկ ձևեր: Գրաբարում, ինչպես արդեն նշել ենք, գոյական անունները ունեն հոգնակի **ք, ց, ս**, իսկ բայերը **ք և ն** վերջավորությունները:

Գրաբարի նախադասության գլխավոր անդամներն են ենթական ու ստորոգյալը, որոնք ունենում են նաև իրենց լրացումները: Բայերը իրենց եղանակային ձևերով ցույց են տալիս նաև դեմքեր, այդ պատճառով էլ նախադասությունը կարող է կազմված լինել միայն բայից, որը իր մեջ արտացոլում է նաև ենթական օրինակ՝ **գրեմ** նշանակում է «ես գրում եմ», **գրեցից՝** «ես կգրեմ» կամ «գրելու եմ» և այլն:

Գրաբարում, բացի ենթակայից և ստորոգյալից, համաձայնում են նաև որոշիչն ու որոշյալը, բացահայտիչն ու բացահայտյալը, երբեմն

Նաև հատկացուցիչն ու հատկացյալը:

Որոշիչը գրաբարում լինում է և՛ Նախադաս, և՛ հետադաս. ինչպես՝ «գորացուցանե՛ գանգօրս մեծագօր գօրութեամբ. երեքեան ջոկքս այսոքիք»՝ նովին իսկ անուամբ անուանին և այլն:

Որոշիչները, եթե Նախադաս են դրվում, մեծ մասամբ չեն համաձայնեցվում. ինչպես՝ ազգի-ազգի խեղութեամբ խեղեին և անհնարին մահուամբ սպանանեին. իբրև խօսուն բերանով անշշունջն բողոքե. պեսպես զինուր վառեցաւ թշնամին ճշմարտութեան և այլն:

Այդ ընդհանուր կանոնը երբեմն խախտվում է, մանավանդ այն դեպքերում, երբ Նախադաս որոշիչը միավանկ է լինում. օրինակ՝ Նախանձ կալցուք բարեաց գործոց և առաքինասեր վարուց. մեծալ ջանիւ հազիւ հաւանեցուցին զթագաւորն. կարճամիտք ի փոքունց վշտաց խորտակին. քաջի առն. բացաւ երեսօք տեսանել. նովին կապանօք և այլն:

Որոշիչները, երբ հետադաս են դրվում, համաձայնեցվում են. ինչպես՝ յեղբարց սիրելեաց. այսպիսի անհաւատ և դանդաշանաց բանից տխմարաց մտաց կարկատելոց՝ չէր պարտ. ամենեւին բնաւ առնել պատասխանի. յաւուր միոջ մեծի. գօրու ծանու. առ կաղնեան բարձու և այլն:

Եթե որոշյալը Նախդիր է ունենում, Նախդիրը դրվում է Նաև Նախադաս որոշիչների վրա. իսկ եթե որոշիչները կրկնված են ընդմիջված այլ բառերով, ապա Նաև կրկնված որոշիչների վրա. ինչպես՝ ի յիմար և յանխրատ իսնդրոց ծնանին կոիւք. ի բարի և յազնուական ազգե ես դու. եցոյց զիւր զբարերարութիւնն և գօրութիւն. Որմիզդ զսակաւիկ ինչ զհայթայթանացն հնարս չմարթեր իմանալ. այլքն ամենեքեան զիւրաքանչիւր զանցնիւր զանարգանաց վրեժս պահանջեն և այլն:

Հատկացուցիչը գրաբարում կարող է դրվել թե՛ Նախադաս և թե՛ հետադաս: Բայց ավելի տարածված է հետադաս հատկացուցչի գործածությունը. օրինակ՝ օրինութիւն հօր հաստատե՛ գտունս որդւոյ, և անեծք մօր խախտեն ի հիմանե. զաւազ ծովու և զշիթս անձրեւաց և զաւուրս ժամանակաց՝ ո՞ր թուեաց երբեք. ցանկութիւն արծաթասիրին ոչ յազի ի բազմութենէ ընչից. ի Հայոց աշխարհին գյունաց մատենաս. զձեր առաքինութիւնն, զքոյոց բանիցդ և այլն:

Հարաբերական և հարցական դերանունների հատկացյալը միշտ հետադաս է դրվում. ինչպես՝ որոց ոգիքն թուլացեալ են երկնաւոր

առաքինութենէն Սիմոն ում որոյ տունն մերձ է ի ծովու ո՞րոյ որդի ես դու զո՞րոյ պատկեր ունի դահեկանդ, Է՞ր աղագաւ և այլն

Հատկացուցչի և հատկացյալի մէջ կարող են ընկնել միջանկյալ բառեր Այդպիսի դեպքերում հատկացյալի նախդիրը (եթէ կա) դրվում է նաև հատկացուցչի վրա ինչպէս՝ վարագի, որ գազանագոյն է քան զամենայն գազանսն՝ ուտի զմիսն և ոչ վնասէ (ուտի միսն վարագի) զօդոյն որ ցայգ առնու ի խոնաւութեն ջուրց՝ հասեալ ջերմութեան ճառագայթից արեգականն՝ շքեցուցանէ ի բաց զտամկութիւնն զի ծանիցես զբանիցն, որոց աշակերտեցար՝ զճշմարտութիւն և այլն

Հատկացուցիչը կարող է իմաստով որոշիչ լինել Այդ դեպքերում սովորաբար **ուրիշ** ածանց ունեցող գոյականներն են դառնում հատկացուցիչներ, որոնք մեծ մասամբ կազմված են լինում ածականներից ինչպէս՝ նոքա խորհեցան զխորհուրդ չարութեան (չար) ընդ նմա իսկ մարտիցուք գիտութեան բանիւք և այլն

Բացահայտիչը կարող է բացահայտյալից առաջ և հետո դրվել Ավելի տարածված է բացահայտիչի հետադաս գործածությունը, ինչպէս՝ զբարսմունս ցորդին իւր ցՈրմիզդ ետ առաքեաց զՅեսու զորդի իւր արքայ հայոց Արտաշէս և այլն

Բացահայտիչը թվով և հոլովով համաձայնեցվում է բացահայտյալի հետ Եթէ բացահայտյալը նախդիր ունի, նախդիրը կրկնվում է և բացահայտիչի հետ ինչպէս՝ առաքին դեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ՝ զի մի՛ ձեռս տացէ ի Պարսիկս (որ պարսիկներիս չհանձնվի) ճանաչե՞ս դու զՏուբիթ զեղբայր մեր զեղբայր իւր զՎաղարշակ Չրուան եթէ արջառ էր զկարիճն զԱրիմն զհա՞րո՞ ծնաներ, և եթէ գայլ էր՝ զգառնն զՈրմիզդ հի՞մ ծնաներ և այլն

Ցուցական դերանունները իբրև որոշիչներ գործածվելիս համաձայնում են որոշյալի հետ ինչպէս նախադաս, նույնպէս և հետադաս լինելու դեպքում Ցուցական դերանունները սովորաբար նախադաս են գործածվում, երբ ընդգծվում է նրանց իմաստը, իսկ երբ նրանց իմաստը համեմատաբար թույլ է արտահայտվում, հետադաս են դրվում, օրինակ՝ **այս այր, այսր առն** նշանակում է «հենց այս մարդը, հենց այս մարդու», իսկ **այրս այս, առնս այսորիկ՝** «այս մարդը, այս մարդու» Ցուցական դերանունները հետադաս լինելու դեպքում որոշյալ գոյականը ընդունում է համապատասխան դերանվան հոդը (ս, դ, ն) Այդ երևույթը բացատրվում է դերանվան իմաստի թուլությամբ

Հայերենի զարգացման հետագա շրջաններում այդպիսի դեպքերում դերանվանական հոդը փոխարինում է դերանվան և թույլ կերպով արտահայտում է դերանվան իմաստը: Հայերենի հոդերը առաջացել են այդ եղանակով: Այդ երևույթը նկատելի է նաև հնդեվրոպական մի շարք լեզուներում. օրինակ՝ բուլղարերենում. ДОМ-ЪТ «տունը», որտեղ ЪТ որոշյալ հոդի իմաստ ունի: Նման հոդեր հանդիպում են նաև ալբաներենում, պարսկերենում և այլ հնդեվրոպական լեզուներում: Սակայն այդ երևույթը առաջացել է հնդեվրոպական լեզուների զարգացման հետագա շրջաններում. նա հատուկ չի եղել հնդեվրոպական հիմք-լեզվին: Հայերենում հոդերն իրենց լայն զարգացումն ու իմաստային տարբերակումը ստանում են հինգերորդ դարից հետո, թեև հինգերորդ դարում նույնպես նրանք խորթ չէին հայերենին:

Գրաբարը թեև իր համաձայնության որոշ դրսևորումներով կապվում էր հնդեվրոպական լեզուների հետ, բայց ուներ նաև «անհամաձայնեցում», որը ավելի ու ավելի էր օրինաչափ երևույթ դառնում հայերենի համար: Այդ անհամաձայնեցումը ամենից առաջ արտահայտվում էր որոշիչների նախադաս գործածության և անհամաձայնեցման փաստով: Հայերենի շարահյուսության մեջ կատարված հետագա փոփոխությունները մեծ մասամբ կապված էին որոշիչ նախադաս գործածության տեսնդենցի հաղթանակի հետ: Որոշիչների նախադաս գործածության այդ տեսնդենցը սկսվել էր հինգերորդ դարից դեռ շատ առաջ և, ինչպես ասված է արդեն, պայմանավորված էր հայերենի զարգացման ներքին օրինաչափություններով:

4) ՀԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հնդեվրոպական լեզուների շարահյուսության հատկություններից մեկը արտահայտվել է նախադասության մեջ բառերի ազատ դասավորությամբ: Բառերի շարադասությունը հնդեվրոպական լեզուներում ունեցել է էքսպրեսիվ նշանակություն: Հայերենում նույնպես բառերի շարադասությունը ազատ է եղել: Հինգերորդ դարի հայ մատենագիրներից ոմանք **որ**, **յործամ**, **ուր**, **եթե** շաղկապներով սկսվող նախադասությունների ստորոգյալը, որը արտահայտվել է մեծ մասամբ առաջին ապառնիով, դրել են նախադասության վերջում. օրի-

նակ՝ որ ընդ ճառագայթս արեգականն հայել կամիցի յորժամ զպատիւ արարչին ոք խոցա մատուցանիցէ և այլն Այդ երևույթը մեր բանասերներից ոմանք համարել են հայոց հինգերորդ դարի գրական լեզվի հատկանիշներից մեկը մինչդեռ բառերի այդ դասավորությունը միայն ոճական և հատկապես էքսպրեսիվ արժեք ունի և նույնիսկ հինգերորդ դարի հայ բոլոր մատենագիրների գործերում միևնույն ձևով չի արտահայտվում

Սակայն այդ չի նշանակում, թե հայերենը չուներ բառերի կարգի որոշ կանոններ, որոնք պահպանվում էին Նախադասության մեջ Բառերի հատուկ կարգ սահմանելու տենդենցը ունեցել են նաև հնդեվրոպական մյուս լեզուները օրինակ՝ սանսկրիտերենի արծակը ունի բառերի խիստ սահմանված դասավորություն բայը սովորաբար միշտ դրվում է Նախադասության վերջում Այդ երևույթը կարծեք թե հատուկ է նաև նոր պարսկերենին Բայց այդ բոլորով հանդերձ չի կարելի ասել, թե հաստատապես սահմանված է բայերի տեղը հնդեվրոպական լեզուներում Զուևարենը սովորաբար Նախադասության մեջ ընդգծված կամ գլխավոր համարված բառը դնում է սկզբում Այդ դեպքում նույնպես նկատի է առնվում Նախադասության էքսպրեսիվ իմաստը և ոչ թե բառերի քերականական նշանակությունը

Ննդեվրոպական լեզուներում քիչ թե շատ կայուն տեղ են ունեցել Նախադասության երկրորդական անդամները, որոնք իբրև կանոն դրվել են գլխավոր անդամից անմիջապես հետո Այդ երևույթը, որը բառերի դասավորության միակ արտահայտությունն է եղել հնդեվրոպական լեզուներում, չի պահպանվել հայերենում

Հայերենում չի պահպանվել նաև հնդեվրոպական երաժշտական շեշտը, որը զգալի դեր է կատարում հնդեվրոպական մի շարք այլ լեզուներում

5) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նախադասությունների կապակցությունը յուրաքանչյուր լեզվում ունի իր հատուկ արտահայտությունները, որոնք պայմանավորված են տվյալ լեզվի զարգացման օրենքներով և փոփոխվում ու նոր կերպարանք են ստանում այդ լեզվի պատմության տարբեր շրջաններում Գրաբարի և ժամանակակից հայերենի Նախադասություններ-

որը կապակցության շատ ընդհանուր գծեր ունենալով հանդերձ՝ հիմնականում տարբերվում են միմյանցից մեր ժամանակի հայր, եթե չունի համապատասխան պատրաստություն, չի հասկանա հինգերորդ դարի հային շատ հասկանալի սովորական նախադասություններ՝ օրինակ՝ «Չի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալելալ է բայց ոչ թողից, եթե ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցե» բարդ նախադասության բոլոր բառերը կարող են ծանոթ լինել մեր ժամանակի հային, բայց դրանով հանդերձ՝ նա կարող է չհասկանալ այդ նախադասության իմաստը Այդ երևույթի հիմնական պատճառը նախադասության շարադասությունն ու գրաբարին հատուկ համաձայնեցումն է, որոնք փոփոխվել ու նոր արտահայտություն են ստացել հայերենի զարգացման հետևանքով

Հին հայերենի նախադասությունը իր կապակցությամբ նոր, հնդեվրոպական լեզուների հնագույն շրջանի նախադասություններից տարբեր կերպարանք ուներ Հնդեվրոպական ավելի հին վիճակներ կայացնող լեզուների նախադասությունները չեն ունեցել այն բարդ կառուցվածքը, որը ունեն ժամանակակից լեզուները նրանք համեմատաբար պարզ են եղել, և ստորադասությունն ու համադասությունը չեն արտահայտվել զանազան շաղկապների կամ օժանդակ բառերի օգնությամբ Բայական և անվանական ձևերի մեջ հաճախ խիստ տարբերություններ չեն եղել, նույն ցուցանիշներով են արտահայտվել բայական և անվանական հիմքերը Բայահիմքը դիմավոր ձևերի հետ ունեցել է նաև ածականի իմաստ և այդ պատճառով էլ ընդունել է տարբեր լրացումներ Բայարմատներից կազմվել են նաև անուններ, որոնք պահպանել են բայերի որոշ հատկանիշներ Բայահիմքերի և գոյական անունների այդ սերտ կապի հետևանքով նախադասությունները չեն տրոհվել և չեն եղել բարդ նախադասությունների այն բազմազան ձևերը, որոնք կան ժամանակակից հնդեվրոպական լեզուներում Եվ միայն այն ժամանակ, երբ ստեղծվել են օժանդակ բառեր ու շաղկապներ, երբեմնի՝ անբաժանելի նախադասությունները տրոհվել են մասերի, որոնց կապը արտահայտվել է օժանդակ դեր կատարող զանազան բառերով, որոնք հետագայում ավելի են մերվել նախադասությանը և կորցնելով իրենց երբեմնի ինքնուրույն բառի իմաստը՝ դարձել են կապակցական բառեր կամ շաղկապներ Այսպես, օրինակ՝ հայերեն և շաղկապը, որը հինգերորդ դարից ավանդված աղբյուրներում գոր-

ծածվել է միայն իբրև շաղկապ, հնագույն շրջանում եղել է ինքնուրույն իմաստ ունեցող բառ Այդ բառի համապատասխանությունները կան սանսկրիտերենում՝ ápi «նաև, դեռևս, մոտը, էլ», հին պարսկերենում՝ apiy, գենդերենում՝ apu «հենց, ըստ, մոտը, միջոցին», հունարենում՝ επι «վրա, սրա վրա» ձևերով և այլն Ինքնուրույն բառեր են եղել նաև հայերենի մյուս շաղկապները, որոնցից մի քանիսը մինչև այժմ էլ պահպանել են իրենց ինքնուրույնությունը, ինչպես՝ **որ, կամ, ուրեմն** և այլն

Յնդեվրոպական որոշ լեզուներում ցուցական դերանունը դըրվելով նախադասության սկզբում՝ ստացել է հարաբերականի իմաստ օրինակ՝ գերմաներենում der-ը ունեցել է միայն ցուցական դերանվան իմաստ, բայց դրվելով նախադասության սկզբում՝ հետագայում ձեռք է բերել նոր առումներ, գործածվել իբրև հարաբերական դերանուն և ստորադասական շաղկապ

Ցուցական դերանունների գործածության այդ եղանակը նոր, հարաբերական տիպի նախադասությունների առաջացման և զարգացման առիթ է տվել Այդ նոր տիպի նախադասությունները, որոնք կապվել են միմյանց հետ որոշ լեզուներում նաև հարաբերական շաղկապներով, դրվել են գլխավոր նախադասությունից առաջ և հետո նրանց, ինչպես նաև նախադասության անդամների տեղը խիստ սահմանված չի եղել Յնդեվրոպական հիմք-լեզվի հնագույն վիճակը ներկայացնող լեզուներում վկայված են միայն հարաբերական տիպի նախադասություններ Մնացած բոլոր տիպի բարդ նախադասությունները կոնկրետ լեզուների զարգացման արդյունք են և առաջացել են ավելի ուշ շրջանում

Այդ բանը վերաբերում է նաև գրաբարին, որը ունի համադասական և ստորադասական նախադասությունների մի բարդ և կուռ համակարգ, որի գոյացումը կարելի է հասկանալ միմիայն հայերենի զարգացման օրինաչափությունները նկատի ունենալով

Սակայն այդ չի նշանակում, թե գրաբարի նախադասությունը չի պահպանել հնդեվրոպական լեզուներին բնորոշ նախադասությունների տիպեր Չայերենի անցյալ դերբայով կազմված նախադասությունները իրենց որոշ դրսևորումներով կապված են հնդեվրոպական լեզուների հին վիճակի դերբայական նախադասությունների հետ Այդ տիպի նախադասությունների մեջ դերբայը որոշում է ենթական օրինակ՝ «Տեսեալ մարդկան գծիծառն՝ նովաւ ճանաչեն զհասանել

գարնանոյն» նախադասության մեջ **տեսեալ** ստորոգյալով որոշվում է ենթական, որն այստեղ դրված է սեռական հոլովով: Անցյալ դերբայով կազմված նախադասությունների ենթական կարող է դրվել նաև ուղղական հոլովով նույնիսկ այն ժամանակ, երբ նախադասությունը չունի օժանդակ բայ: Գրաբարի նախադասությունների այդ տիպը իր զարգացումը չունեցավ: Հայերենը արդեն ստեղծել էր նախադասության այնպիսի տիպեր, որոնք կապված էին նրա զարգացման նոր տենդենցների հետ և լրիվ չափով համապատասխանում էին հայերենի հաղորդակցական ֆունկցիայով պայմանավորված պահանջներին: Այդ նոր տիպի նախադասությունների մեջ հատկապես ընդգծվում էին համադասական և ստորադասական բազմապիսի նախադասություններ, որոնք կապը և հարաբերությունները արտահայտվում էին գրաբարի բազմազան շաղկապներով, որոնք իրենց հերթին պայմանավորված էին նախադասությունների բնույթով և հիմնական իմաստով:

Հայերենը մշակել է երկու խմբի՝ համադասական և ստորադասական շաղկապներ, որոնք բոլորն էլ նախապես եղել են նյութական իմաստ ունեցող բառեր և առաջացել են հայերենի զարգացման օրենքներով:

Այդ շաղկապներից գրաբարում համեմատաբար շատ գործածական են եղել համադասական՝ **և, այլ, այլ և, այլ ևս, բայց, սակայն, եթե... եթե, կամ, կամ... կամ, մանաւանդ, նա և այլն**, իսկ ստորադասական՝ **զի, քանզի, վասն զի, որպես զի, որովհետև, փոխանակ զի, մանաւանդ զի, իբր զի, իբրև, քան թե, քան եթե, եթե, թե, ապա ուրեմն, մինչ զի, մինչ չև, յորժամ, ուստի, թող, թող թե և այլ շաղկապներ: Այդ շաղկապների մեծ մասը գրաբարում դեռ պահպանել է նաև իր ինքնուրույն իմաստները, որոնցից երևում է, որ իսկապես հայերենի շաղկապները առաջացել են ինքնուրույն բառերից:**

Հայերենի զարգացման ընթացքում այդ շաղկապներին ավելացել են նաև նորերը, բացի այդ, փոխվել է նաև նրանցից որոշ մասի քերականական իմաստը, հետևաբար նաև նրանց գործածության եղանակները: Այսպես, օրինակ՝ գրաբարում հարաբերական շաղկապներով սկսվող նախադասությունների ենթակա դերանունը կարող է արտահայտվել դերանվանական արմատով, որը կցվում է բային կամ նախադասության որևէ այլ անդամի. **ինչպես՝ գորխորհեցայս (ես) առնել. զի խօսիմս (ես) ընդ ձեզ. զի որ շարժին (նա)**

և փոփոխի չէ եական. եւ որ **էն** (նա) շարժե գամենայն՝ ինքն ոչ շարժի և ոչ փոփոխի. որպէս ունիքդ (դուք) զմեզ ձեզ օրինակ. ոչ գիտեմ զինչ խօսիսդ (դու), այդ զի տեսերդ (դու) զիս և հաւատացեր. աստ ուր հրամանս (մենք) առաք՝ գամենայն ի բաց ընկենուլ. զոր նած-րացիսդ (դուք) անուանեք. որ **էիրդ** (դու) ձիթենի վայրենի. ցայնսիկ՝ որ ընդ աջմէն (սրանք) իցեն և այլն: Այս երևույթը հատուկ չէ ժամանակակից հայերենին, թեև կա հայերենի որոշ բարբառներում:

Գրաբարի բարդ նախադասութիւնները, ժամանակակից հայերենի նման, արտահայտում են երկու տեսակ հարաբերություն՝ համադասական և ստորադասական. համադասական նախադասութիւնները թեև ընդհանուր իմաստով կապված են միմյանց հետ, բայց քերականորեն հանդես են գալիս իբրև ինքնուրույն, միմյանց համագործող նախադասութիւններ. սրանք ստորադաս չեն և քերականորեն չեն լրացնում միմյանց միտքը. օրինակ եւ էր սա այդ կեղծաւոր, և երևեցուցաներ ինքն զանձն իւր մարդկան պահող և խորգահանդերձս և այլն:

Համադասական նախադասութիւնները կարող են իրար հաջորդել առանց որևէ կապակցական բառի, կամ շաղկապվել միմյանց հետ համադասական շաղկապներով. օրինակ՝ երկներ երկին, երկներ երկիր, երկներ և ծովն ծիրանի. ձմեռն էանց, անձրևք անցին և գնացեալ մեկնեցան. ծաղիկք երևեցան յերկրի մերում, ժամանակ եհաս յատանելոյ, ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում. թզենի ընծիւղեաց զբողբոջ իւր, այգիք մեր ծաղկեցան և ետուն գիտսս իւրեանց. եկն դիպեցաւ սմա օտար պատանի մի աշխարհական հեծեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտւոյ, աղեղնակապարճ զմիջով. լուացեալ զհերս իւր օծեալ մերձեալ, վարսակալ եղեալ ի գլուխ իւր, և օղիկ արկեալ. զուսովք իւր, և գայր զճանապարհս իւր. եւ շատ ի վեզ եկեալ յամառէր այրն, և նա ևս չար քան զնա և այլն:

Ստորադաս նախադասութիւնները գրաբարում գլխավորի հետ միանում են կապակցական բառերով՝ հարաբերական դերանուններով և ստորադասական շաղկապներով. օրինակ՝ բողոք բառնայր՝ թէ «Լուարուք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղև, զի որ ինձ ակն եդ վասն իմ, գայրն իմ ետ սպանանել» և այլն: Գրաբարում շատ քիչ կարելի է հանդիպել այնպիսի բարդ ստորադասական նախադասութիւնների, որոնց մեջ որևէ կապակցական բառ չլինի: Այդ երևույթը ցույց է տալիս, որ գրաբարը բավականաչափ գրական մշակման

ենթարկված լեզու է եղել, այդ պատճառով էլ չի պահել բարդ ստորադասական նախադասությունների սկզբնական պարզ ձևերը, որոնք ավելի հատուկ են ժողովրդական խոսվածքներին:

Գրաբարում երկրորդական նախադասությունները կարող են փոխարինել նախադասության ինչպես գլխավոր, նույնպես և երկրորդական անդամներին և ըստ այնմ էլ իրենց բնույթով լինում են ենթակա, ստորոգյալ, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիր և պարագա նախադասություններ: Գրաբարի և ժամանակակից հայերենի երկրորդական և գլխավոր նախադասությունների կապակցության ընդհանուր կանոնները նույնն են: Այն կապակցական բառերը, որոնք կապում են գլխավոր և ստորադաս նախադասությունները միմյանց հետ՝ հիմնականում նույն ֆունկցիաներն են կատարում, եթե նկատի չունենանք միայն որոշ փոփոխություններ: Աշխարհաբարը պահել է գրաբարի բոլոր գլխավոր շաղկապները իրենց հիմնական իմաստներով:

Գրաբարի և աշխարհաբարի նախադասությունների տարբերությունները հիմնականում արտահայտվում են առանձին նախադասության անդամների կապակցության ու համաձայնության մեջ: Աշխարհաբարի նախադասության երկրորդական անդամների համաձայնության կանոնները գոյացել են հայոց լեզվի զարգացման ավելի ուշ շրջանում, այսինքն՝ հիմնականում այն ժամանակ, երբ կազմավորվել է հայոց ազգային լեզուն, որը հայոց լեզվի զարգացման նոր որակ է, որն ունի իրեն հատուկ օրենքներ և օրինաչափություններ, որոնցով էլ որոշվում են նրա առաջընթացի ընդհանուր տենդենսերը:

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԸ

1) ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԱՐՔՈՒՐՆԵՐԸ

Հասարակության անդամները միշտ էլ հաղորդակցել են միմյանց հետ բառերի լեզվով՝ հնչյունային լեզվով: Առանց բառերի՝ լեզու չի եղել մարդկության զարգացման և ոչ մի շրջանում:

Լեզվի քերականությունն ու բառային կազմը սերտորեն կապված են միմյանց հետ. նրանց զարգացման օրենքները պայմանավորված

են միմյանցով և լրացնում են իրար: Սակայն դրանով հանդերձ՝ նրանցից յուրաքանչյուրը ունի իր դրսևորումներն ու դերը լեզվի ընդհանուր համակարգի մեջ: Լեզվի բոլոր բառերը միասին կազմում են նրա բառային կազմը, որն ունի իր հիմնական բառային ֆոնդը, որի մեջ մտնում են նաև բոլոր արմատական բառերը, որպես նրա միջուկ: Լեզվի հիմնական բառաֆոնդը իր ծավալով ու կայունությամբ տարբերվում է բառային կազմի մեջ մտած մյուս բառերից. նա բառապաշարի այն մասն է, որը նոր բառեր կազմելու հիմք է տալիս, հետևաբար՝ նրա զարգացման օրենքներով կատարելագործվում ու հարստանում է լեզուն: Նա թեև ծավալով ավելի փոքր է, քան բառային կազմը, բայց՝ ա) ընդգրկում է լեզվի բառապաշարի այն տարրերը, որոնք կենսական նշանակություն ունեն լեզուն կրող ժողովրդի համար նրա զարգացման տվյալ շրջանում, բ) ավելի կայուն է ու ազդեցությունների քիչ ենթակա, գ) այս կամ այն չափով ընդհանուր է նաև համաժողովրդական լեզվի բարբառների համար, դ) նոր բառեր կազմելու հիմք է տալիս: Բառային հիմնական ֆոնդի այս հատկությունները նրան դարձնում են լեզվի բառային կազմի գլխավոր մասը, որը լեզվի քերականության հետ միասին որոշում է յուրաքանչյուր կոնկրետ լեզվի բնույթն ու զարգացման աստիճանը՝ նրա պատմության տվյալ էտապում:

Լեզվի բառային կազմը գտնվում է անընդհատ փոփոխման ու համալրման պրոցեսի մեջ. նա, իբրև լեզվի բնորոշ հատկանիշներից մեկը, անմիջականորեն կապված է մարդու գործունեության հետ և նոր բառերի ու հասկացությունների միջոցով արտացոլում է բոլոր այն տեղաշարժերը, որոնք կատարվում են հասարակության տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում:

Լեզվի բառային կազմի մեջ կատարված այդ փոփոխությունները արտացոլվում են նաև հիմնական բառաֆոնդի մեջ, որը նույնպես համալրվում ու հարստանում է նոր տարրերով, թեև ավելի դանդաղ, քան բառային կազմը: Հիմնական բառաֆոնդի փոփոխությունները գլխավորապես ընթանում են նրա տարրերի ընդարձակման ու հարստացման ուղիով. նա ժողովրդի կյանքում կատարված տեղաշարժերի հետ համալրվում է, ընդունում է նոր բառեր՝ պահելով նաև հները, և այդպիսով դարերի ընթացքում կուտակում, ձեռք է բերում զարգացման նոր հնարավորություններ և օգտագործվում որպես լեզվի բառային կազմի հիմք:

Այսպիսով, լեզվի բառային կազմը և հիմնական բառաֆոնոը միմյանց հետ սերտորեն կապված լեզվական այնպիսի տարրեր են, որոնք քերականության հետ հանդիսանում են լեզվի հիմնական բաղադրիչները: Ինչպես բառային կազմը, նույնպես և հիմնական բառաֆոնոը պատմական կատեգորիաներ են և լեզուն կրող ժողովրդի զարգացմանը զուգընթաց համալրվում ու հարստանում են: Նրանք ժողովրդի զարգացման տարբեր շրջաններում ունեն նոր վիճակներ, որոնք միմյանց չբացասելով հանդերձ՝ տարբերվում են իրարից իրենց ծավալով և բառեր կազմելու հնարավորություններով, հետևաբար նաև զարգացման նոր օրենքներով:

Գրաբարի բառային կազմը, մեզ ավանդված գրավոր աղբյուրների (V-X դարի) տվյալներով, ընդգրկում է ավելի քան 60 հազար բառ: Սակայն բառերի այդ քանակությունը միայն ընդհանուր գծերով կարող է ներկայացնել հին հայերենի պատկերը: Նա ըստ էության գրավոր լեզվի՝ գրաբարի բառապաշարն է, որից դուրս են մնացել՝ ա) բարբառային բազմաթիվ բառեր, բ) գրավոր գրականության մեջ գործածված, բանասերների ուշադրությունից վրիպած բառեր և տերմիններ, գ) հայերենի բառերի բազմաթիվ առումներ, որոնք չեն գործածվել մեզ հասած գործերում, դ) հեթանոսական հին մշակույթի ու սովորությունների հետ կապված բառեր, որոնք ընդունելի չեն եղել քրիստոնեական վարդապետության կողմից, ե) հայերեն այն բառերի մի զգալի քանակությունը, որը գործածական է եղել բանավոր խոսքի մեջ, բայց գրավոր լեզվում փոխարինվել է պարսկերենից և այլ լեզուներից փոխառված բառերով և այլն: Այդ քանակության մեջ լրիվ չեն մտնում նաև X դարից հետո եղած հայ հարուստ գրականության մեջ գործածված բառերը:

Սակայն այդ բոլորով հանդերձ, հիևգերորդ դարի հայերենի բառերի վերոհիշյալ քանակը ցույց է տալիս, որ գրաբարը ժամանակի հարուստ և զարգացած լեզուներից է եղել: Բառերի այդ թիվը համեմատաբար ավելի լրիվ չափով կարող է ներկայացնել հայերենի հարստությունը, եթե նկատի ունենանք նաև այդ բառերի բազմաթիվ առումները, որոնք վկայված են հիևգերորդ դարի գրականությամբ. օրինակ՝ **ազգ** բառը ունեցել է՝ 1. տեսակ, 2. սերունդ, 3. ցեղ, 4. տուն, ընտանիք, 5. ժամանակ, 6. ժողովուրդ, 7. կարգ, դաս, 8. կերպ, ձև և այլ առումներ. **առնելը**՝ 1. անել, կատարել, 2. ստեղծել, 3. փոխել, 4. ունենալ, 5. ուղարկել և այլն. **առնուլը**՝ 1, առնել, բռնել, 2. ձեռք բերել,

3. վերցնել, 4. տիրել, գրավել, 5. հափշտակել, 6. գործածել, 7. հասկանալ, 8. տեղեկանալ, 9. սկսել, 10. հաջորդել և այլն. **արկանելը**՝ 1. գցել, նետել, 2. դիպչել, 3. խոթել, 4. փռել, 5. լցնել, 6. հագնել, 7. վերցնել, 8. վրա գցել, 9. շինել և այլն. **խոչը**՝ 1. արգելք, 2. ոգնու փուշ և այլն, **հանելը**՝ 1. դուրս հանել, 2. առնել, վերցնել, խլել, 3. մատուցել, նվիրել, բաժին հանել, 4. վերածել, 5. տարածել, հռչակել, 6. հնարել, 7. գուշակել, մարգարեանալ, 8. զենք քաշել և այլն. **նշանը**՝ 1. նշան, 2. հրաշք, 3. դրոշ, 4. խաչ, 5. նշանտուք, 6. նշանակետ, 7. նմանություն, 8. թագավորի ցեղական դրոշմն ու գավազանը և այլն. **նշանագիրը**՝ 1. գիր, տառ, այբուբեն, 2. նամակ, բարևագիր, 3. հիշատակարան, 4. նոտար, գրողը և իր գրվածքը, 5. հեղինակ, 6. գիրք, Աստվածաշունչ, 7. ձեռագիր, ստորագրություն և այլն. **օճակը**՝ 1. օգնություն, 2. հնարք, 3. ներում, 4. բարիք, երախտիք, 5. հաջողություն, 6. իշխանություն, 7. թույլտվություն, հրաման և այլ առումներ: Այդպիսի բառերի թիվը անընդհատ կարելի է բազմացնել: Սակայն միայն բառերի առումներով չէ, որ հարուստ է գրաբարը. դրանց պետք է ավելացնել բազմաթիվ ոճեր ու բառակապակցություններ, որոնք ունեցել են հատուկ իմաստներ. այսպես օրինակ՝ **արկանել** բառով կազմվել են՝ յինքն արկանել, ձեռն արկանել, ընդ միմեանս արկանել, ձայն արկանել և այլն, **միտ** բառով՝ միտ առնել, միտ դնել, ընդ միտ տանել, ի միտ առնուլ, զմտաւ ածել, ընդ միտ ածել, ի միտս գալ, ի մտաց արկանել, ընդ միտս հարկանել, ընդ միտ մտանել, ի մտաց ասել և այլն, **հանել** բառով՝ հանել ընդ սուր, ի վեր հանել, հանել յայլ լեզու, յինքն հանել, հանել յումէքէ, հանել ընդ գլուխ, հանել իրաւունս, հանել զսիրտ ուրուք և այլն, **առնուլ** բառով՝ առնուլ զդրունս, ահ առնուլ, խումբ առնուլ, առեալ լինիլ և այլն, **առնել** բառով՝ առնել ընդ ումէք, առնել զոք ի վերայ, առնել զոք, առնել որդիս, առնել ջուր, պարգևաւ առնել զոք և այլն, **ակն** բառով՝ ակն արևու, ակն շինուածոյ, յականէ յանուանէ, յականէ կոչել զոք, առ ականէ, ակն ի խոնարհ, ակն ի ճանապարհ, յական թօթափել, յակն անկանել, ակն ածել, յակն առնուլ, ակն առնուլ, յակն արկանել, ակն դնել, յակն գալ, ըստ ակն անկանել, ընդ ակամբ հայել, ընդ ակամբ լինել, ընդ ակն խոցել, ակն լուսոյ և այլ ոճեր ու դարձվածքներ, որոնք իրենց տարբեր իմաստներով հնարավորություն են ընձեռել բազմապիսի հասկացություններ առանց որևէ դժվարության արտահայտելու համար:

Գրաբարի բառապաշարը իր հարստությամբ ու ճկունությամբ հետ չէր մնում ժամանակի առավել զարգացած ու մշակված լեզուների բառապաշարից: Նա լրիվ չափով բավարարում էր ժամանակի գիտության պահանջները և առանց որևէ դժվարության արտահայտում էր բազմապիսի հասկացություններ: Գրաբարի բառապաշարը հինգերորդ դարում հատկապես հարուստ էր պետական-վարչական կյանքը, քրիստոնեական վարդապետության տարբեր հասկացությունները, փիլիսոփայության ու պատմագրության զանազան երևույթները արտացոլող բառերով ու տերմիններով:

Հին հայերենի բառապաշարի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեր թվականության հինգերորդ դարում արդեն հայերենի մեջ կային բազմաթիվ փոխառված բառեր, որոնք վկայում էին նախ հայերենի՝ զարգացման երկար շրջան անցնելու, ապա օտար տարրը յուրացնելու ընդունակ լեզու լինելու մասին: Այդ բառերի մեջ հանդիպում են խեթերեն, ուրարտերեն, միտաներեն, ասորերեն, պարսկերեն լեզուներից փոխառված, ասուրերեն և բազմաթիվ այլ բառեր, նաև այնպիսիներ, որոնց ծագման հարցը դեռևս չի պարզված: Այդ փոխառությունների մեջ հատկապես աչքի են ընկնում պարսկերեն բառերը, որոնց թիվը 1400-ից ավելի է: Հայ պետական կյանքի ու երկրի կառավարման հետ կապված բառերի գերակշռող մեծամասնությունը պարսկերեն է: Այդ փոխառությունների մանրամասն ուսումնասիրությունը տվել է պրոֆ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ: Պրոֆ. Աճառյանի կարծիքով՝ հայերը հարևան և այլ ժողովուրդներից վերցրել են բառեր, որովհետև ենթարկվել են նրանց ազդեցությանը: Զօխտելով ազդեցությամբ հայերենին անցած որոշ բառերի առկայությունը մեր գրականության մեջ՝ պետք է ընդգծենք, որ միշտ չէ, որ լեզվի մեջ պահպանված այս կամ այն բառը կամ բառերը վկայում են օտար ազդեցության մասին: Այդ բառերից շատերը անցել են հայերենին հենց փոխառու լեզվի վրա նրա գործած ազդեցության պրոցեսում, որովհետև պատմական բերումով այդ լեզուները կրող ցեղերը կամ նրանց առանձին հատվածները ձուլվելով հայերի մեջ՝ գործածել են հայերենը իբրև ընդհանուր լեզու, բայց դրանով հանդերձ իրենց հին լեզվի որոշ տարրերով հարստացրել են հայերենը: Այդպիսի դեպքերում, իհարկե, չի կարելի ենթադրել, թե հայերենն է ենթարկվել նրանց ազդեցությանը:

Այսպիսով, հայերենը իր նախագրային շրջանում շփվելով ցեղակից և ոչ ցեղակից լեզուների հետ՝ փոխ է առել նրանցից բազմաթիվ բառեր, սեփականել է դրանք և հարստացել դրանց հաշվին: Դարեր տևող այդ փոփոխությունների ընթացքում հայերենին ծուլվել են շատ լեզուներ և իրենց բառապաշարից շատ բառեր տվել են հայերենին: Դրա հետ միասին հայերենը անհրաժեշտության դեպքում փոխ է առել հարևան ժողովուրդներից բառեր ու տերմիններ և այդ ձևով լրացրել է իր բառապաշարը չունեցած տերմիններով ու բառերով: Սակայն նա երբեմն ենթարկվել է տարբեր ազդեցությունների՝ գործածել է օտար բառեր, մոռանալով սեփականները: Այսպես, օրինակ՝ պարսկերեն բառերի մի զգալի մասը հայերենի մեջ է մտել ոչ իբրև անհրաժեշտություն, այլ իբրև ազդեցություն: Այդ բառերը հայերենում ամրացվելու շրջանում մոռացվել են հայերեն բազմաթիվ բառեր, կամ լավագույն դեպքում գործածվել են երկու զուգահեռ ձևերը և իբրև նույնանիշ բառեր մնացել են հայերենում: Հինգերորդ դարի մեր մատենագրության մեջ օգտագործված բազմաթիվ նույնանիշ բառերի փաստը միայն կարելի է ճիշտ մեկնաբանել հայերենի զարգացման ու հարստացման այդ պրոցեսները նկատի ունենալով:

2) ԳՐԱԲԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՌԱՖՈՆԴ

Լեզվի հիմնական բառաֆոնդը ընդգրկում է լեզվի բառային կազմի միայն այն բառերը, որոնք արտահայտում են առավել կենսական նշանակություն ունեցող հասկացություններ, պահպանվում են երկար ժամանակ, դարերի ընթացքում և նոր բառեր կազմելու հիմք են տալիս: Այս սահմանումից բխում է, որ գրաբարի բառային հիմնական ֆոնդի մեջ մտնում են՝

ա) Դերանունները. ես, դու, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն և այլն:

բ) Թվական անունները. մի, երկու, երեք, չորք, հինգ, վեց, եւթն, ութ, ինն, տասն և այլն:

գ) Ազգակցական բառերը. հայր, մայր, եղբայր, քույր, դուստր, նու, տայգր, կին, այր, տիկին և այլն:

դ) Մարդու մարմնի մասերի անունները. գլուխ, երես, վիզ, իրան, կոկորդ, ակն, աչք, ունկն, քիթ, բերան, լեզու, ձեռք, մատն, ոտն, թոք,

սիրտ, ստամոքս, փող, ոսկր, ողն և այլն:

ե) Ընտանի և վայրի կենդանիների անունների մեծ մասը. եզն, կով, ոչխար, ուլ, որոջ, ձի, նժոյգ, ջորի, էշ, աւանակ, գոմէշ, գառն, այծ, առիւծ, գայլ, շուն, կատու, արջ, մուկն, ծուկն, եղն, հաւ, կռունկ, ճնճղուկ, նոխազ, գուարակ, եղջերու և այլն:

զ) Երկրագործությանը և բուսականությանը վերաբերող բառերը. ցորեան, գարի, բրինձ, կաղամբ, կանեփ, շաղգամ, սոխ, վարունգ, բոյս, կանաչ, արտ, աստառ, ծառ, ծաղիկ, ծիրան, խնձոր, խաղող, սալոր, տանձենի, վարդ, վարդենի, դեղձենի, տերև, փայտ և այլն:

ե) Պետական, կառավարման կյանքի գանազան հասկացություններ արտահայտող բառեր. աշխարհ, մարգ, շէն, ոստան, սահման, տուն, տէր, ազատ, պետ, դատ, դատաւոր, դեսպան, իշխան, հազարապետ, հրամանատար, նախարար, նահապետ, հրովարտակ, նամակ, վկայ, վճիռ, օրէնք, պատերազմ, արշաւ, գունդ, դրօշ, զար, զօրք, թշնամի, հաշտութիւն, պայքար, վաշտ, գէնք, զրահ, նիզակ, նետ, վահան, տապար, տեգ, թագաւոր, թագուհի, արքայ և այլն:

ը) Քրիստոնեական վարդապետության ու կրոնական բառեր. աստուած, սուրբ, անետարան, դէւ, սատանայ, քահանայ, երեց, կաթողիկոս, վարդապետ, եպիսկոպոս, բախտ, զոհ, մարգարէ, կախարդ, մեհեան, նզով, քարոզ, օրհնութիւն և այլն:

թ) Սովորական կյանքին վերաբերող բազմաթիվ բառեր. ագահ, ագի, ագդ, ազնիւ, աթոռ, ալիք, ախորժ, ախտ, ածել, ահ, աղ, աղբ, աղերս, աղօտ, աճել, ամ, ամբառնալ, ամբոխ, ամեն, այգ, այրել, անտառ, անօսր, աշակերտ, ապականել, ապաւեն, առաջ, առասպել, առաւօտ, առնել, առնուլ, ասել, աստղ, արագ, արդար, արեգ, արեգակն, արեւ, արի, արծաթ, արկանել, արձակել, արմատ, արուեստ, արտաքին, արտաքս, արտօսր, արփի, աւագ, աւանդել, աւելի, ափն, բագում, բաժակ, բաժանել, բախել, բակ, բան, բարբառ, բարի, բարկ, բարձ, բարձր, բաց, բեռն, բերել, բժշկել, բիւր, բղխել, բոլոր, բողոք, բովանդակ, բոց, բոյժ, բուժել, բուն, բուռն, գագան, գալ, գաղթ, գաղտ, գանձ, գաւառ, գեղ, գեղեցիկ, գեղձ, գետ, գետին, գիշեր, գիր, գիրկ, գլուխ, գնալ, գոլ, գործ, գութ, գրաւ, գրել, գօտի, դադար, դալար, դաս, դատել, դար, դարձ, դաւ, դաւանել, դէպ, դժոխ, դժուար, դիզանել, դիւր, դնել, դուլ, դուռն, դրօշել, ելանել, եղջիւր, երագ, երամ, երանի, երգ, երէկ, երկայն, երկիր, երկին, երկն, զայրանալ, զարթնուլ, զարմանալ, զգալ, զգոյշ, զօր, զօրութիւն, էակ, էջ, ըմպել,

ընդ, ընծիւղ, ընտանիք, ընտիր, թախանձ, թանձր, թաւալ, թափել, թխել, թողուլ, թուել, թռչել, թօթափել, ժամ, ժողով, ժողովել, յոյժ, ժխտել, իմանալ, իմաստ, իր, լալ, լայն, լարել, լեզու, լի, լիզուլ, լինել, լծել, լոյս, լսել, լրումն, խաղ, խաղաղ, խայտալ, խանձ, խառն, խառնել, խարշել, խափան, խելք, խլել, խմոր, խնդիր, խոկ, խոստանալ, խոստովանել, խոր, խորիւն, խորհուրդ, խտիր, խօսել, ծալ, ծածկել, ծայր, ծանօթ, ծարաւ, ծիծաղ, ծնունդ, ծով, ծորալ, ծփալ, կազմ, կամ, կայծ, կայծակել, կայտառ, կանգնել, կանոն, կառուցանել, կարգ, կարծ, կեանք, կեր, կերպ, կէս, կլանել, կնքել, կող, կողմն, կոչ, կործանել, կոիւ, կրակ, կցել, հալածել, հաճել, համայն, համար, համբոյր, համր, հանել, հատանել, հարկ, հարուածել, հարցանել, հաւաքել, հեղուլ, հեռանալ, հերկ, հիւթ, հոգ, հոգի, հոլովել, հրամայել, հորան, ձագ, ձայն, ձգել, ձիւն, ձոր, ձօնել, դել, դօղանջել, ճակատ, ճահ, ճանաչել, ճաշակ, ճարտասան, ճարտար, ճեմել, ճշմարիտ, մագ, մալել, մածեալ, մածուն, մահ, մաղել, մանուկ, մանր, մատեան, մարգարիտ, մարդ, մարմին, մարտ, մեծ, մեկնել, մեղք, մեջ, միտք, մոռանալ, մօտ, յաղթել, յաճախ, յաճախել, յայտ, յաջորդ, յաջորդել, յար, յաւետ, յենուլ, յոյս, յուզել, յօժար, նախ, նաւ, նեղել, նետ, նիրի, նկար, նման, ննջել, նուագ, նուաճել, նստել, շաչել, շար, շեշտ, շնորհել, շոգի, շուրթն, շուրջ, շտեմարան, շփոթել, ոգի, ոխք, ողջ, ոսկի, որբ, ործ, որոճել, ուխտ, ուղիղ, ունել, ուշ, ուրանալ, չար, չափ, չոր, չու, չուել, պահ, պահակ, պահել, պայազատ, պաշտօն, պատասխանի, պատեհ, պատիւ, պատմել, պատուել, պատուեր, պատրաստ, պար, պարկեշտ, պարսպել, պարտ, պետք, պղինձ, պսակ, պտուղ, պրկել, ջախել, ջեռնուլ, ջերմ, ջուր, ջրել, ռազմ, ռազմիկ, ռոճիկ, սադրել, սակաւ, սակր, սահմանել, սայլ, սան, սանձ, սանձել, սառն, սաստել, սատակել, սատար, սեղան, սեռ, սեր, սերմն, սև, սեր, սթափել, սիրել, սկիզբն, սուսեր, սուտ, սուր, սպաս, ստոյգ, ստոր, սրբել, սփռել, վագել, վաճառ, վաճառել, վայել, վայթ, վանել, վառ, վառել, վատ, վար, վարար, վարդ, վարժ, վարկանել, վարծ, վեհ, վեր, վերջ, վեճ, վկայել, վճարել, վրեժ, տագնապ, տալ, տաշել, տատանել, տարի, տեղալ, տեղի, տես, տեսանել, տիրել, տոչորել, տօն, րոպէ, ցած, ցանկ, ցանց, ցաւ, ցիր, ցնցել, ցօղել, փախչել, փակ, փակել, փայլել, փաստ, փափուկ, փեսայ, փոխ, փող, փործ, փուշ, փրկել, քաղ, քաղցր, քայլ, քաջ, քար, քարշել, քաւել, քերել, քեն, քննել, քող, քուն, քրքրել, օգնել, օդ, օթ, օծանել, օձ, օտար, օր,

օրինակ, օրինակել, օրհորդ, օրօրոց և այլն:

Գրաբարի հիմնական բառաֆոնդի մեջ եղած բառերի մեծ մասը պահպանվել է հայերենի բարբառների ու ազգային լեզվի մեջ և նոր բառեր կազմելու անսահմանափակ հնարավորություններ է ստեղծել: Սակայն այդ չի նշանակում, թե գրաբարի հիմնական բառաֆոնդը ամբողջությամբ անցել է ժամանակակից հայերենին կամ բարբառներին, կամ ընդհանրապես փոփոխություն չի կրել: Հիմնական բառաֆոնդը լեզվի ընդհանուր բառակազմի առավել կայուն և դանդաղ փոփոխվող միջուկն է, որը կուտակվում է դարերի ընթացքում, բայց այդուհանդերձ նա քերականության համեմատությամբ ավելի արագ է փոխվում ու համալրվում: Հատկապես արագ են փոխվում կամ համալրվում լեզուն կրող ժողովրդի քաղաքական կյանքի, սովորությունների, հասարակական հարաբերությունների, արտադրության պրոցեսի և գիտության զանազան բնագավառների տարբեր երևույթներ արտացոլող բառերը: Այդ նշանակում է, որ լեզվի հիմնական բառաֆոնդը պատմական կատեգորիա է, որը թեև ավելի դանդաղ, քան լեզվի բառային կազմը, ժողովրդի զարգացմանը զուգընթաց կատարելագործվում ու համալրվում է նախ իր ներքին միջոցների ընդարձակման ու ծավալման, ապա այլ լեզուներից ընդունած և յուրացրած բառերի հաշվին:

3) ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ա) ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հին հայերենի բառակազմության հիմնական եղանակը բաղադրությունն է, որը իր գլխավոր գծերով ու կանոններով պահպանված է նաև ժամանակակից հայերենում ու բարբառներում: Հայերենի բառակազմական այդ եղանակը շատ հնուց է գալիս՝ կան բաղադրություններ, որոնք նույնիսկ գրաբարում չեն գիտակցվել. ինչպես՝ հլու (հու-լու), հմուտ (հու-մուտ), հզօր (հ-զօր), ընկեր (ընդ-կեր), նզով (ն-զով), ջերմն (ջեր-մն) և այլն: Գրաբարի բառակազմական գործունեականները եղել են հարադրություններ, կցական և իսկական բարդություններ: Այդ նշանակում է, որ գրաբարի, ինչպես նաև ժամանակակից հայերենի բոլոր բաղադրությունները առաջացել են ինքնու-

րույն իմաստ ունեցած բառերից: Հարադիր բարոյությունների մեջ հատկապես աչքի է ընկնում այն տեսակը, որը կազմվում է բայից և իբրև բայի լրացում: Խանդես եկած որևէ հարադիր բառից. ինչպես՝ ակն ածել, ակն դնել, գործ դնել, գութ արկանել, ձեռն արկանել, պատասխանի տալ, պատասխանի առնել, պատերազմ տալ, տեղի տալ և այլն: Հարադիր բարոյությունները կազմվում են նաև միևնույն արմատի կրկնությամբ, որի մեջ արմատներից մեկը խանդես է գալիս իբրև լրացում, օրինակ՝ լկանս լկել, շահս շահել, կարծիս կարծել, խրատն խրատ, վաստակս վաստակել, կաքաւս կաքաւել և այլն: Այս տիպի բարոյություններում ընդգծվում է բայի իմաստը: Նման տիպի բարոյություններ չկան ժամանակակից հայերենում:

Գրաբարի հարադրական բարոյությունների մեջ կան այնպիսիներ, որոնք պատկերավոր խոսքի իմաստ ունեն. ինչպես՝ ի մտի եղեալ, ի պար գալ, յանձն առնուլ, ի պար ածել և այլն: Այսպիսի բարոյություններ շատ տարածված են գրաբարում: Հաճախ դժվար է որոշել, թե այդպիսի կապակցությունների մեջ բոլոր բառերը պահե՞լ են իրենց նշանակությունը, թե՞ արդեն մթնել է նրանց շարահյուսական կապակցությունը, և նրանք խանդես են գալիս իբրև բայական մի առում ունեցող բառեր: Այդ հարադիր բարոյություններից շատերը հետագայում պարզացել են և արտահայտվել մի բառով կամ դեռևս ձևականորեն տարբեր, բայց իմաստով միացած բառերով. օրինակ՝ գրաբարի **ի գործ ածել** բարոյության փոխարեն այժմ կիրառվում է գործածել, **ի պար գալ**՝ պար գալ և այլն:

Գրաբարում որոշ բայեր գործածվում են միմյանց հետ իբրև հարադիր բարոյություններ՝ մի իմաստով. օրինակ՝ եկն եհաս, եկն եմուտ, կային պահեին և այլն: Նման բառաբարոյություններ, պետք է ասել, հատուկ են նաև ժամանակակից հայերենին և հատկապես բարբառներին: Այդ նշանակում է, որ հնուց ի վեր նման բառակապակցություններ տարածված են եղել հայերենում:

Հարադիր բարոյությունները բառաբարոյացման ավելի պարզ տեսակներ են. գրաբարի հարադրական բայերից կազմվել են բազմազան կցական և իսկական բարոյություններ. օրինակ՝ յանձն առնուլ-յանձնառու-յանձնառութիւն, յանձն առնել-յանձնարարութիւն, վրեժ խնդրել-վրեժխնդիր-վրեժխնդրութիւն, վրեժ առնուլ-վրիժառու-վրիժառութիւն, ակն առնուլ-ակնառու-ակնառութիւն, ակն ածել-ակնածու-ակնածութիւն, ակն արկանել - ակնարկել - ակնարկութիւն, ահ

արկանել-ահարկու-ահարկութիւն-ահարկել և այլն Այս բարդութիւններէն անխտիր կազմվում են իսկական բարդութիւններ այն դեպքում, երբ բարդութեան երկրորդ եզրը սկսում է բաղաձայնով օրինակ՝ վրեժխնդիր-վրեժխնդրութիւն, բայց նաև վրիժախնդրութիւն և այլն Վերջին տեսակի բարդութիւնների մէջ շեշտակորույս ձայնավորները հնչյունափոխվում են, իսկ առաջին դեպքում՝ ո՛չ

Հարադրութիւնները գրաբարում կազմվել են ինչպես առանց շաղկապի, նույնպես և շաղկապով, օրինակ՝ այր և ձի, այրուծի, երթ և եկ, այր ընտիր, այրընտիր լինել, բայ բան-բամբաս, մէջ օր և այլն Գրաբարում հարադիր բարդութիւնները միայն և շաղկապով են բարդվել Ու շաղկապը տարածված չի եղել, թեև մի քանի բառերում գործածվել է իբրև շաղկապ (այրուծի, ութուտասն, ութուտասնամեայ) նույնիսկ հինգերորդ դարի մատենագրութեան մէջ Այդ հանգամանքը ցույց է տալիս, որ ու շաղկապը շատ վաղուց եղել է հայերենում և ոչ թե թուրքերենից է փոխառված, ինչպես ենթադրել են հայ բանասերներից ոմանք

Վերոհիշյալ հարադրութիւնները իմաստով ծուլվելով՝ կազմում են կցական բարդութիւններ ինչպես այրուծի, երթևեկ, երթևեկել, ելնէջ, ելնմուտք և այլն, որոնք արդեն ընկալվել են իբրև մի բառ, որից կազմվել են բարդ կամ ածանցավոր նոր բառեր

Կցական բարդութիւնները իրենց որոշ դրսևորումներով շարահյուսական կատեգորիաների հետ են կապվում, այսպես, օրինակ՝ գրաբարում, նաև ժամանակակից հայերենում, հարադիր բարդութիւնները կազմող բառերից վերադիրը երբեմն դրվում է սեռական հոլովով ինչպես՝ քեռայր, քեռորդի, մօրեղբայր, մօրեղբօրորդի, հօրքոյր, հօրեղբայր, շանխաղող, շանփին, դրացսպաս և այլն Այս բարդութիւնների մէջ, որոնք կարող են կազմվել նաև հոդակապով, թուլացած է լինում սեռական հոլովով դրված բառի հոլովական իմաստը և այդ պատճառով միանում է նա հատկացյալին և հանդես է գալիս նրա հետ իբրև մի անբաժանելի ամբողջություն Նման բարդութիւններ ժամանակակից հայերենում որոշ դեպքերում կարող են փոխարինվել իսկական բարդութեամբ կազմված բառերով ինչպես՝ ձեռացագիր-ձեռագիր, տանտեր-տնատեր, ուտացաման-ոտնաման, արենխում-արյունախում և այլն

Որոշիչն ու գոյական որոշյալը կարող են միանալ, երբ որոշյալը նախադաս է և կորցնում է գոյականի իմաստը կամ գործածվում է այլ

առումով, մանավանդ այն դեպքերում, երբ որոշիչը թվական անուն է ինչպես՝ ձեռն տալ-ձեռնտու, ձեռն արկանել-ձեռնարկ, հարիւր ամ-հարիւրամեայ, երեսուն օր-երեսնօրեակ, երեք կոյս-երեքկուսի, ձեր-բազատ (ինքնագլուխ), այսպես, որպես և այլն

Գրաբարում տարածված են նաև կրկնավոր հարադրությունները, որոնք մեծ մասամբ գրվում են առանց որևէ շաղկապի օրինակ՝ ազգի ազգի, բեկ բեկ, երփն երփն, պես պես, ծոր ծոր, գեղգեղել, կարկատել, վազվազել, կցկցել, ձգձգել և այլն Այդպիսի կրկնությունների մեջ երբեմն հանդես են գալիս նախդիրներ, որոնք նոր իմաստ են հաղորդում բառին ինչպես՝ ծալ ի ծալ, խիտ առ խիտ, խիտ ընդ խիտ, կեղծս ի կեղծս, օր ընդ օր, պատ ի պատ, մետ ի մետ, գոյզգոյն, կաղ ի կաղ, վառ ի վառ, հոյլ ի հոյլ և այլն Այս բարդությունների մեջ հաճախ փոխվում են բարդության եզրերից մեկի առանձին հնչյունները օրինակ՝ խառն ի խուռն, սպառսպուռ, սուտմուտ և այլն

Կցական բարդությունների մեջ պետք է դասել նաև նախդրավոր բառակապակցությունները, որոնք գրաբարում գրվում էին նաև առանձին և հանդես էին գալիս իբրև շարահյուսական ֆունկցիա ունեցող կապակցություններ ինչպես՝ առ հասարակ, առ անձին, առ ընթեր, ընդ հանուր, ընդ դեմ, ընդ ունայն, առ ընդունել առժամայն, առժամեայ, առոգել, զգետնել, ըստանձնել, առանցանել, առածանիլ, առեղծանել, ընդունել, ընդելուզանել, զանցանել, զարկանել (զհարկանել), զառանցանել, յանցանել և այլն

Իսկական բարդությունները հարադիր և կցական բաղադրությունների հետագա զարգացումն են Բարդության պարզ ձևը հարադրություններն են, մնացած ձևերը նրանց ձևափոխման և միացման հետևանքն են, որոնք արտահայտում են լեզվի բառապաշարի զարգացման ընդհանուր տեղեկեցւոյնը Հայերենի իսկական բարդությունները կազմվում են մեծ մասամբ **ա** հոդակապով, իսկ եթե բարդության երկրորդ մասը սկսվում է ձայնավորով, **ա** հոդակապը չի դրվում ինչպես՝ բանագետ, մարդասեր, անձնավրեժ, կարճամիտ, քաղցրապտուղ, գէշաքարշ, արծաթասեր, խառնախօս, շեղջաշեղջ, դեզադեզ, բայց՝ մեծանուն, գիշերադուես, ինքնանուն, սևակն, վերարկու և այլն

Գրաբարի բառակազմության մեջ նկատելի է, որ՝

ա) Անեզական բառերը բարդության ժամանակ առնվում են արմատի ձևով ինչպես՝ կառք-կառավար, փառք-փառապանծ-փառա-

հեղ, կեանք-կենագործ-կենադարձ-կենագէն-կենագրաւ-կենախուզ-կենածին - կենահաղորդ - կենահրաշ - կենածայն - կենածիր - կենասեր, միտք-միտ առել - մտախոհ - մտախոյզ - մտայոյզ - մտահաճ-մտամատոյց - մտամոլոր - մտայօժար - մտավարժ - մտատես-մտարկութիւն, մեղք - մեղադրութիւն - մեղապարտ - մեղադիր - մեղադրանք, խելք-խելագար-խելաթափ-խելամուտ-խելայեղ-խելատար և այլն:

բ) Այն բառերը, որոնք վերջանում են որևէ բաղաձայնով նախորդվող ձայնորդ հնչյունով, եթե բարդության սկզբում են հանդես գալիս, դրվում են սեռական հոլովով. ինչպես՝ հօրաքոյր, քեռորդի, առնակերպ, ականատես, արժանասու, աստեղաբան, լերինաթինդ և այլն: Բառակազմական այս եղանակը գնալով թուլանում էր և հաճախ նույն բառերից կազմվում էին բարդություններ ուղղական հոլովով: Ժամանակակից հայերենում բառաբարդության այդ եղանակը գործուն է. եթե հանդիպում են նման բարդություններ, ապա նրանք հին բառակազմություններ են, որոնք քարացած ձևով պահպանվում են նոր հայերենում:

գ) Հայցականից կազմված բարդությունների դեպքում անեզական բառերի հոգնակին պահպանվում է. օրինակ՝ կենսատու, կենսաբեր, օրենսգետ, օրենսդիր, մեղսասեր, օրենսպահապան և այլն: Բառակազմական այս եղանակը ավելի ուշ շրջանի հետ է կապվում:

դ) Բառակազմության ժամանակ շեշտակոորույս եղած ձայնավորները հնչյունափոխության են ենթարկվում ընդհանուր կանոնների համաձայն:

Հայերենի իսկական բարդությունները, ինչպես ասացինք, ավելի ուշ շրջանի իրողություններ են. նրանք կցական բարդություններ են, միայն այն տարբերությամբ, որ նրանց ա հոդակապը, որը, ինչպես ցույց է տվել Մ. Աբեղյանը, բառահիմքի ձայնավոր հնչյունն է եղել, չի գիտակցվում իբրև բառահիմքի վերջավորություն և հանդես է գալիս բառամիացման՝ հոդակապի ֆունկցիայով: Հայերենում կան բարդություններ, որոնց մեջ ա հոդակապի փոխարեն պահպանված են բառահիմքի այլ վերջավորություններ. ինչպես՝ երկուտասան, երկեամ, երեամ, երկրորդ, երրորդ, ընդոծին և այլն: Այդ երևույթը ցույց է տալիս, որ իսկապես ա հոդակապը եղել է բառի հիմքի ձայնավոր հնչյունը, որը պահպանվել է մի շարք բարդությունների մեջ նաև այն ժամանակ, երբ այդ բարդության եզրերը կորցրել են իրենց երբեմնի հիմքի ա ձայնավորը: Այդ բառաբարդությունների անալոգիայով նաև

այն բառերն են ստացել **ա** հնչյունը, որոնք հիմքի վերջավորությունը **ա** չի եղել:

Հայերենի բարդ բառերի առաջին բաղադրիչը, իբրև ընդհանուր կանոն, լինում է երկրորդ բառի լրացումը, բայց այդ կանոնը հենց գրաբարում խախտվել էր և, ուրիշ լեզուների անալոգիայով, կազմվում էին այնպիսի բարդություններ, որոնք մեջ առաջին բաղադրիչը երկրորդի լրացումը չէր. օրինակ՝ արժանահաւատ, արժանապատիւ, արժանապատիժ, արժանատանջ, արժանավայելուչ, արժանաքանչ և այլն:

Հայերենում բաղադրության վերջի բաղադրիչով են որոշվել բարդությունների քերականական իմաստները, եթե բարդության վերջին եզրը գոյական է, բառը ստանում է գոյականի, եթե ածական է՝ ածականի, իսկ եթե բայ է՝ բայի իմաստ. օրինակ՝ գոյականներ՝ գուգապատուութիւն (պատվի հավասարություն), զօրագլուխ (զորքի գլուխը, հրամանատար), ծովեզր (ծովի եզրը), առնակոյս (սշանված աղջիկ), առնակին (ամուսնացած կին). ածականներ՝ մեծագօր (ամենակարող, մեծ գորություն ունեցող), մեծամեծար (շատ մեծ), մեծապայծառ (մեծ պայծառություն ունեցող), եռամեծար (շատ մեծարելի), եռամեծ (երեք անգամ մեծ). բայական իմաստ արտահայտող բառեր՝ ամենագետ (ամեն բան իմացող), ամենակեցոյց (ամենքին ապրեցնող), ամենահնար (ամեն ինչ հնարող), մեծամեծարար (մեծ գործեր կատարող), կառավարել, մտաբերել, մտադրել, պատուասիրել, արևագալ և այլն:

Այս ընդհանուր օրինաչափությունը, սակայն, հենց գրաբարում խախտվել էր, և գոյականները գործածվում էին ածականաբար, ինչպես նաև ածականները՝ գոյականաբար և բայարմատներով բարդությունները՝ գոյականաբար կամ ածականաբար և այլն:

Ժամանակակից հայերենում ավելի են խախտված բառակազմական այդ օրենքները և հանդես են եկել այնպիսի բառակազմական օրինաչափություններ, որոնք հայտնի չեն եղել գրաբարին:

Բառակազմական այդ հնարավորությունների փոփոխությունները ամենից առաջ պայմանավորված են հայոց լեզվի զարգացման ներքին օրենքներով, որոնք հայ ժողովրդի զարգացման ընթացքում կատարելագործվում ու զարգանում են՝ ձեռք բերելով նոր հատկություններ, և աստիճանաբար անգործածության են մատնում հին օրենքների հետ կապված լեզվական կանոնները:

Բ) ԱԾԱՆՑՈՒՄ

Լեզվի բառային կազմը, ինչպես նաև լեզվի բոլոր կողմերը գտնվում են անընդհատ փոփոխման ու զարգացման մեջ: Լեզվի բառապաշարը զարգանում ու հարստանում է բառաբարդությամբ՝ նոր բառեր կազմելու, տարբեր լեզուներից փոխառություններ կատարելու, ածանցման և այլ եղանակներով: Սակայն այդ եղանակները տարբեր լեզուներում միակերպ չեն արտահայտվում: Լեզուներ կան, որոնց մեջ ածանցումը շատ քիչ նշանակություն ունի, և, ընդհակառակը, կան լեզուներ, որոնք ունեն ածանցման բարդ համակարգ:

Հայերենը պատկանում է այն լեզուների թվին, որոնց մեջ ածանցները բառակազմական մեծ դեր են կատարում: Սակայն ի տարբերություն մի շարք լեզուների, նա համեմատաբար հարուստ է վերջածանցներով: Նախածանցներ նա համարյա չի ունեցել իր զարգացման ավելի վաղ շրջանում:

Ածանցները, ինչպես արդեն ապացուցված է բազմաթիվ ուսումնասիրություններով, առաջանում կամ ստեղծվում են ինքնուրույն բառերից: Լեզվի զարգացման նախագրային շրջանում ընդհանրապես ավելի ընդգծվում է ածանցների առաջացման, իսկ գրավոր շրջանում ստեղծման պրոցեսը: Սակայն ինչպես առաջին, նույնպես և երկրորդ դեպքերում ածանցումը չի կարելի դիտել լեզվի զարգացման ընդհանուր օրինաչափությունից անկախ: Լեզվի նախագրային շրջանում առաջացած ածանցները գրավոր լեզվում ավելի ամրանում են, կայունանում: Այդ պատճառով էլ լեզվի գրավոր շրջանում ստեղծվում են համեմատաբար քիչ քանակությամբ ածանցներ: Այսպես, օրինակ՝ գրաբարի ածանցների մեծ մասը առաջացել է հայերենի նախագրային շրջանում: Գրաբարում, օրինակ, եղել են ած, ալ, ալան, ալի, ային, ան, անի, աւոր, աւո, ար, արան, արդ, ացի, բար, գար, գին, եակ, եայ, եան, եդ, եղեն, եստ, ժետ, ի, իկ, իչ, իստ, իւն, կից, հար, ոց, որդ, ուհի, ուն, ումն, ունդ, ուստ, ուրդ, վետ, օտ, օրեն և այլ անվանական վերջածանցներ, մի շարք բայական, ինչպես՝ ան, ն, չ, նչ, անչ և այլ ածանցներ, որոնց զգալի մասը թեն առաջացել է ինքնուրույն բառերից, բայց նրանց համարժեքները անմիջապես չի կարելի տեսնել ինքնուրույն բառերի մեջ, որովհետև նրանք հիսգերորդ դարից դեռևս շատ առաջ արդեն անճանաչելի

չափով հեռացել էին իրենց սկզբնական ձևերից Այսպես, օրինակ՝ աւոր, տոր վերջածանցը, ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, առաջացել է բեր բառից, ոտ՝ հոտ, օրեն՝ օրենք, ատ՝ հատանել բառերից և այլն

Գրաբարի վերջածանցներից մի քանիսը հինգերորդ դարից դեռ շատ առաջ կորցրել էին իրենց գործունեությունը և հանդես էին գալիս իբրև քարացած ձևեր միայն որոշ բառերում, ինչպես՝ արիմ (հավատարիմ), երիմ (մտերիմ, ոխերիմ), եստ (գովեստ, պահեստ, ուտեստ), որ (բեկոր, հատոր, մոլոր, գլոր, սալոր, շլոր), ուստ (վերուստ, ներքուստ, արտաքուստ), ոք (բորբոք), նի (նախնի, գաղտնի), շի (լայնշի, բոլորշի, գոլորշի), իստ (հանգիստ), օն (զգօն, գողօն, կտրօն), ար (խելար, մթար, տիպար), դի (անջրդի), ախ (յաճախ, շաղախ, փարախ, խրախ), ճան (խրախճանք), ոգ (տրոոգ, փորոգ), իւղ (երկիւղ) և այլն Այդ ածանցներով ոչ գրաբարում և ոչ էլ միջին հայերենում նոր բառեր չէին կազմվում Նրանցից մի քանիսի ածանց լինելը նույնիսկ չէր գիտակցվում

Այդ ածանցներից բացի, գրաբարը ուներ բազմաթիվ ածանցներ, որոնք գործուն էին և՛ հինգերորդ դարում, և՛ միջին հայերենում Նրանց մեծ մասը անցել է նաև ժամանակակից հայերենին

Գրաբարի ավելի ուշ շրջանում հայերեն բառերից կազմվել են նոր ածանցներ, որոնք, սակայն, ոչնչով չեն փոխել եղած ածանցների համակարգը Նրանք միայն բազմացրել են հայերենի ածանցների թիվը՝ ավելի ճկուն դարձնելով նրա բառակազմական հնարավորությունները

Հայերենի ածանցների մեծ մասը, ինչպես նշվեց վերևում, առաջացել է ինքնուրույն բառերից Բայց ինքնուրույն բառերից առաջացած ամեն մի մասնիկ ածանց չի կարող լինել Այսպես, օրինակ՝ հայտնի է, որ հայերեն **այժմ** բառը կազմված է **այս** և **ժամ**, **փոխար՝ փող** և **հար** բառերից և այլն Այդ բառերի **ժմ** կամ **ար** մասնիկները ածանցներ չեն, որովհետև նրանք թեև կորցրել են իրենց ձևը և բառական նշանակությունը, բայց չեն պահպանել իրենց ձևական իմաստը և հանդես են գալիս միայն մի բառում Բառերից ստեղծված մասնիկները միայն այն ժամանակ կարող են իբրև ածանցներ գործածվել լեզվում, երբ նույն ձևով և իմաստով հանդես գան մի շարք բառերում և լեզուն կրող ժողովրդի անդամների կողմից գիտակցվեն իբրև ձևական որոշ նշանակություն ունեցող մասնիկներ

Նույնիսկ այն ածանցները, որոնք մի ժամանակ եղել են ձևական իմաստ ունեցող վերջավորություններ, բայց հետագայում մթազնվել է նրանց իմաստը, դադարում են ածանց լինելուց և ձուլվում են բառին: Այսպես օրինակ՝ հայերեն **չնչին** բառը բարդված է **ոչ-ինչ-ին, միւս** բառը՝ **մի-և-ս** բաղադրիչներից, որոնք ի մի են ձուլվել և կազմել են **չնչին** և **միւս**՝ մեզ համար այժմ արմատական բառերը:

Ածանցումը գրաբարի բառապաշարի հարստացման հիմնական միջոցներից մեկն է: Սակայն նա, ինչպես տեսանք, սերտորեն կապված է բառաբարդացման, հետևաբար նաև փոխառությունների ծանապարհով հայերենին անցած բառերի, ինչպես նաև լեզվի ձևաբանական, շարահյուսական և հնչյունական կազմի մեջ կատարված փոփոխությունների հետ: Նոր բառերի մուտքը հայերենում, բառերի շարահյուսական կապակցությունը, հոլովական ու խոնարհման առանձին ձևերը հաճախ նոր ածանցներ կազմելու հիմք են տվել: Այսպես, օրինակ՝ հայերեն **լուսաբեր** և **լուսաւոր** բառերը մոտավորապես միևնույն իմաստը ունեն, բայց ձևականորեն տարբեր են. առաջինը բարդ բառ է, իսկ երկրորդը՝ ածանցավոր: Այդ բառերի ձևական տարբերությունը արտահայտվում է **բեր-ւոր** բաղադրիչների հնչյունական տարբերությամբ: Գրաբարի **ան, ող, եան, եաւ, եւ** և այլն ածանցները հոլովական վերջավորություններ են, որոնք կորցնելով իրենց հոլովական իմաստը՝ վերածվել են ածանցների: Ժամանակակից հայերենում շատ տարածված ածանցներից **անի, ք, մունք** հոգնակի վերջավորություններ են, իսկ **անց, ցու, յա, ե՝** սեռական հոլովի վերջավորություններ և այլն:

Այսպիսով, գրաբարը հարուստ է ածանցներով և հատկապես վերջածանցներով: Այդ ածանցները առաջացել կամ ստեղծվել են՝ ա) արմատական բառերից՝ հնչյունափոխվելով կամ առանց հնչյունափոխվելու, ինչպես՝ **ատ, հար, թափ, վար, բար, աւոր, օտ** և այլն. բ) հոլովական վերջավորություններից հոլովական իմաստների մթազնման հետևանքով, ինչպես՝ **ան, եան, ող, եւ** և այլն. գ) բայական վերջավորություններից, ինչպես՝ **եալ, իջ, ող** և այլն. դ) հոգնակի վերջավորություններից, ինչպես՝ **անի, ար, ք, ս, ց** և այլն:

Չայերենի ածանցման այդ ընդհանուր տեսղենցները հատուկ են եղել գրաբարին նրա զարգացման բոլոր շրջաններում, այն տարբերությամբ միայն, որ արմատական բառերից վերջածանցներ առաջանալու պրոցեսը ավելի ուժեղ է եղել նախագրային շրջանում, իսկ

հոլովական և բայական վերջավորություններից ստեղծվածներինը գրավոր շրջանում, հատկապես այն դարերում, երբ գրաբարը դադարում է ամբողջ հայ ժողովրդին հասկանալի լեզու լինելուց: Գրական լեզվի զարգացման ընթացքում ինքնուրույն բառերից կարող են ստեղծվել ածանցներ՝ եղած ածանցների անալոգիայով և հատկապես ուրիշ լեզուների ազդեցությամբ: Ածանցումը հատուկ է եղել հայերենին նրա զարգացման բոլոր շրջաններում:

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՆՆԵՐԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ

Հայոց համաժողովրդական լեզուն, որը հայ գրերի ստեղծման շնորհիվ մեր թվականության հինգերորդ դարի սկզբներից գրավոր լեզու է դառնում, ինչպես տեսանք, ունեցել է իր բարբառները, որոնք ուղեկցել են նրան իր գոյության առաջին իսկ օրերից սկսած: Այդ բարբառները գոյացել են ինչպես հայ էթնիկական լեզվի կազմավորման ընթացքում, նույնպես և ավելի ուշ շրջանում՝ ընդհանուր լեզվից բաժանվելու միջոցով կամ հայոց լեզվին ձուլված ազգակից և ոչ ազգակից լեզուների սուբստրատի հիման վրա: Հավանական է նաև, որ բարբառային որոշ տարբերություններ ժառանգվել են հայերենի հիմք-լեզվի բարբառային տարբերություններից: Ինչ ճանապարհով էլ առաջացած լինեին այդ բարբառները, համենայն դեպս միշտ էլ գոյություն են ունեցել և, ինչպես հինգերորդ դարում, նույնպես և նրանից առաջ ու հետո հայ ժողովրդի բոլոր հատվածները չեն խոսել միևնույն բարբառով կամ բարբառներ չունեցող մի միասնական լեզվով:

Հինգերորդ դարի հայ մատենագիրները, հասկանալի պատճառներով, խույս են տալիս բարբառային ձևեր գործածելուց և շատ աղուտ տեղեկություններ են հաղորդում բարբառների մասին. բայց հենց գրաբարի լեզվական բազմազան իրողությունները և հայ մատենագիրների այդ կցկտուր տեղեկությունները հիմք են տալիս խոսելու հինգերորդ դարի հայ բարբառների մասին: Միայն բարբառների առկայությամբ պետք է բացատրել գրաբարի հինգերորդ դարի առաջին կեսի և ավելի ուշ շրջանի լեզվական իրողությունների տարբերությունները, առանձին գրողների ոճական հնարանքներն ու լեզվական «նորմաների» խախտումները հինգերորդ դարում և ավելի

ուշ շրջանի մեր գրականության մեջ և այլն.

Հինգերորդ դարի հայ մատենագիրներից Եզնիկն է, որ առաջին անգամ խոսում է «ստորնեայց» հայերենի և իր գրած բարբառի **այս** բառի իմաստային առումների տարբերության մասին. «Ասի հրեշտակ ոգի, – գրում է նա, – այլ ոգի հարկաւոր՝ որ է հնազանդ և կամակատար. ասի և դև ոգի, այլ ոգի չար վասն անհնազանդութեանն և ապստամբութեանն զոր թեպետ և ի մեր լեզու՝ այս չար ասեմք, որպէս ի խտրանաց հարցն մերոց առաջնոց ըստ սովորութեան ի մեզ կարգելոյ, այլ գիտեմք՝ եթէ այսն հողմ է, և հողմն ոգի, ըստ յառաջագոյնն ասացելոյ Բանգի յորժամ մեք ասեմք՝ թէ սիք շնչէ, ստորնեայք ասեն՝ այս շնչէ»¹ Ինչպէս երևում է մեջբերումից, Եզնիկը տարբերում է երկու բարբառ, որոնցից մեկը համարում է ստորին, հակադրելով այն իր գրած բարբառին, որը, պետք է ենթադրել, որ այդ շրջանում կոչվում էր վերին:

Հինգերորդ դարի բարբառները, գոյության վկայությունը կարող է լինել նաև Կորյունի հիշատակությունը Մարաց կողմերում (Մասիս լեռան հյուսիսարևելյան կողմից սկսած, Արաքս գետի երկու կողմերը, Շարուրի դաշտից մինչև Նախիջևան և այլն) Մաշտոցի կատարած աշխատանքի մասին «Յայնժամ վաղվադակի հրաման առեալ ի թագաւորեն՝ սկիզբն առնելոյ գիտութադուծ կողմանսն Մարաց, որք ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւղադութեան, այլև վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարմատոյցք էին»² Կորյունի այս վկայությունից պարզվում է, որ Վաղարշապատից ոչ շատ հեռու շրջաններում բնակված հայերը իրենց լեզվի և սովորությունների պատճառով դժվարամատույց էին, որ նրանց լեզուն խեցբեկագույն, այսինքն՝ կոշտ ու անմշակ էր և այլն:

Մ. Խորենացին իր պատմության առաջին գրքի ԺԴ գլխում խոսելով Տիտանեան Պայապիս Զադեայի դեմ Արամի վարած պատերազմի և հաղթության մասին՝ հայտնում է, որ Արամը նրան փախցնելով մի կղզի ասիական ծովում՝ թողնում է «գոմն Մշակ անուն յագգէ իւրմէ, և բերր մի ի գօրաց իւրոց ի վերայ աշխարհին և ինքն դառնայ ի Յայս»

«Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել գիտօսս և

¹ Եզնկայ վարդապետի Կողբացոյ եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 64–65
Ստորնեայք բառը բնագրում սխալմամբ տպված է ատորնեայք

² Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 54

զլեզուս հայկական»¹: Ինչպես երևում է մեջբերումից, Խորենացին տարբերում է «գիսուս և զլեզուս» հայկական, այսինքն՝ հայերենը և իր բարբառները: Նա իր պատմության երրորդ գրքի մեջ նույնպես, երբ առիթ է ունենում խոսելու հայերենի մասին, ասում է հայերեն լեզուներ. «Մատուցեալ առ արքայն քահանայի ուրումս՝ Յաթէլ անուն կոչեցեալ, խոստանայր հայկականացս լեզուաց առնել նշանագիրս»², ուրեմն ոչ թե հայոց լեզվի, այլ հայոց լեզուների համար տառեր ստեղծել: Խորենացու այդ վկայություններից կարելի է եզրակացնել, որ նա ծանոթ է եղել հայերեն բարբառներին և այդ պատճառով էլ գործածել է **հայերեն լեզուս և խօսս** տերմինները: Եթե հայերենը բարբառներ չունենար Խորենացու ժամանակ, հազիվ թե նա խոսեր այդ բարբառների ու լեզուների մասին:

Հայերենի բարբառների մասին ավելի որոշակի տեղեկություններ են տալիս համեմատաբար ուշ շրջանի հայ մատենագիրները և հատկապես Դիոնիսիոս Թրակացու թարգմանիչը և թարգմանության մեկնիչները: Նրանք նկատի ունենալով Դիոնիսիոս Թրակացու քերականության բնագրում հիշատակված հունարեն բարբառները և նրանցից բերված օրինակները՝ աշխատել են դրանց մասին գաղափար տալ հայերենի բարբառներից վերցված օրինակներով: Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ թարգմանիչը հունարեն բնագրի «Յադագս անուան» պարագրաֆի Αἰολέων բառի փոխարեն դրել է հայերեն Գորդայից անունը, որ ցույց է տալիս, որ այդ ժամանակ հայերը զանազանում էին նաև Գորդայից բարբառը, որի մասին Դավիթ փիլիսոփան իր մեկնության մեջ գրում է.

«Եւ գաղափարք հայրանուանցն, որպէս թե անուն որդւոյն գառաջին վանգն ի հաւրն անուանէ ունիցի. իբր ի Բաբայ՝ Բաբգէն և ի Սամայ՝ Սամեան, ըստ որում և Գորդայիցն գաղափար է, զի որպէս դոքա ծեքելով ի հոմանուն լեզուէ ի խօսս, նմանապէս և ի հոռոմին՝ Դովրացի իմն անուանեալ լեզու»³:

Ինչպես երևում է բերված պարբերության վերջին մասից, Գորդայիցն նշվում է իբրև այնպիսի օրինակ, որը ցույց է տալիս, որ դրանք ծովելով միևնույն լեզվից՝ խօսս-ի, այսինքն՝ բարբառների են վերածվել, ինչպես հույների մոտ Դովրացի կոչված լեզուն: Այդ Գոր-

¹ Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 50:

² Նույն տեղում՝ էջ 333:

³ Н. Адоиц, Дионисий Фракийский и арм. толкователи, стр. 104-105.

դայ կամ Կորճայ կոչված բարբառը ունեցել է իր հնչյունական առանձնահատկությունները, որոնց մասին հիշատակվում է ինչպես բուն քերականության թարգմանության, նույնպես և մեկնություններին մեջ. այդ առանձնահատկություններից մեկը եղել է-ի **այ** համարժեքը. քերականության հայ մեկնիչները բոլորն էլ նշել են, որ Մանեճ բառը այդ բարբառում արտասանվել է Մանայճ: Իսկ Անանուն մեկնիչը գանազանում է նաև բարբառների հնչյունական այլ տարբերություններ. «Այլ էր իսկ ճշմարտապես ի տեսակի խօսիցն, որպես բազուկ, պազուկ, փազուկ»¹:

Այս փաստերը ավելի ճշտվում ու իմաստավորվում են Ստեփաննոս Սյունեցու (VIII դար) վկայություններով. նա իր «Մեկնութիւն քերականին» աշխատության «Յաղագս քերականութեան» գլխում հանգամանալից տեղեկություններ է տալիս հայերենի բարբառների մասին: Նա գրում է, որ յուրաքանչյուր լեզվի ստուգաբանության, այսինքն՝ արմատները գտնելու և ճիշտ խոսելու համար մեծ նշանակություն ունեն հարևան ժողովուրդների *լեզուների տվյալները*, այդ պատճառով էլ անհրաժեշտ է նրանց իմացումը. «Արդ լեզուս ասէ, որ շուրջ զքն սահմանակից աշխարհք իցեն, գիտութիւն լեզուաց նոցա, վասն զի կարի աւգտակարք են այս <ք> առ ստուգաբանութիւն»²: Ուրեմն ըստ Ս. Սյունեցու առանձին լեզուներ են կոչվում սահմանակից աշխարհների լեզուները, որոնց գիտելալը խիստ արժեքավոր է համարում նա:

Սակայն նա կարևոր է համարում նաև լեզվի սեփական բարբառներին ծանոթ լինելը, որովհետև, նրա կարծիքով, այդ բարբառները նույնպես օգտակար են. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառսն զեզերականս, - ասում է նա, - որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽութային և զՉորրորդ-Յայեցին և զՍպերացին և զՍիւնին և զԱրցախայինն. այլ մի՛ միայն զմիջերկրեայնս և զոստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիք են ի տաղաչափութեան. այլև աւգտակարք ի պատմութիւնսն, զի մի՛ վրիպեսցի անընդել գոլով լեզուացն»³:

Այս վկայությունից երևում է, որ՝ ա) Սյունեցին զբառս եզերականս ասելով հասկանում է սեփական լեզվի՝ **զքո լեզուիդ** բարբառ-

¹ Նույն տեղում, էջ 149:

² Նույն տեղը, էջ 187:

³ Նույն տեղը:

ները, ճյուղավորումները, որոնց իմացումը շատ կարևոր է համարում, բ) տարբերում է միջերկրյա և ոստանիկ բարբառները, գ) միայն ոստանիկ լեզվի գիտությունը բավական չի համարում լեզվին լրիվ չափով տիրապետելու համար:

Պրոֆ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության երկրորդ հատորում բերելով Սյունեցու վերոհիշյալ վկայությունը, եզրակացնում է, որ Սյունեցին խոսում է ո՛չ թե հայերենի բարբառների, այլ այդ ժամանակ Հայաստանում իբր թե դեռևս պահպանված ազգային փոքրամասնությունների լեզուների մասին. «Հիշատակված յոթ անունները, – ասում է նա, – ներկայացնում են ոչ թե հայերենի բարբառները, այլ Հայաստանում ապրող օտար մանր ազգությունների (արդի բառով փոքրամասնությանց) լեզուները¹:

Իր այս տեսակետը հաստատելու համար պրոֆ. Աճառյանը վկայակոչում է Ստրաբոնի և Կույն մյուս պատմագիրների այն հաղորդումները, որոնց համաձայն զանազան ցեղեր ծուլվել են հայերի մեջ: Ճիշտ է, որ Հերոդոտը, Ստրաբոնը և ուրիշներ գրել են, որ մեր թվականությունից առաջ հայերը ընդարձակելով իրենց երկրի սահմանները՝ գրավել են տարբեր ցեղերով բնակեցված մի շարք շրջաններ, որոնց ազգաբնակչությունը, սակայն, մեր թվականությունից մեկերկու դար առաջ ծուլվել էր հայերի մեջ և յուրացրել հայերենը իբրև մայրենի լեզու, այսինքն՝ Ստրաբոնի խոսքերով ասած, այդ բոլոր ցեղերը, մեր թվականությունից առաջ «միալեզու եղան»: Չի բացառվում, որ այդ ցեղերի լեզուները հայերենին ծուլվելու պրոցեսում առաջանային հայերենի որոշ բարբառներ, որոնք պահպանվեին նաև մեր թվականության VIII դարում, բայց ոչ երբեք իբրև ինքնուրույն լեզուներ, ինչպես կարծում է պրոֆ. Աճառյանը: Լեզուների տարբերությունը ցեղերի և ժողովուրդների տարբերությունների հիմնական հատկանիշներից մեկն է. եթե Հայաստանի այդ շրջանների բնակիչները ունենային իբրև հայերեն չգիտակցվող լեզուներ կամ բարբառներ, նրանք անկասկած իրենց հայեր էին համարի, մինչդեռ մեր պատմության տվյալները և ընդհանրապես մեր պատմիչները որևէ փաստ չեն տալիս այդ շրջանները օտար ժողովուրդներով բնակեցված լինելու կամ նրանց ոչ հայկական լեզուների մասին:

Պրոֆ. Աճառյանը հենվելով Սյունեցու նույն վկայությունների

¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. II, էջ 128-129:

վրա՝ կարծում է նաև, որ Հայաստանում խոսված հայերեն բարբառները Սյունեցին հիշատակում է միայն մի տառով՝ **ս**-ով. «Հոգևակիի այս **ս** վերջավորությունն է, որ նա կցելով գՄիջերկրեայսն և գՈստանիկսն բառերի ծայրին՝ պարփակում է բոլոր հայերեն բարբառները»¹: Սակայն որո՞նք են այդ բարբառները, այդ մասին պրոֆ. Աճառյանը ոչինչ չի ասում: Պրոֆ. Աճառյանի այդ պնդումը, մեր կարծիքով, հավանական չէ. Սյունեցուն պետք է հասկանալ այնպես, ինչպես բնագիրն է. Սյունեցին տարբերում է լեզու և բառ եզերական հասկացությունները («Արդ լեզուն ասէ, որ շուրջ զքն սահմանակից աշխարհք իցեն» և «Եւ զքո լեզուիդ զբառսն եզերականս»): Այդ տերմինները չի կարելի շփոթել միմյանց հետ:

Սակայն, եթե այդ բոլորը ճիշտ է, ինչո՞ւ Սյունեցին ասում է գՄիջերկրեայսն և գՈստանիկսն, ինչո՞ւ այդ բառերը նա հոգևակի է գործածում: Այս հարցի պատասխանը տալիս է ինքը՝ Սյունեցին. նա իր աշխատության մեջ խոսում է ընդհանրապես լեզվի մասին, վճռում է արդի առումով լուրջ լեզվաբանական նշանակություն ունեցող հարցեր և իբրև օրինակ բերում է հայերենի բարբառները, ցույց տալու, որ միայն միջերկրյա և ոստանիկ բարբառները չեն, որ կարող են պետքական լինել տաղաչափության համար: Եվ որովհետև միջերկրյա և ոստանիկ բառերը նա գործածում է ընդհանրապես բոլոր լեզուների համար, այդ պատճառով էլ գործածում է հոգևակի ձևով և կողք կողքի է դնում դրանք, իբրև հոմանիշներ: Հավանական չէ նաև պրոֆ. Աճառյանի այն պնդումը, թե եզերականս բառի **ս**-ն դրված է, որովհետև «եզերական (-փոքրամասնությանց) լեզուները 7 հատ են»²: Այդ **ս**-ն կապվում է **բառս** բառի և ոչ թե դրանից հետո հիշատակված բառերի հետ. այդ պատճառով էլ հեղինակը գրում է զբառսն եզերականս: Այդ կապակցության մեջ **եզերականը բառ** տերմինի որոշիչն է, որը համաձայնեցված է որոշյալի հետ թվով և հոլովով ու ցույց է տալիս ոչ թե յոթ լեզուներ, այլ ընդհանրապես եզերական բարբառներ, այսինքն՝ մեջերկրյա կամ ոստանիկ բարբառից տարբերվող բարբառներ և ոչ թե առանձին լեզուներ: Այս բոլորից հետևում է, որ մեր թվականության հինգերորդ դարում, առավել ևս ավելի ուշ շրջանում, Սյունեցու հիշատակված վայրերի բնակիչները չէին կարող ունենալ տարբեր լեզուներ. նրանց լեզուն ընդհանրապես

¹ Նույն տեղը, էջ 129:

² Նույն տեղը:

հայերեն էր, նրանց լեզվի մեջ եղած տարբերությունները բարբառային տարբերություններ էին: Ի դեպ, այդ կարծիքին է եղել նաև Աճառյանը իր հիշյալ աշխատության առաջին հատորում. «Հայաստանի հողի վրա բնակվում էին, բացի խալդիներից՝ 18 զանազան բնիկ ժողովուրդներ, յուրաքանչյուրը իր առանձին ու սեփական լեզվով: Այդ բոլոր ազգերը կամաց-կամաց ձուլվեցան հայոց մեջ և հայերեն լեզուն ընդհանուր դարձավ Հայաստանի ամեն կողմը»¹: Այնուհետև, նա ճիշտ կերպով նշում է, որ այդ ցեղերը հայանալու և հայախոս դառնալու ժամանակ պահեցին իրենց բնիկ լեզվից որոշ հետքեր. «Որոշ բառեր, հատկապես տեղական նշանակություն ունեցող բառերից, ինչպես բույսերի անուններն են և այլն, մտան հայերեն լեզվի մեջ՝ կամ իբրև տեղական բարբառային ձևեր և կամ նույնիսկ կարողացան տարածվել ընդհանուր հայերենի մեջ»²: Աճառյանի այս տեսակետը խիստ կերպով տարբերվում է իր գրքի երկրորդ հատորում արտահայտված կարծիքից. այնտեղ Աճառյանը խոսում է հայերենի բարբառային տարբերությունների և ոչ թե առանձին լեզուների մասին:

Հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը շատ բարդ է եղել և ընթացել է գիզգզաներով: Հայ ժողովուրդը շատ թելերով կապվում է նախահայկական ցեղերի հետ, որոնց մի մասը անկասկած ունեցել է հայերենին ցեղակից լեզուներ, իսկ մի մասը՝ միանգամայն տարբեր սիստեմի լեզուներ: Հայ ժողովրդի կազմավորման ընթացքում այդ լեզուները փոխադարձաբար ներգործել են միմյանց վրա և անընդհատ խաչավորվել, սակայն հաղթանակել է հնդեվրոպական համակարգ ունեցող հայերենը և հարստացել իր մեջ ձուլված ցեղակից ու ոչ ցեղակից լեզուների հաշվին, միշտ պահպանելով իր ինքնուրույնությունը: Երբ ավարտվել է հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը (մեր թվականությունից մոտավորապես երկու դար առաջ), ավարտվել է նաև հայոց էթնիկական լեզվի կազմավորումը և հայերին ձուլված տարբեր ցեղերը ընդունել են այդ լեզուն իբրև իրենց սեփական լեզուն ու մոռացել իրենց հին բարբառի կամ լեզվի առանձնահատկությունները: Այդ լեզուներից մի քանիսը հայերենի առանձին բարբառների առաջացման առիթ են հանդիսացել, բայց երբեք չեն շարունակել իրենց գոյությունը իբրև առանձին լեզուներ: Այդ պատ-

¹ Գ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, էջ 203:

² Նույն տեղը, էջ 204:

ճառով էլ Նրանք չէին կարող մեր թվականության VIII դարում հանդես գալ իբրև փոքրամասնությունների լեզուներ:

Այսպիսով, պատմական տվյալները ցույց են տալիս, որ հայերենը ինչպես հինգերորդ դարում, նույնպես և դրանից առաջ ու հետո ունեցել է իր բարբառները, որոնք իբրև Նրա ճյուղավորումներ, ենթարկվել են Նրան, թեև ունեցել են Նաև իրենց առանձնահատկությունները:

Հայերենի բարբառների և համաժողովրդական լեզվի ընդհանրությունները դրսևորվել են լեզվական բոլոր տարրերի մեջ: Ամենից առաջ ընդհանուր են եղել Նրանց հիմնական բառաֆոնորը և քերականությունը՝ իր ընդհանուր դրսևորումներով: Նրանց զանազանությունները դրսևորվել են հնչյունական որոշ տարբերություններով, բառային կազմի մեջ մտած առանձին բառերով և քերականության առանձին ձևերի գործածությամբ: Ուրեմն լեզվի բարբառը օտար չէ, լեզվի ճյուղավորումն է, որը աճում ու զարգանում է այն ընդհանուր հիսունքներով, որոնցով՝ զարգանում է ընդհանրապես ընդհանուր լեզուն: Սակայն դրան զուգընթաց, բարբառը, Նրա զարգացման համար ստեղծված նպաստավոր պայմաններում, կարող է գրավոր լեզվի աստիճանի բարձրանալ կամ գրական լեզվի կազմավորման հիմքում դրվել: Նա կարող է Նաև ձուլվել ընդհանուր համաժողովրդական լեզվին: Այդ բոլոր դեպքերում մեծ դեր են կատարում լեզուն կրող ժողովրդի տնտեսական և հասարակական կյանքում կատարված փոփոխությունները և հասարակության զարգացման պայմանները:

Հայերենի բարբառների պահպանման և նույնիսկ Նրանց տարբերությունների խորացման համար հին և միջին դարերում միշտ էլ նպաստավոր պայմաններ են եղել: Այդ պատճառով էլ չի եղել որևէ շրջան, որ համաժողովրդական հայերենը չունենար իր բարբառները:

Բարբառային առանձնահատկությունները, ինչպես նշվեց վերևում, երևում են լեզվի հնչյունական ատաղծի, բառապաշարի, քերականության և այլ երևույթների մեջ: Հինգերորդ դարի հայ մատենագիրները աշխատել են որքան հնարավոր է անաղարտ դրությամբ ներկայացնել գրավոր հայերենի, նորմաները: Նրանք որոշակիորեն պայքարել են բարբառային ձևերի օգնագործման դեմ, այդ պատճառով էլ շատ քիչ փաստեր են տվել ժամանակի հայոց բարբառների մասին: Սակայն չնայած դրան՝ անհնարին է եղել խուսափել բարբա-

ռային առանձին ձևեր կամ բառեր գործածելուց: Բարբառի առանձնահատկությունները ավելի ուժեղ դրսևորվել են հինգերորդ դարի հայ մատենագիրների ոճի մեջ, որը հիմք է տվել շատ բանասերների նրանց գործերը բաժանելու դասերի կամ դպրոցների: Այդ դասերն են՝ ա) Եզնիկյան, որի մեջ մտած գործերը, բացի Եզնիկի «Եղծ աղանդոց»-ից, թարգմանություններ են և գլխավորապես աստվածաբանական բովանդակություն ունեցող. բ) Եփրեմյան, որն ընդգրկում է տասնմեկ գործ, որոնք բոլորն էլ թարգմանված են ասորերենից. գ) Կյուրեղյան, դարձյալ այնպիսի գործեր, որոնք թարգմանված են հունարենից և ասորերենից. դ) Ագաթանգեղյան, որի մեջ մտնում են գլխավորապես ինքնուրույն գործեր: Հիշյալ դասերի մեջ մտած բոլոր գործերն էլ գրվել կամ թարգմանվել են հինգերորդ դարի առաջին կեսին, Մ. Մաշտոցի, Ս. Պարթևի և նրանց ավագ աշակերտների ձեռքով: Ավելի ուշ շրջանի գործերը մեծ տարբերություններ են տալիս: Համենայն դեպս նույնիսկ այդ գործերում նկատվում են ոճական որոշ տարբերություններ, որոնք կապված են բարբառային առանձնահատկությունների հետ: Այսպես, օրինակ՝ Ագաթանգեղյան դասի հեղինակները գործածում են այնպիսի բառեր ու բառակապակցություններ, որոնք համարյա թե չեն հանդիպում մյուս դասերի գործերում: Այդ բառերից կարելի է նշել՝ շատ, թանձրախառն, նուազ, աւագանի, կանանի, ամեն, ի դուրս, ամենափրկիչ, արուեստախօսել, միահաղոյն, միասնական, ձեռնադրել, կուսաստան, առիծաբար, մենակուիւ, տեղապահ, երկնաչու, ոյժ, մեծաւ լըջմտութեամբ և այլն. այդ դասի հեղինակները «որում կոչէին, որում անուն կոչէր» բառակապակցությունների փոխարեն սիրում են գործածել «որոյ անունն ճանաչէր», «կողմանս կողմանս»-ի փոխարեն «կոյսս կոյսս», **իբրև** մակբայից հետո ղնել անցյալ դերբայը, ինչպես՝ «իբրև լուեալ, իբրև կարգեալ, իբրև հայեցեալ, իբրև տեսեալ» փոխանակ՝ «իբրև լուաւ, իբրև ետես, իբրև կարգեաց» և այլն, գործածել **անի** հոգնակի մասնիկով կազմված բառեր, ինչպես՝ գլխանի, ագատանի, աւագանի, կանանի, ընկերանի և այլն:

Այս փաստերը շատ քիչ կլինեին բարբառների գոյությունը հաստատելու համար, եթե դրանց չավելանային նաև լեզվական **այլ** իրողություններ: Արդեն ասել ենք, որ Եզնիկը զանազանում է վերին և ստորին բարբառներ՝ միևնույն հասկացության համար տարբեր բառեր նշելով: Հինգերորդ դարի առաջին կեսի գրողների գործերում չեն

հանդիպում հայերենում շատ գործածական բառեր, ինչպես՝ փարթամ, փեթակ, սաղարթ, արփի, տոփանք, գեղջուկ, տրոհել, ողջունել, աղոթել, հրճվել և այլն: Այդ բառերի զգալի մասը այժմ էլ գործածվում է մեր բարբառներում:

Պրոֆ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ նշում է հայերեն մի շարք բառեր, «որոնք սովորական էին այս կամ այն բարբառում, բայց կենտրոնական բարբառում չկային, հետևաբար չէին մտել Ե դարից մեզ ավանդված գրականության մեջ»¹: Այդպիսի բառերից նա հիշատակում է **անծեղ** և **կաչաղակ**, **խլուրդ** և **ամբուտ**, **երկուորի**, **երկուորեակ** և **ջամուկ**, **դրացի** և **հարևան** բառերը, որոնց մի մասը գործածվում է մեկ, իսկ մյուսը՝ այլ բարբառներում: Այսպես, օրինակ՝ **խլուրդ** բառը ասորական փոխառություն է և գործածվել է հարավային բարբառներում՝ շատ հին ժամանակներից սկսած, իսկ **ամբուտը**՝ հյուսիսային բարբառներում. հինգերորդ դարում գործածական **դրացի** բառը տարածված է արևմտյան, իսկ **հարևանը**՝ արևելյան բարբառներում և այլն: Վերոհիշյալ բառերից **կաչաղակ**, **հարևան**, **խլուրդ** բառերը հնագույն փոխառություններ են, որոնք մտել են հայերենի բարբառների մեջ հինգերորդ դարից շատ ու շատ առաջ:

Գրաբարի քերականության տվյալները նույնպես որոշ կռվաններ են տալիս խոսելու հինգերորդ դարի բարբառների գոյության մասին: Յուրաքանչյուր մշակված լեզու, եթե բարբառային իրողություններ չունի իր քերականության մեջ, սովորաբար միատարր է լինում: Գրաբարը ժամանակի մշակված և հղկված լեզուներից մեկն է եղել, բայց և այնպես նա ունի հոլովման ու խոնարհման բազմաթիվ զուգահեռ ձևեր, որոնք կարող են նաև բարբառների գոյությամբ ու ազդեցությամբ բացատրվել. այսպես, օրինակ **ո** և **ու** հոլովիչներով հոլովվում են արջ, երինջ, ուլ, կաքաւ, ագռաւ և այլն, **ո** և **ի** հոլովիչով՝ լուսին, աման, թոյն և այլ բառեր: Գրաբարում օրինաչափ երևույթ են **ի-ա** և **ո-ա** խառն հոլովումները, որոնց առկայությունը նույնպես կարելի է բացատրել միայն տարբեր բարբառների փոխադարձ ներթափանցմամբ:

Չուգահեռ ձևեր կան նաև բայերում, օրինակ՝ բնակիմ-բնակեմ, ջեռանիմ-ջեռնում, ընթանալ-ընթացիր-ընթաց-ընթա, իմանալ-իմա-

¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. II, էջ 136:

իմացիր-իմաց, մոռանալ-մոռացիր-մոռա, լուուցանել-լսեցուցանել, ոռոգել-ոռոգանել, սպանել-սպանանել, տարածել-տարածանել, երկրպագել-երկրպագանել և այլն

Բարբառների բնորոշ հատկանիշներից մեկը նրանց միջև եղած հնչյունական տարբերություններն են Բարբառների հնչյունական այդ զանազանությունների մասին տեղեկություններ է տալիս Անանուն մեկնիչը՝ Նա պատմելով բանաստեղծության հորինման մասին՝ հայտնում է, որ տաղաչափները հաճախ լծորդներով էին հորինում բանաստեղծությունը, «Այլ էր իսկ ճշմարտապես ի տեսակի խաւսիցն, որպէս բազուկ, պազուկ, փազուկ»¹, բայց իսկապես բարբառներում էլ կան այդպիսիներ, ինչպես՝ բազուկ, պազուկ, փազուկ Այս վկայությունից պարզվում է, որ հայերենի որոշ բարբառներում ձայնեղ հնչյունները խլանում կամ խուլ շնչեղ էին դառնում այդ շրջանում Զնչյունական այդ կանոնը դրսևորվել է Նաև Դիոնիսիոս Թրակացու քերականության մյուս մեկնիչների գործերում այսպես, օրինակ՝ քերականության թարգմանության մեջ հունարեն ἀποστροφος բառը թարգմանված է **ապաթաթ** ձևով, իսկ Սյունեցին այդ բառը գրում է **ապադարձ**՝ հայերեն **բադ** բառից կազմված է **փադ, ընդ** նախդրից՝ **ենթ** նախածանցները և այլն

Վերև շարադրվածից կարելի է եզրակացնել, որ՝

ա) Հինգերորդ դարում եղել են հայերենի մի շարք բարբառներ, որոնց մի մասը կոչվել է արևելյան, իսկ մյուսը՝ արևմտյան, կամ վերին և ստորին բարբառներ

բ) Այդ բարբառները ունեցել են իրենց քերականական կառուցվածքը և հիմնական բառաֆոնոը և սպասարկել են հայ ժողովրդի միմյանցից տերիտորիապես սահմանազատված հատվածներին՝ իբրև նրանց հաղորդակցման հիմնական միջոցը Այդ բարբառների մի մասը համեմատաբար ավելի մոտ է եղել ընդհանուր համաժողովրդական գրավոր լեզվին, իսկ մյուս մասը բավականաչափ հեռու Բայց նրանցից և ոչ մեկը ժամանակակից բարբառների հետ չի կարելի նույնացնել

գ) Հայ մատենագիրների հիշատակած «բառս եզերականս» տերմինով ակնարկվել են հայերենի բարբառներ և ոչ թե օտար լեզուներ հետևաբար, Սյունեցու հիշատակած Կորճայից, Տայոց,

¹ Ադոնց, նույն տեղը էջ 140

խութի, Չորրորդ Հայոց, Սպերի, Սյունյաց և Արցախի բնակչության խոսվածքները ոչ թե օտար լեզուներ էին, այլ հայերենի բարբառներ: Այդ բարբառների մի մասը գոյացել էր հինգերորդ դարից շատ առաջ՝ հայ ժողովրդական լեզվի գործածության շրջանակների լայնացման և նրա մեջ տարբեր լեզուների ձուլման ընթացքում: Այսպես կոչված այդ օտար ցեղերի ու նրանց լեզուների հայացման պրոցեսը հիմնականում ավարտվել էր նախքան մեր թվականությունը երկրորդ-առաջին դարերում:

դ) Սյունեցու հիշատակած բարբառներից բացի, Հայաստանում իհարկե եղել են նաև այլ բարբառներ, որոնք չեն հիշատակվել այդ շրջանի մատենագիրների երկերում, որովհետև նրանցից և ոչ մեկը նպատակ չի ունեցել գրելու հայերենի պատմությունը: Այդ բարբառները նշված են իբրև օրինակներ և հասկանալի պատճառով չէին կարող ներկայացնել բոլոր հայ բարբառները:

Հայ մատենագիրների երկերի լեզվի և ոճի մանրագնին ուսումնասիրությունները թերևս հայտնաբերեն հայերենի շատ բարբառներ և ցույց տան նրանց առանձնահատկությունները, որոնց զգալի մասը ներթափանցել է միջնադարյան հայ գրականության մեջ և լեզվական նոր երևույթների առաջացման հիմք է տվել:

ԳՐԱԲԱՐԻ ՀԱՐՍՏԱՅՈՒՆ ՈՒ ՀԵՏԱԳԱ ՄՇԱԿՈՒՄԸ

Մեր թվականությունից երկու դար առաջ հիմնադրված հայկական թագավորությունը վերանում է 428 թվականին: Այդ հանգամանքը մեծ չափով ազդում է երկրի տնտեսության և հասարակական-քաղաքական կյանքի զարգացման վրա և նպաստում է Պարսկաստանի ու Հունաստանի հայերի նկատմամբ վարած ագրեսիվ քաղաքականությանը: Պարսկական պետությունը երբեք չիրաժարվելով Հայաստանը Պարսկաստանի մի մարզը դարձնելու և հայերին պարսկացնելու քաղաքականությունից՝ ամեն կերպ ուժեղացնում է ճնշումը, ծանրացնում հարկերը, հարկադրում հայերին փոխելու իրենց դավանանքը, միմյանց դեմ հանում հայ նախարարներին և այդպիսով ձգտում ջլատել հայ ժողովրդի դիմադրողական ուժերը և հեշտությամբ տիրել Հայաստանին: Հայ ժողովուրդը, սակայն, հեշտությամբ տեղի չի տալիս. նա ամեն կերպ դիմադրում է Պարսկաստանի և

մյուս օտար պետությունների նվաճողական քաղաքականությանը և կյանքի գնով պահպանում իր ինքնուրույնությունը:

Հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական կյանքում կատարված փոփոխությունները, արտաքին թշնամիների դեմ նրա վարած անընդհատ պատերազմներն ու ապստամբությունները թեև դանդաղեցնում, բայց իսպառ չեն դադարեցնում մշակույթի, գրականության ու տնտեսության զարգացումը: Իսկ որոշ դեպքերում, հատկապես համեմատաբար խաղաղ շրջաններում, հայ ժողովուրդը ավելի մեծ ակտիվությամբ և ինտենսիվությամբ ձեռնարկում է երկրի վերակառուցման ու մշակույթի զարգացման գործին:

Հայկական թագավորության անկումից հետո հայ ժողովուրդը շատ անգամ ըմբոստանում է արտաքին թշնամիների դեմ, մղում ազատագրական պատերազմներ, որոնց մեջ հատկապես նշելի են 450-451 և 481-484 թվերի ապստամբությունները, որոնք ձախողելով Պարսկաստանի պլանները՝ հարկադրեցին նրան հրաժարվելու իր ասիմիլյատորական, հայերին բնաջնջելու և հավատուրաց դարձնելու անմիտ քաղաքականությունից: Հայաստանը հինգերորդ դարի վերջերից թևակոխելով խաղաղ զարգացման մի շրջան՝ արագ կերպով սկսում է վերականգնել պատերազմների հետևանքով ավերված քաղաքներն ու գյուղերը, զարգացնել տնտեսությունն ու առևտուրը, կառուցել նոր հոյակապ շենքեր ու եկեղեցիներ: Հայ գրականությունը, ճարտարապետությունն ու արվեստները շարունակում են հարստանալ ու զարգանալ նաև VI-VII դարերում. գրվում են պատմական, փիլիսոփայական նոր ինքնուրույն երկեր, թարգմանվում են նոր գործեր, վեցից յոթերորդ դարերում Հայաստանում հիմք է դրվում գիտության նոր ճյուղերի, զարգանում են փիլիսոփայությունը, քերականությունը, ճարտասանությունը, թվաբանությունը, երկրաչափությունը, աստղագիտությունն ու երաժշտությունը: Այդ դարերում գրված ինքնուրույն երկերից պատմական և գիտական մեծ արժեք են ներկայացնում Սեբեոսի Պատմությունը, Դավիթ Անհաղթի փիլիսոփայական գործերը, Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանության հայ մեկնիչների աշխատությունները, Անանիա Շիրակացու թվաբանական, աստղագիտական և աշխարհագիտական աշխատությունները և այլն: Ուշագրավ են նաև այդ շրջանում գրված գրական երկերը, որոնցից կարելի է նշել Կոմիտաս կաթողիկոսի, Դավթակ քերթողի բանաստեղծությունները և այլն:

Երկրի սոցիալ-տնտեսական կյանքում կատարված փոփոխությունները ազդում են նաև հայոց գրական լեզվի զարգացման ընթացքի վրա: Ամենից առաջ գրական հայերենը, իբրև եկեղեցական արարողությունների, իբրև եկեղեցու և ոչ թե իբրև պետական լեզու, պահպանում է պաշտոնական լեզվի ֆունկցիաները: Այդ պատճառով էլ բոլորովն է պայքարը, մի կողմից՝ նրա արդեն հայտնի օրինաչափությունները պաշտպանողների և, մյուս կողմից՝ ժամանակի պահանջները չբավարարող հին ձևերը նոր արտահայտություններով փոխարինելու կողմնակիցների միջև: Հանդես են գալիս լեզվական նորարարությունների կողմնակից մատենագիրներ, որոնք իրենց երկերում չեն կաշկանդվում հին նորմաներով, այլ սկսում են օգտագործել ինչպես հայերենի բարբառների իրողությունները, նույնպես և օտար լեզուների, հատկապես հունարենի, նմանողությամբ կազմած նոր բառեր ու քերականական ձևերը: Այդ նորարարությունները իրենց վառ արտահայտությունը ստացան VI-VII դարերի հայ փիլիսոփաների և քերականագետների գործերում, որոնց մի մասի լեզուն ընդունված է կոչել հունաբան հայերեն:

1) ՀՈՒՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆԸ

Հունաբան հայերենը, որը, ինչպես ասվեց, կապված էր հայ ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունների հետ, սկզբնավորվում է հինգերորդ դարի վերջերից:

Հայոց լեզվի պատմությամբ զբաղվող շատ բանասերներ կարծել են, թե հունաբան հայերենը անհատների ցանկությամբ պայմանավորված, անհատների ստեղծած մի նոր լեզու էր, որով գրվել կամ թարգմանվել են ինքնուրույն և փիլիսոփայական շատ գրվածքներ: Այդ կարծիքը ճիշտ համարել չի կարելի, որովհետև հունաբան հայերենը արվեստական նորարարություններով հարուստ լինելով հանդերձ՝ իր շատ կողմերով կապված է հին հայերենի, ինչպես նաև հայ բարբառների հետ: Նա իր քերականության ու բառապաշարի զգալի մասը փոխ է առել գրաբարից ու բարբառներից, սակայն մշակվել ու հղկվել է հայ բարձրաստիճան մտավորականության կողմից այնպես, որ բավարարի այն պահանջները, որոնք առաջադրվել էին հայ ժողովրդի կյանքում կատարված փոփոխություններով և հատկապես

փիլիսոփայական գրականության պահանջներով:

Հունաբան հայերենը եղել է հելլենասեր գլոգոլության ձեռքին ամենաուժեղ մի գործիք և օգտագործվել է հայ լուսավորչական եկեղեցու և պարսկական կողմնորոշում ունեցող հայ հոգևորականության դեմ այդ շրջանում մղված պայքարում: Եվ չնայած իր արհեստական շատ կողմերին՝ նա դրական մեծ դեր է կատարել հայ ժողովրդի մշակութային կյանքում՝ օժանդակելով աշխարհիկ գրականության զարգացմանը և հայ գիտական քերականության մշակմանը:

Հունաբան դպրոցի ներկայացուցիչները գիտական և թարգմանական մեծ աշխատանք են ծավալում. նրանք հունարենից թարգմանում են մի շարք գործեր, որոնց լեզվական իրողությունները նկատի ունենալով՝ ակադեմիկոս Մանանդյանը դրանք բաժանում է խմբերի:

Առաջին խմբի մեջ նա դասում է Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան», «Գիրք Պիտոյից» և Փիլոն Եբրայեցու աշխատությունների թարգմանությունները, որոնք իրենց բառապաշարով ու քերականությամբ համարյա թե չեն տարբերվում միմյանցից և «կազմում են հունաբան թարգմանությունների հատուկ մի խումբ», որոնց «ժամանակը պետք է դնել Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» թարգմանությունից առաջ, ուրեմն ոչ ուշ, քան 6-րդ դարի առաջին կեսը»¹:

Վերոհիշյալ աշխատությունների թարգմանությունները մի խմբի մեջ դասելու հիմքը տվել է առաջին հերթին դրանց բառապաշարը, որը իր շատ դրսևորումներով ընդհանուր է հիշված գործերի համար: Այդ շերտի գործերին առանձնահատուկ բառեր են՝ աղաւտանամ, աղաւտ, աւաղական, աւաղ, աւաղումն, բաղդասութիւն, հաւանամ, հաւացեալ (սկզբանալ), չարահաւ (չարի պատճառ), սկզբնահաւ (նախահայր), հաւակ (սկզբնապատճառ), հաւիմ (սկզբնավորվել), վրդովեմ, վրդովասեր, փաստաբանական, սարդ, սարդենի (դափնի), բազմաւորական, բողջախոհութիւն (չարամտություն), մեծասուզ, սերկ (այսօր), սերկեան (այս օրվան), նայ, կենցաղօգուտ, ջնեմ (ջինով՝ գավազանով ծեծել), դերևանալ (փչանալ), տեսակ, նազաբանութիւն (գովեստ), երկասիրութիւն, անքատ (չքավոր, կարոտ, նվաստ), արծանակեմ (արծանագրեմ), վրիժակ (վրեժ փնտրող), վրիժակազէն, կնատ (թույլ, տկար), կնատագոյն, ճակաճան (իգասեր), բեղմնաւոր, ծմրիմ (ոգեսպառ լինել), բացառութիւն, դժոխըմբերագոյն (անտա-

¹ Գ. Մանանդյան, Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1925, էջ 107:

սելի), դեղչեմ (ջրի ձայն հանել, նվագարանի ձայնը), գործակ (հեղինակ, բուն պատրաստողը), հարստակող (ուժեղ, թիկնեղ), տոնուտ (տոնական), ըմպանկեմ (անսանձ լինել), ձեռնընդել (սովորած, վարժ), արկած, բաժակեմ (բաժակի ձևով փոս բանալ, ջրել), անտած (անխնամ, անհոգ), արուեստակեմ (արվեստով շինել, ճարել, ճարտարել), կեղակարծ (կասկածով), կեղակարծելի, դեռադեռ, նախակրթակ (տրամադրող, տրամադրություն), տեսլարան (տեսարան) և այլն¹:

Այս կարգին պատկանող գործերում չեն նկատվում այն բոլոր նախածանցները, որոնք լայն գործածություն են ունեցել հետագա շրջանի թարգմանություններում. օրինակ՝ **հակ** նախածանցի փոխարեն գործածվել է **հակառակ** բառը, ինչպես՝ հակառակամարտ, հակառակակիր, հակառակամետ, հակառակադրություն, հակառակադիր: Ընդհանրապես հունարեն *ἀντι-*, *δια-*, *μετα-* նախդիրները չեն թարգմանվում **հակ**, **տար** և **փոխ** նախածանցներով, նախածանցների տեղ գործ են ածվել **խուս**, **քող**, **հաստատ**, **ջոկ** բառերը, որոնք համարյա թե չեն գործածվել հունաբան դպրոցի հետագա շրջանի գործերում: Վերոհիշյալ փաստերը, ինչպես նաև լեզվական այլ իրողություններ ցույց են տալիս, որ հունաբան դպրոցի հնագույն թարգմանություններում, իսկ հունարենի ազդեցությունը ուժեղ կերպով գագցվել է, թեև շատ իրողություններով նրանք տարբերվել են ուշ շրջանի գործերից:

Թարգմանությունների երկրորդ շերտի մեջ ակադ. Զ. Մանանդյանը մտցնում է Տիմոթեոս Կուզի «Յակաճառութիւնը», Արիստոտելի «Յաղագս մեկնութեան և ստորոգութեանց» թարգմանությունները և Յամբոլիքոսի մեկնությունները:

Այս շերտի մեջ համարված երկերը ունեն իրենց մի շարք առանձնահատկությունները, որոնք արտահայտվում են ամենից առաջ այդ խմբի թարգմանությունների բառապաշարի մեջ: Այդ խմբի հեղինակները գործածում են հետևյալ հազվագյուտ բառերը՝ թուելութիւն (համարում, կարծիք), կարութիւն (կարողություն), իրակութիւն (գործ, մի բան), իրաւորեմ (մի բան անել), ապուսեմ (բացասել), բացերևոցեմ (հայտնել, որոշակի ասել), հետևութիւն, իմացուած, հակաճառեմ, նոյնաբանութիւն, ներանձնաւոր (շնչավոր, հոգևոր, վանական), ներանձնական, հետևանեմ (փոխ. հետևեմ) և այլն: Երկրորդ խմբի գործերում հանդիպում են նաև **փար** նախածանցով կազմված բառեր, ինչպես՝ փարադրեմ (չորս կողմ դնել),

¹ Նույն տեղը, էջ 8 և հաջորդ էջերը:

փարաբարձեմ (չորս կողմ վերցնել) և այլն:

Այս շերտի գործերում կան առաջին խմբի թարգմանություններում գործածված բառեր և տերմիններ. օրինակ՝ բաղաձայն, վերծանեմ, վերծանութիւն, տեսակագործեմ (կատարելագործել), սերկ, սերկեան (այսօր, այս օրվան), գաղափար, հարցուփորձութիւն, գերազանցեմ, ապաստութիւն, յարատև, գործառնութիւն, պարման (տղա, կտրիճ տղա), վերադիտեմ և այլն:

Այդ գործերի քերականությունը համարյա թե չի տարբերվում առաջին խմբի գործերի քերականությունից. կան նույն նախածանցները, ինչպես՝ **բաղ, ներ, փաղ, շաղ, տար, մակ** և այլն:

Այս թարգմանություններից հետո թարգմանվել են «Սահմանք իմաստութեան», «Վերլուծութիւն ներածութեան Պորփիրի», «Առածք հինգ», «Վասն բաժանման», «Մեկնութիւն ԺԴ գլխոց Արիստոտելի ի վերլուծական», «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի»: Այդ խմբի թարգմանիչները, ինչպես ցույց է տվել Յ. Մանանդյանը, մեծ չափով օգտվել են Նախկին երկու խմբի թարգմանություններից և ավելի են մշակել ու ձևափոխել հունաբան հայերենը՝ հունարենի նմանողությամբ, որի հետևանքով էլ շատ հաճախ նրանց գործերը հասկանալու համար բնագրին դիմելու անհրաժեշտություն է զգացվում:

Այդ թարգմանություններում արտացոլված են Դիոնիսիոս Թրակացու քերականության տերմինները, ինչպես՝ հագագ, ոլորակ, բառ, տառ, ներկայ, անցեալ, ապառնի, շաղկապ, փաղառութիւն (միատեղ առնված այն տառերը, որոնցով վանկ է կազմվում, հեգ, վանկ), ուղղական, սեռական, հայցական, սահմանական, անորոշ, բաղաձայն, եզական, հոգնական, գերադրական և այլն:

Սակայն կան նաև ինչպես բառապաշարային, նույնպես և քերականական տարբերություններ. օրինակ՝ այդ խմբի գործերում բոլորովին չեն գործածվում **և** և **ըն** նախդիրները, մինչդեռ դրանք սովորական էին Թրակացու քերականության թարգմանության մեջ (ըն տեղոյր, ներկուց, նիմեքե, նորմե, նիմոյ ևն): Կան հունարենի անալոգիայով կամ պատճենավորմամբ կազմված բազմաթիվ բառեր, որոնք չկան նախորդ խմբերի գործերում, ինչպես՝ բնաբանել (բնախոսել), բնաբանական, բնաբանութիւն, տեսակարարեմ, տեսակարար, կենդանաբոյս, երևակայութիւն, եզրակացութիւն, համալսարան, կորնթարդ, ուղղորդագնաց, լայնեղունկն, մակամտածութիւն (մտածություն), հանուր, յարաքարշեմ, յարածեմ, ենթալուսնեայ (լուսնի տակ), ընդհանրական, անհատել, գրանոց (գրադարան), միայնագիրք և այլն:

Ելնելով լեզվական և այլ տվյալներից՝ ակադ. Յ. Մանանդյանը

գտնում է, որ Դավիթ Անհաղթին վերագրված մի շարք թարգմանություններ, որոնք հունաբան լեզվի երրորդ շերտի մեջ են մտնում, «լինելով լեզվական տեսակետից խմբակից, չեն կարող համարվել միևնույն թարգմանչի աշխատություն»¹:

Այսպիսով, հունաբան հայերենով թարգմանված գործերը բաժանվում են երեք տարբեր շերտերի, որոնք իրենց ընդհանուր գծերով նման լինելով՝ տարբերվում են բառապաշարային և ձևաբանական որոշ առանձնահատկություններով:

Հունաբան դպրոցի ներկայացուցիչների գործունեությունը տեղում է մոտավորապես երկու դար՝ սկսած հինգերորդ դարի վերջերից մինչև յոթերորդ դարի վերջերը: Այդ ժամանակաշրջանում նրանք մշակում են հայոց գրական լեզուն այն աստիճան, որ իր շատ դրսևորումներով ոչ միայն տարբերում են գրաբարից, այլև նոր էտապ են նշում հայոց լեզվի պատմության մեջ: Հունաբան դպրոցի լեզվական նորարարությունները շոշափում են ժամանակի հայոց գրական լեզվի՝ գրաբարի, համարյա բոլոր բնագավառները, նրա քերականությունն ու բառապաշարը: Նրանց լեզվաշինարարական աշխատանքի բնորոշ առանձնահատկությունը առաջին հերթին արտահայտվել է այն բանում, որ հայոց լեզվի իրողությունները սկսել են բացատրել հունարենով կամ նմանեցնել հունարենին: Սակայն չի կարելի ասել, որ այդ բոլորը լոկ անհատական հնարամտության արդյունք է, որ այդ աշխատանքի ընթացքում հաշվի չի առնված հայերենը: Հունաբան դպրոցի ներկայացուցիչները ժամանակի զարգացած, գրաբարին, հունարենին և հայ բարբառներին խորապես ծանոթ գործիչներ էին, որոնք իրենց յուրաքանչյուր քայլի մեջ որոշ նպատակ էին դնում և խիստ հետևողական էին: Միայն նրանց գործունեության այդ նպատակասլացությամբ ու խիստ սկզբունքայնությամբ պետք է բացատրել այն փաստը, որ ավելի քան երկու հարյուր տարի տևող այդ շարժման բոլոր ներկայացուցիչները գրում ու ստեղծագործում են համարյա թե նույն լեզվով, գործածում են լեզվական նույն միջոցները:

Նրանց աշխատանքի արդյունքը ամենից առաջ երևում է հայերենի բառակազմական հնարավորություններն ընդարձակելու մեջ: Հայտնի է, որ հին հայերենը համարյա թե չուներ նախածանցներ, եթե նկատի չունենանք ժխտական ածանցները: Հունաբան դպրոցի ներկայացուցիչները աշխատեցին վերացնել հայերենի այդ թերությունը և ստեղծել այնպիսի միջոցներ, որ հնարավորություն տալին

¹ Նույն տեղը, էջ 174:

հայ թարգմանիչներին ազատ կերպով թարգմանելու հունարենը Նրանք այդ բանի համար օգտագործեցին հայերենի նախդիրները, ինչպես նաև մի շարք արմատական բառեր և հունարենի նմանողությամբ ստեղծեցին ավելի քան երկու տասնյակ նախածանցներ, որոնց մեծ մասը մտավ հայոց լեզվի մեջ իբրև նրա բառաստեղծական ածանցներ Այդ նախածանցներն են՝ առ, ապ, արտ, բաղ, բաց, փաղ, շար, շաղ, ջոկ, պատ, յար, տար, թափ, ներ, բակ, հակ, պար, ենթ, ստոր, մակ, վեր, նախ, գեր, դեր, փոխ, հոմ, համ և այլն

Այս ածանցների գերակշռող մեծամասնությունը կազմված է հայերեն բառերից, ինչպես՝

Առ.– հին հայերենում առանձին նախդիր է եղել և դրվել է ինչպես որոշ հոլովների, նույնպես և բայերի վրա Հոլովական իմաստ արտահայտելիս և գոյական անունների հետ գործածվելիս աղանձին է գրվել

Արտ – նախածանցը կազմված է **արտաքին** բառից և պահպանել է իր «դուրս» նշանակությունը ինչպես հունաբան հայերենում, նույնպես և ժամանակակից հայերենում՝ օրինակ՝ արտաթորել, արտագաղթ, արտադրել, արտաշնչել, արտագնաց, արտայայտել, արտածել, արտակարգ, արտասովոր, արտավիժել, արտադպրոցական և այլն

Բաղ.– արմատն է բաղել, «կցել», «կցկցել», նրանով կազմվում են բազմաթիվ բառեր, ինչպես՝ բաղածայն, բաղադրել, բաղդատել, բաղիյունել և այլն

Բաց.– «ի բաց» բառակապակցությունից է առնված, գրաբարում **ի բաց** գործածվում էր բայերի հետ իբրև հարադիր՝ օրինակ՝ ի բաց գնալ, ի բաց փախչել, ի բաց թողուլ Հունաբան հայերենի ներկայացուցիչները, հունարենի անալոգիայով, **բաց** բառն օգտագործել են իբրև ածանց «հեռու», «մի կողմ», «դուրս», նշանակությամբ, ինչպես՝ բացասել, բացառություն, բացատրել, բացանալել և այլն

Յար-հար.– հին իմաստն է՝ «կցել», «միացնել», «յարել», հունաբան հայերենում գործածված է իբրև նախածանց՝ **մոտ, հետը, կիպ, կից** իմաստներով և այդպես էլ անցել է ժամանակակից հայերենին ինչպես՝ յարակցել, յարաբերել, յարադրել, յարակարգել և այլն

Շար.– կազմվել է **շարել** բայի արմատի պահպանմամբ սկզբնական իմաստն է եղել «միասին» փից» Այդ նախածանցով

կազմված են բազմաթիվ բառեր ինչպես՝ շարաբանել (շարադրել, տրամաբանել), շարաբառնալ (իր հետ վերցնել), շարաբերել (մեկտեղ բերել), շարագրել (շարադրել), շարադասել, շարադրել, շարածել (կարգով բերել), շարակցել, շարահիսնել և այլն

Պար – գրաբարում, այդ նախածանցի բացակայության հետևանքով, մի շարք հասկացություններ, ինչպես՝ պարունակող, պարունակյալ և այլն, նկարագրական եղանակով էին կազմվում Այդ նախածանցը, որը կազմված է **պար** «շուրջ» բառից, բարդությունների մեջ պահպանել է «շուրջ», «չորս կողմ» իմաստը օրինակ՝ պարագիծ, պարունակ, պարահատում, պարագօտի և այլն

Գեր – կազմված է հունարեն *ὑπερ* նախդրի անալոգիայով, նշանակում է «վեր», «ավելի վեր», «բարձր աստիճանի» օրինակ՝ գերազարդ, գերածում, գերաքանակ, գերաշնորհ, գերակշիռ, գերամեծար, գերարտադրություն, գերահրաշ և այլն

Դեր.– հավանաբար կազմված է **դերայ** «սուտ փոխանորդ» բառից, մոտավորապես նույն նշանակությամբ գործածված իբրև նախածանց, ինչպես՝ դերբայ, դերանուն, դերակատար և այլն

Հակ.– հայերեն **հակ** բառն է, որ նշանակում է «դեմ», «հակառակ», հակառակի իմաստով գործածված է իբրև նախածանց, ինչպես՝ հակաբան, հակադարձ, հակադրություն, հակակայություն, հակակշիռ, հակաճառ, հակամտություն և այլն Այդ ածանցը կարելի է կապել նաև **հակել, հակում** բառի հետ

Համ – կազմված է **համ** բառից, որի մի տարբերակը հունարենից փոխառված **հոմ** նախածանցն է և նշանակում է «նույն», «միասին» ինչպես՝ համամիտ, համաչափ, համանուն, համակիր, համակարծիք, համադաս, համընթաց, համակերպել, համակամ, համախոհ, համաձայն և այլն

Հայերենում գործածվում է նույնանուն **համ** նախածանցը, որը նշանակում է «համայն», «բոլորը», օրինակ՝ համամարդկային, համաշխարհային, համասփիռ, համատարած, համագգեստ, համապարփակ, համադարման, համազգային, համախօսական և այլն

Մակ – հավանաբար կազմված է **մակաղ, մակաղել** (ոչխարները պառկեցնելու տեղ, բակ) բառից և «վրա» իմաստով գործածված է իբրև նախածանց ինչպես՝ մականուն, մակերես, մակերևոյթ, մակասփռել, մակագրել, մակատեսուչ, մակատարած և այլն

Բակ – հայերենում նշանակել է «բակ», «գավիթ», «շուրջ» և այլն

Իբրև նախածանց գործածված է մի շարք հասկացություններ արտահայտելու համար ինչպես՝ բակառություն, բակառական (հավաքական), բակաձև, բակառաբար (շուրջանակի) և այլն

Ենթ – կազմված է հունարեն *ἐπὶ* նախածանցի անալոգիայով և նշանակում է «տակ», ինչպես՝ ենթագրություն, ենթադրություն, ենթադատություն, ենթալուսնեայ, ենթակայ, ենթակարգեալ, ենթակայություն, ենթակետ, ենթածգություն, ենթամայ և այլն

Ստոր – «ստորին» բառի արմատն է, որ նշանակում է «ցած», «տակը», դրան համանիշ է **ենթ** նախածանցը Այդ նախածանցով կազմված են բազմաթիվ բառեր, ինչպես՝ ստորակետ, ստորագրել, ստորաբնակ, ստորակայ, ստորաքարշ, ստորաբաժանել, ստորոգել և այլն

Հիշյալ նախածանցներով կազմված բառերը հիշատակված չկան հինգերորդ դարի առաջին կեսի մեր մատենագիրների գործերում, որովհետև դրանք կազմվել են ուշ շրջանում, հատուկ են եղել հունաբան հայերենին և միայն գրավոր լեզվի միջոցով են մտել հետագա շրջանի խոսակցական լեզվի մեջ Սակայն հայերենի մեջ մտած շատ բառերի հետ հորինված են նաև շատ այլ տերմիններ, որոնք մնացել են միայն հունաբան հեղինակների սեփականությունը ինչպես՝ ապաբանություն (ջատագովություն), ապուսել (ժխտել, ուրանալ), առանկանիլ (պատահել), տարացոյց (օրինակ), տարալսություն (անհնազանդություն), փաղառություն (վանկ), առարտագործել (որևէ բան ավելացնել), բաղստորագրություն (հավանություն), ներպարունակել (բովանդակել) և այլն

Սակայն հունաբան հայերենի ներկայացուցիչների՝ հունարենի նմանողությամբ կազմած շատ բառեր այնքան հաջող ու տեղին են եղել, որ մնացել են մեր լեզվի մեջ և այժմ էլ գործածական են օրինակ՝ առ-ոգանություն, ապ-ա-ցոյց, արտ-ա-բերել, բաց-ա-տրություն, բաղ-դասություն, գեր-ա-դրական, դեր-անուն, ենթ-ա-դատություն, հոմ-անուն, մակ-անուն, մակ-երևոյթ, յար-անուն, յար-ա-դրել, նախ-ա-դասել, ներ-գործություն, ներ-կայ, շաղ-կապ, շար-ա-դրություն, պար-ունակություն, ստոր-ա-դրություն, վեր-ծանություն, տար-բերել, տրամ-ա-բանել, տրամ-ա-դրություն և այլն

Բերած օրինակների առաջին բաղադրիչները ածանցներ են, որոնք, ինչպես տեսանք, ստեղծել են հունաբան հայերենի ներկայացուցիչները Այդ նախամասնիկներով կազմված բարդությունները

հատուկ չեն եղել գրաբարին, որի պատճառով էլ V դարի մեր պատմիչները չունեն նման բառեր: Այդ բառերի իմաստը արտահայտել են այլ բառերով կամ նկարագրական եղանակով. ինչպես՝ ստորագրութիւն բառի իմաստով գործածել են «ծեռագիր, նկարագիր», վերծանել՝ «ընթեռնուլ», շաղկապ՝ «զօդ», «յօդակապ», բացատրել «մեկնել», «ներգործել», «ագդել», փոխարկել՝ «փոխել», «յեղուլ», փառաբանալ «ի բաց բանալ», ներպարունակել՝ «բովանդակել», ներհակ՝ «ընդդիմակաց», հոմանուն՝ «անուանակից», դերանուն՝ «փոխանակ անուան», փաղառութիւն՝ «վանկ», տարալսութիւն՝ «անհնազանդութիւն», տարբերել՝ «որոշել», «զանազանել», շարունակ՝ «հանապազ», մակերևոյթ՝ «երեսք», շարադրել՝ «կցել» և այլն:

Հունաբան հայերենի բառապաշարի նորութիւնները միայն նախածանցներով կազմված բառերով չեն սահմանափակվում: Հունաբան դպրոցի ներկայացուցիչները իրենց թարգմանութիւնների մեջ հաճախ պատճենում են հունարեն բառերը՝ պահպանելով նույնիսկ հունական շարադասութիւնը. օրինակի համար, հունարեն *ἄσφοδος* բառը թարգմանված է **վաղորդայնազգեցիկ** բառով¹, թեև հայերենում վաղուց ի վեր այդ հասկացութիւնն արտահայտելու համար եղել է **արուսեակ** տերմինը: **Վաղորդայնազգեցիկ** բառը կազմված է հունարենի վերոհիշյալ բառի բառացի թարգմանութեամբ. իսկ այդ բառը բարդված է *ἄσος* «այգ» և *φορέω* «հագնվել», «հագուստ կրել» բառերից, որոնք և նկատի է ունեցել հայ թարգմանիչը: Հունարեն մի շարք բառեր, որոնք կազմված են *φίλεω* «սիրել» և մի այլ բառի բարդութեամբ, հայերենում թարգմանված են հունարենի օրինաչափութիւնները նկատի ունենալով, օրինակ՝ հուն. *φιλοτιμέομαι* բառը, որը կազմված է *φίλεω* «սիրել» և *τιμαω* «հաիգել» բառերից, թարգմանված է «պատուասիրել», *φιλόλογος*, որը կազմված է *φίλεω* և *λόγος* «բան» բառերից, թարգմանված է «սիրաբան», թեև հայերենում եղել է «բանասեր» տերմինը, որը իր կազմութեամբ ավելի հարազատ է հայերենի օրինաչափութիւններին. *φιλεργος*, որի առաջին եզրը նույն *φίλεω* բառն է, իսկ երկրորդ եզրը՝ *εργον* «գործ», թարգմանված է «սիրագործ», նույն սկզբունքով կազմված են նաև **մայրաքաղաք** *μετρόπολις*, միտք «մայր» և *πόλις* «քաղաք», **քերականութիւն** *γραμματική*, **ողբերգութիւն** *τραγῳδία*, «եռավանկք» *τρισλλαβοι*, **եռամսյակ** *τρίχρονος*,

¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմութիւն, հ. II, էջ 45:

«Երկբարբառ», δῖφθογγος, «երկանուն» δίωνυμον կատակերգություն «ωμφδία և բազմաթիվ այլ բառեր, որոնց զգալի մասը մտավ մեր գրական և բանավոր լեզվի մեջ: Բերված օրինակները ցույց են տալիս, որ հունաբան հայերենի ներկայացուցիչների լեզվաշինական աշխատանքը բառակազմության բնագավառում ընդհանրապես չէր հակասում հայերենի զարգացման տենդենցներին: Այդ պատճառով էլ դրանք իսպառ չմոռացվեցին և մնացին մեր լեզվի մեջ իբրև նրա զարգացման անհրաժեշտ տարրեր:

Հունաբան դպրոցի ներկայացուցիչների նորարարությունները ավելի զգալի և ավելի խոր են քերականության մեջ: Նրանք ստեղծեցին քերականական այնպիսի համակարգ, որը խորթ է հայերենին այն աստիճան, որ չընդունվեց հայոց լեզվի հետագա մշակողների կողմից: Նրանց այդ աշխատանքը թերևս այն բանի հետևանք էր, որ դեռևս գրված չէր ոչ գրաբարի և ոչ էլ հայ ժողովրդի խոսակցական լեզվի քերականությունը: Նրանք իրենց ձեռքի տակ ունեին հունարենի քերականությունը, որը ստրկաբար թարգմանվել էր նաև այլ ժողովուրդների լեզուներով: Սակայն չնայած դրան՝ Դիոնիսիոս Թրակացու հայ թարգմանիչներն ու մեկնիչները ստեղծագործական մեծ աշխատանք են կատարել և հունարեն բնագրին ընդհանրապես հարազատ մնալուն գուզընթաց՝ չեն բացառել նաև հայերենի իրողությունները և ժամանակի հայերենի մասին կարևոր հիշատակություններ են թողել: Այդ պատճառով էլ թեև նրանց քերականական նորարարությունները չկիրառվեցին հայոց լեզվում, բայց նրանց աշխատանքով հայ քերականագիտության հիմքն է դրվում: Նրանք մշակում են հայերենի քերականական տերմինները, փորձ են կատարում հայերենի քերականություն մշակելու ուղղությամբ և ճիշտ կերպով վճռում են տեսական որոշ հարցեր:

Հունաբան հայերենի ներկայացուցիչները իրենց թարգմանությունների մեջ բառացի լինելով հանդերձ՝ հաճախ չեն մնացել բնագրի սահմաններում: Այսպես, օրինակ՝ Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ թարգմանիչը շատ դեպքերում շեղվում է բնագրից և հայերենից վերցրած օրինակներով ցանկանում է հասկանալի դարձնել իր ասածը. օրինակի համար, քերականության «Յաղագս տառի» բաժնում գրված է. «Գիր է երեսուն և վեց յայբէ մինչև

ցքե»¹, այն ժամանակ, երբ հունարենը 36 տառ չունի: Բաղաձայնների և ձայնավորների թիվը նույնպես որոշվում է հայերեն տառերի քանակությունը նկատի ունենալով: Սակայն այդ բոլորը երբեք չեն թուլացնում հունարենի խիստ ազդեցությունը և հայերենի իրողությունները հունարենին հարմարեցնելու միտումը: Միայն հունարենի քերականությունը նկատի ունենալով՝ նրանք հիմք դրեցին հայ քերականագիտությանը, հայոց լեզվի մեջ մտցնելով լեզվական այնպիսի իրողություններ, որոնք անհարազատ էին հայերենին:

Նրանց նորարարությունները շատ լայն հարցեր են ընդգրկում. սահմանափակվեց միայն մի քանի նորմուծումների նշումով:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Հունաբան հայերենի ներկայացուցիչների սահմանումով՝ «անուն է մասն բանի հոլովական, մարմին կամ իր նշանակելով»² և լինում է հասարակ կամ հատուկ (հասարակաբար և յատկապես):

Դիոնիսիոս Թրակացու հայ թարգմանիչը հունարենի նմանությունամբ զանազանում է գոյական անունների երեք սեռ՝ արական, իգական և չեզոք: Քերականության հայ մեկնիչները փորձել են՝ ձևականորեն տարբերել սեռերը հայերենում: Սակայն այդ փորձերը ի դերն են անցել, որովհետև որքան էլ նրանք ցանկացել են ձևական տարբերություններ տեսնել տարբեր իմաստ ունեցող բառերի մեջ, իրենց այդ չի հաջողվել և, ի վերջո, բառերի իմաստն են նկատի ունեցել, երբ ցանկացել են որոշել սեռերը. օրինակ՝ Գրիգոր Մագիստրոսը «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ ընտանի կենդանիներից արական է համարում՝ եզն, եղջերու, հովատակ, նժոյգ, երիվար, խոյ, քօշ, նոխազ, բզակ (քօշ), քաղ (քօշ), արջառ և այլն, իգական է համարում՝ մաքի, որոջ, այծ, թալասմեղ (եզ կամ կրտած այծ), կով, եղև, երինջ, զամբիկ, ճայիկ (եզ ձի), ճակ (ճայիկ) և այլն. չեզոք է համարում՝ ալոջ (եզ ուլ), բուծ (կաթնակեր գառ, ուլ), քուռակ, բոչոյ (փոքր ձի), մատաղածի, խեշակ (ազնիվ ձի), անդրավար (ջորի) և այլն: Այս բառերի մեջ, իհարկե, ձևական որևէ տարբերություն չի կարելի գտնել: Հայերենում իգական սեռը արտահայտելու համար օգտագործվել են իգականի իմաստ արտահայտող բառեր (կին, աղջիկ,

¹ Н. Адоиц, Дионисий Фракийский и армянские толкователи, стр. 4.

² Նույն տեղը, էջ 12:

դուխտ և այլն) և **ուհի** վերջածանցը, որը չի գործածվում առարկա կամ իր ցույց տվող բառերի հետ: Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանության մեջ նշված են իգական իմաստ արտահայտող չորս վերջածանց՝ ուհի, նի, ոց, ոյշ, որոնցից միայն առաջինը, ինչպես տեսանք, իգականի իմաստ է արտահայտում, իսկ մնացածները այդ իմաստը չունեն:

Գոյական անունների թիվը Թրակացու քերականության հայերեն տեքստում պահպանված է հունարենի նմանողությամբ՝ երեք. եզական, երկվորական և հոգնական, որոնց համար հատուկ վերջավորություններ են ստեղծված նաև հայերենում ինչպես՝ եզական Պետրոս, երկվորական՝ Պետրու, հոգնական՝ Պետրոսք: Հայ մեկնիչներից ոմանք երկվորական թիվը հատուկ չեն համարել հայերենին. օրինակ՝ Ստեփաննոս Սյունեցին իր «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ նշում է, որ «Ի հայումս զեզական և բազումս միայն կարեն նշանակել անուանք, որպես Պետրոս և Պետրոսք, մարդ և մարդիկ, աստուած և աստուածք, և ամենայն այսպիսիքս»¹:

Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանիչը և քերականության մեկնիչները նշում են գոյականների երեք ձև՝ պարզ, բարդ և հարաբարդ: Այդ տերմինները պարզաբանում է Սյունեցին. «Պարզ ասե զմեկնակ անունն, բարդ՝ զերկուս կցեալս յիրեարս, յարաբարդ՝ զերիս միաւորեալս»²: Թրակացու քերականության թարգմանության մեջ բերվում են հետևյալ օրինակները. պարզ՝ Մանան, բարդ՝ քաջ Մանան, հարաբարդ՝ քաջ Մանուել: Սյունեցին ավելի պարզ է պատկերացնում բարդության տեսակները և հատկապես բարդ բառերի մի շարք օրինակներ է տալիս՝ աշխատելով դրանք նույնիսկ որոշ համակարգի տակ դնել. ինչպես՝ Նորայր, Կորայր, ազատայր, Խուլայր, Վարագտորդատ, իմաստնապատում, ուղղապատում, հիապատում, սիրամարգ, տիրասպան, տիրասեր, վանաշեն, Տիրատուր, գունագեղ և այլն:

Գոյական անունների վեց հոլով է հիշատակված Թրակացու քերականության թարգմանության մեջ. ուղղական, սեռական, տրական, առաքական, հայցական, հոշական (կոչական, առասական): Այդ հոլովները հին շրջանում արտահայտել են տարբեր իմաստներ: Հոլովական տարբեր իմաստներ արտահայտելու համար հունաբան

¹ Նույն տեղը, էջ 206:

² Նույն տեղը, էջ 205:

հայերենի ներկայացուցիչները օգտագործել են ինչպես հոլովական առանձին վերջավորություններ, նույնպես և նախածանցներ օրինակ՝ սեռական հոլովի համար օգտագործել են ինչպես գրաբարի, նույնպես և գրաբարից իր ընդհանուր դրսևորումներով տարբերվող վերջածանցներ ինչպես սեռական՝ մարդոյր, սեռոյր, եզոյր, եղոյր (եղած մեկ սեռի-սեռի միոյ եղելոյ), ձիոյր, ձիոջ, միոջ և այլն տրական՝ կենցաղում, միում, մարդում, ինչպես ներ (ի) մարդումն միայնոջ և այլն ներգոյական և բացառական հոլովները կազմելու համար օգտագործվել են **ըն** և **և** մասնիկները ինչպես՝ ներկուց ըն պականսեցելոց (երկու պականսածներից), նանգին (վերջում), ըն պականսեցելոց և նաւարտոց (պականսածից և ավարտածից) և այլն ինչպես երևում է բերված օրինակներից, սեռական և տրական հոլովների վերջավորությունները՝ **ոյր, ոջ, ում** և բացառական ու ներգոյական հոլովները կազմող նախածանցները՝ **ըն** և **և**, օտար չեն հայերենին Առաջին երեք վերջավորությունները (ոյր, ոջ, ում) եղել են գրաբարում, բայց շատ սահմանափակ կիրառություն են ունեցել Հունաբան հայերենի հեղինակների մոտ, գլխավորապես Պորփյուրի «Ներածության» թարգմանության մեջ, այդ վերջավորությունները ընդհանուր կիրառություն են ստացել **Ըն** և **և** նախածանցները կազմված են **ընդ** նախդրից և օգտագործվում են այդ ձևով իբրև բացառական և ներգոյական հոլովների նախածանցներ, որոնցից **ըն** դրվում է բաղաձայնով, իսկ **և**-ն ձայնավորով սկսող բառերի վրա (ներկուց, նանձին, ընտեղւոյր, նում, նարտաքնոցն, նոգւոյ և ի մարմնոյ և այլն) Այդ շրջանից սկսում է գիտակցվել հայերենի ներգոյական հոլովը՝ հատուկ **ում** վերջավորությամբ, որը սկզբում առնվում էր նախդրի հետ, իսկ հետագայում նաև առանց նախդրի՝

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Հունաբան հայերենի ներկայացուցիչները զգալի նորություններ մտցրին նաև հայերենի դերանունների մեջ Ամենից առաջ երկակի թվի համար ստեղծեցին հատուկ ձև՝ անձնական դերանունների համար **ո**-ով, իսկ ցուցականների համար **ու**-ով օրինակ՝ մոնք (մենք երկուսս), դոնք (դուք երկուսդ), նոնք (նրանք երկուսը), այսու (այս եր-

* Ավելի մանրամասն տես **Ա Աբրահամյան** Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը Երևան 1953

կուսը), այդու (այդ երկուսը), այնու (այն երկուսը): Ստացական դերանունների երկակին լինում է իմեն (իմ ունեցած երկուսը), քովրա (քո ունեցած երկուսը), նովրա (նրա ունեցած երկուսը): Այս նորմուծումներից բացի, իգական և չեզոք սեռերի համար որոշ հեղինակներ գործածել են դերանվանական հատուկ ձևեր. անորոշ դերանվան համար՝ **եզ** (արական), **մի** (իգական), **մու** (չեզոք), ցուցական դերանունների իգական սեռի համար՝ **սե, դե, նե**, որոնք հոլովվում են ընդհանուր օրինաչափություններով. սե, դե, նե, սերա, դերա, ներա, սերում, դերում, ներում և այլն. հոգնակի սեք (սայք), դեք, (դայք), նեք (նայք), սացա, դացա, նացա և այլն: Առանձին հեղինակների մոտ գործածվել են նաև սոջա, դոջա, նոջա ձևերը սոցա, դոցա, նոցա դերանունների փոխարեն: Իգական սեռի դերանունները, թեև իրենց կազմությամբ ու ձևով միանգամայն արհեստական են, բայց գործածվել են ուշ շրջանի մի շարք հեղինակների գործերում ևս: Արևմտահայ գրողներից ոմանք (օրինակ՝ Պ. Դուրյանը) փորձել են կիրառել իգական սեռի դերանունը, սակայն հաջողություն չեն ունեցել և այդ դերանունը մնացել է միայն անհատների գործերում ու տարածում չի գտել:

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Թվական անունների մեջ հունաբան հեղինակները մտցրին սեռի կատեգորիան. արականի համար **եզ**, իգականի՝ **մի**, չեզոքի՝ **մու**, որոնք, ինչպես նշվեց, գործածվում էին նաև իբրև անորոշ դերանուններ: Մյուս նորությունը դասական թվականների **-րորդ** և **-երորդ** վերջածանցները **-իր** կամ **-երիր** վերջածանցներով փոխարինելն է. ինչպես՝ երկիր, երիր, չորիր, հնգիր-հնգերիր, վեցերիր և այլն: Թվական անունների մեջ մտցված նորություններից միայն **եզակի** բառը անցավ հետագա շրջանի գրական հայերենին: Մյուս նորամուծությունները չմնացին ո՛չ խոսակցական և ո՛չ էլ գրական լեզվում:

ԲԱՅՑ ԵՎ ՆՐԱ ԽՈՆԱՐՈՒՄԸ

Հունաբան հայերենի ներկայացուցիչները իրենց աշխատություններում կիրառել են բայական որոշ իրողություններ, որոնք չէին բխում հայերենի զարգացման օրինաչափություններից: Այդ նոր

իրողությունները մեծ մասամբ կազմված էին հունարենի նմանողությամբ. Սակայն խիստ կերպով հունարենին հետևելով հանդերձ՝ նրանք ընդհանուր համակարգի բերին հայերենի բայերը և առաջին անգամ փորձեցին գիտականորեն ներկայացնել հայերենի խոնարհման ընդհանուր դրսևորումները:

Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ թարգմանիչը ընդհանուր առմամբ հավատարիմ է մնում հունարենին: Սակայն քերականության հայ մեկնիչները հաճախ շեղվում են հունարենին հարմարեցված այդ թարգմանությունից և, նկատի ունենալով հայերենի իրողությունները, շարադրում իրենց տեսակետները քերականական զանազան իրողությունների մասին: Քերականության թարգմանության մեջ բայը համարված է «Բառ անհուլով, ընդունակ ամանակաց, դիմաց և թուող, որ ներգործութիւն կամ կիր յարակցոցէ»¹, այսինքն՝ բայը չհուլովող խոսքի մաս է, որը ունի ժամանակ, դեմք, թիվ և սեռ: Բայերի խոնարհման եղանակները հինգ են համարված՝ սահմանական, աներևույթ, հրամայական, ըղձական և ստորադասական: Բայի սեռը երեք՝ ներգործութիւն (ներգործական), կիր (կրավորական) և միջին (չեզոք), թիվը՝ երեք՝ եզակի, երկակի, հոգնակի, ժամանակը՝ երեք՝ ներկա, անցյալ, ապառնի և այլն:

Հունաբան հայերենի ներկայացուցիչները աշխատել են հայերենի մեջ տեսնել հունարենին նման իրողություններ: Երբեմն նրանք նույնիսկ հորինել են առանձին ձևեր, բայց բոլոր դեպքերում էլ նման ձևերի համարժեքները վերցրել հայերենից: Նրանց այդ ձգտումով էլ որոշվում է իրենց աշխատանքի ուղղությունը: Այսպես, օրինակ՝ նշելով բայերի երեք սեռեր, նրանք փորձում են այդ սեռերի համար համապատասխան օրինակներ բերել հայերենից: Ստեփանոս Սյունեցին իր մեկնության մեջ գրում է, որ ներգործական են այն բայերը, որոնք ներգործում են «ի վերայ ուրուք, որպէս գանեմ, կոփեմ, ծամեմ, վարեմ, խլեմ, սպանանեմ և որք այսպիսիք»², իսկ կրավորականները՝ նրանք, որ պարտվում են որևէ մեկից, ինչպես՝ գանիմ, խլիմ, աւերիմ, սպանանիմ և այլն: «Իսկ միջին բայք են այսոքիկ, որ երբեմն ներգործութիւն և երբեմն կիր ցուցանեն նովին վանկիւ, որպէս մեռանիմ, տանիմ, խորհիմ, սփածայ, մոռացայ»³: Հայ մեկ-

¹ Նույն տեղը, էջ 22:

² Նույն տեղը, էջ 212:

³ Նույն տեղը, էջ 212-213:

նիշներից ոմանք երբեմն նույնիսկ փորձել են բայերի սեռերի առանձնահատկությունները ցույց տալ բարբառների օրինակներով. այսպես, օրինակ՝ Դավիթ փիլիսոփան իր մեկնության մեջ գրում է. «Եւ է բուն և ստոյգ ներգործութիւն՝ գանեմ և կիր՝ գանիմ և միջին՝ մոռացայ զոք կամ մոռացեալ եղէ: Բայց յայլ վայրս, որպէս Կորճայքդ, վարին կրականին ոչ հմտաբար, այլ ըստ սովորութեան»¹: Դավիթ փիլիսոփայի այս վկայությունից պարզվում է, որ հայերեն բարբառները ձևով չեն զանազանում բայերի սեռերը և որ հունաբան հայերենի ներկայացուցիչների սեռերի ձևական տարբերակումները հայերենի օրինաչափություններից չեն բխում: Հայերենի բայերը սեռեր ունեն, բայց այդ սեռերի համար առանձին ձևական ցուցանիշներ չեն ունեցել նույնիսկ գրաբարում: Հայերենի բայերի այդ հատկությունները նկատել են Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ մեկնիչներից շատերը. օրինակ՝ Կնանուն մեկնիչը գտնում է, որ բայը «միջին է, յորժամ ձայնն կրաւորական և իրքն ներգործական, որպէս տակիմ. եւ կամ յորժամ ձայնն ներգործական և իրքն կրաւորական, որպէս զգենում»²: Նշանակում է, որ ձևականորեն չեն զանազանվում բայի սեռերը, քանի որ կրավորական վերջավորություն ունեցող բայը կարող է ներգործական լինել և ընդհակառակը՝ ներգործական վերջավորությամբ՝ կրավորական:

Երկակի թվի կատեգորիան նույնպես հատուկ չի եղել հայերենին, և այդ պատճառով էլ որոշ մեկնիչներ չեն խոսել այդ թվի մասին կամ խոսել են միայն նկատի ունենալով հայերեն թարգմանության օրինակները: Երկակի թվի կատեգորիայի համար քերականության հայ թարգմանիչը ստեղծել էր ձևական հատուկ ցուցանիշ՝ **ո**, որը մի կողմից կապվում էր հայերենի **գոլ** բայի լծորդի և մյուս կողմից՝ հունարեն երկակի թվի **τον** վերջավորության հետ:

Հունաբան հայերենի ներկայացուցիչների սորաբարությունները ամենից առաջ ուժեղ են արտահայտվել բայերի խոնարհման մեջ: Նրանք հունարենի նմանողությամբ ստեղծեցին հայերենին խորթ մի շարք ժամանակներ, որոնք ունեին բոլոր եղանակները անխտիր՝ թե՛ ներգործական և թե՛ կրավորական խոնարհումների ժամանակ:

Թրակացու քերականության հայ թարգմանիչը նկատի ունենալով հունարենի խոնարհումը՝ բոլոր եղանակների համար ընդունել է ներ-

¹ Նույն տեղը, էջ 113:

² Նույն տեղը, էջ 147:

կա, անկատար, հարակատար, գերակատար, կատարյալ և ապառնի ժամանակները, որոնք սահմանական եղանակի ներկայում, անկատարում, կատարյալում և ապառնիում իրենց ձևով՝ հիմնականում նույնանում էին գրաբարի համապատասխան ժամանակների վերջավորությունների հետ այն տարբերությամբ, որ երկակի թվի համար ստեղծել էին հատուկ ցուցանիշ՝ **ո** ներգործակերպ և **ով**, **ու** կրավորակերպ խոնարհման համար: Բոլոր ժամանակները անխտիր ունեին և՛ ներգործակերպ, և՛ կրավորակերպ խոնարհում. հարակատար ժամանակը կազմվում էր անկատարից, իսկ գերակատարը՝ կատարյալից՝ **է** ածականով. ինչպես՝ Էկոփէի, Էկոփոյի, Էկոփեաք, Էկոփեցի, Էկոփոցի, Էկոփեցաք և այլն:

Յրամայական եղանակի ներկան **ու** անկատարը կազմվում էին բուն հրամայականից և երկրորդ ապառնուց, ինչպես՝ կոփեա-կոփեսցէ, կոփոա-կոփոսցի, կոփեսցէք-կոփեսցեն և այլն, հարակատարը և գերակատարը՝ նույն ձևերից՝ **է** ածականով, ինչպես Էկոփեա, Էկոփոա, Էկոփեցէք և այլն, կատարյալն ու ապառնին՝ հորդորական հրամայականից և երկրորդ ապառնուց, ինչպես՝ կոփեսջիր-կոփեսցէ, կոփոսջիր-կոփոսցէ, կոփեսջիք-կոփեսցեն և այլն:

Ըղծական եղանակի ներգործակերպ ներկան **ու** անկատարը ունեին երմ, երս, եր, որմ, որս, որ, երմք, երք, երն, կրավորականը՝ իւմ, իւս, իւ, ում, ուս, ու, իւմք, իւք, իւն վերջավորություններ, ինչպես՝ կոփեւմ, կոփում, կոփեւմք, կոփիւմ, կոփում, կոփիւմք և այլն, հարակատարն ու գերակատարը՝ ներգործակերպ եցիւ, իցիւր, եցեր, եցիւք, ցիւրք, ցիւն, կրավորակերպ՝ իի, իիւ, իիւր, իաք, իիք, իին վերջավորություններ և **է** ածական. ինչպես՝ Էկոփեցիւ, Էկոփոցիւր, Էկոփեցիւք, Էկոփեալ, իի, իիւ, իիւր, ուի, ուիւ, ուիր, իաք, իիք, իին և այլն, կատարյալն ու ապառնին՝ իւց, իւր, ցեւ, իւք, եւք, եւն, այց, ցիւս, ցիւ, ցաք, ցիւք, ցիւն վերջավորություններ. ինչպես՝ կոփեցիւց, կոփոցիւց, կոփեսցիւք, կոփեցայց, կոփոցայց, կոփիսցուք և այլն:

Ստորադասական եղանակը բոլոր ժամանակներում կազմվում է **թե** շաղկապով և համապատասխան բայաձևերով, որոնք ներկայում ունեն ներգործակերպ՝ իցեմ, իցես, իցէ, իցովմ, իցովս, իցով, իցեմք, իցեք, իցեն, կրավորակերպ՝ իցիմ, իցիս, իցի, ոցիմ, ոցիս, ոցի, իցեմք, իցեք, իցեն վերջավորությունները, ինչպես՝ թէ կոփիցեմ, թէ կոփիցովմ, թէ կոփիցեմք, թէ կոփիցիմ, թէ կոփոցիս, թէ կոփոցի, թէ կոփոցիմք և այլն. անկատար ներգործակերպը նման է ներկային,

կրավորակերպը՝ կազմվում է անցյալ դերբայով և **լինել** բայի անկատար ժամանակով՝ համապատասխան ձևերով. ինչպես՝ թե կոփեալ լինէի, թե կոփոյլ լինոյի, թե կոփեալ լինեաք և այլն. հարակատար ժամանակի ներգործակերպ վերջավորություններն են՝ եցի, ցեր, եացր, ովցի, ովցեր, ովցր, իցեմք, իցեք, իցեն, և ածականով, կրավորակերպը՝ **Էկոփեալ** դերբայը եզակի և հոգնակի և **Էկոփոյլ** երկակի դեմքերի համար և եմ, ես, է, ոմ, ոս, ո, եմք, էք, են օժանդակ բայերը. ինչպես՝ թե Էկոփեցի, թե Էկոփովցի, թե Էկոփիցեմք, թե Էկոփեալ եմ, թե Էկոփոյլ ոմ, թե Էկոփեալք եմք և այլն:

Ներգործակերպ գերակատարը նույնն է հարակատար ժամանակի ներգործակերպի հետ, իսկ կրավորակերպի համար գործածվում են գերակատար դերբայը և օժանդակ բայի անցյալի համապատասխան վերջավորությունները. ինչպես՝ թե Էկոփեցեալ էի, էիր, էր, թե Էկոփոցեալ ոյի, ոյիր, ոյր, թե Էկոփեցեալք էաք, էիք, էին և այլն:

Կատարյալ և ապառնի ժամանակների ներգործակերպ խոնարհումը ունի ցից, ցես, ցե, ցաք, ջիք, ցեն, իսկ կրավորակերպը՝ կատարյալի համար՝ այ, ար, աւ, աք, այք, ան, ապառնու համար՝ այցիմ, ցիս, ցի, ցոմ, ցոս, ցո, ցիմք, ցիք, ցին վերջավորությունները. օրինակ՝ թե կոփեցից, կոփովցից, կոփեսցուք, կոփիցայ, կոփոցայ, կոփիցաք, կոփիցայցիմ, կոփեցայցոմ, կոփիցիմք և այլն:

Դերբայներն են ներկա և անկատար՝ **կոփել**, **կոփիլ**, անցյալ՝ **կոփեալ**, **կոփեցեալ**, հարակատար և գերակատար՝ **Էկոփել**, **Էկոփոցել**, **Էկոփիլ**, **Էկոփոցիլ**, **Էկոփեալ**, **Էկոփեցեալ**, **Էկոփոյլ**, **Էկոփոցեալ**, անորոշ՝ **կոփոցել**, **կոփոցիլ**, ապառնի՝ **կոփոցոցել**, **կոփոտոցել**, **կոփոցոցիլ**, **կոփոտոցիլ**:

Հունաբան հեղինակները, ինչպես երևում է վերը շարադրվածից ստեղծել էին բայական այնպիսի ձևեր, որոնք հարազատ չէին հայերենին, այդ իսկ պատճառով չմտան մեր լեզվի մեջ: Սակայն չնայած դրան՝ չի կարելի ասել, թե նրանց նորամուծությունները որևէ օրինաչափություն չունեին, կամ իմաստից զուրկ էին: Բայերի մեջ նրանց մտցրած ամենամեծ ձևափոխությունը երկակի թվի կատեգորիան էր: Երկակի թիվը օրինաչափորեն կրկնվում էր բոլոր եղանակներում և ուներ իր ձևական արտահայտությունը, որը ներգործական խոնարհման մեջ համարյա թե բոլոր ժամանակներում դրսևորվել է **ե** լծորդը **ո**-ի, իսկ կրավորական խոնարհման մեջ **ի** լծորդը **ով**-ի կամ **ու**-ի փոխարկելու միջոցով. օրինակ՝ սահմանական ներկայի եզակի

առաջին դեմքի կոփեմ բայը դարձվում էր կոփում. անցյալ անկատարի կոփեի՝ կոփոյի, կատարյալի կոփեցի՝ կոփոցի, ապառնու կոփեցից՝ կոփոցից և այլն. կրավորական խոնարհման սահմանական ներկայի կոփիմ բայաձևը երկակի թվում դարձվում էր կոփովմ, անցյալ անկատարի կոփեի՝ կոփուի, անցյալ կատարյալի կոփեցայ՝ կոփոցայ, ապառնու կոփեցայց՝ կոփոցայց և այլն:

Հունաբան հայերենի ներկայացուցիչները հունարենի նմանողությամբ ստեղծեցին հարակատար (յարակայական) և գերակատար (յարաձգական) ժամանակները, որոնք կազմվում էին անցյալ անկատարից (Էկոփեի) և անցյալ կատարյալից (Էկոփեցի)՝ Է հնչյունի հավելումով: Այդ հնչյունը թեև կա նաև հունարենում, բայց կազմված է հայերենի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի **ե**-ն նկատի ունենալով:

Հրամայական եղանակի համար նույնպես սահմանեցին վեց ժամանակներ, միայն այն տարբերությամբ, որ երկու ժամանակի՝ ներկայի և անկատարի, հարակատարի և գերակատարի, անցյալի և ապառնու, և ոչ թե ամեն մեկի համար՝ առանձին ձևերով: Հրամայականի այդքան ժամանակները ստեղծվել էին հունարենի նմանողությամբ և անհարազատ էին հայերենին, այդ պատճառով էլ չմասնակցականացան և չմտան մեր լեզվի մեջ:

Ըղծական և ստորադասական եղանակները ամբողջապես սարքված են հունարենի նմանողությամբ: Եթե ստորադասական եղանակի որոշ ձևեր կարելի է գտնել հայերենում, ապա ըղծական եղանակի և ոչ մի ձև չկա ոչ հին հայերենում և ոչ էլ ժամանակի խոսակցական լեզվում: Ստորադասական եղանակի բոլոր ժամանակներում գործածվում է **թե** եղանակիչը, որոշ ժամանակներում օգտագործվում են սահմանական եղանակի համապատասխան ժամանակները **թե** եղանակիչով (թե Էկոփեցի) և այլն:

Հունաբան հայերենի ժամանակները թեև ամբողջությամբ նույն ձևերով չմտան հայերենի մեջ, բայց եղանակների և ժամանակների մեծ մասի անունները մնացին մեր լեզվում:

Այդ բոլոր նորարարությունները բնականաբար մի անգամից չկատարվեցին, այլ տեղի ունեցան աստիճանաբար՝ հինգերորդ դարից սկսած. օրինակ՝ հենց Եղիշեի Պատմության մեջ մենք տեսնում ենք հունաբան հայերենում սովորական դարձած որոշ բառաբարդություններ, ինչպիսիք են՝ **վերաբերիլ** (վեր բարձրանալ, կր.), **տարա-**

բերիլ (տատանվել), **բացատրել** (նետել, լցնել), **յարակայութիւն** (մշտագոյություն), **տարաբաժին** (զրկված). Փարպեցու Պատմության մեջ կան **շարագրել** և **յեղափոխութիւն** բառերը. **յեղափոխ** բառը կա նաև Ագաթանգեղոսի մոտ: Մովսես Խորենացու Պատմության մեջ հունաբան դպրոցին հատուկ բառեր և հունարենին նման շարադրություն արդեն օրինաչափ երևոյթ են: Այդ և բազմաթիվ այլ փաստեր, ինչպես գրաբարի շարադասությունը, ենթակայի հոլովների տարբեր արտահայտությունները, ցույց են տալիս, որ հենց հինգերորդ դարից, գուցե և դրանից առաջ հունարենը խիստ ներգործել է հայերենի զարգացման վրա:

Այդ ներգործությունը ամենից ավելի դրսևորվել է շարադասության մեջ, որը հունաբան հայերենի որոշ ներկայացուցիչների գործերում ուղղակիորեն նույնանում է հունարենի շարահյուսության հետ: Այսպես, օրինակ՝ գրաբարում շատ սովորական «եւ ասէ» կապակցությունը հունաբան հեղինակների մոտ դարձված է՝ «Եւ ասաց իսկ», «ցիրեշտակն»՝ «ամիրեշտակն», «գիա՞րդ լիցի»՝ «իբր եղիցի», «քանզի զայր ոչ գիտեմ»՝ «զի այր ոչ ճանաչեմ», «եկեսցէ ի **քեզ**»՝ «վերեկեսցէ առ **քեզ**», «զօրութիւն բարձրելոյ»՝ «կարութիւն բարձրելոյ», «զի նովաւ հաստատեցաւ»՝ «զի նովաւ շինեցաւ», «ի վերուստ իջեալ»՝ «ի վերուստ վայրեկեալ», «տպաւորի և յօրինի»՝ «պատկանի և գաղափարի», «ի տեսանել»՝ «տեսանելի», «յերկիր անկելոյ»՝ «ի վայր արկեցելոյ» և այլն:

Հունաբան հայերենի ներկայացուցիչները մեծ չափով օգտագործել են հայերենի բարբառների իրողությունները, հատկապես բառերի բարբառային ձևերը և նոր առումները. ինչպես՝ կարօտել, կտրոտել, պատառոտել, կերաւ, բեկոտել և այլն:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ հունաբան հայերենը գրաբարի գրական մշակման ենթարկված արտահայտությունն է, որի շատ իրողություններ կապված են եղել հայերենի զարգացման նոր տենդենցների հետ և այդ պատճառով էլ ամրացել են հայերենի հետագա շրջանի գրականության մեջ և դարձել նրա հիմնական տարրերը, իսկ այն իրողությունները, որոնք արհեստական են եղել և հակասել են հայերենի օրինաչափություններին, չեն գործածվել ու չեն մասսայականացվել:

Հունաբան հայերենի ներկայացուցիչների լեզվաշինարարական աշխատանքը ցույց է տալիս նաև, որ գրաբարը այդ շրջանում իր

բառապաշարով չէր բավարարում հայոց լեզվի զարգացման պահանջները ու այդ պատճառով էլ ստեղծվում են բազմաթիվ նոր տերմիններ՝ տարբեր հասկացություններ արտահայտելու համար և մշա՛, ինչ է գիտական գրականության լեզուն

2) ԳՐԱԲԱՐԻ ՎԻՃԱԿԸ VII-X դարերում

Հայոց լեզվի պատմության մեջ VI-VII դարերը համարված են շրջադարձային եվ իրոք, հին հայերենը այդ դարերում զգալի փոփոխությունների է ենթարկվում՝ ինչպես տեսանք հունաբան հայերենի մասին արված համառոտ տեսությունից, նա մշակման է ենթարկվում և հարստանում է նոր իրողություններով՝ Այդ նոր շարժումը և ընդհանրապես գրաբարը մշակելու, զարգացնելու և ժամանակի պահանջներին համապատասխանեցնելու ձգտումները կապված էին հայ ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունների, հայ ժողովրդի պատմության իրական վիճակի հետ՝ Սակայն դրա հետ միասին դրանք պայմանավորված էին լեզվի հիմնական ֆունկցիայով՝ նրա հաղորդակցական դերով, որը զգալի փոփոխության էր ենթարկվել այդ դարերում՝ նա կորցրել էր պետական լեզվի ֆունկցիան, ենթարկվել էր այլ լեզուների ազդեցությանը և փոխել որոշ կանոններ, հեռացել ժողովրդական խոսակցական լեզվից այն աստիճան, որ ժամանակի մատենագիրները տարբերում էին այն ժողովրդական խոսակցական լեզվից՝ «գեղջուկ բանից», որը անընդհատ զարգանալով ու կերպարանափոխվելով՝ համառորեն ներթափանցում էր գրավոր լեզվի մեջ և դրանով իսկ խախտում հինգերորդ դարում օրինականացված և գրականությամբ ամրացված լեզվական կանոնների համակարգը՝ Լեզվական այդ նոր երևույթները ընդգրկում էին ինչպես հայերենի բառապաշարը, նույնպես և քերականությունն ու հնչյունական կողմը՝ Հայերենի բառապաշարի մեջ կատարված տեղաշարժերը արտահայտվում էին՝

ա) Նոր, հինգերորդ դարի գրականության մեջ անգործածական բառերով ինչպես՝ առդատել, առդրել, առինչունակ, առինչունակաբար, առոգանութիւն, առերգութիւն, առասացութիւն, ապաթարց, ապահարկ, ապահաւատ, ապառնի, ապացոյց, ապասոցել, արտադրել, արտագեղում արտակացութիւն, արտանուագ, արտասահմա-

նել, արտասել, բակառաբար, բակառել, բակլայ, բաղադրել, բաղա-
ծայն, բաղկապել, գերագոյն, գերագոյութիւն, գերագանց, գերա-
գարդ, գերակայ, գերաճաճանչ, գերապայծառ, գերիմաց, դերանուն,
դերհատուցական, ենթալուսնեայ, ենթակայ, ենթակայութիւն, են-
թարկել, զառքաշ, զարտուղի, էնկոմիա, էրո՞ւմ, ընդդիմադրել, ընդ-
դիմախօսել, ընդմիջարկութիւն, ըստարտուղել, թաս, թերագրել, թեր-
խորով, թնապարփակ, ժիպակ, իբլիս, ինչականութիւն, իրակութիւն,
լուսատեսակ, լուսարփի, լուսարկու, խարաջ, խեր, խումար, խսիր,
խումարութիւն, ծոցածագենի, ծպաւոր, կարուս, կաւատ, կլայեկ,
կոլոտ, կենդանասաղարթ, կենցաղավարել, կենցաղաւետ, կենցա-
ղօգուտ, կենցաղակից, կենցաղակցորդ, կնոջասեր, կողմակալ, կող-
մանակալ, կռնարկութիւն, հալաւ, համալսարան, հակաբան, հա-
կաբաժանել, հակադարձ, հակադրել, հակակայել, հակակիր, հակա-
մետ, հակաճառ, հակասահմանել, հակասութիւն, հակաստորոգել,
հակատարաբառնել, հակատափող, հակերգ, հակընդդէմ, հակոտ-
նեայք, հակորոշել, համապարփակ, հիբար, հիզան, հիկէն, հինայ,
հոլով, հոլովաբար, հոլովականութիւն, հոմաբուն, հոմագաւառ, հո-
մագգի, հոմածին, հոմահամար, հոմանախանձորդ, հոմասեղան,
հոմառական, հոմացեղ, հոմերամ, մակագրել, մակագիծ, մակալեզու,
մակածել, մակակաճառ, մակածութիւն, մականուանական, մակա-
վիճակ, մակատարած, մակբայ, մակբաշխ, մակբերութիւն, մակ-
դարձ, մակդիր, մակերևիմ, մակթիւ, մակստեղծ, մամ, մկրատ, մելիք,
մունետիկ, յարաբարդ, յարագոմ, յարակայ, յարակայընթաց, յարա-
կիր, յարակոծ, յարակոյս, յարահիւսել, յարագոյութիւն, յարահոլով,
յարանունութիւն, յարաշեշտ, յարացանկ, յարացուցական, յարունա-
կան, նարինջ, նոպայ, ներաբնակ, ներածական, ներակրթեմ, ներ-
բուն, ներգործուն, ներդաշնակապես, ներխորհուրդ, ներկում, ներ-
հակ, ներհիւսել, ներմեղական, ներպարունակել, ներտառութիւն,
ներտրամախոհութիւն, շաղաշարել, շաղկապել, շարագիր, շարա-
գրել, շարադասել, շարադրութիւն, շարամածեալ, շարակից, շա-
րառել, շարունակ, շեր, շիպ, շրջուած, որգէն, որգոն, որգունակ, որ-
զան, ուշուր, չափաբանութիւն, չորքոտանի, պապ, պապենի, պարա-
գայական, պարագլուխ, պարագծել, պարագործեմ, պարագրական,
պարագատել, պարագարդել, պարածածկել, պարածածկոյթ, պարա-
յարմար, պարապել, պարամել, պարունակել, ջոկադասակարգու-
թիւն, ջոկադիր, ջոկադրել, ջոկաման, սապոն, ստորաբնակ, ստորա-

գաւառ, ստորագրել, ստորադաս, ստորադիր, ստորառապել, ստորադասական, ստորոգել, ստորուսել, վերաբերել, վերադիր, վերագլխել, վերագրել, վերադիր, վերադրուատել, վերատրոհել, վերարծարծել, վերարկել, վերարկու, վերելք, վերլուծանել, վերծանել, վերշարժել, վերշնչութիւն, տարաբան, տարաժամ, տարախոհ, տարբերել, տարորոշ, տարուբեր, տրամաբան, տրամադրութիւն, տրամախոհ, տրամորոշել, փաղանուն, փաղառել, փաղառութիւն, փարսախ, քերականութիւն, քերդած, քերթուած, քումայթ, օշնայ և այլն:

բ) Հին բառերի իմաստների փոփոխմամբ. ինչպես՝ **հարուստ** բառը հինգերորդ դարի հեղինակների մոտ գործածվում էր գլխավորապես «ուժեղ», «կարող», «փարթամ», «թիկնավետ» առումներով: Հիշյալ դարերում նա արդեն գործածվում էր «մեծատուն», «հարուստ» իմաստով. **ապրել** բառը նշանակել է «ազատվել», «փրկվել», «պահվել», իսկ վերոհիշյալ դարերում գործածվել է նաև «կյանք անել», «ապրել» առումով. **պայազատ** նշանակել է «հաջող», գործածվել է «հշիւան», **պայազատել**՝ «հշիւել» առումով. **կենդանի** բառը գործածվել է «գազան», «անասուն» առումով: Այդպես նաև փոխել են իրենց իմաստները, կամ նոր առումներ են ձեռք բերել **սեփական, ազատ, ապրանք, բան, բառ, տառ, հաւ, գիրք, սպաս** և բազմաթիվ այլ բառեր:

գ) Բառակազմական նոր հնարավորություններով՝ նախածանցներով, որոնց մասին արդեն առիթ ենք ունեցել խոսելու հունաբան հայերենին նվիրված գլխում:

Սակայն այդ բոլորը շատ քիչ չափով կարող էին ներգործել գրաբարի զարգացման հետագա ընթացքի վրա, եթե տարբերություններ չառաջանային գրաբարի և ժողովրդական խոսակցական լեզվի քերականական կանոնների միջև:

Գրաբարի քերականությունը, ինչպես իմացանք, ուներ իր օրինաչափությունները, որոնք գրի առնվելով պահպանվում են անփոփոխ ձևով, մինչդեռ ժողովրդական խոսակցական լեզուն ենթարկվում էր փոփոխության, զարգանում էր արագ տեմպերով և իր կրած փոփոխություններով ներգործում էր գրաբարի վրա: Այդ դարերում հանդես եկած մատենագիրները որքան էլ ձգտեին հարազատ մնալ V դարի հեղինակների ոճին, չէին կարող իրենց երկերում չարտացոլել ժողովրդական լեզվի մեջ կատարված տեղաշարժերը, որոնք ամենից առաջ արտահայտվում են գրաբարի հոլովական համակարգի մեջ:

ժողովրդական լեզվի ներգործությամբ շատ դեպքերում ձևով սկսում են նույնանալ հոգևակի ուղղական և հայցական հոլովները, փոխվում են գրաբարի մի շարք բառերի հոլովումները ինչպես՝ տեղի-տեղաց-տեղօք (փոխ տեղեաց, տեղեօք), փոքեր (փոխ փոքու), բլեր (փոխ բլոյ), ծաղեր (փոխ ծաղու), վայր-վայրուց (փոխ վայրաց), այծ-այծուց (փոխ այծից), ի մահուս (փոխ ի մահուանե) և այլն։ Հատկապես մեծ փոփոխություն են կրում դերանունների թեք հոլովներից մի քանիսը՝ օրինակ՝ ի մեզանեն (փոխ ի մենջ), ի ձեզանե (փոխ ի ձենջ), ի նորայնե (փոխ ի նորայոյն), յորմանե (փոխ յորմե), այսոց (փոխ սոցա, այսոցիկ) և այլն։ Դերանունների հոլովման մեջ կատարված փոփոխությունները մեծ նշանակություն ունեին գրաբարի հետագա զարգացման և ժողովրդական լայն զանգվածներին հասկանալի մնալու տեսակետից։ Այդ դերանվանական ձևերը ընդհանրապես օտար չէին հայերենին։ Նրանք գործածական էին որոշ բարբառներում և իբրև բարբառային ձևեր չէին կիրառվում մեր առաջին մատենագիրների գործերում։ Բայց հետագայում, երբ գրաբարյան որոշ բառեր ու նրանց հոլովական վերջավորությունները անհասկանալի են դառնում հայ ժողովրդին, գրականության մեջ ներթափանցում են այնպիսի բառեր ու հոլովական վերջավորություններ, որոնք մի ժամանակ համաժողովրդական նշանակություն չունեին, այսինքն՝ լեզվի գործուն օրենքների հետ կապված չէին։

Բայերի մեջ կատարված փոփոխությունները արտահայտվել են մի շարք ձևերով

ա) Մի շարք բայերի զուգահեռ ձևերից սկսել են գործածվել նրանց ածանցագործ ձևերը, ինչպես՝ յատել (փոխ յատանել), ներկել (փոխ ներկանել), տարածել (փոխ տարածանել) և այլն։

բ) Որոշ բայերի հրամայականը փոխվել է օրինակ՝ հասի՛ր (փոխ հա՛ս), դարծի՛ր, դարծա՛յք (փոխ դարծարո՛ւք), խափանե՛ (փոխ խափանեա՛), գրե՛ (փոխ գրեա՛), տարե՛ք (փոխ տարայք) և այլն։ Կամ մի քանի զուգահեռ ձևերից մեկն է գործածվում, ինչպես՝ իմանալ բայի միայն իմացիո ձևը և այլն։

գ) Հանդես են եկել նոր բայեր, որոնք գործածվում են հին նույնիմաստ բայերի փոխարեն ինչպես՝ չարծնուս (փոխ ոչ փրծանիս), մօտեցան (փոխ մերձեցան), փլան (փոխ կործանեցան), կտրել (փոխ հատանել), կարդալ (փոխ ընթեռնուլ), խեղդել (փոխ հեղձնուլ), ձգել (փոխ արկանել) և այլն։

դ) Որոշ բայերի անցյալ՝ կատարյալի հին ձևերի փոխարեն սկսել են գործածվել նոր ձևեր, ինչպես՝ լսեցիր (փոխ լուար), հասաւ (փոխ եհաս), ուռաւ (փոխ ուռեաւ) և այլն:

ե) Սահմանական եղանակի ներկա ժամանակը որոշ դեպքերում սկսում է կազմվել օժանդակ բայով, **ի** նախդրով և անորոշ դերբայով, ինչպես՝ յոյնք են **ի** գալ **ի** վերայ մեր (հույները գալիս են մեզ վրա), դուք գտաճարն այլ յայրել էք **ի** տալ (դուք տաճնարը այրել եք՝ տալիս և այլն):

Սահմանական եղանակի այս նոր ձևը կապված է եղել հայերենի զարգացման նոր տենդենցների հետ, որոնք իրենց արտահայտությունն ունեն ինչպես միջին հայերենում, նույնպես և ժամանակակից հայերենում: Բայական այդ նոր ձևը, սակայն, ցույց էր տալիս նաև այն, որ գրաբարի սահմանական ներկան արդեն կորցնում էր ներկայի իր իմաստը և նրան փոխարինելու էին գալիս բայական այլ ձևեր:

զ) Այդ դարերում առաջին անգամ որոշակի գործածվում են **ած** վերջածանց ունեցող բառերը իբրև դերբայներ, ինչպես՝ **ի** նոյն վանսն էր գրած (նույն վանքում էր գրված) Այս վերջածանցով կազմված բառեր կային նաև գրաբարում ինչպես՝ հատուած, յօրինուած, դարձուած, սպառուած և այլն **Ած** ածանցով կազմված և գրաբարում գործածված բառերը իր վերոհիշյալ գրքում բերել է Ա Աբրահամյանը¹:

Մեր թվականության VI–VII դարերից սկսում են գտնվել այդ ածանցով կազմված բայեր, որոնք մեծ չափով տարածվում են միջին դարերում: Հավանաբար, այդպիսի բայածներ եղել են ժամանակի որոշ բարբառներում, որոնցից էլ անցել են միջին հայերենին և ժամանակակից հայերենին:

Ե) Այդ դարերում գրաբարի ստորադասական ապառնին աստիճանաբար փոխարինվում է սահմանական ներկայով, օրինակ՝ փոխանակ ասելու «թող ինքն երթիցե և առցե», ասվում էր «թող ինքն երթայ և առնու» և այդ ձևով սովորական է դառնում սահմանական ներկայով ստորադասականի իմաստ արտահայտելը ինչպես՝ կաց տեսանեմք, եկ որ պատերազմենք, պահեա՛ գդա որ իջանեմք և գնդի խաղամք, փախիք որ մեք կոտորեմք և այլն:

¹ Տե՛ս Ա. Աբրահամյան ՝ Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, էջ 212 – 220

Վերոհիշյալ դարերից սկսած զգալի չափով փոփոխվում է նաև գրաբարի շարադասությունը Հաճախակի են դառնում անհամաձայնեցումն ու նախադաս որոշիչների գործածությունը։ Մի շարք հեղինակներ գրում են համարյա թե աշխարհաբարին հատուկ շարադասության նման, ինչպես՝ բազում պատերազմունս սկսաւ լինել երկու գիւղս գերկու աւանսն ի գալ այս իշխանիս յիւր գաւառնէն Անգեղ տանն իշխան ի բոլորն էլ. յայտնի եղև իրքն ընդունելի է այդ աշխատանքդ և այլն. Ինչպես երևում է բերված օրինակներից, մի շարք դեպքերում չեն համաձայնեցված ենթականերն ու ստորոգյալները, ավելի ճիշտ գրաբարում հոգնակի համարված որոշ բառեր (աշխատանք, իրք, պատերազմունս) գիտակցվել են եզակի և այդ պատճառով էլ չեն համաձայնեցվել։ Իբրև ընդհանուր կանոն, այդ շրջանից սկսած՝ երկու, երեք թվականները չեն համաձայնեցվել մի շարք հեղինակների մոտ։

Հին հայերենում նախդիրները շատ մեծ-դսյո ցն կատարել նրանք գործածվելով տարբեր հոլովների հետ՝ արտահայտել են առարկաների մեջ ստեղծված բազմապիսի հարաբերություններ։ Սակայն այդ նախդիրները հենց հիմնգործող դարից սկսած աստիճանաբար անհետանում էին, կամ կորցնում իրենց իմաստները և ձուլվում բառերին իբրև նախածանցներ։ Այդ պրոցեսը զուգակցվում էր տարբեր նախդիրների միացման կամ նրանց իմաստների փոխանցման հետ։ Այսպես, օրինակ՝ VI-VII դարերից ի վեր **առ** և **ընդ** նախդիրները հաճախ փոխարինվել են **ի** նախդրով։ օրինակ՝ առաքեաց ի նոսա (փոխ առ նոսա) ծառայս յորժամ զոք ի ձեզ չուղարկեմ (փոխ առ ձեզ), ի դեմ (փոխ ընդդեմ), դեմ (փոխ. ընդդեմ) և այլն.

Հին հայերենի մեջ կատարված տեղաշարժերը ընդգրկում էին լեզվական բոլոր իրողությունները։ Բառապաշարի, քերականության, հնչյունական կազմի բոլոր կողմերը խոնարհման ու հոլովական համակարգերի մեջ մտած նորություններին զուգընթաց փոխվում էին նաև շաղկապների, մակբայների և ընդհանրապես խոսքի մասերի սկզբնական իմաստներն ու կիրառությունները, հանդես էին գալիս նոր ձևեր, որոնք հաճախ հավասարապես գործում էին հին ձևերի հետ, բայց աստիճանաբար ամրանում էին և բռնում հին ձևերի տեղը այսպես, օրինակ՝ հին հայերենում **որ** շաղկապի առումով գործածվում էր **զի** շաղկապը, մինչդեռ յոթերորդ դարից սկսած տարածվում է **որ** շաղկապը, իսկ **զի**-ն սկսում է մոռացվել։

Միջին դարերում դեռևս **գի** շաղկապը որոշ գրողների մոտ գործածվում էր, թեև գլխավորապես իբրև գրաբարից մնացած և գրականության մեջ արդեն իր կայուն իմաստներն ունեցող և ոչ թե իբրև ժողովրդին հասկանալի շաղկապ: Հետագայում այդ շաղկապը անգործածելի դարձավ մանավանդ արևելյան հայերենում, որը սկսեց մշակվել այնպիսի բարբառի հիման վրա, որը չուներ **գի** շաղկապը:

Գրաբարում իբրև մակբայ էր գործածվում **այլ** բառը. ինչպես՝ եթե և այլ տեսանեմ զանօրինությունդ զայդ (եթե մի անգամ էլ տեսնեմ այդ անօրինությունը). ոչ ևս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ (մի անգամ էլ շատ չեմ խոսի ձեզ հետ), փառաւոր արարի, և այլ փառաւոր արարից (փառավոր դարձրի և նորից փառավոր կդարձնեմ). ես այլ ի քաղաք անդր ոչ մտից (ես նորից այն քաղաքը չեմ մտնելու) և այլն:

Յոթերորդ դարից սկսած այդ բառը գործածվել է նաև շաղկապի առումով. ինչպես՝ ոչ գրով, այլ՝ հոգով. մատեաւ և յարդարսն երբեմն փորձ մահու, այլ ոչ ընդ երկար կալաւ, թեև գտցին յիս սսնօրէնութիւնք, այլ ոչ հալիոյութիւնք. կենդանի եմք մարմնով, այլ տկար երկոցումբք. նոքա այլ հասին, եւ զայն այլ առին. եւ կինն այլ անտի է և այլն: Այս շաղկապը հետագայում հնչյունափոխվելով դարձել է արևմտահայերենում **ալ**, իսկ ժամանակակից հայերենում **էլ**: Յոթերորդ դարից սկսած փոխվել են նաև **թե**, **եթե**, **նա** և այլ շաղկապների իմաստները և գործածությունները:

Հիշյալ դարերից պարզանում են գրաբարի երկբարբառներից շատերը, և բառերը ենթարկվում են գրաբարի հնչյունական օրինաչափություններին հակասող փոփոխությունների. ինչպես՝ սեւ (փոխ. սեաւ), տեղտարափ (փոխ. տեղատարափ), ձիւնկերտ (փոխ. ձիւնակերտ), կողմ (փոխ. կողմն), անկնիլ (փոխ. անկանել) և այլն:

Հայոց գրական լեզվի մեջ մտած այս փոփոխությունները, իհարկե, միանգամից չառաջացան. նրանց արմատները թաքնված էին հենց գրաբարի մեջ. «Ձևաշատ գրաբարը, – գրում է Այտընյանը, – որուն ներքին բան մըն է պեսպիսութիւն, այնչափ հոլովներովը, վերջավորութիւններովը, նախդիրներովը, բազմաթիւ լծորդութիւններովը, արուեստաւոր համաձայնութեամբը, յաճախ շրջումներովն ու ոճերովը՝ պէտք էր որ ոյուրաւ աւրուէր, փափուկ գործւոյ մը նման՝ որ անվարժ ձեռք մ' ինկած ըլլայ»¹: Այտընյանը կարծել է, որ գրաբա-

¹ Ա. Այտընեան, Զննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, էջ 134:

րը ավրվել կամ մահացել է, որովհետև ժամանակի մտավորականությունը, ինչպես հարկն է գրաբարին չտիրապետելով հանդերձ, կամեցել է գրել բարձր ոճով. և «Գրաբարի թերակատար ուսումը զարդարուն կամ բարձր գրելու տենչանքին հետ միացած՝ նորանշան բռնագթու լեզու մը յառաջ բերաւ»¹:

Ա. Այտընյանը արձանագրում է գրաբարի VII-X դարերի վիճակը, պնդում, որ գրաբարը այդ դարերում իրոք գրաբար էր, «այսինքն գրոց և գրագիտաց սեպհական մնացած լեզու»²: Արձանագրելով գրաբարի գրոց լեզու դառնալու փաստը՝ Ա. Այտընյանը, սակայն, չի կարողանում նշել գրաբարի մահացման կամ ժողովրդական մասսաներին անհասկանալի դառնալու բոլոր պատճառները: Նա գրաբարի անգործածական և անհասկանալի դառնալու պրոցեսը կտրում է հայ ժողովրդի կյանքում կատարված փոփոխություններից: Մինչդեռ հայ ժողովրդի տնտեսական և քաղաքական կյանքում կատարված փոփոխությունների հետևանքով զգալի չափով դանդաղում է հայ ժողովրդի մշակույթի ու նրա արտահայտման ձևի՝ հայոց գրական լեզվի զարգացման ընթացքը VI-VII դարերում:

Հայաստանը դեռևս չազատված Պարսկաստանի և Բյուզանդիայի անլուր ճնշումներից, VII դարի առաջին կեսի 40-ական թվականներին ենթարկվում է Միջագետքը և Ասորիքը գրաված և ուժեղ պետություն ստեղծած արաբական խալիֆայի հրոսակախմբերի արշավանքներին: Արաբները առաջին անգամ 640 թվականին մտնում են Հայաստան, գրավում, թալանում ու ավերում են Դվին քաղաքը՝ իրենց հետ տանելով ավելի քան 35 հազար գերի: Նրանք իրենց արշավանքները կրկնում են 642-643 և 650 թվականներին: Սակայն այդ արշավանքներով չնվաճվեց Հայաստանը, և միայն 698-700 թվականներին արաբները վերջնականապես ընկճեցին հայերի դիմադրությունը և նվաճեցին ամբողջ երկիրը:

Սակայն հայ ժողովուրդը հեշտությամբ չէր ենթարկվում իրեն ստրկացնել ցանկացողների կամքին. նա մահու և կենաց պայքար էր մղում պարսիկների դեմ, երբ նրանք ուզում էին իրենց հարկային քաղաքականությամբ և ուժով ստիպել հայերին՝ մոռանալու իրենց սովորություններն ու կրոնը և ձուլվելու պարսիկների հետ: Նա չընկճվեց արաբների պատճառած անլուր տանջանքների ու հարստահարու-

¹ Նույն տեղը, էջ 134:

² Նույն տեղը, էջ 133:

թյունների առաջ և ստիպեց նրանց հաշվի նստելու ազատաբաղձ ժողովրդի հետ: Նա իր մերկացրած սուրը բարձրացնում էր նաև բյուզանդական իշխողների գլխին, երբ նրանք ցանկանում էին գրկել ժողովրդին իր ինքնուրույնությունից և հեռացնել հայրենի երկրից: Իշխողների լծից ազատվելու համար բռնկված ազատագրական շարժումները VII-X դարերում դրսևորվել են մի շարք եղանակներով՝ երբեմն զինված ապստամբությամբ, երբեմն կրոնական քողով ծածկված ազատագրական շարժումներով, ինչպես պավլիկյան շարժումը VII-X դարերում և թոնդրակեցիների շարժումը IX-XI դարերում, երբեմն էլ հայոց լեզվի ու մշակույթի զարգացման համար մղված պայքարով և նոր երկերի ու արվեստի նոր հուշարձանների ստեղծումով: Նայած թե հայ ժողովուրդը պատմական ինչպիսի պայմաններում է ապրել, ըստ այնմ էլ որոշվել է նրա պայքարի ուղղությունը:

Սակայն բոլոր դեպքերում էլ հայ ժողովրդի մշակութային կյանքում վճռական դեր է կատարել հայոց ընդհանուր լեզուն, որը հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական կյանքի հետ՝ զարգացման իր ներքին օրենքներով զարգացել ու փոփոխվել է, միշտ հանդես գալով իբրև հայ ժողովրդի տարբեր հատվածները միմյանց հետ կապող ու նրանց մեջ ստեղծված հարաբերությունները կարգավորող հզորագույն միջոցներից մեկը: Այդ ընդհանուր լեզվի դերը պատմական որոշ շրջանում՝ V-X դարերում կատարել է գրաբարը: Սակայն, ինչպես տեսանք, դեռևս VI-VII դարերում նա ենթարկվում է զգալի փոփոխությունների, իսկ X դարից սկսած կամաց-կամաց դադարում է ընդհանուր հաղորդակցական միջոց լինելուց և մահվան է դատապարտվում: Այս նշանակում է, որ գրաբարի դեգրադացիայի պատճառները ոչ թե պայմանավորված են նրա բնական զարգացմամբ, այլ այն տնտեսական, քաղաքական պայմաններով, որոնց մեջ ապրել է հայ ժողովուրդը VI-X դարերում: Այլ կերպ էլ չէր կարող լինել. հայկական պետականության վերացումը, Հայաստանում ֆեոդալական նոր միավորների կազմակերպումը, հայ ժողովրդի տարբեր հատվածների միջև եղած տնտեսական ու քաղաքական կապի թուլացումը, ինչպես նաև Հայաստանի վրա օտար պետությունների անընդհատ հարձակումները ո՛չ միայն դանդաղեցնում են հայկական մշակույթի զարգացումը, այլև մեծ չափով ներգործում են գրական հայերենի ներքին օրենքների վրա և փոխում հայերենի առաջընթացի

տենդենցները: Գրաբարը գրկվելով պետական լեզվի իր ֆունկցիայից, դադարելով իբրև խոսակցական լեզու լինելուց և օգտագործվելով իբրև եկեղեցական արարողությունների լեզու՝ կորցնում է իր կենսունակությունը և վերածվում արվեստական, ինչպես նշել են հայ բանասերները, սովորովի լեզվի, այսինքն՝ դեգրադացիայի է ենթարկվում և մահվան դատապարտվում:

Այսպիսով, հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական կյանքում կատարված փոփոխությունների հետևանքով փոխվում են հայոց գրավոր լեզվի՝ գրաբարի զարգացման պայմանները, տարածվում և ընդհանրանում են այնպիսի լեզվական իրողություններ, որոնք հինգերորդ դարում կա՛մ չէին ուրվագծվում, կա՛մ էլ զարգանալու անհրաժեշտ նախադրյալներ չունեին: Լեզվական այդ նոր երևույթները ընդհանրապես խորթ չէին հայերենին, բայց չէին նույնանում գրաբարի կենսունակ իրողությունների հետ և ներթափանցելով գրաբարի քերականության ու բառապաշարի մեջ՝ խախտում էին նրա համակարգը: Սակայն գրաբարը միանգամից տեղի չէր տալիս, պահպանվում էին նրա տրադիցիաները հայ գրականության որոշ, հատկապես կրոնական բովանդակություն ունեցող և պատմական ժանրի գործերի մեջ: Գրաբարը շարունակում էր ներգործել ժողովրդական խոսակցական լեզվի վրա և արտահայտվել նույնիսկ այնպիսի երկերում, որոնք գրվում էին «մեկին բանի»:

Գրաբարի պետական-պաշտոնական ֆունկցիայի թուլացման հետ սկսում էր ձևավորվել գրական նոր լեզու, որը, մի կողմից, կապված էր գրաբարի, մյուս կողմից՝ բարբառների հետ: Այդ նոր գրական լեզուն իր որոշ օրինաչափություններով ուրվագծվում էր VI-VII դարերում, բայց հանդես էր գալիս գրաբարի հետ և արտահայտվում գրաբարի միջոցով, իբրև գրաբարի օրենքներից կատարվող շեղում:

Այդ լեզվական նոր տարրերը անընդհատ ուժեղանալով և տարածվելով՝ մրցում էին գրաբարի իրողությունների հետ, որոնք X դարից հետո գլխավորապես պահպանվում էին պատմական ժանրի և կրոնական բովանդակություն ունեցող գրականության մեջ:

3) ԳՐԱԲԱՐԸ X-XVIII դԱՐԵՐՈՄ

Գրաբարը X դարում արդեն սովորովի լեզու էր, նա դասավանդվում էր դպրոցներում ոչ իբրև ժողովրդին հասկանալի լեզու, այլ իբրև հայ հին մատենագիրների լեզու, որը ընդօրինակվում էր ժամանակի պատմագիրների կողմից: Ժամանակի խոսակցական ընդհանուր լեզվի և գրաբարի միջև եղած տարբերությունները թեև նման չեն եղել օտար լեզուների միջև եղած տարբերություններին, բայց այնքան խոր են եղել, որ X դարում և նրանից հետո խիստ կերպով տարբերել են խոսակցական լեզուն ու գրաբարը: «Կենդանի խոսակցական լեզուն,– գրում է Մ. Աբեղյանը այդ շրջանի հայերենի մասին,– «գեղջուկ բանը», արդեն այնքան զորացած է եղել, որ արժանացել է նույնիսկ գրական դառնալու. Շապուհ պատմագիրը «գեղջուկ բանի» է գրել իր ժամանակի մանրամասն պատմությունը¹: «Գեղջուկ բանի» գրված գործերը իհարկե կրել են գրաբարի ազդեցությունը, որովհետև գրաբարը, իբրև հայ մատենագրության, իբրև Աստվածաշնչի լեզու, ներգործել է հետագա գրողների վրա ոչ միայն լեզվական իրողություններով, այլև ժամանակի մտայնությունը արտահայտող ոճերով ու դարձվածքներով, հատկապես քրիստոնեական վարդապետության գանազան հասկացություններն արտահայտող բառակապակցություններով ու բառերով: Հայ գրականության և հայոց լեզվի ներքին մասնագետ Մ. Աբեղյանը խոսելով այդ շրջանի այսպես կոչված «գեղջուկ բանի» և «քերթողական արուեստի» տարբերությունների մասին՝ ճիշտ կերպով նշում է, որ այդ «քերթողական արուեստը» սովորում էին դպրոցներում «հին մատենագիրների վրա հրահանգվելով, որով և մեր հին մատենագրությունը դառնում էր նմանողության և նույնիսկ ընդօրինակության առարկա: Նմանվում էին ոչ միայն նախորդների լեզվին, այլև նրանց ոճին, գործածում էին նրանց դարձվածքները, խոսքերը, մտածողության ձևերը, պատկերները և այլն, երբեմն նույնիսկ չափազանց: Հովհաննեսն, օրինակ, Աշոտ Ա-ին նկարագրում է ինչպես Մ. Խորենացին Մեծն Տիգրանին և Սմբատ Բագրատունուն, իսկ Եղիշեից առնում է կանանց նկարագիրն իր ժամանակի կանանց համար»²: Հովհաննես Դրասխանակերտցու ժամանակ (IX-X դարերը) արդեն

¹ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 1, էջ 438-439:

² Նույն տեղը, էջ 439:

«գեղջուկ բանը» այնքան էր ուժեղացել, որ ո՛չ միայն գրավոր դառնալու, այլև գրաբարի գործածության սահմանները խիստ կերպով սահմանափակելու տենդենցներ էր ցույց տալիս: Այդ է պատճառը, որ ժամանակի գրողներից շատերը, հատկապես հայ հոգևորականության և իշխող դասի շահերի արտահայտիչները արհամարհական վերաբերմունք են ցուցաբերել Ն. Շնորհալու խոսքերով ասած «մեկին բանի» նկատմամբ և ձգտել են «ոչ ըստ գեղջկաց անարուեստից երկրորդեալ գայն ինչ գոր նախքան զմեզ քաջք և բանաստեղծք արգոյակապք և զարմանալիք զարժանի բան պատմութեան անտուստ ի վերուստ արծանագրեցին զյայտապատում իրս թագաւորաց և զպայազատութիւն իշխանաց և զհանգամանս պատերազմաց և զշինանիստ շինուածս քաղաքաց և գաւառայց, գետոյց և գերդաստանաց, և զգործս արեաց և անարեաց կամ զխռովութեանց և զխաղաղութեանց, զի մի՛ տղայաբար ինչ յանդգնեալ զմիանգամ գրեալսն երկրորդեցից և զքերթողացն արուեստ տապալեցից. և գայն վերծանողացն ծիծաղելիս յարկացուցից»¹: Հովհաննես կաթողիկոսը, ինչպես երևում է մեջբերումից, չի ուզում գրել այնպիսի լեզվով, որը պարզ է և կարող է ծիծաղելի ու տղայական թվալ ուրիշներին. նա դիմում է խրթին, արվեստավոր ոճին, որը VII դարից սկսած կիրառում էին հայ մատենագիրներից ոմանք, դրանով իսկ հակադրվելով գրականության մեջ համառորեն ներթափանցող ժողովրդական խոսակցական լեզվին: Այդպիսի մթին, «ծածուկ ճառով» երբեմն գրել է նաև XI դարի հայտնի հայ գործիչ և գրող Գրիգոր Մագիստրոսը:

Այսպիսով, X դարից սկսած գրաբարը դառնում է դպրոցական լեզու, քերթողական արվեստ, որը սովորում էին դպրոցներում և որով ստեղծագործում էին ոչ բոլոր հայ գրողները: Այդուհանդերձ գրաբարը մնում էր իբրև գրականության որոշ ժանրերի լեզու, որը որոշ գրողների մոտ այնքան էր խառնվում հայերենին անհարազատ լեզվական իրողությունների հետ, որ դառնում էր միանգամայն արվեստական և դժվար հաղթահարելի, նույնիսկ ժամանակի ինտելիգենցիայի համար:

Այդ լեզվի կողքին իբրև նրա ուժեղ մրցակիցը ձևավորվում էր նոր լեզու, որը կենսունակ էր, ուներ զարգացման լայն հեռանկարներ և հայ գրական ու պաշտոնական լեզու դառնալու բոլոր նախադրյալ-

¹ Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց, 1912, էջ 4-5:

ները: Այդ նոր լեզուն, թեև շատ գծերով կապված էր գրաբարի հետ, իր դեմն էր հանում հայ հոգևորականությանը, որը ամեն կերպ ձգտում էր ամրացնել գրաբարի դիրքերը և անխախտ պահել «ս. գրքի լեզուն»:

Սակայն հայ ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունները ո՛չ թե արգելակում, այլ նպաստում էին այդ նոր լեզվի զարգացմանը: Հայաստանը IX դարի վերջերից ազատագրվում է արաբական տիրապետությունից, վերականգնվում է հայկական թագավորությունը, երկիրը թևակոխում է տնտեսական և քաղաքական կյանքի զարգացման նոր շրջան: Կարճ ժամանակում վերաշինվում են քաղաքները, որոնք դառնում են արհեստագործության և առևտրի կենտրոններ, այդ շրջանում առանձնապես ուժեղ թափով զարգանում են արհեստագործության մի շարք ճյուղեր՝ մետաղագործությունը, կավագործությունը, գործվածքները, հատկապես գորգագործությունը և այլն: Հայաստանը իր արտադրանքներով սկսում է մեծ կշիռ ձեռք բերել միջազգային առևտրի մեջ: Հայաստանի մի շարք քաղաքներ, ինչպիսիք են՝ Դվինը, Վանը, Նախճվանը, Հերը, Բաղեշը, Անին, Արծնը, Կարսը, Մուշը, Լոռին, Կապանը և այլն ներգրավվում են միջազգային առևտրի մեջ: Այդ քաղաքների մեջ հատկապես մեծ դեր էին կատարում Անին և Դվինը, որոնք առևտրի և արհեստագործության խոշոր կենտրոններ էին և առևտրական ու մշակութային կապերով կապված էին Արաբիայի, Բյուզանդիայի, Վրաստանի, Ադվանքի և այլ երկրների հետ:

Հայ ժողովրդի կյանքում կատարված այդ փոփոխությունները՝ հայկական թագավորության վերականգնումը, ֆեոդալական հարաբերությունների զարգացումն ու ամրացումը, մեծ չափով ազդում են հայկական մշակույթի ու հայոց գրավոր լեզվի զարգացման ընթացքի վրա: Հանդես են գալիս գրողներ, որոնք սկսում են ստեղծագործել հասկանալի լեզվով, այսպես կոչված «մեկին քանիս»․ պետական որոշ շրջաններ սկսում են հովանավորել գրաբարից տարբերվող և հասկանալի լեզվով ստեղծագործող գրողներին: Այդ բոլորի հետևանքով հայ ժողովրդի համընդհանուր գրական լեզուն՝ ստեղծված նոր հարաբերությունների կարգավորման հիմնական միջոցը, դառնում է աշխարհիկ բառը՝ միջին հայերենը, որը թեև տարբեր գրողների մոտ ուներ իր ոճական առանձնահատկությունները, բայց հիմնականում ընդհանուր էր և հանդես էր գալիս իբրև իր զարգացման

կայուն օրենքներ ունեցող լեզու:

Գրաբարը, ինչպես ասվեց, X դարից սկսած վերջնականապես դադարում է ընդհանուր գրական պաշտոնական լեզու լինելուց:

Սակայն, այդուհանդերձ, նա չի դառնում հոգևորականության կամ իշխող դասի ժարգոնը: Նա, իբրև մշակված ու զարգացման երկար շրջան անցած լեզու, շարունակում է սնել նոր կազմավորվող միջին հայերենը և իր իրողություններով հարստացնել ու կատարելագործել ինչպես միջին հայերենը, նույնպես և ավելի ուշ շրջանում՝ XIX դարում կազմավորված ժամանակակից հայերենը: Գրաբարը շարունակում է օգտագործվել նաև պատմական ժանրի X-XVIII դարերի գործերում, որոնց հեղինակները ամեն կերպ ձգտել են պահպանել հայ պատմագրության լավագույն տրադիցիաները, իրենց պատմական երկերում օգտագործել V-X դարերի հայ պատմագիրների աշխատությունները և հաճախ իրենց լեզվով ձգտել շատ չիեռանալ այն երկերի լեզվից, որոնք սիրվել են հայ ժողովրդի կողմից դարեր շարունակ: Այդ բոլորով հանդերձ գրաբարը X դարից հետո չի օգտագործվում իբրև գրական միակ լեզու. նա մնում է անկենդան նույնիսկ այն ժամանակ, երբ հայ հոգևորականությունը իր ամբողջ ուժերը լարած՝ աշխատել է վերակենդանացնել այդ լեզուն:

IV. ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԸ

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Միջին հայերեն ասելով մենք հասկանում ենք X-XVII դարերի հայ գրականությամբ ավանդված լեզվական այն բազմազան տարրերի ամբողջությունը, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին: Այդ համընդհանուրը տարբեր հեղինակների և տարբեր ժանրերի գործերի մեջ ունեցել է իր ինքնատիպ արտահայտությունները, որոնք գիրք գրող հեղինակի ըմբռնումների, գրքի բովանդակության, հեղինակի կրթական մակարդակի և գրաբարին տիրապետելու աստիճանի համապատասխան ավելի նվազ կամ ուժեղ էին ընդգծվում: Այդ պատճառով էլ միջին հայերենը աչքի է ընկնում միևնույն իմաստը լեզվական տարբեր իրողություններով արտահայտելու տենդենցով, որը կարելի է բացատրել հայ ժողովրդի պատմական կյանքում կատարված տեղաշարժերը նկատի ունենալով: Ամեն մի լեզվի զարգացման յուրաքանչյուր շրջան՝ իրեն հատուկ օրինաչափություններով հանդերձ՝ կապվում է այդ լեզուն կրող ժողովրդի պատմության հետ: Ահա թե ինչու մենք միջին հայերենի կազմավորման հարցը չենք կարող լուծել առանց նկատի առնելու այդ շրջանում հայ հասարակության կյանքում կատարված փոփոխությունները:

Միջին հայերենի կազմավորման պրոցեսը զուգահեյալում է արաբական տիրապետության վերացմանը, հայ պետականության վերականգնմանը և հայ ժողովրդի տնտեսական ու մշակութային կյանքի աշխուժացմանը:

Չայոց աշխարհը ազատվելով արաբների անագորույն եղեռնագործություններից և խաղաղ կյանքի մի երկարատև շրջան թևակոխելով՝ սկսում է վերականգնել իր տնտեսությունը, զարգացնել իր դարավոր մշակույթը և մշակել իր լեզուն ժամանակի հրատապ պահանջները նկատի ունենալով: Ժամանակի հայ պատմիչները շատ մեծ ոգևորությամբ են խոսում Հայաստանում սկսված նոր շինարարության, հայ ժողովրդի կյանքի բարգավաճության և մշակույթի զարգացման մասին. «... Աշխարհիս Հայաստանեայց,- գրում

Է Յովհաննես Դրասխանակերտցին, - յաւուրսն յայնոսիկ այց արա-
րեալ Տեառն և պատսպարեալ և յաջողեալ ի բոլոր բարութիւնս՝ բնա-
կեցան իւրաքանչիւր ոք ի ժառանգութիւնս իւրեանց. և սեպիա-
կանեալ գերկիր՝ տնկեցին այգիս և արմատացուցին բուրաստանս
ծիրենեաց և պարտիգաց. հերկեցին հերկս արտաքոյ փշոց և կթեցին
պտուղս հարիրաւորս. գեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի
լրութեան հնձոց. լցան գուրք գինւոյ ի կուրս այգեստանեայց և
լերիք ցնծութիւն զգեցան, զի բազմացան ի նմա արօտականք
անդեայք արջառոց և հօտք ոչխարաց»¹:

Միջին դարերում Հայաստանը դառնում է համաշխարհային
առևտրի տարանցիկ ճանապարհներից մեկը: Այդ հանգամանքը
զգալի չափով օժանդակում է քաղաքային կյանքի զարգացմանը:
Հայաստանի մի շարք քաղաքներ, հատկապես Անին, Արծնը, Դվինը,
Կարսը իրենց ճոխությամբ ու բազմաբնակչությամբ աչքի են ընկնում
Բագրատունիների տիրապետության շրջանում: Այդ քաղաքները
հարստանում են արագ տեմպերով և զգալի դեր են կատարում
երկրի մշակութային ու տնտեսական կյանքում: Քաղաքային կյանքի,
առևտրական հարաբերությունների ծաղկումը լայն հնարավորու-
թյուններ են ընձեռում դրամական տնտեսության զարգացման և
հարստությունը առանձին մարդկանց ձեռքը կենտրոնանալու, հե-
տևաբար դասակարգային հակադրությունները իշխող և ճնշվող դա-
սակարգերի միջև ուժեղանալու համար:

Աշխատավոր դասին խիստ շահագործելով՝ երկրի իշխաններն ու
ֆեոդալները շինում են եկեղեցիներ, իջևաններ, պալատներ:

Հայաստանի IX - XI դարերում կառուցված հույակապ հուշար-
ձաններից շատերը տակավին կանգուն են. Ծաղկածորի, Սանահնի,
Տաթևի և շատ այլ վայրերի վանքերն ու եկեղեցիները այժմ էլ իրենց
ճարտարապետական կատարելությամբ, նուրբ արվեստով ու դի-
մացկունությամբ հիացմունք ու զարմանք են պատճառում: Սակայն
քանի՜-քանի՜ հույակապ շենքեր, պալատներ, եկեղեցիներ ու վանքեր
են հիմն ի վեր խորտակվել... Անիում կատարված պեղումները հայտ-
նաբերել են ուշադրության արժանի շատ եկեղեցիներ ու շենքեր,
որոնք վկայում են այն հսկայական շինարարությունը, որը տեղի է
ունեցել այդ շրջանում: Ծիշտ է նկատված, որ Անին, ամբողջությամբ

¹ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, 1912, էջ
198-199:

վերցրած, եղել է ճարտարապետական գեղեցիկ կառուցումների չնախորդված մի թանգարան, որի մեջ ուշագրավ է ամեն ինչ, նույնիսկ պարիսպները՝ իրենց բազմաթիվ աշտարակներով, կամարակապ կամուրջները՝ իրենց ամրությամբ ու նուրբ արվեստով, արծանագրությունները ժամանակի աշխարհիկ գրական լեզվի ուշադրության արժանի իրողություններով և այլն: «Բագրատունյաց Հայաստանի տնտեսական զարգացումը X-XI դարերում մեզ հիշեցնում է Արևմտյան Եվրոպայի զարգացումը ռեֆորմացիայից առաջ XIV-XV դարերում, - գրել է ակադ. Յ. Մանանդյանը: - Արդյունագործական արտադրության և ապրանքային ու դրամական տնտեսության զարգացմանը զուգընթաց, ինչպես հայտնի է, Եվրոպայում սկսել էին հեղաբեկվել ֆեոդալական հին կարգերը և այդ հեղաբեկումը կատարվում էր դասակարգային սուր պայքարի պայմաններում: Նույնը նկատելի է ըստ իս գերմանական ռեֆորմացիայից մոտ չորս դար առաջ՝ Բագրատունյաց Հայաստանում»¹: Թեև այդ ժամանակ Հայաստանում ֆեոդալական կարգերը չէին քայքայվել, այլ իրենց զարգացման պրոցեսն էին ապրում, բայց դասակարգային հակասությունները իրոք որ սուր կերպով էին դրսևորվում: Դասակարգային սուր հակամարտությունները իրենց կնիքն էին դնում հայ հասարակական կյանքի բոլոր կողմերի վրա: Հայ աշխատավորությունը չկարողանալով դիմանալ կեղեքումներին ու ճնշումներին՝ զանազան ձևերով պայքարում էր իր իրավունքները պաշտպանելու և դրությունը բարվոքելու համար: Հայ ֆեոդալների և եկեղեցու կամայականությունների դեմ ծավալված շարժումը արտահայտվում է աղանդավորական շարժման բնույթով: VIII դարից Հայաստանում բռնկվում է պավլիկյանների շարժումը, որը առաջին հերթին ուղղված էր հոգևորականության և կրոնական իշխող մտայնության դեմ: Այդ պատճառով էլ այդ ուսմունքը քարոզողները խիստ հետապնդվում, հրի ու սրի էին մատնվում, բնաջնջվում էին ամբողջ ընտանիքով: Այդ սոցիալական շարժումը զբաղեցնում էր ո՛չ միայն հայ իշխող դասերին, այլև Բյուզանդիային, այդ պատճառով էլ պավլիկյանների շարժումը ճնշելու համար վճռական դեր է կատարում Բյուզանդիան:

Պավլիկյանների շարժումը Հայաստանում ճնշվելուց հետո, IX դարի վերջերին ծավալվում է մի նոր, ավելի մասսայական ու տևա-

¹ Յ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները X-XI դարերում, 1940, էջ 40:

կան շարժում, որը թոնդրակյան շարժում անունը ստացավ՝ Թոնդրակ ավանից սկսվելու պատճառով: Թոնդրակեցիները ժխտում էին եկեղեցին, մերժում երրորդության գոյությունը, անմահությունն ու հանդերձյալ կյանքը և կրոնական ծիսակատարությունները, չէին ընդունում Զրիստոսին՝ իբրև աստծու, և Աստվածաշունչը՝ իբրև սուրբ գիրք: պախարակում ու արհամարհում էին եկեղեցու սահմանած ամուսնական կարգը: Հայ հոգևորականությունն ու իշխող խավերը խիստ միջոցներ են գործադրում թոնդրակեցիների դեմ, բայց չեն կարողանում ճնշել այդ հզոր և օր ավուր ավելի լայն չափեր ընդունող շարժումը, որը սկսում է անհանգստացնել նաև Բյուզանդական կայսրությանը: XI դարի 50-ական թվականներին Գրիգոր Մագիստրոսը բյուզանդական կայսերական գորքերի գլուխ անցած՝ մտնում է Հայաստան և հայ իշխանների ու հոգևորականության օժանդակությամբ դաժանորեն ճնշում այդ շարժումը և նրա մասնակիցներին աքսորում Բալկաններ, որտեղ նրանք քարոզում են իրենց վարդապետությունը, որը բոգոմիլյանների միջոցով տարածվում է նաև Կիևյան Ռուսիայում և Արևելյան Եվրոպայում: Հայաստանում ճնշվում է երկու դար տևող միջնադարյան խոշորագույն շարժումներից մեկը՝ թոնդրակյան շարժումը, որը իր խոր ազդեցությունն էր թողել նաև միջնադարյան հայ գրականության վրա: Թոնդրակեցիների գաղափարները, նույնիսկ այդ շարժումը ճնշվելուց հետո, շարունակում են ներգործել միջնադարյան հայ շատ գրողների ստեղծագործությունների վրա:

Երկրի տնտեսական և քաղաքական կյանքում կատարված տեղաշարժերը, առևտրի և արդյունագործության զարգացումը և նոր գաղափարախոսությունների ծավալումը խիստ կերպով ազդում են նաև հայ իշխող դասի և հոգևորականության կյանքի, կենցաղավարության ու տրամադրությունների վրա: Խախտվում են հին համոզմունքները, եկեղեցական քարացած կանոնները, նույնիսկ շատ հոգևորականներ հանդես են գալիս եկեղեցու դոգմաների ու ճգնավորական մտածելակերպի դեմ, մեծ հետաքրքրություն է ցուցաբերվում հին հեթանոսական մշակույթի, արվեստի ու ճարտարապետության նկատմամբ: Արագ կերպով սկսում է զարգանալ հայ աշխարհիկ գրականությունը, որը իր հետ բերում է ո՛չ միայն նոր մոտիվներ, այլև գրական նոր ժանրեր, բանաստեղծության նոր ձև: Երկրում տարածվում է կուլտուր-լուսավորական աշխատանք, որի ընթացքը

թեև դանդաղում է Բյուզանդիայի ագրեսիայի և սելջուկների արշավանքների հետևանքով, բայց կանգ չի առնում, նույնիսկ որոշ վայրերում շարունակում են ավելի ուժեղ արտահայտվել վաղ վերածնության համար բնորոշ արտահայտություններ՝ աշխարհիկ գրականության, մշակույթի ու արվեստների զարգացման տենդենցները: Հայ ժողովուրդը շարունակում է զարգացնել իր մշակույթը ու գրականությունը նաև մոնղոլների տիրապետության ծանր օրերին: Այդ շրջանում հայկական գրականության ու մշակույթի զարգացման մեջ նշանակալից դեր է կատարում Կիլիկիայի հայությունը, որը այն ժամանակ, երբ բուն հայրենիքում վերացել էր հայկական պետությունը, ստեղծում է Կիլիկիայի հայկական թագավորությունը, որի գոյությունն ու գործունեությունը հայ ժողովրդի դարավոր պատմության բովանդակալից էջերից մեկն է կազմում:

Հայ ժողովրդի պատմական կյանքում կատարված տեղաշարժերը խիստ կերպով նպաստում են նաև X դարից արդեն անհասկանալի դարձած գրական հին լեզվի՝ գրաբարի ֆունկցիաների նեղացմանը և հասկանալի գրական լեզվի պահանջ են դնում: Հայոց լեզվի գրական այդ նոր տարբերակը ձևավորվում է ժամանակի համաժողովրդական խոսակցական լեզվի հիման վրա և դառնալով պաշտոնական լեզու՝ սկսում է մշակվել ու կատարելագործվել, թեև չի կարողանում ազատվել քերականական միևնույն իմաստն արտահայտող բազմազան ձևերից:

Այդ լեզուն իր բազմապիսի դրսևորումներով ամենից ավելի վառ կերպով երևում է միջնադարյան հայ գեղարվեստական գրականության մեջ:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԼԵԶԱԿԱՆ ՍՈՍՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) ԳԵՐԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջնադարյան հայ գեղարվեստական գրականությունը ինչպես իր բովանդակությամբ, այնպես և ձևով, արտահայտչական միջոցներով ու գրական ժանրերով շատ ու շատ առաջ էր անցել հայ հին

գրականությունից: Նա հարուստ էր ու բազմազան, արտահայտիչ ու ռեալիստական, արվեստով գեղեցիկ ու դյուրիշ: Նրա ամենաբնորոշ հատկանիշներն էին՝ ա) աշխարհիկ բովանդակությունը, բ) գրականությունը կյանքի հետ կապելու, հրատապ հարցերը գրականության մեջ արտացոլելու, մարդու զգացմունքներն ու բնության գեղեցկությունը նկարագրելու անխախտ տենդենցը, գ) գոյություն ունեցող հասարակական կարգերը քննադատելու, ժողովրդական լայն զանգվածների, աշխատավոր մարդու կյանքն ու բարքերը գրականության նյութ դարձնելու միտումը, դ) բուռն հայրենասիրությունը, որը նոր բովանդակություն էր ստացել այդ ժամանակ: Այդ բոլորին ավելանում էին նաև նրա արտահայտչական նոր միջոցները, լեզուն, որը գեղեցիկ լինելու հետ միասին հասկանալի էր նաև հայ ժողովրդի լայն հատվածներին: Այդ հատկանիշները ավելի կամ նվազ չափով երևացել են հայ միջնադարյան գրականության բոլոր ժանրերի մեջ՝ X դարից սկսած: Կյանքի սերը թափանցում է նաև ճգնաժամի խուցը և վրդովում նրա հոգին: Սակայն հոգևորականը մի անգամից չի կարողանում ազատվել հին գաղափարախոսության ազդեցությունից, բայց չի կարողանում դիմանալ նաև աշխարհիկ կյանքի թովչանքին և մեղանչում է եկեղեցու դոգմաների դեմ ու այդ ձևով տևական պայքար է սկսվում հնի և նորի, թույլի, դարն ապրածի և կյանքի հետ համաքայլ գնացողի միջև: Այդ հակասությունները ուժեղ կերպով իր երկերում մարմնավորել է X դարի խոշորագույն միստիկ գրող Գրիգոր Նարեկացին: Նա հիմնականում գրում է գրաբարով, բայց հաճախ օգտագործում է գրաբարյան իրողություններից միանգամայն տարբերվող արտահայտություններ, քերականական ձևեր ու բառեր: Հատկապես այն դեպքերում, երբ նա նկարագրում է իրական կյանքը, բնության տեսարաններն ու անձնական զգացմունքները, ճոխ, գեղեցիկ և հասկանալի լեզվով է գրում: Այդպիսի լեզվով են գրված գլխավորապես նրա տաղերը. բայց նույնիսկ նրա «Մատենանոթերգութեան» միստիկ գործն էլ գերծ չէ ժողովրդական խոսակցական լեզվի ազդեցությունից, թեև այդ գործը հիմնականում ունի վերացական, կրոնական բնույթ: Այդ երկի մեջ շատ են այնպիսի հատվածներ, որոնք միանգամայն հասկանալի են եղել ժամանակի հայ հասարակությանը. օրինակ՝

Դու լոյս ես և յոյս,
Եւ ես՝ խաւար և յիմար,
Դու իսկութեամբ բարի գովելի,
Եւ ես՝ համայնիւն չար ապիկար.

(բան 29)

Գրիգոր Նարեկացիին հայ միջնադարյան գեղարվեստական գրականության առաջին շրջանի արտահայտիչն է. քայդ պատճառով էլ նա լրիվ չափով չի կարողացել հեռանալ հնից և նոր բովանդակությամբ երկերը գրել նոր, ժողովրդին ամբողջապես հասկանալի լեզվով: Սակայն նա աշխատել է գրել «մեկին բանիւ» և ոչ թե «ծածուկ ճառիւ», և այդ նրան դարձնում է միջնադարյան հայ գրականության այն առաջին ներկայացուցիչներից մեկը, որոնք հին լեզվի ավանդույթները պահպանելու հետ միասին արտացոլել են ժամանակի խոսակցական լեզվի իրողությունները, օգտագործել են ժողովրդի բառ ու բանը և արտահայտել նոր մտայնությունը, թեև երկչուտ ձևով:

Հայաստանում նոր մտայնության ուժեղ ներթափանցումը գրականության մեջ կատարվում է X դարից հետո: Այդ ժամանակվանից երկրում բացվում են ժամանակի պահանջները բավարարող և նոր խնդիրներ առաջադրող դպրոցներ: Հանդես են գալիս գիտնականներ և ուսուցիչներ, որոնք ձգտում են «ուսուցանել զմանկունս» և վարժեցնել նրանց «ի պուետիկոսական մատենագրութեան»: Երկրի մի շարք քաղաքներում կազմակերպվում են հարուստ գրադարաններ, հիմնադրվում են բարձրագույն դպրոցներ, որտեղ դասավանդվում են մաթեմատիկա, երկրաչափություն, բժշկություն, հունական հին գրականություն, փիլիսոփայություն, գրվում են դասագրքեր, հատուկ հետաքրքրություն է առաջանում ժողովրդական բանահյուսության նկատմամբ և այլն: Այդ բոլորը ոչ միայն օժանդակում են հայ նոր գրականության զարգացմանը, այլև տարածում են նոր գաղափարախոսություն և գրականության մեջ վերջնականապես հաստատում աշխարհիկին առավելություն տալու ձգտումը: Նույնիսկ ժամանակի իշխող դասերի գաղափարախոսության արտահայտիչները նախընտրությունը տվել են աշխարհիկին, այսպես, օրինակ՝ թոնդրակեցիների աղանդի ամենամոլի թշնամիներից մեկը՝ Գրիգոր Մագիստրոսը, ծաղրում է այն հոգևորականներին, որոնք երկիրը թողած՝

«սակս Աստուծոյ», փախչում են լեռները: Գրիգոր Մագիստրոսը իր բանաստեղծություններում, հայ իրականության մեջ առաջին անգամ, լայնորեն կիրառում է արաբական բանաստեղծության ձևը:

Սակայն նոր, աշխարհիկ տրամադրություններ և հատկապես արվեստի նկատմամբ նոր վերաբերմունք ու մոտեցում է դրսևորում Զովհաննես Սարկավազ վարդապետը (XI-XII դար). նա իր «Բան իմաստութեան ի պատճառս զբոսանաց առ ձագն որ զաղօթանոցաւ նորա ճռուողէր քաղցրաձայն որ կոչի սարիկ» սյուժետային բանաստեղծության մեջ պարզորոշ կերպով գովերգում է իրական կյանքը, բանաստեղծության աղբյուրը համարում է կյանքը, բնությունը: Նա Գրիգոր Նարեկացու նման չի ցանկանում, որ «ի ձեռն մարգարեից» աստված խառնի իր «շուկ զօրութեան» նրա երգերին, այլ մնալով «ի բնականին»՝ հորինում է իր բանաստեղծությունը «գիայրենին բարբառելով»: Սարկավազը գտնում է, որ մարդը սովորում ու ստեղծում է իր արվեստը՝ միշտ ձգտելով նմանվել բնության, թեև երբեք չի կարող իր արվեստով արտացոլել բնության ամբողջ գեղեցկությունն ու փառահեղությունը. Սակայն դրան զուգընթաց մարդը չպետք է ամբողջապես ձուլվի բնությանը, որովհետև նա իր միջավայրից դուրս չի կարող գտնվել, նա պետք է ձգտի գեղեցիկ դարձնել իր արվեստը՝ միշտ նրա աղբյուրը տեսնելով բնության մեջ: Արվեստի մասին ձևավորված նոր ըմբռնումները խիստ կերպով ազդում են նաև բանաստեղծության արտահայտչական ձևերի և լեզվի վրա:

Միջնադարյան հայ գրականությունը ազատվելով կրոնական գաղափարախոսության ազդեցությունից և զարգացման նոր ուղու վրա դրվելով՝ չնախորդված տեմպով հարստանում է նոր երկերով, իր վրա դարձնում հասարակության լայն խավերի ուշադրությունը: Զայ գրողները իրենց ստեղծագործություններով պատասխանում են ժամանակի հրատապ հարցերին, արձանագրում են հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած դեպքերը, նկարագրում հայ ժողովրդի հերոսությունը՝ արտաքին թշնամիների հրոսակախմբերի դեմ տարած պայքարում, ողբում հայոց երկրի բազմաթիվ շեն քաղաքներում ու գյուղերում կատարված ավերածությունները, սակայն դրա հետ միասին մարտի են կոչում հայ ժողովրդին՝ երկիրը ներխուժած թշնամիների դեմ:

Միջնադարյան հայ գրականության մեջ շատ ուժեղ է դրսևորվել հայրենասիրությունը. նա այնքան անհավատալի չափով կախարդիչ ու համապարփակ է եղել, որ նույնիսկ աղոթքի ու ժամերգության

առարկա է դարձել: Այսպես, օրինակ՝ Հովհաննես Սարկավագ վարդապետը իր մի շարք աղոթքներում խնդրում է աստծուն, որ հայ ժողովրդի վայրատված մանուկներին ի մի հավաքի ու փրկի կործանումից: Դրա հետ միասին նա իր գործերում հիշում է հայ ժողովրդի հերոսներին, գովերգում նրանց և ձգտում է բորբոքել վրեժի զգացմունքը ու ժողովրդին ոտքի հանել օտար նվաճողների դեմ: Հայրենասիրությունը ավելի ու ավելի ուժեղ դրսևորվելով միջնադարյան հայ գրականության մեջ՝ դառնում է նրա հիմնական մոտիվներից մեկը:

Հայրենասիրական վառ զգացմունքներով է գրել իր գործերը նաև Ներսես Շնորհալին (XII դար): Ինչպես Հովհաննես Սարկավագ վարդապետը, նա նույնպես իր գեղարվեստական գործերի բովանդակությունը վերցնում է իրական կյանքից, միայն այն տարբերությամբ, որ հետապնդում է ուսուցողական նպատակ: Նա գտնում է, որ բանաստեղծությունը գրված պետք է լինի մեկին ոճով և ինքը պաշտպանում է իր այդ տեսակետը իր իսկ գրական պրակտիկայում՝ միշտ աշխատելով հասկանալի մնալ ընթերցողներին: Նա կարողանում է հաղթահարել ժամանակի տրադիցիան և վերացնել բանաստեղծությունների միակերպ հանգագրությունը և ասպարեզ է հանում գեղեցիկն ու հրապուրիչը: Ներսես Շնորհալին լայնորեն օգտագործում է գրական մի այլ տեսակ՝ առակագրությունը, որը մինչ այդ հայ գրականության մեջ շատ թույլ էր երևում: Շնորհալու առակներում պատկերված է ժամանակի կյանքը, խարազանված՝ հոռի բարքերը: Նրա առակները և հանելուկները, ինչպես և իր ամբողջ գրական ստեղծագործությունը ուսուցողական նպատակներ են հետապնդում: Սակայն առակագրությունը չի մնում այն մակարդակին, որը ներկայացրել է Շնորհալին: Դա հետագայում ավելի է զարգանում ու կատարելագործվում և հայ միջնադարի նշանավոր առակագիրների՝ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու շնորհիվ դառնում հայ գրականության ամենաուժեղ տեսակներից մեկը, որի մեջ ավելի բացորոշ են երևում հայ աշխատավորական խավերի տրամադրություններն ու ձգտումները: Միջնադարի հայ առակագիրները բացորոշ կերպով պատկերել են դասակարգային հակասություններն ու անտագոնիզմը: Առակներում ժողովրդական լայն զանգվածներին հասկանալի լեզվով խիստ ծաղրի են ենթարկվել դատարկ ու պորտաբույծ հոգևորականներն ու շահասեր ազնվականները, դրսևորվել է տիրող հասարակական հարաբերությունների դեմ եղած բողոքը:

Հայ աշխատավորական խավերի տրամադրությունները, իշխող դասերի դեմ ուղղված սոցիալական բողոքն ու աշխարհիկ մոտիվները ուժեղ կերպով դրսևորվել են նաև միջնադարյան հայ քնարերգության մեջ, որը ի դեմս Ֆրիկի, Յովհաննես Երզնկացու, Կոստանդին Երզնկացու, Զուչակի և ուրիշների իր կազմավորման առաջին իսկ քայլերից հանդես է եկել միանգամայն անկախ և ազատ միջնադարյան սխոլաստիկ մտայնությունից: Միջնադարյան հայ քնարերգության մեջ վառ ու գեղեցիկ ձևով, հասկանալի ու գեղեցիկ լեզվով արտացոլված են հավերժական սիրո գաղափարը, մարդկային անհատականությունը, ապրումներն ու զգացմունքները: Միջնադարյան հայ բանաստեղծության մեջ նոր իմաստով ու բովանդակությամբ է ներկայացված սերը: Միջնադարի հայ բանաստեղծները սերը համարել են ուրախության ու կյանքի անսպառ աղբյուրը, տիեզերական մի անսահման ուժ, որի բյուրեղացած հայելու մեջ անդրապատկերվում են բնության հրաշատեսիլ երևույթներն ու ամենից պաշտելի և պազշտությունից անսահմանորեն հեռու, սիրատուգոր կնոջ անջնջելի պատկերը, որ «հրով այրե գերկիրն ամեն», որ հալեցնում է սիրածին մոմի պես, խելակորույս դարձնում՝ ամենակատարյալ մարդուն իսկ: Սերն է գեղեցկության աղբյուրը, «գի ով որ սեր չունենայ՝ առ ինքն չկայ գեղեցկութիւն», - ասում է Կ. Երզնկացին¹:

Միջնադարի հայ լիրիկան հակիրճ է ու սեղմ, միևնույն ժամանակ խոր ու բովանդակալից. երբեմնի միստիցիզմն ու մռայլ անձկությունը իրենց մահատեսիլ պատկերներով չեն զբաղեցնում տաղերգուների մեծ մասին: Նրանք իրենց զգացմունքներով ու ապրումներով երկրից հեռու չեն սավառնում, շնչում ու ապրում են բնության սրտադյուր բուրմունքով, կյանքի մշտահունչ ու հեշտալից գրավչությամբ, գեղջուկի պարզ ու անխռով կենցաղով: Հայաստանում կատարված ավերածություններն իսկ չեն կարողանում մեռցնել հայ տաղերգուների կենսախիղճ ոգին և լավ ապագայի նկատմամբ նրանց ունեցած վառ հավատը:

Միջնադարյան հայ գեղարվեստական գրականությունը ուշագրավ էր ո՛չ միայն իր բովանդակությամբ, այլև ձևով, իր լեզվով և ոճական դրսևորումներով: Ամենից առաջ նա հասկանալի էր հայ ժողովրդին,

¹ Մ. Մկրյան, XIII-XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, 1938, էջ 37:

երկրորդ՝ մշակվում էր մի շարք բարբառների հիման վրա, ավելի ճիշտ, գրականության լեզվի մեջ ներթափանցում էին այդ ժամանակ եղած հայ բարբառների այն իրողությունները, որոնք հասկանալի էին ամբողջ հայ ժողովրդին, երրորդ՝ օգտագործվում էին գրաբարյան այնպիսի ձևեր, որոնք տեքստի մեջ անհասկանալի չէին կարող մնալ, չորրորդ՝ կիրառվում էին լեզվական միևնույն կանոնը արտահայտող տարբեր ձևեր, որոնք ցույց էին տալիս, որ այդ լեզվի մշակման ու կայունացման պրոցեսը դեռևս չէր ավարտվել: Սակայն, այդուհանդերձ, այդ լեզուն միջին դարերի հայ ժողովրդական լեզվի գրավոր արտահայտությունն էր, որը տարբեր ժանրերի մեջ և տարբեր հեղինակների գործերում ավելի կամ նվազ չափով մոտեցվում էր գրաբարին, բայց դրա հետ միասին չէր նույնացվում վերջինիս հետ: Միջին հայերենը ուներ իր զարգացման ներքին օրինաչափությունները, որոնք, մի կողմից՝ կապվում էին գրաբարի օրենքների հետ և, մյուս կողմից՝ հանդես էին գալիս իբրև ինքնուրույն, հայոց լեզվի զարգացման տվյալ շրջանին հատուկ օրենքներ: Գեղարվեստական գրականության լեզվի մեջ, իբրև ընդհանուր կանոն, գրաբարի ազդեցությունը համեմատաբար քիչ էր երևում կամ զգացվում, օրինակ՝

Այծ. Յամեն շրջի ինքն ի քարեր,
 Ունի ծախու մազէ քոճեր.
 Գինւոյ ունի աղուոր տըկեր,
 'Ի օծտէ ձըրի դանկի կոթեր:

Գիրք. Տուն մի տեսայ սպիտակ բըռած,
 Ու սև հաւեր ի ներս թառած,
 Ձուս ածէին ցեղք ի ցեղաց,
 Լեզուաւ խօսին բանականաց:
 (Ն. Շնորհալի)¹

Է՛յ չարիս, ըզվատին տունըն կու լեցնես ակով դու բոլոր,
 Չաղէկն ի յերկիր ի վար վտարես որ ժողվէ կտոր.
 Չայն որ խոզարած չվայլէ՝ կու զուգես ահեղ ծիաւոր,
 Եւ զղորդ մարդկանց ըզտունըն քակես առանց բահաւոր:

(Ֆրիկ)²

¹ Ղ. Յովնանեան, Հետազոտությունը նախնեաց ռամկոբենի վրայ, 1897, էջ 62-63:

² Մ. Մկրյան, XIII-XVIII դարերի հայ աշխ. գրակ., էջ 8:

Հանց գեղեցիկ մորճ ու շիտակ
Պատկեր գեղով՝ առ յիս հասաւ.
Այլ չէ տեսեր մարդ կենդանի
Չերդ գայն՝ որ իմ աչքս տեսաւ:

Չօրն՝ ես ի յիւր սերն կենամ,
Յերակ հետ իւր տեսուն գնամ.
Չաչերս արեամբ հետ իւր թանամ
Չիրայ հոգիս յիսն տարաւ:
(Կոստանդին Երզնկացի)¹

Իշխան մի կայր՝ յոյժ չար և անիրաւ: Եւ այրի կին մի կայր ի նոյն քաղաքի. և իշխանն հարկ պահանջելով նեղէր զնա. և կինն աղօթելով ասէր, թէ աստուած զինքն խաղաղութեամբ պահէ: Գնացին ասացին իշխանին, թէ քո չարիդ համար աղօթք կու առնէ: Եկն ձեռնաւորն և ասէ, ես քեզ լաւ չեմ արարել, դու ինձ համար Է՞ր կու աղօթես: Նայ ասաց, թէ քո հայրն վատ մարդ էր. ես անիծեցի, նա մեռաւ. դու նստար ի նորա տեղն այլ խիստ չար. կու վախենմ, թէ մեռանիս, նա քո որդին այլ խիստ լինի չար:

(Վարդան Այգեկցի)²

Բերված օրինակներից երևում է, որ միջին դարերի գեղարվեստական գրականության լեզուն, թեև իր մեջ ունի գրաբարը հիշեցնող լեզվական երևույթներ, բայց զգալի չափով տարբերվում է գրաբարից: Այդ լեզվի մեջ հանդես են գալիս այնպիսի իրողություններ, որոնք նոր էին, կամ թեև կային գրաբարում, բայց տարածված չէին: Այսպես, օրինակ՝ միջին դարերի հայ գրականության մեջ կիրառվում էին մի շարք հոգնակերտ մասնիկներ, ինչպիսիք են՝ **եր, տի, անի, վի, ստան, վտի, նի, ան** և այլն: Այդ վերջավորություններից հատկապես մի քանիսը իրենց կիրառության շրջանակները ընդարձակելու ուժեղ տենդենցներ էին ցույց տալիս: Այդպիսի բազմազանություն ենք նկատում նաև քերականական այլ ձևերի մեջ: Սակայն դրանց զուգընթաց միջին դարերի գրական լեզուն հարստանում է մի շարք նոր իրողություններով. հանդես են գալիս հարակատար, վաղակատար, ան-

¹ Նույն տեղը, էջ 51:

² Նույն տեղը, էջ 344:

կատար և այլ դերքայներ, նոր ժամանակներ և եղանակներ, կրճատվում է անկանոն կամ զարտուղի խոնարհում ունեցող բայերի թիվը, փոխվում է շատ բայերի խոնարհումը, սկսում են գերակշռել **ել** և **ալ** խոնարհումները, փոխվում են բայերի մի շարք ժամանակների առանձին դեմքերի վերջավորությունները, պարզվում է գոյական անունների և դերանունների հոլովական համակարգը և այլն: Այդ նոր երևույթների հետ հաճախ կիրառվում էին գրաբարյան ձևեր, ոճեր և արտահայտություններ: Այսպիսով, նկատվում էր լեզվի քերականության նոր որակի տարրերի ծավալման և հին որակի տարրերի մահացման ուժեղ պրոցես: Բայց դրա հետ միասին չի կարելի պնդել, թե լեզվի նոր որակի տարրերը, հատկապես X–XIV դարերում, արդեն հաղթանակել էին, և պարզորոշ կերպով ուրվագծվել էին միջին դարերի գեղարվեստական գրականության լեզվի և գրաբարի միջև եղած բոլոր սահմանները: Չնայած դրան՝ պետք է ասել, որ միջին հայերենը գրաբար չէր, այդ տերմինի իսկական առումով. նա սահմանազատվում էր գրաբարից, որովհետև մշակվում էր հայերենի մի շարք բարբառների և հատկապես **կը** ճյուղի բարբառների հիման վրա, որոնք ըստ երևույթին միջին դարերում ավելի էին մոտ գրաբարին, քան նրանց զարգացման ավելի ուշ շրջանում:

Սակայն, եթե նույնիսկ այդ հանգամանքը նկատի չունենանք, չենք կարող նույնացնել միջին հայերենը ժամանակի խոսակցական լեզվի հետ, որովհետև միջին հայերեն ասելով սովորաբար հասկացվում է միջին դարերի գրական հայերենը, որը, ինչպես նշել ենք արդեն, միատարր չէր և գրականության տարբեր տեսակներում տարբեր ձևով էր դրսևորվում: Այդ լեզուն նույնիսկ իր առավել պարզ արտահայտություններով տարբերվում էր այն բարբառից կամ բարբառներից, որոնց հիման վրա մշակվում էր: Եվ այդ միանգամայն հասկանալի է. գրական լեզուն բոլոր դեպքերում չի նույնանում ժողովրդական խոսակցական լեզվի հետ: Նա ժողովրդական խոսակցական լեզվի գրական մշակվածության ենթարկված արտահայտությունն է: Սակայն միջին հայերենը միայն դրանով չէր տարբերվում խոսակցական լեզվից: Ինչպես հայտնի է, միջին դարերում դեռևս գործածվում էր գրաբարը, թեև շատ հեղինակների մոտ պարզեցված ձևով, դեռևս դասավանդվում էր այդ լեզուն բոլոր տիպի դպրոցներում, և հայ մտավորականությունը իր կրթությունը ստանում էր գրաբար լեզվով: Այդ հանգամանքը մեծ չափով ազդում էր միջին դարերի

մատենագիրների լեզվի վրա. նրանք որքան էլ ուզենային պարզ գրել, այնուամենայնիվ չէին կարող մի անգամից մոռացության տալ գրաբարը, կամ իրենց լեզվաշինարարական գործունեության մեջ հաշվի չառնել գրաբարի նվաճումները: Այդ բանը կատարվել է նույնիսկ մեր ազգային լեզվի մշակման շրջանում: Այդ հանգամանքը խիստ կերպով ազդել է մեր միջնադարի գրականության լեզվի վրա: Ահա թե ինչու մենք կարծում ենք, որ միջին հայերենը մշակվում էր, մի կողմից՝ ժամանակի հայ ժողովրդի խոսակցական լեզվի և, մյուս կողմից՝ գրաբարի իրողությունների օգտագործմամբ: Ըստ որում գեղարվեստական և մասամբ էլ գիտական գործերում իշխում էին ժողովրդական լեզվի, իսկ պատմական և հատկապես կրոնական բովանդակություն ունեցող գործերում գրաբարի օրինաչափությունները:

2) ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջնադարի հայ գրականությունը հարուստ է պատմական երկերով: Միջին դարերում և հատկապես X-XIV դարերում Հայաստանում հանդես են գալիս մի շարք պատմագիրներ, որոնցից շատերը, ի տարբերություն նախորդ շրջանի պատմագիրների, օգտագործում են վիժական արձանագրություններն ու պաշտոնական փաստաթղթերը: Այդ պատմագիրներից կարելի է նշել Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցուն (X դար), Թովմա Արծրունուն (X դար), Մովսես Կաղանկատվացուն (X դար), Ստեփաննոս Տարոնցի-Ասողիկին (X-XI դարեր), Արիստակես Լաստիվերտցուն (XI դար), Կիրակոս Գանձակեցուն (XIII դար), Վարդան Արևելցուն (XIII դար), Ստեփաննոս Օրբելյանին (XIII-XIV դարեր), Թովմա Մեծփեցուն (XV դար), Գրիգոր Դարանաղցուն (XVI-XVII դարեր), Առաքել Դավրիժեցուն (XVII դար) և այլն: Այդ պատմիչների գործերը հայ գրականության պատմության հետաքրքրական էջերից են: Նրանցից շատ շատերը հայոց երկրի իրական պատկերը այնքան գունեղ ու գեղարվեստորեն են նկարագրում, որ թվում է, թե գեղարվեստական և ոչ թե պատմական երկ են գրում: Այսպես, օրինակ՝ Արիստակես Լաստիվերտցու Պատմությունը հաճախ մոտենում է գեղարվեստական բարձր արժեք ունեցող երկի: Նա իր երկում շարունակում է հայ

պատմագրության մի շարք ավանդույթներ և եղիշեի նման փորձում է ներգործել ընթերցողների վրա և նրանց մեջ հրահրել խոր հայրենասիրություն:

Նրա, ինչպես նաև միջնադարի մյուս պատմիչների երկերը խիստ կերպով կրում են հայ պատմագրության և Աստվածաշնչի լեզվի ազդեցությունը: Նրանք հաճախ նույնությամբ գործածում են հայ հին գրականության սովորական ոճերը, արտահայտությունները, Աստվածաշնչից պարբերություններով մեջբերումներ են կատարում և հարմարեցնում դրանք իրենց ասածներին: Սակայն այդ բոլորի հետ, նրանք երբեմն նկարագրում են ժամանակի խոսակցական լեզուն, տեղեկություններ են հաղորդում հայ բարբառների և հայոց ընդհանուր խոսակցական լեզվի մասին և այլն: Այսպես, օրինակ՝ Վարդան Արևելցին իր Պատմությունը շարադրում է պարզ գրաբարով, բայց երբեմն կիրառում է ժամանակի խոսակցական լեզուն: «Ի սրտումս դրի զքո խօսքդ. - ո՞նց է որ զամեն զա՛յն ասացեր, որ իմ սիրտս կայր, որ ինձ դուր թուաց, - գրում է նա: - Աստված իօսեցեա՞լ է ընդ քեզ, երևեա՞լ է քեզ»: Ասացաք թե, «չե՛ մենք մեղաւոր մարդ ենք. ապա զաստուածախօս մարդկանց գիրքն կարդացել ենք, և սիրտք թագաւորաց ի ձեռին Աստուծոյ են»:- «Աստուած յայտնե՞լ է քեզ առանց գրոց»:- Ապա ասացաք թե- «առաջի Աստուծոյ խօսք մի եմ յասել, որ Աստուած լսէ և ապա դի՛ւ, որ սուտ չկայ ի ներս»:

Հրամայեաց թե- «ասա»: Ասացի թե- «զինչ քրիստոնեայ կայ և արքայունք ընդ ծով և ընդ ցամաք՝ ամենու սիրտն հետ քեզ լաւ են, և քեզ աղօթք են առնում»:

Հրամայեաց թե- «հաւատալ եմ որ հանց է, ապա յԱստուծոյ ճանապարհն չեն արքայունքն՝ ինձ ինչ աղօթք առնեն. և թե առնեն՝ Աստուած երբ լսէ մէշում արքայունն զաստուած յերկնից յերկիրս բերէ չբերէ՝ ասացեք, որ յաստուծոյ ճանապարհն կենան և աղօթք առնեն: Մեր եղբարքն հետ մեզ վասն այն են ի կռուիլ, որ մենք զքրիստոնեայ սիրենք և քրիստոնեութիւն կայ ի մեր տանս. նոքա տաճկասեր են և տաճկութիւն կայ ի նոցա տանն:- Ապա՛ասէ ցմեզ. «ոչխարենի է՞ր ես զգեցեալ և ոչ ոսկի»: Եւ իմ ասացեալ թե- «մեք մեծ մարդ և աստիճանի տէր չենք, լուկ արեղայ միայն ենք»: Եւ հրամայեաց թե- «մեծացուցանեմ զքեզ ոսկի զգեստիւ, և շատ ոսկի տամ»: Եւ մեք ասեմք- «ոսկին և հողն մեզ մի են. մեք այլ մեծ ուզեմք, որ վայել՝ է քո մեծութեանդ՝ ողորմութիւն ի վերայ աշխարհի»: Եւ

հրամայեաց թե- «մեջում քթեթ կարեմ քեզ՝ խիստ գեշ և խիստ փոքրիկ լուկ այնչափ, որ խուսկ դնես եկեղեցոյն. թե չէ երկիր՝ ի՞նչ ասեն, թե Էլզասն ո՞նց տեսաւ զքեզ:- Եւ զայդ՝ զոր ասացեր, առնեմ, և մարդիկք յղարկեմ, որ տեսանեն զաշխարհս»: Իսկ երբ հրաման ուզեցաք գնալոյ՝ այլ կոչեաց զմեզ և խօսեցաւ, և ունէր ի ձեռին բալիշ մի և երկու հանդերձ երկարել տուել: Յիշեցուցաք թե-«Էլզան՝ այդ քո դրանդ հատանի և հանդերձդ մաշի, մեք անհատանելի և անմաշելի խնդրեցաք պարգևք»: Եւ հրամայեաց թե- «առաջի օրն զքո խօսքդ լմնեցի.- առլեխ եմ գրել տուել՝ կարդալ տուր, և զինչ քո սրտիդ պիտի աւելի՝ զայն այլ գրել տուր: Եւ ի սախալթու և ի շահաբատին եմ յանձնել զերկիրդ և զքեզ-զոր ինչ ասես՝ առնեն»¹:

Արդեն մեծավաստակ գիտնական Մ. Աբեղյանը նկատել է, որ այս պարբերության մեջ կան միջին հայերենի գրեթե բոլոր ձևերը, որ «արդեն ծագած է եղել արևելյան աշխարհաբարի «ուսմ» վերջավորությամբ խոնարհման ձևը, ինչպես է, օրինակ, «աղօթք են առնում», որ է «աղօթք են անում»²: Ի լրումն Մ. Աբեղյանի ասածների, պետք է նշել, որ Վարդանի լեզվի մեջ կան նաև արևելյան հայերենի քերականության մի շարք այլ ձևեր. ինչպես՝ վաղակատար դերբայը, «Գիրքն կարդացել ենք» (մի ձեռագրում «կարդացեալ ենք», որի իսկական ձևը պետք է լինի՝ «կարդացել ենք»), ներգոյական հոլովի կիրառությունը՝ ի սրտումս դրի զքո խօսքդ (մի ձեռագրում խօսեցեալքդ), արևելահայերենում գործածված մակբայներ՝ հանց (հենց), ոնց (ո՞նց տեսաւ զքեզ) և այլն: Ուշագրավ է նաև անորոշ դերբայով և ի նախդիրով սահմանական ներկայի կազմությունը, ինչպես՝ Առաջի աստուծոյ խօսք մի եմ յասել, որ աստուած լսէ (աստծու առաջ մի խոսք եմ ասում, որ աստվածը լսի): Սահմանական ներկայի կազմության այդ եղանակը նույնպես հիշեցնում է ներգոյական հոլովով սահմանական ներկայի կազմությունը, որը հատուկ է հայերենի մի շարք բարբառների: Միջին հայերենում այդ եղանակով էին կազմվում սահմանական եղանակի ժխտական ներկան և անցյալ անկատարը (չեմ ի գրել, չէի ի գրել): Հայերենի խոնարհման համակարգը ունի մի շարք դրսևորումներ, որոնք լեզվաբանական տեսակետից ուշագրավ են: Հայոց լեզվի սահմանական ներկան կազմվում է կամ դերբայի

¹ Մեծին Վարդանայ Բարձրբերդեցոյ, Պատմութիւն տիեզերական, 1861, Մոսկվա, էջ 207-209:

² Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, էջ 205:

ներգոյական հոլովի և օժանդակ բայի միջոցով (յասել եմ՝, չեմ ի գրել, գրում եմ, գալիս եմ և այլն), կամ որևէ եղանակիչի և բայահիմքի ու բայական վերջավորության միջոցով (կու ասեմ, գո ասիմ, հա ասեմ և այլն), կամ բայահիմքի և բայական վերջավորության միջոցով (գրեմ, ասեմ, առնեմ և այլն): Սահմանական ներկայի կազմության այս երեք ձևերը, որոնցից յուրաքանչյուրը կապված է հայոց լեզվի զարգացման որոշ շրջանի օրենքների հետ, ունեն իրենց առանձին դրսևորումները, քերականական կանոնները, որոնք հայերենի բարբառների դասակարգման հիմք են տվել: Սահմանական ներկայի կազմության այդ բոլոր եղանակները առկա են միջին հայերենում: Կարծեք թե միջին հայերենը եղել է հայոց լեզվի քերականական զանազան ձևերի պահեստարանը, որը ի մի է հավաքել այն բոլորը, ինչ որ եղել է և՛ գրական հայերենում, և՛ բարբառներում: Միջին հայերենում հանդես եկած այդ ձևերից շատերը հետագայում չեն ներթափանցել մեր գրական լեզվի սահմանները կամ նույնիսկ չեն պահպանվել մեր բարբառներում, բայց *գգալի մաաը այժմ էլ հարատևում է կա՛մ գրական հայերենում, կա՛մ մեր բարբառներում:*

Վարդան Արևելցու Պատմությունը, ինչպե՛ս տեսանք, գերծ չի եղել միջին հայերենի ազդեցությունից և չնայած որ հեղինակը միշտ աշխատել է պատմական երկերի համար ընդունված լեզվի սահմաններից դուրս չգալ, բայց չի կարողացել և երբեմն մոռացել է իր կոչումը՝ մեզ ավանդել է արժեքավոր նմուշներ ժամանակի խոսակցական լեզվից:

Սակայն միայն Վարդան Արևելցին չէ, որ գրել է ժամանակի խոսակցական լեզվով, թեև ավելի գրական տեսք տալով նրան: Սմբատ Սպարապետը գրել է իր պատմական և այլ երկեր Կիլիկիայի խոսակցական լեզվով (դարձյալ պետք է ընդունել, որ ենթարկած գրաբարի ազդեցությանը), Կիրակոս Գանձակեցին, Ստեփաննոս Օրբելյանը, Թովմա Մեծոփեցին և շատ ուրիշներ իրենց պատմական երկերը շարադրում են պարզ գրաբարով, որը հաճախ զարդարում են ժամանակի խոսակցական լեզվին հատուկ քերականական իրողություններով, ոճական հնարանքներով և այլն: Միջին հայերենը շարունակում է օգտագործվել հայ պատմական և այլ ժանրերի գործերում նաև ավելի ուշ շրջանում, մինչև ժամանակակից հայերենի կազմավորումը: Սակայն հետագա դարերի պատմագիրների երկերում ավելի ուժեղ է զգացվում ժամանակի լեզվի ազդեցու-

թյունը Այսպես, օրինակ՝ Գրիգոր Դարանաղցին (XVII դար) իր ժամանակագրությունը շարադրում է միանգամայն հասկանալի լեզվով, կիրառում է **ում** և **կը** ճյուղերի բարբառների շատ իրողություններ՝ «Թվին ՌՅԸ (1629) յազդմանէ չարին զմեր յԸռատօղու Յակոբ վարդապետին հիմնարկած եկեղեցին,– գրում է նա,– որ հոգետուն էր և պանդոկ և անկելոց տեղիք և անճարակաց բնակութիւն, նա՛ տաճիկ ազգն որ կու մախային հանապազ, ի տարին երկու անգամ յամր և Ֆաթվայ կու բերէին, շատ կաշառ տալով կառնեաք ի բերողացն, որ երեք անգամ ես եմ առել և այրել այսպիսի վտանգաւոր կրիւք տնեաց մինչև ի քսան և հինգ ամս

«Եւ հնարից չարին ոմն չաւուշ զմէկ հոռոմի տղայն հափշտակեց հոռոմի եպիսկոպոսն ինձ պատգամ էր ուղարկեր թէ՛ օգնեցէք մեզ վասն հաւատոց, այսօր մեզ է, վաղն ձեզ է և մեր ազգն այլ հետ իւրեանց միաբանելով ի դատաւորն գնացին աղաղակեցին մինչև գտողայն թափեցին ի չարեն Չայս ոխ պահեցին մինչ ժամանակ գտան ի հնարից չարին երեք չորս քաղաքի մարդ ի մէկ տեղ կուգան ի սուննաթի հարսանիս ոմն չարագլխի, և անդ գրոյց առնելով կու յիշեն գտողային յետ առնուլն Ամենեքեան միաբանութեամբ խորհուրդ կառնեն չարութեան՝ վասն հոռոմոց և հայոց, զի առցեն զվրէժս իւրեանց և թօթափեսցեն գդառնութիւն թոյնից ի հայս և ի յոյսս»¹

Մի այլ օրինակ, «Եւ ելեալ ի դուրս ի խցէն, զմեր ասպապ ներքևարկն ի մեզ ետուր և փակեաց գդուրսն ընդդէմ մեր, էառ զբանալիս և գնաց, և մեք մնացաք ի մէջ բակին Եւ դիզափայտ կայր, գնացաք տեղ սփռեցաք ի վերայ դիզափայտիցն և նստաք նայեցաք մինչ ի յետինքն խապրի կու հայիմք, չերեկ ոչ յինքն և ոչ այլ ոք, բայց միայն այն մեր նստած եկեղեցւոյն աւագութեցն՝ Պետրոս անուն՝ կուգայ երբեմն, փնջատելով կերթայ յերկարութիւն բակին և կուգայ և բնաւ երբեք հետ մեզ չի խօսիլ Չրուց կու հարցանեմք բնաւ պատասխանոյ արժանի չի առնոյր այսպէս ողորմելի դիմօք կամ շուարեալ Չինչ տեսնումք՝ որ յինն ժամին եկն այն հաշատոր վռազ, գնաց մտաւ ի յօտայն և ի մօտ մեզ չերեկ և ոչ պատասխանի արար մեզ, այլ ճաշոյն ոխն ի սրտերն լինելով և ի գալոյ ժամին եկած օրն այլ յօժարութեամբ, և սիրով չընդունեցան, որպէս գրեցաք յառաջագոյն»²

¹ Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ 1915 էջ 192-193

² Նույն տեղը էջ 62

Այսպիսի պարզ լեզվով է գրված Դարանաղցու ժամանակագրությունը: Այստեղ, սակայն, մեզ հետաքրքրող հարցի տեսակետից կարևորը լեզվի պարզությունը չէ, այլ լեզվական իրողությունների այն բազմազանությունը, որը առկա է Դարանաղցու գործում:

Դարանաղցին, ինչպես միջին դարերի հայ մյուս պատմագիրները, ձգտում է իր ժամանակագրությունը շարադրել հայ պատմագրության պաշտոնական լեզվով՝ գրաբարով, բայց նա չի կարողանում իր այդ ձգտումը անաղարտությամբ կատարել, որովհետև գրաբարը վաղուց էր դադարել հայ ժողովրդի լայն զանգվածներին հասկանալի լեզու լինելուց: Բացի այդ, արդեն ստեղծվել էր գեղարվեստական հարուստ գրականություն, որի լեզուն իր հիմնական դրսևորումներով տարբերվում էր գրաբարից և հասկանալի էր ժողովրդին: Այդ հանգամանքները խիստ կերպով ազդում են Դարանաղցու լեզվի ու ոճի վրա և այդ պատճառով էլ նա որքան ցանկանում է պահպանել հայ պատմագրության ոճը, չի կարողանում և ստիպված գրում է հասկանալի լեզվով, իհարկե, չմոռանալով նաև գրաբարը, հատկապես մեր պատմագիրների ոճն ու արտահայտչական հնարքները:

Այսպիսով, միջնադարյան պատմական հայ գրականության լեզուն իր շատ կողմերով տարբերվում էր գեղարվեստական գրականության լեզվից: Ամենից առաջ միջնադարի հայ պատմագիրները իրենց երկերում ձգտում էին պահպանել հայ պատմագրության ավանդույթները, լեզուն և արտահայտչական միջոցները, երկրորդ՝ միջնադարի հայ պատմագիրները հաճախ վերապատմում էին իրենցից առաջ ստեղծված պատմական երկերը, և այդ ձևով կապ ստեղծում անցյալ շրջանի և իրենց ժամանակի պատմական դեպքերի մեջ: Այդ աշխատանքի ընթացքում նրանք հարազատ էին մնում դեպքերի շարադրանքին և պահպանում էին հին հեղինակների ոճը: Երրորդ՝ այն դեպքերում, երբ իրենք ինքնուրույնաբար էին շարադրում իրենց գործերը, փորձում էին կիրառել հին հեղինակների ոճերը, բառերը, բառակապակցություններն ու բառածները. չորրորդ՝ չնայած հայ պատմագրության ոճական հնարները կիրառելուն և գրաբարի իրողությունները անխախտ պահպանելու իրենց ձգտումներին՝ միջին դարերի հայ պատմագիրները չէին կարողանում հարազատ մնալ այդ ցանկությանը և հաճախ գրաբարի քերականությունը ենթարկում էին միջին դարերի գեղարվեստական գրականության լեզվի ազդեցությանը և իրենց երկերը հորինում էին գրաբարի ու միջին հա-

յերենի իրողությունների համադրությամբ կազմված լեզվով: Այդ լեզվական իրողությունները տարբեր հեղինակների երկերում տարբեր համամասնությամբ էին հանդես գալիս:

3) ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջին դարերի հայ մատենագրությունը, ինչպես արդեն նշել ենք, բազմաբովանդակ է եղել: Միջին դարերում հայ գեղարվեստական գրականության զարգացման հետ ուժեղ զարգացում են ստանում նաև գիտության մի շարք ճյուղեր, որոնց մեջ հատկապես կարելի է նշել քերականագիտությունը, բառարանագրությունը, փիլիսոփայությունը, բժշկությունը: Գիտության այդ ճյուղերի մասին ստեղծվում է հարուստ գրականություն, որը ուշագրավ է ոչ միայն իր բովանդակությամբ, այլև լեզվով: Այդ մասնագիտական գրականությունը շատ մեծ դեր է կատարել հայ ժողովրդի մշակութային կյանքում: Այդ գրականության մեջ իր լեզվական իրողություններով աչքի է ընկնում բժշկական գրականությունը:

Հայաստանում բժշկությունը բավականաչափ զարգացած է եղել նաև X դարից առաջ, թեև նա ավելի շատ կրել է հունական բժշկագիտության ազդեցությունը: Միջին դարերում հայ բժիշկները հակվում են դեպի արաբական բժշկագիտությունը, որն այդ ժամանակաշրջանում աշխարհի ամենազարգացած գրականությունն ուներ: Սակայն հայ բժիշկները լոկ ընդօրինակողներ չեն լինում. նրանք օգտագործելով Արաբիայի բժշկության նվաճումները՝ ստեղծում են միանգամայն յուրօրինակ և ինքնատիպ գրականություն, որը հետագայում դառնում է բժշկության աղբյուրներից մեկը՝ հարևան մի շարք երկրներում: Պրոֆ. Լ. Ա. Յովհաննիսյանի հաշվումով այդ դարերում Հայաստանում գրվում և թարգմանվում են ավելի քան քառասուն անուն բժշկական գանազան գրքեր: Սակայն այդ ցուցակը միայն մեզ հայտնի գրքերն է ընդգրկում: Այնուամենայնիվ, նույնիսկ մեզ հասած հայտնի գրքերը նկատի ունենալով՝ կարելի է հաստատապես ասել, որ բժշկությունը Հայաստանում այդ ժամանակ հասել էր զարգացման բարձր աստիճանի և հայ բժիշկները քիչ գործ չեն կատարել բժշկագիտության պատմության մեջ: Այդ մասին են վկայում Հայաստանում միջին դարերում կազմակերպված հիվան-

դանոցները, հանքային ջրերի և բնական պայմանների օգտագործումը՝ այլևայլ հիվանդություններ բուժելու նպատակով և այլն: Այնքան հարգի է եղել բժշկագիտությունը, որ դպրոցներում դասավանդվող առարկաների ցուցակի մեջ է մտցվել: Պաշտոնական դպրոցներից բացի, բժիշկները պահել են աշակերտներ, նրանց սովորեցրել են բժշկություն, որպեսզի իրենց արվեստը չմոռացվի:

Միջնադարյան հայ բժշկական գրականությունը մեծ մասամբ գրված է ժողովրդական լայն զանգվածներին հասկանալի լեզվով: Բժիշկները, գրում է Մխիթար Ջերացին, նպատակ են ունեցել մասսայականացնել իրենց գիտելիքները և հասկանալի դարձնել բոլորին. «Եւ արարի զսա գեղջուկ և արծակ բարբառով, զի դիւրահաս լիցի ամենայն ընթերցողաց, առ ի յիշատակել զմեզ և խնդրել թողութիւն մեղաց ի մարդասիրեն Աստուծոյ»¹:

Հայ բժիշկներն ու գիտնականները «գեղջուկ և արծակ բարբառով» գրելու համար մեծ դժվարություններ պետք է հաղթահարեին: Նրանք չէին կարող գրել իրենց երկերը բարդ և արդեն հայ ժողովրդին անհասկանալի դարձած գրաբարով: Բայց գիտական գրքերը բարբառով գրելն էլ եր անհնար, այդ պատճառով էլ նրանք իրենց գիտական գործունեության ընթացքում հայոց լեզուն մշակելու, ավելի ճիշտ, գիտական գրականության պահանջները բավարարող տերմիններ ստեղծելու բնագավառում հսկայական աշխատանք են կատարում և մշակում են ժամանակի գիտության պահանջները բավարարող տերմինաբանություն ու գիտական լեզու: Այդ աշխատանքի մեջ ամենից առաջ աչքի է ընկնում միջնադարյան հայ գիտնականների վերաբերմունքը իրենց ստեղծած կամ փոխ առած տերմինների նկատմամբ. նրանք, իբրև ընդհանուր կանոն, բացատրում են բոլոր տերմինները, բերում են այդ տերմինների օտար համապատասխանությունները, հաստատում են իրենց ասածները ժամանակի հայտնի գիտնականների կարծիքներով և այլն: Այսպես, օրինակ՝ Մխիթար Ջերացին բացատրում է **ջերմը**, նշում նրա տեսակները, բուժման եղանակները բազմաթիվ օրինակներով ու մեջբերումներով, համեմատություններով ու տարբեր տերմիններով, որոնք լրիվ չափով հասկանալի են դարձնում նրա ասածները: «Պարտ է գիտենալ, - գրում է նա, - որ ջերմն օտար տաքութիւն է զատ ի բնութիւնէն,

¹ Մխիթարայ բժշկապետի Ջերացոյ Զերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832: Առաջաբան:

խառնեալ ընդ բնաւորական տաքութիւնն՝ որ ի սիրտն Առնէ սկիզբն ի սրտէն, և սփռի ի ձեռն շնչաւոր երակացն ընդ ամենայն մարմինն, որպէս այլ յառաջն ասացաք, և խափանէ զբնութեան գործերն եւ են բնութեան գործերն այսոքիկ ցանկութիւն կերակրոյն և ըմպելոյն, կանգնելն և գնալն և արթնութիւն, յառնելն և նստելն և մերձաւորութիւն, և այլ ամենայն բնութեան գործն որ ի մեզ են Թալետ և ասացաք զբնութեան գործերն՝ որ խափանին ի ջերմերոյն և ի յայլ ամենայն ցեղ հիւանդութենէ, սակայն ոչ կատարեալ խափանումն, այլ մասնական ինչ զի մահուամբ միայն խափանին բնութեան գործերն կատարեալ»¹

Մխիթար Զերացին, ինչպէս երևում է մեջբերումից, ոչ միայն նշում է հիվանդությունը և տալիս նրա բուժման հանգամանքները, այլև բացատրում, թե տվյալ հիվանդությունը ինչ ներգործություն կարող է ունենալ մարդու օրգանիզմի վրա, թե որոնք են բնության գործերը, այսինքն՝ օրգանիզմի գործողությունները, որոնց նորմալ ընթացքի վրա ազդում է հիվանդությունը և այլն։ Իսկ երբ նա նշում է հիվանդության տեսակները, սահմանում է դրանց համար հատուկ տերմին, բացատրում «Իսկ այն ազգ ջերմն որ պատճառն չոր և պինտ անդամունքն լինին, - գրում է նա, - Զոռմն **լիթլօն** ասէ, և տաճիկն **դեկ**, որ թարգմանի հալւմաշ և այլ ոմանք սեղմ ասեն և Զայք բարակ ասեն եւ ինքն երեք ցեղ լինի մի քան զմի դժար, և յետինն մահարար և հաստատին նոքա յերեք բնաւորական գիծութիւնքն զի մարմինք մարդկան չորս բնաւորական գիծութիւնք ունին մէկն չորս նիւթն են, և զերեքն այլ ի յետոյ պատմեցից օգնականութեամբն աստուծոյ

«Այլ Գաղիանոս վասն երեք ազգ ջերմերոյն գիրքն, յառաջին մակալաթն՝ որ է ճառ՝ ասէ, եթէ աղէկ իմացիր և ի միտ առ, յորժամ առնուն ջերմն ջուր և արկանեն ի հով պուտուկ, անպատճառ տաքանայ հով պուտուկն ի ջերմ ջրէն ապա թէ առնուն հով ջուր և արկանեն ի տաք պուտուկ, նոյնպէս տաքանայ հով ջուրն ի տաք պուտուկէն օրինակ է պուտուկն չոր և պինտ անդամոցն իսկ ջուրն գիծութեանցն, որք են չորս նիւթքն»²

Այդ ձևով շարադրում է իր երկերը նաև Ամիրդովլաթ Ամասիացին «Եւ այլ իմացիք, որ զայս բժշկութիւնս պատեհ է որ ամեն մարդ

¹ Նույն տեղը, էջ 3

² Նույն տեղը, էջ 4

ուսանի,- այսպես է գրում նա իր «Օգուտ բժշկութեան» հայտնի աշխատության մեջ,- զի այն պատճառին համար որ քան զայս փառաւոր ուսումն չկայ, որ հանապազ մարդուն զառողջութիւն կուզէ, և տէր աստուած քան զմարդն փառաւոր ու պատուական իրք չէ ստեղծեր: Եւ գրած է ի Զին Կտակարանքն, թէ Մովսէս հիւանդացաւ, և եկին նորա սիրելիքն և ասացին, թէ դեղ արա քեզ. և նա ասաց, թէ ո՞վ ինձ զայս հիւանդութիւնս երեսո՞ւ նա գդեղն և զստածումն ինքն տայ. և ձայն եղև ի վերուստ, թէ դեղ արա քեզ, զի դեղն այլ ես եմ ստեղծել և ստածումն այլ իմ հրամանաւն է. և դեղ արա քեզ, և ես տամ զառողջութիւնս»¹: Ամիրդովլաթ Ամասիացին նշում է, թէ բժշկապետներն ասել են, որ բժշկության արվեստը օգուտ է անձին, որ ամենից առաջ մարդու անձը առողջ պետք է լինի, որ նա կարողանա աղոթել աստծուն և ով առողջ չէ մարմնով, չի կարող ծառայել աստծուն նաև հոգով: Ամիրդովլաթը իր երկը շարադրում է՝ խիստ կերպով պահպանելով ժամանակի գիտության պահանջները: Բայց նրա երկերը մեզ համար մեծ նշանակություն են ստանում այն պատճառով, որ Ամիրդովլաթը իր երկերում ավելի պարզ է ներկայացրել միջին հայերենի պատկերը: Նա ծնվել ու իր կյանքի մեծ մասը անց է կացրել Զայաստանից դուրս, շփվել է զանազան շրջանների հետ, եղել է տարբեր քաղաքներում, ապրել ու դաստիարակվել է հայկական գաղթավայրերում և աշխատել է իր երկերով օգնել հայ ժողովրդի լայն զանգվածներին և բժշկության արվեստով զբաղվողներին: Նրա գործերով դաստիարակվել են հայ բժիշկների մի քանի սերունդներ: Այդ հանգամանքը մեծ նշանակություն է ունեցել նաև միջնադարի հայ բժշկական գրականության լեզվի մշակման համար: Ամիրդովլաթի երկերի, ինչպես նաև ընդհանրապես միջնադարյան հայ բժշկագիտության լեզուն ամենից առաջ ուշագրավ է իր բառապաշարով: Բժշկական գրականության շնորհիվ մեր լեզվի մեջ են մտնում բազմաթիվ մասնագիտական բառեր, որոնք չկային գրաբարում, օրինակ՝ Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» գրքում կան բազմաթիվ այնպիսի բառեր, որոնք չէին հանդիպում հինգերորդ դարում գրված գործերում. ակռատակ, աղեճորտեր, այնց, հայնց, այնել, ապիկի, աֆիոն, բահրակ, բառք – բարք (ախորժակ, տրամադրություն), բարձվենիկ, բոնցտակ (բռնցքի մկանային մասը), գաբժիլ,

¹ Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, 1940, Երևան, էջ 17:

գառնադմակ, գառնալեզու, գանձակ (աղիքների պարկ, փոր), գանձակցաւ (միզարգելություն), գիճուլթին, դեսպիտոս (անժուժկալություն), երիկամացաւութիւն, գանկիկ, գարտալու (ծիրան), գանճար (պղնձի ժանգ), թալնալ (թուլանալ, ուշաթափվել), թանասուպ, թարթափ (աչքի թերթերունք), թեփուկ (զլխի թեփ), ժաժիլ (շարժվել), ժում (անգամ, նվագ), ժուռ, խատար, խեչ, խեչափար, խնախ (անգինա), խոցատ, խումար, ծարուր, ծոր (կոծոխուր), կերցաւ (քաղցկեղ), կիծ (աչքի), կճիճ, կուլանկուպին, կոդա, հազազ, հազաֆ, հալաբուշտ, հայքար, հանչաք, հապ, հոգալ (քնական կարիքը կատարել), հուկ-նայ, ծարխոտ, մկնատամ, մուղաս, մոշի, յունապ, նամաշ, նայիմ (հարավային քամի), նանախուհ, նապաթ, շնչահանք (արյունատար երակներ), չարածաղիկ (կտտամահ, հանկարծամահ), չաք, չօք, պալղամ, պան (աստիճանավոր), պատրուճ, ջղախոտ, ջրիեղ, ռուպ, սալաթ, սամիր, սանճատ, սապալ, սատակ, սարսամ, սպրկիկ, ստածումն, սրտիեշտ, վառվառուկ, վասիլիկոն, վերաբերութիւն (փսխեց-նելը), տուռաճ, տուրտի, տրփատել, ցրտահաւ, փայծղանացաւութիւն, քաղցեց (քաղցած, անոթուց), քապուր, քօշմօրուք, քաֆ, քութեշ, քուկուրդ, քուռաթ, օդալ (գարկերակը բաբախել), օրել (օրորել), ֆալաք և այլն:

Ամիրդովլաթի բառապաշարի հարևանցի քննությունն իսկ ցույց է տալիս, որ այդ բազմավաստակ հեղինակը հատուկ հոգ է տարել իր լեզվի ուղղությամբ: Նա կազմել է նոր բառեր՝ հայերենի իրողություններով, կիրառել բարբառային պատրաստի բառեր, իսկ երբ այդ կատարելը հնարավոր չի եղել, կամ ինքը անհրաժեշտ չի համարել, վերցրել է օտար լեզուներից տերմիններ, բայց միշտ բացատրել դրանք, ապա նոր գործածել իր երկերում: Նրա լեզուն, ընդհանուր առմամբ, իր շարադասությամբ, գործածած բառերի իմաստներով, հնչյունափոխության կանոններով մոտ է բարբառներին: Այսպես, օրինակ՝ Ամիրդովլաթը գործածում է ըղորդ, հանց, չաք, ձեռվի, գետ, ամեն, այնել, այնոր, ժողովել և այլ բառեր և բառածներ, որոնք տարածված էին բարբառներում: Նրա գործածած օտար տերմինների մեծ մասն էլ ըստ երևույթին եղել է ժամանակի բարբառներում: Նրա լեզվին, ընդհանրապես, միջին հայերենի, քերականության մեջ հաճախ ենք հանդիպում միևնույն իմաստը արտահայտող տարբեր ձևերի, ինչպես՝ լինենայ - լինայ - լինի, ալիրի - ալիրե, այնե - առնե, անունվի, ըմպելաստան, գրեանք, ջերմեր, ստեղծեր է, աւերել է,

աւերած է, կուտէ, կու ասէ, կասէ, կու ուտէ, տեսնու, տեսնէ և այլն:

Այսպիսով, ինչպէս երևաց միջնադարի հայ մատենագրության գլխավոր տեսակների լեզվի համառոտ տեսությունից, միջին հայերենը տարբեր կերպ էր դրսևորվում տարբեր բովանդակություն ունեցող երկերում: Սակայն, այնուամենայնիվ, նա ուներ իր զարգացման ընթացքը, որը շատ կողմերով գրաբարի հետ կապվելով հանդերձ՝ աչքի էր ընկնում նաև իր առանձնահատկություններով, որոնք որոշվում էին գրաբարին ոչ հատուկ լեզվական օրենքներով:

Միջին հայերենի զարգացման այդ առանձնահատկությունները լրիվ չափով դրսևորվել են միջին դարերի գրական լեզվի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի մեջ:

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Միջին հայերենում պահպանվել է հայոց լեզվի հին շրջանի հնչյունական համակարգը իր ընդհանուր գծերով: Ինչպէս հին հայերենում, նույնպէս և միջին հայերենում կային երկու կարգի հնչյուններ՝ ձայնավորներ և բաղաձայններ: Սակայն այդ հնչյունների որոշ մասը իր որակով զգալի չափով տարբերվել է գրաբարի համապատասխան հնչյուններից: Միջին դարերում հայոց այբուբենին ավելանում են երկու տառ, **օ** և **ֆ**, առաջինը որպէս արդյունք **աւ** երկբարբառի պատմական հնչյունափոխության, իսկ երկրորդը՝ **ֆ** հնչույթի գոյացման:

Յին հայերենում եղել է **ո** տառը, որը արտասանվել է **օ**. միջին դարերում **ո**-ն բառամիջում և բառավերջում արտասանվել է իբրև փակ **օ**, իսկ **աւ** երկբարբառը՝ բաղաձայններից առաջ՝ բաց **օ**: Այդ պատճառով կարիք է զգացվել այդ նոր հնչյունները տարբերելու նաև համապատասխան նշաններով: Իսկ **ֆ** հնչյունը հայերենում գոյացել է միայն միջին դարերում: Յնում **ֆ**-ի փոխարեն գործածում էին **փ**¹:

¹ **Յ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, էջ 240 – 241:

1) ՁԱՅՆԱՎՈՐ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԿԲԱՐՔԱՆՆԵՐԸ

Միջին հայերենում կային **ա, է, օ, ու, ը, ի** ձայնավորները, որոնցից **է** և **օ** ձայնավորները արտահայտվում էին նաև **ե** և **ո** տառերով՝ գլխավորապես բառամիջում և բառավերջում: Ձայնավորներից **ա**-ն միշտ արտասանվել է **ա**. Նա պահպանել է իր հին արտասանությունը նաև միջին հայերենում: **է** և **ե** տառերը փոխարինել են միմյանց՝ հատկապես բառամիջում: Այդ նշանակում է, որ միջին հայերենում չէր պահպանվել **է** տառի հին **եյ** արտասանությունը: **Օ**-ն բոլոր դեպքերում արտասանվում էր **օ**, սակայն հաճախ **օ**-ի փոխարեն գրվում էր **ո**, որը բառասկզբում արտասանվում էր **վո** կամ մոտավորապես **ուո**: Բառամիջում և բառավերջում, ինչպես արդեն ասվեց, **ո**-ն արտասանվում էր **օ**, իսկ **յ** կիսաձայնի հետ, բառամիջում բաղաձայնից առաջ՝ **ու** (բոյն – բույն): **Ու** տառը ձայնավորներից առաջ արտասանվում էր **վ**, **դ** բաղաձայնից առաջ բառասկզբում՝ **ը**, իսկ մնացած բաղաձայններից առաջ և բառավերջում՝ **ու**, որը ցույց էր տալիս, որ **ու**-ի հին արտասանությունը նույնպես փոխվել էր, նա վերածվել էր պարզ հնչյունի: Մնացած ձայնավորները՝ **ը**-ն և **ի**-ն միշտ և բոլոր դեպքերում պահպանել էին իրենց արտասանությունը:

Չգալի չափով փոփոխության էր ենթարկվել հին երկբարբառների արտասանությունը, թեև ընդհանուր առմամբ պահպանվել էր նրանց գրության ձևը:

Գրաբարյան երկբարբառներից **այ**-ը մի շարք միավանկ բառերում դարձել էր **ա**. ինչպես՝ հանց (հայնց), հար, մար (հայր, մայր), լար (լայր), ալ (այլ) և այլն: Բազմավանկ բառերում ձայնավորներից առաջ փոփոխություն չի կրել, ինչպես՝ վկայել, տղայոց, Հայաստան, ընծայել և այլն: Օտար բառերում պատահում էր և՛ **այ**, և՛ **ա** արտասանությունը. ինչպես՝ պայլ, մայսոռ, բայց նաև՝ կումաշ (կումաշ), բաժ (բայժ) և այլն: Այս, այդ, այն ցուցական դերանունների թեք հոլովներում հաճախ **այ**-ի փոխարեն գրվում է **ա**. ինչպես՝ ասոր, ադոր, անոր և այլն:

Ոյ երկբարբառը բառավերջի փակ վանկերում մեծ մասամբ դարձել էր **ու**. ինչպես՝ լուս (լոյս), գուն (գոյն) և այլն: Այդ երկբարբառը բառամիջում ձայնավորներից առաջ պահպանել է **ոյ** արտասանությունը, որովհետև հանդես չի եկել իբրև երկբարբառ. ինչպես՝ գոյություն, հաճոյախօս և այլն:

Իւ երկբարբառը միջին հայերենում վերածվել էր պարզ հնչյունների բառավերջի փակ վանկում նա դարձել էր՝ ա) շրթնայնացած **ու**, մոտավորապես գերմաներենի *ü*-ի նման, որը գրվում էր ոյ երկտառով, ինչպես՝ արոյն (արին), ալոյր (ալիւր), առոյծ (առիւծ), հոյր (հիւր) և այլն բ) պարզ՝ **ի**, ինչպես՝ սփիռ (սփիւռ), զամբիղ (զամբիւղ), շիղ (շիւղ), երկիղ (երկիւղ) և այլն, գ) պարզ՝ **ե**, ինչպես՝ գեղ (գիւղ), երկեղ (երկիւղ), ճեղ (ճիւղ) և այլն Բառասկզբում որոշ դեպքերում վերածվել էր **ի**-ի ինչպես՝ իրենք (իւրեանք, իւրենք), իրենց (իւրեանց ~ իւրենց), իրմէ (իւրմէ), իր (իւր) և այլն

Եա երկբարբառը **ե**-ի է վերածվում ո՛չ միայն շեշտակոորույս լինելու հետևանքով, այլև սովորական վիճակում, ինչպես՝ յամսենն (յամսեանն), ցորեն (ցորեան), բարև (բարեան), իրեն (իրեան>իւրեան) և այլն

Աւ երկբարբառը, ինչպես արդեն նշել ենք, միջին հայերենում փակ վանկերում արտասանվում էր **օ**, ձայնավորներից առաջ և բառավերջում՝ **ավ** Այդ երկբարբառի նոր արտասանության հետ է կապված **օ** հնչյունի և համապատասխան տառի մուտքը հայերենում

Վերոհիշյալ երկբարբառների գործածության նշված և բազմաթիվ այլ ձևերի հետ պահպանված էր նաև նրանց գրաբարյան արտասանությունը և գրության ձևը

Սակայն, ընդհանուր առմամբ, չէր պահպանվել հայերեն երկբարբառների արտասանական հին որակը, նրանք վերածվել էին պարզ հնչյունների, թեև հայերենի բարբառներում դեռևս պահպանվել էին նրանց հին արտասանության հետքերը Հայերենի երկբարբառների պարզեցման տեղեկնքը, ինչպես արդեն նշել ենք, գալիս է շատ վաղուց Գրաբարում նույնպես այդ տեղեկնքը նկատելի էր, թեև ուժեղ չէր դրսևորվում

2) ԲԱՂԱԶԱՅՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի բաղաձայն հնչյունները հիմնականում լինում են եռաստիճան և երկաստիճան՝ Գրաբարում և հայերենի մի շարք բարբառներում բաղաձայն հնչյունները եռաստիճան են, իսկ միջին հայերե-

* Նկատի չենք առնում որոշ բարբառների քառաստիճան բաղաձայնական համակարգը

նում և մնացած բարբառներում՝ երկաստիճան Յայերենի բաղաձայն հնչյունների այդ զանազանությունները, միևնույն լեզվի ճյուղավորումների համար հնչյունական տարբեր աստիճանների գոյությունը և արտասանական տարբերությունները ցույց են տալիս, որ հայերենը զարգացման երկար ճանապարհ է անցել և հայ ժողովրդի պատմության ընթացքում փոփոխությունների է ենթարկվել ինչպես իր բառապաշարով ու քերականությամբ, նույնպես և հնչյունական համակարգով

Միջին հայերենի հնչյունների երկաստիճան համակարգը խոսում է նաև այն մասին, որ միջին հայերենը գրաբարի պարզ շարունակությունը չէ, որ նա սկսել է կազմավորվել հայերենի բարբառների հիման վրա և ոչ թե գրաբարն է աղավաղվել ու դարձել աշխարհիկ բարբառ, միջին հայերեն

Միջին հայերենում, իբրև ընդհանուր կանոն, բաղաձայն հնչյունները բաժանվում են ձայնեղների և խուլ շնչեղների Այդ պատճառով էլ գրաբարի բաղաձայն հնչյուններն արտահայտող տառերի արտասանությունը փոփոխվել էր, **բ, գ, դ** տառերն արտասանվում էին **փ, ք, թ**, իսկ **պ, տ, կ-ն՝ բ, դ, գ** Այդ փոփոխությունները չէին կատարվում միայն այն դեպքում, երբ այդ և նրանցով կազմված բարդ հնչյուններին նախորդում էին **ս, շ** և **ն** Այսպիսով, պարզ խուլ հնչյուններ համարյա թե չկային միջին հայերենում Այդ պատճառով էլ հայերեն շատ բառեր, թեև պահպանել էին իրենց ուղղագրությունը, բայց փոխել էին իրենց արտասանությունը, օրինակ՝ **բան** արտասանվում էր «փան», **բարձր**՝ «փարցր», **բաժին**՝ «փաժին», **աղբայր**՝ «ախփայր», **որբ**՝ «վորփ», **գրեմ**՝ «քրեմ», **զևեմ**՝ «քևեմ», **հազնիլ**՝ «հաքնիլ» **կարգ**՝ «կարք», **դուռ**՝ «թուռ», **դու**՝ «թու», **դիմել**՝ «թիմել» և այլն Եվ ընդհակառակը՝ **պատ** արտասանվում էր **բադ, կապել**՝ «գաքել», **պարտ**՝ «բարդ», **տամ**՝ «դամ», **տարել**՝ «դարել», **տուգանք**՝ «դուքանք», **դատ**՝ «թադ», **տակ**՝ «դագ», **հասակ**՝ «հասագ», **բարակ**՝ «փարագ», **ծալած**՝ «ծալած», **ծառ**՝ «ծառ», **ճանչեմ**՝ «ջանչեմ», **ճանպահ**՝ «ջանբահ», **ծնել**՝ «ձնել» և այլն

Հին հայերենի տառերից **ղ** տառը, որը գրաբարում քիչ էր տարբերվում **լ**-ից, վերածվել էր ետնալեզվային ձայնեղ հնչյունի և արտասանվում էր ժամանակակից **ղ**-ի նման **յ**-ն բառասկզբում արտասանվում էր **հ**, բառամիջում ձայնավորներից առաջ՝ **յ**, իսկ բազմաձայնկ բառերի վերջում չէր արտասանվում, **ւ** տառը ձայնա-

վորներից հետո (բացի **ո**-ից) արտասանվում էր **վ** Այդ տառը, իբրև ընդհանուր կանոն, բաղաձայններից հետո հանդես էր գալիս նույն արտասանությամբ **ո**-ի հետ, բայց երբեմն գրվում էր նաև առանց **ո**-ի Մնացած բաղաձայնները հիմնականում արտասանվում էին այնպես, ինչպես հիևգերորդ դարում

Միջին հայերենի մեջ մտած օտար բառերը տառադարձվում էին հնչյունական այն կանոններով, որոնք գործում էին այդ շրջանում այնպես, օրինակ՝ *xabar* բառը տառադարձվում էր խապար, *bazar*՝ պազար, *baron*՝ պարոն, *gasab*՝ գասապ, *hunab*՝ յունապ (քաղցրապտուղ ծառ), *dftar*՝ տֆթար, *mzgit*՝ մզկիթ ձևերով և այլն

3) ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ա) ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց լեզուն իր զարգացման ոչ մի շրջանում հնչյունափոխական կանոնների այնպիսի բազմազանություններ, ինչպիսին միջին հայերենում է, չի ունեցել Միջին հայերենում կարելի է ասել, որ հնչյունափոխության էին ենթարկվում համարյա թե բոլոր ձայնավորները և երկբարբառները Հնչյունափոխական այդ օրինաչափությունների մի մասը կապված էր շեշտի հետ և ընդհանրապես հատուկ է հայերենին իր զարգացման բոլոր շրջաններում, իսկ մնացած ձևերը շեշտի փոփոխմամբ չի կարելի բացատրել Նրանք ավելի շատ բարբառային առանձնահատկություններ են, որոնք ներթափանցել էին միջին հայերենի հնչյունական համակարգի մեջ և զգալի չափով ազդել նրա դրսևորումների վրա

Գրաբարում **ա** և **ո** ձայնավորները չէին սղվում կամ հնչյունափոխվում Իսկ միջին հայերենում նույնիսկ այդ հնչյունները շատ բառերում սղվում կամ հնչյունափոխվում էին

Ա-ն, իբրև ընդհանուր կանոն, պահպանվում էր միավանկ բառերում, իսկ երկու և ավելի **ա** ունեցող բազմավանկ շատ բառերի վերջին վանկի **ա**-երը ընկնում էին շատ դեպքերում **Ա**-ն ընդհանրապես սղվում էր՝

ա) **Ա**ն սոսկածանց ունեցող բայերի մեջ, ինչպես՝ անցնեմ (անցանեմ), գտնում (գտանեմ), ցուցնել (ցուցանել) և այլն

բ) Պատճառական կերպի **ուցան** ածանց ունեցող բայերում, օրինակ՝ պակասեցնեն (պակասեցուցանեն), ամրացնեն (ամրացուցանեն), հասցնեն (հասուցանեն), խաղցնեն (խաղացուցանեն) և այլն:

գ) Երկուսից ավելի **ա** ունեցող շատ բառերում, ինչպես՝ ատամ (հաւատամ), թագւոր (թագաւոր), պացխուն (պատասխան), վաճռկան (վաճառական), գրաւկան (գրաւական) և այլն:

դ) **ե** խոնարհման ներգործական սեռի բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքում, ինչպես՝ գրեց (գրեաց), սիրեց (սիրեաց), կոչեց (կոչեաց), ազատեց (ազատեաց) և այլն:

Այս երևույթը կապվում է **եա** երկբարբառի հնչյունափոխության կանոնների հետ:

Ա-ն հնչյունափոխվում էր՝

ա) **Ա**ն կապակցություններով սկսվող բառերում (եթե **ան** ժխտական ածանց չէր)՝ դառնալով **ը**, օրինակ՝ ընկնիլ (անկանիլ), ընգողիս (անկողիս), ընգողնակից (անկողնակից), ընդաճեմ (անդաճեմ) և այլն:

բ) Վերածվում էր **ը**-ի մի շարք բառերի հոլովված ձևերում, ինչպես՝ չըբօք (չաբօք), ակընջաց (ականջաց), գոքընչի (գոքանչի), ժըմու (ժամու) և այլն:

գ) **Յա** կապակցությամբ սկսող մի շարք բառերում դառնում էր **ե**, ինչպես՝ յեմեմ (յամեմ), յերակ (յարակ), յերակայ (յարակայ) և այլն:

դ) Մի շարք բառերի վերջին վանկի **ա**-ն փոխվում էր **ու**-ի, ինչպես՝ նշուն-նշուններ (նշան-նշաններ), նմուն (նման), պացխուն (պատասխան) և այլն:

ե) Ներքին թեքման **ա** կամ **ի-ա** խառն հոլովման ենթարկվող շատ բառերի գործիական հոլովի հոլովիչ **ա**-ն վերածվում էր **օ**-ի, ինչպես՝ ձկօմ (ձկամբ), կաթօմ (կաթամբ), ձեռօմ (ձեռամբ), անծօմ (անծամբ) և այլն:

Ա հնչյունը ինչպես գրաբարում, նույնպես և ժամանակակից հայերենում հնչյունափոխվում է բացառիկ դեպքերում. գրաբարում միայն **աստուած** բառի թեք հոլովներում և **արմատ** բառի հոգնակի ուղղականում **ա**-ն սղվում է. օրինակ՝ աստուած-աստուծոյ, արմատ-արմտիք. այդ բառաձևերը պահպանվել են նաև ժամանակակից հայերենում:

Միջին հայերենում **ա**-ի հնչյունափոխության այդ բազմաթիվ արտահայտությունները կապված են հայերենի բարբառների հնչյունափոխության առանձնահատուկ երևույթների հետ, որոնք հայոց

լեզվի զարգացման ներքին օրենքներով պայմանավորված լինելով հանդերձ՝ այս կամ այն տերիտորիալ բարբառում ունեն արտահայտման հատուկ դրսևորումներ: Այդ բանը մենք կարող ենք ասել նաև **ո** հնչյունի մասին, որը գրաբարում և արդի հայերենում բոլորովին չի սղվում, եթե նկատի չունենանք բարբառային որոշ բառեր, որոնք գործածվում են ժամանակակից հայերենում:

Միջին հայերենում **ո**-ն, ինչպես արդեն ասել ենք, փոխել էր իր արտասանությունը. նա բառասկզբում, մի քանի բացառություններով, արտասանվում էր **վո**, իսկ բառամիջում և բառավերջում՝ **օ**:

Միջին հայերենում **ո**-ն ընկնում էր գլխավորապես **ո**, **ր**, **լ** հնչյուններից առաջ կամ հետո այն բառերում, որտեղ հանդես էին գալիս երկու և ավելի **ո** հնչյուններ. ինչպես՝ ժողվել (ժողովել), ոլրել (ոլորել), սովրել (սովորել), խորվել (խորովել) և այլն:

Ռ-ն հնչյունափոխվում էր՝

ա) **Ռոդ** վերջածանց ունեցող մի շարք բառերում՝ դառնալով ու, ինչպես գնորդի (գնորդի), սղալուրդի (սխալորդի) և այլն:

բ) Որոշ բառերում արտասանվում էր **ու**, ինչպես լուկ (լոկ), քու (քո), իրիկուն (երեկո) և այլն:

Ռ-ի հնչյունափոխության այս կանոնների հետ պահպանվել էր նաև նրա գրաբարյան արտասանությունը, օրինակ՝ շատ բազմավանկ բառերի սկզբի **ո**-ն արտասանվում էր **օ** նույնիսկ այն ժամանակ, երբ այդ բառերը արտասանվում էին նաև **վո**-ով. օրինակ՝ որբ (վորբ), բայց՝ որբեր (օրբեր), ոլրել (վոլրել), բայց՝ նաև ոլրել (օլրել) և այլն:

Ե ձայնավորը միջին հայերենում հանդես էր գալիս և՛ իբրև ձայնավոր, և՛ իբրև երկհնչյուն. բառասկզբում, գլխավորապես միավանկ բառերում, նա վերածվել էր **յե**-ի, բառամիջում, եթե շեշտի տակ չէր, արտասանվում էր **Է**, իսկ երբ շեշտի տակ էր՝ **իե**: **Ե**-ի արտասանության այդ արտահայտությունները պահպանված են մեր մի շարք բարբառներում:

Գրաբարում **Ե** ձայնավորը հնչյունափոխվում էր բացառիկ դեպքերում. միայն **դեւ** բառի թեք հոլովներում կամ ածանցված ձևերում դառնում էր **ի** և սղվում էր մի շարք բառերում **ն**-ից և **դ**-ից առաջ, օրինակ՝ դև-դիւի, ասեղն-ասդան, թիթեղն-թիթղան, պճեղն- պճղան և այլն:

Միջին հայերենում **Ե** հնչյունը՝

ա) Մի շարք բառերի սկզբում և միջում դառնում էր **ի**, ինչպես՝

իրեք (երեք), իրիկուն (երեկո), իրիցկին (երեցկին), միսակ (մենակ), արգիւեմ (արգելում), դիհ (դեհ), աւիրեմ (աւերեմ) և այլն:

բ) Բառասկզբում, եթե **ե**-ին հաջորդում էր **դ**, որոշ դեպքերում վերածվում էր **ա**-ի, ինչպես՝ ադիծ (եղիծ), աղբայր (եղբայր), աղտիր (եղտիր) և այլն:

գ) Նույնպիսի կապակցությունների մեջ երբեմն վերածվում էր **ը**-ի ինչպես՝ ըղունգ (եղունգ), ըղունգաքար (եղունգաքար) և այլն:

դ) Ընկնում էր մի շարք բառերում, օրինակ՝ վայլե (վայելե), վայլեմ (վայելեմ), ուննալ (ունենալ), աւրել (աւերել) և այլն:

Ի հնչյունը պահպանել էր իր հնչյունափոխական հին կանոնները, այսինքն՝ փակ վանկում շեշտը կորցնելով վերածվում էր **ը**-ի, կամ սղվում էր, ինչպես՝ գիր-գրեաց, մարդիկ-մարդկան և այլն, կամ էլ չէր հնչյունափոխվում, ինչպես՝ նիրհ-նիրհել, հիմն-հիման, հիւսիս-հիւսիսոյ և այլն: Բաց վանկում **ի**-ն նախորդելով **ա**-ին՝ վերածվում էր **ե**-ի, իսկ **ո**-ին՝ **ւ**-ի, բացի **ի**-ով վերջացող միավանկ բառերից, օրինակ՝ գինի-գինետուն (գինի-ա-տուն), պատանի-պատանեաւ (պատանի-ա-ւ), որդի-որդւոյ (որդի-ոյ), թագուհի-թագուհւոյ (թագուհի-ոյ) և այլն: Հնչյունափոխման այդ կանոններից բացի, միջին հայերենում **ի**-ն հնչյունափոխվել է նաև որոշ կապակցությունների մեջ, հատկապես ձայնորդ հնչյուններից առաջ վերածվել է **ե**-ի. օրինակ՝ պեղծ (պիրծ), անկիշեռ (անկշիռ) և այլն: **Ի**-ի այս հնչյունափոխությունը, սակայն, տարածված չէ միջին հայերենում և այդ, ինչպես նաև **ի**-ի **ա** կամ **յա** փոխանցվելու հանգամանքը չի կարելի համարել միջին հայերենի հնչյունափոխական օրինաչափ երևույթ:

Ը ձայնավորը իր հին հատկությունները պահելով հանդերձ՝ միջին հայերենում մի շարք բառերի առաջին վանկում վերածվել է **ի**-ի, օրինակ՝ ինկնիմ (ընկնիմ), յիստկել (յստակել), դիժար (դժուար), իսպիտակ (սպիտակ), կիշեռք (կշեռք) և այլն:

Հայոց լեզվի պատմությանը նվիրված աշխատություններում արտահայտված է այն կարծիքը, որ **չը** ժխտականը միջին հայերենում դարձել է **չի**, այսինքն՝ **չը** ժխտականի **ը**-ն վերածվել է **ի**-ի: Մեր կարծիքով՝ այդ ճիշտ չէ. **չը**-ն առաջացել է **չի**-ից, իսկ **չի**-ն **չե**-ից: Այստեղ գործել է **ե**-ի, ապա **ի**-ի հնչյունափոխության կանոնը և ոչ թե **ը**-ի:

Ու ձայնավորը գրաբարում չի հնչյունափոխվել բառասկզբում, երբ որևէ բաղաձայնի հետ մի վանկակի բառ է կազմել, օրինակ՝ ութ-ութերորդ, ուշ-ուշադրութիւն և այլն: **Ու**-ն չի հնչյունափոխվել նաև

այն ածանցյալ բառերում և բարդություններում, երբ բառի վերջում է հանդես եկել իբրև արմատական հնչյուն, օրինակ լեզու-լեզուաւ, եղ-ջերու-եղջերուաքաղ և այլն: Սակայն հաճախ նա չի հնչյունափոխվել նաև այլ պարագաներում. այսպես, օրինակ՝ ու-ն դրվելով մի շարք բառերի սկզբում չի հնչյունափոխվել, թեև այդ բառերը միավանկ չեն եղել, օրինակ՝ ունենալ, ուտել, ուղիղ, ուղի, ուրանալ և այլն:

Հայոց լեզվում ու-ն շեշտակոորույս լինելիս ընդհանրապես հնչյունափոխվում է, բայց այդ կանոնը բացարձակ չէ ինչպես գրաբարի և միջին հայերենի, նույնպես և ժամանակակից հայերենի համար. օրինակ՝ ուխտ-ուխտավորություն-ուխտագնաց, հուզումն-հուզումնալից, ժողովուրդ-ժողովուրդների և այլն:

Ու-ի, ինչպես նաև հայերենի մյուս ձայնավորների հնչյունափոխության կանոնները միայն շեշտով չեն պայմանավորված. նրանք կապված են նաև հայոց լեզվի այլ տարրերի և լեզվական երևույթների, ինչպես նաև բառիմաստի և քերականական նշանակության հետ և այդ պատճառով էլ հաճախ շեղվում են ընդհանուր համարված հնչյունափոխական կանոններից:

Միջին հայերենում ու ձայնավորը պահպանել է իր հին վիճակի հիմնական դրսևորումները, սակայն, ոչ հին արտասանությունը: Նա միջին հայերենում վերածվել է պարզ հնչյունի և հնչյունափոխվում էր՝

ա) Մի շարք բառերում, նրանց ածանցման, թեքման կամ բարդացման դեպքերում՝ դառնալով ը կամ սղվելով. օրինակ՝ տուն-տնվի-տներ, տուտ-ստել, դուստր-դստեր, ջուր-ջրերոյ և այլն:

բ) Բառասկզբում դ-ից առաջ որոշ բառերում վերաժվում էր ը-ի կամ օ-ի, ինչպես՝ ըղորդ (ուղղորդ), ըղուղ (ուղեղ), օղորդ (ուղղորդ), օղերծ (ուղերծ), օղղեմ (ուղղեմ) և այլն: Միջին հայերենի ու ձայնավորի այս հնչյունափոխական կանոնը պահպանված է հայերենի մի շարք բարբառներում, որոնք ցույց են տալիս, որ միջին դարերում այդ հնչյունափոխական կանոնը բարբառների ազդեցությամբ է մտել գրավոր լեզվի մեջ:

Միջին հայերենում մեծ փոփոխությունների էին ենթարկվել հայերենի երկբարբառները: Ամենաուշագրավ երևույթը այն է, որ այդ երկբարբառները վերացվել կամ վերածվել էին պարզ հնչյունների: Հայոց լեզվի հնչյունափոխության այդ տեսնեցնքը շարունակվել է նաև հետագայում և անցել է ժամանակակից հայերենին, որը չունի

երկբարբառներ, չնայած նրան, որ հայերենը իր զարգացման վաղ շրջանում հարուստ է եղել դրանցով: Միջին հայերենում թեև փոխվել էր երկբարբառների որակը, բայց հիմնականում պահպանվել էր նրանց գրության ավանդական ձևը, որը առանձին հեղինակների մոտ երբեմն փոխարինվում էր տարբեր հնչյուններով:

Միջին հայերենում երկբարբառները կրել էին հետևյալ փոփոխությունները.

1. **այ** երկբարբառը վերածվել էր՝

ա) **Ա**-ի մի շարք միավանկ բառերում՝ բառասկզբում և բառամիջում, ինչպես՝ ալ (այլ), ան (այն), մար (մայր), հար (հայր), ձան (ձայն) և այլն:

բ) **Ե**-ի՝ բառասկզբում մի շարք բառերում, ինչպես եգուց (այգուց), երել (այրել), եգի (այգի) և այլն, մի շարք բառերի բառամիջում, ինչպես՝ հերենց (հայրենեաց) և այլն:

գ) **Ո**-ի մի շարք բառերում, ինչպես՝ պոման (պայման), վոթել (վայթել) և այլն:

2. **Ոյ** երկբարբառը մի շարք բառերի փակ վանկերում վերածվել էր **ու**-ի, ինչպես՝ ուժ (ոյժ), անուշ (անոյշ), լուս (լոյս), քուր (քոյր) և այլն:

3. **Ա** երկբարբառը բոլոր բառերի փակ վանկում վերածվել էր **օ**-ի, իսկ ձայնավորներից առաջ և բառավերջում երկու հնչյունի՝ **ավ**-ի, ինչպես՝ օդ (աւդ), հօր (հաւր), եղբօր (եղբաւր), ապրանօք (ապրաւնաւք), իսկ երբ նա երկբարբառ չի եղել, հնչյունափոխության չի ենթարկվել, ինչպես ասպարաւ (ասպարավ), ծաղկեցաւ (ծաղկեցավ) և այլն:

4. **Ի** երկբարբառը վերածվել էր՝

ա) Մի շարք բառերում **ոյ**-ի, ինչպես՝ արոյն (արին), արոյննի, հարոյր (հարիր), առոյծ (առիծ) և այլն:

բ) Դերանուններում, մի շարք այլ բառերում, հատկապես **դ**-ից առաջ՝ **ի**-ի, ինչպես՝ իրենք (իւրեանք), իրենց (իւրեանց), յիրմէ (յիւրմէ), երկիղ (երկիւղ), զամբիղ (զամբիւղ) և այլն:

գ) Մի շարք բառերում **դ**-ից առաջ՝ **ե**-ի, ինչպես՝ գեղ (գիւղ), երկեղ (երկիւղ), եղ (իւղ) և այլն:

5. **Եա** երկբարբառը մի շարք բառերում վերածվել էր **ե**-ի, այդ պատճառով էլ փոխվել էր շատ բառերի ավանդական ուղղագրությունը, պարզացել էր **ե** խոնարհման ներգործական սեռի բայերի

անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի վերջավորությունը և այլն. օրինակ՝ յաւիտեն (յաւիտեան), լերդ (լեարդ), սիրեց (սիրեաց), բարև (բարեաւ), սև (սեաւ), գնացել (գնացեալ), թողել (թողեալ), մնացել (մնացեալ) և այլն: Այս օրինաչափության է ենթարկվում նաև բայերի հրամայականի եզակին, օրինակ՝ սիրէ (սիրեա), շինէ (շինեա), վճարէ (վճարեա) և այլն: **Եա** երկբարբառը որոշ բառերում դարձել էր **ա**, ինչպես՝ իրար (իրեար), հանգաւ (հանգեաւ), փախաւ (փախեաւ), կորան (կորեան) և այլն: Այս երևույթը, սակայն, գալիս է շատ վաղ շրջանից. դեռևս գրաբարում մենք ունեինք **եա** երկբարբառի պարզեցման դեպքեր, բայց ոչ այն ինտենսիվությամբ, ինչպիսին մենք հանդիպում ենք միջին հայերենում: Գրաբարում **եա**-ն ինչյունափոխվում էր շեշտակորույս լինելու դեպքում, իսկ միջին հայերենում նաև անկախ շեշտից:

բ) ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Միջին հայերենում բաղաձայնները, ինչպես արդեն նշել ենք, երկաստիճան էին, թեև պահպանվել էր գրաբարի ուղղագրությունը, այսպես, օրինակ՝ գրվում էր **բ, պ, փ, գ, կ, ք** բայց արտասանվում էին միայն **բ և փ, գ և ք**:

Այդ ընդհանուր կանոնից բացի, միջին հայերենի մի շարք բաղաձայն ինչյուններ փոխել էին իրենց հին արտասանությունը:

Ձայնորդ ինչյուններից **յ**-ն բառասկզբում արտասանվում էր **հ**, իսկ բառավերջում չէր արտասանվում. **ւ**-ն բոլոր դեպքերում՝ **վ** (բացի **ո**-ից հետո գործածվելուց):

Սի շարք բաղաձայն ինչյուններ հետաքրքրական փոփոխությունների էին ենթարկվել. այսպես, օրինակ՝ մի քանի բառերում ձայնավոր ինչյունների սղման հետևանքով ձուլվել էին որոշ բաղաձայն ինչյուններ և վերածվել այլ ինչյունների. այսպես՝ **պատասխան** բառի մեջ երկրորդ **ա**-ի կորուստի պատճառով **տ**-ն և **ս**-ն մոտենալով միմյանց՝ կազմել էին **ց**, որի հետևանքով բառը ստացել էր **պացխուն** ձևը, **արտասուք** բառի մեջ նույն պրոցեսն է տեղի ունեցել, որի հետևանքով ստացվել է **արցունք** ձևը և այլն:

Միջին հայերենում, իբրև ընդհանուր կանոն, **ր**-ն մի շարք բառերում, հատկապես **շ, Ժ, բ, դ, գ** ինչյուններից առաջ և երբեմն նաև **հ**-ից հետո ընկնում էր, ինչպես՝ խաշեմ (խարշեմ), քաշեմ

(քարշեմ), ածեք (արծեք), եփ (երբ), սուփ (սուրբ), զեդ (զհարդ), դգալ (դրգալ<տարգալ), նեկսե (ներքսե), հաւերք (հրաւերք) և այլն:

Միջին հայերենում **ր**-ից և **ռ**-ից առաջ մի շարք բառերում ավելացել է **յ**, որի պատճառով հաճախ ընկել են **ր** կամ **ռ** հնչյունները և առանձին բառեր նոր կերպարանք են ստացել. օրինակ՝ այրոյն (արիւն), այրնել-այռնել (առնել) և այլն: Այդ հնչյունափոխական տեղաշարժերի հետևանքով **առնել** բառը միջին հայերենում ստացել է **այնել**, իսկ համեմատաբար ուշ շրջանի գործերում **անել** կերպարանքը, որը անցել է նաև ժամանակակից հայերենին:

Միջին դարերում բայերի սահմանական ներկայի հոգևակի առաջին դեմքի **մ** վերջավորությունը, ըստ երևույթին բայի հոգևակի երրորդ դեմքի **ն**-ի ազդեցության տակ, սկսում է փոխարինվել **ն**-ով: Սկզբնական շրջանում **մ** և **ն** հնչյունները հասնդես են գալիս միասին, հաճախ միևնույն հեղինակը գործածում է **և՛ մ, և՛ ն** նույնիսկ միևնույն բառում: Բայց հետագայում տարածվում է **ն**-ի գործածությունը: Բայերի ներկայի հոգևակի առաջին դեմքը արտահայտող ձևական հատկանիշի (**մ**-ի) փոփոխման հետևանքով փոխվում է նաև այդ դեմքի դերանունը՝ **մեք** բառը և **մենք** կերպարանքն է ստանում: Նման տիպի փոփոխություններ են կատարվում նաև բայերի տարբեր ժամանակների համապատասխան դեմքերում, օրինակ՝ անցյալ անկատարի հոգևակի առաջին դեմքի **եսք** վերջավորությունը վերածվում է **էիք**, անցյալ կատարյալի նույն դեմքի **աք** վերջավորությունը՝ **իիք** ձևերի և այլն: Բայերի դեմքերի մեջ կատարված այդ ձևական փոփոխությունները, իհարկե, միայն լեզվի հնչյունաբանության մեջ կատարված փոփոխություններով չէին պայմանավորված. նրանք սերտ կերպով առնչված էին նաև միջին հայերենի բառապաշարի ու քերականության մեջ կատարված փոփոխությունների հետ, որոնք տեղի էին ունենում զարգացման այն գործուն օրենքների համաձայն, որոնք հատուկ էին հայոց լեզվին և հատկապես նրա տերիտորիալ բարբառներին, որոնք միջին դարերում համակենտրոնանալու, ընդհանուր համաժողովրդական լեզվի մեջ ձուլվելու ուժեղ տենդենցներ էին ցուցաբերում:

Այդ բանը կարելի է ասել նաև հնչյունափոխական մի շարք այլ երևույթների մասին: Այսպես, օրինակ՝ հնչյունների կորուստ հատուկ է եղել հայոց լեզվին՝ նրա զարգացման բոլոր շրջաններում, բայց այդ երևույթը տարբեր ինտենսիվությամբ է արտահայտվել պատմական

տարբեր պայմաններում: Միջին հայերենում այդ պրոցեսը շատ ուժեղ է զգացվել. այդ շրջանում բառավերջի բաղաձայններից հետո եղած **ւ**-ն արդեն ընկել էր, և մի շարք բառեր, ինչպես՝ անձն, ձուկն, մուկն, ձեռն, ինքն, հարսն, շարժումն և այլն, ունեին անձ, ձուկ, մուկ, ձեռ, ինք, հարս, շարժում ձևը: Հնչյունների անկման կամ կորուստի այդ տենդենցը հատկապես ուժեղ է դրսևորվել լեզվի կազմավորման շրջանում, այդ է պատճառը, որ այդ պրոցեսը մենք տեսնում ենք նաև ժամանակակից հայերենի գոյացման ժամանակ, XIX դարում: Այդ շրջանում. ուժեղ պայքար. է սկսում որոշ բառերի կամ քերականական իրողությունների այսպես կոչված հին ու նոր ձևերի միջև: Բայց հաղթանակում են նոր ձևերը, այսինքն՝ այն իրողությունները, որոնք չեն հակասել մեր ազգային լեզվի հիմքում ընկած բարբառի զարգացման ընդհանուր օրենքներին և հասկանալի են եղել հայ ժողովրդի բոլոր հատվածներին:

Միջին հայերենում նույնպես շատ ուժեղ է զգացվել լեզվական հին և նոր տարրերի կիրառությունը, որովհետև այդ շրջանում էլ կազմավորվում էր գրական նոր լեզու, որը հիմնված էր հայոց բարբառների վրա, զարգանում ու կատարելագործվում էր հայ ժողովրդական լեզվի այն օրինաչափություններով, որոնք հասկանալի էին ամբողջ հայ ժողովրդին և ընդարձակվելու մեծ հնարավորություններ ունեին:

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾԸ

Ա. ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր լեզվի քերականությունը, բառապաշարը և հնչյունաբանությունը սերտորեն կապված են միմյանց հետ և հանդես են գալիս միասնաբար: Սակայն լեզվի այդ տարբեր կողմերը ունեն նաև իրենց առանձնահատուկ դրսևորումները, իրենց տարբերիչ գծերը: Սրանից հետևում է, որ քերականական յուրաքանչյուր օրենք կամ կանոն բազմաթիվ մասնակի իրողությունների ընդհանրացումն է, այն հիմնականը, որով իրագործվում է լեզվի հաղորդակցական ֆունկցիան նրա զարգացման տվյալ շրջանում: Այսպես, օրինակ՝

Ժամանակակից հայերենում նախադասության ենթական դրվում է ուղղական հոլովով և ցույց է տալիս ընդհանրապես այն առարկան կամ անձը, որը մի բան անում է կամ լինում, որևէ վիճակի մեջ գտնվում է կամ որևէ գործողություն կատարում: Ենթական ցույց է տալիս առարկա, իր, անձ ընդհանրապես, իբրև ենթակա հանդես եկող անունները, որոնք միայն կոնկրետ իմաստ կարող են ստանալ որոշ կապակցությունների մեջ, խոսքի հաղորդակցական ֆունկցիայի իրագործման ժամանակ վերցվում են իրենց ուղիղ ձևով: Ուղղական հոլովով ենթական արտահայտելու միջոցը ժամանակակից հայերենի քերականության կենսունակ կանոններից մեկն է: Սակայն հայոց լեզվի զարգացման ավելի վաղ շրջանում ենթական արտահայտվել է նաև այլ հոլովներով, հատկապես սեռականով և տրականով՝ որոշ տիպի նախադասություններում: Այդ նշանակում է, որ լեզվի զարգացման յուրաքանչյուր շրջանին հատուկ է այս կամ այն օրինաչափությունը, որ դրանից եղած շեղումները ավելի հին օրենքների հետ են կապվում, կամ անհրաժեշտ զարգացում չեն ստացել: Այդ նշանակում է նաև, որ լեզվի քերականության այս կամ այն կանոնի փոփոխությունը կամ տարածումը կապված է այդ լեզուն կրող ժողովրդի լեզվական ըմբռնողության հետ, պայմանավորված է մտածողության մեջ կատարված տեղաշարժերով, հիմնված մարդկային մտածողության ընդհանրացնող ունակության վրա, որը փոփոխվում ու զարգանում է հասարակության զարգացմանը զուգընթաց:

Այդ սկզբունքից ելնելով, մենք մոտենալու ենք միջին հայերենի քերականության օրենքների պարզաբանմանը՝ աշխատելով նշել այն ընդհանուրը, տիպականը, որ կապված է հայոց լեզվի տվյալ շրջանի զարգացման տենդենցների հետ: Սակայն այդ տենդենցների նշումը կապված է մեծ դժվարությունների հետ, որովհետև միջին հայերենը գտնվում էր իր լինելիության պրոցեսում, դեռևս իբրև գրական լեզու կայունացած չէր իր քերականության բոլոր արտահայտություններով: Այդ պատճառով էլ գործում էին լեզվական միևնույն օրենքը դրսևորող բազմաթիվ ձևեր, որոնց մի մասը հետագայում տարածվեց և ընդհանրացավ հայոց ազգային լեզվի մեջ, իսկ մնացած մասը գործածությունից դուրս մնաց և կամաց-կամաց մահացավ: Այսպես, օրինակ՝ միջին հայերենի բազմաթիվ հոգնակիներից ժամանակակից հայերենում գործածվում են միայն **եր** և **ներ** հոգնակի վերջավորու-

թյունները: Այդ նշանակում է, որ հայոց լեզվի զարգացման տվյալ շրջանում գործող կենսունակ օրենքների հետ են կապված եղել այդ վերջավորությունները և տարածվել ու ընդհանրացել են հետագայում:

Լեզվի քերականությունը (ձևաբանությունն ու շարահյուսությունը), ինչպես արդեն ասել ենք, չի կարող կապված չլինել լեզվի մյուս կոմպոնենտների՝ հնչյունաբանության ու բառապաշարի հետ: Լեզվի բառապաշարը մեծագույն նշանակություն է ստանում այն ժամանակ, երբ դրվում է քերականության տրամադրության տակ: Սակայն առանց լեզվի բառային կազմի՝ քերականությունը գոյություն ունենալ չի կարող, որովհետև միայն բառերի շնորհիվ, կոնկրետ բառերի փոփոխության կանոնների հիման վրա ստեղծվում են լեզվի քերականական օրենքները և դրանցով պայմանավորված կանոնները: Լեզվի բառապաշարը իր հերթին սերտորեն կապված է հնչյունաբանության հետ. հնչյունական յուրաքանչյուր փոփոխություն իր կնիքն է դնում բառերի ձևի ու քերականական առանձին կանոնների արտահայտման վրա: Հայերենում քերականական սեռի բացակայությունը կամ վերացումը կապված է նաև՝ բառերի հիմքի հնչյունների փոփոխման կամ անկման հետ: Եվ, ընդհանրապես, երբ խոսվում է «բառերի լեզվի» մասին, նկատի է առնվում հնչյունային լեզուն:

Այսպիսով, լեզվի բոլոր կողմերն էլ կապված են միմյանց հետ և պայմանավորված են միմյանցով. սակայն, այդուհանդերձ նրանցից յուրաքանչյուրը ունի իր հատուկ օրինաչափությունները, դրսևորման կանոնները: Այսպես, օրինակ՝ ձևաբանությունը ուսումնասիրում է բառերի փոփոխությունները, որոնք նախադասությունների մեջ արտահայտում են տարբեր հարաբերություններ, իսկ շարահյուսությունը ուսումնասիրում է նախադասության մեջ բառերի կապակցության և նախադասություններ կազմելու կանոնները, որոնք իրենց հերթին կապված են բառերի փոփոխության կանոնների հետ:

Ուսումնասիրության ընթացքում լեզվի ձևաբանական, ինչպես նաև շարահյուսական և այլ կատեգորիաներ պայմանականորեն կտրվում են իրենց ամբողջությունից և դիտվում հարաբերականորեն առանձնացած վիճակի մեջ: Այդ պատճառով էլ չի կարելի լեզուն ներկայացնել միայն մի կողմով, ասենք ձևաբանությամբ, առանց ուշադրություն դարձնելու նրա մյուս կողմերի՝ բառապաշարի, հնչյու-

նաբանության և այլնի վրա Այդ հանգամանքին ուշադրություն չեն դարձրել միջին հայերենը ուսումնասիրողները և այդ պատճառով էլ ընդգծել են միայն միջին հայերենի ձևաբանությունը՝ մոռացության տալով նրա շարահյուսական ու մյուս կոմպոնենտները

Այժմ, երբ արդի լեզվաբանությունը հսկայական նվաճումներ ունի կոնկրետ լեզուների ուսումնասիրության բնագավառում, հնարավոր է հաղթահարել եղած դժվարությունները և ավելի լրիվ չափով ներկայացնել միջին հայերենը՝ իր զարգացման ընթացքի մեջ և նշել նրա զարգացման օրենքների հիմնական դրսևորումները հայ ժողովրդի պատմության տվյալ շրջանում Հավակություն չունենալով այս աշխատությամբ սպառնելու առաջադրված հարցը՝ անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել միջին հայերենի քերականության հիմնական դրսևորումների վրա

1) ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Միջին հայերենի հոլովման համակարգը իր շատ դրսևորումներով տարբերվում է գրաբարի հոլովման համակարգից Միջին հայերենում առաջացել են հոլովական նոր վերջավորություններ ու նոր ձևեր, ձևավորվել ժամանակ ցույց տվող մի շարք բառերի համար հոլովական հատուկ վերջավորություն (վա), որը հետագայում կայունացել է և ավելի տարածվել ժամանակակից հայերենում Գրաբարի համեմատությամբ միջին հայերենը ունի հոլովական համակարգի հետևյալ տարբերությունները

ա) Միևնույն բառերի տարբեր հոլովումներ գրաբարում **ա** կամ **ո** և այլ հոլովման ենթարկվող մի շարք բառեր միջին հայերենում ենթարկվել են **ի** հոլովման օրինակ՝ գրաբարում **արծաթ, խոտ** բառերը ենթարկվել են **ո** հոլովման, իսկ միջին հայերենում դրանք ենթարկվում են **ի** հոլովման

բ) Միջին հայերենը համարյա թե չունի գրաբարյան տիպի խառն հոլովումներ, այսպես՝ լեզու-լեզվով (գրաբարում՝ լեզուաւ), կարգ-կարգով (գր՝ կարգաւ), նշան - նշանով (գր՝ նշանաւ) և այլն

գ) Ներքին թեքման ենթարկվող մի շարք բառեր ստացել են արտաքին թեքում, ինչպես՝ ոսկոր-ոսկրի (գր՝ ոսկեր), մեղր-մեղրի (գր՝ մեղեր - մեղու) և այլն

գ) Միջին հայերենում նկատվում է **ո** հոլովման կրճատման կամ **ու**-ի վերածվելու պրոցեսը, որը, պետք է ասել, սկսել էր շատ վաղուց:

ե) Միջին հայերենը ունի ժամանակ ցույց տվող մի շարք բառերի համար հատուկ վերջավորություն **վա**. ինչպես յիրիկվան, վաղվան (վաղվանէ) և այլն:

զ) Տարբեր հոլովումների ենթարկվող բառերի մեծ մասի գործիական հոլովը ունի **ով** վերջավորություն, ինչպես՝ աղ-աղի-աղով, ծայր-ծայրի-ծայրով, թուղթ-թղթի-թղթով, արոյն-արոյնի (արունի)-արոյնով, մեղր-մեղրի-մեղրով, աղբոյր-աղբոյրի-աղբոյրով, անասուն-անասնոյ-անասնով, մարդ-մարդոյ-մարդով, կին-կնոջ-կնոջով, ագռավ-ագռվու-ագռվով, տերութիւն-տերութեան-տերութենով, կնիկ-կնկան - կնկնով և այլն:

է) Միջին հայերենում մի շարք բառերի գործիական հոլովը արտահայտվում է **օմ** վերջավորությամբ, որի **մ**-ն հոլովակազմիչի ֆունկցիա էր ստացել, այսպես՝ ձուկն-ձկօմ, ոսպն-ոսպօմ և այլն:

Միջին հայերենը ունի վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական: Ուշ շրջանի գործերում երևում է նաև ներգոյական հոլովը՝ **ում** վերջավորությամբ:

Միջին հայերենի հոլովվող խոսքի մասերը, գրաբարի և ժամանակակից հայերենի նման, ունեն **ա, ե, ի, ո, ու** հոլովիչները, թեև ոչ բոլորն են միևնույն հաճախականությամբ հանդես գալիս հայոց լեզվի զարգացման տարբեր էտապներում:

Միջին հայերենի հոլովները ունեն իրենց հոլովակերտ մասնիկները՝ հոլովակազմիչները, որոնք իրենց կիրառությամբ և դրսևորման եղանակով զգալի չափով տարբերվում են և՛ գրաբարի, և՛ ժամանակակից հայերենի հոլովակազմիչներից, թեև իրենց ձևով նույննալում են: Միջին հայերենի, գրաբարի ու ժամանակակից հայերենի հոլովակազմիչների մեջ նկատվող ձևական միակ տարբերությունը այն է, որ միջին հայերենում գործիական հոլովը ունի նաև **մ (օմ)** հոլովակազմիչը:

Միջին հայերենում նկատվում է հոլովումների պարզեցման և ներքին թեքման ենթարկվող բառերի կրճատման ուժեղ պրոցես: Այդ տեղեկները շարունակվել է մինչև ժամանակակից հայերենի կազմավորման ընթացքի ավարտումը, որից հետո համեմատաբար կայունացել են տեղափոխումներն ու փոխանցումները հայերենի հոլովական համակարգի մեջ: Ժամանակակից հայերենում հիմնականում

իշխում է արտաքին թեքումը, իսկ ներքին թեքմամբ հոլովող առանձին բառեր ավանդաբար շարունակում են իրենց հին ձևերը միայն որոշ հոլովներում (սեռականում և տրականում): Այդ երևույթը նկատվում էր նաև միջին հայերենում: Այսպես, օրինակ՝ ինչպես արդեն նշեցինք, տարբեր հոլովումների ենթարկվող բառերի գործիական հոլովը, չնչին բացառությամբ, ունենում է **ով** վերջավորությունը, իսկ հոգնակիում նույնիսկ այդ բացառությունները չեն նկատվում:

Միջին հայերենում անունների հոգնակին արտահայտվում է հոգնակիակերտ մասնիկներով, որոնք տարբերվում են ժամանակակից հայերենի հոգնակիության իմաստը արտահայտող վերջավորություններից միայն իրենց բազմազան ձևերով, իսկ գրաբարից՝ նաև հոգնակիները կազմելու եղանակով: Միջին հայերենում հոգնակի մասնիկները ընկնում էին բառահիմքի և հոլովակազմիչի մեջ, իսկ գրաբարում նրանք դրվում էին հոլովակազմիչից հետո, օրինակ՝ գրաբարում՝ տուն-տանց, միջին հայերենում՝ տուն-տներոյ և այլն

Միջին հայերենի հոգնակիների կազմության այս առանձնահատկությունը ցույց է տալիս, որ արդեն միջին դարերում նկատվում էին ժամանակակից հայերենի կենսունակ տարրերի հետ կապված լեզվական շատ երևույթներ, որոնք հետագայում, պատմական նպաստավոր պայմանների մեջ դրվելով՝ ավելի ամրացան ու տարածվեցին և դարձան ժամանակակից հայոց լեզվի քերականական այս կամ այն իմաստը արտահայտող հիմնական տարրերը

Միջին հայերենում գոյական անունների հոգնակին կազմվում էր, բացի գրաբարյան **ք, ս, ց** վերջավորություններից, նաև **եր, եար, ան, նի, տի, վի, վտի, ստան** և ավելի ուշ շրջանում **ներ** հոգնակիակերտ մասնիկներով:

Այդ հոգնակիակերտ վերջավորությունների մեծ մասը եղել է նաև գրաբարում, բայց ոչ իբրև տարածված հոգնակի վերջավորություն: Գրաբարին հատուկ են եղել **ք, ս, ց** հոգնակի վերջավորությունները, որոնցով միջին դարերում կազմվում էր միայն առանձին բառերի հոգնակին: Այդ հոգնակի վերջավորությունների իմաստը մթազնվել էր, այդ պատճառով էլ նրանց փոխարեն սկսում են օգտագործվել վերոհիշյալ հոգնակի վերջավորությունները, որոնցից ամենատարածվածը **եր** հոգնակի մասնիկն էր, որով կազմվում էր բազմաթիվ բառերի հոգնակին: Այդ հոգնակի վերջավորության սկզբնական ձևը

եղել է **եար**, որով կազմվել են գրաբարում մի շարք բառերի հոգնակիները, ինչպես՝ որեար, վանեար, իշեար և այլն: Հետագայում հայերենի հնչյունափոխական կանոնների համաձայն **եա** երկբարբառը պարզացել և դարձել է **ե**, որի հետևանքով ստացել ենք **եր** հոգնակի վերջավորությունը, որը հետագայում գործածվելով **նի** հոգնակի մասնիկի հետ՝ կազմել է **ներ** (նի+եր) հոգնակի վերջավորությունը: **եա**-ի հնչյունափոխությունը միջին դարերում օրինաչափ երևույթ է եղել ո՛չ միայն բառամիջում, այլև մի շարք բառերի վերջին վանկում:

Միջին դարերում համարյա բոլոր միավանկ բառերի հոգնակին կազմվել է **եր** վերջավորությամբ, ինչպես՝ ազգ-ազգեր, տուն-տներ, աղ-աղեր և այլն: Բայց **եր** վերջավորությամբ կազմվել է նաև բազմաթիվ բազմավանկ բառերի հոգնակին, ինչպես՝ վաճռական-վաճռուներ, գրագիր-գրագրեր, բժշկարան-բժշկարաներ, բժշկապետ-բժշկապետեր և այլն:

Միջին հայերենում չի տարբերվել միավանկ և բազմավանկ բառերի հոգնակին կազմելու եղանակը. և՛ միավանկ, և՛ բազմավանկ բառերի հոգնակին կազմվել է **եր** վերջավորությամբ: Միայն հետագայում, երբ սկսել է գիտակցվել նաև **ներ** հոգնակի վերջավորությունը, տարբերություն է դրվել միավանկ և բազմավանկ բառերի հոգնակիներ կազմելու եղանակի մեջ և օգտագործվել է **եր** վերջավորությունը միավանկ, իսկ **ներ**՝ բազմավանկ բառերի հոգնակին կազմելու համար: Այդ տարբերակումը ունի մի շարք պատճառներ, որոնցից մեկը, մեր կարծիքով, այն է, որ միջին դարերում միավանկ բառերի գերակշռող մեծամասնության հոգնակին կազմվում էր **եր**-ով, իսկ բազմավանկ բառերինը՝ **եր**-ից բացի, նաև մյուս հոգնակիակերտ մասնիկներով: Դրանից բացի, մեր կարծիքով՝ դեր է խաղացել նաև բարեհնչյունության պահանջը և երրորդ՝ մեր ազգային լեզվի հիմքում ընկած բարբառի մեջ **ներ** հոգնակի վերջավորության տարածված լինելու հանգամանքը: **եր** և **ներ** հոգնակի վերջավորությունների տարբերակումը կատարվել է XV-XVI դարերից հետո:

Մյուս հոգնակի վերջավորություններից տարածված է նաև **նի** հոգնակիակերտ մասնիկը, որը **անի** ձևով եղել է նաև գրաբարում, ինչպես՝ ազատանի, աւագանի, սամականի և այլն: Միջին հայերենում ընկել է **անի** հոգնակիակերտ վերջավորության **ա**-ն, որը հոգակապի դեր է կատարել վերոհիշյալ և նման կապակցություններում: Միջին հայերենում **նի** վերջավորությամբ կազմվել է ինչպես հայերեն,

Նույնպես և Նոր փոխառված երկվանկ բազմաթիվ բառերի հոգնակին, օրինակ՝ ալոռայնի, արոյննի, իրիցնի, խելալքնի, թաթարնի, ճառահնի, (վիրաբույժների, նաւտրնի, նոպայնի, գլուխնի, գրաստնի, ըռուակնի, շարայնի, բժշկնի, բլթնի, Նշաննի, պտղնի և այլն: Սակայն **նի** հոգնակիակերտ վերջավորությունը հենց միջին դարերից սկսում է մթազնվել և կորցնել իր հոգնակիության իմաստը: Այդ պատճառով էլ այն բառերը, որոնց հոգնակին կազմվում էր **նի**-ով, սկսում են ընդունել նաև **եր** վերջավորությունը, որը ձուլվում է **նի**-ի հետ և կազմում **ներ** հոգնակիակերտ մասնիկը:

Վի վերջավորությամբ կազմվել են գլխավորապես այնպիսի բառերի հոգնակիներ, որոնք երկակի թվի գաղափար են արտահայտել, օրինակ՝ աչվի, ձեռվի, ոտվի, դմվի և այլն: Բայց այդ կանոնը համապարփակ չէր, կային նաև այդ վերջավորությամբ հոգնակի կազմող այնպիսի բառեր, որոնք երկակի թվի գաղափար չէին կարող արտահայտել, օրինակ՝ տնվի, շնվի և այլն: Այդ հոգնակիակերտ վերջավորությունը նույնպես միջին դարերում սկսում է կորցնել իր իմաստը և ձուլվել բառին, որի պատճառով հաճախ այդ վերջավորությանը ավելանում են նաև այլ հոգնակիակերտ մասնիկներ, ինչպես՝ ձեռուրներ, աչվրներ և այլն:

Մնացած հոգնակի վերջավորություններից **ան**, **տի**, **վտի** և **ստանը** գործածվում էին շատ քիչ բառերի հետ: Նրանցից **տի**-ն գալիս է դեռ շատ հնուց. հինգերորդ դարի մատենագրության մեջ մի շարք անգամ վկայված է այդ վերջավորությունը, ինչպես՝ մանկտի, ոսկրոտի, փորոտի և այլն: Նույնը կարելի է ասել նաև **ան** հոգնակի վերջավորության մասին: Այդ հոգնակի վերջավորություններով միջին հայերենում կազմվում էր մի շարք բառերի հոգնակին, ինչպես՝ քուրվտի, կնկտի, այրկտի, ծակտի, տիրվտի, թիան, իշան, լուան (լվեր), ձվան և այլն:

Ստան հոգնակի վերջավորությունը կազմված է հոգնակիություն ցույց տվող մի քանի ածանցներից՝ **ս**-ից, **տ**-ից և **ան**-ից: Միջին հայերենում այդ ածանցով կազմվում է մի շարք բառերի հոգնակին, ինչպես՝ ըմբելեստան, տեղեստան, խմելեստան, հայրենեստան, տարեստան, մորեստան, ուտելեստան, ոսկեստան, էքեստան և այլն: Բերված օրինակներից երևում է, որ այդ վերջավորությամբ, կազմվել է գլխավորապես այն բառերի հոգնակին, որոնք վերջացել են **ի**-ով և երբեմն էլ ունեցել **ք** հոգնակի վերջավորությունը. ինչպես՝ խմելի-ք,

ըմպելի-ք, հայրենի-ք, տեղի-ք, ոսկի-ք և այլն: Այս օրինակներից պարզվում է **ս**-ի ծագումը: Հայերենում **ք** ունեցող մի շարք բառեր ածանցվելիս կամ բաղադրվելիս **ք**-ն փոխել են **ս**-ով, այսինքն՝ բաղադրվել են հայցական հոլովով, ինչպես՝ ծախք-ծախսել, օրենք-օրենսուսույց-օրենսդիր, մեղք-մեղսակից-մեղսաբեր-մեղսամած-մեղսասեր և այլն: Այդ ձևով կազմվել է **ստան** ածանցը. այն բառերը, որոնք ունեցել են իրենց քերականական իմաստը մթազնած **ս** հոգնակի վերջավորությունը, ընդունել են **տան** հոգնակի վերջավորությունը, որը իր հերթին կազմված է **տի** և **ան** հոգնակիակերտ մասնիկներից:

Բացի այս հոգնակի վերջավորություններից, ինչպես ասացինք, միջին հայերենում տարածված է եղել նաև **ք** հոգնակի վերջավորությունը: Նրանով, ինչպես մեր մի շարք բարբառներում, կազմվել է գլխավորապես այն բառերի հոգնակին, որոնք վերջացել են **ա**-ով, **ե**-ով, **ի**-ով, օրինակ՝ ծառայ-ծառայք, վկայ-վկայք, ակռայ-ակռայք, բազե-բազեք, պախրե-պախրեք, որդի-որդիք, տանեցի-տանեցիք, գինի-գինիք և այլն: Բացի այդպիսի բառերից, **ք**-ով կազմվում էր նաև մի շարք այլ բառերի և դերանունների հոգնակին, ինչպես՝ ծնողք, եղբարք, նաքա, այդոք, այնոք և այլն:

Սակայն **ք** հոգնակի մասնիկը մի շարք դեպքերում արդեն կորցրել էր իր հոգնակի իմաստը և հանդես էր գալիս իբրև ածանց, օրինակ՝ ձեռք, զրկանք, աշխարիք, հագնելիք, ցանելիք, ուտելիք և այլն:

Միջին հայերենում գոյական անունների հայցական և ուղղական հոլովների հոգնակիները ձևով նույնն էին, այդ պատճառով էլ չէր պահպանվել հայցական **ս**-ն նույնիսկ այն դեպքերում, երբ բառերի հոգնակին կազմվում էր **ք** վերջավորությամբ, օրինակ՝ զվանք, գիրքն, զշուրք, զաղօթքն, զկարգք, զբերանքն և այլն:

Միջին հայերենի հոգնակի բոլոր վերջավորությունները և կիրառությունը պահպանվել են մեր տարբեր բարբառներում: Այդ հանգամանքը ցույց է տալիս, որ միջին դարերում խիստ տեղաշարժ էր կատարվում մեր բարբառների մեջ, որոնց շատ իրողություններ ներթափանցում էին գրական լեզվի սահմանները:

Միջին հայերենի գոյական անունների գերակշռող մեծամասնությունը ենթարկվում է արտաքին թեքման հոլովման: Ներքին թեքման ենթարկվող բառերի մեծ մասն էլ իր ներքին թեքումը չի պահպանում բոլոր հոլովներում: Գործիական հոլովում նրանք ունենում են **ով** վերջավորությունը: Միջին հայերենը չունի խառն հոլովում, եթե նկատի չունենանք բոլոր բառերի գործիական հոլովի **ով** վերջավորությունը:

Միջին հայերենում, ինչպես արդեն նշել ենք, կան **ի, ո, ու, ա, և** հոլովումները, որոնք տարբերվում են միայն եզակիում, հոգնակիները գլխավորապես ենթարկվում են **ո** հոլովման:

Ի հոլովման ենթարկվում են՝

ա) Ա-ով վերջացող բազմաթիվ բառեր, ինչպես՝ ակռայ-ակռայի, արքայ-արքայի և այլն:

բ) Ենթակայական և հարակատար դերբայները, ինչպես՝ ծախող-ծախողի, ծաղկող-ծաղկողի, կշտած-կշտածի, կարգած-կարգածի և այլն:

գ) **Վոր, լոր** ածանց ունեցող բառերը, ինչպես՝ ձիաւոր-ձիաւորի, կապվոր-կապվորի և այլն:

դ) Միջին դարերում փոխառված օտար բառերի մեծ մասը, ինչպես գաֆրան-գաֆրնի, խիար-խիարի, քաֆուր-քաֆուրի, ֆալեճ-ֆալեճի, ֆալաք-ֆալաքի և այլն:

ե) Բազմաթիվ հասարակ անուններ, որոնց որոշ մասը գրաբարում այլ հոլովման է ենթարկվել. ինչպես՝ բան-բանի, բերդ- բերդի, բերան-բերնի, պայման-պոմնի, ծառ-ծառի, կաքաւ-կաքվի, խնձոր-խնձորի, արոյն (արիւն)-արոյնի, ձոյն (ծիւն)-ծոյնի, ոսկոր-ոսկրի, մեղր-մեղրի, աղբոյր (աղբիւր)-աղբոյրի և այլն: Բերված օրինակների մեջ կան այնպիսի բառեր, որոնք գրաբարում ենթարկվում էին ներքին և արտաքին թեքման այլ հոլովումների. այսպես, օրինակ՝ բերան, ծառ, ենթարկվում էին **ո** հոլովման, արիւն, ծիւն՝ ներքին թեքման **ա** հոլովման, աղբիւր ոսկոր՝ ներքին թեքման **ե** հոլովման և այլն:

Ի հոլովման ենթարկվող բառերի եզակի ուղղական և հայցական հոլովները ունեն զրո, սեռականը և տրականը՝ **ի**, բացառականը՝ **է**, գործիականը՝ **ով**, իսկ հոգնակին՝ **եր, երոյ, երոյ, երով** վերջավորություններ, օրինակ՝

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	բան	բաներ
Սեռ.	բան-ի	բաներոյ
Տր.	բան-ի	բաներոյ
Հայց.	գբան	գբաներ
Բաց.	ի բան-է	ի բաներոյ
Գործ.	բան-ո վ	բաներով

Միջին հայերենում պահպանված են հայցական և բացառական հոլովների նախդիրները

Ո հոլովման ենթարկվում են՝

ա) Մի շարք հասարակ անուններ, ինչպես՝ անասուն – անասնոյ, կես – կիսոյ, գլուխ – գլխոյ և այլն

բ) Անորոշ դերբայները, ինչպես՝ գալ–գալոյ, անցնել–անցնելոյ, ուտել–ուտելոյ և այլն

գ) Շատ օտար բառեր, ինչպես՝ պալլ – պալլոյ, անսիգ–անսիգոյ և այլն

դ) Այն բառերի մեծ մասը, որոնք վերջանում են **ի-ով**, ինչպես ձի – ձիոյ, աղաւնի–աղաւնոյ–աղւնոյ, եկեղեցի–եկեղեցոյ, գինի–գինոյ և այլն **ի** վերջացող բազմական բառերի թեք հոլովներում **ի-ն** չի վերածվում **ւ-ի**, ինչպես գրաբարումն էր

Ո հոլովման ենթարկվող մի շարք բառեր միջին հայերենում ունեն **ջ** հոլովակազմիչը, որը ըստ երևույթին տարածվել է **կին**, **մի** բառերի **ոջ** վերջավորության անալոգիայով, ինչպես՝ ընկեր–րնկերոջ տեր–տիրոջ, քոյր–քուրոջ, այրակին–այրակնոջ և այլն Այս հոլովման ենթարկվող մի շարք բառեր գրաբարում ենթարկվել են զարտուղի հոլովման

Ո հոլովման ենթարկվող բառերի ուղղական և հայցական հոլովները ունեն զրո վերջավորություն, սեռական, տրական և բացառական հոլովները **ոյ** և գործիականը՝ **ով** վերջավորություն **ջ** հոլովակազմիչ ունեցող բառերի եզակի թեք հոլովներում պահպանվում է **ջ-ն**, իսկ բացառականը ունենում է նաև **է** վերջավորությունը օրինակ՝

	Եզակի		Հոգնակի	
Ուղղ.	գլուխ	քոյր	գլխիս	քուրվտի
Սեռ.	գլխոյ	քուրոջ	գլխնոյ	քուրվտոյ
Տր.	գլխոյ	քուրոջ	գլխնոյ	քուրվտոյ
Հայց.	զգլուխ	զքոյր	զգլխիս	զքուրվտի
Բաց.	ի գլխոյ	ի քուրոջէ	ի գլխնոյ	ի քուրվտոյ
Գործ.	գլխով	քուրոջով	գլխնով	քուրվտով

Այս հոլովման ենթարկվող բառերի մի մասը ենթարկվում էր նաև **ու** հոլովման, որը ցույց է տալիս, որ միջին դարերից ուժեղանում է **ո** հոլովման **ու**-ի վերածվելու պրոցեսը, թեև դրան զուգընթաց մենք նկատում ենք նաև **ո** հոլովման տարածումը հատկապես ազգակցություն ցույց տվող բառերի վրա:

Ու հոլովման ենթարկվում են մի շարք հասարակ անուններ, ինչպես՝ ագռաւ, առոյծ, խրատ, հաւ, շաբաթ, չաք, վաճռկան, ժամ, ծով, գրաւկան, լապստակ, կաքաւ, կտաւ և այլն:

Ու հոլովման ենթարկվող բառերի բացառականը ունենում է **է**, իսկ գործիականը՝ **ով** վերջավորություն մնացած հոլովները կազմվում են ընդհանուր սկզբունքով, օրինակ՝

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	ճորտ	ճորտեր
Սեռ.	ճորտու	ճորտերոյ
Տր.	ճորտու	ճորտերոյ
Հայց.	զճորտ	զճորտեր
Բաց.	ի ճորտէ	ի ճորտերոյ
Գործ.	ճորտով	ճորտերով

Այս հոլովման ենթարկվող բառերի որոշ մասը ենթարկվում էր նաև **ի** հոլովման, որից պարզվում է, որ **ի** հոլովման շրջանակները միջին դարերից ընդարձակվում էին:

Միջին հայերենում **ի**, **ո**, **ու** հոլովումները ունեին միայն արտաքին թեքում:

Ա արտաքին թեքման հոլովման ենթարկվող բառերը միջին

հայերենում շատ սահմանափակ էին, եթե չասենք, թե համարյա վերացել էր այդ հոլովումը

Սակայն **ա** ներքին թեքման հոլովման ենթարկվող բառերը միջին հայերենում բավականաչափ շատ էին **Ա** ներքին թեքման հոլովման ենթարկվում էին՝

ա) **Ութին** ածանց ունեցող բառերը, ինչպես՝ տերութիւն, պարոնութիւն և այլն

բ) **Իկ** վերջածանց ունեցող մի շարք բառեր, ինչպես՝ մարդիկ, այրիկ, կնիկ և այլն

գ) **Ն**-ով վերջացող այն բառերը, որոնց մեջ **ն**-ին նախորդում էր որևէ բաղաձայն, ինչպես՝ մուկն, ծուկն, ամառն, դուռն և այլն

դ) Մի շարք այլ բառեր, ինչպես՝ շուն, տուն, գորտ, փայծաղ և այլն

Այդ հոլովմանը ենթարկվող բառերի ուղղականն ու հայցականը, ինչպես մյուս հոլովումների մեջ, ունեն գրո վերջավորություն, սեռականն ու տրականը՝ **ան-եան**, բացառականը՝ **է**, իսկ գործիականը՝ **ով** կամ **ով** վերջավորություն, օրինակ՝

Եզակի				
Ուղղ.	տերութիւն	կնիկ	շուն	ծուկն
Սեռ.	տերութեան	կնկան	շան	ծկան
Տր.	տերութեան	կնկան	շան	ծկան
Հայց.	գտերութիւն	զկնիկ	զշուն	զծուկն
Բաց.	ի տերութենէ	ի կնկանէ	ի շանէ	ի ծկնէ
Գործ.	տերութենով	կնկով	շնով	ծկով

Հոգնակի				
Ուղղ.	տերութեներ	կնկտի	շնվի	ծկներ
Սեռ.	տերութեներոյ	կնկտոյ	շնվոյ	ծկներոյ
Տր.	տերութեներոյ	կնկտոյ	շնվոյ	ծկներոյ
Հայց.	գտերութեներ	զկնկտի	զշնվի	զծկներ
Բաց.	ի տերութեներոյ	ի կնկտոյ	ի շնվոյ	ի ծկներոյ
Գործ.	տերութեներով	կնկտով	շնվով	ծկներով

Ա ներքին թեքման հոլովման համակարգը, ինչպես երևում է բերված օրինակներից, գգալի չափով տարբերվում է գրաբարի համապատասխան հոլովումների համակարգից Թեքականությունը ընդհանրապես վերացել է այդ բառերի հոգնակիում, իսկ եզակի հոլովներում էլ պահպանվել է մասնակի չափով եզակի գործիական հոլովի **օմ** վերջավորությունը մի շարք բառերում առաջացել է միմյանց հետ սերտորեն կապված երկու գործոնների հետևանքով, այդ հոլովի **ա** հոլովիչը արտասանվել է **օ**, որը ազդել է **բ** հոլովակազմիչի անկման վրա, իսկ վերջինիս անկման հետևանքով **բ** հոլովակազմիչի ֆունկցիան անցել է **ն**-ին, որը արմատական հնչյուն է եղել, իսկ **ն**-ն **բ**-ի ազդեցությամբ վերածվել է **մ**-ի

Չարտուղի հոլովման ենթարկվող բառերը նույնպես միջին հայերենում տարբեր ձևավորում ունեին Այդ հոլովմանը ենթարկվող շատ բառեր արտաքին թեքման կանոնավոր հոլովման էին ենթարկվում, ինչպես քոյր-քուրոջ, տեր-տիրոջ և այլն Հայր, մայր, եղբայր և դրանցով բաղադրված բառերը, միայն մասնակիորեն էին պահպանել ներքին թեքումը Օր բառը կրել էր ձևական որոշ փոփոխություններ, որոնք անալոգիայով տարածվում էին նաև ժամանակ ցույց տվող մի շարք բառերի վրա օրինակ՝

Ուղղ.	հայր	մայր	եղբայր	օր
Սեռ.	հաւր	մայր	եղբաւր	աւուր
Տր.	հաւր	մայր	եղբաւր	աւուր
Հայց.	գհայր	գմայր	գեղբայր	գօր
Բաց.	ի հօրէն	ի մօրէն	յեղբօրէն(ն)	յօրվնէ
Գործ.				օրով

Օր բառի բացառական հոլովի **վնէ** վերջավորությունը ենթադրում է **վա** (վան) հոլովումը, որը միջին դարերից սկսած գոյություն է ունեցել հայերենում իբրև ժամանակ ցույց տվող մի շարք բառերի հոլովական վերջավորություն Այդ հոլովման հետքերը կան նաև գրաբարում Այդ հոլովումը ավելի տարածվում է ժամանակակից հայերենում, որով կազմվում է ժամանակ ցույց տվող բառերի մեծ մասի հոլովումը

Այսպիսով, գոյական անունների հոլովումը միջին հայերենում դրսևորվում է հատուկ օրենքներով, որոնք շատ կոդավորված գրաբարի հետ կապվելով հանդերձ՝ հիմնականում նոր են և կապված հայոց լեզվի զարգացման տվյալ շրջանի կենսունակ տեղեկեցությունների հետ: Հայոց լեզվի զարգացման ընթացքում միշտ էլ նկատվել է քերականական բազմազան ձևերի կրճատման պրոցես. այդ ուժեղ կերպով զգացվել է միջին հայերենի հոլովման համակարգի մեջ: Ինչպես տեսանք, միջին հայերենում համարյա թե չկան զարտուղի հոլովումներ, բառերի մեծ մասը ենթարկվում է ի հոլովման, անհամեմատելի չափով միօրինակ են հոլովական վերջավորությունները, իսկ հոգնակիում համարյա թե վերացել են տարբեր հոլովումները: Միջին հայերենի հոլովական համակարգը իր ընդհանուր դրսևորումներով ավելի շատ մոտ է ժամանակակից հայերենին և մեր բարբառներին, քան գրաբարին: Այդ նշանակում է, որ միջին հայերենի հոլովման համակարգը գրաբարի համեմատությամբ նոր որակ էր ներկայացնում: Մակայն նա չէր նույնանում նաև ժամանակակից հայերենի հոլովման համակարգի հետ, թեև, ինչպես ասացինք, զգալի չափով մոտ էր նրան: Հետևաբար, միջին հայերենի հոլովական համակարգը պայմանավորված էր հայոց լեզվի զարգացման միջին շրջանին հատուկ այնպիսի օրենքներով, որոնք շատ արտահայտություններով տարբերվում էին ինչպես գրաբարի, նույնպես և ժամանակակից հայերենի զարգացման օրենքներից:

բ) ԱԾԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Միջին հայերենում ածականները նախադաս էին դրվում և չէին համաձայնեցվում: Այդ նշանակում է, որ գրաբարի շարահյուսության հիմնական կանոններից մեկը՝ ածականների հետադաս գործածությունն ու համաձայնեցումը, հատուկ չէր միջին հայերենին: Այդ հանգամանքը ո՛չ միայն վերացրել էր ածականների հոլովումը, այլև փոխել նախադասության կառուցվածքը:

Միջին հայերենում, ինչպես նաև հայերենի զարգացման բոլոր շրջաններում, ածականները ունեին իրենց աստիճանները՝ դրական, բաղդատական և գերադրական: Գրաբարում ածականի բաղդատական աստիճանը կազմվում էր **-գոյն** վերջածանցով և **քան** նախադրությամբ ու համեմատելի առարկայի հայցական հոլովով:

Միջին հայերենում **-գոյն** վերջածանցը իբրև ածականի բաղդատական աստիճանը ցույց տվող ձևույթ չէր գործածվում՝ Նրա փոխարեն կիրառվում էր **այլ** բառը, որը հանդես էր գալիս նաև իբրև համադասական շաղկապ։ **Քան** նախադրությունը և **ց** նախդիրը ձուլվել էին միմյանց, որի հետևանքով ստացվել էր **քանց** նախադրությունը, որով կազմվում էր միջին հայերենի ածականի բաղդատական կամ համեմատական աստիճանը։ **Քանց** նախադրության հետ երբեմն գործածվում էր նաև **զ** նախդիրը, որը դրվում էր համեմատելի առարկայի վրա՝ օրինակ՝ Աղւոր, իմ հագար աղւոր, դրախտին բեհեշտի խնծոր, Շաքրէ եղեգին մէջէն ես քաշած **քանց** զլատիֆդ աղւոր¹։ Գիկիախումն մաղըսկաթ քան զդիւահար ու **այլ** չար է²։ Դու նստար ի նորա տեղն **այլ** խիստ չար³ և այլն։ **Այլ** բառը հնչյունափոխվելով վերածվել է **ել**-ի, որը գործածվում է ժամանակակից հայերենում իբրև համադասական շաղկապ։

Միջնադարյան հայ գրականության մեջ հանդիպում ենք նաև ածականի բաղդատական աստիճանը կազմելու այն եղանակին, երբ համեմատելի բառը արտահայտվում է բացառական հոլովով, իսկ ածականը՝ ուղիղ ձևով։ Ածականների համեմատական աստիճանը կազմելու այդ եղանակը շատ տարածված է հայերենի բարբառներում՝ Նա կիրառվում է նաև ժամանակակից հայերենում, օրինակ՝ դու նրանից մեծ ես, Վարդգեսը Մինասից բարձր է, և այլն։

Ածականի գերադրական աստիճանը միջին հայերենում կազմվում է **խիստ**, **ամեն**, **շատ** և այլ բառերով՝ օրինակ խիստ ամուր, ամենագեղեցիկ, ամենախոնարհ, ամենաբարձր, ամենազօր։ Միջին հայերենում, երբեմն **այլ** բառով կազմվում է ածականի գերադրական աստիճանը, թեև այդ ընդհանուր տարածում չի գտել։ Որակական ածականի գերադրական աստիճանի կազմությունը ընդհանուր առմամբ նմանվում է ժամանակակից հայերենի ածականների գերադրական աստիճանի կազմությանը, բայց դրա հետ միասին միջին հայերենում կան գրաբարյան ձևեր, որոնց գործածությունը կապված է հին հայերենի գործածության ավանդույթների հետ և այդ պատճառով էլ լայն տարածում չի ստացել հետագայում։

Ածականների աստիճանների կազմությունը ինչպես գրաբարում,

¹ Մ. Մկրյան, XIII-XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, էջ 138

² Նույն տեղը, էջ 92

³ Նույն տեղը, էջ 344

նույնպես և միջին հայերենում ու ժամանակակից հայերենում տարբերվում է հնդեվրոպական լեզուների որակական ածականների աստիճանների կազմությունից։ Հնդեվրոպական լեզուները ածականի բաղդատական աստիճանը կազմում են -yes -tero, իսկ գերադրականը՝ -isto վերջածանցներով, որոնցից և ոչ մեկն էլ պահպանված չէ հայերենում։ Այդ երևույթը ցույց է տալիս, որ հայերենը ինչպես իր քերականության մյուս կատեգորիաներով, նույնպես և ածականների աստիճանների կազմությամբ զգալի չափով հեռացել է հնդեվրոպական հիմք-լեզվից գրի առնվելուց դեռ շատ ու շատ առաջ։ Հայերենի ածականների աստիճանների կազմության եղանակը առաջացել է հայերենի զարգացման ընթացքում նրան հատուկ այն օրենքներով, որոնցով իրագործվել է հայոց լեզվի քերականության կատարելագործումը։ Այդ օրենքները պահպանվել են հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններում, թեև հայ ժողովրդի պատմության տարբեր ետապներում ունեցել են արտահայտման տարբեր ձևեր։

գ) ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Թվականները միջին հայերենում նախադասության մեջ հանդես են գալիս իբրև որոշիչ, որը դրվում է որոշյալից առաջ և չի համաձայնեցվում։ Թվականները միջին հայերենում և աշխարհաբարում հոլովվում են միայն գոյականաբար գործածվելիս։

Միջին հայերենը ունի քանակական, դասական, բաշխական, կոտորակային, բազմապատկական և այլ թվականներ, որոնց մեջ հետաքրքրական ձևափոխությունների են ենթարկվել նախ՝ քանակական թվականները, ապա՝ դասական և մյուս թվականներից շատերի կազմության եղանակը։

Միջին հայերենում 1-10 թվականները արտահայտվում են հետևյալ կերպ՝ մեկ, երկու (երկուք), երեք (իրեք), չորս, հինգ, վեց, իոթն, ութ, ինն, տասն։ Գրաբարի մի թվականը միջին դարերում գործածվում էր անորոշ հոդի իմաստով և այդ պատճառով նրա փոխարեն սկսեց գործածվել այդ բառի ածանցված ձևը (միակ)։ Երեք բառը փոխվել էր իրեք, չորքը՝ չորս, իսկ եւթն՝ իոթն ձևերի։ Փոփոխությունների էին ենթարկվել նաև 11-19 թվականները իրենց կազմությամբ։ Միջին հայերենում տասնյակները դրվել են առաջ և միավորները հետո, որոնք միացվել են շաղկապներով, օրինակ՝ տասնումեկ, տասն-

վերկու, տասնվիրեք, տասնուչորս, տասնուհինգ, տասնուվեց, տասն-
վիօթն, տասնվիթ, տասնվին Ինչպես երևում է բերված օրինակնե-
րից, **ու** շաղկապը ձայնավոր հնչյուններից առաջ դառնում էր **վ**

Դասական թվականները միջին հայերենում կազմվում էին **ում**
մասնիկով, որը, ինչպես ճիշտ կերպով նշել է պրոֆ Զ Աճառյանը,
նույնանում է հայերենի տրական և ներգոյական հոլովների **ում** վեր-
ջավորության հետ, որով կազմվել է դասական թվականների ներգո-
յական հոլովը նաև գրաբարում՝ այսպես՝ յեթներորդում ամսեանս,
ի վեցերորդում ամի, յուրերորդում ժամու և այլն¹ Այդ և նման բա-
ռերի մեջ կրճատվել է **երորդ** ածանցը և **ում**-ը իր վրա է վերցրել
դասական թվականի ֆունկցիան և այդ ձևով եթներորդ, վեցերորդ
և այլն դարձել են եթնում, վեցում և այլն դասական թվականներ²
Այս երևույթը առաջացել է հայերենի զարգացման օրինաչափու-
թյուններով և տարածվել հայոց լեզվի մի շարք բարբառներում

Բաշխական թվականները միջին հայերենում կազմվում են
կրկնությամբ և **-ական** վերջածանցով Բաշխական թվականների
կազմության այդ եղանակը, կարծեք թե, ընդհանուր է գրաբարին,
ժամանակակից հայերենին և հայոց լեզվի մի շարք բարբառներին,
ինչպես՝ երկու երկու, չորս չորս, հինգ հինգ, վեցական, ութական և
այլն Գրաբարում կան երկական, հնգական, միական և այլն
բաշխական թվականներ

Բազմապատկական թվականները միջին հայերենում կազմվում
են **տակ, պատիկ, ընդ մեկէ, հանչաք**, ինչպես նաև փոխառված **դուբլ**
(կրկին) բառերի օգնությամբ, ինչպես՝ վեց տակ, հինգտակ, հինգ
պատիկ, ութ պատիկ, ինն պատիկ, հինգ ընդ մեկէ (հնգապատիկ),
երկու հանչաք, չորս հանչաք, հինգ դուբլ և այլն Այդ բառերով
կազմվում են նաև մի շարք բարբառների բազմապատկական
թվականները ժամանակակից հայերենում տարածված է **պատիկ**
բառով նման թվականներ կազմելու միջոցը

Այդ բառերից յուրաքանչյուրը ունեցել է ինքնուրույն իմաստ, որը
մասամբ պահպանվել է նաև միջին հայերենում և այդ պատճառով էլ
առանձին է գրվել ժամանակակից հայերենում **պատիկ** բառը
ածանցի իմաստ է արտահայտում, այդ պատճառով էլ ձուլվել է
բառին, ինչպես հնգապատիկ, տասնապատիկ և այլն

¹ Զ. Աճառյան Լիակատար քերականություն հայոց լեզվի Ի 1, էջ 230

² Նույն տեղը էջ 290

Հանչաք բառը կազմված է **այն** և **չափ** բառերից յ նախդրով (յայն-չափ-ք>հանչաք), **դուրլ** բառը փոխառված է ֆրանսերենից, իսկ **տակ** բառը ժամանակակից հայերենում ինքնուրույնաբար գործածվող **տակ** բառն է, որը, ինչպես տեսանք, միջին հայերենում հանդես է գալիս իբրև բազմապատկական թվականներ կազմող մասնիկ:

Հայ գրականության մեջ միջին դարերում, ինչպես արդեն նշել ենք, զգալի կշիռ են ունեցել գիտական բովանդակություն ունեցող գրքերը, որոնց թվում նաև մաթեմատիկական գործերը: Այդ է պատճառը, որ միջին դարերում մշակվում է հանրամատչելի գիտական գրականության լեզու, ստեղծվում են տերմիններ գիտական շատ հասկացությունների համար: Մշակվում են նաև կոտորակային թվականներ արտահայտելու հատուկ ձևեր, որոնցից ամենատարածված կոտորակային թվերի հասկացությունները նկարագրական կամ վերլուծական միջոցներով արտահայտվել են. օրինակ՝ չորս բաժնեն մեկն՝ $\frac{1}{4}$, երեք բաժնեն երկուքն՝ $\frac{2}{3}$, յերեքեն մեկ՝ $\frac{1}{3}$, ի հինգեն մեկն՝ $\frac{1}{5}$ և այլն: Կոտորակային թվերը արտահայտվում էին նաև **-ակ** վերջածանցով, ինչպես՝ հնկակ՝ $\frac{1}{5}$, վեցակ՝ $\frac{1}{6}$, տասնակ $\frac{1}{10}$ և այլն. իբրև կոտորակային թվեր արտահայտելու բառեր գործածվում էին նաև **կես** և **չարեկ** (քառորդ) բառերը:

Միջին հայերենի կոտորակային թվերի արտահայտման կանոնները ինքնուրույն են և հատուկ միայն այդ շրջանի հայոց գրական լեզվին և հայերենի մի շարք բարբառներին:

Միջին դարերում թվերն արտահայտելու համար գործածվում էին այբուբենի տառերը իրենց թվական արժեքով:

Այսպիսով, հայերենի թվական անունները միջին դարերում ունեին իրենց արտահայտման ու կազմության ուրույն կանոնները, որոնք զգալի չափով տարբերվում էին ինչպես գրաբարի, նույնպես և ժամանակակից հայերենի թվական անունների օրինաչափություններից: Միջին դարերում գործում էին նաև գրաբարին հատուկ թվական անուններ և գրաբարի օրինաչափություններով կազմվում էին շատ թվական անուններ, սակայն այդ ձևերը կենսունակ չէին, հայերենի զարգացման տենդենցների հետ կապված չէին, այդ պատճառով էլ ավելի ու ավելի հազվադեպ էին դառնում ու գործածությունից դուրս ընկնում:

դ) ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈՒՈՎՈՒՄԸ

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Հայերենի դերանունները միջին հայերենում, ինչպես նաև բարբառներում ու գրաբարում, հանդես են գալիս միևնույն արմատներով: Սակայն իրենց ձևական արտահայտություններով ու հոլովական ձևերով հաճախ խիստ տարբերություններ են ունենում:

Միջին հայերենում, ինչպես նաև գրաբարում, դերանունները հոլովվում են երկու ձևով, մի մասը՝ գոյական անունների նման, իսկ մյուս մասը՝ դերանվանական հոլովմամբ:

Անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի (ես, դու) ուղղական և մյուս հոլովները ունեն տարբեր հիմքեր և հոլովվում են գրաբարից զգալի չափով տարբեր ձևերով, ինչպես՝

Գրաբար				
Ուղղ.	ես	դու	մեք	դուք
Սեռ.	իմ	քո	մեր	ձեր
Տր.	ինձ	քեզ	մեզ	ձեզ
Հայց	զիս	զքեզ	զմեզ	զձեզ
Բաց.	յինեն	ի քեն	ի մենք	ի ձենք
Գործ.	ինել	քել	մելք	ձելք

Միջին հայերեն				
Ուղղ.	ես	դու(ն)	մենք	դուք
Սեռ.	իմ	քո	մեր	ձեր
Տր.	ինձ	քեզ	մեզ	ձեզ
Հայց	զիս	զքեզ	զմեզ	զձեզ
Բաց.	յիսնէ (յիսմէ)	ի քեզէ (քեզնէ)	ի մեզէ (մեզմէ)	ի ձեզնէ (ձեզմէ)
Գործ.	յիսնով (յիսմով)	քեչնով (քեզմով)	մեզնով (մեզմով)	ձեզնով (ձեզմով)

Ինչպես երևում է աղյուսակից, միջին հայերենում պարզացել են անձնական դերանունների բացառական և գործիական հոլովները, վերացել այսպես կոչված «անկանոնությունները» և ավելի մոտեցվել գոյական անունների հոլովական վերջավորություններին: Անձնական դերանունների բացառական և գործիական հոլովների **մե** և **մով** վերջավորությունները ավելի ուշ շրջանի երևույթ են, որոնք տարածված են նաև **կը** ճյուղի մի շարք բարբառներում: Առաջին և երկրորդ դեմքերի դերանունների բացառական և գործիական հոլովները ունեն նաև ի մեզանէ, մեզանով, ի քեզանէ, քեզանով ձևերը: Հայերենում հիշյալ դերանունները հանդես են գալիս նաև հոլովական այլ ձևերով՝ ինծի (տրական), ինծիմէն (բաց.), ինծիմով (գործ.), մեզիմէն-մեզիմով, քեզի-քեզիմէն-քեզիմով, որոնք տարածված են **կը** ճյուղի մի շարք բարբառներում: Այս բազմազանությունները հաստատում են այն ենթադրությունը, ըստ որի միջին հայերենը դիտվում է իբրև իր կազմավորման ընթացքի մեջ գտնվող լեզու, որը չէր կայունացել իր շատ օրինաչափություններով, թեև դրանց մեջ ուրվագծվում էին այդ լեզվի զարգացման հեռանկարները և նպաստավոր պայմանների առկայության դեպքում կայունանալու հատկություններ ցույց տվող քերականական կանոնները:

Անձնական դերանվան երրորդ դեմքի հոլովումը նույնպես գրաբարի համապատասխան դերանվան հոլովումից տարբերվում է. անձնական դերանվան երրորդ դեմքի համար գործածվում է **ինք** բառը (գրաբարում՝ ինքն), որն ունի հետևյալ ձևերը.

Ուղղ.	ինք	իրենք
Սեռ.	իրեն, իր	իրենց
Տր.	իրեն, իր	իրենց
Հայց	զինք	զիրենք
Բաց.	յիրմէ	իրենցնէ, յիրենցմէ
Գործ.	իրմով	իրենցով, իրենցմով

Անձնական դերանվան երրորդ դեմքը իր հոլովական ձևերով նոր երևույթ էր հայոց լեզվի զարգացման պատմության մեջ. հին հայերենում այդ դերանունը ուներ տարբեր հոլովում (ինքն, ինքեան, զինքեան, յինքեան, ինքեամբ, կամ իւր, յիւրմէ, իւրեաւ) և տարբեր կիրառություն: Գրաբարում այդ դերանունը գործածվում էր առաջին

և երկրորդ դեմքերի դերանունների հետ՝ ավելի ընդգծելով այդ դերանունների իմաստը, օրինակ՝ ես ինքն, դու ինքն: Միջին հայերենում այդ դերանվան այդպիսի գործածություն համարյա թե չի հանդիպում, եթե նկատի չունենանք գրաբարի կանոնները պահպանել ցանկացող հեղինակների գործերը:

Միջին հայերենի անձնական դերանունների հոլովական նոր ձևերը առաջացել են հայերենի զարգացման օրենքներով և կապ չունեն օտար որևէ ազդեցության հետ: Այսպես, օրինակ՝ **ինքն** դերանվան սեռական և տրական հոլովի **իր** և **իրեն** ձևերը, որոնցից կազմվում են նաև մյուս հոլովները, առաջացել են **իր** դերանունից, **ւ-ի** կորուստով և **են** ածանցի ավելացումով: Այդ **են** ածանցը հետագայում հոլովական վերջավորության է վերածվել: Այդ դերանվան մեջ **ւ-ն** արմատական հնչյուն է եղել, որը հայ ժողովրդի զարգացման ավելի ուշ շրջանում չի պահպանել իր սկզբնական արտասանությունը և այդ պատճառով էլ ընկել է, այսինքն՝ **իւ** երկբարբառը վերածվել է պարզ **ի** հնչյունի կամ որոշ բարբառներում շրթնացած **ու-ի**: Այդ պրոցեսը ավելի ուժեղ է արտահայտվել միջին հայերենում:

Մեր շատ բարբառներում և ժամանակակից հայերենում գործածվում է **իր** դերանունը իբրև ստացական դերանուն՝ պահելով միջին շրջանի հոլովական վերջավորությունները՝ որոշ ձևափոխումներով:

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ցուցական դերանունները միջին հայերենում հանդես են գալիս մի շարք ձևերով, որոնցից ավելի տարածված են՝ այս, այդ, այն, սա, դա, նա, իսա, իդա, ինա դերանունները: Այդ դերանունների տարատեսակները, ինչպես և հայերենի ցուցական դերանունները ընդհանրապես, կազմված են **ս**, **դ**, **ն** արմատներից և համապատասխան մասնիկներից, որոնք հայերենի զարգացման տարբեր շրջաններում և բարբառներում զանազան ձևափոխությունների են ենթարկվում:

Միջին հայերենում ցուցական դերանունները հոլովվում են գրաբարյան համապատասխան դերանունների հոլովումներից տարբեր կանոններով: Նրանք չունեն սեռական և տրական հոլովների համար տարբեր ձևեր, բացառական և գործիական հոլովները բոլոր դեպքերում կազմվում են տրական հոլովից և բոլոր դերանունները ունեն

միևնույն վերջավորությունները: Սեռական և տրական հոլովի հոլովակազմիչը **ր** է, որը հանդես է գալիս տարբեր ձայնավորների հետ: Բացառական հոլովը ունի **մէ** վերջավորություն, իսկ գործիականը՝ **ով**: Այդ վերջավորություններից առաջ երբեմն ավելանում են տարբեր հնչյուններ: Այդ դերանունները ունեն հոլովական հետևյալ արտահայտությունները.

Ուղղ.	այս	այտ (այդ)	այն	այսոնք	այտոնք	այնոնք
Սեռ.	այսոր	այտոր	այնոր	այսոց	այտոց	այնոց
Տր.	այսոր	այտոր	այնոր	այսոց	այտոց	այնոց
Չայց.	զայս	զայտ	զայն	զայսոնք	զայտոնք	զայնոնք
Բաց.	յայսոր	յայտոր	յայնոր	յայսոց	յայտոց	յայնոց
Գործ.	այսով	այտով	այնով	այսովք,	այտովք,	այնովք ¹

Այդպիսի կանոնավոր հոլովում ունեն նաև սա, դա, նա, դերանունները, թեև նրանց մի քանի հոլովների համապատասխան ձևերը չեն ավանդված, օրինակ՝

Ուղղ.	սա	դա	նա	սաքա	դաքա	նաքա
Սեռ.	սարա	դարա	նարա	սացա	դացա	նացա
Տր.	սարա	դարա	նարա	սացա	դացա	նացա
Չայց.	զսա	զդա	զնա	զսաքա	զդաքա	զնաքա
Բաց.	-	-	-	ի սացմե	ի դացմե	ի նացմե
Գործ.	-	-	-	-	-	-

Մյուս ցուցական դերանունները՝ իսա, իդա, ինա, ունեին միայն ուղղական և հայցական հոլովները՝ իսա, իտա, ինա, զիսայ, զիտայ, զինայ, թեև հանդիպում են նաև մնացած հոլովների համար առանձին, բայց չտարածված ու ընդհանուր գործածություն չգտած ձևեր, ինչպես՝ իտվոր, իսվոր, իտվորմե, իսվորմով, իտվորմով (իտվորով), իտր, իդր, ինր և այլն:

Վերոհիշյալ իսա, իտա, ինա դերանունները կազմվել են այս, այդ, այն դերանուններից՝ **այ** երկբարբառի հնչյունափոխմամբ, ինչպես գոյական անունների մեջ է այդ կատարվել որոշ դեպքերում (այգի-իգի, այրիկ-իրիկ և այլն):

¹ Այս դերանունների եզակի տրական հոլովը կարող է ունենալ նաև **ում** (այնում), բացառականը՝ **մանե** (յայնմանե) վերջավորությունը:

Ցուցական դերանունները հնչյունափոխության են ենթարկվել նաև ժամանակակից հայերենում և հատկապես մեր բարբառներում, ինչպես՝ էս, էդ, են և այլն Յավանաբար էս, էդ, են ձևերից առաջացել են խոր, խորր, ինոր դերանվանական բառաձևերը

Ցուցական դերանունների հոգնակին կազմվում է **ք, ց** հոգնակի վերջավորությունների միջոցով, որոնք ընկնում են հոլովական վերջավորությունից առաջ, եթե իրենք հոլովական ֆունկցիա չեն արտահայտում

Այս համառոտ տեսությունից երևում է, որ միջին հայերենի անձնական և ցուցական դերանունները իրենց հոլովական վերջավորություններով ու մասամբ էլ կիրառական արժեքով տարբերվում են գրաբարի և ժամանակակից հայերենի համապատասխան դերանուններից Նրանք զարգացման հատուկ կանոններով են դրսևորվել, որոնք շատ կոդմերով գրաբարը հիշեցնելով հանդերձ նոր են և կապված են հայերենի քերականության կենսունակ տարրերի հետ

ՄՅՈՒՍ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ

Միջին հայերենի փոխադարձ, ստացական, հարաբերական և հարցական դերանունները իրենց հոլովական դրսևորումներով և կիրառությամբ քիչ են տարբերվում ժամանակակից հայերենի համապատասխան դերանուններից

Հարցական, հարաբերական և անորոշ դերանունները միջին հայերենում ունեն իրենց հոլովական հատուկ, ընդհանուր առմամբ միջին հայերենի մյուս դերանուններին նման-կանոններ, որոնք չեն նույնանում գրաբարի դերանունների հոլովական վերջավորությունների հետ Հարցական և հարաբերական դերանուններից գործածական են **ով** և **որ** դերանունները, որոնցից **ով** դերանունը ունի սեռականում և տրականում **յում**, բացառականում՝ **յումնէ**, գործիականում՝ **յումով** ձևերը, իսկ **որը՝ որոյ, որմէ, որով** ձևերը Իբրև հարցական դերանուն օգտագործվում է նաև **զինչ** բառը, որի սեռական հոլովը հանդես է գալիս **եր** և **հեր** ձևերով Այդ բառի մնացած հոլովները համարյա թե գործածական չեն

Փոխադարձ դերանուններից գործածական են **իրար** և **մեկզմեկ** դերանունները **իրար** դերանունը ունի **զիրար** (հայց), **իրաց** (սեռ, տր), **իրարմէ** (բաց), **իրով** (գործ) հոլովաձևերը, **մեկզմեկ** դերանունը

ունի **մեկը զմեկի** (հայց.), **մեկը մեկու, մեկմեկու, մեկմեկի** (սեռ., տր.), **մեկը մեկե, մեկմեկե** (բաց.) հոլովածները:

Անորոշ դերանվան համար գործածվում են **ինչ, իրք, մի** բառերը, որոնցից ամենատարածվածը **մի**-ն է:

Նկարագրությունից հետևում է, որ միջին հայերենում դերանուններն ունեն իրենց հոլովական հատուկ համակարգը, որը իր ընդհանուր դրսևորումներով ավելի մոտ է բարբառների ու ժամանակակից հայերենի, քան գրաբարի դերանունների հոլովական համակարգին:

2) ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Միջին հայերենում բայերը պահպանել են այն բոլոր հատկանիշները, որոնք եղել են գրաբարում և հայերենի բարբառներում, բայց այդ հատկանիշները դրսևորելու եղանակներով նրանք տարբերվում են և՛ գրաբարից, և՛ բարբառներից: Միջին հայերենի բայերի ձևական հատկանիշները արտահայտվում են հնչյունական կազմի և ձևաբանության մեջ: Գրաբարին ոչ հատուկ հնչյունական փոփոխությունները զգալի չափով փոխել են շատ բայերի սկզբնական ձևերը. այսպես, օրինակ՝ **ա** հնչյունի անկման հետևանքով ո՛չ միայն առանձին բայերի կերպարանքը, այլև խոնարհումն է փոխվել. **իջանել** բայը միջին դարերում կորցրել է իր **ա** հնչյունը, որը ազդել է **ել** լծորդության վրա և բայը վերածվել է **ուլ** լծորդության. այդպես նաև շատ բայեր, ինչպես՝ ելանեմ-ելնում, գտանեմ-գտնում և այլն: Այս օրինաչափությունը մեծ մասամբ տարածված է այն բառերում, որոնք ոչնչն միավանկ արմատներ և **ան** բայածանցը: Միջին հայերենը ունի **ա, ե, ու, ի** խոնարհիչները և համապատասխան խոնարհումները: Գրաբարի այս կամ այն խոնարհման ենթարկվող բայը միջին հայերենում կարող էր ենթարկվել այլ խոնարհման: Ինչպես տեսանք վերը բերված օրինակներից, գրաբարի **ան** ածանց ունեցող մի շարք բայեր (ելանել, գտանել, կլանել և այլն) միջին հայերենում փոխել են իրենց լծորդությունը: Գրաբարի **ու** խոնարհման պարզ բայերը մեծ մասամբ փոխել են իրենց խոնարհումը կամ ստացել **և** ածանցը:

Հայերենում բայերը իրենց զարգացման բոլոր շրջաններում ունեցել են սեռեր, որոնք գրաբարի ոչ բոլոր ժամանակներում են ունեցել հատուկ վերջավորություններ: Միջին հայերենում կրավորական սեռը

նշելու համար ստեղծվել է առանձին ածանց՝ **ու, վ, ւ**, որը պահպանվել է նաև ժամանակակից հայերենում: Բացի կրավորական սեռը ցույց տվող ձևից, միջին հայերենում տարբերություն է դրվել նաև ներգործական և չեզոք բայերի միջև. ներգործական բայերը ունեցել են **ել**, իսկ չեզոք բայերը **իլ** վերջավորություն, ինչպես՝ բաժնեմ-բաժնիմ, մարեմ-մարիմ և այլն: Այս տարբերակումը, սակայն, չի տարածվել և մնացել է իբրև եզակի երևույթ:

Միջին հայերենում հանդես էին եկել նոր դերբայներ ու դիմավոր նոր ձևեր: Բայական նոր ձևերի հանդես գալու հետևանքով փոխվել էին գրաբարի շատ ժամանակների ձևերն ու իմաստները: Միջին հայերենում համարյա թե չկար այսպես կոչված անկանոն խոնարհում, զարտուղի խոնարհման ենթարկվող շատ բայեր փոխել էին իրենց խոնարհումը, վերացրել բազմազանությունները և հանդես էին գալիս իբրև կանոնավոր բայեր: Հին հայերենի անկանոն խոնարհման ենթարկվող մի քանի բայեր ունեին գրաբարի և ժամանակակից հայերենի համապատասխան բայերից միանգամայն տարբեր ձևեր:

Միջին հայերենի, ինչպես նաև գրաբարի ու ժամանակակից հայերենի դեմքերի վերջավորությունները, չնչին բացառությամբ, նույնն էին: Միջին հայերենի բայերի յուրաքանչյուր ձև արտահայտում էր քերականական որոշակի իմաստ, եթե հաշվի չառնենք սահմանական ներկայի ապառնի իմաստը, որը հետագայում ավելի թուլացավ, որի հետևանքով ստեղծվեց ապառնի ժամանակը արտահայտող հատուկ ձև:

Այդ բոլոր ձևափոխությունները կամ լեզվական նոր կանոնները ավելի ակնբախ դրսևորվում են խոնարհման ընդհանուր համակարգի մեջ, որը իր զարգացման օրինաչափություններով կապված էր հայոց լեզվի նոր որակի տարրերի հետ:

ա) ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐԻՄՈՒՄԸ

Միջին հայերենի բայական ձևերը կազմվում են երկու հիմքից՝ ներկայի և անցյալի: Բայերը հիմքի **ա, ե, ի, ու** խոնարհիչներով բաժանվում են խոնարհումների, որոնք իրենց դրսևորման եղանակներով տարբերվում են գրաբարի խոնարհումներից: Միջին հայերենում թեև պահպանվել են հին հայերենի չորս խոնարհումները, բայց զգալի չափով փոփոխության են ենթարկվել այդ խոնարհումների

տակ գնացող բայերը: Այսպես, օրինակ՝ գրաբարի մի շարք բայեր, որոնք գնում էին ու խոնարհման տակ, միջին հայերենում ենթարկվում են **ե** խոնարհման, ինչպես՝ լեսում-լեսեմ, զենում-զինեմ, արգելում-արգիլեմ, թողում-թողեմ, յեղում-յեղեմ և այլն:

Միջին հայերենը ուներ գրաբարին անհայտ վաղակատար, հարակատար դերբայները, որոնցով կազմվում էին բայի նոր ժամանակներ:

Հայերենի բայերի անցյալի և ներկայի հիմքից կազմված ժամանակները, նրանց զարգացման բոլոր շրջաններում, կազմվել են միևնույն օրենքներով, թեև մեր լեզվի զարգացման տարբեր ետապներում ունեցել են տարբեր ձևավորում: Միջին հայերենում ներկայի և անցյալի հիմքից կազմված ժամանակների վերջավորությունները գրաբարի համեմատությամբ մեծ տարբերություններ չունեին, եթե նկատի չունենանք նոր, գրաբարին անհայտ ժամանակների կազմությունը:

Միջին հայերենը ուներ հետևյալ ժամանակները՝ ներկա, անցյալ անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար, որոնց մի մասը կազմվում էր դերբայով և օժանդակ բայով, ինչպես ժամանակակից հայերենում է:

բ) ՆԵՐԿԱՅԻ ՀԻՄԵՔԻՑ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՅԵՐԻ ԴԵՄԵՐԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջին հայերենի սահմանական ներկայի վերջավորություններն էին եզակիում՝ **մ, ս, է (յ)**, հոգնակիում՝ **նք, ք, ն**, անցյալ անկատարինը՝ **ի, իր, ր, աք, իք, ին**. օրինակ՝ կու գրեմ, կու գրես, կու գրե, կու գրենք, կու գրեք, կու գրեն, կու գրեի, կու գրեիր, կու գրեր, կու գրեաք, կու գրեիք, կու գրեին: Միջին հայերենի, գրաբարի և ժամանակակից հայերենի ներկայի հիմքից կազմված ժամանակների դեմքերի վերջավորությունները ընդհանուր առմամբ նույնն են, եթե նկատի չունենանք հնչյունական որոշ տարբերություններ, որոնք առաջացել են հայերենի զարգացման ներքին օրինաչափություններով: Այսպես, օրինակ՝ միջին դարերից սկսած ներկայի հիմքից կազմված ժամանակների առաջին դեմքի **մ** վերջավորությունը հոգնակիում դառնում է **ն** (կու գրեմ, կու գրենք), իսկ անցյալ անկատարի հոգնակի առաջին դեմքի **աք** վերջավորությունը՝ **ինք**, որոնք միջին դարերում հանդես էին գալիս նաև հին ձևերով: Ներկայի հիմքից կազմված մյուս ժամա-

նակները նույնպես ունենի վերոհիշյալ վերջավորությունները, որոնք պահպանվել են, չնչին փոփոխություններով, նաև ժամանակակից հայերենում:

Բայերի հոգնակին հայերենի զարգացման բոլոր շրջաններում կազմվել է միևնույն հոգնակի վերջավորություններով՝ **ք, ք, ն**: Այդ հոգնակի վերջավորություններից հատկապես երրորդ դեմքի **ն**-ն իր վրա է վերցրել նաև դեմքի վերջավորության ֆունկցիան:

զ) ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄԵԻՑ ԿԱԶՄԱՍԾ ԲԱՅԵՐԻ ՂԵՄԵՐԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անցյալ կատարյալի հիմքից կազմված ժամանակները հայերենում ունեն՝ եզակիում՝ **ի, յ, ռ**, գրո կամ **ւ**, հոգնակիում՝ **աք (ինք), այք (իք), աև (ին)** վերջավորությունները, որոնց մի մասը ավելի գործածական է եղել հայերենի զարգացման մի, իսկ մյուս մասը մի այլ շրջանում. այսպես, օրինակ՝ **ա** հիմքի հնչյունով կազմված անցյալ կատարյալը ավելի տարածված է եղել գրաբարում և միջին հայերենում, որովհետև այդ հնչյունով որոշվում էր նաև բայի սեռը կամ կերպը: Հետագայում, երբ հայոց լեզվի մեջ ստեղծվեց կրավորական սեռի և կերպի համար **վ** ածանցը, նեղացավ **ա**-ով խոնարհվող բայերի շրջանակը և անցյալ կատարյալում **այ, ար, աւ** վերջավորություն ստացող բայերը սկսեցին խոնարհվել **ի, ռ** վերջավորություն ունեցող բայերի նման. օրինակ՝ գրաբարում կային գրեցի և գրեցայ, գրեցեր և գրեցար, գրեաց և գրեցաւ ձևերը, միջին հայերենում և ժամանակակից հայերենում այդ բայը սկսեց խոնարհվել գրեցի-գրվեցի, գրեցիր-գրվեցիր, գրեց-գրվեց ձևերով, որոնցից առաջին և երկրորդ շարքի վերջավորությունների միջև տարբերություն չկա, որովհետև բայի կրավորական իմաստը արտահայտվում է **վ** ածանցով և ոչ թե դեմքերի վերջավորությամբ:

Գրաբարում կար երկրորդ ապառնի, որը կազմվում էր անցյալի հիմքից համապատասխան վերջավորություններով (ից, ցես, ցե, ցուք, ջիք, ցեն): Միջին հայերենի ապառնին կազմվում է այլ ձևերով, հետևաբար չունի այն վերջավորությունները, որոնք հատուկ էին գրաբարի երկրորդ ապառնուն:

Հայերենում դեմքերի վերջավորությունների, խոնարհիչների և հիմքի հնչյունների տարբերությունների միջոցով արտահայտվում են

ժամանակների քերականական տարբերությունները: Այդ ընդհանուր կանոնը պահպանված էր նաև միջին հայերենում:

դ) ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Միջին հայերենում ներկայի հիմքից կազմվում են սահմանական եղանակի ներկան, անցյալ անկատարը, ապառնին, արգելական հրամայականը, բոլոր բայերի անորոշ, ապառնի և որոշ բայերի հարակատար, վաղակատար ու ենթակայական դերբայները:

Անցյալ կատարյալի հիմքից կազմվում են անցյալ կատարյալը, բուն հրամայականը, վաղակատար և հարակատար ժամանակները (որոշ մասը կազմվում է նաև ներկայի հիմքից):

Սահմանական եղանակի ներկան ունի **կու** եղանակիչը, որը ավելացվում է ներկայի հիմքից և բայական դեմքերի վերջավորությունից կազմված բայաձևին. օրինակ՝

Ե- լծորդություն՝ կու այնեմ (անում եմ), կու այնես, կու այնէ, կու այնենք, կու այնէք, կու այնեն:

Ի- լծորդություն՝ կու անցնիմ (անցնում եմ), կու անցնիս, կու անցնի, կու անցնինք, կու անցնիք, կու անցնին:

Ա- լծորդություն՝ կու գնամ (գնում եմ), կու գնաս, կու գնայ, կու գնանք, կու գնաք, կու գնան:

Ու- լծորդություն՝ կու լնում (լցնում եմ), կու լնուս, կու լնու, կու լնունք, կու լնուք, կու լնուն:

Անցյալ անկատարը կազմվում է **կու** եղանակիչով ներկայի հիմքով ու անկատարի դեմքի վերջավորություններով, օրինակ՝

Ե- լծորդություն՝ կու այնէի, կու այնէիր, կու այներ, կու այնեաք, կու այնէիք, կու այնէին:

Ի- լծորդություն՝ կու անցնէի, կու անցնէիր, կու անցներ, կու անցնէինք, կու անցնէիք, կու անցնէին:

Ա- լծորդություն՝ կու գնայի, կու գնայիր, կու գնայր, կու գնայաք, կու գնայիք, կու գնային:

Ու- լծորդություն՝ կու լնուի, կու լնուիր, կու լնոյր, կու լնուաք, կու լնուիք, կու լնուին:

Բացի սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատարի նշված ձևերից, կային, իհարկե, նաև այլ ձևեր, ինչպես Մահալոքս ի

վար **կուգի** (կուգայի)¹: Այս նենգաւոր աչերս **չի կենար** մէկ պահ մի պարապ. կուլայ, գօրն ըզքեզ **կ'ուզէ**, չի առնէր այլ մարդու տօլապ²: **Կ'երթաս** ի թուխ ամպն ի ներս, ամպ ու գոլ **կ'անես**, գիս **կ'երես**³: **Կ'երթար** ու **կ'ասէր** լալով, թե՛ «ի խաղք եղաք ցորեկով»⁴:

Միջին հայերենով գրված ավելի վաղ շրջանի գործերում **կու** եղանակիչը անփոփոխ կերպով դրվում էր ներկա և անցյալ անկատար ժամանակներով գործածված և՛ բաղաձայնով, և՛ ձայնավորով սկսվող բայերի վրա: Հետագայում **կու** եղանակիչի **ու**-ն դարձավ **ը**՝ ձայնավորներից առաջ, ապա ընկավ, իսկ բաղաձայններով սկսվող բառերի հետ գործածվելիս գրվում էր **ը-ն**. **կու** եղանակիչը կորցրեց իր **ու** հնչյունը այն շրջանից, երբ սկսեց խոնարհվող բայի հետ միասին գրվել: Միջին հայերենում սահմանական ներկան և անկատարը, Նույն վերջավորություններով, հանդես էին գալիս նաև առանց **կու** եղանակիչի: Այդ երևույթը կապված էր գրաբարի հետ և գնալով փոխարինվում էր միջին հայերենին հատուկ ձևերով:

Սահմանական եղանակի ապառնին կազմվում էր բայի անորոշ ձևով և **կամիլ** բայով, օրինակ՝ գնալ կամիմ, գնալ կամիս, գնալ կամի, գնալ կամինք, գնալ կամիք, գնալ կամին և այլն: Ապառնին արտահայտվում էր նաև սահմանական ներկայով, այսինքն՝ ներկայի համապատասխան ձևերով: Սակայն, այդ ձևերի հետ միջնադարյան հայ գրականության մեջ մենք հանդիպում ենք նաև ապառնի դերբայով և օժանդակ բայով կազմված ապառնու դիմավոր ձևերի. օրինակ՝

Երբ որ յեզուց **մեռնելու ես**

քեզ ճար արայ ինչ կու նայիս,

Երբ աստենս **չես կենայու**

լաւ զանդէնի հոգսն տանիս⁵:

Այս բազմազան ձևերի առկայությունը ցույց է տալիս, որ ապառնու իմաստն արտահայտելու համար դեռևս կայուն ձևեր ստեղծված չէին, սակայն նկատվում էր, որ հարադրությամբ կազմվող ապառնին (գրել կամիմ, գնալ կամիմ, կամիմ այնել և այլն) տարածվելու տեն-

¹ Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, էջ 44:

² Նույն տեղը, էջ 44-45:

³ Նույն տեղը, էջ 45:

⁴ Նույն տեղը, էջ 47:

⁵ Մ. Մկրտչյան, XIII-XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, էջ 16:

դենցներ չէր ցուցաբերում: Սահմանական եղանակի ներկայի ձևերով (կու խօսիմ, կու գրեմ) ապառնին կազմելու միջոցը տարածվում էր մանավանդ այն շրջանի գործերում, երբ ներկայի համար օգտագործվում էին այլ ձևեր: Միջին դարերի ավելի ուշ շրջանի գործերում շատ սովորական է դառնում **լու** վերջավորություն ունեցող ապառնի դերբայով դիմավոր ձևեր կազմելու եղանակը, որը արմատացել է ժամանակակից հայերենում: Միջին հայերենի սահմանական ներկան (կու գրեմ) նույնպես օգտագործվում է ժամանակակից հայերենում, բայց ոչ իբրև ներկա, այլ իբրև պայմանական ապառնի: Այդ ժամանակի իմաստաշրջումը, ինչպես մենք տեսանք, սկսվել էր միջին դարերից: Ժամանակակից հայերենում կու գրեմ, կգրեմ ձևը իմաստով նեղացել է և արտահայտում է միայն ենթադրական ապառնու իմաստը, իսկ միջին դարերում այդ բայաձևը արտահայտում էր նաև ներկայի իմաստը, որպիսի կիրառությունը իսպառ վերացավ ժամանակակից հայերենում, որովհետև ստեղծվեց ներկայի գաղափարը արտահայտող մի նոր, անկատար դերբայով (գրում) և օժանդակ բայով (եմ) կազմվող ձև:

Անցյալ կատարյալի կազմությունը միջին հայերենում ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք նրան, մի կողմից՝ կապում են գրաբարի և, մյուս կողմից՝ ժամանակակից հայերենի հետ: Ինչպես գրաբարում, նույնպես և միջին հայերենում կան անցյալ կատարյալում ցոյական և ոչ ցոյական հիմք ունեցող բայեր: Սակայն այն տարբերությամբ, որ մի շարք բայեր, որոնք գրաբարում ցոյական հիմք չունեին, միջին հայերենում ցոյականի են վերածվել, ինչպես՝ ճանաչեմ-ճանաչեսեմ-ճանաչեցի, գեսում-գիսեմ-գիսեցի, թողում-թողի և թողցի և այլն: Բացի դրանից, մի շարք բայեր, որոնք գրաբարի անցյալ կատարյալում ունեին ներգործական կերպի վերջավորություն, միջին հայերենում ունեն կրավորակերպ վերջավորություն, թեև իմաստային փոփոխության չեն ենթարկվել. օրինակ՝ գտնում (գտանեմ)-գտայ (գտի), իջնում (իջանեմ)-իջայ (իջի), հասնեմ (հասանեմ)-հասայ (հասի)-հասար (հասեր)-հասաւ (եհաս), եղնիմ (եղանիմ)-եղայ (եղեմ)-եղաւ (եղել) և այլն:

Անցյալ կատարյալի երրորդ դեմքի **ե** ածականը, ինչպես արդեն նշել ենք, դեռևս գրաբարում կորցրել էր իր քերականական իմաստը և դրվում էր միայն միավանկ բառերի հետ իբրև վանկարար մասնիկ՝ առանց որևէ իմաստի: Միջին հայերենում նույնպես պահպանված էր

այդ ածականը, թեև ավելի սահմանափակ չափով: Սակայն միջին հայերենում, ինչպես քերականական շատ ձևեր, նույնպես և **ե** ածականը որոշ փոփոխության էր ենթարկվել: **Գալ, դնել** և **տալ** բայերի անցյալ կատարյալի երրորդ դեմքի եզակին լինում էր՝ երեկ, երեդ, երետ: Այդ փոփոխությունը առաջացել է այդ բառերի **ե** հնչյունի ազդեցությամբ, **եկ, եդ, ետ** բառաձևերը արտասանվել են **յեկ, յեդ, յետ**, որոնց վրա դրվելով **ե** ածականը՝ փոխել է **յ**-ի արտասանությունը, մոտեցրել **ր**-ին, և ի վերջո դարձրել **ր**: Այդ փոփոխության հետևանքով ստացվել են գրաբարին անսովոր երեդ, երետ, երեկ ձևերը¹:

Սակայն վերոհիշյալ ձևերի հետ կային նաև եկաւ, դրաւ, տուաւ ձևերը, որոնք տարածվեցին և դարձան հայոց լեզվի ավելի ուշ շրջանին հատուկ իրողություններ:

Բայերի գերակշռող մեծամասնությունը, որոնց թվում նաև գրաբարում զարտուղի խոնարհման ենթարկվող բայերը, միջին հայերենում ունեին կանոնավոր խոնարհում և **ի, իր, գրո** կամ **այ, ար, աւ** վերջավորություններ, որոնք ավելանում էին և՛ ցոյական, և՛ ոչ ցոյական բայերի անցյալի հիմքին և կազմում բայի դիմավոր ձևերը. օրինակ՝

գտայ	գտաք	սիրեցի	սիրեցաք (ցինք)	թողի	թողաք
գտար	գտայք	սիրեցիր	սիրեցիք	թղիր	թողիք
գտաւ	գտան	սիրեց	սիրեցին	թող	թողին

Գալ, տալ, դնել բայերը, ինչպես նշեցինք, ունեին իրենց հատուկ ձևերը, որոնց եզակիի երրորդ դեմքը ուներ ո՛չ միայն գրաբարից, այլև ժամանակակից հայերենից տարբեր ձևեր. օրինակ՝

դրի	դրաք	տուի	տուաք
դրիր	դրիք	տուիր	տուիք
եդիր, երեդ	դրին	երետ	տուին և այլն:

Միջին հայերենում, ինչպես բայերի մյուս ժամանակներում, նույնպես և անցյալ կատարյալում վերանում էին բազմազանությունները, թուլանում էր միևնույն իմաստը տարբեր վերջավորու-

¹ Հմմտ. Կարստ, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, էջ 320-325:

թյուններով արտահայտելու տենդենցը: Սակայն դրա հետ միասին ձևավորվում էին նոր ժամանակներ արտահայտող նոր ձևեր, որոնք գրաբարում չկային կամ տարածված չէին:

Միջին հայերենը ուներ նաև հարակատար և վաղակատար ժամանակները, որոնք մեծ տարածում ունեին: Բացի դրանցից, միջին դարերում ձևավորվում էին նաև ենթադրական կամ պայմանական, հարկադրական և ըղձական եղանակները, որոնք դառնալու էին ժամանակակից հայերենի քերականական հիմնական կատեգորիաներ:

Հարակատար ժամանակը կազմվում էր հարակատար դերբայից և օժանդակ բայի համապատասխան դեմքերի վերջավորություններից, ինչպես ժամանակակից հայերենում: Հարակատար դերբայը ուներ **ած** և երբեմն էլ **եր** վերջավորությունը, օրինակ՝

Կթխակ մի գինով լցած՝
իմ եարին առջևն է դրած¹:

Ամիրդովլաթ Ամասիացին իր «Օգուտ բժշկութեան» գրքում գրում է. «Յորժամ ես այս արուեստիս հմուտ եղայ և տեսայ շատ գրեանք, որ շինած էր ի յայս արուեստն և շատաբանած և մարդ կատարեալ չէր իմանար»²: **Ած** վերջավորություն ունեցող հարակատար դերբայով կազմված ձևեր բազմաթիվ են ու գործածվում են մեր գրականության մեջ յոթերորդ դարից սկսած: Այդ դերբայից կազմվում էին հարակատարի ներկան և անցյալը. ինչպես՝

դրած եմ	դրած ենք	դրած էի	դրած էինք
դրած ես	դրած էք	դրած էիր	դրած էիք
դրած է	դրած են	դրած էր	դրած էին

Բացի այս դերբայից, ինչպես նշվեց վերևում, հարակատար ժամանակը կազմվում էր նաև **եր** վերջավորություն ունեցող դերբայից, որը հաճախ վաղակատար դերբայի իմաստ ուներ. ինչպես՝

Աշան **նստեր** էր փենճերեն,
Ափն երեսին էր, խիստ կուլար³:

¹ Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, էջ 44:

² Ա. Ամասիացի, Օգուտ բժշկութեան, էջ 5:

³ Մ. Մկրյան, Նույն տեղը, էջ 59:

Եր վերջավորություն ունեցող դերբայները, սակայն, մեծ մասամբ վաղակատար իմաստ ունեն: Նրանք հաճախ հավասար չափով գործածվում են ել վերջավորություն ունեցող դերբայների հետ:

Վաղակատար ժամանակը կազմվում է դերբայից և օժանդակ բայից՝ ինչպես՝

Սիրտ իմ, ընդէ՞ր ես խռովեր,
Աչք իմ, ընդէ՞ր ես խաւարեր.
Խելք իմ, ընդէ՞ր ես ճապաղեր,
Միտք իմ, ընդէ՞ր ես շիւարեր:
Է՞ր չես գմահու օրն անդիճել,
Ի հրեշտակի գալուն փախել.
Չհոգւոյ քանդիլն յէ՞ր չես յիշել
Յաստուծոյ յերեսս հեռացել¹:

Վաղակատար ժամանակը ունի ներկա և անցյալ ձևերը, ինչպես՝ փախել եմ, ես, է, էի, էիր, էր, ենք, եք, են, էինք, էիք, էին:

Ըղծական և պայմանական եղանակների դիմավոր ձևերը դեռևս տարածված չէին միջին դարի վաղ շրջանի գործերում, թեև X–XI դարերից սկսած մենք հանդիպում ենք և՛ ըղծական, և՛ պայմանական իմաստ արտահայտող բայաձևերի: Ավելի ուշ շրջանում այդ ձևերը տարածվում են և սկսում են կիրառվել իբրև ըղծական իմաստ արտահայտող ձևեր: Հայերենի ըղծական եղանակի առաջացումը, ինչպես նկատել են Ա. Այտընյանն ու Մ. Աբեղյանը², կապված է գրաբարի սահմանականի ներկայի և անկատարի գործածության հետ: Այդ ժամանակները իրենց հիմնական իմաստը արտահայտելու հետ գործածվել են նաև իբրև ըղծական: Երբ որ սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակների համար ստեղծվել են հատուկ ձևեր, բայերի այն ձևը, որը արտահայտել է այդ ժամանակների իմաստը, պահպանվել է միայն մի իմաստի՝ ըղծականի համար: Միջին դարերում գրաբարի սահմանական ներկան (գրեմ, հեղում, աղամ) և անցյալի անկատարը (գրեի, հեղուի, աղայի) սկսում են գործածվել իբրև ըղծական. օրինակ՝ «Եւ յորժամ աղեկ միտք դնես՝ նա իմանաս գիւօսացն գիամն, և իմանաս զպատճառն և զնշանն գտաքութեան և

¹ Նույն տեղը, էջ 10:

² Հմմտ. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 314 – 318:

գիովութեան, զստածումն թէ որպէս է հրամայած»¹: «Թէ ով որ ուզէ կատարեալ բժիշկ լինի և հիւանդի պէտ առնէ՝ պարտ է որ յառաջն աշակերտէ, ապա վարդապետ կու լինի. զաղէկն և զվատն գիտենայ և ուսանի, թէ ո՞րպէս պէտ կառնեն, և ապա նորա հեշտ կու լինի»²:

Միջնադարյան հայ տաղերգուների գործերում հին շրջանից սկսած հանդիպում ենք գրաբարի սահմանականի ներկային՝ ըղձականի իմաստով գործածված: Ֆրիկը իր գործերում մեծ մասամբ գրաբարի սահմանական ներկան գործածում է ըղձականի առումով. օրինակ՝

Թէ ուզիմ որ անանց բարոյն տիրանամ
Չտուն գտեղն ու զեղբայրն ու զքոյրն մոռանամ,
Յեղեղեմ արտասուս ու զիս լուանամ,
Եւ մաքրիմ ի մեղաց և արդարանամ³:

Միջին հայերենի սահմանական ներկան նույնպէս գործածվում էր պայմանական ապառնու իմաստով: Այդ հանգամանքը առիթ է դառնում, որ այդ բայաձևը, ում ճյուղի բարբառներում, գործածվի իբրև պայմանական եղանակ: Մեր ազգային լեզվի կազմավորման ժամանակ պայմանականի իմաստով էլ սկսում են գործածվել միջին հայերենի սահմանականի ներկան ու անցյալի անկատարը, որովհետև նրանք իբրև պայմանական կամ ենթադրական վաղուց ի վեր գործածվում էին Արարատյան բարբառում, որը, նրա զարգացման համար ստեղծված պայմանների հետևանքով, ընկավ մեր ազգային լեզվի, հիմքում և մշակվեց ու դարձավ հայոց ազգային լեզուն:

Միջին հայերենում կան նաև հարկադրական եղանակի տարրերը, որոնք երբեմն տարբեր ձևերով գործածվում են միջին դարերի հայ հեղինակների գործերում, օրինակ՝

«Եւ այլ ով որ ուզէ որ կատարեալ հեքիմ լինի՝ յառաջն կու պիտի որ զդեղերուն կերպն ճանաչէ»⁴:

¹ Սմիրտովյաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, էջ 6:

² Նույն տեղը, էջ 9:

³ Մ. Մկրյան, նույն տեղը, էջ 23:

⁴ Ա. Ամասիացի, նույն տեղը, էջ 9:

Բլբուլն ի վարդն ասաց. խիստ անողորմ ես,
Որ զհմ արուն քեզ խալալ կու դնես,
Որ հանց պեկուման դու Գաբրիէլն ես,
Նա արե՛կ առ զհոգիս, քանի՞ տի տանջես¹,
Զո գունովն գինի պիտեր խմէի ու հարբենայի...²:

Միջին հայերենի արգելական հրամայականը կազմվում է ներկայի, իսկ բուն հրամայականը՝ անցյալի հիմքից: Միջին հայերենում բուն հրամայականի եզակին սովորաբար ունենում է **է** վերջավորություն, իսկ հոգնակին՝ **եք**: Արգելական հրամայականը չի տարբերվում գրաբարից:

Այսպիսով, ինչպես երևում է միջին հայերենի ժամանակների կազմության համառոտ տեսությունից, համարյա թե այն բոլոր բաձևերը, որոնք գործածական են ժամանակակից հայերենում և մեր բարբառներում, մուտք են գործել միջնադարյան հայ գրականության լեզվի մեջ: Այդ տարրերի մի մասը դեռևս չէր արմատացել հայոց գրական լեզվում, բայց զարգանալու և տարածվելու ուժեղ տենդենցներ էր ցույց տալիս, մի մասը կապված էր հին որակի հետ, թեև բավականաչափ հաճախված, բայց գործածությունից դուրս էր ընկնում ու մահանում:

Հայոց լեզվի նոր որակի հետ կապված տարրերից մեկը բայերի կրավորականի իմաստն արտահայտելու համար գործածված **ու**, **վ**, **ւ** մասնիկն էր, որը միջին դարերի վաղ շրջանի գործերում երբեմն փոխարինվում էր գրաբարյան կրավորակերպ վերջավորություններով կամ հանդես էր գալիս կրավորակերպ խոնարհման վերջավորությունների հետ, հատկապես անցյալ կատարյալի հիմքից կազմված ժամանակներում, օրինակ՝ գրվեցայ, սիրվեցայ, բռնվեցար և այլն: Այդպիսի բաձևների մեջ **այ**, **ար**, **աւ** վերջավորությունները միայնակ, իհարկե, կրավորական իմաստ չէին արտահայտում: Հետագայում վերացան ներգործական և կրավորական սեռերի բայերի խոնարհման ժամանակ դեմքերի վերջավորությունների մեջ եղած տարբերությունները, և բայերի դեմքերի վերջավորությունները կայունացան. օրինակ՝ գրեցի-գրվեցի և ոչ թե՛ գրեցի-գրվեցայ, կոչեցի-կոչվեցի և ոչ թե՛ կոչեցի-կոչվեցայ և այլն:

¹ Մ. Մկրյան, Նույն տեղը, էջ 74:

² Նույն տեղը, էջ 140:

Ե) ԴԵՐԲԱՅՆԵՐ

Միջին հայերենը ուներ անորոշ, ապառնի, հարակատար, վաղակատար, ենթակայական և անկատար դերբայները:

Անորոշ դերբայը ուներ **ել**, **ալ**, **ուլ**, **իլ** վերջավորություններ, օրինակ՝ գրել, ուզել, կարգել, գործել, կարդալ, գողնալ, ամրնալ, աւտալ, առնուլ, զենուլ, տեսնուլ, թողուլ, ցանուիլ, ուտվիլ և այլն:

Ենթակայական դերբայը ուներ **օղ** (աւղ) վերջավորություն, օրինակ՝ գրաւղ, կարաւղ, կորսնօղ, հոգցաւղ, զնացօղ և այլն:

Ենթակայական դերբայը միջին հայերենում դիմավոր ձևեր չէր կազմում:

Ապառնի դերբայը միջին հայերենում ուներ **ի**, **ոյ**, **ու**, **ոց** վերջավորություններ: Հայերենում ապառնի դերբայը ընդհանրապես կազմվել է անորոշ դերբայի սեռական հոլովից: Իսկ անորոշ դերբայը հայերենի զարգացման տարբեր շրջաններում և տարբեր բարբառներում սեռական հոլովի տարբեր վերջավորություններ է ունեցել. այսպես, օրինակ՝ գրաբարում անորոշ դերբայը ենթարկվել է **ո** հոլովման, սակայն ապառնին կազմվել է անորոշ դերբայից հոգնակի սեռականի մասնիկի կցումով: Միջին հայերենում ապառնի դերբայը, գրաբարյան ձևերից բացի, ունեցել է նաև **ոյ** և **ու** վերջավորություններ, բայց ուշ շրջանի գործերում՝ միայն **ու**, որը ցույց է տալիս, որ միջին դարերում **ո** հոլովումը վերածվում էր **ու** հոլովման: Միջին հայերենի ուշ շրջանի գործերում տարածված **ու** վերջավորություն ունեցող ապառնի դերբայը անցնում է նաև ժամանակակից հայերենին: Ապառնի դերբայներից միջին հայերենում կազմվում էին բայի դիմավոր ձևեր. ինչպես՝

Աւտ. Գիտեմ որ չեմ կալոց

Վասն աշխարհի եմ գիս տալոց.

Մին գարուն այլ եմ ես գալոց,

Յայնժամ շատ ոք կամիմ դատել¹:

Այս քառյակի մեջ օգտագործված են ինչպես գրաբարին, նույնպես և միջին հայերենին հատուկ ձևեր, բայց երկու դեպքում էլ

¹ Նույն տեղը, էջ 43:

ապառնու առումով: Նույն ժամանակ (XIII դար) գրված գործերում հանդիպում ենք **ու** վերջավորություն ունեցող դերբայի, օրինակ՝

Երբ որ յեզուց մեռնելու ես,
Քեզ ճար արայ ինչ կու Նայիս.
Երբ աստենս չես կենալու.
Լաւ զանդէնի հոգսն տանիս¹:

Հիշյալ **ոց** և **ու** վերջավորություն ունեցող դերբայների հետ միջին դարերի հայ գրականության մեջ օգտագործվել են նաև **ոյ** և **ի** վերջավորություն ունեցող դերբայներ, որոնք համեմատաբար ավելի քիչ են տարածված եղել: Միջին հայերենում **ու** վերջավորություն ունեցող դերբայից սահմանականի ապառնի ժամանակը կազմելու տենդենցը պայմանավորված էր հայերենի զարգացման տվյալ շրջանի կենսունակ օրենքներով, այդ պատճառով էլ գնալով տարածվում էր այդ ձևը ինչպես միջին դարերի գրական լեզվում, նույնպես և բարբառներում և հատկապես **ում** ճյուղի բարբառներում:

Վաղակատար դերբայը ունի **ել** վերջավորությունը, որը **ե** խոնարհման պարզ բայերում նույնանում է անորոշ դերբայի վերջավորության հետ, իսկ **ա** խոնարհման բայերում հանդես է գալիս անցյալի հիմքի **ց** հնչյունի հետ, օրինակ՝ այնել (անել), այրել (արել), քամել, քշտել, համբերել, բաժնել, եփել, խառնել, հանդիպել, կոչել, գրել, գնացել, կարդացել, մնացել, իմացել, խոստացել, յեւելցել և այլն:

Միջին հայերենի վաղակատար դերբայը գրաբարի անցյալ դերբայի հետագա զարգացումն է: Անցյալ դերբայը գրաբարում կազմվում էր ներկայի և անցյալի հիմքից և ուներ **եալ** վերջավորությունը: Այդ դերբայը գրաբարում արտահայտում էր վաղակատար և հարակատար դերբայների իմաստը: Միջին հայերենում **եայ** վերջավորությունը ենթարկվելով հայերենի հնչյունափոխության կանոններին՝ դառնում է **ել**, որը նույնպես ավելացվում էր բայերի ներկայի և անցյալի հիմքին: Ինչպես ասացինք, **ա** խոնարհման բայերի վաղակատարը մեծ մասամբ կազմվում էր անցյալի հիմքից, իսկ **ե** և մյուս խոնարհումներինը՝ գլխավորապես ներկայի հիմքից: Վաղակատար դերբայը միջին հայերենում ուներ միայն վաղակատարի իմաստ, օրինակ՝

¹ Նույն տեղը, էջ 16:

Դու քո ձեռքդ ես խոր փորել,
Եւ քո կամօքդ ես ներս մտեր,
Չայս ո՞ւմ կամիս դու մեղադրել,
Խնդիր են հենց զքեզ տանել¹:

Վաղակատար դերբայը միջին դարերում արտահայտվում էր նաև
եր վերջավորությամբ, ինչպես՝

- Ա՛յ սարեր, ա՛յ ձորեր,
Գիտացե՛ք՝ եար եմ կորուսել.
Ա՛յ քարեր, ա՛յ թփեր,
Աճափ ի ձեզ չե՞ եկել.
Ա՛յ քարե կարմընջնի,
Աճափ ի ձեզ չե՞ անցել.
Չիս ի քուն թողել,
եւեր, գնացեր²:

Եր վերջավորությունն ունեցող վաղակատար դերբայները ավելի
տարածված են **կը** ճյուղի մի շարք բարբառներում:

Միջին հայերենը ունի նաև հարակատար դերբայը՝ **ած** վերջավորությամբ: Այդ դերբայի ամենավաղ գործածությունը, ինչպես արդեն նշված է, սկսվում է յոթերորդ դարից, բայց տարածվում է X դարից հետո: Հարակատար դերբայից կազմվել են եղանակային ձևեր միջին դարերի հայ ամբողջ գրականության մեջ: Այդ դերբայը կիրառվել է նույն այն գրողների գործերում, որոնք հիմնականում գրել են գրաբարով: Այդ դերբայի այդքան տարածված լինելու փաստը ցույց է տալիս, որ նրա գործածությունը կապված է եղել հայ ժողովրդական լեզվի հաղորդակցական ֆունկցիայի իրականացման և միևնույն ձևով քերականական տարբեր իմաստներ արտահայտելու հին կանոնների վերացման տենդենցի հետ: Այդ դերբայը, բացի նախադասության մեջ ստորոգյալի կազմությանը մասնակցելուց, հանդես էր գալիս նաև իբրև որոշիչ, խնդիր և ենթակա, օրինակ՝

¹ Նույն տեղը, էջ 10:

² Մ. Աբեղյան, Նույն տեղը, էջ 53:

Չի որ տված ի հողն ի պահ բոյսք ու սերմանք կայ սերմանած՝
Վճարեն ըզսերմանողն և տան տերանց շատ յաւելւած.
Ով որ չունի սերմն բարի փոխան պտղոյ փուշ կայ բուսած,
Յողոյն առնէ ինքն դատաստան և չար փշին հուր կայ պահած¹:

Դեռ ամառն չէր եկած,
Նա՛յ տվին ինձ վարդ մի հասած,
Դեռ ի մուրած չէյ հասել,
Նա՛յ առին զան վարդն ի ձեռացս.
Գիտնաս, թէ որբուկ եմ ես,
Կամ ի հօրն ու մօրն անիծած,
Չթղթիկն ի ձեռացս առած,
Չիմ տիֆարս ի ծուն ի գրած²:

Հարակատար դերբայը, վաղակատարի նման, կազմվում է ներկայի և անցյալի հիմքից. **ա** խոնարհման բայերի մեծ մասի հարակատար դերբայը կազմվում է անցյալի, իսկ մնացած խոնարհումների մեծ մասը՝ ներկայի հիմքից. օրինակ՝ գրել-գրած, բաժնել-բաժնած, զարդարել-զարդարած, գրկել-գրկած, յիշել-յիշած, ջրել-ջրած, թողուլ-թողած, գենուլ-գենած, ընդունիլ-ընդունած, ճանչել-ճանչած, գողանալ-գողցած, աղալ-աղցած, կարդալ-կարդացած և այլն: Հարակատար դերբայի **ած** վերջավորությունը հանդիպում է նաև գրաբարում, բայց ոչ բայական առումով, օրինակ՝ արարած, հատուած, երկիւղած և այլն: Գրաբարում այդ դերբայը գործածվել է իբրև գոյական, ածական և հանգույցի հետ իբրև ստորոգելիական վերադիր, օրինակ՝ հատուած գնացեալ Վարդգես մանուկն (գաղթեց Վարդգես մանուկն) և այլն:

Անկատար դերբայը միջին դարերի հայ գրականության մեջ հանդիպում է **իս** և **ում** վերջավորություններով, թեև վաղ շրջանի գործերում քիչ տարածված: Անկատար դերբայը XVI-XVII դարերից սկսած ավելի հաճախ է գործածվում մեր միջնադարյան գրականության մեջ: Այդ ժամանակվանից սկսած նրանից կազմված դիմավոր ձևերը սովորական են դառնում: Այսպես, օրինակ՝ Նաղաշ Հովնաթանը, որը իր լեզվով ավելի շատ կապված է միջին դարերի վաղ շրջանի

¹ Մ. Մկրյան, Նույն տեղը, էջ 27:

² Մ. Աբեղյան, Նույն տեղը, էջ 51:

երկերի լեզվի հետ, իր մի շարք երգերում օգտագործում է **ում** և **խ** վերջավորությունն ունեցող անկատար դերբայը՝ ինչպես՝

Միմեանց շապիկ են հագցնում,
Պատարագին կանգնեցնում:
Դասն ծնծղայք շախշախցնում,
Հենց են, որ գայլ խաղաղնում:
Չանգակ ածելով ծիծաղում,
Ոտքերն էլ վեր-վեր քաղում¹:

Նոր ծաղկեցաւ ծառն, գարունն եիաս, Է՞ր ես ինձնէ հեռանալիս
Նագանի քաղցրիկ եար, բարով դո՛ւ էլ գաս, Է՞ր ես ինձնէ հեռանալիս,
Մէկ ձեռացդ շուշայ, մէկն գինի թաս, Է՞ր ես ինձնէ հեռանալիս,
Թէ ինձ կու սիրես՝ մէկ դու խմես, մէկ ինձի տաս, Է՞ր ես ինձնէ հեռանալիս:

Մենակ ու ծածուկ մնալիս՝
Սիրու սերդ մոռանալիս.
Դարդերս Է՞ր չես իմանալիս՝
Գեղեցիկ երեսդ բանալիս²:

Դերբայների կրավորական ձևը կազմվում էր դերբայական վերջավորությունից առաջ **վ** մասնիկի ավելացումով, օրինակ՝ գրված, կարդացված, գրվում, գրվող, գրվել, գրվելու և այլն:

Այդ շրջանում ձևավորվում էր նաև ժխտական դերբայը անորոշ դերբայից, ինչպես՝ չեմ ի գրել, չեմ ի գրեր, չեմ գրեր և այլն³:

Դերբայների բազմազան ձևերն ու նրանց կիրառումները ցույց են տալիս, որ միջին հայերենի բայերի համակարգը իր շատ դրսևորումներով տարբերվում էր գրաբարից և մոտենում էր ժամանակակից հայերենի ու բարբառների խոնարհման համակարգին:

¹ Նաղաշ Զովնաթան, Բանաստեղծություններ, 1951, էջ 120:

² Նույն տեղը, էջ 15:

³ Հմմտ. Ա. Աբրահամյան, Հայերենի ժխտական դերբայը, Լեզվի ինստիտուտի գիտ. աշխատություններ, հ. 2, 1947:

Միջին հայերենի ժխտական խոնարհումը ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք կապված են հայոց լեզվի զարգացման նոր օրինաչափությունների հետ: Այդ առանձնահատկությունները արտահայտվում են ամենից առաջ սահմանական ներկայի և անցյալ անկատարի կազմության մեջ:

Հայերենում, ինչպես արդեն նշել ենք, սահմանական եղանակի ներկան և անցյալ անկատարը կազմվում են կամ օժանդակ բայով և անորոշ դերբայի ներգոյական հոլովով, կամ որևէ եղանակիչով, ներկայի հիմքով և բայական համապատասխան դեմքերի վերջավորությամբ, կամ ներկայի հիմքով և բայական համապատասխան դեմքերի վերջավորությամբ՝ առանց որևէ եղանակիչի: Գրաբարում իշխողը վերջին տիպն էր, միջին հայերենում և **կը** ճյուղի բարբառներում՝ երկրորդը, իսկ ժամանակակից հայերենում և դերբայավոր ներկա ունեցող բարբառներում՝ առաջին տիպը:

Միջին հայերենի ժխտական խոնարհման սահմանական եղանակի ներկան և անկատարը կազմվում էին անորոշ դերբայի ներգոյական հոլովով և օժանդակ բայով՝ ժխտականի ավելացմամբ. օրինակ՝ չեմ ի գրել, չէիր ի խօսել, չլինի ի տալ և այլն:

Սակայն այդ օրինաչափությունը չի պահպանվում շատ գրողների գործերում: Սահմանական ներկայի ժխտականը սկսում է կազմվել միայն օժանդակ բայի ժխտական ձևով և անորոշ դերբայով, թեև այդպիսի ժխտականն ընդհանուր չէր և չէր կարող արտացոլել հայոց լեզվի զարգացման կենսունակ օրենքները:

Անորոշ դերբայի ներգոյական հոլովով և օժանդակ բայով բայի ժխտական ձևեր կազմելու եղանակը համապատասխանում է ժամանակակից հայերենի ժխտական խոնարհմանը (չեմ գրում, չեմ կարդում և այլն), որը նույնպես կազմվել է օժանդակ բայի ժխտական ձևով և անորոշ դերբայի ներգոյական հոլովով՝ որոշ ձևափոխությամբ¹: Այս ընդհանրությունները ցույց են տալիս, որ ժողովրդի լեզվի զարգացման տարբեր շրջանները կապված են միմյանց հետ և իրենց տարբերություններով հանդերձ չեն դադարում տվյալ ժողովրդի լեզուն լինելուց:

¹ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, 1953:

Ժողովրդի զարգացման տարբեր շրջաններում ժողովրդի խոսակցական ու գրավոր լեզուները կարող են ունենալ զարգացման տարբեր օրինաչափություններ, այս կամ այն իմաստը արտահայտող տարբեր ձևեր, բայց, այդուհանդերձ, նրանք լեզվական միևնույն պրոցեսի օղակներն են և շղթայված են իրար հետ: Այդպես է գրաբարի, միջին հայերենի, մեր բարբառների ու ժամանակակից հայերենի կապը. նրանք հայ ժողովրդի լեզվական տարբեր ձևերն են կամ արտահայտությունները, որոնք ունեն իրենց ինքնուրույն կյանքն ու զարգացման օրենքները, բայց դրանով հանդերձ մի ամբողջություն են կազմում:

Լեզվի զարգացման այս կամ այն շրջանում կարող է ընդհանրանալ կամ գործածությունից դուրս ընկնել քերականական այս կամ այն ձևը: Նայած թե զարգացման ինչպիսի՜ ընթացք է ունենում լեզուն, ըստ այնմ էլ որոշվում են նրա զարգացման օրինաչափությունները և դրանցով պայմանավորված կանոններն ու ձևերը: Այդ սկզբունքով էլ քննելով միջին հայերենի ժխտական խոնարհման հարցը, մենք նշեցինք այն ընդհանրությունները, որ կան նրա և ժամանակակից հայերենի խոնարհման համապատասխան ձևերի մեջ:

Սակայն այդ ընդհանրությունները երևում էին ո՛չ միայն սահմանական ներկայի և անկատարի, այլև մյուս ժամանակների ժխտական ձևերի մեջ: Միջին հայերենի բոլոր բաղադրյալ ժամանակների ժխտականը կազմվում է ժամանակակից հայերենի ժխտականի նման, այսինքն՝ չ ժխտականը ավելացվում է օժանդակ բային, որը տեղափոխվում է դերբայից առաջ, իսկ պարզ ժամանակների ժխտականը կազմելու ժամանակ չ-ն ավելացվում է բայի պարզ ձևին, օրինակ՝ չեմ ի գրել, չեմ ի կարդալ, չեմ կարդացել, չեմ կարդալու, չեմ կարդացած, չեի գրած, չկամիմ կարդալ, չկամիմ ասել, չկարդացի, չգրեցի և այլն: Այս, ինչպես նաև այլ տիպի ընդհանրությունները ավելի են ընդգծում նրանց կապը: Սակայն, այդուհանդերձ, ինչպես միջին հայերենը ուներ իր զարգացման ուրույն օրինաչափությունները, նույնպես և ժամանակակից հայերենը ունի իր զարգացման ներքին օրենքները, որոնք զգալի չափով տարբերվում են հայոց լեզվի վաղ շրջանի զարգացման օրենքներից:

Բ. ԸԱՐԱՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ

Միջին հայերենում նախադասության գլխավոր և երկրորդական անդամներից յուրաքանչյուրը նախադասության մեջ իր կատարած ֆունկցիայի համապատասխան ձևն ունի Այդ պատճառով էլ բառերի դասավորությամբ սովորաբար չի փոխվում նախադասության անդամների քերականական դերը, եթե ուղիղ խնդիրը և ենթական չունեն միևնույն հոլովածն Այդուհանդերձ, միջին հայերենի, ինչպես նաև ընդհանրապես հայերենի, նախադասության մեջ հանդես եկած ինքնուրույն բառերը ունեն սովորական, թեև ոչ պարտադիր դասավորություն

Գրաբարի և միջին հայերենի նախադասությունների շարահյուսության մեջ եղած ընդհանրությունների հետ նկատվում են զգալի տարբերություններ, որոնք ցույց են տալիս, որ հայոց լեզվի շարահյուսությունը միջին դարերում զարգացման սոր աստիճանի էր հասել Գրաբարի նախադասության անդամների կապակցության ուշագրավ կանոններից մեկը՝ որոշչի հետադաս գործածությունն ու որոշյալի հետ համաձայնեցվելը, միջին դարերում խախտվել էր որոշիչները գերակշռող մեծամասնությամբ նախադաս էին դրվում և չէին համաձայնեցվում Նախադասության երկրորդական անդամների կապակցության այդ եղանակը հատուկ է նաև մեր բարբառներին Զետևաբար, հայերենի նախադասության զարգացման կենսունակ իրողություններից մեկը հենց արտահայտվել է որոշիչների նախադաս գործածությամբ և անհամաձայնությամբ Բայց դրա հետ միասին չի կարելի անջատել նախադասության անդամները միմյանցից և անխաթար պահել նախադասության իմաստը Զայերենի նախադասության բոլոր անդամներն էլ սերտորեն կապված են միմյանց հետ և պայմանավորված են միմյանցով Այդ պատճառով էլ միջին հայերենի նախադասության անդամները համաձայնեցվում ու կապակցվում են միմյանց հետ հայերենի այդ շրջանին հատուկ օրենքներով

ա) ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Միջին հայերենի նախադասության անդամներից թվով և դեմքով համաձայնեցվում են նախադասության գլխավոր անդամները՝ ենթական և ստորոգյալը, օրինակ՝

Կու հրամայե օրենքս, որ երկու քոյր մէկ եղբօր բաժին առնուն¹:

Սէրն երբ ի յաշխարհս եկաւ, եկաւ իմ սիրտս թառեցաւ,

Հապա իմ սրտես ի դուրս՝ յերկրէ յերկիր թափեցաւ²:

Իշխան մի կայր՝ յոյժ չար և անիրաւ: Եւ այրի կին մի կայր ի նոյն քաղաքի. և իշխանն հարկ պահանջելով նեղէր զնա. և կինն աղօթելով ասէր, թէ աստուած գինքն խաղաղութեամբ պահէ: Եկն ձեռնաւորն և ասէ. ես քեզ լաւ չեմ արարել դու ինձ համար ե՞ր կու աղօթես: Նայ ասաց, թէ քո հայրն վաւր մարդ էր. ես անիծեցի, նա մեռաւ. դու նստար ի նորա տեղն այլ խիստ չար. կու վախեմ, թէ մեռանիս, նա քո որդին այլ խիստ լինի չար³:

Հայերենում բայի դիմավոր ձևերը ցույց են տալիս նաև հասապատասխան դեմքի դերանունը, այդ պատճառով էլ, եթե ենթական դերանուն է, և հատկապես չի ընդգծվում, չի գրվում:

Միջին հայերենում, ինչպես նշվեց, որոշիչը նախադաս է դրվում և չի համաձայնեցվում, օրինակ՝

Փռեմ քեզ մախմուր խալի,
Ու բերեմ քեզ շատ հարիֆնի.
Հանցկուն հարիֆներ բերեմ,
Որ ամեն ի քեզ նմանի.
Ծովերն քեզ գինի այնեմ,
Ու զնաւերդդ տօստօքանի⁴:

Միջին հայերենում բացահայտիչը թվով, դեմքով և հոլովով համաձայնեցվում է բացահայտյալի հետ:

Գրաբարում ցուցական դերանունները իբրև հետադաս որոշիչ գործածվելիս՝ որոշյալ գոյականը ընդունում էր համապատասխան դերանվանական հոգը: Միջին հայերենում դերանունները միշտ նախադաս են լինում, հետևաբար և հոգը ոչ մի կապ չունի դերանվան հետ: Նա հանդես է գալիս իբրև լեզվական ինքնուրույն տարր և ունի կայունացած վիճակ, իսկ գրաբարում հոդերը անկայուն էին և

¹ «Դատաստանագիրք Սմբատ իշխանի», 1918, էջ 57:

² Մ. Մկրյան, Նույն տեղը, էջ 143:

³ Նույն տեղը, էջ 344:

⁴ Մ. Աբեղյան, Գուս. ժող. տաղեր, էջ 72:

հաճախ իրենց իմաստով կապվում էին իրենց հետ գործածվող համապատասխան դերանվան հետ:

Միջին հայերենում, ինչպես նշվեց, չէին համաձայնեցվում որոշիչն ու որոշյալը: Այդ նշանակում էր, որ հայոց լեզվի իրն շրջանում որոշիչ նախադաս գործածության ու չհամաձայնեցնելու տենդենցը միջին դարերում լրիվ չափով հաղթանակել էր, որովհետև այդ կանոնը բխում էր հայ ժողովրդի լեզվի զարգացման տվյալ շրջանի պահանջներից:

բ) ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Միջին հայերենում բառերի դասավորությունը ընդհանուր առմամբ ազատ է եղել, բայց ոչ կամայական, այսինքն՝ միայն որոշ հաջորդականությամբ կարող են շարադասվել նախադասության անդամները. օրինակ՝ «Այր մի ուներ բարկայցող և անզգամ կին մի լեզւանի»՝ նախադասության անդամները կարելի է դասավորել «Ուներ այր մի բարկայցող և անզգամ կին մի լեզւանի», բայց ոչ «Բարկայցող և անզգամ կին մի լեզւանի ուներ այր մի», որովհետև այս դեպքում փոխվում է նախադասության իմաստը՝ կինը դառնում է ենթակա: Մի այլ օրինակ՝ «Գալն և աղուեսն և ջորին եղեն եղբարք և գնացին»: Այս նախադասությունը կարելի է դասավորել հետևյալ ձևերով. «Ջորին և գալն և աղուեսն եղբարք եղեն և գնացին», «Եղեն եղբարք գալն և աղուեսն և ջորին և գնացին» և այլն, բայց ոչ՝ «Եղեն եղբարք գալն և աղուեսն և գնացին և ջորին»: Այսպիսով, միջին հայերենի նախադասության անդամների դասավորությունը թեև պարտադիր կանոններ չունի, բայց ունի սովորական շարադասություն, որը չի կարելի խախտել, եթե չենք ուզում նախադասության միտքը փոխել: Իբրև ընդհանուր, բայց ոչ պարտադիր կանոն, հայերենի ստորադասական շաղկապներից հետո դրվում են ստորոգյալը և ենթական. օրինակ՝

Թէ գաս գիշերն ի մօտիս, դնեմ երեսս երեսիդ,

Երեսդ երեսիս դնեմ, որ դպնու քու շունչդ իմ շնչիս¹:

¹ Մ. Մկրյան, նույն տեղը, էջ 144:

Միջին հայերենում կայուն դասավորություն են ունեցել ժխտական խոնարհման սահմանական ներկան ու անցյալ անկատարը: Այդ դեպքերում օժանդակ բայը ժխտական մասնիկի հետ միշտ դրվել է դերբայից և նախդրից առաջ, օրինակ՝ չեմ ի գրել, չեմ ի կարդացել:

Ես չեմ ի հաւատալ այն սուտ հոգոյն թէ ինքըն լոյս՝
Որ չունի շառաւել յարեգական ի մեծ լուսոյն¹:

Ե՞ր չես ի լալ ապաշխարել,
Եւ քո այնչափ մեղքն քաւել.
Միթէ ի յա՛յդ ևս յուսացել,
Չինչ մխիթարք ևս դու դրել:
Այդ չի կամի գքեզ թափել
Չինչ քո մտօքդ ես անդիճել²:

Մյուս ժամանակների հետ ժխտական օժանդակ բայը կարող է դերբայից և՛ առաջ, և՛ հետո դրվել. օրինակ՝

Իսկի տեսել չե՞ս, կամ լսել
Ինչ մեծատուն մարդ ի մեռել
Իսկի դեկան հետ չի տարել³:

Միջին հայերենում անորոշ ենթական և խնդիրը ունեն իրենց կայուն տեղերը. ենթական միշտ դրվում է առաջ, իսկ խնդիրը՝ հետո, օրինակ՝ «Այր մի մեծատուն ունէր կին մի գեղեցիկ» նախադասության մեջ **այր** բառը ենթակա է, իսկ **կինը** ուղիղ խնդիր, եթե տեղափոխենք դրանց տեղը, կինը կդառնա ենթակա, իսկ այրը՝ խնդիր (կին մի ունէր այր մի գեղեցիկ):

Միջին հայերենում **մի** անորոշ դերանունը իբրև որոշիչ միշտ հետադաս է լինում. օրինակ՝ «Կայր երեց մի ի գիւղ մի և խիստ սաղմոսասէր. և գեղացիքն ոչ գային ի ժամ. և երեցն օր մի սուտ իւն եղաւ...

¹ Նույն տեղը, էջ 32:

² Նույն տեղը, էջ 13:

³ Նույն տեղը, էջ 10:

և ասե՛ն գեղացիքն, թե՛ երեցն իսկցաւ. երթամք և ծիծաղիմք»¹: «Կին մի այրի ունէր կով մի և խորթ նորայ ունէր էշ մի... և կին աղաչէր զաստուած, զի մեռցի էշն. և մեռաւ կովն. լար կին և ասէր. ո՛վ աստուած, մի՞թէ ոչ կարացեր ընտրել գէշն և գկովն ի միմեանց»²:

Այսպիսով, միջին հայերենը թե՛ն չունի նախադասության մեջ բառերի դասավորության խիստ կանոններ, բայց կա որոշ կապակցությունների սովորական դասավորություն, որը խախտել չի կարելի: Միջին հայերենում բառերի դասավորության այդ կարգը ավելի կայուն է, քան գրաբարի և ժամանակակից հայերենի բառերի դասավորությունը:

գ) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվի զարգացման յուրաքանչյուր էտապ ունի ժողովրդի տվյալ շրջանի լեզվի հաղորդակցական ֆունկցիայով պայմանավորված կանոններ, որոնք արտահայտվում են նաև նախադասությունների կապակցության մեջ: Այդ է պատճառը, որ միջին դարերում թե՛ն որպես գրավոր լեզու օգտագործվում էր գրաբարը, բայց միջին հայերենի նախադասությունների կապակցությունը մեծ չափով տարբերվում էր գրաբարի նախադասությունների կապակցությունից: Ամենից առաջ, ինչպես ասվեց, միջին դարերում վերացել էր որոշիչների հետադաս գործածությունը, որը պարզացրել էր նախադասության մի շարք անդամների կապակցությունը:

Միջին հայերենը ուներ համադասական և ստորադասական նախադասությունների կապակցության հատուկ եղանակ, որը գրաբարի հետ կապվում էր միայն իր ընդհանուր դրսևորումներով: Գրաբարում, օրինակի համար, շատ տարածված էին դերբայական նախադասությունները (իմ գնացեալ, կամիմ նմա թագաւորել), որոնք չէին գործածվում միջին հայերենում, եթե դրանք վերցված չէին գրաբարից հին կիրառմամբ: Միջին հայերենում կանոնավոր նախադասության ենթական միշտ դրվում է ուղղական հոլովով և ստորոգյալը միշտ դիմավոր է:

Համադասական և ստորադասական նախադասությունները կապվում էին շաղկապներով և կապական բառերով, որոնք միջին

¹ Նույն տեղը, էջ 342:

² Նույն տեղը, էջ 329:

հայերենում ունեին նաև նոր ձևեր:

Միջին հայերենը, գրաբարի նման ուներ երկու խմբի՝ համադասական և ստորադասական շաղկապներ:

Համադասական շաղկապներից միջին հայերենում համեմատաբար տարածված էին՝ **ու, և, (և), նա, ամ, հապա, կամ, կամ-կամ, թե, թե...թե, ոչ ու ոչ, այլ** շաղկապները. օրինակ՝

Նայ ծաղկունքն թառամեցան. կեսն ըզտերևն թափեցին,
Ու կեսըն փախուստ առին, բարձր **ու** դժար լերունքտ ելին:
Ու կեսն յամօթուն՝ հագան կապուտ ՚ւ ի սուգ մըտին.
Ու կեսն ի յերկեղեն ՚ւ յահեն դողան ՚ւ եղեն դեղին¹:

Արև նման շողշող կտաս,
Յորժամ սիրով գաչերդ յածես,
Թե զիս յիշես, **թե** չիշես,
Ես կու սիրեմ սրտովս զքեզ²:

Չի **թե** թագաւոր է ի թախթի,
Կամ քահանայ է ի բեմբի.
Եւ կամ իշխան է արքունի,
Կամ որդի մեծ թագաւորի³:

Դարձո՜ գջարութիւնս յիսնե **ու** փոխե զինչ հին կայ ի նոր.
Թե՛ չար, **թե՛** բարի, **թե՛** դուր, **թե՛** դժար որ ի յաստընւոր,
Ամենն ի քեզնե կուգայ, դու պատճառ, ՚ւ Աստուած դատաւոր,
Աղքատ իմաստուն լաւ է քան հազար անգետ գանձաւոր⁴:

Միջին դարերի հայ տաղերգուները հաճախ կրճատել են **ու** և **և** շաղկապների **ո** և **ե** հնչյունները և վանկ զեղչելու նպատակով գրել **ւ**: Այդ սովորությունը չի պահպանվել հետագա շրջանի հայ գրողների երկերում:

Ստորադասական շաղկապներից տարածված էին՝ **որ, եփ** (երբ),

¹ Նույն տեղը, էջ 37:

² Նույն տեղը, էջ 85:

³ Նույն տեղը, էջ 5:

⁴ Նույն տեղը, էջ 9:

գեղ, գետ, ինչուր, եթե, թե, մինչև, քան զի, յորժամ, ապա և այլն:
Օրինակ՝

Սիրտ ունիմ այս բանքս, որ հանց կու ջանամ
Որ ի լավ ընկերացն ի յետ չի մընամ
Յայն աղբիւրն եմ կարօտ, **որ** լաց կու կենամ
Թե հասնի՞ կաթ մի յիս **որ** արդարանամ¹

Պլպուլն ալ աշըղ դարձել,
Զօրըն գայն մալում կու այնե
«**Չես** զիս փոքրիկ մի հաւիկ՝
Սիրու տեր կամ ո՞վ տեսել է
Տարին տասվերկու ամիս
Փուշն զիմ մորթիս կու ծակե
Չես զվարդն ի հասիլ բերեմ,
Նայ ամեն խուզան կու քաղե²

Հայերենի շաղկապները, ինչպես ասել ենք, առաջացել են ինքնուրույն բառերից: Ինքնուրույն բառերից շաղկապներ գոյանալու պրոցեսը շարունակվում էր նաև միջին դարերում, օրինակ՝ **գետ** շաղկապը, որը ունի «ինչպես» իմաստը, առաջացել է **զի-արդ** բառերից, որոնք միանալով ստեղծել են **զերդ**, ապա ընկել է **ր** հնչյունը **դ**-ից առաջ և բառը ստացել է **գետ, գեղ** ձևը:

Միջին հայերենում տարածված է **ու** համադասական շաղկապը, որը չի եղել գրաբարում. Հայ բանասերներից ոմանք կարծել են, որ այդ շաղկապը հայերենին է անցել թուրքերենից: Այդ տեսակետը ճիշտ համարել չի կարելի, որովհետև դեռևս հինգերորդ դարում երևում էին այդ շաղկապի դրսևորումները, թեև շատ հազվադեպ այսպես, օրինակ՝ հինգերորդ դարի գրականությամբ ավանդված են **այրուծի և այրևծի** բառերը, որոնց մեջ **ու** և **ու** են միևնույն իմաստը: Այդ շաղկապը, կարծում ենք, հայերեն **եւ** շաղկապի հետագա ձևափոխումն է, որը նախ գործածվել է բանավոր լեզվի մեջ՝ մի շարք բարբառներում, ապա անցել է գրավոր լեզվին

Միջին հայերենի բարդ նախադասությունները արտահայտում են

¹ Նույն տեղը, էջ 23

² Մ. Աբեղյան, Գուս ժող տաղեր, էջ 59

համադասական և ստորադասական հարաբերություններ: Համադասական նախադասությունները միայն ընդհանուր իմաստով են կապված միմյանց հետ. իբրև խոսքի միավորներ, նրանք ինքնուրույն են և ունեն քերականական իրենց ձևը:

Համադասական նախադասությունները միմյանց հետ կապակցվում են համադասական շաղկապներով, կամ կարող են միմյանց հաջորդել առանց որևէ շաղկապի: Համադասական նախադասությունների կապակցության վերոհիշյալ եղանակները ընդհանուր են հայոց լեզվի բոլոր շրջանների և բոլոր բարբառների համար:

Ստորադասական նախադասությունները, ինչպես հայերենի բարբառներում, ժամանակակից հայերենում, գրաբարում, նույնպես և միջին հայերենում միմյանց հետ միանում են կապակցական բառերով, հարաբերական դերանուններով և շաղկապներով օրինակ՝

Չկայ հրաման յօրինաց, որ կարէ ի կարգաւորաց եկեղեցոյ ընդ թերահաւատ կամ ընդ այլազգի մարդոյ խնամութիւն այնել, ոչ ունեալ հարս և ոչ տալ. և թէ այն է՝ չլինի ընդունած¹:

Չիմ ցաւուն դեղն դո՛ւ գիտես,
Ինձ օտար հեքիմ չի բերե՛ս.
Թէ նեղ է, նայ դեղ արա,
Թէ չէ՝ լի՛ց գնոր սերդ ալ ի նե՛րս²:

Միջին հայերենում, ինչպես նաև ընդհանրապես հայերենում, երկրորդական նախադասությունները լրացնում են նախադասության գլխավոր և երկրորդական անդամների միտքը և ըստ այնմ էլ լինում են ենթակա, ստորոգյալ, որոշիչ, հատկացուցիչ, խնդիր և պարագա երկրորդական նախադասություններ: Միջին հայերենը պահել է գրաբարի բոլոր գլխավոր շաղկապները իրենց հիմնական իմաստներով և դրանց ավելացրել է նոր շաղկապներ, որոնց մի մասը առաջացել է գրաբարի շաղկապների ձևափոխումից, իսկ մնացած մասը՝ ինքնուրույն բառերից: Նախադասությունների կապակցությունը միջին դարերում արտահայտվել է ժամանակակից հայերենին նման կանոններով, որոնք իրենց ընդհանուր դոսևորումներով գոյություն

¹ «Դատաստանագիրք Սմբատ Իշխանի», 1918, էջ 25:

² Մ. Աբեղյան, նույն տեղը, էջ 110:

են ունեցել նաև գրաբարում:

Այսպիսով, միջին հայերենի քերականության համակարգի համառոտ շարադրանքից երևաց, որ նա իր զարգացման պրոցեսում գտնվող այնպիսի մի լեզու էր, որը իր քերականական կենսունակ իրողություններով կապվում էր աշխարհաբարի և բարբառների հետ: Նրա մեջ պահպանված որոշ կանոններ, որոնք գրաբարի համապատասխան օրինաչափություններ էին հիշեցնում, կապված էին հին որակի տարրերի հետ և աստիճանաբար մահանում էին: Այդուհանդերձ՝ միջին հայերենը իր քերականական համակարգով գրավում էր հատուկ տեղ հայոց լեզվի պատմության մեջ և ուներ իր զարգացման ներքին օրենքները, որոնցով կատարելագործվում ու հղկվում էր անընդհատ:

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԸ

1. ԲԱՌԱՊԱՇԱՐՆ ՈՒ ՆՐԱ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԸ

Լեզվի բառային կազմը գտնվում է անընդհատ զարգացման ու համալրման պրոցեսների մեջ, նա արտացոլում է հասարակության կյանքում կատարված բոլոր փոփոխությունները, հարստանում է հասարակության քաղաքական կյանքը, տնտեսական հարաբերությունները արտացոլող բազմաթիվ նոր բառերով ու դարձվածքներով: Սակայն, այդուհանդերձ, չի մոռացվում լեզվի գոյություն ունեցող բառապաշարը, և ընդհանրապես լեզվի բառային կազմից դուրս ընկած և չգործածվող բառերի քանակը անհամեմատ քիչ է, քան բառային կազմին ավելացող բառերի քանակը: Այդ պատճառով էլ երբեք չի ընդհատվում տվյալ լեզվի հին և նոր շրջանի բառապաշարի միջև եղած կապը: Այդ առումով էլ չի կարելի որևէ սահման դնել միջին հայերենի և գրաբարի բառապաշարի միջև, թեև միջին հայերենի բառային կազմը հարուստ ու բազմազան է, քան գրաբարինը:

Միջին հայերենի բառային կազմը ամբողջությամբ դեռևս չի ուսումնասիրված: Հայտնի չէ, թե միջին հայերենի հարուստ գրականության մեջ քանի նոր բառ է գործածված, բայց հայտնի է, որ միջին հայերենի բառակազմական հնարավորությունները գրաբարի համեմատությամբ ավելի լայն էին: Բավական է ասել, որ միջին դարերում

հունաբան հայերենի ներկայացուցիչների ստեղծած նախածանցներով կազմվել էին գրաբարին օտար բազմաթիվ նոր բառեր: Այսպես, օրինակ՝ առեղծում, առընդդիմացումն, առընդելական, առընչունի, արտահանել, արտահատել, արտահայտել, բացագլուխ, գերապարզ, գերառաւել, գերգովելի, գերիմաց, դերհատուցական, ենթադրել, ենթակայ, հակաճառել, հակակրել, հակամիտել, շարագրած, շարադրություն և այլն:

Բացի նման բառերից, միջին դարերում սկսել են գործածվել բարբառային շատ բառեր, որոնք մուտք էին գործել գրաբարի մեջ, ինչպես՝ առիք, անեկ, աղէկ, աղցան, ապուր, բրդոտ, գլորուկ, գզոց, գորտնուկ, դգալ, թան, թըջոց, թոկ, լաթ, լաճ, խաղ, ծիծ և այլն:

Միջին հայերենի բառապաշարը հարստացել է նաև հայերենի բառակազմական այն օրենքներով, որոնք ընդհանուր են եղել հայոց լեզվին իր զարգացման բոլոր շրջաններում, այսինքն՝ բառաբարդացման և ածանցավորման կանոններով կազմվել են նոր բառեր ու բառակապակցություններ. ինչպես՝ արշավատեղ, արճիճագույն, արգելաշունչ, ակնջաթոռք, դասատուն և այլն:

Այսպիսով, միջին հայերենի բառապաշարը հայ հասարակության կյանքում կատարված փոփոխությունների պահանջով հարստացել ու զարգացել է ամենից առաջ իր ներքին հնարավորություններով, իր զարգացման ներքին օրինաչափություններով: Սակայն միջին հայերենը հարստացել է նաև փոխառությունների ճանապարհով:

Հայ ժողովրդի կյանքում լուրջ տեղաշարժեր են կատարվում միջին դարերում. հայկական պետականության վերականգնումը, հայերի և հարևան, հատկապես կովկասյան ժողովուրդների միջև եղած քաղաքական ու տնտեսական կապի ամրացումը, հայ և եվրոպական ժողովուրդների միջև ստեղծված հարաբերությունները և սելջուկյան, մոնղոլական ու թուրքական արշավանքներն ու տիրապետությունը Հայաստանում բազմաթիվ նոր բառերի առաջացման ու տարածման անհրաժեշտության պահանջ են դնում: Գործածվում են պետական կյանքը արտացոլող նոր բառեր, փոխառվում մշակույթի ու սովորական կյանքի զանազան բնագավառների հետ կապված տերմիններ ու բառեր և այլն: Այդ բոլորը անհամեմատելի չափերով հարստացնում են միջին հայերենի բառապաշարը, թեև փոխառված բառերի զգալի մասը չի արմատանում հայոց հետագա շրջանի գրավոր լեզվի մեջ: Այսպես, օրինակ՝ պրոֆ. Յ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմու-

թյուն» աշխատության երկրորդ հատորի մեջ բերված 702 արաբական փոխառություններից միայն 53-ը, իսկ թուրքերենից հայերենի բարբառներին և միջին շրջանի գրական հայերենին անցած 4000 բառից միայն 20-ն են մտել ժամանակակից հայերենի մեջ և այժմ գործածվում են:

Այդուհանդերձ, միջին հայերենի բառային կազմը գրաբարի համեմատությամբ ավելի հարուստ էր ու բազմազան և ուներ զարգանալու, իր միջոցները ընդլայնելու անսահման հնարավորություններ: Այդ բոլորին ավելանում էին նաև հին բառերի նոր իմաստները, որոնց ձևավորումը կապված էր, մի կողմից՝ հասարակական նոր հարաբերությունների, իսկ մյուս կողմից՝ լեզվի բառապաշարի զարգացման ներքին օրենքների հետ:

Լեզվի զարգացման յուրաքանչյուր շրջանին հատուկ են լեզվական ուրույն դարձվածքներ ու ոճեր, բայց նոր ոճերի ու առանձնահատուկ դարձվածքների հետ պահպանվում են նաև հին ոճերը և դարձվածքները, թեև դրանց մեծ մասը ձևական որոշ փոփոխությունների է ենթարկվում: Այդ երևույթը ակնբախ կերպով երևում է նաև միջին դարերի հայ գրական լեզվի մեջ: Միջին դարերում ձևավորվում են նոր դարձվածքներ ու ոճեր, որոնք ձևական որոշ կապակցություններով մտնում են հայոց լեզվի բառապաշարի մեջ, դրա հետ միասին գործածվում են նաև գրաբարի ոճերն ու դարձվածքները:

Միջին հայերենի բառային կազմի մեջ հատկապես աչքի էին ընկնում գիտության մի շարք բնագավառների հետ կապված նոր բառերը: Միայն միջին դարերից են սկսում մշակվել հայ բժշկական տերմինները և կազմվել կամ նոր իմաստով գործածվել այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ ստածում, գիջութիւն, ջերմն, ակնջթոռք, ակնաւտակ, անդտակ, բառք-բարք (ախորժակ, տրամադրություն), գանձակ (աղիքների պարկ, փոր), գանձակցաւ (միզարգելություն), գարեկ (աչքի գարի), ձեռնագործ, մտաստածում, շնչերակ, ջղախոտ, փայծաղնացաւութիւն, քաղցեց (անոթի) և այլն:

Սակայն բժշկական տերմինների գերակշռող մեծամասնությունը փոխառված էր: Այսպես, օրինակ՝ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ, որը հրատարակել է հայտնի հայագետ Ս. Մախասյանցը, հայերեն բժշկական տերմինների հետ գործածված են այնպիսի օտար բառեր, ինչպիսիք են՝ ազատրախտ, ազիզին, աթաշի փարսի, ալուսայ, ախրապ, ակհալ, ահշայ,

աղլեմիա, ամայ այիտի դադ, ամլաս, աջալանի, աքիլայ, գիւլ, եարա-
դան, զալահ, զալադ ուլ ամայ (փորրուծություն), զպուլի, թապլի,
թուսայ, թուտարի, իսպիտաճ, լազիճ, լատան, խաս ըլ հիմար (բույս),
խնախ, խումար, խուլուլ, կեֆալ, կիպարիս, հազագ, հալաբուշտ,
հայզ, հաճար ըլ Նար, հապ, հապ Նիլ, հարաքաթ, հարաքաթի ինզի-
պադ, հաքիմ, համաս, դալխանա, դաշի, դար, դիպ, ճալիտե, ճավ-
տար, ճատար, ճլե, մազարիոն, մալաքիա, մամիրան, մայսամ, ման-
րագոր, ման, մամուրայ, մատա, մոհրամ, մուա, մուդաս, Նայիմ, Նա-
պաթ, Նասուր, Նարճիլ, Նուկաս, շակիկայ, շիպիշ, շրնախ, ուսայիլմա,
չօք, պալիլաճ, պատրուճ, սադապ, սալապին, սակամոնի, սանճատ,
սայֆայ, սապաթ, սատեճ, սարատան, սարկին, սոսմար, սերխիշտ,
սլակ, սուլայ, սֆուֆ, վաճայ ալ ֆուվատ, վապայ, տայուն, տիրֆիլ,
տոսախ, փայվանդ, փանզահր, քաթատ, քալաֆ, քալուս, քաֆ,
քուբէշ, քուռաթ, ֆալիճ, ֆար ըլ տիպ, ֆիլֆիլ, ֆութանաճ, ֆոտուլ,
ֆուվախ և այլն:

Այսպիսով, միջին հայերենի բառապաշարում առկա էին հայ ժո-
ղովրդի պատմական կյանքում կատարված փոփոխությունները ար-
տահայտող բոլոր բառերը, որոնց զգալի մասը ներթափանցել էր մի-
ջին դարերի գրականության լեզվի մեջ:

Միջին հայերենը հարստացել ու կատարելագործվել էր՝ ա) հայե-
րենի զարգացման ներքին օրինաչափություններով՝ «նոր որակի
տարրերի աստիճանական կուտակման միջոցով», բ) փոխառություն-
ների միջոցով, որոնք մի շարք, հատկապես գիտական և քաղաքա-
կան կյանքի հետ կապված հասկացություններ էին արտահայտում:
Ինչպես տեսանք վերևում բերված օրինակներից, բժշկական տեր-
մինների զգալի մասը փոխառված բառեր էին, այդ բանը կարելի է
ասել նաև պետական-կառավարման կյանքի հետ առնչված տերմին-
ների մասին. ինչպես՝ այլդան (իշխան), ասախ (օրենք), արդուլի (դա-
տավոր), անսիզ, արմա, բարուր (վառող), բէկ, բրինձ (իշխան), գոնթ-
(կոմս), գուլդստապլ (ախոռապետ), դան (իշխան), մարաջախտ,
չաուլշ (ոստիկան), պարոն, պայլ (իշխան), ջանսլեր (պաշտոնյա),
սանջախ (դրոշակ), սիր, սուրսաթ (հարկ), վոյվոտայ (հարկահավաք),
տամ (իշխանուհի), տուկ (դուքս), օրդու (բանակ), ֆրեր (խաչակիր
զինվոր) և այլն: Փոխառված բառերից շատ քչերն են ներթափանցում
հայերենի հիմնական բառաֆոնդի մեջ և այդ պատճառով էլ դրանցից
ոչ մեկը Նույն ձևով չի անցել ժամանակակից հայերենին:

2) ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ա) ԲԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս աշխատության մեջ մենք արդեն նշել ենք, որ հայերենի բառակազմության հիմնական եղանակը բաղադրությունն է, որը լայնորեն արտահայտվել է ինչպես հայերենի զարգացման ավելի վաղ, նույնպես և միջին շրջանում: Բառաբարդությունը հայերենում իր ընդհանուր օրինաչափությունները ունենալով հանդերձ՝ յուրահատուկ արտահայտություններով է դրսևորվել հայոց լեզվի տարբեր ետապներում: Գրաբարի մի շարք հարադիր բարդություններ, հատկապես գոյականից և բայից կազմված հարադրությունները միջին հայերենում ձևականորեն ձուլվել էին կամ նրանց փոխարեն կազմել էին մի բառ, օրինակ՝ ակն ածել-ակնածել, ձեռն արկանել-ձեռնարկել, աղօթս առնել-աղօթել, երկիր պագանել-երկրպագել, հակառակ կալ-հակառակել, գործ ածել-գործածել, յանձն առնել-յանձնել, ի պար գալ-պարել, թև արկանել-թևարկել, ի թիւ արկանել-թվարկել, ժամ դնել-ժամադրել և այլն: Սակայն միջին հայերենում նույնպես կային բազմաթիվ հարադրություններ, որոնք ցույց էին տալիս, որ հայերենին ընդհանրապես հատուկ են հարադիր բարդությունները:

Հարադրական բարդություններից կազմվել են կցական շատ բարդություններ, որոնք միջին հայերենում, ինչպես նաև ժամանակակից հայերենում և ընդհանրապես հայերենի բարբառներում հաճախ իսկական բարդության են վերածվում:

Ընդհանուր բառակազմական հնչյունափոխության կանոնները գործում էին նաև միջին հայերենում, սակայն այն տարբերությամբ, որ հնչյունափոխության էին ենթարկվում բոլոր ձայնավորները, իսկ ժամանակակից հայերենում և գրաբարում, ինչպես հայտնի է, չեն հնչյունափոխվում **ա** և **ո** ձայնավորները: Հնչյունափոխության այդ կանոնի առկայության հետևանքով միջին հայերենում շատ հաճախ իսկական և կցական բարդությունները նույնանում էին. օրինակ՝ վաճռուուն, վաճռկից, վաճռպետ, ակնջաթոռք, բառգիրք և այլն:

Կցական բարդությունները ինչպես ժամանակակից հայերենում, նույնպես և միջին հայերենում ու գրաբարում, շարահյուսորեն իրար հետ կապված բարդություններ են, այդ պատճառով էլ հանդես են գալիս ենթակա-ստորոգյալի, որոշիչ-որոշյալի, հատկացուցիչ-հատ-

կացյալի կապակցությամբ:

Նախորդվոր բառակապակցությունները միջին հայերենում, մեծ մասամբ հանդես էին գալիս միասնաբար, իբրև կցական բարդություններ:

Իսկական բարդությունները կազմվում են հայերենին հատուկ ընդհանուր օրենքներով՝ ա հոդակապով և առանց հոդակապի. օրինակ՝ շնչահանք, բժշկապետ, միացեղ, պտղաբեր, երկարօրյա, միջօրյա, հաւձագ, ականջթոռ, դամոնջուր, մաղձխառն և այլն:

Իսկական բարդության առաջին եզրը, ինչպես նշված է արդեն, ընդհանրապես դրվում է եզակի ուղղական հոլովով. այդ օրինաչափությունը գործում էր նաև միջին հայերենում: Այդ օրինաչափության համապատասխան բարդվում էին նաև **և**, **ո**, **դ** ձայնորդներով վերջացող բառերը, որոնք գրաբարում դրվում էին սեռական հոլովով, օրինակ՝ ականջաթոռ, սերմնհան, ականկապ, աստղաբաշխ, աստղազարդ, գառնաղմակ, գառնալեզու, մեղրաջուր, փոքրընկալ և այլն: Այս կանոնը գործուն է եղել շատ վաղուց, դեռևս գրաբարում կային նման բառաբարդումներ, օրինակ՝ ձկանակեր-ձկնկեր, ձկանաբեկ-ձկնաբեկ, սերմանացան-սերմնացան, ականաբեր-ականաբեր, ականակապ-ականկապ, ականատեսություն-ականատեսություն և այլն: Սակայն միջին դարերից սկսած տարածվում են վերոհիշյալ տիպի բառերի ուղղական հոլովով բարդությունները:

Միջին դարերում փոփոխություններ են կատարվել նաև այն բառերի ձևի մեջ, որոնք վերջացել են **ու**-ով և նրան նախորդող որևէ բաղաձայնով: Նման տիպի բառերի մեջ մեծ մասամբ ընկել է վերջի **ու**-ն, օրինակ՝ ձեռն-ձեռ, ակն-ակ, բարձն-բարձ, ձուկն-ձուկ և այլն: Այդ երևույթը հատկապես ընդգծվել է բառաբարդության ժամանակ:

Հայոց լեզվի բառաբարդության մեջ առաջին եզրը միշտ հանդես է եկել իբրև երկրորդ եզրի լրացում: Նույնիսկ գրաբարում, երբ որոշիչները կարող էին դրվել որոշյալի վերջում և համաձայնեցվել, որոշիչ և որոշյալի կապակցությունն արտահայտող բաղադրությունների մեջ որոշիչը միշտ նախադաս է եղել. օրինակ՝ կարմրագեղ, կարմրազարդ, կարմրագգեստ, խայտակն, խայտաքար, գեղապանծ, գեղատիպ, գեղեցկաբան և այլն: Այս օրինաչափությունը պահպանված է նաև հին հայոց տեղանուններում, որ ցույց է տալիս, թե դա հայոց լեզվի հատկությունն է, որը դարեր շարունակ պահպանվել է հայոց լեզվի մեջ և այդ օրենքով նոր բառեր կազմելու հնարավորու-

թյուն է տվել: Բառակազմության այն դեպքերը, երբ երկրորդ եզրը հանդես է եկել իբրև լրացում, ինչպես **մայրաքաղաք** բառի մեջ, օտար ազդեցության հետ են կապված:

Այսպիսով, միջին հայերենում գործում էին հայերենի բաղադրության հիմնական կանոնները, որոնցով էլ կազմվում էին հարադիր, կցական և իսկական բարդություններ, որոնք անընդհատ հարստացնում էին հայերենը նոր բառերով և հասկացություններով:

Սակայն ընդհանուր կանոնի կողքին միջին հայերենում մենք հանդիպում ենք նաև օտարաբան կազմությունների, հատկապես առաջադիրներից կազմված բաղադրությունների, ինչպես՝ անդրագիր, արտուղի, դերանուն, դերբայ, մականուն, մակբայ, միջերկրայ, միջածով, միջագիշեր, միջակուրծք և այլն: Այսպիսի բառակազմություններ թեև կազմվել են հին հայերենին ոչ հատուկ օրինաչափություններով, բայց արմատացել են հայերենի մեջ և դարձել նրա զարգացման հետագա շրջանի անհրաժեշտ տարրերը: Այսպիսով, միջին դարերից սկսած հայերենի բաղադրության օրենքները այլ լեզուների ազդեցությամբ ընդարձակվում են՝ ձեռք բերելով գրաբարին անհարազատ կանոններ, որոնք անցնում են նաև հայերենի բարբառներին ու ժամանակակից հայերենին:

բ) ԱԾԱՆՑՈՒՄ

Հայերենին, ինչպես արդեն նշել ենք, հատուկ է եղել ածանցավորումը իր զարգացման բոլոր շրջաններում: Սակայն կոնկրետ ածանցների առաջացման ընթացքը տարբեր կերպ է արտահայտվել հայոց լեզվի տարբեր էտապներում: Հայերենի ավելի վաղ, նախագրային շրջանում ստեղծվել են բազմաթիվ վերջածանցներ ինքնուրույն իմաստ արտահայտող բառերից, իսկ ավելի ուշ, հատկապես գրավոր շրջանում դանդաղել է ինքնուրույն բառերից վերջածանցներ ստեղծվելու պրոցեսը: Այդ շրջանում ածանցներ ստեղծվել են մեծ մասամբ հոլովական ձևերից, բայական վերջավորություններից, հոգնակի վերջավորություններից, ուրիշ լեզուների անալոգիայով և այլն:

Միջին հայերենում գործել են գրաբարի ածանցման բոլոր կանոնները, և դրան զուգընթաց տարածվել են ածանցավորման նոր կանոններ, հանդես են եկել նոր ածանցներ, որոնք գրաբարում դեռևս ածանցներ չէին: Այդ նոր ածանցները մեծ մասամբ առաջացել են հին

հայերենի հոլովական կամ բայական ձևերից: Հատկապես պետք է ընդգծել, որ միջին դարերից սկսած, հայերենի հոգնակիակերտ մասնիկներից շատերը (ք, ան, անի, ոտ և այլն) վերածվել էին ածանցների: Այսպես, օրինակ՝ Ամիրդովլաթ Ամասիացին գրում է. «Այսպես էր գրեալ գրքիս շինողն»¹: «Շատ դժարութիւն և պատահմունք եմ քաղել ի յանօրինաց»²: «Բայց առաջին փորոքն, որ է պատն որ ի ճակտին դիհն է՝ քան զան բ բաժինն մեծ է, և ինքն հիմն է և տուն է տեսողութեան. և աչացն՝ լուսաւորութիւնն և մթնալն ի յայն փորոքնուն է»³: Այս օրինակների մեջ ք-ն չի գիտակցվում իբրև հոգնակիություն ցույց տվող վերջավորություն: Այդ պատճառով էլ **փորոք** բառը ընդունել է **նի** հոգնակի վերջավորությունը (փորոքնուն): Վերոհիշյալ հոգնակի վերջավորությունների մեծ մասը միջին հայերենից սկսած գործածվում էր իբրև վերջածանց:

Միջին հայերենում, բացի գրաբարում գործածված վերջածանցներից, լայնորեն գործածվում էին նաև հետևյալները՝

ած – քնած, գրած, խմած

ան – խածան, հոսան, ձիան, տականք

անի – լեզուանի, դռնանի, մեծ քթանի

անց – հալավանց, հեռվանց

աշ – թթուաշ, կարմրաշ

եկ – հացեկ

են – նկարեն, երեք աչքեն

եք – ութօրեք, ջրօրինեք

կեն – հիւսկեն, ծակոտկեն

եց – քաղցեց (անոթի)

ման – եռման, վառման, սուտմանց

ուն – բրդուն

ովի – ջրովի, հնարովի

ովին – իւրովին, գլխովին, կամովին

ու – ազդու, հատու, վաշխառու

ութ – փոքրութ, ծերութ,

ուկ – հեղուկ, քարուկ, վաղանցուկ

ոյթ – սովորոյթ, ծերոյթ, բնոյթ

¹ Ամիրդովլաթ Ամասիացի, Նույն տեղը, էջ 5:

² Նույն տեղը, էջ 7:

³ Նույն տեղը, էջ 31:

ստան – լեռնաստան, ծառաստան
վար – քաղաքավար, մարդավար
ցու – մսացու, սերմացու, մահկանացու
ք – գիրք, խօսք, բարք և այլն:

Այս ածանցների մի մասը առաջացել է հին հայերենի ածանցներից, հնչյունական որոշ փոփոխությունների ենթարկվելով, մի մասը՝ գրաբարի հոլովական վերջավորություններից կամ հոգնակի ցույց տվող ածանցներից, մի մասն էլ միջին դարերի գրական լեզվին անցել է բարբառներից: Այս վերջաձևերին կարելի է ավելացնել նաև երկու տասնյակից ավելի նախաձանցներ, որոնք, ինչպես արդեն նշել ենք, մշակել են հունաբան հայերենի ներկայացուցիչները, օգտագործելով հիմնականում հայերենի իրողությունները: Այդ նախաձանցները միջին դարերից կիրառվում էին մեր լեզվում իբրև նրա զարգաման հետ կապված կենսունակ տարրեր:

Հայոց ազգային լեզվի կազմավորման շրջանում նոր ածանցներ համարյա թե չեն ստեղծվել, եթե նկատի չունենանք մի շարք փոխառված վերջաձանցներ, որոնք գլխավորապես գործածվում են օտար բառերի հետ և այդ պատճառով էլ դեռևս լայն կիրառություն չեն ստացել, թեև դրանցից մի քանիսը տարածվելու ուժեղ տենդենցներ են ցույց տալիս:

Միջին հայերենում գործածական ածանցներ էին՝

ա) նախաձանցներ՝ ան, տ, ապ, դժ, արտ, անդր, բաղ, բաց, գեր, դեր, թեր, հակ, համ, հատ, հեղ, մակ, ենթ, ետ, հետ, նախ, ներ, շար, շաղ, չ, պար, ստոր, վեր, տար, տրամ, փոխ և այլն:

բ) Վերջաձանցներ՝ ած, ածո, ածու, ծու, ակ, ական, ակի, ային, այն, ան, անք, անակ, անկ (ասանկ), նակ (խոտորնակ), անի, անուտ, անց, ենց, աշ, ւոր, ատ, աւուն, ար, արք, արան, արդ, արեն, արենք, որայք, (ա)ցի, (ա)ցու, բար, գար, գին, գոյն, է, եկ, եակ, եղ, եղեն, եղի, են, ենք, ոնք, ունք, խիստ, ուստ, երեն, ստեն, երորդ, ռորդ, եցի, թափ, ժետ, ժեռ, ի, իք, իկ, ին, ինք, իչ, ըստ, եստ, իցս, կակ, կեկ, կիկ, կուկ, կեն, կին, կից, կոտ, հան, հանց, հատ, ման, մանց, մունք, եայ, եալ, եակ, եան, իւն, նի, նոց, անոց, ոց, ոյ, ու, ող, ոն, ոնք, ուճ, ովի, ովին, ոտ, ոտի, տի, տիք, որդ, օրեն, ոյթ, ութին, ուկ, ուհի, ում, ոյք, ուն, ունտ, ունի, ուչ, ունչ, ուտ, ուրդ, պան, պատիկ, պես, ստան, ւած, ուածք, ուածս, վար, վարի, ցի, եցի և այլն:

զ) Բայածանցներ՝ այ, աց, եաց, եց, ոյց, ուց, ան, ու, չ, նչ, ն, ած, ուկ, տ, ոտ, ատ, ցն, վ, ում, իս, եր, ել և այլն:

Ածանցների այս բազմազանությունը լայն հնարավորություններ է ընձեռում հայերենի բառային կազմը անընդհատ համալրելու, բազմակողմանի դարձնելու և հարստացնելու համար: Հայերենի բազմաքանակ ածանցների շնորհիվ հնարավոր է ստեղծել ուզած հասկացությունը լրիվ չափով արտահայտող բառեր:

Սակայն այդ ածանցների մի մասը հայերենի զարգացման բոլոր շրջաններում կենսունակ չի եղել. օրինակ՝ միջին հայերենում՝ շատ տարածված բայական **ուկ, եր** ածանցները ակտիվ կիրառություն չունեն ժամանակակից հայերենում: Լեզվական յուրաքանչյուր տարրի ակտիվացումը կապված է լեզվի հաղորդակցական ֆունկցիայի հետ՝ նրա զարգացման տվյալ շրջանում: Լեզվի հաղորդակցման ֆունկցիան դրսևորելու ժամանակ տարածվում են ամենից առաջ ժողովրդի հասկանալի լեզվական տարրերը. իսկ այդ տարրերի հասկանալիության աստիճանը սերտ կերպով կապված է տվյալ ժողովրդի պատմական կյանքում ժողովրդի այս կամ այն հատվածի խաղացած դերի հետ: Միջին հայերենում կենսունակ **եր** և **ուկ** ածանցները չմտան ժամանակակից հայերենի մեջ, որովհետև XIX դարում հայ ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունների հետևանքով հայոց ազգային լեզվի հիմքում ընկավ Արարատյան բարբառը, որի մեջ ակտիվ գործածություն չունեին **եր** և **ուկ** ածանցները: Այդ հիման վրա էլ նրանք չթափանցեցին գրական լեզվի սահմանները, թեև մինչև այժմ էլ գործածական են հայերենի մի շարք բարբառներում:

Այսպիսով, միջին հայերենի բառապաշարը շարունակում է ընդարձակվել ինչպես բառաբարդման, նույնպես և ածանցման եղանակով: Միջին դարերում ստեղծվում են մի շարք նոր ածանցներ, որոնք արմատանում են հայոց լեզվի մեջ և դառնում նրա նոր որակի հետ կապված տարրերը: Միջին դարերից գործածությունից դուրս են ընկնում շատ ածանցներ և նրանց փոխարեն սկսում են գործածվել նորերը: Միջին դարերի հայ գրավոր լեզվի մեջ պարզ կերպով ուրվագծվում էին հայերենի նոր որակի հետ կապված տարրերը, սակայն դեռևս պահպանված էին հին որակի հետ կապված շատ տարրեր իրենց բազմազան արտահայտություններով: Այդ է պատճառը, որ միջին հայերենի ինչպես քերականության, նույնպես և բառապաշա-

րի մեջ նկատվում էր միևնույն իմաստը բազմաթիվ ձևերով արտահայտելու տենդենցը:

Միջնադարյան հայ գրական լեզվի մեջ իշխող այդ տենդենցը պահպանվեց, որովհետև քերականական առանձին ձևերի կայունացման համար պատմական նպաստավոր պայմաններ չստեղծվեցին և չավարտվեց այդ լեզվի ձևավորման պրոցեսը:

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԼԵՃՈՒ

Միջին հայերենը իր հիմնական արտահայտություններով XI–XII դարերում արդեն ուրվագծվել էր: Ժամանակի հայ գրողներն ու գիտնականները լայնորեն օգտագործում էին նրա իրողությունները իրենց գործերում: Սակայն այդ լեզուն դեռևս պաշտոնական գրագրությունների ու փաստաթղթերի լեզու չէր դարձել: Այդ հանգամանքը կապված էր Հայաստանում այդ ժամանակ տիրող դրության հետ: Ինչպես հայտնի է, XI դարի երկրորդ կեսից սկսած Հայաստանը զրկվում է ուժեղ պետականությունից, ենթարկվում է սելջուկների արշավանքին, և քարուքանդ են լինում նրա շեն քաղաքներն ու ավանները: Հայ ժողովրդի զգալի մասը արտագաղթում է և բնակություն հաստատում երկրից հեռու, զանազան վայրերում: Արտագաղթած հայերի մի զգալի քանակություն հաստատվում է Կիլիկիայում, որտեղ առանց այդ էլ հայերը գերակշռություն էին կազմում: Կիլիկիայում X–XI դարերից սկսած կազմվում են մի շարք ֆեոդալական տներ, որոնց մեջ ամենաուժեղը Ռուբինյան տիրույթն էր: Ռուբենը իր շուրջը համախմբելով հայ ֆեոդալներին՝ 1080 թվականին Բյուզանդիայից խլում է Կիլիկիայի լեռնային շրջանների մի մասը, հռչակում է անկախ իշխանություն և դրանով հիմք է դնում Կիլիկիայի Ռուբինյան թագավորությանը, որը տևում է մոտ երեք հարյուր տարի: Հայկական մշակույթը ու գրականությունը նոր թափով սկսում են զարգանալ Կիլիկիայում. հանդես են գալիս գրողներ ու գիտնականներ, որոնք արդեն նոր լեզվով՝ միջին հայերենով սկսում են շարադրել իրենց երկերը:

Հայոց լեզվի պատմությանը նվիրված մի շարք աշխատություններում արտահայտված է այն կարծիքը, թե Կիլիկիան այդ դարերում ունեցել է իր բարբառը, որը գրի է առնվել և օգտագործվել է իբրև

պետական լեզու: Այդ տեսակետը, մեր կարծիքով, ճիշտ չէ. Կիլիկիայում գրված գործերը չեն գրվել բարբառով, այլ գրվել են միջին հայերենով, որը չէր նույնանում որևէ բարբառի հետ, թեև իր մեջ արտացոլում էր բարբառային շատ իրողություններ: Կիլիկիայում հավաքված հայ բնակչությունը, ինչպես հայտնի է, ներգաղթել էր Հայաստանի տարբեր շրջաններից՝ Անիից, Վասպուրականից, Կարսից, Կարինից ու այլ վայրերից և խոսում էր տարբեր բարբառներով, որոնք Կիլիկիայում խիստ կերպով մոտենում են իրար և փոխադարձաբար հարստացնում են միմյանց բարբառային տարբեր իրողություններով: Բարբառների կոնսոլիդացման այդ պրոցեսը իր արտացոլումն է գտել ընդհանրապես միջին հայերենի և մասնավորապես Կիլիկիայում գրի առնված գրականության լեզվի մեջ, որը չէր տարբերվում Հայաստանի այլ շրջաններում գործածվող գրավոր լեզվից իր հիմնական դրսևորումներով:

Միջին հայերենը Կիլիկիայում դառնալով պետական, պաշտոնական լեզու՝ մշակվում և ավելի է կատարելագործվում: Սակայն, այդուհանդերձ, չեն վերանում այն բազմազանությունները, որոնք հատուկ էին ընդհանրապես միջնադարյան հայ գրականության լեզվին:

Միջին հայերենի մշակված կամ գրական մշակման ենթարկված տեքստերում լեզուն զգալի չափով կանոնավոր է, համեմատաբար պահպանված է միօրինակություն բայաձևերի մեջ, մեղմացված են բարբառային ձևերը և այլն: Այսպես, օրինակ՝ Պոնիոս Անատոլիոս Պերիթացու «Վաստակոց գիրք» աշխատության մեջ հանդիպում են բավականաչափ հղկված հատվածներ. «Արժան է գիացն (զցորեան) յայնպիսի աման պահել,– գրում է նա,– որ արևելից լոյսն և պարիւրային հողմն ի ներք մտանէ, և ունենայ շնչահան, որ ամեն ծուխն ելանէ: Եւ մօտ ի հորոնն՝ ախոռ, արտաքնոց և այլ ինչ գիշահոտ տուն մի՛ թողուր. և ա՛ռ սպիտակ հող և շաղախ արա, և մազ խառնեա ի ներք և յարդի ծեղ, և լաւ կոխեա և նեխեցո քանի մի օր, և այնու ծեփեա ի ներքսէ. թէ քարուկիր առնես և թէ այլ ցեղ շէնք՝ դու զներսն և զդուրսն ծեփէ և թող որ չորանայ և սնանի աղէկ. և ապա ժողովել տուր, զվայրի լեղի խիարկի տակն՝ որ յաւերակսն լինի՝ իւր ցօղունովն, և դիր ի ջուր և թրջեա երեք օր, և ե՛ռ անցո ի վերայ. և առ աւազ մանր և կրակաց մոխիր և այն ջրովն շաղախեա նօսր և օծեա զմէջգետինն և զորմունքն՝ աղէկ, և լից զցորեանն: Եւ են ոմանք, որ զաւազն և կրակաց մոխիրն՝ գրաստուց գոգով թրջեն. և այս աղէկ է,

գի սպանանէ գոցիլն և գայլ կերիչսն: Եւ ոմանք ի յաւագի տեղ՝ գկղմիստորն լեսեն և դնեն, և այս լաւ է. և այլք առնուն գհօտին մոխիրն կամ գկաղնի փայտին, կամ գգշկուրն, աղա գորն և կամիս յայս երիցս. և երբ լնուս գամանն՝ ի վերայ ցորենին ցանեա աղէկ քանի կարես. խիստ պահէ գցորեանն:

Գնա ի կուգերն և պատրաստութեամբ ըմբռնեա երկու մատամբդ մէկ պտուղ մի, և խլեա ի կոյգկապէն: այնպէս որ չպտղի պտուղն և տես, թէ ընդ կապծակն ջուր գա ի դուրս՝ գինեբուղիս է և շատ գինւոյ նշան, և թէ չլեանէ ջուր՝ նա վատ է, և սակաւ գինի լինի: Եւ փործեալ են ոմանք, որ երբ արտերն կամ այլ սերմանք աղէկ լինին՝ նա գինին սակաւ լինի: Եւ այլ ոմանք փործեալ են, որ երբ գարունն անծրևային գայ՝ նա գինին շատ լինի. և թէ յայնժամ գայ անծրևն որ ագոխն քան գքուշնայ մի լինի՝ նա խիստ օգտէ. և թէ յառաջ որ հասանի՝ յոր ժամու գայ՝ օգտէ. և եթէ ի կթելոյն ժամն գայ անծրևն շատ գինի առնէ, սակայն նօսր լինի և շոյտ քացախի»¹:

Վերոհիշյալ գրքի լեզուն, ինչպէս երևում է մեջբերված հատվածից, համեմատաբար կանոնավոր և միատարր է. նկատվում է, որ մշակվածության որոշ շրջան է անցել և հղկվել է: Սակայն ուշագրավն այն է, որ չնայած նրա հղկվածությանը՝ լրիվ չափով հասկանալի է մնացել, որովհետև չեն խախտվել միջին շրջանի հայերենի շարադասության ու համաձայնության կանոնները: Տեքստում պահպանված է ավանդական ուղղագրությունը և բառերի՝ գրական, ինչպէս նաև որոշ դեպքերում քերականական հին ձևերը, այսպէս, օրինակ՝ հրամայական եղանակով գործածված բառերի մեծ մասում պահված է գրաբարյան ձևը (ծեփեա, խառնեա, թրջեա, անցո, օծեա և այլն), բայց բոլոր բառերը գործածված են նոր իմաստով (արտաքնոց, ժողովել տուր), նախադասությունները կառուցված են միջին դարերում գործուն օրենքներով (և մօտ ի հորոնն՝ ախոռ, արտաքնոց և այլ ինչ գիշահոտ տուն մի՛ թողուր, և առ սպիտակ հող և շաղախ արա և այլն), որոշիչները մեծ մասամբ դրված են նախադաս (սպիտակ հող, պարխրային հողմն և այլն), բայերի խնդրառությունը նոր կանոններով է կատարված, ուղիղ խնդիրը դրվել է ուղղականի ձևով (օծեա զմեջգետինն և զորմունքն), կիրառվել են բառակազմական նոր ձևեր (քարուկիր) և այլն:

¹ Գ. Ղ. Յովնանեան, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, մասն առաջին, էջ 98:

Լեզվի նման կանոնավորություն մենք տեսնում ենք նաև ուրիշ աշխատությունների և հատկապես Սմբատ Սպարապետի երկերի մեջ: Սմբատ Սպարապետի դատաստանագրքի լեզուն այդ տեսակետից բավականաչափ ուշագրավ փաստեր է պարունակում: Այսպես, օրինակ՝ նա գրում է.

«Յառաջ պարտ և արժան է գիտել եթե ի՞նչ կապակցություն կայ ընդ պարոնս և ընդ լիճ ճորտն: Եւ արժան է գիտել որ մեծ հաւատարմութիւն կայ և կապակցութիւն, հայնց որ ա՛յլ մեծ չկարէ լինել: Վասն զի կապվել է ճորտն լճութեամբ ընդ իր պարոնս՝ ընդդէմ ամէն ազգ մարդոյ, որ մեռնել կարէ և ապրել յաւիտեան: Եւ պարտի տալ հաւատարմութիւն իր պարոնին զեղ լիճ պարոնի. իր պարոնն պարտի ընդունել զինքն ըզորդ հաւատով և իրաւամբք զեղ լիճ ճորտ: Եւ լիճ ճորտն չունի այնուհետև իշխանութիւն՝ որ ա՛յլ իր պարոնին հարկեցն կամ պարոնութեանն հակառակ լինի ոչինչ ազգ կերպով:– Եւ աստ համառօտ գբազմախիտն լըմնցուցաք հասկնողացն:

Եւ հրաւերքն որ պարոնն զճորտն հրաւիրէ յընչիկ բան, կամ ի ծառայութիւն, նա պիտի որ ճանչած չաւուշի լեզուով ու խօսօք լինի: Եւ երբ այնէ չաւուշն զհրաւերքն, նա պարտ է, որ իր նշանով օր ցուցնէ և պոման, զերդ է սովորութիւն և նմանաւոր: Եւ լիճ ճորտն պարտի որ ի յայն օրն երթայ անսղալ. և կամ ցուցնէ ըզորդ զիր անծինն պատճառքն չաւուշին, կամ այլ յետոյ: Չի թէ ընդունել լինի զհրաւերքն, և չգայ ի յօրն, կամ չլինի ցուցուցել զզորդ պատճառն զչգալոյն, նա պարոնն կամ պայլն պարոնին բերէ զինք առջնն, և կենան հօն այլ լիճ ճորտեր, և հարցնէ ընդ ինք՝ թէ «Է՞ր չէկիր յանուանեալ կոչն և ի պոմանն»: Նա թէ ուրանայ լիճ ճորտն և ասէ՝ թէ «Չասաց ընդ իս չաւուշն», նա սովորութեամբ իրաւունք է որ երդնու լիճ ճորտն ի յայն հաւատն ու ի լճութիւնն՝ որ իր պարոնին պարտի, որ չէ չաւուշ զինք ի յայն իրքն հրաւիրել, և ելաւ ի պարտուց, որ այլ չտայ գդատապարտութիւն վասն այտոր. և ոչ ի վերայ լճին ի յայտ ա՛յլ շալակ կայ: Եւ թէ լիճն չկամենայ երդնուլ, նա ապա բերեն զչաւուշն որ երդնու: Եւ երբ երդնու չափուշն՝ նա տըրստեցաւ ի վերայն ու հերիք եղաւ. և կորսնէ վասն այնոր զապրանքն տարի մի ու օր մի. և հետ տարոյն և աւուրն, յորժամ գայ՝ մենակ առնու զիր ապրանքն»¹:

¹ Նույն տեղը, Է, 191 – 192:

Սմբատ Սպարապետի դատաստանագրքի լեզուն, ինչպես միջին հայերենը ընդհանրապես, իր հոլովական, խոնարհման համակարգով և իր շարադասությամբ հայոց լեզվի զարգացման նոր աստիճան է ներկայացնում: Նրա լեզուն տարբերվում է գրաբարից իր հիմնական առանձնահատկություններով, բայց դրա հետ միասին ունի գրաբարի քերականության համակարգից չտարբերվող շատ իրողություններ: Ավելի ճիշտ, լեզվական շատ երևույթներ, որոնք գրաբարում հանդիպում էին միայն իբրև բացառություններ, կամ մասնակի ձևով, դեռևս զարգացման սաղմնային դրության մեջ, միջին հայերենում լայն տարածում և կիրառություն են ստանում: Այդ բոլորը մենք տեսնում ենք նաև Սմբատ Սպարապետի երկերում. այն տարբերությամբ միայն, որ նրա լեզվում դրանք ավելի մշակված և միակերպ ուղղագրությամբ են հանդես գալիս:

Սմբատ Սպարապետի լեզվի բառապաշարի մեջ նկատվում են ուշագրավ մի շարք առանձնահատկություններ, որոնցից կարելի է նշել՝

ա) Պետական կառավարման հասարակական գանազան բնագավառներ արտացոլող նոր բառեր, որոնք կազմված են հայերենի իրողություններով, կամ ուղղակի փոխառված եվրոպական և այլ լեզուներից, ինչպես՝ ապրանք, ինչք, իրք, դատապարտութիւն, հրաւերք, ճորտ, լիճ, պայլ, պարոն, չաուշ, նաղտ և այլն:

բ) Օտար բառեր, որոնք ենթարկվում են հայերենի թեքման, բառակազմության և ածանցման կանոններին, օրինակ՝ պայլ – պայլութան, անսիգ–անսիգով (օրենքով), պարոն–պարոնին և այլն: Այստեղ ուշագրավ է այն, որ փոխառված օտար բառերից հայերեն բայական վերջավորությունների կցումով կազմվում են բայեր, ինչպես՝ սայգել (բռնագրավել, խլել), ջալընջել (բողոքել, պահանջել), բլայթել (դատել, պաշտպանել, նեղություն կրել) և այլն:

գ) Դերանունները մեծ մասամբ գործածվում են նոր ձևով, ինչպես իր, ինք, մենք, իրենց և այլն:

դ) Կանոնավորապես գործածվում են վ-ով կրավորական կազմված բայեր, ինչպես՝ պսակվեցան, չընդունվել և այլն:

ե) Հարակատար և վաղակատար դերբայներից կազմվում են ժամանակներ, ինչպես՝ անսիգով է տված իրենց, որ այնել կարեն. այրել ես ու առանց դարպասու գրկել ես գիս և այլն:

զ) Պահպանված են միջին հայերենին հատուկ հնչյունափոխա-

կան կանոնները, ինչպես՝ աստան (հավատան), ուննայ (ունենա), բաժնել (բաժանել), հաւերք (հրավերք) և այլն:

Այս բոլորի հետ պահպանված են նաև գրաբարյան ձևեր ու ոճեր, որոնք հանդես են գալիս իբրև միջին հայերենի անհրաժեշտ իրողություններ: Այդ բոլորը ցույց են տալիս, որ միջին հայերենը գրաբարից և բարբառներից անկախ ինչ-որ մի լեզու էր: Նա, մի կողմից՝ խարսխված էր գրաբարի, մյուս կողմից՝ հայերենի բարբառների և հատկապես այն բարբառների վրա, որոնք ամենից ավելի էին տարածվել արևմտյան Հայաստանում:

Այսպիսով, միջին հայերենը հայ ժողովրդի գրական համաժողովրդական լեզուն էր X–XVII դարերում: Նա կազմավորվում էր հայ ժողովրդական խոսակցական լեզվի, այսինքն՝ այդ շրջանում ամբողջ հայ ժողովրդին հասկանալի և հայերենի բարբառներում կամ բարբառների մեծ մասում կիրառվող լեզվական ընդհանուր իրողությունների ու գրաբարի դյուրըմբռնելի փաստերի հիման վրա: Միջին հայերենը գտնվում էր իր անընդհատ զարգացման, հին որակի հետ կապված տարրերի մահացման ու նոր որակի հետ կապված տարրերի տարածման ու ամրացման պրոցեսում: Հայոց գրավոր լեզվի զարգացման ոչ մի շրջանում այնքան ուժեղ կերպով չեն բախվել հին ու նոր որակի հետ կապված տարրերը, ինչպես միջին դարերում: Սակայն հնի և նորի այդ ուժեղ պայքարը իր վերջնական ավարտին չի հասնում, որովհետև հայ ժողովրդի պատմական կյանքում կատարված տեղաշարժերը այդ լեզվի նոր որակի հետ կապված տարրերի ծավալման ու ամրացման համար անհրաժեշտ պայմաններ չեն ստեղծում:

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏԱԳԱՎ ՎԻՃԱԿԸ

Հայկական մշակույթն ու արվեստը, լեզուն և գրականությունը XII–XV դարերում սկսում են իրենց բուն զարգացումը ապրել բուն երկրից դուրս՝ Կիլիկիայում: Բայց XIV դարի վերջերին վերանում է նաև Կիլիկյան հայկական թագավորությունը: Ամբողջ հայ ժողովուրդը նորից ենթարկվում է խոշտանգումների, բնավեր է դառնում, հայ շատ ընտանիքներ թողնում են երկիրը և բնակություն հաստատում հեռավոր վայրերում՝ Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, Կասպից

ծովի հյուսիսարևելյան ափերին, Վրաստանում և այլուր: Ամայանում են Հայաստանի շեն քաղաքները ընկնում է տիեզերահռչակ Անին, քանդվում են Կարսն ու Դվինը: Հայաստանը դեռևս չազատված մոնղոլների, Լենկթեմուրի և քոչվորական զանազան ցեղերի արշավանքներից, ենթարկվում է թուրքերի գրոհներին: Թուրք շարդարարները իրենց գազանություններով ու վայրագություններով գերազանցում են իրենց նախորդներին: Նրանք հիմնովին քարուքանդ են անում քաղաքները, գյուղերն ու ավանները, հողին են հավասարեցնում Հայաստանի արգավանդ շրջանները, ոչնչացնում հայ ժողովրդի առանց այն էլ ծվատված հատվածները: Թուրքերի գազանություններին հաջորդում են Շահ-Աբասի անօրինական վայրագությունները, որոնք հայերին կանգնեցնում են անհետ կորչելու վիճի եզերքին:

Այդ պայմաններում հայ ժողովուրդը չէր կարող մտածել իր մշակույթի ու լեզվի զարգացման մասին: Իսկ երկրից դուրս այդ ուղղությամբ արված ձեռնարկումները միայն ցույց էին տալիս, որ նպաստավոր պայմանների ստեղծման դեպքում հայ ժողովուրդը ի վիճակի էր նորից վերակենդանանալու և զարգացնելու իր տնտեսությունն ու մշակույթը:

Հայ ժողովրդի պետականության վերացման, երկրի ամբողջությունը խախտվելու, ժողովրդի մասնատման ու տարբեր հատվածների միջև եղած տնտեսական կապի թուլացման հետևանքով ո՛չ միայն դադարում է միջին հայերենի մշակման ու կատարելագործման պրոցեսը, այլև աշխուժանում են բարբառները, հանդես են գալիս պատմական ու գեղարվեստական գործեր՝ գրված զանազան բարբառներով: Սակայն մեկընդմիջտ չի մոռացվում միջին հայերենը, ինչպես չէր մոռացվել նաև գրաբարը: Միջին հայերենը շարունակում է օգտագործվել իբրև գրական լեզու, բայց խիստ կերպով ենթարկված բարբառների կամ գրաբարի ազդեցությանը: Վաղ ժամանակներից ի վեր միջին հայերենով և գրաբարով գրված գործերի մեջ հանդիպում են նաև զուտ բարբառներով գրված գործեր: Իսկ XVII-XVIII դարերում հայ գրականության հիմնական երկերից շատերը գրվում էին բարբառով: Այդ տեսակետից ուշագրավ են XVIII դարի հայ խոշորագույն գրող Սայաթ-Նովայի երգերը: Նա ստեղծագործում էր Թբիլիսիի բարբառով, բայց այնպիսի վարպետությամբ ու արվեստով, որ այժմ էլ մեծ հաճույք կարող է պատճառել իր ընթերցողին: Նա օգտագործելով միջնադարի հայ հարուստ քնարերգության ավան-

դույթները՝ նոր մոտիվներ է մտցնում հայ քնարերգության մեջ, ավելի ուժեղ է հնչեցնում սիրո և գեղեցկության պոեզիան: Սայաթ-Նովան իր երկերի լեզվով ցույց տվեց, որ միջին հայերենը այդ շրջանում արդեն հեռու էր համաժողովրդական գրական լեզվի ֆունկցիաները կատարելուց, որ նա արդեն կատարել էր իր դերը, և նրան փոխարինելու էր գալիս լեզվական նոր վիճակ:

Սայաթ-Նովայի հանդես գալուց ընդամենը մի քանի տարի առաջ Նաղաշ Հովնաթանը իր ստեղծագործությունների մեջ իսպառ չէր հրաժարվել միջին հայերենից: Նա զուգակցում էր միջին հայերենի իրողությունները ում ճյուղի բարբառների իրողությունների հետ և հորինում իր երգերը՝ մերթ ընդգծելով միջին հայերենի, մերթ Արատյան բարբառի տարրերը: Այսպես, օրինակ՝ նա գրում է.

Շատ գիտուն մարդըն չի ուրախանալ,
Չերայ տգետըն չեն հաւան կենալ,
Ծուռ բանին խօսի՝ սկսին բարկանալ,
Թէ որ չը խօսի՝ սիրտն չի հովնալ:
Մէկ մարդ որ տեսնի մէկ բան ծուռ անէ,
Շատ չես նեղանալ դու ի նմանէ,
Երբ մեղայ չտայ և ոչ փոշմանէ,
Յայնժամ քեզ խոցէ և հոգիտ հանէ:
Մարդ կայ, որ աչօք տեսնում ես ծուռըն,
Խրատ ես տալիս, թռչում է դուռըն,
Նա բարկանում է, քեզ ձգում փուռըն,
Դու ամաչում ես, կենալ չես լուռըն¹:

Այս բանաստեղծության մեջ պահպանված են միջին հայերենի ժխտական խոնարհման կազմության եղանակը, գրաբարի քերականության որոշ ձևեր (ի նմանէ, աչօք), օգտագործված է Արարատյան բարբառի սահմանական ներկան (թռչում է, խրատ ես տալիս, բարկանում է):

Նաղաշ Հովնաթանը, չնչին շեղումներով, պահպանում է գրական լեզվի ուղղագրությունը և գրական արտասանությունը: Այդ պատճառով էլ նրա լեզուն շատ դեպքերում նույնանում է հայոց ազգային

¹ Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, էջ 83:

լեզվի վաղ շրջանի հետ: Սակայն դեռևս չէին հաղթահարվել միջին հայերենին հատուկ բազմազանությունները, դեռևս միևնույն իմաստն արտահայտելու համար նա օգտագործում էր տարբեր ձևեր: Այսպես, օրինակ՝ նա երբեմն սահմանական ներկան կազմում էր **կու** եղանակիչով.

Առաւօտուց ծոցիդ վարդն կու փռվի,
Ես թամաշայ կանեմ, խելքս կու ցրվի,
Թող քո վեսմ ու հալն թղթի մէջ գրվի,
Ես դիւանայ ջունուն եղէ քեզ համար,
Աւարայ Մաջլուն եղէ քեզ համար¹:

Երբեմն օգտագործում էր **ում** ճյուղի բարբառների սահմանական ներկան, ինչպես՝

Գիր էի գրում քո անուանն,
Միտք էի անում քո սիրոյ բանն,
Ետնես ուղարկեց Վախտանգ Խանն.
Քեզ ո՞նց մոռանամ, գալում,
Ես ո՞նց հեռանամ գալում²:

Երբեմն էլ սահմանական ներկան կազմում էր գրաբարի սահմանական ներկայի նման. ինչպես՝

Այսօր **ցնծամք** պարելով,
Խմեմք գինի խնդալով³.

Եկ **գևամք** բախչեն, **նստեմք** չորս բոլորն շարած վարդի.
Աման, աման, քո սիրոյդ եղեր եմ գալու դիւանայ⁴:

Այս բազմազանությունը նկատվում է նաև նրա լեզվի քերականության մյուս կատեգորիաների մեջ: Նաղաշ Հովնաթանի երկերի

¹ Նույն տեղը, էջ 18:

² Նույն տեղը, էջ 9:

³ Նույն տեղը, էջ 172:

⁴ Նույն տեղը, էջ 23:

լեզվի մեջ երևում են հայոց լեզվի զարգացման նոր որակի հետ կապված բազմաթիվ տարրեր, որոնք դեռևս ընդհանուր կիրառություն չեն ստացել:

Այդ շրջանից էլ սկսում են տարածվել ազգային լեզվի զարգացմանը անհրաժեշտ լեզվական իրողությունները: Բայց դեռևս պարզորոշ կերպով չեն ուրվագծվում այդ լեզվի սահմանները և այդ պատճառով էլ, մի կողմից՝ ազգային լեզվի տարրերը մշակվում են միջին հայերենի և **կը** ճյուղի բարբառների և, մյուս կողմից՝ Արարատյան բարբառի հիման վրա: Գրաբարը այդ շրջանում հանդես էր գալիս իբրև հայոց լեզվի զարգացման անհրաժեշտ գործոններից մեկը: Հայոց ազգային լեզվի կազմավորման ու զարգացման ընթացքը փոխվում է XIX դարում, երբ հայ ժողովրդի կյանքում պատմական լուրջ տեղաշարժեր են կատարվում:

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՈՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ՂԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հայոց համաժողովրդական լեզուն, ինչպես արդեն նշել ենք, միշտ էլ ունեցել է իր բարբառները: Սակայն հայ ժողովրդի զարգացման տարբեր շրջաններում այդ բարբառները միևնույն վիճակը կամ բնութագիրը չեն ունեցել: Նրանք հայ ժողովրդի կյանքում կատարված փոփոխություններին համապատասխան ձևափոխվել են, նոր կերպարանք ստացել: Մեր կարծիքով, հայոց էթնիկական լեզվի կազմավորման շրջանում բարբառների որոշ մասը զգալի չափով հեռու է եղել ընդհանուր լեզվից, բայց հետագայում, հայ ժողովրդի կոնսոլիդացման և հայ ուժեղ պետականություն ստեղծվելու հետևանքով աստիճանաբար վերացել են բարբառային խիստ տարբերությունները և նրանք այնքան են մոտեցել համաժողովրդական լեզվին, որ մեր թվականության սկզբներին չեն ունեցել քերականական այնպիսի գանազանություններ, ինչպիսիք ունեն հայերենի ժամանակակից բարբառները: Այդ շրջանում հայերենի բարբառները տարբերվել են միմյանցից գլխավորապես իրենց բառապաշարով և հնչյունաբանությամբ:

Հայերենի արդի բարբառները իրենց գլխավոր ճյուղավորումներով և քերականական առանձնահատկություններով ավելի ուշ շրջա-

նի երևույթ են: Նրանցից և ոչ մեկը հիևագերորդ դարում կամ նրանից առաջ չի ունեցել այն բնութագիրը, որն ունի այժմ կամ ունեցել է մի դար առաջ: Առայժմ մենք չենք կարող ասել, թե ի՞նչ կերպարանք են ունեցել հայերենի բարբառները պատմական տարբեր շրջաններում, որովհետև դեռևս չի ստեղծված բարբառների պատմական քերականությունը և ցույց չի տրված, թե ի՞նչ վիճակ են ունեցել նրանք մեզնից հազարավոր տարիներ առաջ: Բայց եղած նյութերով կարելի է սահմանագծել հայերենի արդի բարբառների առաջացման հանգամանքները և մոտավոր ժամանակաշրջանը:

Հայ բարբառագիտությունը երկար պատմություն ունի: Բարբառների գոյության ու որոշ առանձնահատկությունների մասին հիշատակություններ կան մեր հիևագերորդ դարի և ավելի ուշ շրջանի մատենագրության մեջ: Հայ բարբառները հատուկ ուսումնասիրության առարկա են դառնում XVIII դարի սկզբներից ի վեր: Սակայն հայ բարբառների ուսումնասիրությունը գիտական ամուր հիմքերի վրա է դրվում միայն XIX դարի վերջերին: Այդ շրջանից հայագետները, բացի առանձին բարբառների նկարագրությունը տմուր, փորձում են կատարել որոշ ընդհանրացումներ, տալ բարբառների դասակարգման սկզբունքներ և այլն:

Բարբառագիտական հսկայական աշխատանքի ասպարեզում հատկապես աչքի են ընկնում մեծավաստակ հայագետ Յր. Աճառյանի հետազոտությունները, որոնցով հայ բարբառագիտությունը և ընդհանրապես հայագիտությունը զարգացման նոր փուլ են թևակոխել: Պրոֆ. Յր. Աճառյանը օգտագործելով իր նախորդների ուսումնասիրությունները և անձամբ հետազոտելով հայերենի մի շարք բարբառներ՝ 1909 թվականին ֆրանսերենով հրատարակած իր աշխատության մեջ ընդհանուր գծերով, իսկ 1911 թվականին «Հայ բարբառագիտություն» հետազոտության մեջ ավելի հանգամանորեն քննելով հայերենի բարբառների բնորոշ առանձնահատկությունները՝ տվեց հայերենի բարբառների դասակարգումը, որը ո՛չ միայն ընդունվեց գիտական աշխարհում, այլև դարձավ հայերենի բարբառների հետագա ուսումնասիրության մեծագույն խթանը:

Պրոֆ. Յր. Աճառյանը ցույց տվեց, որ հայերենի բարբառների դասակարգումը պետք է կատարել ըստ իրենց ձևաբանական այն հատկանիշների, որոնք ավելի բնորոշ են բարբառների համար: Այդ հատկանիշները ամենից ավելի ակնբախ կերպով արտահայտվում են

սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի կազմության ձևերի մեջ: Նկատի ունենալով ներկայի և անցյալ անկատարի կազմության ձևերը՝ պրոֆ. Յր. Աճառյանը հայերենի բարբառները բաժանեց երեք ճյուղի՝ **ում, կը և ել**, ինչպես՝ բերում եմ, բերում էի. կը բերեմ, կը բերեի, բերել եմ, բերել եմ եր և այլն:

Հայ բարբառագետները ընդունելով պրոֆ. Յր. Աճառյանի դասակարգումը՝ ձեռնամուխ եղան նոր բարբառների ուսումնասիրությանը: Այդ աշխատանքը հատկապես լայն ծավալ ստացավ խորհրդային կարգերը մեր երկրում հաստատվելուց հետո: Բարբառագիտական նոր ուսումնասիրությունները, թեև չփոխեցին հայերենի բարբառների դասակարգման հիմունքները, բայց այն լրացնելու պահանջ դրին: Պրոֆ. Ա. Ղարիբյանը ընդունելով բարբառների դասակարգման ձևաբանական սկզբունքը, 1939 թվականին իր «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» աշխատության մեջ ապացուցեց, որ հայերեն բարբառների **ել** ճյուղի մեջ մտնված բարբառներից մի քանիսի սահմանական ներկան և անկատարը կազմվում են **ս**-ով վերջացող դերբայից, հետևաբար նրանք բարբառների նոր ճյուղ են կազմում: Այդ ճյուղը նա կոչեց **ս** ճյուղ: Բարբառների հետագա ուսումնասիրությունները նոր փոփոխություններ մտցրին հայերենի բարբառների դասակարգման մեջ: 1952 թ. պրոֆ. Ա. Ղարիբյանը Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» (հասարակական գիտությունների սերիա) 8-րդ համարում տպագրած իր հոդվածում նույն ձևաբանական սկզբունքից ելնելով՝ հայերենի բարբառների մեջ հայտնագործեց մի շարք նոր բարբառներ, որոնց տվյալների հիման վրա ընդարձակեց բարբառների ճյուղերի թիվը և հասցրեց յոթի: Ըստ պրոֆ. Ա. Ղարիբյանի դասակարգման՝ հայերենի բարբառները բաժանվում են **ում, ս, լ, կա, կը, հա** և գրաբարակերպ ճյուղերի: Իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ, որը լույս է տեսել 1953 թվականին, պրոֆ. Ա. Ղարիբյանը այդ յոթ ճյուղերը բաժանեց երեք մեծ խմբերի: Առաջին խմբի մեջ նա մտցրեց այն բարբառները, որոնց ներկայի և անցյալ անկատարի ձևերը կազմվում են վերլուծական եղանակով՝ դերբայով և օժանդակ բայով, որոնց մեջ դերբայը արտահայտում է ներգոյականի իմաստ: Այդ խումբը կոչվեց **դերբայավոր**: Նրա մեջ մտնում են **ում, լ, ս** ճյուղերի բարբառները:

Երկրորդ խմբի մեջ մտցրեց աչն բարբառները, որոնք իրենց սահմանականի ներկան և անցյալ անկատարը կազմում են գրա-

բարի նույն ժամանակների ձևերից, ավելացնելով նրանց որևէ եղանակիչ՝ **կու, կը, կա, հա, ահա** և այլն: Այդ խումբը կոչվեց **մասնիկավոր**: Նրա մեջ մտնում են **կը, կա, հա** ճյուղերը:

Երրորդ խումբը կոչվեց գրաբարակերպ: Նրա մեջ մտած բարբառների սահմանական եղանակի ներկան և անկատարը նման են գրաբարի համապատասխան ժամանակներին: Այդ խմբի մեջ մտած բարբառներից հայտնաբերված է Խոտրջուրի բարբառը: Այդպիսով, պրոֆ. Ա. Ղարիբյանը իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ նկարագրած հայերենի 51 բարբառները բաժանում է երեք մեծ խմբերի և յոթ ճյուղերի¹:

Պրոֆ. Ա. Ղարիբյանից միանգամայն անկախ մոտավորապես այդ եզրակացության է հասնել նաև պրոֆ. Է. Աղայանը: Նա կարծում է, որ հայերենի բարբառների նոր ձևերի հայտնագործումը հիմք է տալիս բարբառների դասակարգման նոր հիմունք գտնելու: Այդ հիմունքը, նրա կարծիքով, պետք է դարձնել ո՛չ թե սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների ձևերը, այլ նրանց կազմության եղանակը: Այդ դեպքում նույնպես բարբառների դասակարգումը ձևաբանական սկզբունքի վրա է խարսխված: Բայց ուշադրություն է դարձվում ոչ թե սոսկ ձևի, այլ նաև կազմության եղանակի վրա: Ելնելով այդ դրույթից՝ նա հայերենի բարբառները բաժանում է երկու հիմնական ճյուղերի՝ ա) **գրաբարակերպ, մասնիկավոր** կամ **դիմային-մասնիկավոր** և բ) **դերբայավոր** կամ **դերբայական կազմությամբ** ներկայով բարբառներ: Գրաբարակերպ-մասնիկավոր բարբառների սահմանական եղանակի ներկան և անցյալ անկատարը կազմվում են բայահիմքից ու դիմային վերջավորություններից և որևէ մասնիկից՝ **կը, կա, հա**: Այս բարբառներում գրաբարյան պարզ ձևերին ավելացած մասնիկները արտահայտում են եղանակի քերականական կերպը, իսկ վերջավորությունները՝ դեմքի, թվի, ժամանակի քերականական կարգերը:

Դերբայավոր ձևի բարբառները կազմվում են շարունակական դերբայից և օժանդակ բայի ներկայի և անցյալ անկատարի ձևերից: Դերբայը կարող է ունենալ **ում, ել, ս** վերջավորություն: Այդ բարբառների խոնարհվող բայը միայն օժանդակ բայի հետ կարող է արտահայտել դեմքի, թվի ու ժամանակի քերականական կարգերը:

¹ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, 1953, էջ 47-57:

Հայերենի բարբառները ըստ իրենց սահմանական ներկայի և անցյալ անկատարի կազմության եղանակների բաժանելով երկու հիմնական ճյուղերի՝ պրոֆ. Է. Աղայանը չի ժխտում բարբառների ճյուղերի քանակը, այլ այդ ճյուղերը համարում է ենթաճյուղեր, որոնց հիմնական հատկանիշը ընդունում է հիշյալ ժամանակների բայական ձևերը¹։ Այդպիսով, հայերենի բարբառները նա բաժանում է երկու հիմնական ճյուղերի՝ ա) դերբայական կազմությամբ ներկայով բարբառներ՝ **ոււմ, ել, ս** ենթաճյուղերով, և բ) գրաբարակերպ-մասնիկավոր կազմությամբ բարբառներ՝ **կը, կա, հա** ենթաճյուղերով։

Հայերենի բարբառների դասակարգման այս նոր դրույթը, մեր կարծիքով, հիմնված է հայ բարբառների ուսումնասիրության քննադավառում ձեռք բերված նվաճումների վրա։ Այդ պատճառով էլ երկու գիտնականները միմյանցից միանգամայն անկախ, համարյա թե նույն եզրակացությանն են հանգում։ Այդ եզրակացությունների միակ տարբերությունն այն է, որ պրոֆ. Ա. Ղարիբյանը հայերենի բարբառները բաժանում է երեք խմբի, իսկ պրոֆ. Աղայանը՝ երկու ճյուղի։ Մեր կարծիքով՝ չի կարելի բացառել բարբառների երրորդ ճյուղի կամ խմբի գոյությունը միայն նրա համար, որ այդ խմբին այժմ միայն մի բարբառ է պատկանում։ Հետագա ուսումնասիրությունները գուցե հայտնաբերեն գրաբարակերպ նոր բարբառներ և այդ ճյուղը դարձնեն լիարժեք։ Այստեղ, սակայն, խոսքը ոչ թե քանակին, այլ սկզբունքին է վերաբերում։ Գրաբարակերպ բարբառները պատմական ավելի երկար շրջան են անցել և խառնվել են նոր ձևավորվող բարբառներին կամ ձուլվել համաժողովրդական լեզվին և պատմական ասպարեզից դուրս եկել։ Այդ պատճառով էլ չի կարելի անտեսել մեր բարբառների մեջ առայժմ պահպանված բարբառալիս այն ձևերը, որոնք հանդիսանում են պատմական ավելի վաղ շրջանի մնացորդներ։

Այսպիսով, հայերենի բարբառները ըստ իրենց սահմանական ներկայի և անկատար ժամանակների կազմության եղանակի ճիշտ կլինի բաժանել երեք խմբի՝ ա) գրաբարակերպ, բ) դերբայավոր և գ) մասնիկավոր կամ եղանակիչներով կազմված բարբառներ², որոնցից առաջին խումբը ունի միայն մեկ ներկայացուցիչ՝ գրաբարակերպ ճյուղը, երկրորդը՝ երեք ճյուղ՝ **ոււմ, լ, ս**, իսկ երրորդը՝ երեք՝ **կը, կա,**

¹ Տե՛ս Է. Աղայան, Մեղրու բարբառը, 1954, էջ 399-404։

² Հմմտ. Ա. Ղարիբյան, Նույն տեղը, էջ 55-56։

հա ճյուղերը: Վերջին խմբի մեջ մտած բարբառների եղանակիչները կարող են դրվել և՛ նախադաս, և՛ հետադաս, սակայն ավելի տարածված է եղանակիչների նախադաս գործածությունը, որը ցույց է տալիս, թե նրանց հետադաս կիրառությունը ավելի ուշ շրջանում է առաջացել: Այդ բանում համոզվելու համար կարելի է ծանոթանալ հետադաս եղանակիչներ ունեցող մի քանի բարբառների: Կարևոր բարբառում, օրինակի համար, **կը** եղանակիչը դրվում է վերջից, բայց միավանկ կամ ձայնավորով սկսվող բառերի հետ դրվում է և՛ սկզբից, և՛ վերջից, ինչպես՝ **գրեմ կը, սիրեմ կը, բայց՝ գուքամ կը, կենեմ կը** և այլն: Այդպես է նաև հայերենի մի շարք այլ բարբառներում: Այդ երևույթը ցույց է տալիս, որ եղանակիչը սկզբնապես եղել է նախադաս, ապա հետո դարձել հետադաս, բայց լրիվ չափով չի կայունացել նրա հետադաս կիրառությունը և այդ պատճառով էլ որոշ դեպքերում հանդես է գալիս և՛ նախադաս, և՛ հետադաս վիճակով:

Հայերենի բարբառների առանձնահատկությունները դրսևորվում են նաև իրենց ինչյունական համակարգի մեջ: Սակայն նրանց ինչյունական համակարգը միայն պարզաբանում է բարբառների որոշ, հատկապես բառերի ձևերի մեջ կատարված փոփոխությունները և չի շոշափում բարբառների քերականության համակարգը, այդ պատճառով էլ նա կարող է միայն օժանդակել հայերենի բարբառների ձևաբանական դասակարգումը պարզաբանելուն և ոչ թե դրվել դասակարգման հիմքում:

Համաձայն ձևաբանական դասակարգման, հայերենի գրաբարակերպ խմբի մեջ մտած բարբառների ներկան կազմվել է բայի ներկայի հիմքից և բայական վերջավորություններից, ինչպես՝ տանիմ, տանիս, տանեի, տանեիր և այլն: Սակայն այս ճյուղի միակ ներկայացուցիչ Խոտրջուրի բարբառը գտնվելով **կը** ճյուղի բարբառների շրջապատում՝ ենթարկվել է նրանց ազդեցությանը և ձայնավորով սկսող բայերի ներկան ու անցյալ անկատարը սկսել է կազմել **կը** եղանակիչով, ինչպես՝ կասին, կելնին և այլն¹: Այդպիսով, նա կորչելու կամ **կը** ճյուղի բարբառներին ձուլվելու ճանապարհին է կանգնած:

Դերբայավոր կամ դերբայական կազմությամբ ներկայով բարբառների սահմանական եղանակի ներկան և անցյալ անկատարը կազմվում են դերբայից և օժանդակ բայի ներկայի և անցյալի

¹ Հմմտ. **Յ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, հ. II, էջ 337:

համապատասխան ձևերից, ինչպես՝ կարդում եմ, էի, գրում եմ, էի, կարդալիս եմ, էի, գրելիս եմ, էի, կարդալ եմ էր, գրել եմ էր և այլն:

Այս խմբին պատկանող բարբառների սահմանական ներկան և անցյալ անկատարը կազմող դերբայները առաջացել են հայերենի զարգացման ուշ շրջանում, հինգերորդ դարից հետո և արտահայտում են անորոշ դերբայի ներգոյական հոլովի իմաստը: Հայագիտության մեջ անվիճելի է համարվում, որ անկատար դերբայի **ում** վերջավորությունը, որով առանձնանում են **ում** ճյուղի բարբառները, նույնանում է ներգոյական հոլովի վերջավորության հետ, որը գրաբարում հանդես էր գալիս իբրև տրական հոլովի վերջավորություն, որից և կազմվում էր ներգոյական հոլովը՝ ի նախդրով:

Ներգոյականի իմաստ ունեն նաև **ս** և **լ** ճյուղերի բարբառների սահմանական եղանակի ներկան և անցյալ անկատարը, որոնցից **ս** ճյուղի բարբառները կազմվում են անորոշ դերբայի հայցական հոլովից՝ **եղիս, աղիս** վերջավորությամբ: Բայական այդ ձևերը (գրելիս, կարդալիս), սկզբնական շրջանում բայական իմաստ չեն ունեցել. այսպես, օրինակ՝ հինգերորդ դարի հայ մատենագիր Փավստոս Բուզանդի Պատմությունից վերցված «Թագաւորն Արշակ ի լալիսն տեսանէր զկինն սպանելոյն» նախադասության մեջ, ինչպես ճիշտ կերպով նկատել է Ա. Աբրահամյանը, **ի լալիս** ձևը ներգոյական հոլովի գաղափար է արտահայտել¹. հետագայում այդ ձևին կցվել է օժանդակ բայը և ստացվել է **ի լալիս եմ** ձևը, ապա ընկել է **ի** նախդիրը և ստեղծվել է բայական այն ձևը, որը արտահայտել է գործողության ընթացքի մեջ լինելու գաղափարը և տարածվել է մի շարք բարբառներում, որոնցից և անցել է արդի հայերենին:

Լ ճյուղի բարբառների ներկան և անկատարը նույնպես կազմվում են դերբայից և օժանդակ բայի համապատասխան վերջավորություններից, սակայն այն տարբերությամբ, որ այդ ճյուղի բարբառների դերբայը վերցված է եզակի հայցական հոլովով և **ի** նախդրով՝ ներգոյական հոլովի իմաստով: Միջին հայերենում սահմանական եղանակի ներկայի և անկատարի ժխտական խոնարհումը այդ ձևով էլ կազմվում էր. ինչպես՝ չեմ ի գրել, չեի ի գրել, չեմ ի կարդալ, չեի ի կարդալ և այլն, որոնք արտահայտում էին **գրելու մեջ չլինելու, կարդալու մեջ չլինելու** իմաստը: Այդ եղանակով միջին դարերից սկսած

¹ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, 1953, էջ 117:

կազմվել են Նաև որոշ բարբառների սահմանական ներկան և անցյալ անկատարը, այն տարբերությամբ միայն, որ չի պահպանվել **ի** նախդիրը, ինչպես ընդհանրապես չեն պահպանվել Նաև մյուս նախդիրները մեր մի շարք բարբառներում

Այսպիսով, դերբայավոր բարբառների սահմանական եղանակի ներկա և անկատար ժամանակները կազմվում են միևնույն սկզբունքով՝ դերբայի ներգոյական հոլովից և օժանդակ բայի համապատասխան վերջավորություններից

Հայ մատենագրության մեջ արտացոլված լեզվական տարբեր իրողությունները ցույց են տալիս, որ դերբայի ներգոյական հոլովից և օժանդակ բայից կազմված բայաձևերը գոյացել են հինգերորդ դարից հետո Այդ նշանակում է, որ հայերենի դերբայավոր բարբառները առաջացել են հինգերորդ դարից հետո

Հայերենի դերբայավոր բարբառները իրենց ձևաբանական բոլոր հատկանիշներով կապվում են հայոց համընդհանուր լեզվի հետ և նրա ճյուղավորումներն են, հետևաբար նրանք այլ լեզուների հիման վրա չէին կարող ձևավորվել Չնայած այդ անհերքելի փաստերին՝ լեզվաբանական գրականության մեջ արտահայտված է այն կարծիքը, թե հայերենի **ու**մ ածանցը փոխառված է քարթվելական լեզուներից

Այդ տեսակետը պաշտպանողները կարծել են, որ «գրում եմ» բայաձևը չի արտահայտում «ես եմ գրելու մեջ» իմաստը Մինչդեռ հայոց լեզվի տվյալները ցույց են տալիս, որ հայերենի անկատար դերբայը (գրում) ունի կատարման ընթացքի մեջ գտնվող գործողության կամ եղելության գաղափար Նա ձևավորվել է, ինչպես ասվեց, հայերենի զարգացման համեմատաբար ուշ շրջանում անորոշ դերբայի ներգոյական հոլովից, որը առանց անորոշ դերբայի մասնիկների անկման ամբողջական ձևով պահպանված է հայերենի որոշ բարբառներում (Հավարիկ) Իսկ ժամանակակից հայերենում մթագնել է անորոշ դերբայի հոլովական գաղափարը և նրա մասնիկները դուրս են ընկել, այնպես որ այժմ «ում» մասնիկը ավելանում է բայահիմքի վրա, և այդ եղանակով անկատար դերբայը օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձևեր¹

Այդ մասնիկը փոխառու համարող լեզվաբանները պատմական

¹ Նույն տեղը էջ 74 և հետ

որևէ փաստով չեն կարող ցույց տալ, թե հայերենը քարթվելական լեզուներից այդ մասնիկը փոխ է առել և դրանով կազմել իր անկատար դերբայը: Տարօրինակ է այժմ խոսել քերականական ձևույթների փոխառության մասին: Լեզուները խաչավորվելիս ու խառնվելիս ամենից առաջ փոխ են առնում նյութական իմաստ ունեցող բառերը և ոչ թե ձևույթները, որոնք անհասկանալի կարող են մնալ ժողովրդին, եթե չեն վերցվում նյութական իմաստ արտահայտող բառերի հետ: Բացի այդ, եթե անկատար դերբայի **ում** մասնիկը փոխառություն է, հապա ի՞նչ է ներգոյական հոլովի **ում** վերջավորությունը: Ա՞յդ էլ է փոխառություն: Այդպիսի տեսակետ պաշտպանողները առնվազն ծանոթ չեն հայերենի հոլովական և խոնարհման համակարգին կամ նենգափոխում են պատմական փաստերը և պատահական նմանություններով կառուցում պատմականորեն միանգամայն խոտելի տեսություններ:

Հայերենի **ում** մասնիկը, ինչպես հայտնի է, գործածվել է գրաբարում իբրև տրական հոլովի վերջավորություն (մի – միում, մեր – մերում, առաջին – առաջնում և այլն): Տրական հոլովից էլ կազմվել է հայերենի ներգոյական հոլովը՝ **ի** նախդրով: Սակայն հետագայում նախդիրն ընկել է, և տրական հոլովի մի ձևը (**ում**) հայերենի բարբառներում պահել է ներգոյականի իմաստ: Այդ եղանակով ձևավորվել է ներգոյական հոլովը, որը հայերենի զարգացման ավելի վաղ շրջանում հանդես է եկել իբրև նախդրավոր տրական: Ի դեպ, պետք է ասել, որ վաղուց է ապացուցված, որ հայերենի տրական հոլովի **ում** վերջավորությունը հնդեվրոպական ծագում ունի և պահպանված է նաև գերմանական, բալթիական ու սլավոնական լեզուներում:

Հայերենի մասնիկավոր կամ եղանակիչներով բարբառների սահմանական եղանակի ներկան և անցյալ անկատարը, ինչպես ասվեց, կազմվում են գրաբարյան նույն ժամանակների համապատասխան ձևերին ավելացնելով **կը**, **կա** կամ **հա** եղանակիչներից որևէ մեկը, որոնք տարբեր բարբառներում կարող են երևան գալ զանազան ձևերով՝ **կը**, **կու**, **գու**, **գա**, **գի**, **գո**, **քը**, **հա**, **հայ** և այլն, ինչպես՝ կը սիրիմ, գը սիրիմ, կա սիրիմ, գու սիրիմ, գո սիրիմ, սիրեմ կը, հայ պանեմ, հայ նստեմ և այլն¹:

Այս բարբառների եղանակիչների ծագմանը, մեր կարծիքով, ճիշտ

¹ Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, 1953:

մոտեցում է ցույց տվել պրոֆ. Մ. Աբեղյանը իր «Հայոց լեզվի տեսություն» գրքում: Ընդունելով պրոֆ. Մ. Աբեղյանի տեսակետները այդ եղանակիչների ծագման մասին՝ պրոֆ. Ա. Ղարիբյանը իր վերոհիշյալ գրքում ավելի է կոնկրետացնում այդ և գտնում, որ **կը**, **կու** եղանակիչը առաջացել է **գոյ** բառից, **կա՝ կայ** և **հա** կամ **հայ՝ ահա** բառից: Այս բացատրությունը բխում է հայերենի ռեալ փաստերի ուսումնասիրությունից: Միայն կարելի է ենթադրել, որ **կա** եղանակիչը ձևավորված լինի **կը** և **հա** եղանակիչների միացումից, այսինքն՝ կազմությանը բարդ լինի: Եղանակիչների միացումը շատ սովորական է հայերենի բարբառներին, օրինակ՝ Ոգմիի բարբառում հարկադրական եղանակը կազմվում է **կը-պա** բաղադրությամբ, որի մեջ **պա-ն պիտի** բառի ձևափոխումն է (կը-պա գյամ): Հավանաբար նույն սկզբունքով կազմվել է նաև **կա** եղանակիչը (կա <կը + հա>ահա): Սակայն այդ բացատրությունը որևէ չափով չի փոխում եղանակիչներով կազմվող բարբառների հատկանիշը: Այդ բարբառների եղանակիչների ձևավորումը, ինչպես ցույց են տալիս հայոց լեզվի տվյալները, տեղի է ունեցել հայերենի զարգացման ուշ շրջանում, հինգերորդ դարից հետո, թեև այդ եղանակիչներով բարբառների մի մասը հավանաբար եղել է ավելի վաղ շրջանում, սակայն ոչ մեզ հասած իրենց առկա վիճակով, որովհետև հայերենում **գոյ**, **ահա** բառերից թեքման ձևույթներ են ստեղծվել միայն ուշ շրջանում, հինգերորդ դարից հետո է:

Հայերեն մասնագիտական գրականության մեջ **կը**, **կու** եղանակիչի առաջացման մասին, առաջին անգամ, խոսել է տասնիններորդ դարի հայտնի հայագետ Ա. Այտընյանը: Նրա կարծիքով՝ **կու** եղանակիչը առաջացել է **կայ** բառի և **ու** շաղկապի միացումից: Այդ կարծիքը հավաստի չի համարվել և մերժվել է հայագետների կողմից:

Այտընյանից հետո հայերենի այդ եղանակիչի մասին ավելի հանգամանորեն խոսել է Մ. Աբեղյանը: Նրա կարծիքով այդ մասնիկը առաջացել է **կոյ** բառից, որը սկզբնապես նշանակել է «ահա»: Իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ պրոֆ. Ա. Ղարիբյանը այդ մասնիկը, ինչպես ասվեց, կապում է հայերեն **գոյ** բառի հետ և ցույց տալիս, որ հայերենի բարբառներում **կ**, **գ** բաղաձայնները հաճախ փոխարինում են միմյանց, իսկ **ոյ** երկբարբառը կանոնավորապես վերածվում է **ու** կամ **ո** հնչյունի: **Կու** եղանակիչի մասին արտահայտված այդ տեսակետները, ինչպես երևում է, չնայած իրենց տարբերություններին, հենված են հայերենի փաստերի վրա և յու-

րաքանչյուրը հաստատված է լեզվական վկայություններով:

Սակայն այդ տեսակետներին հակառակ մի այլ կարծիք է արտահայտված **կու** եղանակիչի ծագման մասին: Ըստ այդ կարծիքի՝ այդ մասնիկը առաջացել է քարթվելական լեզուներում մինչև այժմ էլ պահպանված **ոկոն** (պիտի) բառից: Այդ կարծիքը պաշտպանողները, սակայն, իրենց եզրակացությունը կատարելիս ելնում են պատահական նմանություններից, նկատի չեն ունենում, որ լեզուների քերականական համակարգի և ոչ մի մասնիկ չի կարող փոխառված լինել:

Հայտնի է, որ հայերեն **կու-կը-կ** եղանակիչով կազմվում՝ են ավելի քան 24 բարբառների սահմանական ներկան և անկատար ժամանակները: Այդ բարբառների գերակշռող մեծամասնությունը չի շփվել քարթվելական ցեղերի հետ և չէր կարող նրանցից փոխ առնել քերականական այդ ձևությունը: Բացի այդ, քարթվելական լեզուներում պահպանված **ոկոն** բառը, ինչպես հավաստում են այդ լեզուների պատմությամբ զբաղվող մասնագետները, ունի «պիտի» իմաստը, իսկ հայերեն **կու** եղանակիչը հիմնականում ունի «ահա» իմաստը: Միայն հետագայում, XIII-XIV դարերից հետո, ալդ եղանակիչով կազմված **կու գրեի**, **կու գրեիր** բայաձևերը, այսինքն՝ նրանցով կազմված անկատարի ձևերը ստացել են պայմանական ապառնու իմաստը և այդ իմաստով էլ գործածվում են ժամանակակից հայերենում: Իսկ **կու գրեմ**, **կու կարդամ** ձևերը, ինչպես միշտ, այժմ էլ գործածվում են սահմանական եղանակի իմաստով, նախ՝ իբրև սահմանականի ներկա, ապա՝ իբրև ապառնի: Կգրեմ, կկարդամ բայաձևերի ապառնի իմաստը առաջին հերթին պայմանավորված է **գրեմ** և **կարդամ** բայաձևերով, որովհետև այդ ձևերը նույնանում են գրաբարի սահմանական եղանակի ներկայի հետ, որը ներկայի իմաստը ունենալուն զուգընթաց ունեցել է նաև ապառնու իմաստ, իբրև այդ բայաձևերի երկրորդական նշանակություն: Հետևաբար **կը** եղանակիչի ապառնի իմաստը չի կարելի բացատրել քարթվելական լեզուների **ոկոն** բառի իմաստով և նրանից ածանցված համարել **կու** եղանակիչը: Հայերեն **գոյ>կոյ>կուլ>կը** ձևությունները իրենց հնչյունական ձևափոխություններով նույնպես չի կարելի համեմատել **ոկոն** բառի հետ: Հայերենում բառասկզբի **ո-**ի և բառավերջի **ն-**ի անկում կարող է լինել, սակայն հայոց լեզվի զարգացման և ոչ մի շրջանում հայերեն **ն-**ն **յ-**ի փոխակերպվելու օրինաչափություն չի եղել և չի կարելի նշել: Հայերենում **ն-**ն չի փոխվում **յ-**ի, հետևաբար, չի կարելի ենթադրել,

թե **ոկոն>կոն** հայերենում տվել է **կոյ** ձևը Այդ հանգամանքներից ելնելով՝ հայերենի **կու** եղանակիչը չի կարելի կապել քարթվելական **ոկոն** բառի հետ

Հայերենի **կոյ>կու>կը>կ** եղանակիչը, ինչպես նշված է, ածանցված է հայերեն **գոլ** բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի երրորդ դեմքի **գոյ** ձևից, որը սկզբնապես գործածվել է այլ բայերի հետ իբրև հարադիր բարդության մի մասը, ապա կորցրել է իր նյութական իմաստը և վերածվել է ձևույթի՝ «ահա», «կայ», «գոյություն ունի» ընդհանուր իմաստով երբևէ դարձել է ձևույթ, կցվել է հայերենում արդեն եղած բայաձևերին, և դրանով էլ կազմվել են սահմանական ներկա և անկատար ժամանակները, որովհետև գրաբարակերպ ներկան և անկատարը չեն գործածվել իրենց հիմնական իմաստով

Այսպիսով, հայերենը միշտ էլ ունեցել է իր բարբառները սակայն արդի բարբառները իրենց համակարգով չի կարելի նույնացնել մեր թվականության հինգերորդ դարում և նրանից առաջ եղած բարբառների հետ Արդի հայերենի բարբառները, ինչպես արդեն նշված է մասնագիտական գրականության մեջ, իրենց քերականության հիմնական դրսևորումներով ձևավորվել են հինգերորդ դարից հետո

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱԲԱՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁԵՐ

Տպագրության գյուտից ընդամենը 57 տարի հետո, 1512 թվականին, Վենետիկում հիմնադրվում է հայկական տպարան, որտեղ տպագրվում են հայերեն հինգ գրքեր, որոնցից միայն մեկն էր նշանակված եկեղեցական կարիքների համար Այդ գրքերի մեջ եղել է նաև մի «Տաղարան», որտեղ զետեղված են եղել միջնադարի հայ նշանավոր գրողների տաղերը Այդ հանգամանքը կարևոր նշանակություն ունի հայ առաջին տպագրիչի նպատակները բնորոշելու համար, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այդ դարերում աշխարհիկ բովանդակությամբ գրքերի տպագրությունը հազվագյուտ երևույթ էր Հայերեն առաջին գրքերը, ինչպես տեսնում ենք, դեռևս խիստ կերպով չեն ենթարկվել եկեղեցու ազդեցությանը՝ բայց այդ ողողությունը չի պահպանվում հետագայում Ամենից առաջ պետք է

նշել, որ 1512 թվականից մինչև 1565 թվականը հայերեն որևէ գիրք լույս չի տեսնում: 1565 թվականին Աբգար դպիր Թոխաթեցին Վենետիկում, մեծ դժվարություններ հաղթահարելով՝ տպագրում է մի Սաղմոս և այլևս չկարողանալով ազատ կերպով շարունակել տպագրության գործը Վենետիկում՝ իր տպարանը փոխադրում է Կ. Պոլիս, որտեղ տպագրում է երեք գրքեր (Պատարագատետր, Տոմար և Ժամագիրք): XVI դարի վերջերին, 1587 թվականին, Վենետիկում տպագրվում է նաև մի «Սաղմոսարան», որով ավարտվում է հայերեն տպագրված գրքերի ցուցակը՝ XVI դարում:

XVII դարի առաջին կեսում հայ տպագրությունը սկսում է ծավալվել դարձյալ բուն երկրից դուրս՝ Ղոզում, Վենետիկում, Փարիզում: Այդ քաղաքներում հրատարակված գործերի մեջ ուշադրության արժանի է Ռիվոլայի հայ-լատիներեն բառարանը, որը տպագրվում է Միլանում (I հրատ.) և Փարիզում (II հրատ.): Սակայն հայերը չեն սահմանափակվում արտասահմանում, կաթոլիկ եկեղեցու վերահսկողության տակ գործող տպարաններով և փորձում են հայկական կենտրոններում կազմակերպել տպարաններ: Նրանք այդ նպատակը իրականացնելու համար հայրենասիրական մեծ գործ են կատարում: Այդ տեսակետից ուշագրավ է Նոր Ջուղայում առանց մասնագետների ցուցումների կազմակերպված տպարանը, որտեղ 1640 թվականին տպագրվում է «Հարանց վարք» խորագրով գիրքը: Այդ տպարանի հիմնադիր Խաչատուր Կեսարացին չնայած որ չի հրաժարվում իր տպագրական գործից, բայց զգում է, որ չի կարող սահմանափակվել տնայնագործական պայմաններում պատրաստված տառերով և իր աշակերտ Յովհաննեսին ուղարկում է Եվրոպա՝ տպագրական արվեստին ծանոթանալու և անհրաժեշտ նյութեր բերելու համար: Յովհաննեսը մեծ դժվարություններով կարողանում է Վենետիկում և Ղոզում ձեռք բերել տառեր ու տպարանի համար անհրաժեշտ նյութեր և վերադառնալ Նոր Ջուղա: Սակայն, Ջուղայում դրությունը փոխված էր. վախճանվել էր իր ուսուցիչը, իսկ նրան փոխարինողները ոչ միայն չէին օժանդակում Յովհաննեսին, այլև խիստ արգելքներ էին հարուցում նրա գործունեության դեմ:

Այդ ժամանակաշրջանից ուժեղ պայքար է սկսվում տպագրական գործի համար: Հայ լուսավորչական եկեղեցին ամեն կերպ ձգտում էր իր ձեռքն ամենել այդ գործը, իսկ կաթոլիկ եկեղեցին պայքարում էր իր ազդեցությունը տպագրության վրա պահելու համար: XVII դարում

Եվրոպայի զանազան քաղաքներում գործում են հայկական տպարաններ, որոնց մեջ միայն Ամստերդամում, գործող հայկական տպարանն էր, որ համեմատաբար ազատ էր կաթոլիկ եկեղեցու վերահսկողությունից: Սակայն, չնայած դրան, այնուամենայնիվ, Ամստերդամում տպված գործերի զգալի մասը ենթարկվում էր կաթոլիկյան պրոպագանդային և սրբագրվում էր այն լեզվով, որը մշակել էին կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչները: Այսպես, օրինակ՝ Ռսկան վարդապետը, որը մեծ գործ է կատարել հայկական տպագրության բնագավառում և Ամստերդամում, միայն չորս տարվա ընթացքում, 1666–1670 թվականներին հրապարակել է 17 անուն գիրք, որոնց մեջ նաև Առաքել Դավրիժեցու «Պատմությունը», ազատ չի եղել կաթոլիկ եկեղեցու ազդեցությունից և ինքնուրույն գործերում կիրառել է լատինաբան հայերենի ներկայացուցիչների հնարած լեզուն: Այդուհանդերձ, Ռսկան վարդապետը պատրաստել է տպագրիչների մի սերունդ, որը նրանից հետո մեծ աշխատանք է կատարել հայ տպագրության զարգացման ասպարեզում:

Հայ տպագրությունը անհամեմատելի չափով ընդլայնվում ու զարգանում է XVIII դարից սկսած, երբ հայկական մշակույթի օջախները Եվրոպայից փոխադրվում են Ռուսաստան: Այսպես, օրինակ՝ Գրիգոր Խալդարյանը 1780 թվականին իր տպարանը Լոնդոնից փոխադրելով Պետերբուրգ՝ աննախընթաց տեմպով սկսում է հրատարակել բազմազան բովանդակության գրքեր, որոնց մեջ եղել են նաև ռուսերեն այբբենարան և ընթերցանության գրքեր: Բավական է ասել, որ XVI դարում լույս են տեսնում միայն 20 անուն հայերեն գրքեր, XVII դարում՝ 130, իսկ XVIII դարում՝ 530: Ինչպես արդեն նշել ենք, XVI–XVII դարերում հայ տպագրությունը հիմնականում գտնվում էր կաթոլիկ եկեղեցու ազդեցության տակ և հնարավորություն չուներ ընդարձակելու իր շրջանակները:

Կաթոլիկ եկեղեցու հետապնդումները միայն չեն սահմանափակվել XVI–XVII դարերում տպագրված գործերի բովանդակությունը այդ եկեղեցու պահանջներին համապատասխանեցնելու ձգտումներով: Կաթոլիկները աշխատել են իրենց շահերին ծառայեցնել նաև գրաբարը և այդ պատճառով էլ փորձել են մշակել այդ լեզուն այնպես, որ իր շարադասությամբ ու ձևաբանական շատ իրողություններով համապատասխանի լատիներենին: Այդ լեզուն, որը հայտնի է լատինաբան հայերեն հորջորջումով, ինչպես ցույց է տվել պրոֆ. Աճառյանը,

ստեղծել են Հռոմի դպրոցում սնված հայ կաթոլիկ վարդապետները: Այդ հայերենը համարվել է բարձր լեզու և տարածվել է «ոչ միայն Հռոմի դպրոցի շրջանում մեծացած կաթոլիկ հայոց մեջ, այլև դուրսը, նույնիսկ ազգային եկեղեցուն հավատարիմ մնացած հայ ուսումնականների մեջ»¹:

Այդ հայերենի խոշորագույն ներկայացուցիչներից է եղել Հովհաննես Հոլովը, որը գրում է լատինաբան հայերենի քերականությունը և հրատարակում Հռոմում 1674 թվականին՝ «Չտուրին Յայկաբանութեան» խորագրով:

Հովհաննես Հոլովի հիշյալ աշխատությունից պարզվում է, որ լատինաբան հայերենը զգալի չափով տարբերվել է ո՛չ միայն ժամանակի խոսակցական լեզվից, այլև գրաբարից: Այն իր մի շարք իրողություններով հիշեցնում է հունաբան հայերենը, սակայն դրան զուգընթաց տարբերվում է նաև նրանից և ավելի արհեստական է ու հայերենի ոգուն անհարազատ: Այդ լեզվի արհեստականությունը ավելի է ընդգծվում նաև այն պատճառով, որ այդ դարերում արդեն հանդես էին եկել շատ գրողներ, որոնք ստեղծագործում էին գրաբարից զգալի չափով տարբերվող և ժողովրդին բավականաչափ հասկանալի լեզվով: Լատինաբան հայերենի ներկայացուցիչները մշակել են հայերենը միայն կաթոլիկ եկեղեցու պահանջները նկատի ունենալով, այդ պատճառով էլ աշխատել են իրենց վարքագծով ու գործունեությամբ հաճոյանալ Հռոմի պապին: Այդ շարժումը, ինչպես նաև լեզվական նորաձևությունները ըստ էության ուղղված են եղել հայ ժողովրդի և նրա մշակույթի ինքնուրույնության դեմ, հետևաբար իրենց էությամբ եղել են հետադիմական:

Լատինաբան հայերենը ամենից առաջ աչքի է ընկնում իր արհեստականությամբ, որն ընդգծում է նրա հեղինակների դիտավորությունը և նրանց կողմից հայերենի զարգացման օրինաչափությունների ու ավանդույթների անտեսումը: Լեզվական շատ երևույթներ, որոնք հինգերորդ դարից ի վեր հայ գրականության մեջ և խոսակցական լեզվում անխախտ կերպով գործածվում էին, փոփոխության են ենթարկվում լատինաբան լեզվի ներկայացուցիչների գործերում: Այսպես, օրինակ՝ հին հայերենում գոյություն ունեին անեզական բառեր, որոնց մի զգալի մասը մինչև այժմ էլ գործածվում է մեր գրավոր

¹ Գ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. II, էջ 311:

և բանավոր լեզվում Այդ բառերը ձևափոխեցին լատինաբան հայերենի ներկայացուցիչները՝ արհեստականորեն կրճատելով այդ բառերի հոգնակի թվի ցուցիչները, որոնք շատ դեպքերում արդեն մերվել էին այդ բառերին և կորցրել հոգնակի թվի իմաստը օրինակ՝ հայրենի (փոխ հայրենիք), միտ (փ միտք), փառ (փ փառք), կեան (փ կեանք), կամ (փ կամք), վար (փ վարք) և այլն

Լատինաբան հայերենի ներկայացուցիչների նորամուծությունները միայն նշածով չեն սահմանափակվում Այդ նորամուծությունները վերաբերում են ինչպես հայերենի հոլովման համակարգին, նույնպես և խոնարհմանն ու բառակազմությանը Հոլովման մեջ մտցված կարևոր փոփոխություններից մեկը գրաբարի հոլովական համակարգում կատարված տեղաշարժերն են Նրանք օգտագործեցին **ր**-ով վերջացող բառերի հոլովման երկրորդական ձևերը և սկսեցին այդ բառերը հոլովել «ե» հոլովմամբ օրինակ՝ ծանր-ծաներ, մանր-մաներ, մեղր-մեղեր և այլն

Գրաբարում ներգոյական հոլով կազմելու համար օգտագործվում է «ի» նախդիրը եզակի տրական և հոգնակի հայցական հոլովների հետ Լատինաբան հայերենի ներկայացուցիչները կիրառեցին «ըն» մասնիկը, որը գործադրում էին նաև հունաբան դպրոցի ներկայացուցիչները, օրինակ՝ ըն կնոջ, ըն տան և այլն Երբ բառը սկսվում է ձայնավորով, **ը**-ն ընկնում է, օրինակ՝ նանձին, նառաօտ և այլն Հոգնակի՝ **ըն** բանս, նանձինս և այլն Ներգոյականի այս կազմությունը ընդհանուր է նրանց մոտ, տարածվում է և՛ ածականների, և՛ թվականների, և՛ այլ խոսքի մասերի վրա

Փոփոխություններ մտցրին գոյականի և ածականի համաձայնեցման մեջ Գրաբարում ածականը գոյական անվան հետ համաձայնեցվում է, երբ ածականը հետադաս է, իսկ երբ ածականը նախադաս է, չի համաձայնեցվում, բացի մի շարք միավանկ բառերից, իսկ լատինաբան հայերենի ներկայացուցիչները ածականը համաձայնեցրին գոյականների հետ բոլոր դեպքերում, օրինակ՝ ուղղական՝ իմաստուն այր, սեռական՝ իմաստնոյ առն, տրական՝ իմաստնոյ առն, բացառական՝ յիմաստնոյ յառնէ, գործիական՝ իմաստնով արամբ և այլն

Գրաբարում ածականների աստիճանները կազմվում են հետևյալ կերպ բաղդատական կամ համեմատական աստիճանի համար օգտագործվում է **քան** բառը և **զ** նախդիրը, **գոյն** վերջածանցը, իսկ գե-

րադրական աստիճանի համար՝ **յոյժ, կարի, անհնարին** և այլ բառեր և որոշ դեպքերում նաև՝ **գոյն** վերջածանցը. օրինակ՝ գեղեցիկ բառի բաղդատական աստիճանը կլիներ գեղեցիկ քան զնա, կամ գեղեցկագոյն, իսկ գերադրականը՝ յոյժ գեղեցիկ և այլն:

Այս ձևը փոփոխության ենթարկվեց լատինաբան դպրոցի ներկայացուցիչների գործերում: Բաղդատական աստիճանի համար ընդունվեց միայն **գոյն** վերջածանցը, իսկ գերադրական աստիճանի համար՝ **գունեղ**. օրինակ՝ ավելի գեղեցիկ իմաստը արտահայտելու համար ասում էին գեղեցկագոյն, իսկ ամենագեղեցիկի իմաստը՝ գեղեցկագունեղ:

Այս փոփոխությունների հետ միասին նրանք օգտագործում են նաև գրաբարի իրողությունները: Հետևողականությունը այս իմաստով լատինաբան հայերենի ներկայացուցիչների մոտ չի պահպանված: Նրանց մոտ կարելի է հանդիպել այս ձևերի հետ միասին նաև խառը գրաբարյան, ինչպես և միջին հայերեն ձևերի: Բայց այդ անորոշությունները առաջացել են նրանից, որ ո՛չ բոլորն էին միանգամից յուրացնում այդ նորամուծությունները:

Խոնարհման մեջ նրանք հետևյալ փոփոխություններն են մտցնել: Գրաբարի չորս լծորդության փոխարեն նրանք ընդունեցին միայն երեք լծորդություն՝ **ել, ալ, ուլ**, իսկ **իլ** խոնարհումը պահեցին միայն կրավորականի համար, թեև այդ դեպքում էլ զգալի միակերպություն մտցրեցին նաև այդ խոնարհման մեջ:

Նրանք զգալի չափով փոփոխության ենթարկեցին նաև հայերենի բայերի ժամանակները. նրանց մոտ բայերը ունեին այնպիսի ժամանակներ, որոնք չկային ո՛չ գրաբարում և ո՛չ էլ միջին հայերենում կամ բարբառներում: Գրաբարն ունի 3 եղանակ և հիմնականում՝ վեց ժամանակ: Լատինաբան հայերենն ունի չորս եղանակ՝ սահմանական, հրամայական, ստորադասական, ըղծական, և ավելի քան 20 ժամանակ: Սահմանական եղանակն ունի հետևյալ ժամանակները՝ ներկա, օրինակ՝ **գրեմ**, անկատար՝ **գրեի**, կատարյալ՝ **գրեցի**, հարակատար՝ **գրեալ եմ**, հարակատար անցյալ (հին տերմինով գերակատար)՝ **գրեալ էի**, ապառնի՝ **գրեցից**, հրամայական եղանակ. ներկա՝ **գրեա**, ապառնի՝ **գրեսցի**, ստորադասական եղանակ. ներկա՝ **եթե գրիցեմ**, անկատար՝ **եթե գրիցեի**, հարակատար ներկա և կատարյալ՝ **եթե գրեալ իցեմ**, հարակատար անցյալ (գերակատար)՝ **եթե գրեալ իցեի**, ապառնի՝ **եթե գրեալ եղեց**, ըղծական եղանակ. ներկա և ապառնի՝ **երանի թե գրիցեմ**, անկատար՝ **երանի թե գրիցեի**, կատարյալ և

հարակատար ներկա՝ **երանի թե գրեալ իցեմ**, հարակատար անցյալ՝ **երանի թե գրեալ իցէի**:

Դերբայները նույնպէս ունեն հատուկ դրսևորումներ. անորոշ դերբայն ունի ներկա՝ **գրել**, կատարյալ, հարակատար՝ **գրեալ գոյ**, ապառնի՝ **գրելոց գոյ** ժամանակները: Բացի դրանցից, կան հետևյալ դերբայները՝ ենթակայական (ներկա)՝ **գրող**, կատարյալ-հարակատար՝ **գրեալ** և ապառնի՝ **գրելոց**: Այս շարադրվածից երևում է, որ լատինաբան հայերենում (օգտագործված է գրաբարի խոնարհման համակարգը, բայց հարմարեցված է լատիներենին այնքան, որ դժվարամարս է ո՛չ միայն գրաբար չիմացողին, այլև գրաբարին ծանոթ մարդուն: Նրանք օգտագործել են նաև հունաբան հայերենի մի շարք ձևեր, որոնք օտար են ինչպէս գրաբարի, նույնպէս և աշխարհաբարի ոգուն օրինակ՝ ստորադասական եղանակի անկատար ժամանակի համար վերցրել են հետևյալ ձևերը՝ **իցէի**, **իցէիր**, **իցեր**, **իցեաք**, **իցէիք**, **իցէին**: Բայական այսպիսի վերջավորություններ գրաբարը չուներ:

Ըղծական և ստորադասական եղանակները տարբերվում են միմյանցից ո՛չ թե վերջավորություններով, այլ նրանով, որ ըղծականի սկզբին դրվում է **երանի թե**, իսկ ստորադասականի սկզբին՝ **եթե** բառերը:

Խոնարհման այս համակարգը որոշ բառերի (գլխավորապէս **ուլ** լծորդության) խոնարհման ժամանակ խախտվում է:

Լատինաբան հայերենի ներկայացուցիչները ձգտել են վերացնել գրաբարի բայերի տարատեսակությունները և մի ընդհանուր օրենքի ենթարկել բոլոր ներգործական բայերի կրավորակերպ խոնարհումները: Նրանք սահմանել են կրավորական հատուկ վերջավորություններ՝ **ե** խոնարհման համար **իմ**, **ա** և **ու** լծորդությունների համար **իմ** կամ **անիմ**. ինչպէս՝ թանամ-թանիմ, բառնամ-բառնիմ, աղամ-աղանիմ, որսամ-որսանիմ, հեղում-հեղանիմ, առնում-առնանիմ, թողում-թողանիմ և այլն: **Ե** խոնարհման կրավորականը նման է գրաբարին, միայն այն տարբերությամբ, որ անկատար ժամանակների հիմքի և վերջավորության մեջ մտնում է **ե**. օրինակ՝ գրեէի, գրեէիր, գրիւր. գրիցեէի, գրիցեէիր, գրիցիւր և այլն:

Անկանոն բայերը գրաբարում բավականաչափ մեծ թիվ էին կազմում: Լատինաբան հայերենում կրճատված է դրանց թիվը, ինչպէս՝ լսեմ, լսեցի, լսեցից, լսեա, լսիցեմ, լսեալ եմ և այլն: Ճանաչեմ բայի

անցյալ կատարյալը, որ գրաբարում կլինի **ծանեայ**, լատինաբան հայերենում դառնում է՝ **ճանաչեցի**: Սակայն այս միօրինակությունը ոչ բոլոր դեպքերում է պահպանված. օրինակ՝ **տալ** բայը հետևյալ ձևավորումն է ստացել. տրեմ, տրես, տրե, տրեմք, տրեք, տրեն, տրեի, տրեիր, տրեր, տրեցի, տրեցիր, տրեաց, տրեցից, տրեա, տրեալ և այլն. կամ ունիմ. ունեցի, ունեցեր, ունեաց, ունեցից, ունեա, ունեալ եմ, ունեալ իցեմ և այլն:

Անկանոն բայերը տարբերվում են սովորական խոնարհումից նաև կրավորական ձևերի մեջ. ինչպես՝ ուտել, անկատար՝ ուտեի, կատարյալ՝ ուտեցայ, հարակատար՝ ուտեցեալ եմ, ապառնի՝ ուտեցայց. լսել, լսեի, լսեցայ, լսեցեալ եմ, լսեցեալ էի, լսեցայց. տալ, տրիմ, տրեի, տրեցայ, տրեցեալ եմ, տրեցեալ էի, տրեցայց, տրիր, տրիցիմ, տրիցեի և այլն:

Ինչպես տեսնում ենք, զգալի փոփոխություն են կրել հայերենի բայերը և բավականաչափ հեռացել ինչպես գրաբարից, նույնպես և բարբառներից:

Սակայն լատինաբան հայերենի ներկայացուցիչները չսահմանափակվեցին հայերեն խոնարհման և հոլովման համակարգերը արհեստականորեն ձևափոխելու և լատիներենին հարմարեցնելու աշխատանքով: Նրանք զբաղվեցին նաև հայերենի բառակազմության ու շարահյուսության հարցերով: Ամենից առաջ նրանք աշխատեցին գործադրել հունաբան դպրոցի այն նորամուծությունները, որոնք մոտենում էին լատիներենին: Նրանք լատիներենը նկատի ունենալով՝ հորինեցին մի շարք տերմիններ, որոնք ոչ թե կարող էին դյուրամարս դարձնել գրավոր խոսքը, այլ խիստ կերպով դժվարացնում էին գրական հայերենի տիրապետման գործը: Այսպես, օրինակ՝ ստորակցական (ստորադասականի փոխ.), պարբեր (շուրջ), հոլովախնդրու, երկպատկապես (երկու ձևով), եզերացեալ (հանգած, վերջացած) և այլն: Նրանք առանց որևէ կարիքի փոխ էին առնում լատիներեն բառեր և օգտագործում իրենց գործերում, օրինակ՝ լատ. *ledere* (վնասել) բայից կազմել են **լետել** բայը:

Լատինաբան հայերենի այս հարևանցի նկարագրությունից երևում է, թե ի՞նչ նպատակներ էին հետապնդում հայ հոգևորականները Իտալիայում: Նրանք քաղաքական նպատակներից ելնելով՝ ձգտել են մեռած լատիներենի օրենքներով մշակել հայերենը, դրա համար օգտագործելով նախ՝ գրաբարը, ապա՝ հունաբան հայերենի

և մասամբ նաև միջին հայերենի իրողությունները: Բառակազմության և նախածանցների գործածության մեջ նրանք հետևել են հունաբան դպրոցի ներկայացուցիչների ստեղծած նորություններին, այսինքն՝ այն բոլոր նախածանցները, որոնք ստեղծել էին հունաբան դպրոցի ներկայացուցիչները, ձգտում էին կիրառել իրենց գործերում: Նրանք աշխատում էին լատինաբան հայերենը տարածել ամբողջ հայության մեջ, պրոպագանդա էին մղում այդ լեզվի համար և եղավ այնպիսի ժամանակ, երբ որոշ գրագետների մեջ ստեղծվեց այն կարծիքը, որ իբր թե լատինաբան հայերենը բարձր ու գիտական լեզու է, և գրողներն ու գիտնականները պետք է գրեն այդ լեզվով:

Լատինաբան հայերենի ներկայացուցիչները ձգտում էին թեքել հայերի ուշադրությունը իրենց մշակութային նվաճումներից, կտրել հայ գրականության ու նոր լեզվի արմատները, թույլ չտալ, որ հայ ժողովուրդը իր լեզվով հաղորդակից դառնա գիտության ու մշակույթի նվաճումներին:

Սակայն լատինաբան հայերենը, այնուամենայնիվ, չկարողացավ բռնել գրական հայերենի տեղը: Նա տևեց մոտավորապես երկու դար (1580-ական թվականներից մինչև 1760-ական թվականները) և, չնայած կաթոլիկ հայրերի ամենակտրուկ միջոցներին՝ չընդունվեց հայ ժողովրդի կողմից: XVIII դարում, երբ հայ ժողովրդի կյանքում խոշոր տեղաշարժեր են կատարվում, երբ կապիտալիստական հարաբերությունները ներթափանցում են հայկական կյանքի մեջ, և սկսում է հայ ազգային լեզվի կազմավորման պրոցեսը, ուժեղ պայքար է հայտարարվում լատինաբան հայերենին: Սակայն այդ պայքարի մեջ հանդես են գալիս այս դեպքում էլ հայ կաթոլիկները: Այդ հանգամանքը, անկասկած, ուներ իր սոցիալ-տնտեսական պատճառները: Մխիթարյան միաբանությունը իր ինքնուրույնությունը կորցնելու, իր դիրքերը գիջելու վտանգի առաջ էր կանգնած: Նրա շահերը վտանգված էին նաև ամբողջ հայության մեջ: Այդ բոլորը հիմք են դառնում, որ Մխիթարյանները նույնպես միանան լատինաբան հայերենի դեմ սկսված պայքարին, վերականգնեն գրաբարի վարկը, որը բավականաչափ խախտված էր լատինաբան հայերենի տարածման շրջանում: Այսպիսով, հայ ազգի ձևավորման պրոցեսը, մի կողմից՝ ֆեոդալական հարաբերությունների ու նրանց հետ կապված մշակութային երևույթների դեմ մղվող պայքարի հիմքն է դնում և, մյուս կողմից՝ աշխուժացնում է հայ ֆեոդալական հարաբերությունների

պաշտպաններին, միմյանց դեմ կանգնեցնում երկու հակադիր ուժերը՝ ռեակցիայի և իր ծիւերը նոր արձակող պրոգրեսի ներկայացուցիչներին: Այդ պայքարը XVIII դարից սկսած ընդգրկում է նաև լեզվի բնագավառը: Հետին պլանի վրա է մղվում լատինաբան հայերենը, վերակենդանացվում է նրա փոխարեն գրաբարը: Հայ հոգևորականությունը պայքարում է գրաբարը մասսայականացնելու և ազգային գրական լեզու դարձնելու համար:

Այդ փորձերը թեև որոշ չափով վերականգնում են գրաբարի վարկը, նույնիսկ որոշ շրջաններ, հատկապես Մխիթարյանները, սկսում են երկար ժամանակ ստեղծագործել այդ լեզվով, բայց նա չի դառնում հայոց ազգային լեզուն: Հայ ազգային լեզուն սկսում է կազմավորվել այլ հիմքի, հայ բարբառների հիման վրա: Նա աստիճանաբար առաջ էր գնում, մշակվում ու բռնում էր գրաբարի տեղը իբրև գրավոր լեզու:

Վ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒՆ

ՄԱՐԵՍԻԶՄԻ ԿԼԱՍԻԿՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Լեզվի զարգացման յուրաքանչյուր ետապ շատ կողմերով իր անցյալ շրջանի հետ կապվելով հանդերձ՝ ունի յուրահատուկ օրինաչափություններ, որոնք կարելի է ճիշտ հասկանալ միայն այն ժամանակ, երբ դրանք դիտվեն իբրև տվյալ լեզվի պատմական զարգացմամբ առաջացած այնպիսի երևույթներ, որոնք ընդհանուրի հետ ունեին նաև մասնակի, միայն լեզվի տվյալ շրջանին հատուկ դրսևորումներ Լեզվի յուրաքանչյուր ետապ իր նախորդների նկատմամբ ավելի կատարյալ է, ավելի զարգացած, որովհետև նա, մի կողմից՝ պահպանում է իր հին իրողությունները և, մյուս կողմից՝ կուտակում այն նորը, որը ձեռք է բերում ժողովրդի զարգացման ընթացքում Լեզվի մեջ կատարված այդ տեղաշարժերը, ինչպես ցույց են տվել մարքսիզմի կլասիկները, ընթանում են երեք ուղղությամբ, ա) լեզվի պատրաստի նյութի պատմական զարգացմամբ, բ) ժողովուրդների ու ցեղերի խաչավորմամբ ու խառնմամբ, որի ընթացքում խաչավորվել են նաև նրանց լեզուները, թեև միշտ հաղթել է մի լեզու, և գ) տվյալ լեզվի բարբառների համակենտրոնացմամբ Այդ բոլոր պրոցեսները ավելի կամ նվազ չափով տեղի են ունենում յուրաքանչյուր լեզվի զարգացման ընթացքում, հետևաբար յուրաքանչյուր լեզու ազգային լեզվի աստիճանին է հասնում այդ գործոնների գոյակցության և փոխադարձ ազդեցության պայմաններում

Սակայն լեզվի զարգացման այդ գործոնները բոլոր ժամանակներում և բոլոր ժողովուրդների մոտ միակերպ չեն ընթանում Լեզվի զարգացման այս կամ այն շրջանում ավելի կամ պակաս չափով կարող է ընդգծվել այս կամ այն գործոնը Այսպես, օրինակ՝ ցեղային լեզուների շրջանում ուժեղ է ընթացել խաչավորման պրոցեսը, որը հարատևել է նաև ժողովրդական լեզուների կազմավորման ընթացքում, բարբառների առաջացումն ու կայունացումը ընդհանուր երևույթ է եղել ցեղային և ժողովրդական լեզուների շրջանում, իսկ ազգային լեզուների պայմաններում նոր բարբառներ, իբրև

ընդհանուր կանոն, չեն առաջանում բարբառները, երկրի տնտեսական ու քաղաքական համակենտրոնացման հետևանքով, ձուլվում են ազգային լեզվի մեջ Այս ընդհանուր երևույթները նույնպես միակերպ չեն լինում ինչպես պատմական տարբեր շրջաններում, նույնպես և տարբեր ժողովուրդների մոտ

Ազգային լեզուները ձևավորվում են ազգի հետ, սակայն դրանք տվյալ ժողովրդի լեզվի անցյալ շրջանից կտրված չեն և իրենց շատ իրողություններով գալիս են անցյալից Սակայն, այդուհանդերձ, երբ խոսվում է ազգային լեզվի մասին, նկատի են առնվում լեզվական այնպիսի փաստեր, որոնք հատուկ են լեզվի զարգացման միայն տվյալ շրջանին Ազգային լեզուն, իբրև ընդհանուր կանոն, ունի հաղորդակցման լայն ֆունկցիաներ, դառնում է գրավոր և մշակվում ու կատարելագործվում է զարգացման այնպիսի օրենքներով, որոնք զգալի չափով տարբերվում են այդ լեզվի վաղ շրջանի օրենքներից Այսպես, օրինակ՝ հայոց ազգային լեզվի և գրաբարի հոլովական ու խոնարհման համակարգերը ունեն զգալի տարբերություններ, որոնցով էլ հենց որոշվում են հայերենի տարբեր շրջանների թեքման առանձնահատկությունները Տարբերություններ կան նաև հայերենի այդ տարբեր շրջանների գրավոր արտահայտությունների քերականական մյուս կատեգորիաների, բառապաշարի և այլ տարրերի մեջ

Մարքսիզմի կլասիկները մշակել են կուռ տեսություն ազգերի ու ազգային լեզուների կազմավորման ու զարգացման մասին

Ազգի հատկանիշները, իբրև միմյանց պայմանավորող և միմյանց հետ սերտորեն առնչված ամբողջություն, դրսևորվում են հասարակության զարգացման այն շրջանում, երբ վերանում են ֆեոդալական մասնատվածությունն ու սահմանափակությունը, աստիճանաբար աճող ապրանքային շրջանառության հետևանքով ստեղծվում է միասնական ընդարձակ շուկա, ուժեղանում են երկրի տարբեր շրջանների միջև եղած տնտեսական հարաբերությունները, և ապրանքային շրջանառության ոլորտի մեջ են ընդգրկվում ինչպես երկրի արդյունաբերությունը, նույնպես և գյուղատնտեսությունը Այդ պատմական դարաշրջանում լիկվիդացվում է ֆեոդալիզմը, գոյանում է ազգային միասնական շուկա, և ժողովուրդները զարգանում ու դառնում են ազգեր, իսկ ժողովուրդների լեզուները՝ ազգային լեզուներ Նշելով ազգերի ու ազգա ըն լեզուների գոյացման ընդհանուր օրինաչափությունները՝ մարքսիզմի կլասիկները ընդգծում են յուրա-

քանչյուր ազգի գոյացման շրջանում ստեղծված պատմական կոնկրետ պայմանների վճռական նշանակությունը տվյալ ազգի մշակույթի ու լեզվի զարգացման համար Պատմական պայմաններով են որոշվում ազգային լեզվի կազմավորման ու մշակման խնդիրները, գրականության մեջ այն ամրացնելու հանգամանքները

Ազգերի, ինչպես նաև հասարակական ամեն մի խմբակցության գոյության համար անհրաժեշտ է միասնական և ընդհանուր լեզու, որը կապիտալիզմի առաջընթացի համար պետք է ամրացվեր գրականությամբ և ազատվեր նրա զարգացման դեմ հարուցված խոչընդոտներից

Լեզուն, իբրև ազգը բնորոշող հատկանիշներից մեկը, սպասարկում է ամբողջ ազգին, հանդիսանում է ազգային հասարակության մեջ ստեղծված մարդկային հարաբերությունները կարգավորող, արտադրությունը հնարավոր դարձնող միջոցը, հասարակության զարգացման ու պայքարի գործիքը, որի մշակմամբ ու զարգացմամբ շահագրգռված են բոլոր դասակարգերն ու հասարակական խմբակցությունները Սակայն յուրաքանչյուր ազգի գոյացման կոնկրետ պայմանները խիստ կերպով ներգործում են տվյալ ազգի լեզվի զարգացման ու մշակման վրա Այսպես, օրինակ՝ Արևմտյան Եվրոպայում ազգերի գոյացումը, իբրև կանոն, զուգակցվել է այդ ազգերի ազգային առանձին պետությունների ստեղծման հետ, իսկ Արևելքում ազգերը զարգանալով կազմել են ոչ թե իրենց առանձին պետությունները, այլ ազգամիջյան պետություններ, մի քանի ազգություններից բաղկացած պետություններ Արևելքում իբրև ազգեր ձևավորվող ժողովուրդներից շատերը ինքնուրույն պետություններ չեն կազմում

Ազգերի գոյացման պատմության այդ առանձնահատկությունները մեծ չափով ազդել են այդ ազգերի լեզուների կազմավորման ու զարգացման ընթացքի վրա Այն ժողովուրդները, որոնք իբրև ազգ ձևավորվելու պրոցեսում ստեղծել են իրենց ազգային պետությունները, ավելի հեշտությամբ են լուծել ազգային լեզվի մշակման, կատարելագործման ու նորմավորման հարցերը Իսկ այն ազգերը, որոնք չեն ունեցել իրենց սեփական ազգային պետությունները, ստիպված են եղել, մի կողմից՝ պայքարել իրենց ազգային լեզուն սահմանափակելու քաղաքականության դեմ և, մյուս կողմից՝ մշակել և գրականությամբ ամրացնել այդ լեզուն տարբեր հոսանքների ուժեղ բախման պայմաններում

Ազգի գոյացման ընթացքում ստեղծված այդ պայմանները, ինչպես նաև նոր կազմավորվող ազգի և տարբեր ժողովուրդների միջև եղած հարաբերությունները, ժողովրդի համախմբվածությունը կամ մասնատվածությունը, մշակութային մակարդակի աստիճանն ու գրական լեզվի ավանդույթները թեև հիմնավորապես չեն փոխում ազգային լեզվի զարգացման ընթացքը, բայց խիստ ազդում են նրա վրա: Այսպես, օրինակ՝ հայոց ազգային լեզվի հիմքում ընկնում է Արարատյան բարբառը: Այդ հանգամանքը կապված է հայ ժողովրդի արևելյան հատվածը Ռուսաստանին միակցելու և հայ ազգի կազմավորման պրոցեսը Ռուսաստանին անցած հայկական շրջաններում ավարտելու հետ: Եվ ընդհանրապես ազգային լեզվի հիմքում ընկած այս կամ այն բարբառի հարցը չի կարելի լուսաբանել առանց ազգի կազմավորման խնդիրները պարզելու: Այդ բանը շատ պարզ երևում է ռուսաց ազգային լեզվի կազմավորման օրինակով: Մոսկվայի խոսվածքը, ինչպես ցույց են տվել ռուսերենի պատմությամբ զբաղվողները, վճռական դեր է կատարել ռուս ժողովրդի XIV-XV դարերի գրավոր լեզվի նորմաների ձևավորման մեջ: Բայց հետագայում, ռուս ժողովրդի պատմական կյանքում կատարված փոփոխությունների հիման վրա, Մոսկվայի խոսվածքը և նրա հիման վրա ձևավորված պաշտոնական լեզուն խիստ կերպով ենթարկվում են հարավ-ռուսական այսահունչ (акающий) բարբառների, հատկապես կուրսկ-օրյոլյան բարբառի ազդեցությանը, իսկ երբ ռուս ժողովուրդը զարգանում ու դառնում է ազգ, ռուսաց լեզվի կուրսկ-օրյոլյան բարբառը (կուրսկ-օրյոլյան «խոսվածքը»), նրա համար ստեղծված նպաստավոր պայմանների հետևանքով, զարգանում ու դառնում է ռուսական ազգային լեզվի հիմքը: Կուրսկ-օրյոլյան բարբառը ռուսաց ազգային լեզվի հիմքը դառնալու հանգամանքը պայմանավորված էր նաև պատմական այն դերով, որը ռուս ժողովրդի կյանքում խաղացել է Ռուսաստանի հարավը: Այդ առթիվ վերջին շրջանում կատարված ուսումնասիրություններում նշվում է, որ ռուսական կենտրոնացված պետություն կազմավորվելու դարաշրջանում երկրի տնտեսական և քաղաքական կյանքում հսկայական դեր է խաղում հարավը, այսինքն՝ ժամանակակից Կուրսկի և Օրյոլի տերիտորիան: Այս տեղով էր անցնում ռուսական պետության պաշտպանության գիծը ընդդեմ թաթարական հրոսակախմբերի: Այդ պատմական հանգամանքները հիմք են դառնում, որ հեռու հյուսիսում տարածվեն այն լեզվական

առանձնահատկությունները, որոնք ձևավորվել էին հարավում: Ռուսաց լեզվի բարբառների այսօրինչ արտասանությունը, որը տարածված է եղել այն տերիտորիայի վրա, նրա առավել արխայիկ և կազմավորման սկզբնական շրջանի տիպերով, որոնք նշում են նրա առաջացման օջախը, պահպանվել է ժամանակակից կուրսկ-օրյոլյան խոսվածքի տերիտորիայում¹: Այսպիսով, տնտեսական և քաղաքական իրադարձությունները ստեղծում են ռուսաց լեզվի կուրսկ-օրյոլյան բարբառի իրողությունների տարածման և ռուս ազգի գոյացման ընթացքում ռուսաց ազգային լեզվի հիմքում դրվելու համար անհրաժեշտ պայմանները: Այդպես նաև ամեն մի ազգի լեզվի կազմավորման հիմքում ընկած բարբառի հարցը չի կարելի պարզել առանց նկատի ունենալու այդ ժողովրդի լեզվի տվյալ բարբառի պատմության հարցը և ազգի կազմավորման մեջ այդ բարբառով խոսող հատվածի կատարած դերը:

Ազգային լեզվի հիմքում ընկած բարբառը նրա համար ստեղծված նոր պայմանների հետևանքով ենթարկվում է խիստ փոփոխության, որը ավելի ուժեղ է լինում հատկապես այն ժողովուրդների մեջ, որոնք ունեցել են հին գրավոր լեզուներ: Եվ ընդհանրապես ազգային լեզվի հիմքում ընկած բարբառը իր բոլոր իրողություններով ու բարբառային ձևերով չի պահպանվում. նա մշակվում ու ձևափոխվում է իր այն ընդհանուր օրենքներով, որոնք՝ ա) չեն հակասում ժողովրդի տվյալ շրջանի լեզվական ըմբռնողությանը, բ) արտացոլում են տվյալ լեզվի զարգացման տենդենցները և գ) հասկանալի են ժողովրդի բոլոր հատվածներին: Այն, ինչ որ նեղ բարբառային է, չի ներթափանցում ազգային լեզվի սահմանները: Այդպիսի տեղաշարժեր կատարվել են նաև հայոց լեզվի Արարատյան բարբառի մեջ: Նա ընկել է մեր ազգային լեզվի հիմքում իր քերականության համակարգի ընդհանուր գծերով և մշակվել ու կատարելագործվել է իր այն օրինաչափություններով, որոնք հայոց գրական հին լեզուների և հայ ժողովրդի կյանքում՝ տեղի ունեցած պատմական իրադարձությունների ներգործության տակ խիստ փոփոխությունների են ենթարկվել: Այսպես, օրինակ՝ չեն պահպանվել բարբառի հնչյունափոխության այն կանոնները, որոնք չեն եղել հին գրական լեզուներում, այդ պատճառով բարբառային բառաձևերը գրական կերպարանք են ստացել:

¹ П. С. Кузнецов, Русская диалектология, стр. 10.

օրինակ՝ ազգային լեզվում բարբառային հեր, մեր, ախպեր, լիս, ձին, հավող, ֆորթ, խոսալ, գընըմ բառածևերը գրական տեսք ստանալով՝ դարձել են՝ հայր, մայր, եղբայր, լույս, ձյուն, խաղող, հորթ, խոսել, գնում և այլն: Այս փոփոխությունները միայն բավական էին Արարատյան բարբառի և գրական լեզվի իրողությունների մեջ խիստ տարբերություններ տեսնելու համար: Սակայն հայոց ազգի կազմավորման պատմությունը ունեցել է իր առանձնահատկությունները և դրանց համապատասխան էլ հայոց ազգային լեզուն կազմավորվել ու զարգացել է՝ դրսևորելով այնպիսի հատկություններ, որպիսիք չեն ունեցել այլ ժողովուրդների ազգային լեզուները:

Ազգային լեզուն իր կազմավորմամբ ու մշակմամբ ազգի հետ կապվելով հանդերձ՝ ունի զարգացման ներքին օրինաչափություններ, որոնք որոշում են նրա առաջընթացը և կատարելագործման ուղիները: Այդ օրինաչափությունները, որոնք պատմական են և հասարակության զարգացման հետ փոփոխվում են, ազգային հասարակության մեջ կարող են ունենալ այնպիսի դրսևորումներ, որոնք հատուկ չեն տվյալ ժողովրդի վաղ շրջանի լեզվին: Ընդհանրապես ազգային լեզուն շատ կողմերով տարբերվում է ժողովրդի լեզվից կամ այն բարբառից, որի հիման վրա մշակվում ու կատարելագործվում է: Ազգային լեզուն, ինչպես նշվեց, ամենից առաջ բնորոշվում է իր հաղորդակցական լայն ֆունկցիայով և այն գրականությամբ ամրացնելու ձգտումով, որը պայմանավորված է կապիտալիստական հարաբերությունների զարգացման պահանջներով: Երկրորդ՝ այդ լեզվի բարբառների համակենտրոնացման և երկրորդ ժողովրդի ընդհանուր լեզվի քերականության կատարելագործման ու բառապաշարի համալրման ուժեղ տենդենցներով: Ազգային լեզուն պահպանելով ժողովրդի լեզվի կամ իր հիմքում ընկած բարբառի քերականության համակարգը և զարգացման ներքին օրենքները միայն իրենց ընդհանուր գծերով՝ ազգի զարգացման ու առաջընթացի հետ ավելի կատարելագործվում ու հղկվում է, մշակվում ու հարստանում է, հետևաբար, զգալի չափով տարբերվում է ինչպես ժողովրդի ընդհանուր լեզվի բարբառներից, նույնպես և այն լեզվից, որը զարգանում ու դառնում է ազգային լեզու:

Այսպիսով, լեզվաբանության պատմության մեջ առաջին անգամ մարքսիզմի կլասիկները բացառիկ պարզությամբ ու ամբողջությամբ նշելով լեզվի բնորոշ հատկանիշներն ու զարգացման ներքին օրինա-

չափությունները՝ որոշեցին ազգային լեզուների դերն ու ֆունկցիաները ազգի զարգացման տարբեր շրջաններում, ցույց տվեցին, որ լեզուն իր զարգացման օրենքներն ունենալով հանդերձ՝ սերտորեն կապված է հասարակության հետ, որ լեզվի զարգացման օրենքները միայն այն ժամանակ կարելի է ճիշտ հասկանալ, երբ դրանք ուսումնասիրվեն տվյալ լեզուն կրող ժողովրդի պատմության հետ իրենց ունեցած անխզելի կապի մեջ:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԸ: ՊԱՅԵԱՐ ՆՐԱ ՄԵԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

ա) ԱՇԽԱՐՀԱՔԱՐԸ ԵՎ ՆՐԱ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ XVII-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Հայոց լեզվի պատմությանը նվիրված մասնագիտական գրականության մեջ հաճախ նույնացել են **աշխարհաբար** և **հայոց ազգային լեզու** կամ **ժամանակակից հայերեն** հասկացությունները: Մինչդեռ աշխարհաբարը շատ արտահայտություններով տարբերվում է հայոց ազգային լեզվից: Դրանք հայերենի զարգացման տարբեր շրջանները արտացոլող, ֆունկցիայով, դրսևորման եղանակներով ու քերականական շատ միջոցներով զգալիորեն միմյանցից զանազանվող գրական լեզուներ են: Աշխարհաբարը միջին հայերենի անմիջական շարունակությունն է. նրա և միջին հայերենի սահմանը որոշելու համար, ինչպես ճիշտ կերպով նկատել է պրոֆ. Յ. Աճառյանը, չի կարելի նշել որևէ վճռական կետ¹: Այդ լեզուն խիստ կերպով սահմանազատված չէր նաև հայերենի բարբառներից ու գրաբարից: Նա մշակվում էր հայ ժողովրդի տարբեր հատվածների խոսակցական լեզվի համընդհանուր տարրերի, միջին հայերենի և գրաբարի հասկանալի իրողությունների համադրությամբ: Սակայն նրա ձևավորման պրոցեսը շատ դանդաղ էր ընթանում: Հայաստանում հաճախակի տեղի ունեցող պատերազմները, հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական մասնատվածությունը, հայ մշակույթի ու գրականության զարգացման դանդաղ տեմպը խիստ կերպով ներգործում էին այդ լեզվի զարգացման ու կատարելագործման ընթացքի վրա: Այդ բոլորի հետևանքով նա չէր կարողանում ազատվել քերականական միևնույն

¹ Յ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. II, էջ 441:

իմաստը արտահայտելու համար գործածվող բազմազան ձևերից և դառնալ միասնական ու կայունացած օրինաչափություններ ունեցող լեզու:

Նա տարբեր հեղինակների և տարբեր ժանրերի գործերում միշտ տարբեր կերպարանքով է երևացել. մերթ խիստ հազեցված է եղել գրաբարի, մերթ այս կամ այն բարբառի, մերթ միջին հայերենի իրողություններով: Այդ բազմազան արտահայտությունների մեջ նա ցուցաբերում էր միօրինակ ու միատարր դառնալու տենդենց, որը գերիշխող չի դառնում աշխարհաբարի մեջ XVII–XVIII դարերում:

Աշխարհաբարի արմատները, ինչպես արդեն նշեցինք, թաղված են միջին հայերենի մեջ: Պրոֆ. Յ. Աճառյանը իբրև աշխարհաբարի հնագույն նմուշ բերում է Բջնիի 1358 թվականի արձանագրությունը, որի մեջ ասված է. «Ես Աթաբակ շահինշահ, ի բռնակալութեան Մելիք Աշրափին՝ զմեր Յայրենիքս զԲջնի քաղաք յիսնէ հուլմով խլեր էր, զիր ճորտերին էսիր [գերի] կացուցեր: Եւ Յաճի Բէկ Նիագեցավ ու զքաղաքս ի հիմանց քակեց, ու շատ յանուանի մարդ ի սուր քաշեց ու գերկիրս ի չորս դիաց անքնակ արար, ու զքրիստոնէք անխնայ կոտորեաց. մեք յԱստուած ապաւինելով զմեր սալահր [սալար-գորապետ]... հեծելին գլուխ կացուցաք, որ զիր ապրանքն Նախնա [թերևս՝ անխնա] բաշխեր, որ Աստուած խղճաց մեզ ու մեր հայրենիքս զԲջնու բերդս և մեր ձեռս բերաց, զբունհաթ [իմնական], արձանս վերստին հաստատեցաք. զվիճակ, զվանք, զգեղ, զսարի, զդաշտի հայրենիք, բեց [պեչ-ծառայ], ու շինական ու գործաւոր ազատ և թարխան [ծառայությունից ազատ] արարին հարկէ և ի ծառայութենէ... ով ոք զմեր հաստատած արձանս խաւիանել ջանայ՝ դատի յԱստուծոյ»¹:

Այս արձանագրության լեզուն զգալի չափով տարբերվում է ավելի ուշ շրջանի աշխարհաբարից. այդտեղ կան աշխարհաբարի իրողությունները հիշեցնող ձևեր միայն, ինչպես՝ խլել էր, զիր (իր), քակեց, ի սուր քաշեց, չորս, գեղ, գործաւոր և այլն: Բերված օրինակները ցույց են տալիս, որ աշխարհաբարի տարրերը կարելի է գտնել դեռևս XIV դարի գրականության մեջ: Բայց այդ տարրերը ամենից ավելի պահպանված պետք է լինեին հայ ժողովրդի խոսակցական լեզվում, որը այդ շրջանում ընդգրկում էր բարբառների համ-

¹ Նույն տեղը, էջ 441:

ընդհանուր կամ լեզվական հասկանալի փաստերը: Սակայն այդ լեզուն իր անադարտությամբ գրի չի առնվել միջին դարերում, այդ պատճառով էլ դժվար է գանազանել աշխարհաբարը և միջին հայերենը միմյանցից և ցույց տալ նրանց տարբերիչ առանձնահատկությունները: Աշխարհաբարի և միջին հայերենի միջև որոշակի տարբերություններ կարելի է տեսնել միայն XVII–XVIII դարերում, երբ աշխարհաբարը սկսվում է մշակվել տարբեր բարբառների հիման վրա, թեև այդ շրջանում էլ հաճախ ի մի են ձուլվում նրանց լեզվական իրողությունները: Աշխարհաբարի հիմնական առանձնահատկությունները այդ դարերում կարելի է համարել՝ ա) գրաբարյան նախդիրների գործածության թուլացումը. բ) բարբառների խիստ ազդեցությունը գրական լեզվի վրա. գ) բարբառով գրականություն ստեղծելու տենդենցը. դ) տարբեր հեղինակների, երբեմն էլ նույնիսկ միևնույն հեղինակի երկերում լեզվական տարբեր իրողությունների՝ բարբառների, գրաբարի ու միջին հայերենի իրականությունների անխտիր կիրառությունը: Այդ բոլորի հետ պետք է նշել, որ այդ դարերում ստեղծված պատմական և շատ այլ երկեր շարունակել են գրվել գրաբարով, թեև որոշ գրողների մոտ բավականաչափ ենթարկված բարբառների ազդեցությանը, իսկ գեղարվեստական աչքի ընկնող երկերը միջին հայերենով, բարբառով կամ բարբառային տարրերով խիստ հագեցված գրաբարով: Այդ դարերում ընդհանուր գծերով պահպանվել է լեզվական ձևերի բազմազանությունը, սակայն դրա հետ միապին սկսել են տարածվել հայ ժողովրդի ընդհանուր լեզվի մի շարք իրողություններ, քերականական նոր, գրաբարին օտար ձևերը և այլն: Այդ ժամանակաշրջանում թեև որոշ հեղինակներ հայերենը այս կամ այն բարբառի հիման վրա մշակելու փորձեր էին կատարում, բայց դրանք գիտակցական հողի վրա դրված չէին:

Յայտց աշխարհաբար լեզվի պատկերը արտացոլված է XVII–XVIII դարերում գրված երկերի մեջ: Այդ դարերում հատկապես խոշոր նվաճումներ է ունենում գեղարվեստական գրականությունը: Նա իր լեզվով թեև լրիվ չափով չի սահմանազատվում միջնադարյան գրականության լեզվից, բայց բովանդակությամբ տարբերվում է վաղ շրջանի գրական երկերի բովանդակությունից, նա ազատվում է միջնադարյան կրոնական մտայնությունից և արտահայտում նոր մոտիվներ: Հանդես են գալիս գրողներ, որոնց չի տանջում «հոգու և մարմնի անհաշտելիության» հին կռիվը. նրանց համար գոյություն

չունի «հանդերձյալ կյանքի» մղձավանջը, որովհետև գիտեն, որ կյանքի անընդհատ պրոցեսի մեջ ամեն ինչ ունի իր սկիզբն ու վախճանը, ինչպես ասում է Նաղաշ Հովնաթանը.

*«Վաղիւն ոչ գիտես, թե զի՞նչ ծնանի,
Մարդոյս կեանքն վայրի ծաղկի նմանի,
Այսօր բացուեալ է, վաղիւն անցանի»¹:*

Նաղաշ Հովնաթանը սահմանագծում է միջնադարյան հայ քնարերգության բազմերանգ հրաշակերտությունը: Նրանից հետո սկսվում է մի նոր շրջան՝ գուսանական շրջան, որը նախորդում է ժամանակակից հայերենի կազմավորմանը: Սայաթ-Նովան հանդես է գալիս Նաղաշ Հովնաթանից հետո, նա ապրում ու ստեղծագործում է XVIII դարում: Նրա երգերը իրենց մեջ առել են ամբողջ միջնադարի հայ քնարերգության նվաճումները և իրենց բովանդակությամբ ու արվեստով ժամանակի ամբողջ աշխարհի պոեզիայի լավագույն գործերից ետ չեն մնում, թեև գրված են բարբառով: Հայ գրականության զարգացմանը զուգընթաց զգալի աշխուժություն է ցուցաբերում նաև ժողովրդական բանահյուսությունը, որը նույնպես քիչ դեր չի խաղացել աշխարհաբարի մշակման ու հղկման մեջ:

XVIII դարից ձևավորվում է նաև հայկական քաղաքական գրականությունը: Հանդես են գալիս քաղաքական գործիչներ, որոնք գրավոր պրոպագանդա են սկսում հայ ժողովրդի ազատագրության ու քաղաքական անկախության համար: Քաղաքական գրականության առաջին գործերից մեկը Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» աշխատությունն է, որ լույս է տեսել 1773 թվականին: Այդ գրքում հեղինակը արտահայտելով նոր ձևավորվող հայ բուրժուազիայի ձգտումները, կոչ է անում դուրս գալ հայրենիքը փրկելու և ազատություն նվաճելու, հրահրում է հայ ժողովրդի ազգային զգացմունքները, ձգտում է զարգացնել ազգային ինքնագիտակցության գաղափարները, բարձրացնել հայության ազատատենչ ոգին, դուրս բերել նրան օտարերկրյա տիրապետողների դեմ և նախապատրաստել նրան՝ սեփական պետություն նվաճելու համար: XVIII դարի վերջերին դրվում է նաև հայ պարբերական մամուլի

¹ Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ 170:

հիմքը: 1794 թ. Մադրասում լույս է տեսնում «Ազդարար» թերթը, որը առաջադրում էր ազգային ազատագրական շարժման և հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը զարգացնելու խնդիրներ: 1799 թվականին արդեն բավականաչափ հասկանալի լեզվով լույս է տեսնում «Տարեգրություն» հանդեսը, որը շարունակվում է մինչև 1802 թվականը: Այս բոլորը կապված էին ազգային շարժման պրոցեսի սկզբնավորման հետ, որը հիմնական կենտրոն և այդ շարժումը ղեկավարող հաստատություններ չունենալու պատճառով անկազմակերպ էր ու տարերային:

Հայոց աշխարհաբար լեզվի մշակման ու հղկման բնագավառում որոշակի առաջխաղացում է նկատվում XVII դարի վերջերից: Այդ ժամանակաշրջանից բարբառային հասկանալի տարրերը խիստ կերպով ներթափանցում են գրականության մեջ. աշխարհաբարն ընդունում է բարբառային առատ փաստեր: Հանդես են գալիս գրողներ ու պատմաբաններ, որոնք ավելի կամ նվազ չափով օգտագործելով բարբառները և հին գրական լեզվի ավանդույթները՝ հորինում են իրենց երկերը: Այդ շրջանում գրված գործերում հանդիպում ենք լեզվական բազմապիսի փաստերի, որոնց մի մասը հետագայում ավելի ընդհանրանալով՝ տարածվում ու հայոց ազգային լեզվի բաղկացուցիչ տարրերն է կազմում: Այսպես, օրինակ՝ Գրիգոր Դարանաղցին աշխարհաբարի տարրերով հագեցված լեզվով 1630 թ. գրում է իր ժամանակագրությունը, Չաքարիա Ագուլեցին 1647-1681 թվականների ընթացքում շարադրում է իր օրագիրը, որը պարունակում է լեզվական այնպիսի փաստեր, որոնք հատուկ են ինչպես արևելյան, նույնպես և արևմտյան գրական լեզուներին:

Հիշյալ դարերում հայոց գրական լեզվի վիճակը իր որոշ դրսևորումներով արտացոլվել է Չաքարիա Ագուլեցու Օրագրի լեզվի մեջ: Չաքարիա Ագուլեցին շրջել է Հայաստանի շատ վայրերում, եղել է հայկական գաղթավայրերում և գրի է առել իր տպավորությունները հասկանալի լեզվով, սակայն, իբրև գրագետ մարդ, աշխատել է իր լեզվին գրական տեսք տալ, թեև չի կարողացել իր այդ ձգտումը լրիվ չափով կատարել: Այդ է պատճառը, որ նրա գործերում բարբառային ոճերի ու բառերի հետ օգտագործվել են գրաբարյան ձևեր ու ոճեր, մանավանդ այն դեպքերում, երբ հեղինակը գրել է հայ եկեղեցու և կրոնի հետ կապված հարցերի մասին: Այդ բոլորը նրա լեզուն դարձնում են ինքնատիպ և տարբերում ինչպես բարբառներից, նույն-

պես և գրաբարից: Նրա, ինչպես նաև միջնադարի առանձին գրողների լեզուն բարբառների և գրաբարի իրողություններով հագեցած մի այնպիսի լեզու է, որը մեծ չափով հիշեցնում է «ուս» ճյուղի բարբառներն ու արևելյան գրական լեզվին հատուկ շատ փաստեր: Չաքարիա Ագուլեցին աշխատել է պահպանել ավանդական ուղղագրությունը, բայց չի կարողացել իր այդ ձգտումը իրագործել և գրել է՝ մեծ մասամբ դեկավարվելով բառերի արտասանությամբ: Այդ պատճառով էլ հաճախ միևնույն բառը տարբեր ձևով է հանդես գալիս նրա երկում, օրինակ՝ ընկեր-ընգերք, ընկավ-ընգավ, վաղջանեցավ (49)¹, վաղճանեցաւ (63), դարցեալ (62), դարծեալ (63), ըսկիզբն (78), ըսկիսպ (63) և այլն: Օժանդակ բայի ներկան և անցյալը, որպես ընդհանուր կանոն, բոլոր դեմքերի համար նա գրում է **է**-ով, թեև կան նաև **ե**-ով գրված դեպքեր. օրինակ՝ «Մին երևանցի գնաց, շահին արգ տվեց, թէ՛ գառաքի Սիամոնն մօտ ալսչափ փող ունիմ. Սիամոնի ախպորիցն ուզում **եմ**, տալիս **չէ**. ուր գնում **եմ**, դիվանս անում **չեն**» (104):

«Այս երկիրս այնպես չոր ու երաշտ **եր** անց կացել, որ ոչ ձմեռն ձուն **չեր** եկել. **զ** ամսոյ, ոչ անձրև **եր** եկել, որ Նախչվանայ մինչև ի Թարվիզ որ շատ տեղ կեր, որ խմելու ջուր չկեր» (62):

Ագուլեցու լեզվում կան աշխարհաբարին, ինչպես նաև գրաբարին և արևմտյան գրական լեզվին հատուկ հոլովածներ. օրինակ՝ բացառական հոլով՝ ի գեղչեն (87), քաղչեն (47), ի հօրե (85), խեղղքարեն (59), խանից (70), շահից (69) և այլն, գործիական հոլով՝ ցամաքով, վկայութենով (85), հրամանաւ (63) և այլն, սեռական հոլով՝ խանի, Հայաստանայ (63) և այլն: Ներգոյական հոլովի համար առանձին ձև չկա արևմտյան գրական լեզվում. Ագուլեցին այդ հոլովի համար ունի հատուկ ձև՝ **ուս** վերջավորությունը, որը նրա լեզուն մեծ չափով մոտեցնում է արևելահայ գրական լեզվին: Ագուլեցին օգտագործում է նաև աշխարհաբարին հատուկ խոնարհման վերջավորություններ: Ահա մի քանի օրինակ, սահմանական եղանակի ներկա՝ գնում եմ (104), ուզում եմ (104), անկատար՝ գնում եր (75), գալիս էին (51), ուզում եր (87), շինում էին (47), ապառնի՝ տալու եմ (70), տալու եր (163), անցյալ կատարյալ՝ գնացինք (82), տեսանք (82), չարչարեց (100), տեսան (63), գնաց (64), կերանք (74), վաղակատար՝ տվել եր (78), ուխտ էի եկել (65), հարակատար՝ լցված եր (81), խախթված եր

¹ Փակագծերի մեջ գրված թվերը Ագուլեցու Օրագրի համապատասխան էջերն են նշում: Պահպանված է բնագրի ուղղագրությունը:

(81), մեռած էր (70), ենթադրական եղանակի ապառնի՝ կտայ (75), ըղձական եղանակի ապառնի՝ շինէ (101), գայ (128), գնայ (131), շինեն (130), բերեն (131), տանին (131), անցյալ՝ գայր, գնայր (132), հրամայական եղանակի հոգնակի՝ խնդրեցէք (83), տվէք (131) և այլն:

Չաքարիա Ազուլեցին գործածում է նաև զուտ բարբառային բառեր ու քերականական ձևեր. ինչպես՝ երել ան (131), եկել ան այստեղ (76), տվել ամ (101), մարդ այ (77), տալիս այ (77) և այլն: Ազուլեցու լեզվում բավականաչափ շատ են օտար, մանավանդ պարսկական և թուրքական բառեր:

Ազուլեցու լեզվի մասին մի ընդհանուր գաղափար կազմելու համար կատարենք մի քանի մեջբերումներ.

«Դարձեալ ես Չաքարիայ հարց ու փորցելով իմացայ իմ հայր Աղամիրէն, մայր Սաժգուլէն, որ թվին **ռիթուն**մ ես անարժան Չաքարիայ որ մօրէ ծնայ սուրբ Գեորգի կիրակի օրն, կես օրէն յետն:

Դարցեալ կամիվն Աստուծոյ եկեալ հասաք մինչի **ռղզ** յամն. կամեցաք կամիվն Աստծոյ ուսանել վաճառականութիւն:

Ռղզ յամի մարտի ամսոյն **է**, աղուհացից առաջին շաբթոյն ուրբաթ օրն ես անարժան Չաքարիա, որ իմ հօր, իմ մօր, իմ եխպօր հրամանաւ և իմ յօժար կամովս այսօր Ազուլաց դուրս էլայ յետ իմ հօրեխպօրորդի պարոն Նիկողոսին յետ, մին բեռն ապրիշմով գնացի դէքի Ըզմիր. դարցեալ մին բեռն ապրիշում այլվի Նիկողոսին ուներ:

Դարցեալ, ով սիրելի եխպայրք, թեպետ գրածս անշահ այ, ապայ շատ շահավոր է իմացողի: Դարցեալ երես անկեալ պաղատանօք աղաչեմ գձեզ, ով որ հանդիբիք սմայ կարդալով կամ լսելով՝ տաք ողորմի, ծիծաղելով, յիմար, տգետ է և յիշելով, վարցն ուղիղ Աստուծոյ դուք առնիցէք, ավուր դատաստանին յիշեալ իցէք»¹:

1126 դեկտեմբերի ԺԸ ումն Թարվեզ ես Աբուլեցի մղոսի Աղամիրի որդի Չաքարէս գնացի Մարաղայ: Մարաղու խան էր Աղայխանի տղայ Յուսէնղուլի-խան: Այս խանս Ադիլբեշանայ վեզրի Միրզայ-Իբրահիմի աղջիկն է առած կին: Այս երկիրս մուղադամ շատ էլ այ, շատ լաւ երկիր, բարելի: Այս երկրումս լաւ բրինձ կնի, որ Յնդստանու բրինձին յօքում կանի, որ չուրի Ըսպիան կու տանին արմաղան: Լաւ բամբակ, շատ չամիչ, շատ դօշաք, շատ անթիւ թուրթուն դուրս կու գայ այս երկրիս: Այս երկրիս ելն կու գնայ Սահանդաղի: Սահանդու

¹ «Չաքարիա Ազուլեցու Օրագրութիւնը», Երևան, 1938, էջ 5-6:

Դ գետ այ գալիս այս երկիրս, որ ամեն գետ Երասդինանէ սիալ պակաս է»¹:

Բերված փաստերն ու օրինակները ցույց են տալիս, որ Ագուլեցու Օրագրության լեզուն ժամանակակից հայերենից զգալի չափով տարբերվում է: Նրա մեջ պահպանված են լեզվական տարբեր փաստեր անխտիր գործածելու տեղեկնքը, որը հատուկ էր ընդհանրապես այդ շրջանում գրված գործերի լեզվին: Ժամանակի պատմիչները նույնպես գրել են աշխարհաբարով, բայց ոչ երբեք ժամանակակից հայերենով: Դավրիժեցին, օրինակի համար, իր պատմությունը շարադրել է միանգամայն հասկանալի ոճով, բայց այդ լեզուն շատ հեռու է ժամանակակից հայերենից, օրինակ՝ «Եւ է քար մի, որ օծի քար ասեն. և թուրքերէն խտրելիազ աղչասի ասեն, բոլոր և սպիտակ լինի, ի սատաֆի ջընսեն է. մեկ երեսն դուբայ [զմբեթածն] է և մեկել երեսն դուր. և ի դուր երեսն ունի մարդուրայ բարակ սև թել, և է այսպէս. խասիաթն սորա այնէ, որ թէ ռուպ, որ է պեզմագով ի վերայ օծիկ ցաւոյն կարմիր տեղին դնես, նա կպի ի վերայ կարմիր տեղին, և ուրն օր չի փրթիր ի վերայէն մինչև որ ողջանայ Աստուծով»²:

Հովհաննես վարդապետ Կոնստանդինոպոլսեցին «Պարզաբանութիւն հոգեւուազ Սաղմոսացն Դաւթի» գրքի մեջ արևմտյան, արևելյան բարբառների և գրաբարի տարրերով խառն մի լեզվով է շարադրել Նյութը: Այս աշխատության մեջ կան նույնիսկ **ինձանից, քեզանից** և այլ դերանվանական ձևեր, որոնք գործածական են «ուլմ» ճյուղի բարբառներում և ժամանակակից հայերենում: Օգտագործելով հայերեն բարբառների և գրաբարի առավել հասկանալի լեզվական իրողությունները՝ նա կարողացել է բավականաչափ դյուրըմբռնելի դարձնել իր լեզուն, օրինակ՝ «Իմ հոգւոյս խորուկ և ծածուկ խոցերն և ցաւերն սրտիս և լերդիս խորուկ տեղերէն գոռալով դէպ քեզ աղաղակեցին տեր Ած. քոյ սահանաց ձայներովն, իբր քոյ երկնային դռներին ձայնին նման ձայն հանելով և որոտալով առ քեզ գոչեցին, և ճար խնդրեցին բժշկութեան: Չերէ [որովհետև] ամեն քո զբօսանքդ և քո ալիքդ իմ վերայես անցկացան, իբր քո ամեն բարկութիւնդ և ցասմունքդ, քո զանազան փորձութիւնքդ և քո պատուհասներդ խառնակեալ ծովու մրկած տալղաներին (ալիքներին)

¹ Նույն տեղը, էջ 24:

² **Առաքել Դավրիժեցի**, Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, էջ 457 (1896 թ., էջ 592-593):

նման իմ վերայես անցկացան, և զիս ծածկեցին և խեղճ արարին: Բայց ինչպես որ կու հրամայէ տէր Ած որ ցերեկն, իբր մեր աջողութեան միջումն իւր ողորմութիւնն յիշենք և գոհանանք. և գիշերն, իբր մեր անաջողութեան և փորձութեան միջումն իւր սուրբ կամքն նոր օրինութեամբ օրհնենք և փառաբանենք, իբր ամսոր նոր փորձանքի և նեղութեան գօրայ [համեմատ] իւր նոր օրինութիւն և գոհութիւն մատուցանենք, այսպէս միշտ իմ աղօթքս և պաղատանքս առ Ած է իմ հոգւոյս կենդանութեան և փրկութեան համար»¹:

XVIII դարի սկզբներին, այն է՝ 1711 թվականին, լույս է տեսնում Սկրոդերի «Գանձ արամյան լեզվի» լատիներէն աշխատությունը, որի վերջում բերված են նմուշներ, որոնց մեջ կան «ոււմ» ճյուղի բարբառներին հատուկ շատ իրողություններ. օրինակ՝

«- Այ տղայ Ղազար գնա մին մեր Ծատուրն կանչէ գայ:

- Աղայ գնացի Ծատուրն նոր տեղն էր մտել, ասաց թէ շորս հագնիմ գամ:

- Բարի իրիկուն Աղային. թողութիւն անես Աղայ շատ վաստակեցի էսօր, շուտ գնացի տեղս Ղազարն եկաւ ասաց Աղէն կանչում այ:

- Գիտես ախպեր Ծատուր, ինչու քեզ էսէնց բիվախտ կանչեցի:

- Հրամէ Աղայ ղուլլուղիդ հագիր եմ:

- Իգուց ախպեր Ծատուր մեր տանն հացկերուտ այ՝ շատ մարդ եմ կանչել...»²:

Այդ օրինակները նույնպէս ցույց են տալիս, որ աշխարհաբարի մշակման բնագավառում որոշակի քայլեր են կատարվում XVIII դարում, բայց, այնուամենայնիվ, չի ստեղծվում միատարր լեզու:

Լեզվական այդ անորոշությունն ու խայտաբղետությունը, որը որոշ գրողների մոտ բավականաչափ թուլանում է գրաբարի ազդեցության տակ, շարունակում է կիրառվել նաև ժամանակի պաշտոնական գրագրությունների մեջ: Այդ տեսակետից ուշագրավ են Եզովի «Сношения Петра Великого с арм. народом» աշխատության մեջ բերված փաստաթղթերի լեզվի իրողությունները: Ահա մի քանի օրինակ՝ «ի քմին քմթր [պակասավոր պակասագոյն] փոքր ծառայողէդ արզ և պանտակի [ծառայություն bändägi] լինի վերոյ-

¹ «Պատմութիւն հոգեւորաւ Սաղմոսացն Ղաւթի». Ի Նուաստ Յովհաննիսէ վարդապետէ Կոնստանդինուպօլսեցւոյ տպագրեցեալ արդեամբք և գոյիւք Ագուլեցի խօճայ Գյուլնագարի որդի խօճայ Նահապետին: Վենետիկ 1687, էջ 218: Մեքսերումը կատարված է Զ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատությունից, էջ 449:

² Զ. Աճառյան, նույն տեղը, էջ 453:

գրեալ մեծ սահապի ղուլուղումն եթէ կամենաս մեր հայոց ազգի աֆալն իմանաս մինչի այս թարեղս Չ տարի է անօրինաց ձեռքն գերի անք մնացել, հօրես ք տարի է որ Օսմակուի հետ կռիւ ենք տալիս վասն մեր թագաւորի հրամանովն կամ թէ մեր հաւատի խաթրի համար մենք էս ճանապարհից ետ դառնալու չենք, մինչի մեր մինն մնալն թագաւորի ուղուրին գլուխ ենք դրեր, մեծ իմփռադրիցին ղուլ ենք գրվել, որ է Իվան Կարապետն թագաւորի ուքագովն եկել էր առ մեզ ինչ որ թագաւորի հրամանքն էր մենք տեղ կատարեցինք մնացեալն էլ տեղ կուկատարացունենք ի քմինայ փոքր ծառայ Իվան Կարապետս, որ տղնաղէն եկի Ավան ուզպաշի եղբայր, Սիմօն ուզպաշին է թարխանի հետ Իսախանըն և Պաղի ուզպաշին, որ է մեզանով **իզ** մարդ եկինք Սալիան ղօշունի համար»¹

Տասնութերորդ դարի երկրորդ կեսին, 1760 թվականին, Պաղդասար դպիրը գրում է քերականության ձեռնարկ, որտեղ ասում է «Գրոց բան հասկանալու սեր ունեցող փոքրիկ տիրացուններուն համար է այս փոքրիկ քերականութիւնս Որ թէ զայս կարդան և սորվին, զմեծ քերականութիւնն հեշտ կու հասկընան եւ ով որ քերականութիւն չէ կարդացեր, անոր կարդացողութիւնն պակաս կը սեպվի ի մեջ կարդացողաց ինչ դատար [չափ] շատ բան կարդացած ու գիտցած ըլլալալէ Չերէ [որովհետև] սա խօսքիս արմատը՝ եանի [այսինքն] ասլը [բուն] թմէլը [հիմք] ո՞րն է, կամ թէ այս խօսքս քանի կերպ կըլլայ ըսես նէ, չի կրնար գիտնար»²

Ինչպես երևում է այս մեջբերումից, Պաղդասար դպիրի լեզվի մեջ գերակշռում են «կը» ճյուղի բարբառներին հատուկ իրողությունները

Կլեոպատրա Սարաֆյանը 1788 թ , գրում է իր «Գիրք որ կոչի բանալի գիտութեան» աշխատությունը, որի մեջ բերված օրինակները շատ ավելի մոտ են արևելահայ գրական լեզվին, օրինակ՝

«– Ո՞ւր ես գնում, հրամանքդ այտպես կանուխ

- Ես գնում եմ դպրատունն

- Յորում ժամու պարտիս հրամանքդ տեղն լինիլ

- Երբ որ զանգակն հարէ

- Յորում ժամու հարէ զանգակն

¹ Эзов. Сношения Петра Великого с арм. народом, С. Петербург 1898, էջ 436
Յ. Աճառյան, Նույն տեղը, էջ 454

² **Պաղդասար Դպիր** Գիրք քերականութեան Կ Պոլիս, 1760, էջ 11

- Եօթներորդ ժամուն
- Աշակերտքն որք գալիսեն յետ հարելոյ զանգակին լինումէ
նոցա պատիժ
- Ուսուցիչն նոցա նստուցանումէ ի վերայ ծնկանց
- Շատեն նստում նոքա այնպէս
- Միևի՛ այն ժամանակն երբ ուսուցիչն նոցա հրամայէ
կանգնիլ»¹

Այս գրքի հայերեն մասի մեջ հիմնականում պահպանված են գրաբարի ուղղագրությունը և հնչյունափոխական կանոնները, բառերը մեծ մասամբ գործածված են իրենց գրաբարյան ձևերով՝ Կիրառված են գրաբարի նախդիրները, հոլովական վերջավորությունները, բայաձևերը և այլն

Վերոհիշյալ օրինակները, ինչպես նաև ընդհանրապես հայ միջնադարյան գրականության լեզվի վիճակը ցույց են տալիս, որ Կիլիկյան հայ թագավորության վերացումից հետո սկսում է ձևավորվել հայոց լեզվի գրական մի նոր տարբերակ, որը կոչվում է աշխարհաբար Այդ լեզուն որոշակիորեն ուրվագծվում է XVII– XVIII դարերում՝ Նրան բնորոշ է եղել քերականական միևնույն իմաստը բազմազան ձևերով արտահայտելու տենդենցը Այսպես, օրինակ՝ միևնույն գրողը հաճախ իր միևնույն գործի մեջ կիրառում էր և՛ «ում», և՛ «կը» ճյուղի բարբառների իրողությունները, համաձայնեցումը կատարվում էր տարբեր սկզբունքներով և այլն Լեզվական այդ բազմազանությունները, սակայն, հաճախ ենթարկվում էին գրաբարի ազդեցությանը և դրանով որոշ չափով մեղմանում էին տարբեր գործերի լեզվի միջև նկատվող զանազանությունները, և ստեղծվում էր գրագետ մարդկանց մեջ կիրառելի մի ոճ, որը թեև միատարր լինելուց դեռևս հեռու էր, բայց գնալով ազատվում էր բազմազանությունից և միաձև դառնալու ուժեղ տենդենցներ էր ցուցաբերում Բայց այդ բոլորը կատարվում էր տարբերայնորեն, դեռևս գիտակցական պայքար չէր մղվում այդ լեզվի մշակման ու կատարելագործման համար, հետևաբար, պարզորեն ուրվագծված չէին նրա զարգացման հեռանկարները այդ դարերում

¹ Կղ. Սարաֆյան, Գիրք որ կոչի բանալի գիտութեան Ս Պետերբուրգ, 1788, էջ

Հայ ժողովրդի պատմական կյանքում արմատական տեղաշարժեր են կատարվում XIX դարում: Դարի առաջին քառորդի վերջում Հայաստանի արևելյան շրջանները ազատագրվում են թուրք-պարսկական անտանելի լծից և միացվում Ռուսաստանին: Հայ ժողովրդի զգալի մասը այդ ակտով փրկվելով անընդհատ խոշտանգումներից և համեմատաբար ավելի նպաստավոր պայմանների մեջ դրվելով՝ կարճ ժամանակում ապաքինվում է թուրք-պարսկական ֆեոդալական բռնապետությունների հասցրած հարվածներից և ձեռնարկում իր տնտեսության ու մշակույթի զարգացմանը: Նա հնարավորություն է ստանում կազմակերպելու մշակութային նոր հաստատություններ, ընդարձակելու դպրոցների և պարբերական մամուլի ցանցը, զբաղվելու ժամանակի հրատապ հարցերին պատասխան տվող գրքերի հրատարակությամբ և այլն:

Հայերը, ինչպես նաև Կովկասի մյուս ժողովուրդները, ազատվելով հետամնաց, ֆեոդալական թուրքիայի և Պարսկաստանի տիրապետությունից և միանալով համեմատաբար զարգացման բարձր աստիճանի վրա կանգնած Ռուսաստանին՝ ոչ միայն փրկվում են անհետ բնաջնջվելուց, այլև կանգնում անընդհատ զարգացման և ազգ դառնալու ուղու վրա: Միայն Ռուսաստանին միացվելուց հետո լայն ծավալ է ստանում ազգային շարժումը անդրկովկասյան ժողովուրդների մեջ և սկսվում է այդ ժողովուրդների իբրև ազգ կազմավորվելու պրոցեսը, որը զուգակցվում է նրանց ազգային լեզուների կազմավորման հետ: Սակայն ինչպես անդրկովկասյան ժողովուրդների իբրև ազգ ձևավորվելու, նույնպես և նրանց ազգային լեզուների կազմավորման պրոցեսը միակերպ չի ընթացել: Յուրաքանչյուր ժողովրդի պատմական կոնկրետ պայմանները իրենց կնիքն են դրել նրանց մշակույթների ու լեզուների զարգացման ընթացքի վրա:

Հայ ազգի ձևավորման գործընթացը սկսվում է հայ ժողովրդի տրոհվածության, արևելյան և արևմտյան հատվածների բաժանված լինելու պայմաններում: Այդ հանգամանքը խիստ կերպով ազդում է հայոց ազգային լեզվի մշակման ու զարգացման ընթացքի վրա: Աշխարհաբարը, որը, ինչպես տեսանք, XVII-XVIII դարերում ուրվագծվում էր իր հիմնական արտահայտություններով, փոխում է իր

գարգացման ընթացքը և սկսում է մշակվել նաև «ուսմ» ճյուղի բարբառների և հատկապես Երևանի ու Նրա շրջակայքի, այն է՝ Արարատյան բարբառի հիման վրա Յայ ժողովրդի արևմտյան հատվածում շարունակում է գարգանալ աշխարհաբարը՝ հիմնականում պահպանելով XVII–XVIII դարերում հայ գրականության լեզվի օրինաչափությունները

Սակայն հայոց ազգային լեզվի մշակման այդ երկու հիմքերի առկայության պայմաններում էլ լեզվական բազմազան երևույթներ իրենց արտահայտման շատ եղանակներով ու ձևերով չէին հակադրվում միմյանց Ամենից առաջ արևմտահայ և արևելահայ գրականության լեզուները իրենց շարահյուսությամբ, բառապաշարով և բառակազմական հիմնական կանոններով չէին տարբերվում միմյանցից Իսկ ձևաբանական և հնչյունաբանական տարբերությունները որևէ դժվարություն չէին հարուցում հայ ժողովրդի տարբեր հատվածների գրականությունը հասկանալու համար Յայոց ազգային լեզուն թեև մշակվում էր երկու հիմքերի վրա, բայց սկզբնական շրջանում, XIX դարի առաջին կեսին, արևմտահայ գրական հայերենը ավելի լայն ծավալ ու կիրառություն ուներ Նրանով գրվում և հրատարակվում են բազմաթիվ գրքեր, լույս են տեսնում թերթեր և ամսագրեր, որոնք զգալի դեր են կատարում հայ ժողովրդի մշակութային պատմության մեջ Սակայն, այդուհանդերձ, նա չի կարողանում ազատվել XVII–XVIII դարերի հայ գրական լեզվին հատուկ շատ իրողություններից, հատկապես արխայիզմներից և գրաբարի օրինաչափությունները հիշեցնող հոլովածներից Արևմտահայ գրական լեզվի մեջ պահպանված այդ օրինաչափությունները բացատրվում են նրանով, որ նա գլխավորապես մշակվում էր մայր երկրից դուրս՝ հայկական գաղթավայրերում և օտար լեզուների խիստ ներգործության պայմաններում, թեև այդ լեզուն մշակողները փորձում էին միշտ հեռու պահել հայերենը օտար ազդեցություններից, խույս տալ օտար բառերից և յուրաքանչյուր Նոր հասկացության համար ստեղծել հայերեն համապատասխան բառեր

Արևմտահայերենում, ինչպես նաև ընդհանրապես հայերենում անունները ենթարկվում են ներքին և արտաքին թեքման Սակայն ներքին թեքման ենթարկվող բառերի մեծ մասը գրաբարի համապատասխան բառերի պատկերը չունեն Յայերենի հոլովիչներից (ա, ե, ի, ու) արևմտահայերենում XIX դարի առաջին կեսին գործածվում

էին **ի, ու, ա** և սահմանափակ բառերում **ո** հոլովիչները: Հոլովակերտ մասնիկները հիմնականում նմանվում էին ժամանակակից հայերենի հոլովակազմիչներին, այն տարբերությամբ, որ բացառական հոլովը ուներ **է** կամ **մէ** հոլովակազմիչը, իսկ ներգոյական հոլովի համար հատուկ վերջավորություն չկար ընդհանրապես: Գոյական անունների հոգնակին կազմվում էր **եր** և **ներ** վերջավորություններով, հոգնակիները ենթարկվում էին մեծ մասամբ **ու** հոլովման: Այդ հանգամանքը ցույց է տալիս, որ արևմտահայերենի գոյական անունները իրենց հոլովական համակարգով կապվում էին միջին հայերենի հետ, որովհետև միջին հայերենում անունների հոգնակին գլխավորապես ենթարկվում էր **ո** հոլովման, որի զարգացումը հենց միջին դարերի գրականության մեջ տվել է **ու**:

Արևմտահայերենում դեռևս պահպանված էին հայցականի և բացառականի նախդիրները (զ և ի), թեև ոչ բոլոր բառերի հետ էին հանդես գալիս: Որոշ բառերի հոգնակին կազմվում էր **ք**-ով: Այդպիսի բառեր սեռականում և տրականում ստանում էին **ց** հոգնակի վերջավորությունը, որը պահպանվում էր նաև մյուս թեք հոլովներում, օրինակ՝ տղաք-տղոց-տղոցմէ-տղոցմով, ծառայք-ծառայից-ծառայիցմէ-ծառայիցմով, յոյսք-յուսաց-յուսացմէ-յուսացմով և այլն: Մի շարք բառերի մեջ այդ **ք** վերջավորությունը հոգնակի լինելու իմաստը կորցնելու ճանապարհին էր կանգնած, օրինակ՝ գիրք-գրոց, բայց նաև՝ գիրք-գրքի-գրքերի, ձեռք-ձեռաց, բայց նաև՝ ձեռք-ձեռքի-ձեռքերի, ոտք-ոտից, բայց նաև՝ ոտք-ոտքերի և այլն: Առանձին դեպքերում հանդիպում էին նաև միջին հայերենում գործածական հոգնակի այլ վերջավորություններ, ինչպես՝ օծտնի (օծիտներ), պատճառնի (պատճառներ), պարոնայք (պարոններ), ամրոցանի (ամրոցներ) և այլն: Արևմտահայերենում միայն գործիական հոլովը որոշիչ հոդ չի ընդունում: Ի տարբերություն ժամանակակից հայերենի, արևմտահայերենը ունի **մը** անորոշ հոդը, որը առաջացել է **մի** բառից: Նա հետադաս է, եթե հաջորդ բառը սկսվում է ձայնավորով, միանում է նրան: Այդպիսի դեպքերում **մը**-ն **եմ** օժանդակ բայից և **ալ** բառից առաջ կարող է ընդունել **և**. օրինակ՝ «Մը յօղը՝ հնչման վայելչութեան համար **եմ** և **ալ** բառերէն յառաջ **և** գիր մ'ալ կ'առնու. այսպէս. Անգիւտ գանձ **մըն** է. զարհուրանք **մըն** էր. անգամ **մըն** ալ, հատ **մըն** ալ»¹: Այդ

¹ Ա. Այտընյան, Զննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, էջ 25:

կանոնը, սակայն, պարտադիր չէր: Հիշյալ բառերից առաջ նույնպես **մը** հոդի **ը**-ն երբեմն փոխարինվում էր ապաթարցով:

Արևմտահայերենում XIX դարի առաջին կեսին դեռևս լրիվ չափով չէին ամրացել գոյական անունների հոլովական կանոնները, չէին վերացել բազմազանությունները, թեև խիստ կերպով կրճատվել էին:

Այդ բազմազանությունը նկատվում էր նաև դերանունների հոլովման համակարգի մեջ: Դերանունների հոլովումը արևմտահայերենում ուներ մի շարք այնպիսի դրսևորումներ, որոնք կապված էին միջին հայերենի հետ: Դերանունների բացառական և գործիական հոլովները ունեին **մե**, **մով** վերջավորությունները, որոնց հետքերն արդեն նշմարվում էին միջին դարերում: Դերանունների մյուս հոլովները նույնպես պահպանել էին միջին հայերենի համապատասխան ձևերը, թեև որոշ ձևափոխման ենթարկված: Անձնական դերանունների բոլոր հոլովները ունեին տարբեր ձևեր, օրինակ՝

Ուղղ.	ես	մենք, մեք
Հայց.	զիս (իս, ինծի),	զմեզ (մեզ, մեզի),
Սեռ.	իմ (իմին)	մեր (մերին)
Տր.	ինծի, ինծի	մեզի
Բաց.	իզմե, ինե	մեզմե, մենե
Գործ.	իզմով	մեզմով

Ողղ.	դու, դու	դուք
Հայց.	զքեզ (քեզ), քեզի	զձեզ (ձեզի)
Սեռ.	քու	ձեր (ձերին)
Տր.	քեզի	ձեզի
Բաց.	քեզմե, քենե	ձեզմե, ձենե
Գործ.	քեզմով	ձեզմով

Երրորդ դեմքի դերանուն **ինքն** ունի հետևյալ պատկերը՝ ինքն, զինքն, իրեն, իրեն, իրմե, իրմով, իրենք, զիրենք, իրենց, իրենց, իրենցմե, իրենցմով:

Ցուցական դերանունները ունեն բազմազան ձևեր, ինչպես՝ այս, աս, ասի, ասիկա, սա, սուի, սուիկա, այտ, ատ, ատի, ատիկա, դա, դուի, դուիկա, այն, ան, անի, անիկա, նա, նուի, նուիկա: Ցուցական դերանունների ուղղական և հայցական հոլովները եզակիում ունեն

գրո, սեռական և տրական հոլովները՝ **որ**, բացառականը՝ **կէ, մէ**, գործիականը՝ **ով**, իսկ հոգնակիում՝ **ոնք, ոնց, ոնցմէ, ոնցմով** վերջավորությունները, օրինակ՝ այս, ասոր, ասկէ (ասորմէ), ասով, ասոնք, ասոնց, ասոնցմէ, ասոնցմով:

Արևմտահայերենը, ժամանակակից հայերենի նման, ունի դերանվանական **ս, դ, ն** հոդերը, որոնք հանդես են գալիս և՛ համապատասխան դերանունների հետ, և՛ առանձին, առանց դերանունների՝ արտահայտելով ցուցական և՛ ստացական դերանունների իմաստ, օրինակ՝ իմ գիրքս, գիրքս, գրքերս, քու գիրքդ, գիրքդ, գրքերդ և այլն:

Բազմավանկ գոյականները կարող են ստացական հոդերի փոխարեն ընդունել **նիս, նիդ, նին** մասնիկները, որոնց մեջ **նի-**ն եղել է հոգնակի վերջավորություն, որը այդ բաղադրությունների մեջ **ս, դ, ն** դերանվանական հոդերի հետ նշանակում է **մեր, ձեր, նրանց**. օրինակ՝ պարտեզնիս (մեր պարտեզը), պարտեզներնիս (մեր պարտեզները), պարտեզնիդ (ձեր պարտեզը), պարտեզներնիդ (ձեր պարտեզները) և այլն: Միավանկ բառերը հաճախ **նիս, նիդ, նին** մասնիկների հետ ընդունում են նաև **եր** հոգնակի վերջավորությունը, որը կարող է չունենալ հոգնակի իմաստ, ինչպես՝ ձայներնիս (մեր ձայնը, նաև մեր ձայները), ձայներնիդ (ձեր ձայնը, ձեր ձայները) և այլն: Մյուս դերանունները նույնպես ենթարկվում են հոլովման ընդհանուր կանոններին, թեև նրանց հոլովածների մեջ կան ցուցական և անձնական դերանուններից տարբերվող ձևեր: Արևմտահայ գրական լեզվի դերանունների հոլովումը իր շատ արտահայտություններով հիշեցնում է միջին հայերենի դերանունները: Ամենից առաջ, միջին հայերենի նման, պահպանված է հայցական հոլովի **զ** նախդիրը, անձնական դերանունների հայցական հոլովի **իս**, տրական հոլովի **քեզ** ձևերը, բացառական հոլովի **մէ** և գործիական **մով** վերջավորությունները և այլն: Այդ հանգամանքը ցույց է տալիս, որ միջին հայերենի լեզվական շատ իրողություններ շարունակել են պահպանվել աշխարհաբարում նաև նրա զարգացման ավելի ուշ շրջանում՝ XIX դարում:

Արևմտահայերենի խոնարհման համակարգը իր հիմնական առանձնահատկություններով չի նույնանում «կը» ճյուղի բարբառներից և ոչ մեկի հետ, թեև նրանց միջև կան շատ ընդհանրություններ: Արևմտահայերենի բայերի դիմավոր ձևերը լինում են պարզ և բաղադրյալ: Վերջինները, ինչպես ժամանակակից հայերենում կազմվում են որևէ դերբայից և օժանդակ բայից:

Արևմտահայերենի եղանակները համարվել են երեքը՝ սահմանական, ստորադասական և հրամայական: Սակայն լեզվական փաստերը ցույց են տալիս, որ նա ունեցել է նաև հարկադրական եղանակ, որի համապատասխան ձևերը մտցված են եղել սահմանական եղանակի մեջ: Սահմանական եղանակն ունի ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ, ապառնի, հարակատար և վաղակատար ժամանակներ, որոնցից վերջին երեքը կազմվում են համապատասխան դերբայից և օժանդակ բայի ներկա ու անցյալ ձևերից: Ստորադասական եղանակը համապատասխանում է արդի հայերենի ըղծական եղանակին և ունի ապառնի ու անցյալ ժամանակներ, հարկադրական եղանակը ունի երկու, իսկ հրամայականը մեկ ժամանակ:

Սահմանական եղանակի ներկան և անցյալ անկատարը կազմվում են **կու**, **կը** եղանակիչից և ներկայի բնից ու բայական վերջավորություններից, ինչպես՝ կը գրեմ, կը գրեի, կը գրենք, կը գրեինք, կը կարդամ, կը կարդայի, կը կարդայինք և այլն: Սահմանական եղանակի ներկայի և անկատարի կազմության այս եղանակը, ինչպես արդեն ասված է, հատուկ է եղել նաև միջին հայերենին և հայերենի «կը» ճյուղի բարբառներին: Անցյալ կատարյալը ինչպես գրաբարում, նույնպես և բարբառներում ու աշխարհաբարում կազմվում է միևնույն հիմունքով, միայն այն տարբերությամբ, որ գրաբարում ոչ ցույական միավանկ բայերը ունեին **ե** ածականը եզակի երրորդ դեմքում, իսկ ներգործակերպ բայերի երկրորդ դեմքում՝ **եր** վերջավորությունը: Միջին հայերենը չնչին բացառությամբ և աշխարհաբարը ամբողջությամբ՝ այդ ածականը չեն պահել, իսկ երկրորդ դեմքի **եր** և հոգնակի առաջին դեմքի **աք** վերջավորությունները դարձել են **իր** և **ինք**: Մնացած ժամանակները կազմվում են որևէ դերբայից և օժանդակ բայից, օրինակ՝ հարակատար ներկա՝ տեսած եմ, անցյալ տեսած էի, վաղակատար ներկա՝ տեսեր եմ, անցյալ տեսեր էի, ապառնի ներկա՝ տեսնելու եմ, անցյալ՝ տեսնելու էի և այլն:

Հարկադրական և ստորադասական (ըղծական) եղանակները կազմվում էին ժամանակակից հայերենի նման՝ **պիտի** եղանակիչից և սահմանական եղանակի ներկայի ու անկատարի ձևերից՝ առանց **կը** եղանակիչի. ինչպես՝ պիտի կարդամ, պիտի կարդայի, կարդամ, կարդայի: Հրամայական եղանակը եզակիում ունի **է**, **իր**, **ա** և հոգնակիում՝ **եք**, **ցեք** վերջավորությունները, ինչպես՝ սորվե, կարդա, մոռցիր, սորվեցեք, կարդացեք, մոռցեք, ըրե, ըրեք և այլն: Բոլոր լծորդու-

թյունների ներգործական սեռի բայերից կազմվում են կրավորական բայեր **վ, ու** ածանցի միջոցով: Կրավորական բայերի գերակշռող մեծամասնությունը անցյալ կատարյալում ունի **այ, ար, աւ, անք, աք, ան** վերջավորությունները, ինչպես՝ կը լսուիմ-լսուեցայ, կը հանուիմ-հանուեցայ, կը համարուիմ-համարուեցայ, կը մոռցուիմ-մոռցուեցայ և այլն:

Երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են հարակատար և ապառնի դերբայների և **ըլլալ** օժանդակ բայի համապատասխան ժամանակներից. օրինակ՝ տեսած կըլլամ, տեսնելու կըլլամ, տեսած ըլլայի, տեսնելու ըլլայի, տեսած եղայ և այլն:

Արևմտահայերենը ունի հետևյալ դերբայները՝ անորոշ՝ գրել, կարդալ, հարակատար՝ գրած, կարդացած, վաղակատար՝ գրեր, կարդացեր, ապառնի՝ գրելու, կարդալու, ենթակայական՝ գրող, կարդացող, ժխտական կամ ըղծական՝ գրեր, կարդար: Ժամանակների կազմությանը չեն մասնակցում ենթակայական և անորոշ դերբայները:

Արևմտահայերենի բայերի խոնարհման համակարգի մեջ չի նկատվում ձևերի այն բազմազանությունը, որը բնորոշ էր միջին հայերենին: Սակայն բայական բոլոր ձևերը կարելի է տեսնել միջին հայերենում: Ինչպես արդեն նշել ենք, գրաբարի բայական ձևերի հետ միասին միջին հայերենում ձևավորվում են նոր ձևեր: Գրաբարի չորս լծորդություններին ենթարկվող բայերի զգալի մասը փոխում է իր խոնարհումը, նոր կերպարանք է ստանում ածանցներ ունեցող բայերի մեծ մասը և այլն. օրինակ՝ գրաբարում **հասանել** բայը անցյալ կատարյալում լինում էր՝ հասի, հասեր, հաս, հասաք, հասեք, հասին, հրամայականում՝ հաս, հասեք, իսկ միջին հայերենում՝ հասայ, հասար, հասաւ, հասաք, հասիք, հասան, հասիր. **լուծանել** բայը գրաբարի անցյալ կատարյալում լինում էր՝ **լուծի**, հիմ.՝ **լոյծ, կլանեմ**՝ կլի, կուլ, իսկ միջին հայերենից սկսած՝ **լուծել-լուծեցի, լուծէ, կլլել-կլլեցի, կլլէ և այլն**: Արևմտահայերենում գրաբարի **և** և **չ** ածանց ունեցող մի շարք բայերի փոխարեն գործածվել են կա՛մ այդ բայերը կերպարանափոխված ձևով, կա՛մ ուրիշ արմատ ունեցող բայեր, օրինակ՝ **զարթնում**-ի փոխարեն՝ արթննալ, **զենում**-ի՝ մորթել, **մատչիմ**-ի՝ մօտենալ, **ընթեռնում**-ի՝ կարդալ, **ընկենում**-ի՝ նետել, **թաքչիմ**-ի՝ պա-

* **Ըլլալ և եղանիլ** բայերը միևնույն արմատից են. բայի հին ձևը **եղանիլ**-ն է, որը միջին դարերից վերածվել է **ելել**. ապա **ըլլալ** ձևերի:

հուղտել և այլն: Այդ երևույթը նկատվում էր նաև միջին հայերենում:

Գրաբարում բայերի մի խմբի ներկան և անցյալ անկատարը կազմվում էին կա՛մ տարբեր արմատներից, կա՛մ միմյանցից խիստ կերպով տարբերվող հիմքերից: Այդ բազմազանությունը զգալի չափով կրճատվում է միջին հայերենում, օրինակ՝ **լսել** բայի անցյալը գրաբարում լինում էր՝ լուայ, **առնել**՝ արարի, իսկ միջին հայերենում՝ **լսեմ**–լսեցի, **այնեմ**–արի, արևմտահայերենում հիմնականում պահպանված են այդ բայերի միջին հայերենի ձևերը, ինչպես՝ **լսեմ**–լսեցի, **այնեմ**–անեմ–ընեմ–ըրի և այլն: Բայերի կրավորական սեռի համար ստեղծված **վ** ածանցի հետևանքով իսպառ վերացել էր հասարակ բայերի կատեգորիան. միայն **ծնանիլ** բայը պահպանել էր իր և՛ ներգործական, և՛ կրավորական իմաստը:

Հետաքրքրական նորություններ ունեն բայի ժամանակները: Իբրև ընդհանուր կանոն, գրաբարի ժամանակները նույն ձևերով ու իմաստներով չեն պահպանվել ոչ միջին հայերենում և ոչ էլ հայերենի բարբառներում ու աշխարհաբարում: Արևմտահայերենի, միջին հայերենի և «կը» ճյուղի բարբառների սահմանական ներկան կազմելու եղանակը ընդհանուր է: Գրաբարի սահմանական եղանակի ներկան, ստորադասականի առաջին և երկրորդ ապառնիկները հաճախ փոխարինում էին միմյանց և այդ պատճառով էլ խառնաշփոթություն էր ստեղծվում նրանց մեջ: Հայերենի զարգացման ընթացքը լրիվ չափով վերացրել է այդ շփոթությունը. գրաբարի առաջին և երկրորդ ապառնու ձևերը ընդհանրապես չեն պահպանվել աշխարհաբարում, իսկ սահմանական եղանակի ներկայի և անկատարի ձևերը գործածվել են ըղձականի իմաստով: Արևմտահայերենում, ինչպես նաև ժամանակակից հայերենում և բարբառներում բայական յուրաքանչյուր ձև ունի իր իմաստը, այդ պատճառով էլ ստեղծված են երեք գլխավոր ժամանակների նրբերանգները արտահայտող առանձին, գրաբարից տարբերվող ձևեր: Այսպես, օրինակ՝ գրաբարում կային անցյալ անկատար և անցյալ կատարյալ ժամանակները, իսկ միջին հայերենում և արևմտահայերենում, ինչպես նաև ժամանակակից հայերենում՝ անցյալ անկատար, անցյալ կատարյալ, անցյալ ապառնի, անցյալ հարակատար, անցյալ վաղակատար, անցյալ հարկադրական և այլն: Զերականական այս բազմազան ձևերի առաջացումը պայմանավորված է հայոց լեզվի զարգացման, յուրաքանչյուր ձևով միայն քերականական մի իմաստ արտահայտելու տենդենցով:

Արևմտահայերենի շարահյուսությունը իր ընդհանուր գծերով չի տարբերվում ժամանակակից հայերենի շարահյուսությունից: Բայց համաձայնության, շարադասության, խնդրառության և քերականական ձևերի կիրառության կանոնների մեջ հաճախ նկատվում են որոշակի տարբերություններ, որոնք մեծ մասամբ կապված են գրաբարյան որոշ ձևերի պահպանման հետ: Արդի հայերենում որոշիչն ու որոշյալը, հատկացուցիչն ու հատկացյալը ունեն իրենց որոշակի տեղը և կապակցության կանոնները, մինչդեռ արևմտահայերենում նրանք հաճախ ընդհանուր օրինաչափությունից տարբերվող կանոններ են ունենում: Հատկացուցիչի և որոշիչի հետադաս գործածությունը թեև ընդհանուր օրինաչափություն չէր արևմտահայերենում XIX դարի առաջին կեսին, բայց շատ տարածված էր: Այտընյանը իր քերականության մեջ նույնիսկ վայելուչ է համարում հատկացուցիչի հետադաս գործածությունը: «Յատկացուցիչը կրնայ վայելուչ կերպով իւր յատկացեալէն ետքը դրուիլ՝ երբ մեջերնին ուրիշ մասն-բանի մտած ըլլայ. այսպէս. Ձեռընին մէյ մէկ **ոստ** առած **ձիթենւոյ՝** բազմութեամբ **դէմն** ելան **յաղթողին**: Այդ որ լսեն՝ **սրտերնին** պիտ'որ պաղի **խենթերուն**: **Ճարն** է հատեր **խեղճերուն**, և օգնող չկայ: Չատ **տեսակ** մ'ալ կայ **յափշտակութեան**: **Ձուկ մը** բերին **անոյշ ջրի**: Առակ է՝ **ծայրն** է **ծրարոց**»¹: Բոլոր ընդգծված օրինակների մեջ հատկացուցիչը հատկացյալից հետո է դրված: Այս կանոնը ժառանգված է գրաբարից:

Որոշիչների հետադաս գործածությունը նույնպես սովորական երևույթ էր այդ շրջանի արևմտահայերենում. օրինակ՝ աշխարհ **ամենայն**, եղբայր **սիրելի**. սեղան մը թագաւորի **արժանի**. ընծաներ քեզի **արժանի** և այլն:

Արևմտահայերենի որոշ տիպի նախադասությունների մեջ բառերի շարադասությունը ունի պարտադիր կանոններ: Միշտ ենթական դրվում է ստորոգյալից և խնդրից առաջ, օրինակ՝ Հրանտ կը կանչէ Մարտիրոս, որդին կը սիրէ մայր և այլն: Այդ նախադասությունների մեջ ենթական և ուղիղ խնդիրը իրենց ձևով չեն տարբերվում միմյանցից և այդ պատճառով էլ կարևոր նշանակություն է ստանում նրանց շարադասությունը ստորոգյալից նախադաս բառը ենթական է, իսկ հետադասը՝ խնդիր: Այդ կանոնը հատուկ չէ արևելահայերենին: Բայերի խնդրառության մեջ նույնպես կարելի է նշել

¹ Նույն տեղը, էջ 149:

այնպիսի կանոններ, որոնք հիշեցնում են միջին հայերենը Այսպես՝ միջին դարերի հայ գրականության մեջ **նմանիլ** բայի խնդիրը դրվում էր նախդրավոր հայցականով, օրինակ՝ **ի բաղնիս** նմանի, **ի խունկ** նմանի և այլն Արևմտահայերենում այդ բայի խնդիրը, եթե որոշյալ չէ, դրվում է առանց նախդրի հայցական հոլովով, ինչպես՝ **մում** կը նմանի, **կապիկ** կը նմանի և այլն Արդի հայերենում **նմանել** բայը միշտ պահանջում է տրական հոլովով խնդիր

Արևմտահայերենում պահպանված են գրաբարից մնացած կամ գրաբարի նմանողությամբ կազմված շատ դարձվածքներ, ինչպես՝ **ի գութ** շարժիլ, **ի վկայութիւն** կոչել, **ի նպաստ** խօսել, յամենայնի չափ պահելով, **ի վիճակի լինել**, **ակն դնել**, **ծուր դնել**, **եղջիւր ածել**, բողոք բառնալ, **հանել զվրժն**, դիրուտար ընել (ցիրուցան անել), **ի պաշտօնէ ծանուցանել**, **յանվանէ յիշատակել** և այլն Գրաբարյան ոճեր և դարձվածքներ գործածելու սահմանները նշված չէին այդ շրջանում Այդ պատճառով էլ տարբեր հեղինակներ ըստ իրենց ճաշակի և գիտելիքների օգտագործում էին գրաբարը՝ երբեք չմտածելով ժողովրդի լայն զանգվածներին միանգամայն հասկանալի լեզվով գրելու մասին

Արևմտահայերենի մեջ քիչ չեն նաև օտար լեզուների ազդեցությամբ կազմված դարձվածքները, ինչպես՝ բավական **սրամիտ** է դատաստան ընելու համար (դատաստան ընելու չափ սրամիտ է), կերթամ բարեկամս գտնելու (բարեկամիս քովը կերթամ), շատ ջրոյն պատճառով (ջրերու շատությանը պատճառով), նայելու հանդգնություն ունեցա (հանդգնեցա նայել), ես ունիմ (իմ քովս է), ինչպե՞ս կուզես որ չգարմանամ (ինչպե՞ս չգարմանամ), վարպետ քաշվածք (ճարտար նկար), ինչ ես ինչ դուն (ոչ ես ոչ դուն), մեղք ես (մեղք է քեզի), աչք ընել (ակնարկել), հոս է գիտցա (կարծեցի թե հոս է) և այլն Այս բոլորին երբեմն զուգակցվում են նաև գրաբարին հատուկ քերականական ձևեր, որոնք զգալի չափով բարձրացնում են ժողովրդական լայն զանգվածներին անհասկանալի լեզվական տարրերի տեսակարար կշիռը

Հայոց լեզվի բառային կազմը իր պատմության բոլոր շրջաններում հարստացել է առաջին հերթին իր սեփական միջոցներով, ապա օտար լեզուներից փոխ առած և օտար ազդեցությամբ կազմված բառերով Սակայն այդ բոլոր դեպքերում էլ միշտ առաջատարը եղել են սեփական հնարավորությունները Ազդեցությունը և փոխառությունները տարբեր ինտենսիվությամբ են արտահայտվել հայերենի

գարգացման տարբեր շրջաններում: Միջին հայերենում հատուկ ուշադրություն չի դարձվել լեզվի մաքրությանը: Յուրաքանչյուր հեղինակ ըստ իր ճաշակի փոխ է առել, գործածել է իմացած օտար բառերը առանց որևէ խտրության: Այդ տեսլոնքը շարունակվել է նաև ավելի ուշ շրջանում, աշխարհաբարի ձևավորման ընթացքում: Միայն XIX դարի առաջին քառորդից հետո, երբ գիտակցական պայքար է սկսվում հայոց ազգային լեզվի ձևավորման ու մշակման համար, ուշադրություն է դարձվում օտար բառերին: Հայ գրողներից ու գործիչներից շատերը սկսում են հայերենը օտար տարրերից մաքրելու աշխատանքը: Օտար բառերի գործածությունից խույս տալու միտումը ուժեղ կերպով դրսևորվել է արևմտահայ մի շարք գրողների և գործիչների երկերում: Նրանք XIX դարի առաջին կեսի վերջերին բավական մեծ նվաճումներ էին կատարել այդ ասպարեզում, բայց հայերենի մեջ դեռևս մնացել էին բառապաշարային այնպիսի տարրեր, որոնք կամ անհասկանալի էին ժողովրդին, կամ անհարազատ: Այսպես, օրինակ՝ այդ շրջանում արևմտահայերենում դեռևս կիրառվում էին «զմենջ տրտունջ կընեին», «զծեզ տեսնելն զկնի», «զամօթի չէիք հարկաներ» և նման տիպի նախադասություններ, որոնց մեջ խառն գործածված են գրաբար ու աշխարհաբար ձևեր և դրանցով ստեղծված անհասկանալի ոճեր:

Այդ դարերում հայ գրողներից շատերը անխտիր կերպով գործածում էին օտար բառեր և նույնիսկ բառակազմական ու հոլովական վերջավորություններ: Հատկապես շատ էին թուրքերեն բառեր ու քերականական ձևեր. ինչպես՝ չալել, խարճել, խալսել, խեր, խաթեր և այլն: Հաճախ թուրքերեն և հայերեն բառերից կազմվում էին բարդություններ, ինչպես՝ մալտեր, խաթերմա, մարդապոյ, ասխըտար, անխըտար, օգտագործում թուրքերեն բառակազմական մասնիկներ, ինչպես՝ հիմաճուկ, քեզիճիկ, շուտովճիկ, առաջքի, ձերինքինը և այլն, եվրոպական լեզուների ազդեցությամբ նոր առումներով կիրառում հայերեն բառերը, ինչպես՝ անխոհեմ՝ անզգուշի փոխարեն, երկամունք՝ մեջքի, պատիվ՝ պարծանքի, խորհուրդ՝ խրատի, դեպքին վկա՝ ականատեսի, ճշմարտանման՝ հավանականի փոխարեն և այլն¹:

Արևմտահայ գրական լեզվի այս համառոտ տեսությունից երևում է, որ նա իր հիմնական օրինաչափություններով կապված էր միջին

¹ Հմմտ. Այտընեան, նույն տեղը, էջ 330 – 334: Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. II, էջ 576–578: Արևմտահայերենի մասին մեր այս տեսությունը շարադրելիս մենք օգտագործել ենք Ա. Այտընյանի և Հ. Աճառյանի հիշյալ աշխատությունները:

հայերենի հետև և մշակվում ու կատարելագործվում էր միջին դարերի հայ գրական լեզվի իրողությունների օգտագործմամբ: Սակայն նա չի մնում այն մակարդակին, որը ներկայացրել է Ա. Այտընյանը իր քերականության մեջ: Նա հետագայում, XIX դարի երկրորդ կեսից սկսած, մշակվում ու հղկվում է «կը» ճյուղի բարբառների և հատկապես Պոլսի բարբառի հիման վրա, սակայն երբեք չի փոխում հնուց ի վեր ունեցած իր զարգացման օրենքները: Արևմտահայերենի մեջ չեն ներթափանցում Պոլսի բարբառի շատ իրողություններ, որոնք կարող էին ավելի պարզ դարձնել այն: Համեմատյալ դեպքս նա ազատվում է գրաբարյան քերականական անհասկանալի ձևերից, մաքրվում է թուրքերեն և բարբառային այնպիսի բառերից, որոնք անհասկանալի էին ժողովրդին, հարստանում է հայերենի օրինաչափություններով կազմված բազմաթիվ բառերով և բառակապակցություններով և դառնում հայ գրականության պահանջները լրիվ չափով բավարարող լիահունչ գրական լեզու: Չնայած այդ բոլորին՝ արևմտահայերենը գտնվում էր զարգացման աննպաստ պայմաններում: Նա մշակվում ու հղկվում էր գլխավորապես բուն երկրից դուրս, հայկական գաղթավայրերում: Բուն երկրի հայ ազգաբնակչությունը չէր կարողանում ազատ շունչ քաշել և ինչպես հարկն է մասնակցել իր մշակույթի ու լեզվի մշակմանը, որովհետև թուրքական բարբարոս կառավարությունը անգլո-ամերիկյան իմպերիալիստների օժանդակությամբ շարունակում է հայերի բնաջնջման, հայոց լեզուն բռնի կերպով ասիմիլացնելու քաղաքականությունը: Արևմտահայ հատվածի համար ստեղծված այդ անբարենպաստ պայմանների հետևանքով խիստ դանդաղ էր ընթանում հայկական մշակույթի ու հայոց լեզվի զարգացման պրոցեսը Արևմտյան Հայաստանում:

Հայ ժողովրդի արևելյան հատվածը թեև ենթարկվում էր ցարական կառավարության գաղութացման քաղաքականությանը, բայց Թուրքիայի տիրապետության տակ եղած հայության համեմատությամբ ավելի նպաստավոր պայմանների մեջ էր գտնվում: Եվ, ընդհանրապես, Հայաստանի արևելյան շրջանների միակցումը Ռուսաստանին՝ ամբողջ հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի հետագա զարգացման համար ունեցավ առաջադիմական մեծ նշանակություն: Ամբողջ հայ ժողովուրդը իր ազատագրության հույսը վերջնականապես կապեց ռուս ժողովրդի հետ: Ռուսաստանը այդ ժամանակաշրջանից ամբողջ հայ ժողովրդի հա-

մար դառնում է նվիրական վայր, իսկ ռուսական մշակույթն ու գրականությունը՝ օրինակելի ու բարձր:

Հայաստանի արևելյան շրջանների միակցումը Ռուսաստանին՝ մի այլ նշանակություն էլ ունեցավ հայության համար: Այդ ժամանակաշրջանից ուժեղացավ հայ ժողովրդի իբրև ազգ կազմավորվելու պրոցեսը, գիտակցական պայքար սկսվեց հայոց լեզվի մշակման ուղիների, հայ ժողովրդին դարավոր խավարամոլության ճիրաններից փրկելու և նոր ափեր հանելու համար:

Պատմական այդ իրադարձությունները ազդեցին նաև հայոց աշխարհաբար լեզվի մշակման վրա: Նա, ինչպես տեսանք, XVII-XVIII դարերում զարգանում և հղկվում էր գլխավորապես «կը» ճյուղի բարբառների, միջին հայերենի և գրաբարի իրողությունների համադրությամբ: XIX դարի սկզբներից Հայաստանի արևմտյան հատվածում նա շարունակում է մշակվել ու կատարելագործվել իր հիմնական օրինաչափությունները պահպանելով, իսկ արևելյան հատվածում փոխվում է նրա մշակման հիմքը: Հայ ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունները, հայ ազգի կազմավորման պրոցեսի արագացումը, հայկական մշակութային նոր հաստատությունների հիմնումը և նոր դպրոցների կազմակերպումը Ռուսաստանին միացված հայկական շրջաններում և հայաշատ քաղաքներում՝ ավելի հրատապ են դարձնում գրականությունը նոր լեզվով ժողովրդին մատուցելու հարցը: Հայաստանի արևելյան շրջաններում այդ գրականությունը սկսում է գրվել հայերենի ամենատարածված և զարգացած բարբառներից մեկի՝ Արարատյան բարբառի հիման վրա մշակվող աշխարհաբարով: Արարատյան բարբառը պատմական բերումով երկար ժամանակ իբրև հաղորդակցական միջոց էր ծառայել այն կենտրոններում, որտեղով անցնում էին առևտրական տարանցիկ ճանապարհները և համեմատաբար մշակվել ու կատարելագործվել էր: Բացի դրանից, նա իր հնչյունական համակարգով ավելի մոտ էր կանգնած հայոց հին գրական լեզվին, անհամեմատելի չափով հարուստ էր ոճերով ու բայական բաղադրյալ ժամանակներով և ավելի քան որևէ այլ բարբառ պահպանել էր հայ ժողովրդական լեզվի հատկանիշները և հասկանալի էր հայ ժողովրդի լայն զանգվածներին: Այդ բոլորի շնորհիվ աշխարհաբարը սկսում է մշակվել ու կատարելագործվել իր զարգացման այն օրինաչափություններով, որոնք համապատասխանում էին հայ ժողովրդի տվյալ շրջանի լեզվական

ըմբռնողությանը և տարածվելու միտումներ ունեին: Նրա զարգացման ընթացքում դուրս են ընկնում բարբառային այն ձևերը, որոնք ընդհանուր չեն եղել, մեծ մասամբ տարածվել են գրական լեզվի հնչյունափոխության կանոնները, **որի** հետևանքով գրական կերպարանք են ստացել ինչպես գրական լեզվին անցած բարբառային բառերը, նույնպես և քերականական ձևերը: Արարատյան բարբառի օրինաչափություններով աշխարհաբարը մշակելու տենդենցը ուժեղանում է հատկապես XIX դարի առաջին քառորդից հետո, երբ Հայաստանի արևելյան շրջանները միակցվում են Ռուսաստանին: Այսպես, օրինակ՝ Մ. Թաղիադյանը երևանցիներին իրենց ազատագրության կապակցությամբ ողջունում է Արարատյան բարբառի իրողություններով հարուստ մի սամակով, որը ինքնըստինքյան խոսում է այն խոշոր ներգործության մասին, որ նրա վրա թողել էր արևելահայության ազատագրումը:

«Աչքներդ հազար լույս,- գրում է նա,- որ մեր քաղցր աշխարհըն պարսից դառն չարչարանքիցն ազատվեց, քրիստոնի տերության ներքո ընկավ...

Իմ լավ քաղաքացիք, էսպես երջանիկ բախտի որ դուք եք պատահել, կարծեմ, որ մեր նախնիքն ևս Արշակունի թագավորության ժամանակումն էլ չեին պատահել. գերա թեպետ և թագավորությունն յուրյանցն էր, սակայն բարբարոսություն և զուլումն պակաս չէր...

Իմ Ազնիվ քաղաքացիք, գիտեմ, որ մեր աշխարհի այսքան երկար ժամանակաց գերության տակ մնալն գիտության հարգն ոչ կարե ներկա լավապես ցուցանել ձեզ, բայց հուսամ, որ շուտով կարողանեք ճանաչել: Գիտությունն էն ազնիվ թագուհին ա, որ հախա՝ աղքատ հազուստով բախտավորաց դռանն կղեգերի, ամմա թագավորաց պարծանք ու փառք ա: Տերություն չկա, որ էս անտեր գիտությամբս կանգնած և պահվում չըլիսի: Ռուսաց եղ մեծ կայսրությունն թե հառաջ քան զսուրբ Պետրոս յուրյանց իմաստասեր թագավորն ի՞նչ էր, և ներկա ի՞նչ ա, հայտ է ձեզ. Մին երեխա, եթե գրել, կարդալ գիտենա, էն արվեստանին որ բազում չարչարանքով վեց կամ յոթն տարումն ա սովորում, մին երկու տարումն կարե հեշտ ու հանգիստ սովորիլ. էն սովորած արվեստն հնարքով հեշտացնիլ և նոր արվեստանի ևս հնարել»¹:

¹ Մ. Թաղիադեան, «Թուրթ Երևանցիներին», Ընտիր էջեր, էջ 327-328:

Հայաստանի արևելյան հատվածը ռուսաց իշխանության տակ անցնելուց հետո այդ շրջանի հայ գրականության լեզուն կամաց-կամաց ազատվում է երբեմնի բազմատարրությունից, միևնույն իմաստն արտահայտող քերականական տարբեր ձևերից և միատարր դառնալու ուժեղ տենդենցներ է ցույց տալիս: XIX դարի առաջին քառորդից հետո, ընդամենը մի քանի տարվա ընթացքում հրատարակվում են մեծ թվով գրքեր՝ Արարատյան բարբառով կամ Նրա իրողություններով հարուստ լեզվով: Մուսկվայում, 1831 թ, լույս է տեսնում «Համառոտ քննութիւն քրիստոնեական հաւատոյ և մահմետական կրօնի» աշխատությունը, որի լեզուն շատ կողմերով Արարատյան բարբառն է հիշեցնում, թեև որոշ մշակման ենթարկված: Ահա մի օրինակ.

«**Էնտուր** համար օրէնքով յայտնի **էլաւ** մարդկանց՝ թէ **մեղքի տակն** են և մեղաց համար **դատապարտուած են**, և ապա **ճանաչեցին** թէ ո՞րքան պետք է որ փրկիչ գայ և նորանց ազատէ փրկէ, և **մեղքիցըն** սրբէ: Ապա էլ ավելի սկսեցին իրանց յոյսըն **էն** նոր եկող փրկչին վերայ ղնել, նորա գալոյն ցանկանալ և հաւատով նորա փրկութիւնըն ընդունել: Եւ որ **էն** յոյսն և հաւատըն օրէցօր հաստատւի նորանց **սրտերումն**, Աստուած շատ նշաններ **տուաւ** նորանց, որ իբր պատկերով **էն** փրկութիւնն նշանակեցին՝ յայտնեցին և մարդկանց միտքըն **բերին**: Ամեն **կարդացողն** որ **աղօթքով** և **միտք անելով** սուրբ գիրքն **կարդումէ՝** շատ **տեղ էն** նշաններըն կտեսնէ և նորանց նշանակութիւնն կիմանայ և **Էնտուր** համար **եստեղ** նորանցից **մէնակ** մին քանիսը կըյիշենք և կըմտածենք»¹:

Ժամանակի Արարատյան բարբառի հիման վրա մշակվող լեզվի առանձնահատկությունները դրսևորվում են նաև թարգմանական գրականության մեջ: Շուշիում 1832–1835 թվականներին լույս են տեսնում աշխարհաբարով գրված մի շարք այնպիսի թարգմանություններ, որոնց լեզուն բավականաչափ մշակված ու հղկված է:

Սահմանափակվեց թարգմանական այդ գրականությունից մի քանի մեքբերումներ անելով:

«Մի թէ ջանք էս անո՞ւմ որ Ա՛յ շնորհքըն գտնելոյ հնարքներն գործածես: Մի թէ սիրո՞ւմես և պատո՞ւումես Տէրի օրըն, և սուրբ պահո՞ւմես նորան: Մի թէ թող չէ՞ս անում որ պղծվի նա ծուլութենով կամ

¹ «Համառոտ քննութիւն քրիստոնեական հաւատոյ և մահմետական կրօնի», Մուսկվա, 1831, էջ 24: Ընդգծված բառերը իրենց ձևով կամ իմաստով կան Արարատյան բարբառում:

ուևայն ուրախութեան հետևելով և կամ աշխատանք անելով»¹:

«Շատ ժամանակ է, որ մենք քրիստոնեայ անունով զարդարվում ենք և մեր հաւատքն սուրբ գրքերի վերայ հաստատված է: Եւ թէ և ժամանակից ժամանակ շատ փիլիսոփաներ ջանք արին որ սուրբ աստուածաշունչ գրքերի վարդապետութիւնըն ծռեն և քանդեն, բայց մենք մինչև հիմիկ աստուծոյ շնորհքովն հաստատ դաւանեցինք և պահպանեցինք նորան»²:

«Էս ի՞նչ զարմանալի աշխարհք է որ նրա մէջն մենք կենում ենք: Լուսոյ իշխանն և խաւարի իշխանըն. բարի մարդիքըն և չար մարդիքըն, սրբութիւնն և մեղքն՝ էդ ամենին ծաղր անելոյ բան են շինում և ընտրվում: Բայց շատ վախենալի և վնաս տուող յիմարութիւն է՝ Էնպեսի բաներով ծաղր անելն, որ շատ ահաւոր և ծանր են ինչու որ՝ Սաւղօմօսն սովորցնումէ. թէ յիմար են նրանք՝ որ մեղքով ծաղր են անում: Էս տեղ երեխաներ ենք տեսնում որ առաջ անիրաւութիւն են գործում, և յետոյ ծաղր են անում նորանով. վա՛յ, որ շատ անգամ Էլ անօրէն ծնողքն սիրտ են տալիս Էնպես ծաղր անելոյ համար»³:

Արարատյան բարբառը, ինչպես տեսնում ենք, իր առաջընթացի համար ստեղծված՝ Նոր պայմաններում զարգանում էր ու համառորեն ներթափանցում էր գրականութեան մեջ: Հայ իրականութեան մեջ առաջին մարդը, որ նկատեց այդ բարբառի հիման վրա մշակվող աշխարհաբարի կենսունակությունն ու առանձնահատկությունները, Խ. Աբովյանն էր, որը գիտակցական պայքար սկսեց այդ լեզուն գրականութեամբ ամրացնելու և հայ ժողովրդի Նոր մշակույթի արտահայտման ձևը դարձնելու համար:

Տեսականորեն հիմնավորելով աշխարհաբարի անհրաժեշտությունը և միշտ նկատի ունենալով «հարիւր հազարին» հասկանալի մնալու և ժողովրդի ըմբռնողությանը համապատասխան երկեր ստեղծելու պահանջը՝ Նա ձեռնարկում է աշխարհաբարի մշակմանը: Նա օգտագործում է XVII–XVIII դարերի հայ գրականութեան լեզվի՝ աշխարհաբարի կենսունակ տարրերն ու Արարատյան բարբառը և ստեղծագործում է ժողովրդին ըմբռնելի երկեր, գործնական քայլերի

¹ «Շատ հարկաւոր հարցմունքներ ամեն մարդոյ համար», Շուշի, 1832, էջ 27: **Հ. Աճառյան**, Նույն տեղը, էջ 468:

² «Աւետարանի ճշմարտութեան և զօրութեան համար», Շուշի, 1833, էջ 4:

³ **Հ. Աճառյան**, Նույն տեղը:

⁴ «Մեղքն խաղ անելոյ բան չէ», Շուշի, 1883, էջ 11: **Հ. Աճառյան**, Նույն տեղը, էջ 469:

դիմում նոր սերնդի դաստիարակության գործը հաստատուն հիմքերի վրա դնելու համար: Ահա թե ինչու ուսուցողական նպատակների համար պատրաստած իր առաջին գրքի՝ «Նախաշավիղի» մեջ տեղավորում է նախ այնպիսի նյութեր, որ բովանդակությամբ ըմբռնելի լինեն ժողովրդին և դուր գան նրան, ապա լեզվով միանգամայն հասկանալի: Օրինակ՝ «Յակովբն ուշիմ և բարի և երեխայն՝ տեսաւ մէկ աղքատի տղայ ցխումն ընկած: Սիրտը ցաւեց, իսկոյն մօտեցաւ, նրան բարձրացրեց, շորերը սրբեց և իրանց տունը տարաւ: Նրա մայրը Յակովբին հազար անգամ լալով օրհնեց, հազար անգամ նրան օր և արև խնդրեց: Ախ ո՞րքան լաւ գործ ա, ընկերին միշտ ծառայութիւն և օգնութիւն անել: Եւ դու կտասնաս այնպիսի օրհնութիւն սիրելի երեխայ»¹: Մի այլ օրինակ՝ «Մէկ գիւղացի տեսաւ որ ծեր մարդիքը կարդալիս ակնոց են գործ ածում: Ես մասին գնաց քաղաքը՝ որ մէկն գնի և ինքն էլ կարդայ. վաճառականը ուզածը տուեց, և նա էլ ակնոցը դրեց աչքին որ կարդայ, բայց չկարաց: Ես վատ ա մէկ լաւ տուր, ասեց: Ողորմելի վաճառականը մինչև տասը փոխեց, բայց գիւղականը բոլորն էլ յետ դարձրեց, որովհետև չկարաց կարդալ: Յետ ամենայնի վաճառականը հարցրեց: Բարեկամ, դու կարելի ա ամենևին կարդալ չգիտես. «Ի՞նչ ես ասում, եթէ կարդալ գիտենայի՝ էլ քո ակնոցը իմ ի՞նչ պետքն ա»»²:

Այս լեզուն ներկայացնում է արդի հայերենի սկզբնական վիճակը, որի մշակման ու տարածման բնագավառում պակաս դեր չեն խաղացել նաև դպրոցները, որոնցից հատկապես կարելի է նշել 1810 թվականին Աստրախանում կազմակերպված Աղաբաբյան վարժարանը, որի վարիչն էր Սերովբե Պատկանյանը, 1815 թվականին Մոսկվայում բացված Լազարյան ճեմարանը և 1824 թվականին Թբիլիսիում հաստատված Ներսիսյան դպրոցը:

Մեր մշակույթի պատմության մեջ առանձնապես նշանակալից դեր են կատարել Լազարյան ճեմարանն ու Ներսիսյան դպրոցը: Բանասերներից ոմանք աշխարհաբար լեզվի ստեղծման պատիվը այդ դպրոցներին են տվել:

Գ. Վանցյանը իր «Պատմական քերականություն արևելահայ լեզվի» խորագրով աշխատության մեջ, խոսելով Ներսիսյան դպրոցի մասին, ասում է, թե այդ դպրոցը, մի բով էր, ուր Հայաստանի բոլոր

¹ Խ. Աբովյան, Նախաշավիղ, էջ 29-30:

² Նույն տեղը, էջ 58:

բարբառները եկել էին հանդիպելու միմյանց և մրցելու միմյանց հետ. «Այն, ինչ որ ընդհանուր էր, մեծամասնության հաճելի և հասկանալի, պիտի հաստատվեր ու պնդանար խոսակցության ու վարժության մեջ: Այն, ինչ որ մասնավոր ու գավառական էր, խորթ ու անդուրեկան, պիտի հալածվեր ու մոռացվեր: Գոյության կռիվը բարբառների մեջ և բնական ընտրության օրենքն այստեղ լավագույն պայմաններն էին մի նոր լեզվի զարգացման համար»¹: Այդ դպրոցում հավաքված նոր սերունդը՝ «իր գավառական բառարանով և գավառական մտապատկերների պաշարով» շփվում էր հին սերնդի հետ, որի համար գրաբարը մի անջնջելի սրբություն էր՝ հարուստ ու ճկուն:

Այդ պատճառով էլ «Աշակերտների նորանոր մտապատկերները պիտի լրացվեին փոխառություններով գրաբարից: Գրաբարն, ուրեմն, բոլոր գավառականների վերաբերմամբ ուներ գերագույն և իշխող նշանակություն»²: Այդ մրցման մեջ, Գ. Վանցյանի կարծիքով, հաղթանակում է այն ձևը, որն ուներ «ծայների մեծամասնությունը» և «գավառային աշակերտի լեզուն իրերի բնական բերմունքով պիտի կորցներ իր մասնակի, տեղական տարրերն, ընդունելով հանրամատչելին և հանրահասկանալին»: Արևելահայ լեզուն, – շարունակում է նա, – ստեղծվեց Ներսիսյան դպրոցում, բայց նա չէր ճանաչված կրթված դասակարգի լեզու, «նա պաշտոնական ընդունելության չէր արժանացած, մեր տպագրության և պաշտոնական հարաբերությունների լեզու չէր ճանաչված, մի խոսքով նա քաղաքացիություն չէր ստացել»³:

Յիշյալ դպրոցները մեծ չափով օժանդակեցին արդի հայերենի մշակմանն ու զարգացմանը, մանավանդ որ այդ դպրոցներում դաստիարակվող հայ երիտասարդների մեծ մասը՝ ծանոթանալով ռուսաց առաջավոր մշակույթին՝ հայոց լեզվի մշակման հարցերին ցուցաբերում էր առողջ մոտեցում և ամեն կերպ ձգտում էր մշակել հայերենը ռուսերենի զարգացման փորձը նկատի ունենալով: Այդ նկատառումով էլ պետք է ընդունել, որ հիշյալ դպրոցների սաները հանրօգուտ հսկայական աշխատանք կատարեցին հայկական մշակույթի զարգացման բնագավառում: Սակայն այդ դպրոցները ազգային լեզվի հիմնադիրները չէին: Հայոց ազգային լեզուն XIX դարի սկզբներից

¹ Գ. Վանցյան, Պատմական քերականություն արևելահայ լեզվի, էջ 49:

² Նույն տեղը, էջ 49 – 50:

³ Նույն տեղը, էջ 52:

կազմավորվում էր ու զարգանում, բայց ոչ միայն Ներսիսյան և մյուս դպրոցներում: Նա իր ամբողջ պատմությամբ կապված լինելով հայ ազգի գոյացման պատմության հետ՝ ձևավորվում էր հենց ազգի առաջընթացի հետ, մշակվում ու հղկվում էր ինչպես դպրոցներում, մամուլում, նույնպես և ամբողջ հայության մեջ: Իր զարգացման համար ստեղծված նպաստավոր պայմանների շնորհիվ XIX դարի առաջին կեսի վերջում նա արդեն ուներ համեմատաբար կայուն օրինաչափություններ, որոնք իրենց ձևական շատ դրսևորումներով հարատևում են նաև այդ լեզվի զարգացման ներկա էտապում:

Այսպիսով, XIX դարի սկզբներից, երբ ուժեղանում է հայ ազգի կազմավորման պրոցեսը, սկսում է նաև հայոց ազգային լեզվի մշակման ու կատարելագործման, հետևաբար նրա ձևավորման պրոցեսը: XIX դարի առաջին կեսին հայոց ազգային լեզուն մշակվում է երկու հիմքերի՝ Արարատյան բարբառի և աշխարհաբարի հիման վրա: Սակայն XIX դարի երկրորդ կեսին զգալի փոփոխություններ են մտնում հայոց լեզվի զարգացման ընթացքի մեջ: Հայ ազգի կազմավորման մեջ վճռական դերը սկսում է կատարել արևելահայ հատվածը, որը ազատ լինելով խոշտանգումներից ու ոչնչանալու սարսափից՝ անկաշկանդ ձեռնարկում է հայոց լեզվի մշակմանը և հայ մշակույթի ու գրականության զարգացմանը: Հայ գրականությունը և հայոց լեզուն արևելյան հատվածում կարճ ժամանակում հսկայական նվաճումներ են կատարում: Արևելահայ հատվածի գրական լեզուն, որ XIX դարի առաջին կեսին ավելի անմշակ էր, քան արևմտահայերենը, այնպիսի արագ տեմպով է հարստանում ու կատարելագործվում, որ լրիվ չափով ազատվում է անորոշություններից՝ դառնում կոռ և հարուստ մի լեզու, որով գրվում են հայոց պարբերական մամուլի զգալի մասը և հայ գրականության այնպիսի նշանավոր երկեր, ինչպիսիք են Նալբանդյանի, Բաֆու, Մուրացանի, Նար-Դոսի, Շիրվանզադեի և շատ ուրիշ հայ հեղինակների գործերը, որոնք հսկայական դեր են կատարում հայ ժողովրդի տրամադրությունների կազմակերպման, կուլտուրական հասունացման և հայոց լեզվի մշակման բնագավառում: Այդ լեզուն հայ ազգի ձևավորման ու կոնսոլիդացման հետ ավելի ու ավելի կայունանում է, աստիճանաբար տարածվում ու իր վրա է վերցնում ազգային լեզվի ֆունկցիաները, թեև դրանով որևէ չափով չի սահմանափակում արևմտահայ գրական լեզվի գործածության շրջանակները:

Հայոց ազգային լեզվի կազմավորման շրջանում ծավալվում է ֆեոդալական կարգերի և ֆեոդալական գաղափարախոսության, ինչպես նաև հայոց հին գրական լեզուն՝ գրաբարը, դպրոցական լեզու դարձնելու և վերակենդանացնելու փորձերի դեմ ուղղված շարժումը: Այդ շարժումը, որը սկսել էր Խ. Աբովյանը, XIX դարի առաջին կեսին հաղթանակով չպսակվեց, որովհետև դեռևս չէր ավարտվել հայ ազգի կազմավորման պրոցեսը, հետևաբար չկար այն ուժը, որ իր ձեռքը վերցնեց ազգային լեզվի մշակման գործը: Հայաստանի արևելյան շրջանները Ռուսաստանին միացվելու ակտով միայն քաղաքականապես էր նվաճվել երկիրը, իսկ տնտեսապես դեռևս նա նվաճված չէր: Կովկասի «տնտեսական «նվաճումը» Ռուսաստանի կողմից շատ ավելի ուշ է կատարվել, քան քաղաքականը»¹: Այդ նվաճումը կատարվում է միայն XIX դարի երկրորդ կեսին, երբ «ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող Նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար **շուկա էր ստեղծում**»²: Այդ պատճառով էլ ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիզմի հաղթանակի պրոցեսը Հայաստանում ավարտվում է միայն XIX դարի երկրորդ կեսին: Այդ շրջանում է, որ ամրապնդվում են երկրի տնտեսական կապերը, լայնորեն տարածվում է առևտուրը, ստեղծվում են արդյունաբերական կենտրոններ, վերանում է տնտեսական ինքնամփոփվածությունը, կոնսոլիդացվում է հայ ժողովուրդը և դուրս գալով նահապետական սահմանափակ շրջանակներից՝ ամրացնում է իր տնտեսական ու քաղաքական կապերը ռուս մեծ ժողովրդի հետ, որը առաջադիմական խոշոր դեր է կատարում ինչպես այլ ժողովուրդների, նույնպես և հայերի զարգացման ու գոյությունը պահպանելու գործում:

Հայ ժողովրդի համար ստեղծված այդ նոր իրադրության մեջ հայկական բուրժուազիան ավելի ու ավելի է ծավալում իր ազդեցության շրջանակները, առաջ է մղում իր գաղափարախոսությունը պաշտ-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 770:

² Նույն տեղը, էջ 771:

պանող մտավորականություն, որը սկզբնական շրջանում հանդես է գալիս ամբողջ ազգի անունից, պայքարում ազգային մշակույթի զարգացման և ազգային գրականությունը նոր, ամբողջ ազգին հասկանալի լեզվով գրի առնելու և այդ լեզուն ընդհանուր գրական լեզու դարձնելու համար: Հասկանալի լեզվով գրականություն ստեղծելու, ժողովրդի լայն խավերին ըմբռնելի այդ լեզուն օրինականացնելու և նրա իրավունքները պաշտպանելու պահանջները համապատասխանում են ամբողջ ազգի շահերին. այդ պատճառով էլ ամբողջ ժողովուրդը մասնակցում է այդ շարժմանը և պայքար է սկսում հին լեզվի դեմ, որը այդ շրջանում պաշտպանում էին միայն ֆեոդալական վերնախավի շահերն արտահայտող մտավորականությունը¹: հոգևորականությունը:

Հայ իրականության մեջ, ինչպես նշվեց, առաջին մարդը, որը պայքար է սկսում հայոց աշխարհաբար լեզուն գրականությամբ ամրացնելու, նրա իրավունքները պաշտպանելու և մշակելու համար, Խ. Աբովյանն էր: Նա ճիշտ էր ըմբռնում ժողովրդին հասկանալի լեզվով գրականություն ստեղծելու անհրաժեշտությունը և իր ամբողջ կյանքը նվիրաբերեց այդ գործին: Սակայն նա չտեսավ իր սկսած պայքարի ու աշխատանքի արդյունքները: Նրանից հետո Ստ. Նազարյանը իր մի շարք աշխատություններում և հատկապես «Յաղագս փորձական հոգեբանութեան ճառ» (տպված Մոսկվայում 1851 թ.): «Վարդապետարան կրօնի» (տպված Մոսկվայում 1853 թ.) և այլ աշխատություններում ցույց է տալիս, որ գրաբարը չի կարող դառնալ հայոց ազգի խոսակցական և գրավոր լեզուն, որ ժողովրդին լուսավորելու միակ միջոցը աշխարհաբար լեզվով նրան «հոգեղեն» սնունդ տալն է, որ «Դիւրին ևս է յարուցանել զմեռեալս ի գերեզմանաց, քան թէ միջնորդութեամբ հնոյն լեզուի զնորն լուսաւորել զժողովուրդ. խաւարն լուսով փարատի և ո՛չ խաւարաւ, կեանք ի կենդանութենէ աղբերանայ և ո՛չ ի մեռելութենէ. իսկ որ ի հակառակսն բերի ի կարծիս. խելակորոյս զնա ասել ոչ տարակուսիմք»¹:

Այդ աշխատությունը հրատարակելուց երկու տարի հետո, իր մի այլ աշխատության՝ «Վարդապետարան կրօնի», առաջաբանում Ստ. Նազարյանը արդեն գրում էր նոր լեզվի մշակման մասին, նա գտնում էր, որ հայ հեղինակները պետք է բանաստեղծի պես հնարեն և ճար-

¹ Ս. Նազարյան, Յաղագս փորձական հոգեբանութեան ճառ, Մոսկվա, 1851, առաջաբան, էջ 110:

տարապետեն, այսինքն՝ մշակեն, հղկեն լեզուն՝ հետևելով նրա օրինաչափություններին: Ստ. Նազարյանը իր նպատակները իրագործելու, «Հայոց ազգի տունը» շինելու և հայ ժողովրդի միտքը կրթելու համար 1858 թվականին Մ. Նալբանդյանի գործուն մասնակցությամբ հրատարակում է «Հյուսիսափայլ» հանդեսը, որը պաշտոնապես վավերացնում է արևելահայ հատվածի դրական լեզուն և նրա մշակման ու կատարելագործման սկիզբն է դնում:

Այդ հանդեսը հսկայական դեր է խաղում հայ ազգի մշակութային կյանքի և ազգային լեզվի զարգացման մեջ: Նա արտացոլում է այն լավագույնը, որը ստեղծել էր ռուսական առաջավոր միտքը, և լայն չափով օգտագործում ռուսաց լեզվի նվաճումները՝ հայերենը մշակելու և կատարելագործելու ընթացքում: Այդ պատճառով էլ նա դառնում է այն առաջին օրգանը, որը ո՛չ միայն գրականությամբ վավերացնում է արևելահայերենը, այլև հարթում նրա կատարելագործման ու առաջընթացի ուղիները և ամբողջ հայ մտավորականության ուշադրությունը սևեռում հայ ազգի զարգացման խոչընդոտները վերացնելու և հայոց ինքնուրույն ազգային գրականություն ստեղծելու կողմը:

«Հյուսիսափայլ» հրապարակ գալը, սակայն, ոչ թե թուլացնում, այլ ուժեղացնում է աշխարհաբարի և գրաբարի կողմնակիցների միջև սկսված գրապայքարը: Իրենց վերջին ուժերը հավաքում են գրաբարի կողմնակիցները և ուժեղ հարձակումներով փորձում են թուլացնել այն հսկայական ազդեցությունը, որը գործում էր «Հյուսիսափայլը» հայ մտավորականության վրա: Գրապայքարը ընդարձակվում է. նրան մասնակցում են բոլոր դասերի ու դասակարգերի ներկայացուցիչները ինչպես բուն երկրում, նույնպես և հայկական գաղթավայրերում, սակայն այն տարբերությամբ, որ Ռուսաստանի տիրապետության տակ գտնված շրջաններում ավելի կազմակերպված էին հանդես գալիս աշխարհաբարի կողմնակիցները և ավելի ընդհանուր հարցեր էին արծարծում, քան Արևմտյան Հայաստանում:

Հայաստանի արևմտյան հատվածում գրապայքարը հիմնականում սկսվում է 1850-ական թվականներին: Գր. Օտյանը, Թնկրյանը, Ն. Ռուսինյանը և ուրիշներ բորբոքում են գրապայքարը, հանդես են գալիս առաջարկություններով և այնպիսի պահանջներով, որոնք թեև առերևույթ թվում են առաջադիմական, բայց ըստ էության չեն բխում աշխարհաբար լեզվի զարգացման օրինաչափություններից: Գր.

Օտյանը պաշտպանելով աշխարհաբարի իրավունքները՝ պահանջում էր այնպես մշակել այդ լեզուն, «որ փոխանակ ետ ետ երթալու առաջ ընթանա և գրաբարին ծոցը դիմե»¹, որ աշխարհաբարը դառնա գրաբարը ընդհանուրին հասկանալի դարձնելու միջոց: Նահապետ Ռուսինյանը 1853 թ. հրատարակում է իր «Ուղղախօսութիւն արդի հայ լեզուին, յօրինված ռուսումնական խորհրդակցութեամբ» գրքուկը, որի մեջ ղեկավարվելով իր անձնական ճաշակով՝ փորձում էր «հղկել» հայերենը, նրան փաթաթելով ուղղագրական և քերականական այնպիսի կանոններ, որոնք օտար էին և անհասկանալի հայ ժողովրդին:

Գրապայքարը արևմտահայ հատվածում նոր շրջան է թևակոխում «Յյուսիսափայլը» հրատարակվելուց հետո: Արևմտահայ մի շարք գրողներ որդեգրելով «Յյուսիսափայլի» գաղափարները և սերտ կապ պահպանելով նրա գրիչների, հատկապես Մ. Նալբանդյանի հետ՝ պայքարում են հայոց աշխարհաբար լեզվի համար և սկսում են մշակել այդ լեզուն՝ միշտ պահպանելով ժողովրդական մասսաներին հասկանալի մնալու պահանջները: Սակայն արևմտահայ հատվածում չեն դադարում բախումները, և շարունակվում է գրապայքարը մինչև 900-ական թվականները: Այդ շարժման տևականությունն ու ավարտին չհասնելը արևմտահայ հատվածում XIX դարի երկրորդ կեսին՝ բացատրվում է այդ հատվածի հայության տնտեսական ու քաղաքական կացությամբ: Այդ հատվածի հայ ազգաբնակչությունը մասնակցում էր հայոց ազգի ձևավորմանը տնտեսական և քաղաքական մասնատվածության պայմաններում, հեռու այն կենտրոններից, որտեղի լեզուն և գրականությունը շնորհիվ ռուսաց լեզվի և ռուս գրականության ազդեցության հսկայական նվաճումներ էին կատարում և դառնում էին առաջատար հայ մշակութային կյանքի կազմակերպման մեջ: Արևելահայ հատվածում կազմավորվում էր հայ ազգը, որը անխզելի թելերով կապում էր ամբողջ հայությունը իր հետ և հանդես էր գալիս իբրև հայ ազգի միաձուլ և առաջատար հատվածը: Միայն հայոց ազգի կազմավորման պրոցեսի ավարտմամբ պետք է բացատրել գրապայքարի ավարտումը արևելահայ հատվածում XIX դարի 60-70-ական թվականներին, արևելահայ գրական լեզվի ուժեղ զարգացումն ու կատա-

¹ Գ. Օտյան, Առաջարկություն աշխարհաբար լեզվի վրա, Կ. Պոլիս, 1851, էջ 11:

րելագործումը և ազգային լեզվի ֆունկցիաները աստիճանաբար իր վրա վերցնելը:

Հայոց աշխարհաբար լեզվի համար սկսված պայքարը ունեցել է իր զարգացման շրջանները: Այն ժամանակ, երբ դեռևս աշխարհաբարը, և՛ Արևմտյան խոսքերով ասած, անպատիվ էր, պայքար էր մղվում նրան գրականության մեջ ամրացնելու, «հարիր հազարին» մատչելի դարձնելու և նրանով զրկված երկեր ստեղծելու համար: Իսկ երբ աշխարհաբարը հաստատ քայլեր էր անում և արդեն գրականությամբ վավերացվել էր, պայքար է սկսում նրա մշակման ու կատարելագործման ուղիների, նրա, գրաբարի և բարբառների փոխհարաբերության հարցերը պարզաբանելու համար: Հայոց աշխարհաբար լեզվի մշակման համար մղվող պայքարը հիմնականում երեք ուղղությամբ է ընթացել:

Առաջին ուղղությունը կղերա-ֆեոդալական կարգերի պաշտպան մտավորականության ուղղությունն էր, որի ներկայացուցիչները նախ պայքարում էին գրաբարի իրավունքները *անխախտ պահելու* համար, իսկ երբ արդեն անհնարին էր այդ կատարել, առաջ քաշեցին հայերենը գրաբարից չհեռացնելու թեզը և սկսեցին գրել այնպիսի լեզվով, որը շատ քիչ էր տարբերվում գրաբարից: XIX դարի առաջին կեսի հայ, հատկապես արևմտահայ գրականության մի շարք ներկայացուցիչներ մեծ մասամբ գտնվում էին այդ ուղղության ազդեցության տակ և գրում էին գրաբարով կամ գրաբարի օրինաչափություններին ենթարկված աշխարհաբարով:

Երկրորդ ուղղությունը լիբերալ-բուրժուական ուղղությունն էր: Այդ ուղղության ներկայացուցիչները, քանի դեռ զգում էին կղերա-ֆեոդալական ուղղության ուժեղությունը և բուրժուական գաղափարախոսության տարածման դեմ նրանց հարուցած խոչընդոտները, հանդես էին գալիս ամբողջ ազգի անուկից, դատապարտում էին արեղաներին և արեղայամիտ մարդկանց, որոնք, ինչպես գրում է Նազարյանը, իրենց «անհոգությունն ու անմտությունը» արդարացնելու համար միշտ կրկնում են. «Եթե ոչ Կեր շինե գտուն, ի նանիր վաստակին շինողը Նորա»: Սակայն երբ վճռվում է աշխարհաբարի հարցը և նա ամենուրեք դառնում է գրական լեզու, նրանք հանդես են գալիս այդ լեզուն մշակելու այնպիսի առաջարկներով, որոնց կատարումը հայերենը ի վերջո կդարձներ ժողովրդին անհասկանալի մի արհեստական լեզու:

Երրորդ ուղղությունը հայ աշխատավորական խավերի տրամադրություններն արտահայտող ուղղություն էր, որը գլխավորում էր հեղափոխական դեմոկրատ Մ. Նալբանդյանը: Նա որդեգրելով դարի ռուս առաջավոր գործիչների տեսակետները ազգային լեզուն մշակելու մասին՝ գտնում էր, որ նոր լեզուն պետք է մշակել ինքնուրույնաբար՝ նկատի ունենալով ամբողջ հայ ժողովրդին այն հասկանալի դարձնելու պահանջը, չենթարկել նրան ո՛չ գրաբարին և ո՛չ էլ բարբառներից որևէ մեկին:

Մ. Նալբանդյանի այդ տեսակետների ճշտությունը ապացուցվեց մեր ազգային լեզվի հետագա զարգացման պատմությամբ: Նալբանդյանից ընդամենը մի քանի տարի հետո լրիվ չափով ուրվագծվեցին գրական հայերենի զարգացման հեռանկարները: Հայոց ազգային լեզուն, որը մշակվում էր Արարատյան բարբառի հիման վրա, հասավ զարգացման այնպիսի աստիճանի, որի մեջ ներառված էին ինչպես գրաբարի, նույնպես և բարբառների հարստության լավագույն տարրերը, արդեն «բոլոր գավառական բարբառներից ճամփաներ» բացվել էին «դեպի գրական լեզվի կենտրոնը»¹ և կայունացել էին գրական լեզվի կանոններն այնքան, որ հայ հեղինակները ինչպես գրաբարից, նույնպես և բարբառներից կամ օտար լեզուներից «առնված բառերը ժողովրդին հայտնի օրենքներով» էին կապակցում²:

Այդպիսով, հաղթանակել էր Մ. Նալբանդյանի ուղղությունը, որի մասին նա 1863 թվականին գրում էր. «Ես միանգամայն գոհ կլինեմ, եթե գտնեմ գեթ ամենափոքր արծազանց ոչ թե հոգուտ իմ աշխատանքի՝ այս բառի նեղ մտքով, այլ հոգուտ իմ ուղղության. եթե ես կարողանամ համոզել այդ ուղղության անհրաժեշտության մեջ, այդ ինձ բավական է: Ես, որպես առանձին վերցրած միավոր, մասնակի հարցերում կարող եմ և մեծ սխալներ գործել. թող նկատողներն ուղղեն: Ներկա միջոցներով այժմ հնարավոր չէ պահանջել, որ նկարի յուրաքանչյուր, առանձին վերցրած դեմքը նկարված լինի գերազանց կերպով. իմ նպատակն այն է՝ որպեսզի յուրաքանչյուր դեմքը իր տեղում լինի և իր բնական դիրքով: Ինչ վերաբերում է նրանց նրբագեղությանը, կամ արտահայտությանը՝ դա ժամանակի գործ է, որովհետև «լեզուն տրակտատ չէ՝ չի գրվում, որովհետև լեզուն օրենք

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 213:

² Նույն տեղը, էջ 212:

չէ, չի հրամանագրվում»¹:

Մ. Նալբանդյանի և XIX դարի մյուս դեմոկրատական գրողների շնորհիվ XIX դարի 60-ական և 70-ական թվականներին վճռվեցին գրաբարի և բարբառների փոխհարաբերության հարցերը, և նշվեցին հայերենի մշակման ու զարգացման օրինաչափությունները:

դ) Խ. ԱՔՈՎՅԱՆԻ ԵՎ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՊԱՅԵԱՐԸ ԱՐԴԻ
ՀԱՅԵՐԵՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայ ազգի կազմավորման պրոցեսի հետ ձևավորվում, մշակվում ու կատարելագործվում է հայոց ազգային լեզուն: Նրա մշակման ու հարստացման բնագավառում անգնահատելի դեր է կատարում ռուսական առաջավոր գաղափարներով սնված ու դաստիարակված հայ մտավորականությունը, որի կարկառուն ներկայացուցիչները XIX դարում, ինչպես նշվեց, եղել են Խ. Աբովյանը և Մ. Նալբանդյանը: Հայ իրականության մեջ առաջինը Խ. Աբովյանն էր, որ զգաց աշխարհաբարը գրականությամբ ամրացնելու անհրաժեշտությունը և հետևողական աշխատանք ծավալեց այդ լեզուն մշակելու և կատարելագործելու ասպարեզում: Նա ճիշտ կերպով նշում էր, որ միակ միջոցը, որը հնարավորություն է տալիս մարդուն «մտքերն ու զգացմունքները հաղորդելու ուրիշներին, մանավանդ ավանդելու հաջորդ սերունդներին»², լեզուն է, որը ժողովրդի առաջնթացի հետ փոփոխվում ու հղկվում է, և ժողովրդի զարգացման տարբեր շրջաններում տարբեր ձևերով ու միջոցներով է իրագործում իր հաղորդակցական ֆունկցիան: Այդ է պատճառը, որ գրաբարը դադարել է հայ ժողովրդին հասկանալի լինելուց, հետևաբար պետք է հրաժարվել նրանից և աշխարհաբարը դարձնել հայ նոր գրականության ու դպրոցական լեզու, ստեղծել այնպիսի երկեր, որոնք համապատասխանեն ժողովրդի ըմբռնողությանը և ազատեն նրան հոգեկան խավարի ստրկական կապանքներից³:

Աբովյանի գրական գործունեությունը, մանկավարժական աշխատանքը, պայքարի հետևողականությունն ու նպատակասլացու-

¹ Մ. Նալբանդյան, Նույն տեղը, հ. 4, էջ 203:

² Խ. Աբովյան, Նախաշավիղ, էջ XXXIX:

³ Նույն տեղը, էջ XLI:

թյունը հայ նոր գրականությունն ստեղծելու և հայոց աշխարհաբար լեզուն գրականությամբ ամրացնելու խնդիրներով էին պայմանավորված, հետևաբար ուղղված էին հայ հոգևորականության ու կղերապետ մտավորականության դեմ: Ինքը՝ Աբովյանը, քաջ գիտակցում էր, որ շատ դժվարին գործի է ձեռնարկել և հազիվ թե հաղթանակի, իր դեմ մի ընդհանուր ճակատ կազմած հոգևորականության և պահպանողական մտավորականության դեմ սկսած կատաղի կռվում, բայց հայրենակիցների ընդհանուր բախտավորության համար նա ընտրում է այդ դժվարին ու փշոտ ճանապարհը¹:

Աբովյանը աշխարհաբար լեզվի համար մղվող պայքարը զուգակցել է հայ ժողովրդի ինքնաճանաչման ու զարգացման պահանջների, նրա ինքնուրույնության պահպանման հետ: Այդ իսկ պատճառով նա նպատակ չէր դրել մշակելու նոր, արվեստական լեզու, այլ պայքարում էր իր կազմավորման պրոցեսում գտնվող և ամբողջ հայ ժողովրդին հասկանալի լեզվի համար: Այդ լեզուն, գտնում էր նա, իհարկե, դեռևս մշակված չէ, բայց պետք է մշակվի, զարգանա, սակայն այն ձևով, որ «հասարակ մարդու համար իսկ հասկանալի մնա», որ չհեռանա իր աղբյուրներից՝ բարբառներից: Աբովյանը նկատի ունենալով ռուսական իրականության մեջ ժողովրդական բառ ու բանը օգտագործելու, գրականության մեջ բարբառային իրողությունները լայնորեն կիրառելու համար սկսված պայքարը և այդ առթիվ արտահայտված կարծիքները՝ մշակել է հետևողական ու կոռ տեսակետներ գրական հայերենի ու նրա զարգացման մասին և ուրվագծել այն ուղիները, որոնք տանում էին դեպի լեզվի ու հայ նոր գրականության հետագա բարգավաճումը:

Աշխարհաբարի համար մարտնչող նոր սերնդի մեջ XIX դարում միայն Մ. Նալբանդյանը կարողացավ ճիշտ գնահատել Աբովյանի աշխատանքը և նոր լեզվի համար սկսված պայքարը իր ավարտին հասցնել: Նալբանդյանի ժամանակ, արդեն այլ կերպ էին դրվում լեզվի մշակման ու զարգացման հարցերը Ռուսաստանում, որովհետև նոր ռուսերենը իր հիմնական դրսևորումներով կայունացել էր, մշակվել էին նրա օրինաչափությունները: Բավականաչափ զարգացել ու փոփոխվել էր նաև նոր հայերենը: Եվ Նալբանդյանը նկատի ունենալով ռուսաց լեզվի մշակման փորձը՝ միանգամայն ճիշտ

¹ Նույն տեղը:

կերպով վճռեց բարբառների, գրաբարի ու գրական հայերենի փոխհարաբերության հարցը: Նա գտնում էր, որ «Նոր լեզվի համագ-
գային միությունը» անհնարին է առանց բարբառների, բայց լեզվի
մշակությունը չպետք է դնել այս կամ այն գավառական բարբառի լծի
տակ: «Նոր լեզուն պիտի նայվի և մշակվի ինքնուրույնաբար, առանց
ամենակն հին լեզվից խախտելու, առանց գավառական բարբառների
կամ օտար լեզուների ազդեցությանց ստրկանալու»¹: Նալբանդյանը
պահանջում էր նոր լեզվի հիմքում դնել այն, ինչ որ ընդհանուրին
հասկանալի է, կենդանի ու զարգացման ընդունակ և ոչ թե լեզուն
խճողել տարբեր բարբառների կամ գրաբարի անըմբռնելի իրողու-
թյուններով: Բարբառների, ինչպես նաև գրաբարի օգտագործումը,
ասում էր նա, «մենք ընդունում ենք միայն հարաբերականորեն»,
որովհետև նրանց առաջ «բացարձակորեն ստրկանալը մեզ ուղղակի
կհասցնի անվերջ հակասությունների»²: Ժողովուրդը վաղուց է ինչ
թողել, անցել է հին լեզվով, հին ձևով իր մտքերը շարադրելու շրջանը
և սկսել է գործածել նոր, չմշակված լեզուն «ո՛չ թե նրա համար, ո՞ր
առաջինը վատ է կամ այլանդակ է նորից կամ ընդհակառակը՝ նորը
լավ է և գեղեցիկ է հնից, այլ նրա համար, որ հնացած-անցած ձևերն
այլևս չէին համապատասխանում նրա մտքի կառուցվածքին»³:
Նալբանդյանը խիստ դատապարտում է այն մարդկանց, որոնք
փորձում էին լեզուն շեղել իր զարգացման ընթացքից, խճողել ան-
հարազատ ձևերով և արհեստականորեն դարձնել ճկուն ու սահուն:
Կարելի է թերևս սահուն էլ գրել, ասում էր նա, բայց այդ սահունա-
գրությունը եթե չի վերցված ժողովրդի խոսակցական լեզվից, խորթ
կլինի ժողովրդին, «որը նրան երբեք և ոչ մի գնով չի մարսի,
հետևաբար, նա ժողովրդի բարոյական կազմի մեջ չի էլ մտնի»⁴,
որովհետև այդ սահունագրության տարրերը վերցված են հնի, իր
դարն ապրած լեզվի ավերակներից, կայցրած են նրա «սիստեմի ազ-
դեցությամբ, որտեղ, թեկուզ երբեմն, լսվում էլ են նախադասություն-
ներ կենդանի լեզվից, բայց դրանք ընդհանրապես կորչում են խիստ
սիստեմամուլության հեղեղում»⁵: Նալբանդյանը պայքարելով այն
մարդկանց դեմ, որոնք փորձում էին գրաբարի դռները լայն բաց անել

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 167:

² Նույն տեղը, հ. 4, էջ 201:

³ Նույն տեղը:

⁴ Նույն տեղը, էջ 194:

⁵ Նույն տեղը:

աշխարհաբարի առաջ՝ գրում է. «Անհրաժեշտ ենք համարում ասել, որ ստրկանալով հին լեզվին առանց ժողովրդին ականջ դնելու, լեզվի նոր ծլած ձևերը, որ դեռ թարմ են և կերպարանագործվելու վրա, կապելով և ճնշելով անցածի և մեռածի պատանքի մեջ, նոր լեզվի մշակության գաղափարը ազգին համար դառնում է նույնպես ամուլ և անպտուղ, ինչպես հին և մեռած լեզվի գործածության գաղափարը»¹: Նալբանդյանը գրաբարի ազդեցության տակ աշխարհաբարը մշակելու և գրաբարը գործածելու պահանջների մեջ որևէ տարբերություն չէր տեսնում: Այդուհանդերձ, նա աշխարհաբարի մշակությունը չէր պատկերացնում առանց բարբառների և գրաբարի մասնակցության. «Նոր լեզվի հիմնավոր գիտությունը, նորա մշակությունը և ապագա միության գաղափարը առանց այդ գավառական բարբառների՝ օգնության աներևակայելի է անգամ»²: Սակայն ինչպե՞ս պետք է օգտագործել գրաբարը կամ բարբառները, ի՞նչ հիմնական չափանիշով: Այդ չափանիշը մեկ է. «որքան կարելի է շատ և առավել մեծ բազմության հասկանալի կերպով խոսել»: Այդ սկզբունքից ելնելով՝ նալբանդյանը որոշում էր այնպիսի բարբառ, որի մեջ «ավելի շատ են նոր լեզվի մշակված, կենդանի ձևերը»: Եթե կան բարբառներ, ասում էր նա, – որոնց մեջ պահպանված են «ժամանակի ընթացքում մշակված, մեր արդի պահանջներին համապատասխանող նոր ձևեր, ապա խնդրեմ տվե՛ք»³:

Մ. Նալբանդյանը հայ իրականության մեջ այդպիսի բարբառներ տեսնում էր: Նրա կարծիքով «երկու գլխավոր բարբառները մեր լեզվի՝ Արարատյան և Կ. Պոլսի – լավ ու վատ գործ են կատարում, թող նոցա ներքին բազմամասն ճյուղավորությունը»⁴: Բայց դրա հետ միասին նա գտնում էր, որ առանց ազգի համար ընդհանուր լեզվի՝ անհնարին է նրա առաջ գնալը, այդ պատճառով էլ պահանջում էր մի ընդհանուր կարգի տակ դնել հայերենը, մշակել «մի տանելի ձև, որ կարելի եղածին չափ, մոտ մնալով և օրե օր ավելի մոտենալով ժողովրդին, դառնար մի բանալիք լուսի դուռը բանալու համար»⁵: Նալբանդյանը պարզ չէր նշում, թե այդ նոր ձևը ո՞ր բարբառի հիման վրա պետք է մշակվի, բայց հավատացած էր, որ «որոշյալ պայման-

¹ Նույն տեղը, հ. 3, էջ 167:

² Նույն տեղը, էջ 197:

³ Նույն տեղը, հ. 4, էջ 201:

⁴ Նույն տեղը, հ. 3, էջ 338:

⁵ Նույն տեղը:

ների ազդեցության տակ» կիսմորվի շաղախը և ազգի ավելի առաջ գնացած մասի լեզուն իր ազդեցությունը կունենա ազգի մյուս մասի նկատմամբ»¹:

Մ. Նալբանդյանի այդ տեսակետների ճշտությունը ապացուցվեց մեր լեզվի հետագա զարգացման պատմությամբ: Նալբանդյանից ընդամենը մի քանի տարի հետո լրիվ չափով ուրվագծվեցին գրական հայերենի զարգացման հեռանկարները: Հայոց աշխարհաբար լեզուն, որը մշակվում էր Արարատյան բարբառի հիման վրա, հասավ զարգացման այնպիսի աստիճանի, որի մեջ ներառված էին ինչպես գրաբարի, նույնպես և բարբառների հարստության լավագույն տարրերը, արդեն «բոլոր գավառական բարբառներից ճամփաներ» բացվել էին «դեպի գրական լեզվի կենտրոնը»², և կայունացել էին գրական լեզվի կանոններն այնքան, որ հայ հեղինակները ինչպես գրաբարից, նույնպես և բարբառներից կամ օտար լեզուներից «առած բառերը ժողովրդին հայտնի օրենքներով» էին կապակցում³:

Այսպիսով, Մ. Նալբանդյանի և այդ ժամանակաշրջանի մյուս դեմոկրատական գրողների շնորհիվ XIX դարի 60-70-ական թվականներին վճռվեցին գրաբարի և բարբառների փոխհարաբերության հարցերը, և ուրվագծվեցին հայոց ազգային լեզվի մշակման ու զարգացման ուղիները: Այդ մասին է վկայում Ս. Պալասանյանի 1870 թվականի հրատարակած «Ընդհանուր տեսություն արևելահայ նոր գրավոր լեզվի հայոց» ուսումնասիրությունը, որի մեջ հեղինակը կարծեք թե վերարտադրելով Մ. Նալբանդյանի մտքերը և արձանագրելով հայոց լեզվի նվաճումները՝ ասում էր, թե չենք կարող ժխտել նոր հայերենի «հիմնական օրենքների գոյությունը, որոնք առանձին բնավորություն ու կերպարանք են տալիս նորան, հետևաբար և ոչ ոք իրավունք ունի ձեռնամերձ լինել այդ օրենքներին»⁴:

Հայոց նոր լեզվի այդ օրենքները հայ ազգի կազմավորման պրոցեսի ավարտման հետ կայունանում ու ընդհանրանում են այն աստիճան, որ XIX դարի վերջերին արագ զարգացում ստացած հայ նոր գրականությունը հիմնականում գրվում էր կանոնավոր և զարգանալու մեծ հնարավորություններ ունեցող լեզվով: Դարի երկրորդ

¹ Նույն տեղը, էջ 339:

² Նույն տեղը, էջ 213:

³ Նույն տեղը, էջ 212:

⁴ Ս. Պալասանյան, Ընդհանուր տեսություն արևելահայ նոր գրական լեզվի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 3:

կեսի վերջերին հանդես եկած հայ հեղինակները՝ Պերճ Պռոշյանը, Բաֆֆին, Ղազարոս Աղայանը, Շիրվանզադեն, Մուրացանը, Նար-Դոսը, Յովհաննես Յովհաննիսյանը, Ալեքսանդր Ճատուրյանը և մյուսներ նկատի ունենալով հայոց լեզվի մշակման բնագավառում տարված աշխատանքը և օգտագործելով ռուս հարուստ լեզվի զարգացման փորձը՝ էլ ավելի մշակում ու կատարելագործում են հայոց ազգային լեզուն: Այդ լեզուն ավելի է կատարելագործվել քսաներորդ դարի սկզբներին և հատկապես մարքս-լենինյան տիպի հայ գործիչների՝ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և մյուսների լեզվի մշակման նկատմամբ վարած ճիշտ քաղաքականության շնորհիվ հարստացել է բազմաթիվ նոր բառերով, հասկացություններով ու դարձվածքներով, որոնց գերակշռող մեծամասնությունը գործածական է նաև հայոց լեզվի զարգացման խորհրդային շրջանում:

Այսպիսով, հայոց ազգային լեզվի կազմավորումը կապված է հայ ազգի առաջացման հետ: Իսկ հայ ժողովուրդը, իբրև ազգ, կազմավորվում է Հայաստանի արևելյան շրջանները Ռուսաստանին միացվելուց և դրա հետևանքով հայ ժողովրդի առաջընթացի համար համատարաբար նորմալ պայմաններ ստեղծվելուց հետո:

Հայ ազգի կազմավորման ու զարգացման ուղիները նշվելու հետ որոշվում են նաև հայոց ազգային լեզվի գոյացման ու զարգացման ուղիները: Հայոց ազգային լեզվի հիմքը դառնում է Արարատյան բարբառը, որի հիմնական առանձնահատկությունները նկատի ունենալով՝ ռուսական առաջավոր գրականությամբ դաստիարակված հայ մտավորականությունը սկսում է իր ստեղծագործական աշխատանքը, նախ նպատակ ունենալով ամրացնել այդ բարբառը գրականությամբ, ապա՝ գրական մշակման ենթարկել այն: Աշխարհաբարով գրված նոր գրականության և այդ լեզվի համար սկսված պայքարի հիմքը Հայաստանի արևելյան մասում դնում է Խ. Աբովյանը: Նրա ժամանակաշրջանից էլ արագանում է հայոց ազգային լեզվի կազմավորման պրոցեսը, որ սկսվել էր դարի սկզբներից: XIX դարի 2-րդ կեսին, երբ ֆեոդալական հարաբերությունների արտահայտիչ մտավորականությունը վերջնականապես զրկվում է տնտեսական հենարաններից, իր վերջին ճիգերը հավաքած կատաղի պայքար է հայտարարում աշխարհաբարին: Սակայն բոցաշունչ հեղափոխական Մ. Նալբանդյանի ու Նրա հետևորդների գործունեության շնորհիվ հաղթանակով է պսակվում Խ. Աբովյանի սկսած պայքարը և որոշվում են

հայոց լեզվի մշակման ու կատարելագործման ուղիները: Հայ ազգի կազմավորման պրոցեսի ավարտման հետ տարածվում են հայոց գրական նոր լեզվի կենսունակ տարրերը, հաղթահարվում են բարբառների և հին գրական լեզվի ոչ կենսունակ իրողությունները, վերանում են լեզվական անորոշությունները և կայունանում են հայերենի զարգացման օրենքները ինչպես արևելյան, նույնպես և արևմտյան հատվածներում: Սակայն XIX դարի 2-րդ կեսից սկսած արևելահայերենը ավելի ուժեղ տեմպերով է առաջ ընթանում. նա կարճ ժամանակում հարստանում է բազմաթիվ նոր բառերով ու մարքսիստական գաղափարախոսության հետ կապված տերմիններով, ընդարձակվում են նրա հաղորդակցական ֆունկցիաները, լայնորեն տարածվում է ամբողջ հայության մեջ արևելահայերենով գրված ինքնուրույն գրականությունը, որն իր բովանդակության և արժարժած հարցերով խոշորագույն դեր է կատարում հայ ժողովրդի դաստիարակության ու մտքերի կազմակերպման մեջ:

Այդ բոլորը, սակայն, չեն նսեմացնում արևմտահայերենի և հայ ժողովրդի արևմտահայ հատվածի գրականության դերն ու նշանակությունը: Արևմտահայերենով շարունակում են ստեղծագործվել նոր երկեր և թարգմանվել համաշխարհային գրականության լավագույն գործերը, բայց չնայած այդ բոլորին նա բուն երկրում զարգացման անհրաժեշտ պայմաններ չի ունենում և չի դառնում հայոց ազգային լեզուն, թեև շարունակում է օգտագործվել իբրև գրական լեզու արևմտահայ հատվածում: Հայոց ազգային լեզվի ֆունկցիաները XIX դարի 2-րդ կեսից սկսում է կատարել արևելահայերենը, որը ռուսերենի բարերար ազդեցության տակ ազատ կերպով կարողանում է դրսևորել իր միջոցները, օգտագործել ինչպես գրաբարի, նույնպես և արևմտահայերենի ու բարբառների իրողությունները և դառնալ հայ հրապարակախոսության, գեղարվեստական և գիտական գրականության օրավուր աճող պահանջները բավարարող լեզու:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայոց ազգային լեզվի՝ ժամանակակից հայերենի հիմնական օրինաչափությունները, ինչպես արդեն նշել ենք, XIX դարի վերջերին ուրվագծվել էին: Նրա քերականական իրողությունների ու բառա-

պաշարի հարստացման կանոնների ծավալումն ու կատարելագործումը տեղի էին ունենում համեմատաբար կայուն օրենքներով: Ժամանակակից հայերենի քերականության մեջ չէր նկատվում ձևույթների այն բազմազանությունը, որով այնքան ուշագրավ էր միջին հայերենը: Հայոց ազգային լեզվի քերականության յուրաքանչյուր ձև կամ կատեգորիա որոշ, համեմատաբար կայուն իմաստ էր արտահայտում: Չգալի չափով պարզացել էին հայերենի հնչյունական, հոլովական և խոնարհման ձևերը, կայունացել բայերի եղանակային ձևերի իմաստը: Այդ բոլորի հետ առաջացել էին քերականական սոր, հայոց լեզվի պատմության այդ շրջանի զարգացման տեսնդենցներով պայմանավորված կատեգորիաներ: Այսպես, օրինակ՝ ժամանակակից հայերենի հոլովումների մեջ ամրացել էր **վա** հոլովումը, որով հոլովվում էին ժամանակ ցույց տվող մի շարք բառեր: Այդ հոլովման արմատները, ինչպես արդեն նշել ենք, շատ հին են. նրանք գալիս են միջին դարերից: Սակայն միջին դարերում **վա** հոլովումը դեռևս տարածված չէր, նրանով հոլովվում էին շատ քիչ բառեր: Այդ ժամանակ դեռևս կայունացած չէր այդ ձևույթի (վա) իմաստը, և նա խառն ձևով դրվում էր ինչպես ժամանակի, նույնպես և այլ իմաստ արտահայտող բառերի վրա: Կայունացել էր նաև ժամանակակից հայերենի շատ այլ ձևույթների քերականական իմաստը: Միջին դարերում, օրինակի համար, հայ գրականության մեջ գործածվում էին բազմաթիվ հոգնակի վերջավորություններ, նրանց թվում նաև **եր** և **ներ** հոգնակիակերտ մասնիկները, որոնք անխտիր կազմում էին և՛ միավանկ, և՛ բազմավանկ բառերի հոգնակիները: Ժամանակակից հայերենում այդ բազմազան հոգնակի վերջավորություններից մնացին միայն **երը** և **ները**, որոնցից առաջինով կազմվում է միավանկ, իսկ երկրորդով՝ բազմավանկ բառերի հոգնակին: Սահմանական եղանակի ներկան միջին հայերենում, ինչպես նաև գրաբարում կարող էր արտահայտել ներկայի և ապառնու իմաստը: Բայական մի շարք ձևույթներ հայոց լեզվի զարգացման այդ շրջանների գրավոր խոսքում գործածվել են տարբեր իմաստներով: Այդպիսի անորոշություններ կամ ձևերի բազմիմաստություն մենք չենք նկատում ժամանակակից հայերենում: Փորձենք համառոտակի նշել ժամանակակից հայերենի հնչյունական, քերականական համակարգի և բառապաշարի հարստացման հիմնական արտահայտությունները:

1) ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ա) ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՉՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից հայերենի և հայոց լեզվի ավելի վաղ շրջանների հնչյունական համակարգի մեջ իրար բացառող երևույթներ չկան: Հնչյունական բոլոր նոր արտահայտությունները ընդհանրապես հայերենի հնչյունական համակարգի զարգացման օրինաչափություններով են պայմանավորված: Իսկ այդ օրինաչափությունները միշտ միևնույն աստիճանին կանգնած չեն մնացել, նրանք գտնվել են իրենց զարգացման ու ծավալման անընդհատ առաջխաղացման մեջ: Իբրև ընդհանուր կանոն, արագ կերպով փոփոխվել են երկբարբառները, իսկ մնացած հնչյունները համեմատաբար քիչ են փոփոխության ենթարկվել:

Հայոց ազգային լեզուն, գրաբարի նման, ունի ձայնավոր և բաղաձայն հնչյուններ: Բաղաձայն հնչյունները լինում են ձայնորդ, ձայնեղ, խուլ և խուլ-շնչեղ: Ժամանակակից հայերենը հնչյունական այդ առանձնահատկություններով ավելի մոտ է գրաբարի, քան միջին հայերենի հնչյունական համակարգին:

Ժամանակակից հայերենի ձայնավոր հնչյուններն են **ա, է, ի, ղ, ու, օ**, որոնցից **է-ն** և **օ-ն** արտահայտվում են նաև **ե** և **ո** տառերով բառամիջում և բառավերջում:

Հայերենի ձայնավոր հնչյունները ըստ իրենց արտասանության տեղի լինում են առաջնալեզվային, միջնալեզվային և ետնալեզվային: Առաջնալեզվային ձայնավորներն են **է** և **ի**, որոնցից **է-ն** միջին, իսկ **ի-ն** վերին բարձրության են: Միջնալեզվային ձայնավոր մի հնչյուն ունի հայերենը՝ **ը-ն**, որը, ի տարբերություն մյուս ձայնավորների, թույլ է արտասանվում, այդ պատճառով էլ նա չի գրվում, երբ ընկնում է բառի անշեշտ վանկի մեջ: Ետնալեզվային ձայնավորները երեքն են՝ **ա** ստորին, **օ** միջին և **ու** վերին բարձրության: Հայերենի ձայնավոր հնչյուններից **օ-ն** և **ու-ն** շրթնայնացած են, այսինքն՝ նրանց արտաբերությանը մասնակցում են նաև շրթուքները:

Հայերենի տերիտորիալ բարբառները, բացի վերոհիշյալներից, ունեն և մի շարք այլ ձայնավորներ, որոնք չեն ներթափանցել հայոց համաժողովրդական լեզվի սահմանները:

Ժամանակակից հայերենի բաղաձայն հնչյունները, ինչպես

ասվեց, լինում են՝ ձայնորդ, ձայնեղ, խուլ և խուլ-շնչեղ, ինչպես՝ **լ-մ-ն, դ-տ-թ, գ-կ-ք, ձ-ծ-ց**, որոնք լինում են պարզ և բարդ:

Հայերենի պարզ բաղաձայններն են՝ **բ, գ, դ, զ, ժ, լ, խ, կ, հ, ղ, մ, յ, ն, շ, պ, ռ, ս, վ, տ, ռ, ֆ**, բարդերը՝ **թ, ծ, ձ, չ, ճ, ջ, ց, փ, ք**: Բաղաձայն հնչյունները ըստ իրենց կազմավորման տեղի լինում են. առաջնալեզվային, միջնալեզվային, ետնալեզվային, կոկորդային և շրթնային:

Առաջնալեզվային բաղաձայններն են՝ **գ, ժ, լ, ն, ռ, շ, ս, դ, տ, թ, ձ, ծ, ց, ջ, ճ, չ**, որոնցից ձայնորդ շփականներ են՝ **լ, ռ, ն, ռ**, ձայնեղ շփական պարզ հնչյուններ են՝ **գ, ժ**, խուլ-շփական պարզ հնչյուններ են՝ **ս, շ**, պայթական պարզ հնչյուններ են՝ **դ** (ձայնեղ), **տ** (խուլ): Բարդ հնչյուններից շնչեղ է **թ**, կիսաշփական են **ձ, ջ** (ձայնեղներ), **ծ, ճ** (խուլեր), **ց, չ** (խուլ-շնչեղ):

Միջնալեզվային միայն մի բաղաձայն ունի հայերենը՝ **յ**: Որոշ քերականներ նկատի ունենալով **յ** և **ի** հնչյունների արտաբերության տեղն ու որակը՝ այն համարում են կիսաձայն հնչյուն:

Ետնալեզվային պարզ բաղաձայններն են՝ **ղ** (ձայնեղ), **խ** (խուլ), **գ** (պայթական, ձայնեղ), **կ** (պայթական, խուլ), բարդ՝ **ք** (խուլ-շնչեղ):

Շրթնային բաղաձայններն են՝ պարզ՝ **մ** (ձայնորդ), **բ** (պայթական, ձայնեղ), **պ** (պայթական, խուլ), **վ** (շփական, ձայնեղ), **ֆ** (շփական, խուլ). բարդ՝ **փ** (խուլ-շնչեղ):

Կոկորդային խուլ-շփական միայն մի բաղաձայն ունի հայերենը՝ **հ**, որը միանալով որևէ պարզ պայթական հնչյունի՝ կազմում է բարդ շնչեղ հնչյուններ (փ, թ, ք) և որևէ պայթականի ու շփականի՝ գոյացնում է շնչեղ-խուլ կիսաշփական հնչյուններ (**ց, չ**):

Ժամանակակից հայերենի ձայնորդ հնչյուններից և ոչ մեկը վանկարար հնչյունի ուժ չունի:

Արդի հայերենի բաղաձայն հնչյունների և դրանք նշանակող մի շարք տառերի միջև որոշ անհամապատասխանություններ են առաջացել: Հայոց գրերը ստեղծելու ժամանակաշրջանում յուրաքանչյուր գիր արտահայտում էր մի հնչյուն: Հայերենի զարգացման ուշ շրջանում որոշ կապակցությունների մեջ փոխվեց մի շարք տառերի արտասանությունը: Այսպես, օրինակ՝ **բ, գ, դ, ձ, շ** հնչյունները սկսեցին արտասանվել իբրև խուլ կամ խուլ-շնչեղ, իսկ **կ, տ՝** իբրև ձայնեղ հնչյուններ. օրինակ՝ երբ (երփ), երգ (երք), մարդ (մարթ), աղջիկ (ախջիկ), կին (գին), տեր (դեր) և այլն: Ժամանակակից հայերենում, իբրև ընդհանուր կանոն, ձայնավորներից և **ր, ռ**-ից հետո գրվող **գ-ն**

և դ-ն խուլ շնչեղ, իսկ ն-ից հետո գրվող կ-ն ձայնեղ են արտասանվում. օրինակ՝ երգ-երք, վարդ-վարթ, օդ-օթ, օծ-օց, երբեմն-երփեմն, հանդերձ-հանդերց, կրունկ - կրունգ, վարունկ- վարունգ և այլն: Այսպիսի անհամապատասխանություններ կան նաև այլ հնչյունների գրության և արտասանության միջև: Սակայն այդ տարբերությունները այնքան անհաղթահարելի չեն, որ հայոց լեզվի բաղաձայն հնչյունների ավանդական ուղղագրությունը փոխելու հիմք հանդիսանային: Այդ պատճառով էլ հայերենի ուղղագրական բարեփոխումները չեն շոշափել բաղաձայնների ուղղագրության կանոնները:

բ) ՅՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից հայերենի, գրաբարի, միջին հայերենի ու բարբառների հնչյունափոխության օրինաչափությունները իրենց շատ դրսևորումներով նույնանում են: Շեշտից կախված հնչյունափոխության ենթարկվում են միայն հայերենի ձայնավորները և երկբարբառները:

Սակայն այդ ընդհանուր կանոնը տարբեր արտահայտություններ է ունեցել հայոց լեզվի զարգացման տարբեր շրջաններում: Գրաբարում և ժամանակակից հայերենում, օրինակի համար, հնչյունափոխվում են **ե, ի, ու** ձայնավորները և երկբարբառների մեծ մասը, իսկ միջին հայերենում և բարբառներում՝ բոլոր ձայնավորներն ու երկբարբառները:

Գրաբարի և ժամանակակից հայերենի հնչյունափոխության այդ ընդհանրությունը կարելի է բացատրել, մի կողմից՝ ժամանակակից հայերենի հիմքում ընկած Արարատյան բարբառի և գրաբարի հնչյունական համակարգերի միջև եղած ընդհանրությամբ և, մյուս կողմից՝ ժամանակակից հայերենի մշակման ընթացքում գրաբարի հնչյունական օրենքները պահպանելու միտումով: Այդ երկու գործոնները լրացրել են միմյանց: Այդուհանդերձ, զգալի տարբերություններ կան հենց ժամանակակից հայերենի և գրաբարի հնչյունափոխական կանոնների և դրանց դրսևորման եղանակների միջև:

Ամենից առաջ փոխվել է **ե-ի, ո-ի**, ինչպես և երկբարբառների արտասանությունը, **ե-ն** բառասկզբում արտասանվում է **յե**, բառամիջում և բառավերջում ընդհանրապես՝ **ե**, **ո-ն** բառասկզբում՝ **վո** (բացի

ով, ովքեր, ովքե բառերից), բառամիջում և բառավերջում՝ **օ**: Երկբարբառները երկհնչյունների են վերածվել, ինչպես՝ **իւ-յու, եա-յա, ոյ-ույ** և այլն: Այդ փոփոխությունները, որոնք սկսել էին շատ վաղուց, հարատևում են նաև ժամանակակից հայերենում: Բաղաձայն հնչյուններից **յ**-ն բառասկզբում արտասանվում էր **հ**, իսկ բազմավանկ բառերի վերջում չէր արտասանվում, օրինակ՝ յոյս-հույս, յստակ-հստակ, յեղեղուկ-հեղեղուկ, ծնծղա-ծնծղա, երեկոյ-երեկո, հետոյ-հետո և այլն: Բառամիջում և միավանկ բառերում ձայնավորներից հետո գրված **յ**-ն պահպանել էր իր արտասանությունը:

Բացի այդ փոփոխություններից, ինչպես արդեն նշեցինք, հայերենի բաղաձայնական համակարգի մեջ որոշ տեղաշարժեր էին կատարվել. ձայնեղ հնչյունները որոշ կապակցությունների մեջ արտասանվում էին խուլ-շնչեղ, իսկ խուլ հնչյունները՝ ձայնեղ: Յնչյունափոխական այդ տեղաշարժերը նույնպես հնուց են գալիս: Միջին դարերում դրանք արդեն ընդհանուր կանոն էին դարձել:

Շեշտից կախված հնչյունափոխությունն ընդհանուր է հայերենի բոլոր շրջանների համար: Սակայն ինչպես մյուս, նույնպես և հնչյունափոխական այդ կանոնը միշտ միևնույն տեսակի հնչյունափոխական դեպքեր չի տվել:

Գրաբարում և ժամանակակից հայերենում բառական շեշտը, չնչին բացառություններով, դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա, հետևաբար՝ բառի հոլովման, խոնարհման, բարդացման ու ածանցման դեպքերում նա միշտ համապատասխան վանկին է անցնում, այդ պատճառով էլ շեշտակորույս վանկի ոչ կայուն ձայնավորները, երկբարբառները, եռաբարբառներն ու երկհնչյունները սովորաբար հնչյունափոխության են ենթարկվում:

Ժամանակակից հայերենում հնչյունափոխության են ենթարկվում հետևյալ ձայնավորներն ու երկհնչյունները՝ **ի, ու, է, յա, ույ**:

Բազմավանկ բառերի շեշտի տակ եղած **ի**-ն, շեշտը կորցնելիս կարող է դառնալ **ը**, կամ սղվել. օրինակ՝ մարմին-մարմնական, հանգիստ - հանգստանալ, թախիծ-թախծալի, գրիչ-գրչակոթ և այլն:

Միավանկ բառերի բառամիջի **ի**-ն նույնպես ենթարկվում է այդ կանոնին, օրինակ՝ սիրտ-սրտի, հինգ-հնգամյակ, միրգ-մրգաշատ, կին-կնոջ և այլն: Միավանկ բառերում եթե **ի**-ն բառասկզբում կամ բառավերջում է, հնչյունափոխության չի ենթարկվում. օրինակ՝ իծ-իծի, իր-իրենց, թի-թիակ, ձի-ձիու, ինն-իններորդ և այլն: Այդ հնչյու-

նափոխական օրինաչափությունները, սակայն, համապարփակ չեն: Ժամանակակից հայերենի մի շարք միավանկ, ինչպես նաև բազմավանկ բառերի **ի**-ն հնչյունափոխության չի ենթարկվում. օրինակ՝ հիմք-հիմնաքար, նիրհ-նիրհել, հյուսիս-հյուսիսային և այլն: **ի**-ն չի հնչյունափոխվում նաև այն դեպքերում, երբ հանդես է գալիս իբրև այլ հնչյունների հնչյունափոխված տարբերակ, օրինակ՝ սիրել, սիրալիր, որպիսի, որպիսություն և այլն:

ի ձայնավորով վերջացող բազմավանկ բառերի բարդացման և ածանցման ժամանակ, եթե **ի**-ին հաջորդում է **ա** ձայնավոր հնչյունը, **ի**-ն և **ա**-ն միասին վերածվում են **ե**-ի. օրինակ՝ գինի- գինի-ա-գործ-գինեգործ, այգի-այգի-ա-պան-այգեպան, ջորի-ջորի-ա-պան-ջորեպան, գարի-գարի-ա-ջուր-գարեջուր և այլն: **ի** ձայնավորը ընդհանրապես չի հնչյունափոխվում, եթե հանդես է գալիս բառասկզբում. օրինակ՝ իծ-իծի, ինչ-ինչի, իմանալ (բայց՝ իղծ-ըղծական, ինչք-ընչաքաղց) և այլն:

Ժամանակակից հայերենում **է** հնչյունը բառամիջում և բառավերջում արտահայտվում է **ե** տառով: Սակայն նա պահպանել է իր հնչյունափոխական կանոնները: Նա կորցնելով իր շեշտը՝ վերածվում է **ի**-ի. օրինակ՝ սեր (սեր)-սիրո, տեր (տեր)-տիրոջ, կես (կես)-կիսել, էջ-իջնել և այլն: Սակայն **է**-ի հնչյունափոխական կանոնները զգալի չափով փոփոխություն են կրել: Նա արդի հայերենում հաճախ չի հնչյունափոխվում. այսպես, օրինակ՝ տեր (տեր) բառից ունենք տերություն բառը, որի մեջ **է**-ն (է) պահպանվել է անփոփոխ ձևով: Այդպես նաև՝ աղվես-աղվեսային, եղեգ-եղեգնածող և այլն: Մի շարք այլ բառերում **է**-ն (է) հանդես է գալիս և՛ հնչյունափոխված, և՛ անփոփոխ ձևով. ինչպես՝ պարտեզ (պարտեզ)-պարտիզպան-պարտեզպան, Ներսես (Ներսես)-Ներսիսյան-Ներսեսյան և այլն: **է** հնչյունի չհնչյունափոխվելու հանգամանքը հաճախ կապված է բառի իմաստի հետ: Եթե բառի ուղիղ ձևից կազմված բառը տարբեր իմաստով է գործածվում, սովորաբար **է**-ն պահպանվում է նույնությամբ. այսպես, օրինակ՝ **տեր** բառից կազմված են **տերություն** և **տիրություն**, **օրենք** բառից՝ **անօրեն-անօրենություն-անօրինական**, որոնցից **տիրություն-նը, անօրինականը** հիմնականում պահպանել են **տեր** և **օրենք** բառերի իմաստը, իսկ մնացած բառերի իմաստը բավականաչափ հեռացել է, այդ պատճառով էլ դրանց մեջ **է**-ն չի հնչյունափոխված:

Բառամիջի և բառավերջի շեշտի տակ գտնված **ու**-ն շեշտա-

կորույս լինելիս փոխվում է՝ ա) **ը**-ի, ինչպես՝ ջուր – ջ(**ը**)րկիր> տուն–տ(**ը**)նատեր և այլն. բ) **վ**-ի: ինչպես՝ լեզու–լեզվի–լեզվանի, լու–լվի և այլն. գ) սղվում է, ինչպես՝ բազում–բազմախորհուրդ, թռչուն–թռչնոց, գիտուն – գիտնական և այլն:

Ժամանակակից հայերենում **ու**-ն եթե հանդես է գալիս բառասկզբում, չի հնչյունափոխվում, օրինակ՝ ուխտ – ուխտադրուժ, ուս–ուսադիր, ութ–ութապատիկ, ուշ–ուշադրություն և այլն: Ու-ն սովորաբար չի հնչյունափոխվում նաև այն բառերում, որոնք ստանում են հոգնակի վերջավորություններ, օրինակ՝ ժողովուրդ–ժողովուրդներ–ժողովուրդների, կատարածու–կատարածուներ–կատարածուների, մսացու–մսացուներ–մսացուների և այլն:

Գրաբարի երկբարբառները իրենց արտասանական արժեքով չեն հասել ժամանակակից հայերենին. նրանք արդեն պարզ հնչյունների էին վերածվել դեռևս ժամանակակից հայերենը կազմավորվելուց շատ ու շատ առաջ: Ժամանակակից հայերենը ունի երկհնչյուններ, որոնք նույնպես շեշտակորույս լինելիս հնչյունափոխվում են: Այդ երկհնչյուններից շեշտի տակ գտնված բառամիջի **յա**-ն (եա) կարող է փոխվել **ե**-ի, օրինակ՝ սենյակ–սենեկապետ, պատանյակ–պատանեկական, վայրկյան–վայրկենական և այլն, **յու**-ն (իւ)՝ **ա** հոլովիչից առաջ փոխվում է **յ**-ի, ինչպես՝ ձյուն–ձյան (ձեան), քաջություն–քաջության (քաջութեան), սյուն–սյան (սեան) և այլն, **ույ**-ը (ոյ) փոխվում է **ու**-ի, ինչպես՝ թույն–թունավոր, լույս – լուսատու, հույս – հուսաբեր և այլն: Արևմտահայերենում հնչյունափոխվում է նաև **այ** երկհնչյունը, որը կարող է վերածվել **ա**-ի և **ե**-ի, ինչպես՝ հայր–հար, մայր–մար, ձայն–ձեն, քայլել–քելել, փայտ–փետ, գայլ–գել և այլն: Այդպիսի հնչյունափոխությունները նկատելի են նաև բարբառներում, որոնցից որոշ ձևեր անցել են նաև ժամանակակից հայերենին, օրինակ՝ էլ<այլ, էս<այս, հենց<հայնց և այլն: Արդի հայերենի հրամայական եղանակի հոգնակի **եք** (**եք**) վերջավորությունը մի շարք բայերում առաջացել է հնչյունափոխական այդ կանոնով. ինչպես՝ էկեք<եկեք (եկայք), դարձեք<դարձեք (դարձայք) և այլն:

Շեշտից կախված հնչյունափոխական մի շարք մասնակի դեպքեր են հանդիպում ժամանակակից հայերենում, սակայն դրանք արդի հայերենի կենսունակ օրինաչափություններով պայմանավորված չեն, ինչպես՝ մեներգիչ, մենակատար, մենամարտիկ և այլն: Հնչյունափոխական այդ կանոնը կենսունակ է եղել գրաբարում, իսկ արդի

հայերենում մեներգիչ, մենակատար բառերը կազմված են մենակոնի, մենանալ բառերի անալոգիայով, որոնց մեջ **մեն** առաջացել է **միայն** բառի հնչյունափոխությամբ:

Շեշտից անկախ հնչյունափոխության բազմաթիվ արտահայտություններից ժամանակակից հայերենում կենսունակ են առնմանության, ձայնեղ բաղաձայնների խլացման և խուլերի ձայնեղացման դեպքերը: Ժամանակակից հայերենը դառնալով պետական լեզու և ամրացվելով գրականությամբ՝ անհամեմատելի չափով կայունացել է իր զարգացման օրինաչափություններով և այդ պատճառով էլ հնչյունափոխական այնպիսի բազմազան արտահայտություններ չունի, ինչպիսիք կային միջին հայերենում: Ժամանակակից հայերենում, իբրև ընդհանուր կանոն, հնչյունների կորուստ, հնչյունների դրափոխություն, նոր հնչյունների ավելացում տեղի չի ունենում: Այսպես, օրինակ՝ ձուկն, մուկն, հիմն, ուսումն և նման շատ այլ բառերի վերջին և հնչյունը ընկել է դեռևս միջին դարերում, և արդի հայերենը ստացել է այդ բառերը ձուկ, մուկ, հիմ (հիմք), ուսում ձևերով: Այդ բանը կարելի է ասել նաև գդալ (տարգալ-դգալ), սխտոր (խստոր), ճկել (զճել), հագցրու (հագցուր), մեծացրու (մեծացուր) և այլ բառերի մասին: Արդի հայերենում նույնիսկ գործածվում են միևնույն բառի տարբեր ձևերը տարբեր իմաստներով, ինչպես՝ ձգել և գցել բառերը և այլն:

Հնչյունափոխության օրինաչափությունների կայունացումը պայմանավորված է նաև մեր գրավոր լեզվի զարգացման տենդենցներով:

2) ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԵԸ

Հայոց լեզվի զարգացման տարբեր շրջանների գրական արտահայտությունները՝ գրաբարը, միջին հայերենը և ժամանակակից հայերենը իրենց քերականությամբ և բառապաշարով սերտորեն կապված են միմյանց հետ: Սակայն նրանցից յուրաքանչյուրն ունի նաև զարգացման հատուկ օրինաչափություններ, որոնցով սահմանագծվում է նախորդ շրջանի գրական լեզվից: Գրաբարը բայական միևնույն ձևով տարբեր իմաստներ էր արտահայտում: Միջին հայերենին, ինչպես տեսանք, հատուկ էր միևնույն քերականական իմաս-

տը բազմազան ձևերով արտահայտելու տենդենցը: Ժամանակակից հայերենը այդ տեսակետից շատ բանով է տարբերվում ինչպես գրաբարից, նույնպես և միջին հայերենից: Արդի հայերենի քերականական յուրաքանչյուր ձևույթ ունի իր կայուն իմաստը, և ընդհակառակը՝ քերականական յուրաքանչյուր իմաստ ունի իր ձևը: Գրաբարում, ինչպես արդեն գիտենք, ստորադասական եղանակը համապատասխանում էր ժամանակակից հայերենի ըղծական, պայմանական և հարկադրական եղանակներին, սահմանական եղանակի ներկան կարող էր ունենալ նաև ապառնու, իսկ **ա** և **ու** խոնարհման բայերի ներկայի հիմքից կազմված ժամանակները ներգործական ու կրավորական իմաստ և այլն: Միջին հայերենում սահմանական եղանակի ներկան կարող էր կազմվել **կու** եղանակիչից և բայի գրաբարակերպ ներկայի դիմավոր ձևերից, անկատար դերբայից և օժանդակ բայից, բայի անորոշ ձևից և օժանդակ բայից, ինչպես՝ կու գրեմ, գրում եմ, եմ ի գրել (չեմ ի գրել) և այլն:

Ժամանակակից հայերենին հատուկ չեն այդ բազմազանությունները: Նրա եղանակներն ու եղանակային ձևերը իրենց հիմնական իմաստը ունեն, երբեք ձևով չեն նույնանում կրավորական և ներգործական կերպի բայերը և այլն: Քերականական յուրաքանչյուր իմաստ մի ձևով դրսևորելու տենդենցը, որը ընդհանրապես հատուկ է եղել հայերենին իր զարգացման բոլոր շրջաններում, աշխարհաբարում դառնում է քերականության իրողությունների ձևավորման ու զարգացման կենսունակ օրենքներից մեկը: Մեր լեզվի զարգացման այդ տենդենցով կարելի է բացատրել բայերի նոր եղանակների ու ժամանակների ձևավորումը արդի հայերենում:

Արդի հայերենի համաձայնությունը, շարադասությունն ու կապակցությունը նույնպես ունեն իրենց հատուկ դրսևորումները, այսպես, օրինակ՝ արդի հայերենին հատուկ չեն գրաբարում շատ տարածված որոշ կարգի ստորադասական նախադասությունների մեջ ենթական նախադասության վերջը՝ տանելու (յորժամ զաներևոյթեն և զնորին զմշտնջենաւոր զօրութենէն ճառիցէ ոք), բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչները միմյանցից անջատելու (մի՛ մթաքըն, որ գբբօքն շողայցեն, արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին), հարաբերական դերանուններից հետո եկող բառերի վրա հոդ դնելու կամ անձնական և ցուցական դերանունները հոդով փոխարինելու (գոր որ շարժին և փոփոխի. եւ որ էն և շարժի. գի բազում անգամ

գոր բարին կարծիքեն), նույնանիշ և համանիշ գոյական անունների ավելադրությունը սեռականով դնելու (մարտ պատերազմի, պատիժ պատուհասից, թիւ համարոյ), ածականներից կազմված գոյական անուն որոշիչները սեռական հոլովով արտահայտելու (ծառայք ամբարշտութեան, պաշտօն պղծութեան, գործ չարութեան) կանոնները և այլն: Հայ ժողովրդի տարբեր շրջանների գրական լեզուների վերոհիշյալ և բազմաթիվ այլ զանազանությունները ցույց են տալիս, որ գրաբարը, միջին հայերենը և ժամանակակից հայերենը հայոց լեզվի զարգացման տարբեր որակներ են, որոնց ձևավորումն ու զարգացման նոր օրենքները սերտորեն առնչված են հայ ժողովրդի պատմության առանձին շրջանների հետ:

Ա. ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) ՀՈՒՆՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ժամանակակից հայերենի, գրաբարի ու միջին հայերենի առանձնահատկությունները դրսևորվում են նրանց քերականական բոլոր կատեգորիաների, որոնց թվում նաև հոլովական համակարգի մեջ: Ժամանակակից հայերենը ունի յոթ հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական, որոնցից յուրաքանչյուրն ունի իր իմաստը արտահայտելու եղանակները: Հոլովվող խոսքի մասերը ժամանակակից հայերենում, ինչպես նաև գրաբարում և միջին հայերենում, բացի անձնական և ցուցական դերանուններից, ենթարկվում են կա՛մ արտաքին, կա՛մ ներքին թեքման: Գրաբարում ներքին թեքման ենթարկվող բառերը թեև չէին գերակշռում, բայց զգալի թիվ էին կազմում, ժամանակակից հայերենում կան ներքին թեքման մնացորդները միայն, սակայն այն տարբերությամբ, որ նույնիսկ ներքին թեքման ենթարկվող բառերը բոլոր հոլովներում չեն պահում ներքին թեքումը:

Հայերենի հոլովակերտ մասնիկները և հոլովիչները պահպանվել են նրա զարգացման բոլոր շրջաններում, սակայն ոչ միատեսակ հաճախականությամբ: Հայերենի **ա, ե, ի, ո, ու** հոլովիչներից ժամանակակից հայերենում գործում են **ի, ու, ա** հոլովիչները: Հոլովակերտ մասնիկները և հոլովիչները հաճախ նույնանում են և մի ձևությո՞վ են

արտահայտվում: Արդի հայերենում հոլովակերտ մասնիկներ ունեն սեռական և տրական հոլովները՝ **ի, ու, ջ, ն, ր, վա**, բացառական հոլովը՝ **ց**, գործիական հոլովը **վ, բ**, ներգոյական հոլովը՝ **ում**: Գոյական անունների ուղղական և հայցական հոլովները հատուկ հոլովակերտ մասնիկներ չունեն: Ժամանակակից հայերենի գոյական անունները միայն եզակիում ունեն տարբեր հոլովումներ, հոգնակիում, չնչին բացառությամբ, նրանք ունեն մի հոլովում՝ **ի**, այսպես, օրինակ՝ տուն – տան–տների, հայր–հոր–հայրերի, հաց–հացի–հացերի, գինի–գինու–գինիների, տաս–տասի–տասերի, լավ–լավի–լավերի, ժամ–ժամվա–ժամերի, օր–օրվա–օրերի, տալ–տալոջ–տալերի, քույր–քոջ–քույրերի, հերոսություն–հերոսության–հերոսությունների, սյուն–սյան–սների և այլն:

Արդի հայերենի հոլովական համակարգը, ինչպես ցույց են տալիս վերոհիշյալ օրինակները, անհամեմատելի չափով պարզ է: Չկան հոլովական այն բազմազանությունները, որոնք հատուկ էին գրաբարին: Նույնիսկ ներքին թեքման ենթարկվող բառերը ներքին թեքումը պահպանում են միայն եզակի սեռական և տրական հոլովներում, իսկ մնացած թեք հոլովներում և հոգնակի թվում ենթարկվում են **ի** հոլովման:

Ժամանակակից հայերենը՝ չունի **ո** և **ե** հոլովումը, **ո** հոլովման ենթարկվող բառերը արդի հայերենում ենթարկվում են կամ **ի**, կամ **ու** հոլովման. այսպես, օրինակ՝ գրաբարում **ի**-ով վերջացող բառերը և անորոշ դերբայները ենթարկվում էին **ո** հոլովման, ինչպես՝ այգի–այգւոյ, գրել–գրելոյ և այլն: Ժամանակակից հայերենում նրանք ենթարկվում են **ու** հոլովման, ինչպես՝ այգի–այգու, գրել–գրելու: **Ո** հոլովման **ու**-ի վերածելու տենդենցը նկատելի է նաև հայերենի զարգացման ավելի վաղ շրջանում, սակայն դա ընդհանուր է դարձել ժամանակակից հայերենի կազմավորման շրջանում, իսկ XIX դարի երկրորդ կեսին արդեն ավարտվում է **ո**-ի՝ **ու** փոխակերպվելու պրոցեսը և **ո**-ով հոլովվող սահմանափակ բառերը իրենց ձևով մնում են հայերենում իբրև հին օրինաչափությունների հետ կապված վերապրուկներ:

Ժամանակակից հայերենում, ինչպես արդեն նշել ենք, տարածվում է **վա** հոլովումը, որը թեև մեր լեզվի մեջ երևում է միջին դարերում, բայց իր հոլովական իմաստով կայունանում է միայն հայերենի զարգացման ուշ շրջանում՝ XIX դարում: Այդ հոլովման ենթարկվում

են գլխավորապես ժամանակ ցույց տվող բառերը, ինչպես՝ օր-օրվա, գիշեր-գիշերվա, տարի-տարվա, ժամ- ժամվա և այլն

Հայերենին հատուկ են նաև իրի և անձի առումները, որոնք ձևով տարբերվում են ժամանակակից հայերենում ևնձ ցույց տվող կամ իբրև անձ ընկալվող անունների տրական և հայցական հոլովները, իսկ իր ցույց տվողների ուղղական և հայցական հոլովները ունեն միևնույն ձևերը

Ժամանակակից հայերենի հոլովումների կրճատման, ինչպես և եզակիում գոյական անունների մեծ մասը, իսկ հոգնակիում համարյա թե բոլորը **ի** հոլովման ենթարկվելու հանգամանքը բացատրվում է **ի** հոլովման կենսունակությամբ Սակայն դրա հետ միասին պետք է ընդունել, որ գոյական անունների հոգնակին կազմվելու եղանակը և **ներ** ու **եր** հոգնակիակերտ մասնիկների բացարձակ գերակշռությունը ժամանակակից հայերենում սպասարկել են **ի** հոլովման բացարձակ դառնալուն՝ գոյականների հոգնակի թվում

բ) ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Հայերենի դերանունները, ինչպես արդեն նշել ենք, հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններում հանդես են գալիս միևնույն արմատներով Սակայն իրենց հոլովման համակարգով զգալի տարբերություններ ունեն միմյանցից ժամանակակից հայերենում դերանունները, չնչին բացառությամբ, ունեն անվանական հոլովում Նույնիսկ անձնական դերանունները բացառական, գործիական և ներգոյական հոլովներում գոյական անունների համապատասխան հոլովների հոլովակերտ մասնիկներն են ընդունում անվանական հոլովման ենթարկվելու պատճառով ժամանակակից հայերենի դերանունները տարբեր հոլովներում չունեն գրաբարի դերանունների նման բազմազան ձևեր Օրինակ՝ գրաբարում պռաջին դեմքի անձնական դերանվան տրական, հայցական հոլովները եզակիում ունեին տարբեր ձևեր (ինձ, իս), իսկ ժամանակակից հայերենում նրանք ունեն միևնույն ձևը (ինձ) Այդ բանը կարելի է ասել նաև ցուցական դերանունների մասին

Ցուցական՝ այս, այդ, այն, սա, դա, նա դերանունները միևնույն իմաստը ստանալու պատճառով հոլովվում են միայն մի ձևով սա, դա, նա դերանունները սրա, դրա, նրա, սրան, դրան, նրան, սրանից,

դրանից, նրանից, սրանով, դրանով, նրանով, սրանում, դրանում, նրանում ձևերով արտահայտում են նաև այս, այդ, այն դերանունների համապատասխան հոլովների իմաստը և այդ պատճառով էլ ժամանակակից հայերենում չեն պահպանվել այս, այդ, այն դերանունների հոլովական հին ձևերը (այսը-այսորիկ, այսմ-այսմիկ, այդը-այդորիկ, այդմ-այդմիկ, այնը-այնորիկ, այնմ-այնմիկ և այլն): Ցուցական դերանունների հոլովների պարզեցումն ու միօրինակությունը արդի հայերենում կապ ունի նաև դերանունների նախադաս գործածության և համաձայնության նոր կանոնների հետ

Դերանունների հոգնակին կազմվում է գրաբարի նման, թեև թեք հոլովները նման չեն գրաբարի համապատասխան դերանուններին, հոգնակին մեծ մասամբ կազմվում է **ք** հոգնակիակերտ մասնիկով: Այդ երևույթը բացատրվում է դերանունների արտահայտած ընդհանուր, չտարբերակված հավաքական իմաստով: Հայերենի գոյական անունների հոգնակիների կազմության մեջ էլ որոշ չափով պահպանված է այդ օրինաչափությունը. հավաքական իմաստ արտահայտող մի շարք գոյական անունների հոգնակին կազմվում է **ք**-ով, օրինակ՝ հայրենիք, գորք, միտք, Գրիգորենք և այլն. Հայերենի այն դերանունները, որոնք իմաստով կոնկրետանում են և արտահայտում են կոնկրետ առարկաներ կամ գործածվում են իբրև գոյականներ, հոգնակիում ստանում են **եր** կամ **ներ** վերջավորություն, օրինակ՝ ինչ-ինչեր, մյուս - մյուսներ, ուրիշ - ուրիշներ և այլն. Իբրև օրինակ բերված և նման շատ այլ բառերի դերանվանական իմաստները հաճախ նույնանում են համապատասխան գոյականների իմաստի հետ:

Ժամանակակից հայերենում, իբրև ընդհանուր կանոն, դերանունների տրական հոլովից կազմվում են հայցական, բացառական, գործիական և ներգոյական հոլովները՝ համապատասխան հոլովակազմիչներով. օրինակ՝ ես, իմ, ինձ, ինձ, ինձնից, ինձնով, ինձնում. դու, քո, քեզ, քեզ. քեզնից, քեզնով, քեզնում. նա, նրա, նրան, նրան, նրանից, նրանով, նրանում, սա, սրա, սրան, սրան, սրանից, սրանով, սրանում և այլն.

Հայերենին հատուկ երևույթներից մեկը հոդերն են, որոնք թեև եղել են հայերենի զարգացման բոլոր շրջաններում, բայց տարբեր հաճախականությամբ և տարբեր իմաստներով Գրաբարում շատ հաճախ փոխարինել են համապատասխան դերանուններին, և ընդհանրապես հայերենի ավելի վաղ շրջանում ուրվագծվել է դերանուն-

ներից հողեր առաջանալու պրոցեսը: Այսպես՝ գրաքարում այս, այդ, այն ցուցական դերանունները իբրև հետադաս որոշիչ գործածվելիս՝ որոշյալը ընդունում էր նաև դերանվանական հոդ (տունս այս, տանս այսորիկ, ի տանես յայսմանե և այլն): Հետագայում հողը միայն սկսում է արտահայտել համապատասխան դերանվան իմաստը՝ առանց այդ իմաստն ունեցող դերանունի: Այդ երևույթը սպասարկել է հողերի ամրացման և առանց դերանունների գործածվելուն: Սակայն գրաքարում հողերը ավելի ընդարձակ կիրառություն ունեին: Ժամանակակից հայերենում նրանք ունեն գլխավորապես դիմորոշ, ստացական և որոշիչ նշանակություն: Իբրև որոշիչ հոդ ժամանակակից հայերենում գործածվում են **և** և **ը** հողերը, որոնցից **ը**-ն չի եղել գրաքարում, նա առաջացել է հայերենի զարգացման ուշ շրջանում՝ բաղաձայն հնչյուններով վերջացած բառերի **և** որոշիչ հոդի անկման հետևանքով նրա իմաստը վերջին գաղտնավանկ **ը**-ին անցնելու միջոցով: Այսպես՝ **տունն տեսա** նախադասության մեջ **տուն** բառը ունի **և** որոշիչ հոդ, որը իրեն նախորդող բաղաձայն ունենալու պատճառով արտասանվում է **ըն**. տունն բառի արտաբերությունը բաղաձայն հնչյուններով սկսող բառերից առաջ հեշտացնելու նկատառումով **և** չարտասանելու պահանջ է առաջանում, սակայն **և**-ն այդպիսի դեպքերում որոշիչ իմաստ ունի, այդ պատճառով էլ պահպանվում է գաղտնավանկ **ը**-ն իբրև լիարժեք ձայնավոր և այսպիսով ձեռք է բերում որոշիչ հոդի իմաստ:

Ժամանակակից հայերենի հոլովվող մյուս խոսքի մասերի հոլովումը որևէ տարբերություն չունի գոյական անունների հոլովումից:

գ) ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ժամանակակից հայերենի խոնարհման համակարգը իր շատ դրսևորումներով տարբերվում է գրաբարի և միջին հայերենի խոնարհման համակարգից: Գրաբարի և միջին հայերենի նման մի շարք բայաձևեր ունի նաև ժամանակակից հայերենը, սակայն քերականական տարբեր իմաստներով. այսպես՝ ժամանակակից հայերենի ըղձական եղանակի ապառնին և անցյալը իրենց ձևով համապատասխանում են գրաբարի, իսկ ենթադրական եղանակի ապառնին և անցյալը՝ միջին հայերենի սահմանական եղանակի ներկային և

անցյալ անկատարին

Արդի հայերենի բայերի հիմնական առանձնահատկություններից մեկը եղանակների ու ժամանակների բազմազանությունն է նա ունի հինգ եղանակ՝ սահմանական, հրամայական, ենթադրական, ըղծական և հարկադրական Սահմանական եղանակն ունի ինը ժամանակ՝ ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ, ապառնի ներկա, ապառնի անցյալ, հարակատար ներկա, հարակատար անցյալ, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ հրամայական եղանակը՝ մի ժամանակ՝ ապառնի, իսկ մնացած եղանակները երկուական ժամանակ՝ ապառնի և անցյալ

Բայի դիմավոր ձևերը արդի հայերենում լինում են պարզ և բաղադրյալ Վերջինները, իբրև ընդհանուր կանոն, կազմվում են որևէ դերբայից և օժանդակ բայից Պարզ ձևերի մեջ բայական վերջավորությունները, իսկ բաղադրյալների մեջ դերբայների և օժանդակ բայի վերջավորությունները որոշում են բայերի դեմքը, թիվը և ժամանակը Օրինակ՝ **գրում եմ, գրում էի, գրել եմ, գրել էի** բայաձևերը ցույց են տալիս բայի առաջին դեմքը, բայց արտահայտում են տարբեր ժամանակներ **գրում եմ՝** ներկա, **գրում էի՝** անցյալ անկատար, **գրել եմ՝** վաղակատար ներկա, **գրել էի՝** վաղակատար անցյալ Գրաբարում բայական վերջավորություններով կարելի էր տարբերել բայերի մեծամասնության դեմքը, թիվը, եղանակը և ժամանակը Ժամանակակից հայերենում դժվար է միայն բայերի դեմքով որոշել եղանակային ձևերի այդ հատկանիշները, որովհետև նրանց քերականական իմաստը կոնկրետանում է միայն դերբայի վերջավորության շնորհիվ, հետևաբար դրանք իրենց քերականական իմաստով չի կարելի անջատել միմյանցից Պետք է ասել, որ բայաձևերի այդ հատկությունը թույլ կերպով զգացվել է նաև հայերենի զարգացման ավելի վաղ շրջանում Գրաբարի սահմանական եղանակի ներկան և ստորադասական եղանակի առաջին ապառնին ունեն դեմքերի միևնույն վերջավորությունները՝ **մ, ս, է, մք, էք, են** (գրեմ, գրես, գրե, գրեմք, գրեք, գրեն, գրիցեմ-գրիցես-գրիցե, գրիցեմք-գրիցեք-գրիցեն), բայց քերականական տարբեր իմաստներ Այսպիսի դեպքերում միայն դեմքերի վերջավորությամբ հնարավոր չէ որոշել բայերի քերականական իմաստն ու ժամանակը

Ժամանակակից հայերենի, ինչպես նաև գրաբարի և միջին հայերենի բայերի ժամանակները կազմվում են երկու հիմքից՝ ներկայի և

անցյալի հիմքից, սակայն այն տարբերությամբ, որ ժամանակակից հայերենի բայերի անցյալի հիմքը, չնչին բացառություններով, ցոյական է Այսպես, օրինակ՝ ճանաչել, թաքցել, երկնչել, թողուլ, հեղուլ և այլ բայեր գրաբարում ցոյական հիմք չունեին, իսկ ժամանակակից հայերենում նրանց անցյալի հիմքը ցոյական է՝ ճանաչել – ճանաչեցի, թաքցել – թաքսվեցի և այլն Արդի հայերենը համարյա թե չունի զարտուղի խոնարհումներ, եթե նկատի չունենանք վերապրուկային ձևով պահպանված և խոնարհման ընդհանուր կանոնից միայն որոշ տարբերություններ տվող մի քանի բայերի դիմավոր ձևերը

Արդի հայերենը կրավորական սեռի համար ունի բայական հատուկ ածանց՝ **վ**, որը հանդես է գալիս բայի խոնարհման բոլոր ձևերում, եթե բայը կրավորական է Այդ ածանցը, որը հայոց գրավոր լեզվում հանդես է եկել իր իմաստով դեռևս միջին դարերում, կապվում է կրավորակերպ խոնարհման անցյալ կատարյալի 3-րդ դեմքի **ւ-ի** հետ, որը, ինչպես արդեն նշել ենք, հնդեվրոպական ծագում ունի

Ժամանակակից հայերենը ունի երկու խոնարհում՝ **ե** և **ա**, օրինակ՝ գրել, խաղալ Այդ **ա**, **ե** խոնարհիչները պահպանվում են պարզ ժամանակներում, ապառնի դերբայում, իսկ **ա** խոնարհման բայերի մեջ՝ նաև վաղակատար, հարակատար դերբայներում Մյուս ժամանակներում նրանք ընկնում են

Հայերենի խոնարհման հիմնական առանձնահատկություններից մեկը արտահայտվել է անցյալ կատարյալի կազմությամբ Հայերեն բայերի զարգացումն ընթացել է ոչ ցոյական հիմքի կրճատման և ցոյական հիմքի տարածման ուղիով Այդ տենդենցը, որ որոշակիորեն նկատվում էր գրաբարում, իշխող է դառնում ժամանակակից հայերենում և մեր բարբառների մեծ մասում Դեռևս մեր լեզվում պահպանված հատ ու կենտ ոչ ցոյական բայերը վաղուց ցոյականի վերածված կլինեին, եթե հայոց լեզվի ավանդույթները չպահպանվեին գրականությամբ Համենայն դեպս, նույնիսկ գրավոր լեզվի քերականական կանոնների խիստ պահպանման պայմաններում էլ հայերենի բայերն ընթանում են դեպի բայաձևերի միօրինակությունն ու պարզեցումը

Արդի հայերենի բայերի դիմավոր ձևերը սահմանափակ վերջավորություններ ունեն Հայերենի բոլոր բաղադրյալ ժամանակները, ինչպես արդեն գիտենք, կազմվում են որևէ դերբայից և օժանդակ բայից, իսկ օժանդակ բայը ժամանակակից հայերենում ունի միայն

ներկա և անցյալ ձևեր: Այդ պատճառով էլ բաղադրյալ ժամանակների բոլոր ներկաները ունեն եզակի առաջին դեմքի համար **մ**, երկրորդին՝ **ս**, երրորդին՝ **է**, հոգևակիների համար՝ **նք, եք** (էք), **են**, իսկ անցյալ ժամանակները եզակի առաջին դեմքի համար՝ **ի**, երկրորդին՝ **իր**, երրորդին՝ **ր**, հոգևակիների համար՝ **ինք, իք, ին** վերջավորություններ, որոնք դերբայական վերջավորությունների շնորհիվ միայն կոնկրետանում են իրենց քերականական իմաստով և նշում նաև բայերի ժամանակները: Օրինակ՝ գրում եմ, գրելու եմ, գրած եմ բայաձևերը ունեն դեմքերի միևնույն վերջավորությունները, բայց քերականական տարբեր իմաստներ. **գրում եմ** նշանակում է գրելու ընթացքի մեջ եմ, **գրելու եմ**՝ գրելու պրոցեսը դեռևս չեմ սկսել, սկսելու եմ հետո, **գրած եմ**՝ գրել վերջացրել եմ, և արդյունքը կա:

Դիմավոր բայերի պարզ ձևերը ունեն հետևյալ վերջավորությունները. սահմանական եղանակի անցյալը եզակի առաջին դեմքի համար՝ **ի, ա, (այ)**, երկրորդին՝ **ր**, երրորդին՝ **ց** և սահմանափակ բայերին՝ **վ**, հոգևակի՝ **ինք, իք, ին** կամ **անք, աք, աև**: Անցյալ կատարյալի երրորդ դեմքի **ց**-ն ցոյական բայերի հիմքի հնչյունն է, բայց արդի հայերենում ստացել է նաև երրորդ դեմքն արտահայտող վերջավորության իմաստը: Այդ հանգամանքը օգնել է նրա տարածմանը: Արդի հայերենի ոչ ցոյական շատ բայեր անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքում ունեն **ց** վերջավորություն. օրինակ՝ դրի, դրիր, դրեց, արի, արիր, արեց և այլն: Անցյալ կատարյալի երրորդ դեմքի մյուս վերջավորությունը՝ **վ**-ն, հայերենի կրավորակերպ խոնարհման երրորդ դեմքի վերջավորությունն է, որը միայն վերապրուկորեն պահպանված է արդի հայերենի մի շարք բայերում: Նա աստիճանաբար իր տեղը զիջում է **ց**-ին, օրինակ արի, արիր, արավ, բայց նաև՝ արեց. **տալ** բայի անցյալ կատարյալը մի քանի բարբառներում լինում է տվի, տվիր, տվավ, գրական հայերենում՝ տվեցի, տվեցիր, տվեց և այլն:

Բայերի մյուս պարզ ժամանակները ունեն ապառնու առաջին դեմքի համար **մ**, երկրորդին՝ **ս**, երրորդին՝ **ի** (է), **ա** (այ), հոգևակիներին՝ **նք, ք, ն**, անցյալի եզակի առաջին դեմքի համար՝ **ի**, երկրորդին՝ **իր**, երրորդին՝ **ր**, հոգևակիներին՝ **ինք, իք, ին** վերջավորությունները. օրինակ՝ ըղձական եղանակի ապառնի՝ գրեմ, գրես, գրի, կարդամ, կարդաս, կարդա, գրենք, գրեք, գրեն, կարդանք, կարդաք, կարդան, անցյալ՝ գրեի, գրեիր, գրեր, կարդայի, կարդայիր, կարդար, գրեինք,

գրեիք, գրեին, կարդայինք, կարդայիք, կարդային: Ենթադրական և հարկադրական եղանակները ունեն նույն բայաձևերը՝ ենթադրականը **կ**, իսկ հարկադրականը **պիտի** եղանակիչներով, օրինակ՝ կգրեմ, կգրես, կգրի, պիտի գրեմ, պիտի գրես, պիտի գրի և այլն:

Հրամայական եղանակը ունի **իր, ա** և **եք** վերջավորությունները: Բայերի հոգնակի թիվը, ինչպես երևում է վերոհիշյալ օրինակներից, կազմվում է **ք** և **ն** վերջավորություններով:

Հայերենի հնչյունական համակարգի մեջ կատարված փոփոխությունները ներգործել են նաև բայական վերջավորությունների վրա, որի հետևանքով ստեղծվել են այնպիսի վերջավորություններ, որոնք հատուկ չեն եղել գրաբարին, օրինակ՝ օժանդակ բայի ներկայի հոգնակի թվի առաջին դեմքը գրաբարում ունի **եմք**, անցքալը՝ **եաք**, իսկ ժամանակակից հայերենում՝ **ենք**, **էինք** վերջավորությունները, գրաբարի **ե** խոնարհման ցոյական բայերի անցյալ կատարյալի եզակի երկրորդ դեմքը ունի **եր**, երրորդը՝ **եաց** հոգնակի առաջին դեմքը՝ **աք**, իսկ արդի հայերենինը՝ **իր**, **եց** և **ինք** վերջավորությունները: Ժամանակակից հայերենում, իբրև ընդհանուր կանոն, հնչյունափոխվել են պարզ ժամանակների եզակի թվի ներկայի երրորդ դեմքի հին **է** և **այ** վերջավորությունները և դարձել **ի** և **ա** (գրեմ, գրես, գրե-ի, կարդամ, կարդաս, կարդայ-ա): Այդ հնչյունական տարբերությունները, սակայն, անճանաչելի չեն դարձնում ժամանակակից հայերենի բայական վերջավորությունները և չեն մթազնում հայերենի հին և նոր շրջանների բայական վերջավորությունների միջև եղած սերտ կապերը: Այդ տարբերությունները ցույց են տալիս, որ հայերենը ապրել է զարգացման երկարատև շրջան և փոփոխություններ է կրել իրեն ներհատուկ օրինաչափություններով:

Հայերենի զարգացման և նոր ձևերի առաջացման պրոցեսը ավելի ակնբախ է դառնում, երբ նկատի ենք ունենում երեք գլխավոր՝ ներկա, անցյալ և ապառնի ժամանակների մասնավորված արտահայտությունների համար ստեղծված բազմազան ձևերը: Արդի հայերենում կան մի քանի ներկաներ, մի քանի անցյալներ և մի շարք ապառնիներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր իմաստը և քերականական ձևը: Հայոց լեզվի քերականության կատարելագործման ամենաուժեղ արտահայտություններից մեկը երևում է հենց բայական այդ բազմազան ձևերի մեջ:

Արդի հայերենի խոնարհման համակարգի մեջ ընդգծվում են՝ բա-

ղաղրյալ ժամանակները, որոնք, ինչպես արդեն նշված է, կազմվում են որևէ դերբայից և օժանդակ բայից: Հին հայերենին հատուկ չեն դերբայից ու օժանդակ բայից կազմված բաղադրյալ ժամանակները, թեև դրանք ընդհանրապես սրան օտար չեն եղել: Դերբայների միջոցով դիմավոր ձևեր կազմելու օրինաչափությունը ոչ միայն հնարավորություն է տվել արդի հայերենի արտահայտչական միջոցները ընդարձակելուն, այլև բայական առանձին ձևերի և իմաստների կայունացման հիմք է հանդիսացել:

Արդի հայերենը ունի հետևյալ դերբայները՝ անորոշ՝ գրել, կարդալ, անկատար՝ գրում, կարդում, ապառնի՝ գրելու, կարդալու, վաղակատար՝ գրել, կարդացել, հարակատար՝ գրած, կարդացած՝ ենթակայական գրող, կարդացող և ժխտական՝ գրի, կարդա: Արդի հայերենում գործածված դերբայներից ոչ բոլորն են եղել հայերենի զարգացման վաղ շրջաններում: Գրաբարում, օրինակի համար, եղել է չորս դերբայ՝ անորոշ՝ **լ** վերջավորությամբ, անցյալ՝ **եալ**, ենթակայա-

* Հայերենի դերբայների ձևաբանական արժեքի ու նշանակության մասին տարբեր տեսակետներ են արտահայտվել հայ մասնագիտական գրականության մեջ: Միայն խորհրդային պայմաններում որոշակի կերպով լուծվեցին հայերենի դերբայների դերն ու ձևաբանական նշանակությունը: Զերականության դասագրքերում մտցվեց նաև ժխտական կամ ըղծական դերբայը, որի մասին մինչև քսաներորդ դարի երեսնական թվականները որևէ նշում չի եղել հայ լեզվաբանական գրականության մեջ ընդհանրապես: Միայն այդ թվականներին պրոֆ. Ա. Ղարիբյանը նկատեց հայերենի ժխտական դերբայը և մտցրեց իր կազմած հայոց լեզվի քերականության դասագրքում: Ժամանակակից հայոց լեզվի քերականության դասագրքերում մյուս դերբայների հետ յուր տեղը ունեցավ նաև ժխտական դերբայը, որով կազմվում են պայմանական եղանակի ժխտական խոնարհման երկու ժամանակները՝ չեմ, չես, չի նստի, կարդա, չի, չիիր, չիր նստի, կարդա, չենք նստի, չիիր կարդա և այլն: (ՏԵՄ Ա. **Ղարիբյան**, Հայոց լեզվի քերականության դասագիրք, 1953 թ., Նույնի՝ Հայոց լեզվի մեթոդիկա, 1938 թ.: **Գ. Սևակ**, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, 1939): Այդ թվականներին ճշտվեց նաև վաղակատար և հարակատար տերմինների իմաստը և դրանք համարվեցին ինքնուրույն դերբայներ և ոչ թե անցյալ դերբայի «վաղակատար (իին եալ) և հարակատար ած» վերջավորություն ունեցող տեսակներ (Մ. **Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, 1931):

Պարզվեց նաև հայերենի դերբայների առաջացման հարցը: Հայ մասնագիտական գրականության մեջ տարբեր տեսակետներ են հայտնվել հայերենի դերբայների ձևավորման մասին: Սակայն լրիվ չափով պարզված չեն եղել այդ դերբայների ձևավորման, տարածման ու նրանց ձևաբանական նշանակության խնդիրները: Այդ հարցերը, շնորհիվ Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» աշխատության, լրիվ չափով պարզվեցին:

կան՝ **ող, իչ** և ապառնի **ոց, ի** վերջավորությամբ: Արդի հայերենի անկատար, վաղակատար, հարակատար, ժխտական դերբայները և ապառնի դերբայը իր **ու** վերջավորությամբ ձևավորվել են ուշ շրջանում՝ միջին դարերում, բայց կայունացել ու հայոց լեզվի խոնարհման համակարգի մեջ որոշակի դեր են ստացել միայն XIX դարում՝ հայոց ազգային լեզվի կազմավորման շրջանից սկսած:

Արդի հայերենի դերբայներից դիմավոր ձևերի կազմությանը մասնակցում են անկատար դերբայը, որից և օժանդակ բայի համապատասխան ձևերից կազմվում են սահմանական եղանակի ներկան (գրում եմ, կարդում եմ) և անցյալ անկատարը՝ (գրում էի, կարդում էի), ապառնի դերբայը՝ ներկա (գրելու եմ, կարդալու եմ) և անցյալ (գրելու էի, կարդալու էի), հարակատար դերբայը՝ ներկա (գրած եմ, կարդացած եմ) և անցյալ (գրած էի, կարդացած էի), վաղակատար դերբայը՝ ներկա (գրել եմ, կարդացել եմ) և անցյալ (գրել էի, կարդացել էի) և ժխտական դերբայը, որից կազմվում են ժխտական խոնարհման պայմանական եղանակի ապառնին (չեմ գրի, չեմ կարդա) և անցյալը (չէի գրի, չէի կարդա):

Այդ դերբայներից կազմված բայական ձևերը ունեն որոշակի իմաստներ, որոնք գրաբարում արտահայտվում էին համեմատաբար ավելի սահմանափակ կամ բաղադրյալ ժամանակների միջոցով:

Գրաբարի և ժամանակակից հայերենի սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների միջև ձևական զգալի տարբերություններ կան: Գրաբարի այդ ժամանակները կազմվում էին բայի ներկայի հիմքից և բայական վերջավորություններից, իսկ ժամանակակից հայերենինը՝ անկատար դերբայից և օժանդակ բայի համապատասխան ձևերից: Երբ հայոց գրական լեզվում անկատար դերբայից և օժանդակ բայից սկսում է կազմվել սահմանական եղանակի ներկան և անցյալ անկատարը, գրաբարի ներկայի և անկատարի համապատասխան ձևերը կորցնում են իրենց հիմնական իմաստը և սկսում են գործածվել ըղձական եղանակի իմաստով (գրեմ, կարդամ, գրեի, կարդայի): Այդ նույն հիմունքով էլ իմաստային փոխանցում է կատարվում նաև միջին հայերենի ներկայի և անցյալ անկատարի բայական ձևերի մեջ, որոնք ժամանակակից հայերենում պայմանական կամ ենթադրական իմաստ են ստանում (կգրեմ, կգրեի, կկարդամ, կկարդայի և այլն): Այսպիսով, ըղձական և պայմանական եղանակների ձևավորումը կապված է հայոց գրական լեզվի

մեջ սահմանական ներկան նոր միջոցներով՝ անկատար դերբայով և օժանդակ բայով կազմվելու հետ: Իսկ արդի հայերենի ներկայի կազմության այդ եղանակը, հայոց ազգային լեզուն ձևավորվելուց շատ ու շատ առաջ ընդհանուր էր «ում» ճյուղի բարբառներին, որոնցից ամենակատարելագործված ու հասկանալի բարբառը՝ Արարատյան բարբառը, ընկել է հայոց ազգային լեզվի հիմքում:

Ժամանակակից հայերենի սահմանական ներկայի և անցյալ անկատարի ձևերի գոյությունը, ինչպես երևում է վերևում շարադրվածից, արդյունք է պատմական այն պայմանների, որոնց մեջ՝ ձևավորվել են նրանք: Եթե ազգային լեզվի հիմքում ընկներ այնպիսի բարբառ, որի ներկայի կազմությունը տարբեր ձևով կատարվեր, հավանաբար հենց այդ ձևն էլ կդառնար ազգային լեզվի սահմանական ներկան: Այսպիսով, լեզվի այս կամ այն իրողության տարածման կամ անգործածական դառնալու պատճառները, մի կողմից՝ պայմանավորված են լեզվի զարգացման ներքին օրենքներով և, մյուս կողմից՝ կապված են լեզուն կրող հասարակության պատմության հետ:

Բ. ՇԱՐԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

Լեզվի զարգացման յուրաքանչյուր շրջան, եթե նա այդ լեզվի որակական նոր աստիճան է նշում, ունի շարադասության ու համաձայնության հատուկ դրսևորումներ, որոնցով էլ իրագործվում է այդ լեզվի հաղորդակցական ֆունկցիան՝ հասարակության զարգացման տվյալ էտապում: Այդ առումով էլ չի կարելի որևէ անջրպետ դնել լեզվի ձևաբանության ու շարահյուսության միջև: Նրանք կապված են միմյանց հետ և պայմանավորում են միմյանց: Երբ խոսվում է լեզվի հոլովման կամ խոնարհման համակարգի մասին, դրանք միայն հարաբերականորեն են հանվում շարահյուսական կառույցներից և դիտվում իբրև լեզվական առանձին միավորներ: Այդ պատճառով էլ լեզվի ձևաբանության մեջ կատարված յուրաքանչյուր տեղաշարժ արտացոլվում է շարահյուսության մեջ, իսկ վերջինի մեջ կատարված յուրաքանչյուր փոփոխություն ներգործում է ձևաբանության վրա: Գրաբարում, օրինակի համար, հատուկ հոլովական իմաստներ արտահայտող՝ **որովհետև, կարծյոք, այսուհետև, իհարկե** և այլ բառեր ժամանակակից հայերենում չեն պահել իրենց

սկզբնական իմաստը և հանդես են գալիս իբրև տարբեր խոսքի մասեր՝ նրանցից **որովհետև** գործածվում է իբրև շաղկապ, **կարծյոք**, **այսուհետև**, **իհարկե** իբրև մակբայներ և այլն:

Լեզվի զարգացման ընթացքում քերականական շատ իրողություններ կորցնում են իրենց իմաստը կամ նոր առումներ են ձեռք բերում, քերականական շատ ձևեր պահպանվում են, բայց նոր ֆունկցիա են կատարում և այլն:

Ժողովրդի զարգացման, նրա կյանքում կատարված փոփոխությունների հետ կատարելագործվում են լեզվական բոլոր իրողությունները, թեև ոչ համաչափ ձևով: Ամենից արագ, ինչպես արդեն նշվել է, փոխվում և համալրվում է բառապաշարը, սակայն փոխվում է նաև քերականությունը: Արդի հայերենի և գրաբարի ձևաբանության ու շարահյուսության մեջ ստեղծված տարբերությունները անհասկանալի են դարձրել գրաբարը ժամանակակից հային: Հարևանցի համեմատությունն իսկ պարզում է, որ ո՛չ միայն տարբեր արտահայտություններ ունի ժամանակակից հայերենի ու գրաբարի նախադասության անդամների կապակցությունը, այլև նրանց նախադասությունների կառուցվածքը տարբեր է: Արդի հայերենին օտար են գրաբարում շատ տարածված անցյալ և անորոշ դերբայներով կազմված նախադասության տիպերը, որոնց մեջ, իբրև ընդհանուր կանոն, ենթական դրվում էր սեռական և տրական հոլովներով:

Արդի հայերենի, ինչպես նաև գրաբարի նախադասությունները ունեն իրենց գլխավոր և երկրորդական անդամները: Սակայն համաձայնության կանոնները շատ բանով գանազանվում են միմյանցից: Գրաբարի ենթական, ինչպես գիտենք, որոշ տիպի նախադասությունների մեջ կարող էր արտահայտվել սեռական և տրական հոլովներով: Այդ երևույթը հատուկ չէ ժամանակակից հայերենին: Արդի հայերենում ենթական, բացի կողմնակի ենթակայից, միշտ դրվում է ուղղական հոլովով:

Յուրաքանչյուր նախադասություն ունենում է իր ստորոգյալը, որը արդի հայերենում կարող է լինել պարզ և բաղադրյալ: Պարզ են համարվում այն ստորոգյալները, որոնք արտահայտված են խոնարհված բայով (գնում է, գնաց, գնալու է և այլն), իսկ բաղադրյալը՝ որևէ գոյականով, ածականով, դերանունով կամ թվականով և բայով, որը կոչվում է հանգույց (սիրտդ **քար է**, նա **անհանգիստ է**, ջուրը **գո-**

լորշի դարձավ և այլն):

Նախադասության անվանական անդամները ունենում են իրենց լրացումները, որոնք լինում են որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ, որոնց համաձայնեցման և կապակցության կանոնները տարբեր են ժամանակակից հայերենում ու գրաբարում:

Ստորոգյալը ունենում է իր լրացումները, որոնք բաժանվում են խնդիրների և պարագաների:

Խնդիրները լինում են ուղիղ և անուղղակի, ուղիղ խնդիր պահանջում են միայն ներգործական սեռի բայերը (գրում եմ **Նամակ**, կանչեցի **Նրան** և այլն): Ուղիղ խնդիրը դրվում է հայցական հոլովով: Անուղղակի խնդիրները լինում են՝ հանգման կամ մատուցման (գիրքը տվի **Նրան**, դիմում եմ **Նրան**), անջատման (ես **ձեզանից** գոհ եմ, **ծաղկից** փունջ եմ կազմում և այլն), միջոցի (**գրչով** եմ գրում, **տրակտորով** եմ հողը վարում և այլն), ներգործող խնդիր (Տիգրանը ծեծվեց **Մարտիրոսից**, բաղը սպանվեց **որսորդից**): Մասնական (այդ **հացից** մի կտոր ինձ տուր), վերաբերության (զեկուցողը խոսում էր մեր **Նվաճումներից**):

Պարագաները, որոնք ցույց են տալիս գործողության հետ կապված զանազան հանգամանքներ, լինում են՝ **տեղի** (սովորում եմ **համալսարանում**, աշակերտը գնում է **դպրոց**, դուրս եկանք **քաղաքից**, անցնում ենք մեր քաղաքի ծաղկազարդ **այգիներով**), **ժամանակի** (երբ կարդում եմ գիրքը, ես արթնանում եմ **վաղ առավոտյան**, դասերը պատրաստում եմ **գիշերով**, երագում քեզ տեսա), **ձևի** (ևս **վազելով** եկավ, **հագիվ** հասա Նրան), **չափի** (բազմիցս խոսել եմ այդ մասին, **քանի անգամ** ես կարդացել այդ գիրքը), **նպատակի** (գնում ենք **զբոսնելու**, համալսարան ենք գալիս **սովորելու**, ընդունվեց ի **գիտություն**, ուղարկեցին **ջրի**), **պատճառի** (ամորթից կարմրեց, **հոգնած լինելով** չկարողացա լավ խոսել), **պայմանի** (անխոնջ **աշխատանքով** միայն կտիրապետես գիտությանը, այդպես **վարվելով** հեռու չես գնա), **հիմունքի** կամ **հակառակ հիմունքի** (խաղի բոլոր պայմանները **կատարելով հանդերձ**՝ չկարողացա շահել մրցանակը, **հակառակ քո խոստմանը**՝ չեկար, ուսուցիչների **դեկավարությամբ** աշակերտները տիրապետում են գիտության հիմունքներին) և այլն:

Հայերենի նախադասության անդամները իրար հետ կապակցվում են տարբեր եղանակներով՝ համաձայնությամբ, շարադասությամբ և խնդրառությամբ: Կապակցության այդ եղանակները

գրաբարում և ժամանակակից հայերենում ունեն տարբեր դրսևորումներ. օրինակ՝ գրաբարում որոշիչի ու որոշյալի համաձայնությունը օրինաչափ երևույթ էր, իսկ ժամանակակից հայերենում՝ ո՛չ, դրանց շարադասությունը գրաբարում չունեի պարտադիր կանոններ՝ որոշիչը կարող էր լինել և՛ նախադաս, և՛ հետադաս, իսկ ժամանակակից հայերենում որոշիչները, իբրև ընդհանուր կանոն, նախադաս են և այլն:

Արդի հայերենում դեմքով և թվով համաձայնում են ենթական և ստորոգյալը, ինչպես՝ Աշոտը գնաց, նրանք եկան, այգիները ծաղկեցին և այլն: Այս ընդհանուր կանոնը երբեմն խախտվում է, երբ հաշվի է առնվում ենթակայի բովանդակությունը և ոչ թե քերականական ձևը, ինչպես՝ խնդիրների մեծ մասը չլուծված մնացին և այլն: Համաձայնության այդ եղանակը, որը կոչվում է բակառություն, հատուկ չէ ժամանակակից հայերենին և գնալով վերանում է:

Արդի հայերենի սովորական շարադասության մեջ ենթական միշտ դրվում է ստորոգյալից առաջ, ինչպես՝ Վարդգեսը գնաց տուն: Երբ տրամաբանական շեշտը դրվում է ստորոգյալի վրա, ենթական ընկնում է ստորոգյալից հետո, օրինակ՝ տո՞ւն գնաց Վարդգեսը:

Որոշիչը արդի հայերենում, իբրև ընդհանուր կանոն, չի համաձայնում որոշյալի հետ, օրինակ՝ մեր **հերոսական** ժողովուրդը չտեսնված սխրագործություններ է կատարում:

Հատկացուցիչը միշտ դրվում է սեռական հոլովով և հատկացյալի հետ չի համաձայնում, ինչպես՝ մեր **քաղաքի** փողոցները լայնարձակ են:

Բացահայտիչն ու բացահայտյալը դեմքով, թվով և հոլովով համաձայնում են, ինչպես՝ մեր կուրսի լավագույն **ուսանողը՝ Մարտիրոսը**, այսօր բացակայում է: Արդի հայերենում բացահայտիչի դեմքերի համաձայնումը կատարվում է **ս, դ, և** կամ **ը** դիմորոշ հոդերով, որոնց մեջ ընդգծվում է հայերենի համաձայնության յուրահատկություններից մեկը: Սովորական բացահայտիչը դրվում է բացահայտյալից հետո, իսկ մասնականը կարող է լինել և՛ նախադաս, և՛ հետադաս, օրինակ՝ մենք՝ ուսանողներս, միշտ պատրաստ ենք կատարելու մեզ տրված հանձնարարությունները. մենք, իբրև ուսանողներ, պատրաստ ենք կատարելու մեզ տրված հանձնարարությունները. մենք պատրաստ ենք կատարելու մեզ տրված հանձնարարությունները՝ իբրև ուսանողներ. իբրև ուսանողներ՝ մենք պատրաստ

ենք կատարելու մեզ տրված հանձնարարությունները:

Գրաբարը ուներ մի շարք նախդիրներ, որոնք դրվելով հոլովածների մոտ՝ արտահայտում էին գանազան հարաբերություններ, մի հոլովածն էլ հաղորդում այլ հոլովի իմաստ և այլն: Արդի հայերենը չունի գրաբարի բոլոր նախդիրները, նա տարածական, ժամանակային, բաշխական, պատճառական և բազմազան այլ հարաբերություններ արտահայտում է եղած հոլովներով, որոնք ընդամենը յոթն են: Այդ պատճառով էլ արդի հայերենի հոլովները իրենց հիմնական իմաստի ու կիրառության հետ նախադասության մեջ հանդես են գալիս նաև այլ իմաստներով և կիրառությամբ:

Ուղղական հոլովը ենթակայի հոլովն է, բայց դրան զուգընթաց նա կիրառվում է իբրև ստորոգելիական վերադիր (այս ծառը ծիրանի **ծառ** է), իբրև որոշիչ (**քար** սիրտ), կողմնակի ենթակա (դեռ **արշալույսը** չբացված՝ կոլտնտեսականները դաշտ են գնում) և այլն:

Սեռականը հատկացուցիչի հոլովն է (**գրքի** թերթերը, **մեր** տունը): Իր այդ հիմնական իմաստից բացի, սեռական հոլովը արտահայտում է՝ սերում, ծագում (**արեգակի** ճառագայթները, **Ն. Չարյանի** երկերը), կիրառվում է իբրև կողմնակի ենթակա (Մուշեղ Մամիկոնյանի Բյուզանդիա գնալուց հետո թագուհին կարգադրեց), ցույց է տալիս ամբողջի և մասի հարաբերությունը (**աշակերտների** մեծ մասը, **խնձորի** հատը), առարկայի հատկությունը (**պողպատի** մարդ, **գործի** մարդ, **փրկության** միջոց, նոր **ձևի** հագուստ) և այլն:

Տրականը ցույց է տալիս՝ հանգման, մատուցման առարկան (մոտեցա **գրատախտակին**, գիրքը հանձնեցի **Սուրիկին**), գնի պարագա (հարյուր **ռուբլու** գիրք առա), պատճառի պարագա (ծվածեղի **սիրու** թավի կոթը կհամբուրեն), նպատակի պարագա (գնաց **աշխատելու. ճաշի** նստեցին. գնալ **գբոսանքի**), տեղի պարագա (էշն ինչ գիտի, թե **մեջքին** ինչ կա. գլխարկը դրեց **գլխին**. տաշած քարը **գետինին** չի մնա), ժամանակի պարագա (վատ մարդը **զատկին** էլ վատ կլինի. **ցրտին** ո՞ր ես գնում. այս **ներկայացմանը** մեծ բազմություն կար), ստորոգելիական վերադիր (այս երեխաները մի **տարիքի** են. նա քո **խելքին** է. ի՞նչ **կարծիքի** ես):

Հայցականը ուղիղ խնդրի հոլովն է, բայց, իր հիմնական իմաստից բացի, կարող է ցույց տալ, տեղի պարագա (**աղբյուրը** գնաց, ծարավ հետ եկավ. կաղ էշով **քարավան** չեն մտնի. խորամանկ աղվեսը երկու ոտքով **թակարդը** կընկնի. գայլից փախչողը արջի

ճանկը կընկնի, ո՞վ ասաց, թե աչքիդ **վերև** ունք կա), ժամանակի պարագա (նա առավոտվանից **երեկո** աշխատում է. նրանք ամբողջ **գիշերը** կարդացել են), չափի ու քանակի պարագա (Սուրիկը մի **քայլ** մոտեցավ Վարդգեսին, մենք երևանից հեռու ենք **հինգ կիլոմետր**. խնձորի կիլոն արժե **մի ռուբլի**) և այլն:

Բացառական հոլովը անջատման անուղղակի խնդրի հոլովն է (բաժանվեցի **ընկերոջից**, հեռացա **նրանից**): Բացառական հոլովը կարող է ցույց տալ նաև այն առարկան, որից առաջանում է, գոյանում է որևէ բան (մի **ծաղկից** օձը թույն է շինում, մեղուն՝ մեղր. ծառի որդև **իրենից** կգոյանա), մասնական խնդիր՝ ամբողջը, որից առնվում է մի մասը (այս **գինուց** մի բաժակ խմիր. **ծաղիկներից** ամենագեղեցիկը վարդն է), ներգործող խնդիր (**նրանցից** վիրավորվեցինք. թշնամիները հաղթվեցին **մեզնից**), պատճառի պարագա (արջն իր **ահից** կգոռա. տերևները **քամուց** դողում են. **ամոթից** կարմրեց. **անքնությունից** աչքերն ուռել են. շատ **ուտելուց** և **խմելուց** շարժվել չի կարող), այն առարկան, որի մասին խոսվում է՝ վերաբերության խնդիր (ու ձմռան երկար **գիշերը** նստած՝ խոսում են Լոռու հին հին **քաջերից**. իր **բախտից** է գանգատվում), տեղի պարագա (քաղցր լեզուն օձը **բնից** կհանի. ձուկը **գլխից** կբռնեն. այծն իր **ոտից** կկախեն, ոչխարն՝ իր. մուկը ծակը չէր մտնում, ցախավելը **պոչից** կախեցին), ժամանակի պարագա (**առավոտվանից** նա աշխատում էր. նա երեք **ժամից** կավարտի իր աշխատանքը. վաղ **առավոտվանից** նրանք դաշտում էին) և այլն:

Գործիական հոլովը միջոցի անուղղակի խնդրի հոլովն է (գրում եմ **գրչով**, երկաթը **երկաթով** կծծեն): Այդ հիմնական իմաստից բացի, գործիական հոլովը ցույց է տալիս՝ հիմունքի և պատճառի պարագա (շունը **կաղալով** չի սատկի. ծառը մի **հարվածով** չի ընկնի. նա իր **աշխատասիրությամբ** կարողացավ կատարել այդ. չնայելով իր պատկառելի հասակին, նա շարժվում է երիտասարդական **աշխուժությամբ**. Նրա **թելադրանքով** նա կատարեց այդ քայլը), ներգործող խնդիր (**ձյունով** ծածկվեց երկիրը. **ծաղիկներով** զարդարվեցին ծառերը. **որդիներով** է մխիթարվում), սահմանափակում կամ վերաբերություն (**ձեռքով**՝ ծանր, **ոտքով**՝ կաղ, **մտքով**՝ կույր, **ագգով**՝ հայ, **ծագումով**՝ գյուղացի), տեղի պարագա (լավություն ես անում, **կամրջով** էլ անց կացրու. Ծա՞ռ լինի, որ **գլխով** քամի անց չկենա. նրա **մոտով** անցավ), ժամանակի պարագա (**ժամանակով** կատունն ճոն էր.

ամեն **ամպելով** ձյուն չի գա, հորս **կնուկըով**, մորս **ծնունդով** վեր կացանք մի օր որսի գնացինք. **ժամերով** կանգնած է մնացել, ձևի և կերպի պարագա (ծշմարիտ խոսքը **կատակով** կասեն. **ուժով** բացած վարդը **հոտ** չի ունենա. նա **քաջությամբ** կռվեց. ագռավի **խոսքով** լինի՝ վարդուորին ձյուն կգա. նրա **սրտով** եղավ. նրա **կամքով** կատարվեց, սուտը **հո փողով** չէ՞), չափի, քանակի ու գնի պարագա (գնեցի քսան **ռուբլու** գիրք. նա **չորս տարով** մեծ է քեզնից. մի **ժամով** ուշացանք, մեր կոլտնտեսությունը **հոտերով** ոչխար ունի. մեր կոլտնտեսականները **բեռներով** ցորեն ունեն) և այլն:

Ներգոյական հոլովը տեղի պարագայի հոլովն է (ծուկն ու միսը մի **կաթսայում** չեն եփում. ծուկը **ծովում** կմեծանա, լավ հունձ անողը **հանդումն** էլ կհնձի, սարումն էլ): Ներգոյական հոլովը կարող է գործածվել նաև իբրև ժամանակի պարագա (հայոց գրերը ստեղծվեցին **հինգերորդ դարում**. մեր **օրերում** անսախընթաց զարգացում ունեցավ հայ գրականությունը), իբրև սահմանափակման պարագա (**գրելում** առաջադեմ է, ամեն **բանում** հմուտ է) և այլն:

Գոյական անունների հոլովների բազմազան իմաստները լրացնելու համար օգտագործվում են նաև կապերն ու կապական բառերը, որոնք գրաբարի համեմատությամբ զգալի տարբերություններ ունեն: Գրաբարի մի շարք նախդիրներ արդի հայերենում կիրառվում են իբրև կապեր (ի, ըստ, ընդ), մի քանիսն էլ արտահայտվում են կապակցությունների մեջ: Գրաբարյան մի շարք գոյականների հոլովական ձևերը վերածվել են կապական բառերի, օրինակ՝ **պատճառով, առթիվ, շնորհիվ, նկատմամբ** բառերը արտահայտված են գործիական հոլովով և արդի հայերենում հանդես են գալիս իբրև կապական բառեր: Նույնիսկ իսկական կապերից մի քանիսը, ինչպես՝ համար, հանդերձ և այլն ինքնուրույն իմաստ և գործածություն են ունեցել հայերենի զարգացման ավելի վաղ շրջանում և միայն հետագայում են կորցրել իրենց ինքնուրույն իմաստը և վերածվել են նյութական բովանդակություն և ինքնուրույն կիրառություն չունեցող բառերի:

Հայերենում նախադասությունները լինում են պարզ և բարդ, բարդ նախադասությունները լինում են համադասական և ստորադասական: Վերջին տիպի նախադասությունների մեջ երկրորդական նախադասությունները լրացնում են գլխավոր նախադասության գլխավոր կամ երկրորդական անդամների միտքը և ըստ այնմ էլ լինում են ենթակա, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, ստորոգե-

լիական, խնդիր և պարագա երկրորդական նախադասություններ:

Գլխավոր նախադասության անդամների միտքը պարզաբանող երկրորդական նախադասությունները կարող են լինել առաջադաս, միջադաս և վերջադաս:

Բարդ նախադասությունների կապակցությունը կատարվում է շաղկապներով և հարաբերական բառերով. համադասական շաղկապներով (այլ, և, ու, բայց, գոնե, անգամ, իսկ, կամ և այլն) կապվում են համադասական, իսկ ստորադասական շաղկապներով (թե, եթե, որ, որովհետև, որպեսզի, մինչ, մինչդեռ և այլն) և հարաբերական բառերով (ինչ, որքան, երբ, ինչպիսի և այլն) կապվում են ստորադասական նախադասությունները:

Երկրորդական նախադասությունների համաձայնության ու շարադասության հիմնական կանոնները չեն տարբերվում պարզ նախադասության անդամների կապակցությունից:

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ

Արդի հայերենի բառային կազմն ընդգրկում է գրաբարի, միջին հայերենի և բարբառների բառապաշարի կենսունակ տարրերը: Սակայն բառերի այդ հսկայական քանակությունը, որը տակավին ամբողջությամբ չի ամփոփվել բառարանների մեջ, իր բոլոր տարրերով գործածական չէ ժամանակակից հայերենի զարգացման արդի էտապում: Նույնիսկ շատ բառեր, որոնք գրաբարի, միջին հայերենի և բարբառների հիմնական բառաֆոնդի մեջ են եղել, այժմ կենսունակ չեն: Եվ, ընդհակառակն, ժամանակակից հայերենի հիմնական բառաֆոնդի մեջ եղած բազմաթիվ բառեր չեն եղել ո՛չ բարբառներում, ո՛չ գրաբարում, ո՛չ էլ միջին հայերենում: Հայ հասարակական կյանքի մեջ կատարված փոփոխությունները, գիտության ու տեխնիկայի զարգացումը, հասարակական նոր հարաբերությունների առաջացումը, նոր գաղափարախոսությունը և այլն իրենց հետ բերել են բազմաթիվ այնպիսի բառեր, որոնք չէին կարող լինել հայ ժողովրդի լեզվի մեջ նրա զարգացման ավելի վաղ շրջաններում:

Հայերենի բառապաշարը դարերի ընթացքում փոփոխվել ու համալրվել է նախ իր սեփական միջոցներով՝ բաղադրությամբ ու ածանցումով, ապա՝ օտար լեզուներից փոխառված բառերով և եղած

բառերի իմաստափոխությամբ: Լեզվի բառապաշարի մեջ այդպիսի փոփոխություններ կատարվել են նրա զարգացման բոլոր շրջաններում, բայց, ինչպես ցույց են տալիս հայոց լեզվի պատմության տվյալները, հայերենի զարգացման տարբեր շրջաններում տարբեր հաճախականությամբ է ընդգծվել այդ կարգի փոփոխություններից յուրաքանչյուրը: Այսպես, օրինակ՝ VI-VIII դարերում օտար լեզուների և հատկապես հունարենի ազդեցությամբ ստեղծվում են բազմաթիվ նոր բառեր: Միջին դարերի գիտական գրականության բառապաշարի հարստացման մեջ մեծ դեր էին կատարում փոխառությունները, իսկ ժամանակակից հայերենի մեջ այդ բոլոր գործոնները ընդհանուր առմամբ ավելի ուժեղ են դրսևորվում, թեև այս շրջանում ևս որոշ տարբերություններ կարելի է նշել տարբեր բովանդակություն ունեցող գործերի լեզվի բառապաշարի մեջ: Զառաքական գրականության մեջ փոխառությունները աչքի ընկնող կշիռ ունեն, իսկ գեղարվեստական գրականության մեջ նրանք համեմատաբար ավելի սակավ են:

Բառապաշարի հարստացման ներքին միջոցները արտահայտվում են լեզվի հնարավորություններով՝ նոր բառեր կազմելու և բառիմաստի փոփոխության եղանակներով:

Հայերենի բառապաշարը իր զարգացման պատմության բոլոր շրջաններում համալրվել է բաղադրության և ածանցման եղանակով կազմված նոր բառերով: Արդի հայերենում նույնպես կենսունակ է բառապաշարի համալրման այդ օրինաչափությունը, օրինակ՝ ճաշասեղան, ցայտադրյուր, զբոսայգի, ծախսարար, կատարածու, ամառանոցային, հրաբխային, ծծմբային թթու և այլն:

Նման բառակազմությունների մեջ հսկայական դեր է կատարում անալոգիան: Արդի հայերենի բառապաշարը անհամեմատելի չափով սկսում է հարստանալ ռուսերենի նմանողությամբ կազմված բառերով: Այսպես, օրինակ՝ մեր լեզվի մեջ շատ գործածական **գնացք, ինքնառե, ինքնաթիռ, ականանետ, ականաձիգ, սավառնորդ** և այլ բազմաթիվ բառեր կազմված են հայերենի ներքին միջոցներով, բայց ռուսերենում գործածված համապատասխան բառերի անալոգիայով:

Արդի հայերենի բառապաշարը հարստացել է նաև բառերի ստացած նոր իմաստներով կամ առումներով, որոնց մեջ զգալի դեր են կատարում նոր գաղափարախոսությամբ, հասարակական նոր վերաբերմունքով և հասարակական կյանքում կատարված փոփոխու-

թյուններով պայմանավորված իմաստափոխությունները. այսպես, օրինակ՝ ազգ, ազգային, ազնվական, ազնվականություն, ական, ականել, ակնարկ (օջերկ), անհատական, անհատապաշտ, անհարազատ, անքաղաքավարի, աշխատուժ, ապահովագրել, ապրանք, առաջադիմություն, ավանդ, արժույթ, արձակ (գրվածք), բաժանորդ, բաժանորդագրել, բարենորոգել, բարեմիտ, բացիկ, բեկանում, գերագույն, գերազանց, գերակշռել, գնայուն (ծախվող), գործակից (կոնֆիցիենտ), գործակալություն, գրախոսական, գրոհային, դրույթ, դրույք, ելույթ, եսական, զգոնություն, ընթացիկ, ընթացք, ընտրել, թեկնածու, թերթ, թեքում, թղթակից և այլ բազաթիվ բառեր նոր առումներ են ձեռք բերել հասարակության կյանքում կատարված տեղաշարժերի հիման վրա:

Բացի այդ փոփոխություններից, ժամանակակից հայերենի բառերը իմաստափոխության ենթարկվել են բառիմաստի **ընդլայնման (տնտեսություն-ուներեցվածք, կայք, գրասենյակային գրագրությունների ամբողջ վիճակը, էկոնոմիկա, բախում-բախվելը կոնֆլիկտ, կոլիզիա, հեռատես-հեռու տեսնող, շատ բան իմացող, զգույշ, համակրող-որևէ մեկին համակիր, պարտիային հարող), բառիմաստի նեղացման (գրող-բանաստեղծ, դիմում-գրություն, որով դիմում են որևէ հաստատության), բառիմաստի շրջման (ահագին-ահեղ, ահ հարուցող, մեծ, հսկա), բառերի կատարած, ֆունկցիայի նմանության (դեղ-բույս-դեղորայք, գրիչ-գրող, գրելու գործիք) և այլ եղանակներով:**

Հայերենի բառապաշարը, ինչպես նշվեց, հարստացել է նաև փոխառված բազմաթիվ բառերով: Հայ ժողովրդի քաղաքական կյանքի, պետականության, գիտության ու մշակույթի հետ կապված բազմաթիվ հասկացություններ արտահայտող բառերով համալրվել է հայոց լեզվի բառապաշարը. օրինակ՝ արևմեմենտ, արբորտ, արսուլյուտ, ազենտ, ազիտատոր, ագրեսիա, ագրոկուլտուրա, ադյուտանտ, ազարտ, ալկոհոլ, այլումին, ակորդ, ատեստատ, աֆիշ, աֆորիզմ, բազա, բաս, բրոմ, բրոնխիտ, գազ, գազոլին, գվարդիա, գրամֆոն, գրանիտ, դեկադա, դեկաբրիստ, դեկադենտ, դեկրետ, դիլետանտ, դիկտատուրա, էգոիզմ, էլեգիա, էլեկտրատեխնիկա, էլեկտրոֆոր, էտապ, էվոլյուցիա, ժանդարմ, ժուռնալիստ, իդիլիա, իմպերիալիզմ, ինտրիգ, ինտենդանտ, լաբորանտ, լաբորատորիա, կաբինետ, կալկա, կալկուլյացիա, կինո, կինոֆիլմ, կինոսեանս, կոմիզմ, կոմիկ, կոլորիտ, կոմպլեկտ, կոմունիզմ, կոնգրես, կոնկուրս, կոնցեպցիա, կոն-

ցեսիա, կոնֆիսկացիա, կվաս, կվարտետ, մասսա, մատերիա, մատերիալ, մատերիալիզմ, մեդալ, մեդալիոն, մելիորատիվ, մետր, մուսկատ և այլն:

Հայերենի հիմնական բառաֆոնդը նույնպես զգալի փոփոխությունների է ենթարկվել, համալրվել իսկ ավելի կատարելագործվել է, թեև հին կենցաղի ու սովորությունների հետ կապված շատ բառեր հիմնական բառաֆոնդից դուրս են ընկել: Արդի հայոց լեզվի հիմնական բառաֆոնդում համարյա թե անփոփոխ ձևով պահպանվել են հին հայերենի դերանունները (ես, դու, նա, մենք (մեք), դուք, նրանք (նոքա), այս, այդ այն, սա, դա, նա, սրանք, դրանք, նրանք), թվական անունները (մեկ, երկու, երեք, չորս (չորք), հինգ, վեց, յոթ (եւթն), ութ, ինն, տասը (տասն), քսան, երեսուն, քառասուն, հարյուր, հազար), կենդանական և բուսական աշխարհի գործածական շատ բառեր (գայլ, արջ, աղվես, ցորեն (ցորեան), գարի, անտառ, ծառ, ջուր, քամի), ազգակցական ու ընտանեկան հարաբերություններ արտահայտող բառերը (հայր, մայր, քույր, եղբայր, հարս, փեսա, քեռի, որդի, տալ, սկեսուր, սկեսրար), ամենաանհրաժեշտ բազմաթիվ այլ բառեր (գնալ, քայլել, ասել, խոսել, հարցնել, կանչել, սիրել, խմել, վազել, իմանալ, գիտենալ, պարել, տուն, տեր, աղբյուր, գետ, սար, սյուն, արև, արեգակ, ծյուն, անկողին, քնել, սանրվել, հագնվել և այլն): Այդ բոլորին ավելացել են նոր բառեր ու բառակապակցություններ. ինչպես՝ ազգանուն, ակնոց, այծմեական, անառարկա, աներես, անձնագիր, անձնակազմ, աշխատավոր, աշխատավարձ, աշխատակից, ապահովագիր, ապահովագրություն, ապահովագրել, առևտուր, արդյունաբերություն, արտադրություն (արդի առումով), բաժանորդագրել, բանվոր, բանուժ, բացիկ, գնացք, երկաթուղի, թերթ, իշխանություն, կառավարություն, պետություն, նախաճաշ, շրջադարձ, ստորագրել, ներգործել, փոխանակել, փոխադրել, պարզալ, դուրս տալ, վեր կենալ, պար ածել, ցույց տալ, հույս տալ, թափ տալ, ձեռք բերել, հանձն առնել, խելքից պակաս, ոտից թեթև, աչքով կույր, մտքով կույր և այլն: Հայոց լեզվի հիմնական բառաֆոնդը համալրվել է նաև փոխառություններով. ինչպես՝ ակտիվ, պասսիվ, կուլտուրա, կինո, ռադիո, կոմունիստ, սոցիալիզմ, կոմունիզմ, էլեկտրիֆիկացիա, տրակտոր, տրակտորիստ, կոմբայն և այլն:

Բազմաթիվ փոխառված բառեր ավելի ու ավելի կենսունակ են դառնում մեր ժողովրդի համար և աստիճանաբար ներթափանցում

չս նրա լեզվի հիմնական բառաֆոնդի մեջ: Այդ բոլորը անհամեմատելի չափով հարստացնում են արդի հայերենի բառապաշարը, այն դարձնում ավելի լիահունչ ու կատարյալ:

1) ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ա) ԲԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի տարբեր լեզուները ունեն բառակազմական տարբեր միջոցներ, որոնք կոնկրետ լեզվի զարգացման տարբեր փուլերում կարող են ունենալ բառակազմության տեխնիկայի ընդգծված կամ թույլ արտահայտված դրսևորումներ: Արդի հայերենում, օրինակի համար, միևնույն արմատի կրկնությամբ նոր բառեր կազմելու միջոցը այժմ կենդանի է: Կրկնությամբ կազմված շատ քիչ բառեր, ինչպես՝ ար-ար-իչ, խող-խող-ել, բաբախել (բախ-բախ-ել), ծիծաղել (ծաղր-ծաղր-ել), բարբառ (բառ-բառ) և այլն անհիշելի ժամանակներից գործածվում են մեր լեզվում իբրև պարզ բառեր:

Արդի հայերենում գործածական տեղ-տեղ, մեծ-մեծ, հաստ-հաստ, զույգ-զույգ, ուրախ-ուրախ, շատ-շատ, ծանր-ծանր, պես-պես, կաղ-կաղ, հատ-հատ բառակապակցությունների մեջ գիտակցվում են բարդության եզրերը իբրև առանձին բառեր, հետևաբար դրանք ոչ թե մի իմաստ ունեցող բաղադրյալ բառեր են, այլ միևնույն բառի իմաստի սաստկացումը ընդգծելու համար անհրաժեշտ հարադրություններ, որոնք հնագույն շրջանից ի վեր եղել են հայոց լեզվում: Դրանցից շատ հազվադեպ կազմվում են բարդ բառեր, բայց այդ երևույթը հատուկ է արդի հայերենին, և կարելի է ասել, որ նման տիպի հարադրություններից ընդհանուր առմամբ նոր բառեր չեն կազմվում:

Ժամանակակից հայերենի բաղադրության ամենատարածված տեսակներն են հարադիր, կցական և իսկական բարդությունները:

Հարադիր բարդության բոլոր տեսակները միևնույն հաճախականությամբ չեն գործածվում ժամանակակից հայերենում: Հարադիր բարդություններից տարածված են գլխավորապես բայից և որևէ հարադիր բառից կազմված բարդությունները. ինչպես՝ վեր կենալ, դեն տանել, վայր գցել, ցույց տալ, հույս տալ, ետ բերել, շուռ գալ, վրա

տալ, ներս գալ, ներս մտնել, լաց լինել, գլուխ բերել, գլուխ տալ, ձեռք քաշել, բաց անել, հուպ տալ, միտք անել և այլն: Մյուս խոսքի մասերից կազմված կրկնավոր բարդությունների տեխնիկան կապված է հայերենի զարգացման ավելի վաղ շրջանի հետ, հետևաբար կենսունակ չէ: Այդպիսի բարդություններից շատերը գործածվում են իբրև իմաստը, ներգործությունը կամ շատությունը ընդգծող միջոցներ. օրինակ՝ երբ ասվում է **խումբ-խումբ** եկան, հասկացվում է, որ շատ խմբեր եկան, **տեսակ-տեսակ** ծաղիկներ՝ շատ ծաղիկներ և այլն:

Հարադիր բարդություններից շատերը փոխելով իրենց իմաստը վերածվում են դարձվածքների, ինչպես՝ **հուպ տալ** (քննադատել), **գլուխ բերել** (հաջողացնել), **գլխից հանել** (խաբել), **սիրտ տալ** (ոգևորել), **ձեռնամուխ լինել** (սկսել) և այլն: Այդպիսի կապակցությունները ընդհանրապես չեն կարող ձուլվել միմյանց և կազմել մի բառ, եթե պահպանում են իրենց իմաստը:

Հարադրական բարդություններից միայն բայից և որևէ հարադիր բառից կազմվածներն են տարածված ժամանակակից հայերենում: Այդ բարդությունները կարող են ձուլվել և կազմել կցական բարդություններ. ինչպես՝ ակն ածել-ակնածել-ակնածու, գործ ածել-գործածել և այլն: Մյուս խոսքի մասերից կազմված հարադիր բարդություններից կարող են կազմվել կցական բարդություններ, եթե բաղադրիչներից մեկը հնչյունափոխվում է, կամ բաղադրիչները միմյանց հետ միանում են շաղկապներով կամ նախդիրներով (կապերով), օրինակ՝ կերուխում, անցուղարձ, եռուզեռ, երթևեկ, առևտուր, ծակծկել (ծակ-ծակել), թափթփել (թափթափել), թրթիռ (թիռ-թիռ), փայլփլել (փայլ-փայլել), օրեցօր (օրե-ց-օր), դեմառդեմ (դեմ-առ-դեմ) և այլն:

Կցական բարդությունները, ինչպես ասվեց, առաջանում են հարադրական բարդություններից և արտահայտում են զույգ բառերի շարահյուսական տարբեր հարաբերություններ: Կցական բարդությունների ամենատարածվածները հայերենում ունեն բայական կիրառություն: Կցական բարդությունների մեջ զգացվում է բարդության եզրերի շարահյուսական կապակցությունը, պահպանված են բառաշեշտերը և, ինչպես արվում է դրանք անջատել միմյանցից ու գործածել իբրև անանձին-բառեր՝ իրենց հիմնական իմաստով: Այդ նշանակում է, որ կցական բարդությունները ինչպես իրենց ձևով, նույնպես և իմաստով հեշտ տարրալուծելի են:

Իսկական բարդության եզրերը ավելի սերտ միասնությամբ են

կապված միմյանց հետ: Նրանք իրենց ձևական հատկանիշներով էլ տարբերվում են հարադրական և կցական բարդություններից: Նախ ձևականորեն նրանք կապվում են իրար հետ **ա** հոդակապով, երկրորդ՝ բարդության առաջին բաղադրիչի հնչյունափոխության ենթակա հնչյունները հնչյունափոխվում են, երրորդ՝ բարդության առաջին մասը սովորաբար դրվում է ուղղական հոլովով, չորրորդ՝ բառը ունի միայն մի շեշտ, որը դրվում է վերջին վանկին: Սակայն, բացի այդ ձևական հատկանիշներից, իսկական բարդությունները իրենց իմաստով էլ տարբերվում են հարադիր և կցական բարդություններից: Իսկական բարդությունների մեջ, իբրև ընդհանուր կանոն, բաղադրության մասերը ձուլվում են միմյանց և ունենում են իրենց հիմնական նշանակությունն ու տարբեր առումները, որոնք երբեմն բարդության բաղադրիչների իմաստի հետ որևէ կապ չունեն: Այսպես, օրինակ՝ **մեծատուն** բառը չի նշանակում «մեծ տուն», այլ նշանակում է «հարուստ», **ձեռնհաս**՝ ոչ թե «ձեռն հասնող», այլ՝ «հասուն, որևէ գործի լավ տեղյակ, երևույթները հասկացող մարդ» և այլն: Իսկական բարդությունները կարող են միանալ նաև առանց **ա** հոդակապի, ինչպես՝ լրտես, հավկիթ, ձկնկիթ, հացկերույթ, դռնբաց և այլն: Արդի հայերենում հաճախ միևնույն բարդությունները ունեն կրկնակի ձևեր՝ և՛ հոդակապով, և՛ առանց հոդակապի: Այդ կրկնակի ձևերի առկայությունը կապված է միմյանցից իմաստային նրբերանգներով տարբերվելու տենդենցի հետ. օրինակ՝ **տնտես** և **տնատես**, **ջրկալ** և **ջրակալ**, **ջրբաժան** և **ջրաբաժան**, **հրձիգ** և **հրաձիգ** բառերը իրենց իմաստներով տարբերվում են միմյանցից և այդ պատճառով էլ երկու ձևերն էլ գործածվում են արդի հայերենում: Այն դեպքերում, երբ կրկնակի ձևերը իմաստային տարբերություններ չեն ունենում, միշտ նրանցից մեկն է մնում գործածության մեջ, իսկ մյուսը կամաց-կամաց անգործածական դառնալով՝ դուրս է մնում բառապաշարի առավելի գործուն շերտից:

Այսպիսով, հայերենի բաղադրության ձևերից ամենատարածվածներն են հարադրական, կցական և իսկական բարդությունները: Նրանցից իմաստով և ձևով անբաժանելի են միայն իսկական բարդությունները, որոնք մյուս բարդությունների հետ միասին հնագույն ժամանակներից ի վեր գործածվել են հայոց լեզվում: Հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններում եղել են բարդության վերոհիշյալ տեսակները, սակայն այն տարբերությամբ, որ բարբառներում և

գրական լեզվի տարբեր փուլերում ընդգծվել են այդ բարդությունների կազմության որոշ եղանակներ: Արդի հայերենում, ինչպես տեսանք, ավելի տարածված են բայից և որևէ հարադիր բառից կազմված հարադրական բարդությունները, որոնցից էլ հաճախ ստեղծվում են կցական և իսկական բարդություններ: Առանց **ա** հոդակապի իսկական բարդությունները տարածված էին միջին հայերենում և այժմ էլ շատ գործածական են «կը» ճյուղի բարբառներում, իսկ **ա** հոդակապով իսկական բարդությունները՝ արդի հայերենում և «ոււմ» ճյուղի բարբառներում և այլն: Այդ նշանակում է, որ լեզվի զարգացման տարբեր շրջաններում տարբեր ձևով են դրսևորվում նրա առաջընթացի ու կատարելագործման օրինաչափությունները:

բ) ԱԾԱՆՑՈՒՄ

Ածանցումը հայերենի բառապաշարի զարգացման ամենակենսունակ միջոցներից մեկն է: Արդի հայերենի ածանցները արտահայտում են բազմազան ու բազմապիսի հարաբերություններ: Նրանք հատուկ են եղել հայերենին իր զարգացման բոլոր շրջաններում, սակայն բաղադրությունների նման ածանցների տարբեր տեսակները միևնույն հաճախականությամբ չեն կիրառվել հայերենի զարգացման տարբեր փուլերում: Ինչպես արդեն նշել ենք, նախաձանցների մեծ մասը ստեղծվել է հինգերորդ դարից հետո, հետևաբար, կենսունակ է դարձել ավելի ուշ շրջանում: Վերջաձանցներով միշտ էլ հարուստ է եղել հայերենը, բայց նրանք նույնպես մի անգամից չեն առաջացել և միշտ էլ միևնույն կենսունակությունը չեն ունեցել: Այսպես, օրինակ՝ արդի հայերենում կենսունակ չեն **ախ, որ, ար, ուկ** վերջաձանցները, և, ընդհակառակն, տարածված են **արտ, գեր, թեր, հակ** նախաձանցներն ու **ած, որդ, բար, որեն, ակի, վոր-ավոր** և այլ վերջաձանցներ, որոնց մի մասը գրաբարում կենսունակ չի եղել:

Արդի հայերենի ածանցները լինում են նախադիր (**արտ, դեր, ստոր, մակ, ան** և այլն), միջադիր (**և, չ, վ, ան** և այլն) և վերջադիր (**բար, արդ, որդ, ավոր, ած, ածու, ոտ, ատ, որեն** և այլն): Այդ ածանցները առաջացել են կա՛մ ինքնուրույն բառերից (բար, որեն, ատ, արտ, արդ և այլն), կա՛մ հոլովական և բայական վերջավորություններից (ոց, ուց, են, եց, վ և այլն), կա՛մ էլ հայերենին անցել են այլ լե-

զուներից (հոմ, անտի, իստ, իզմ և այլն): Հայոց լեզվի և հատկապես բարբառների մեջ որոշ բառեր աճում են առանձին հնչյուններով, որ ոմանք անվանում են ածանցներ: Սակայն դրանք շատ հեռու են ածանցներից և ընդհանրապես հատուկ չեն հայոց ազգային լեզվին:

Հայերենի կենսունակ և բառակազմական լայն կիրառություն ունեցող ածանցները, ինչպես՝ **ական, որդ, որեն, բար, ած, արտ, գեր** և այլն մտնում են հայերենի հիմնական բառաֆոնդի մեջ:

Այսպիսով, հայերենի բառակազմական միջոցների ամենակենսունակ տարրերից մեկը ածանցումն է, որը սերտ կերպով կապված է հայոց լեզվի քերականության հետ: Հետևաբար, հայերենի բառակազմական և քերականական կանոնները միմյանցից անջատ չեն, նրանք պայմանավորված են միմյանցով և փոփոխվում ու զարգանում են միևնույն օրենքներով:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԼԵՃՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հոկտեմբերյան հեղափոխությունը մարդկության պատմության նոր դարաշրջանի սկիզբը դնելով՝ փոխեց Ռուսաստանի ժողովուրդների, ազգերի փոխհարաբերությունը, հնարավորություն տվեց նրանց տնօրինելու իրենց վիճակը և զարգացնելու իրենց մշակույթն ու լեզուն:

Այդ բոլորը խիստ փոփոխություններ մտցրին ազգային լեզուների զարգացման ընթացքի մեջ, ավելի ընդարձակեցին ազգային լեզուների գործառնությունը, փոխեցին բարբառների և ընդհանուր լեզվի փոխհարաբերությունները, հնարավորություն ընձեռեցին բոլոր ժողովուրդներին՝ ակտիվ կերպով մասնակցելու իրենց լեզուն հարստացնելու, կատարելագործելու և մշակելու գործին:

Ազգային լեզուների զարգացման համար ստեղծված բարենպաստ պայմանների շնորհիվ գրական հայերենը կարճ ժամանակում հարստացավ նոր բառերով ու դարձվածքներով և կատարելագործվեց իր քերականությամբ: Նա դարձավ պետական պաշտոնական լեզու և հայ ժողովրդի մշակութային մակարդակը բարձրացնող հզորագույն ծակներից մեկը:

Գրական հայերենը հնարավորություն ստացավ լայնորեն օգտագործելու գրաբարի, միջին հայերենի և բարբառների հարուստ

բառամբերքը և համալրելու իր բառապաշարը միջազգային բազմաթիվ բառերով և ռուսերենի ազդեցությամբ կազմված նոր տերմիններով, հասկացություններով ու դարձվածքներով:

Հայերենի բառապաշարի հարստացման ամենակենսունակ միջոցը բառաբարդացումն ու ածանցումն են, որոնք խորհրդային պայմաններում ռուսերենի ազդեցությամբ լրացվեցին նոր միջոցներով: Նրանցից կարելի է նշել համաբանական բառակազմությունները, նորագույն հապավումները, բառիմաստի փոփոխման նոր արտահայտությունները և այլն:

Համաբանությամբ կազմվող բարդությունները հատուկ են եղել հայերենին իր զարգացման բոլոր շրջաններում, բայց խորհրդային պայմաններում ընդարձակվեցին բառակազմության այդ եղանակի շրջանակները, և կազմվեցին բազմաթիվ նոր բառեր ոչ միայն հայերենի համար սովորական, այլև ռուսերեն համապատասխան բառերի համաբանությամբ: Այդպիսի նորակազմ բառերն ու բառակապակցությունները լինում են.

ա) Մի իմաստ արտահայտող, բայց առանձին գրվող բառերի կապակցություններ, ինչպես՝ համայնական տնտեսություն, պատի թերթ, թեթև հեծելազոր, բանվորական ուժ և այլն: Նման բառակապակցությունների մեջ հաճախ բառերից մեկը, կամ ավելին, փոխառված է լինում. ինչպես՝ պլանային տնտեսություն, պիոներական ջոկատ, կոլեկտիվ տնտեսություն և այլն:

բ) Տարբեր բառերի մասերից և առանձին բառերից կազմված հապավումներ, ինչպես աշխօր, խորհտնտեսություն, ժողկրթբաժին, լուսհիմնարկ և այլն: Այդպիսի հապավումների մեջ կարելի է տարբերել՝ ա) միայն հայերեն և բ) հայերեն ու փոխառված բառերից կազմված հապավումներ, ինչպես՝ առբաժին, տնտհաշվարկ, լուսբաժին, լիկկայան, կոլտնտեսություն և այլն:

գ) Առանձին բառերի մասերից կազմված բաղադրություններ, որոնց մեջ նույնպես կարող են լինել միայն հայերեն և փոխառված ու հայերեն բառերից կազմված բարդություններ, ինչպես՝ պարտուս, ժողլուս, ժողկրթբաժվար, ժողկոմ, զինկոմ, սոցապ, բանֆակ, բուժֆակ, քաղկոմ և այլն:

դ) Հայերեն և փոխառված բառերի սկզբնատառերից կազմված բաղադրություններ, ինչպես՝ ՀԽՍՀ – Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, ԽՍՀՄ – Խորհրդային Սոցիալիս-

տական Հանրապետությունների Միություն, բուհ – բարձրագույն ուսումնական հաստատություն, հօպ – հակաօդային պաշտպանություն և այլն

Համաբանական բառակազմությունների մեջ ուշագրավ են նորագույն հապավումների թեմաները, որոնք լեզվական նոր երևույթներ են և պայմանավորված են հայոց լեզվի զարգացման նոր օրինաչափություններով՝ կյո թեմաները, իբրև ընդհանուր կանոն, կազմվում են բառի այն մասերից, որոնք այլ բառերի կամ հապավումների հետ կցվելով՝ կարող են հուշել հապավված բառի իմաստը՝ օրինակ՝ **ապ** (ապահովություն), **աշխ** (աշխատանքի, աշխատանքային), **բան** (բանվորական), **գիտ** (գիտական), **երիտ** (երիտասարդական), **կրթ** (կրթական), **կոմ** (կոմունիստական, կոմիսար, կոմիտե), **սոց** (սոցիալական, սոցիալիստական), **քաղ** (քաղաքական, քաղաքային) և այլն։ Նորագույն հապավումների թեմաները գլխավորապես մեկ կամ երկու վանկ կարող են կազմել։ Հապավման թեմաները արդի հայերենում կարող են լինել նախադաս և հետադաս։ Նախադաս դրված թեմաները հանդես են գալիս իբրև լրացում, իսկ հետադասները իբրև լրացյալ, օրինակ՝ սոցապ (սոցիալական ապահովություն), քաղկոմ (քաղաքային կոմիտե) և այլն։

Հապավումներից շատերը փոխ են առնված ռուսերենից նույնությամբ, ինչպես լիտֆոնդ, կուլտպրոպ, զագս, գես և այլն։ Նրանց որոշ մասը հայերենում գիտակցվում է իբրև առանձին բառ և ենթարկվում է հայոց լեզվի թեքման օրենքներին՝ ինչպես զագս, սովխոզ և այլն։

Հայ ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունները, գիտության ու մշակույթի, գրականության ու արվեստի, արդյունաբերության ու գյուղատնտեսության աննախընթաց զարգացումը, հասարակական նոր հարաբերությունները ո՛չ միայն հիմնավորապես փոխեցին մեր ժողովրդի տնտեսական ու քաղաքական վիճակը, այլև դարձան նոր բառերի ու նոր հասկացությունների ձևավորման ազդակներ։ Հայերենի իրողությունների լայն օգտագործմամբ կազմվեցին բազմաթիվ նոր բառեր, որոնցից ուշագրավ են ռուսերենի ազդեցությամբ նոր իմաստ ձեռքբերած, մասնագիտական տերմին դարձած և նոր կազմված բառերը։

Հայերեն բազմաթիվ բառեր, ինչպես, օրինակ, հարվածային, մրցություն, թեքում, օդակ, գերազանց և այլն, այժմ գործածվում են

Նոր, նախախորհրդային շրջանին անծանոթ իմաստներով: Հայերեն բառերով, բայց ռուսերենի ազդեցությամբ կազմվեցին բազմաթիվ նոր բառեր և տերմիններ, ինչպես՝ բեռնաթափում, դիմագրկություն, ինքնահոս, հեռուստատես, փոշեծծիչ, ականասետ, համատեղություն, ականորս, դրածո և այլն: Հայոց լեզուն ռուսերենի բարերար ներգործության շնորհիվ իր հնարավորությունները լրիվ չափով օգտագործելու և կարճ ժամանակում իր բառային կազմը կյանքում կատարված փոփոխությունները արտահայտող նոր բառերով ու բառերի նոր առումներով համալրելու լայն հնարավորություն ստացավ: Սակայն նա հարստացավ նաև նոր փոխառություններով: Բանվորական հեղափոխական շարժման, մարքս-լենինյան գաղափարախոսության, պետական-քաղաքական կյանքի, մշակույթի ու գիտության, արդյունաբերության ու տեխնիկայի հետ կապված զանազան երևույթներ արտահայտող բազմաթիվ նոր բառեր ո՛չ միայն մտան հայոց գրավոր լեզվի մեջ, այլև կարճ ժամանակում հասկանալի դարձան հայ ժողովրդի հոծ զանգվածներին. այսպես, օրինակ՝ մարքսիզմ, լենինիզմ, ինտերնացիոնալ, կոմունիզմ, սոցիալիզմ, պրոպագանդա, դիալեկտիկա, մատերիալիզմ, էվոլյուցիա, դեկրետ, ավանգարդ, մանիֆեստ, միևնույն, ֆորմացիա, ֆորմատ, ֆունկցիա, ագիտացիա, ագիտատոր, պրոպագանդիստ, կինո, ագրեգատ, ավտո, ավտոբազա, տրակտոր, կոմբայն, էլեվատոր, սուլֆիդին, պենիցիլին, տանկ, ֆոնդ, ֆակտուրա, ֆոսֆոր և բազմաթիվ այլ բառեր այժմ հասկանալի են թե՛ քաղաքում, թե՛ գյուղում:

Հայոց լեզվի բառապաշարի համալրումն ու հարստացումը արտացոլվել է նաև հայոց լեզվի հիմնական բառաֆոնդի մեջ: Արդի հայերենի հիմնական բառաֆոնդը ընդգրկել է հայոց լեզվի զարգացման բոլոր շրջանների բառապաշարի կենսունակ տարրերը և ռուսերեն ու ռուսերենի միջոցով մեր լեզվին անցած այն բառերն ու բառակապակցությունները, որոնք կենսական նշանակություն ունեն հայ ազգի բոլոր անդամների փոխադարձ հարաբերությունները կազմակերպելու համար և կարող են նոր բառեր կազմելու, հայոց ազգային լեզուն էլ ավելի հարստացնելու հիմք հանդիսանալ: Այսպես, օրինակ՝ ռուսերենի միջոցով հայերենին անցած ակտիվ, գազ, կինո, կոմունիզմ, կոմունիստ, պրոբլեմ, ռադիո, սոցիալիզմ, սովխոզ և բազմաթիվ այլ բառեր մտել են հայոց լեզվի հիմնական բառաֆոնդի մեջ և նոր բառեր կազմելու հիմք են տալիս:

Զգալի տեղաշարժեր կատարվեցին նաև հայերենի քերականության մեջ. կայունացան քերականական կանոնները, ընդարձակվեցին բառակազմական միջոցները, փոխվեց մի շարք բայերի խնդրառությունը, սահմանագծվեցին վա հոլովման ենթարկվող բառերի շրջանակները, զգալի չափով կրճատվեց գարտուղի հոլովումների թիվը, ընդարձակվեց բայական մի շարք ձևերի կիրառությունը և այլն:

Այս բոլորից հետևում է, որ հայերենի զարգացումը և կատարելագործումը խորհրդային պայմաններում իրագործվում է, մի կողմից՝ սեփական միջոցներով, որոնք իրենց շատ արտահայտություններով տարբեր են նրա ավելի վաղ շրջանի օրինաչափություններից և, մյուս կողմից՝ ռուսերենի ազդեցությամբ կյանքի կոչված կամ նոր հատկություններ ստացած կանոններով, որոնք գլխավորապես արտահայտվում են.

ա) Ռուսերենից հայերենին անցած բառերով. ինչպես՝ սովետ, բոլշևիկ, կոմունա, բրիգադ, կոմունիստ, կոնստիտուցիա և այլն:

բ) Հայերեն բառերի իմաստի փոփոխմամբ կամ նոր առումներով. ինչպես՝ հարվածային, օդակ, գտում, բջիջ և այլն:

գ) Ռուսերենի նմանողությամբ կազմված բառերով. ինչպես՝ աշխօր, հաշվեգրքույկ, ստուգաբք, դեսպանորդ, դրածո, առաջըաշում և այլն:

Ռուսերենի ազդեցությամբ ընդարձակվեցին հայերենի բառակազմական հնարավորությունները, սովորական դարձան այնպիսի բարդ և ածանցավոր բառեր, որոնք կազմվում են.

ա) Ռուսերեն և հայերեն բառերից. ինչպես՝ պարտուս, կոլտնտեսություն, կոմբիշ, կոլտաշխատող, երկաթ-բետոն, բետոնագործ, գազաչափ, գազաշարժիչ և այլն:

բ) Ռուսերեն բառերից և հայերեն ածանցներից, ինչպես՝ բուլշևիկյան, սովետական, ֆրեգերորդ և այլն:

գ) Ռուսերեն բառերից և հայերեն բայական վերջավորություններից, ինչպես՝ բետոնել, եվակուացնել, մոբիլիզացնել, վալսել, բոյկոտել և այլն:

Ռուսերենի նախածանցների, նախդիրների և վերջածանցների ազդեցությամբ լայնորեն սկսեցին կիրառվել հայերենի **արտ, գեր, թեր, ներ** նախածանցները, **ուրդ, որդ, իչ, ող, ուհի** վերջածանցները և այլն:

Հայոց լեզվում կատարված տեղաշարժերի մեջ ուշագրավ երևույթներ են նոր դարձվածքներն ու բառակապակցությունները, որոնք շոշափում են հայերենի քերականությունը և արտահայտվում են.

ա) Որոշիչի և որոշյալի կապակցությամբ. ինչպես՝ սոցիալիստական հասարակարգ, խորհրդային հայրենիք, խորհրդային քաղաքացի, կոմունիստական հասարակություն, կոլտնտեսային կյանք և այլն:

բ) Հատկացուցիչի և հատկացյալի կապակցությամբ. ինչպես մշակույթի տուն, խորհուրդների իշխանություն, կուսակցության գլխավոր գիծ և այլն:

գ) Իբրև ամբողջական արտահայտություններ կամ բայական հարադրություններ, ինչպես՝ մի հայտարարի բերել, հող պատրաստել, անցնել կարմիր թելի պես, մրցության մեջ մտնել, բարձրանալ կարմիր տախտակին, մրցություն շահել և այլն:

դ) Իբրև նորագույն հապավումներ, ինչպես՝ ժողտնտիաշվարկ, քաղղեկ, քաղկոմ և այլն:

Հայոց ազգային գրական լեզվի մշակման ու կատարելագործման հարցերը խորհրդային շրջանում դրվեցին գիտական հիմքի վրա, այդ բնագավառում արված բոլոր քայլերը ենթարկվեցին պետական հսկողության, որով և հայերենը կարողացավ ազատվել շատ անորոշություններից և է՛լ ավելի զարգանալու, բարձր աստիճանի հասնելու հնարավորություններ ստանալ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

Հայոց լեզուն և նրա ուսումնասիրության հարցերը	3
Լեզուների ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդը	8
Լեզվի զարգացումը	11
Լեզուները հասարակության զարգացման տարբեր շրջաններում	17

II. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԾԱԳՄԱՆ, ՑԵՂԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հայոց լեզվի կազմավորումը	25
Հայոց լեզվի բնույթն ու հետագա ձևափոխումները	34
Հայերենի նախագրային վիճակը	55

III. ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆ ՀԻՆ ԼԵԶՈՒՆ՝ ԳՐԱԲԱՐԸ

Հայոց գրերի գյուտը	65
Հինգերորդ դարի հայ գրականության նշանավոր երկերը	76
Գրաբարի հնչյունական համակարգը	86
Գրաբարի քերականական համակարգը	91
Ա Ձևաբանություն	91
1) Բառի քերականական կազմը	91
2) Հոլովման համակարգը	93
ա) Գոյական անունների հոլովումը	94
բ) Ածականների և թվականների հոլովումները	97
գ) Դերանունների հոլովումը	98
զ) Գրաբարի հոլովածների և նրանց իմաստների մասին	104

3) Գրաբարի խոնարհման համակարգը	108
ա) Բայերի հիմքերը և սրանցից կազմված ժամանակները	108
բ) Խոնարհումը	111
գ) Բայական վերջավորությունները	113
դ) Բայածներն ու սրանց նշանակությունը	123
Բ Շարահյուսություն	128
1) Նախադասությունը և նրա անդամների կապակցությունը	128
2) Անվանական և բայական նախադասություններ	130
3) Համաձայնություն	131
4) Շարահյուսություն	134
5) Նախադասությունների կապակցությունը	135
Գրաբարի բառային կազմը	140
1) Գրաբարի բառապաշարը և նրա հարստացման աղբյուրները	140
2) Գրաբարի հիմնական բառաֆոնդը	145
3) Գրաբարի բառակազմության հիմնական դրսևորումները	148
ա) Բաղադրություն	148
բ) Ածանցում	154
Հայերենի բարբառները հինգերորդ դարում	157
Գրաբարի հարստացումն ու հետագա մշակումը	168
1) Հունաբան հայերենը	170
2) Գրաբարի վիճակը VII-X դարերում	190
3) Գրաբարը X – XVIII դարերում	200

IV. ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԸ

Միջին հայերենի կազմավորումը	204
Միջնադարյան հայ գրականության գլխավոր տեսակները	
և նրանց լեզվական առանձնահատկությունները	208
1) Գեղարվեստական գրականություն	208
2) Պատմական գրականություն	217
3) Գիտական գրականություն	223
Միջին հայերենի հնչյունական համակարգը	228
1) Ձայնավոր հնչյունները և երկբարբառները	229
2) Բաղաձայն հնչյունները	230
3) Հնչյունափոխությունը միջին հայերենում	232

ա) Ձայնավորների հնչյունափոխությունը	232
բ) Բաղաձայնների հնչյունափոխությունը	238
Միջին հայերենի քերականական կառուցվածքը	240
Ա Ձևաբանություն	240
1) Հոլովման համակարգը	243
ա) Գոյական անունների հոլովումը	249
բ) Ածականներն ու նրանց աստիճանները	254
գ) Թվական անունները	256
դ) Դերանուններն ու նրանց հոլովումը	259
2) Խոնարհման համակարգը	264
ա) Բայերի խոնարհումը	265
բ) Ներկայի հիմքից կազմված բայերի դեմքերի վերջավորությունները	266
գ) Անցյալ կատարյալի հիմքից կազմված բայերի դեմքերի վերջավորությունները	267
դ) Ժամանակների կազմությունը	268
ե) Դերբայներ	276
զ) Ժխտական խոնարհում	281
Բ Շարահյուսություն	283
ա) Համաձայնություն	283
բ) Շարադասություն	285
գ) Նախադասությունների կապակցությունը	287
Միջին հայերենի բառային կազմը	291
1) Բառապաշարն ու նրա հարստացման աղբյուրները	291
2) Բառակազմության հիմնական միջոցները	295
ա) Բաղադրություն	295
բ) Ածանցում	297
Միջին հայերենը պետական լեզու	301
Միջին հայերենի հետագա վիճակը	306
Հայերենի բարբառների առաջացման և դասակարգման հարցերը	
այլազրույթությունը և գրաբարի մշակման նոր փորձերը	310
Հայ տպագրությունը և գրաբարի մշակման նոր փորձեր	321

V. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒՆ

Մարքսիզմի կլասիկները ազգային լեզուների կազմավորման

մասին	331
Ժամանակակից հայերենը Պայքար նրա մշակման համար	337
ա) Աշխարհաբարը և նրա բնութագիրը XVII – XVIII դարերում	337
բ) Հայոց ազգային լեզվի կազմավորումը	348
գ) Հայոց ազգային լեզվի պաշտոնական վավերացումը և պայքարը նրա մշակման ուղիների համար	367
դ) Խ Աբովյանի և Մ Նալբանդյանի պայքարը արդի հայերենի մշակման ու կատարելագործման համար	373
Ժամանակակից հայերենի համակարգը	379
1) Հնչյունական համակարգը	381
ա) Հայերենի հնչյունները	381
բ) Հնչյունափոխությունը	383
2) Թերականական կառուցվածքը	387
Ա Ձևաբանություն	389
ա) Հոլովական համակարգը	389
բ) Դերանունների հոլովումը	391
գ) Խոնարհման համակարգը	393
Բ Շարահյուսություն	400
Արդի հայերենի բառային կազմը և նրա հարստացումը	407
1) Բառակազմության հիմնական միջոցները	411
ա) Բաղադրություն	411
բ) Ածանցում	414
Հայոց ազգային լեզուն խորհրդային շրջանում	415

ՀԱՉԱՐՅԱՆ ՍԵՐՈՔ ՀԱՉԱՐԻ

**ՀԱՅՈՑ ԼԵՉԿԻ ՀԱՄԱՌՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

Ստորագրված է տպագրության 07 06 06 թ. Չափսը՝ 60 x 84 1/16
Թուղթ՝ օֆսեթ Տպագրություն՝ օֆսեթ
Հրատ 22 5 մամուլ, տպագր 26 63 մամուլ = 24 8 պայմ մամուլի
Տպաքանակ՝ 500 Պատվեր՝ 43

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ալ Մանուկյան 1

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան 52

